



Մեսրոպ քահանայ Արամեան  
Աշխատութիւններ

Հատոր Բ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

<u>Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու</u> .....	5
<u>Ներածութիւն</u> .....	7
<u>Սրբազան Պատարագ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու</u> (գրաբար բնագիր եւ զուգահեռ արեւելահայերէն թարգմանութիւն) .....	22
<u>Պատրաստութիւն</u> .....	22
<u>Պաշտօն ճաշու</u> .....	52
<u>Կանոն սրբոյ Պատարագի</u> .....	78
<u>Արձակումն</u> .....	132
<u>Պաշտօն հոգեհանգստեան</u> .....	144
<u>Սրբասացութիւնք</u> .....	156
<u>Երգ երգոց՝ հանդերձ մեկնութեամբ</u> .....	161
Ներածութիւն .....	161
<u>Երգ երգոց՝ հանդերձ մեկնութեամբ նախնեաց</u> (բնագիր եւ մեկնութիւն) .....	175
<u>Երգ երգոց (բնագիր)</u> .....	291
<u>Արարատից Սիոն</u> .....	302
<u>From Ararat to Zion</u> .....	325
<u>От Арарата до Сиона</u> .....	348
<u>Հայկազեան ուղղագրութեան վերականգնումը մեր սերնդի հրամայականն է</u> .....	371
<u>Restoring the Orthography of the Armenian Nation a Task for Our Generation</u> .....	377
<u>Возрождение классической орфографии – долг нашего поколения</u> .....	383
<u>Սբ Գրիգոր Նարեկացի՝ աղօթքի հանճարը</u> .....	390
<u>St. Gregory of Narek: Genius of Prayer</u> .....	395
<u>Св. Григор Нарекаци – гений молитвы</u> .....	399
<u>Առաքելութիւն, որ միաւորում է բոլորիս</u> .....	403
<u>A Mission that Unites Us All</u> .....	407
<u>Миссия, которая объединяет нас всех</u> .....	411
<u>Արժէքներ</u> .....	415
<u>Values</u> .....	420
<u>Ценности</u> .....	424
<u>Թռիչք անդունդի վրայով</u> .....	429
<u>Leaping Across the Abyss</u> .....	435
<u>Полет над бездной</u> .....	440





# Մեարոյ քահանայ Արամեան Աշխատութիւններ

Հատոր Բ



Կրթական հիմնադրամ  
Երևան 2016

ՀՏԴ 27  
ԳՄԴ 86.37  
Մ 648

**ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ՝  
ՏԻԱՐ ԱՐՄԷՆ ՂԱԶԱՐԵԱՆԻ**

Մ 648 Աշխատություններ/ Մետրոպ քահանայ Արամեան: – Եր.: «Այբ»  
կրթական հիմնադրամ, 2016. Հատոր Բ. – 448 էջ:

Աստուածաբանական ուսումնասիրություններ, քննադրեր եւ թարգ-  
մանություններ, հրապարակախօսական յօդուածներ, վաւերա-  
գրական ֆիլմի սցենար:

Նրանց համար, ովքեր ցանկանում են ծանօթանալ հայ հոգեւոր  
ժառանգութեանը եւ հետաքրքրուում են կրթական հիմնախնդիր-  
ներով:

ՀՏԴ 27  
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-1-0386-0

© «Այբ» կրթական հիմնադրամ, 2016

ՍՐԲԱԶԱՆ ԳԱՏԱՐԱԳ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂԱՓԱՌ  
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ



## ՆՆՐԱԾՈՒԹԻՒՆ

Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած. եթե մէկն այս հացից ուրի, յափրենապես կ'ապրի... Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե չուրէք Մարդու Որդու մարմինը եւ չխմէք Նրա արիւնը, ձեր մէջ կեանք չէք ունենայ... Ով ուրում է Իմ մարմինը եւ խմում Իմ արիւնը, կը քսակուի Իմ մէջ, եւ Եմ նրա մէջ [Յովհ. 2 51—56]:

### ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԷ

Սուրբ Հաղորդութիւնը մեր Տէր Յիսուս Քրիստոսի փրկագործութեամբ հաստատուած նոր կեանքի կերակուրն է: Ամէն ոք կոչուած է ուղղափառ դաւանութեամբ եւ սբ Մկրտութեամբ մտնելու Քրիստոսի Եկեղեցի եւ ճաշակելու Կենաց ծառի պտուղը՝ Տիրոջ կենարար Մարմինն ու Արիւնը: Եկեղեցու ներքին իրականութիւնը, ըստ էութեան, հաղորդական է: Եկեղեցին՝ որպէս հաւաք կամ էկլեզիա, որպէս Քրիստոսի հաւատացեալների միութիւն, իրականանում է սբ Հաղորդութեամբ: Ամէն անգամ, հաղորդուելով Տիրոջ Մարմինն եւ Արեանը, ուղղափառ քրիստոնեան հաղորդում է իր Գլխին՝ Յիսուս Քրիստոսին, եւ սբ Հաղորդութեամբ նոյն Գլխին միացած բոլոր հաւատակիցներին, որոնց ամբողջութիւնն էլ սբ Եկեղեցին է կամ Քրիստոսի խորհրդական մարմինը [Ա. Կոր. ԺԲ 13]: Սբ Հաղորդութիւնը ոչ միայն Եկեղեցու ներքին էութեան եւ փրկական առաքելութեան կենսական զօրութիւնն է, այլ նաեւ Եկեղեցու՝ այս աշխարհից այլութեան, այս աշխարհի հաւաքների (երբեմն իրենց «եկեղեցի» յորջորջող) հետ չհամընկնելու խորհրդանիշը: Լինելով աշխարհում՝ Եկեղեցին աշխարհինը չէ, որովհետեւ նրանում բաշխուող «սուրբերի Սրբութեան» կենդանի վկայութիւնը այս աշխարհից չէ: Եւ այս աշխարհում որեւէ հաւաք կարող է եկեղեցանալ միայն ճշմարիտ առաքելական յաջորդականութեամբ հաստատուած սբ Հաղորդութեամբ:

Սբ Հաղորդութեան խորհուրդը քրիստոնէական կրօնի գլխաւոր առանձնապատկութիւնն է: Միայն քրիստոնէութեան մէջ է Աստուած



մարդանում եւ մարդուն տալիս աստուածային կատարելութեանը հասնելու հնարաւորութիւն: Աստուած, որ անհասօրէն վեր է մեր մտքերից եւ խօսքերից, մեր ճանաչողութիւնից ու ճիշդերից, դառնում է ճշմարիտ եւ կատարեալ մարդ, որպէսզի մարդը կարողանայ իրական հաղորդակցութիւն ունենալ իր Արարչի հետ: Այն, ինչ հնարաւոր էր յաղթահարել ներքեւից՝ երկրից դէպի երկինք, բացուած է ի վերուստ՝ երկնքից դէպի երկիր՝ Բան Աստուծոյ մարդեղութեամբ: Քրիստոնեայի համար Աստուած ոչ թէ հեռաւոր անսահմանութիւններում գտնուող Արարիչ սկզբնապատճառն է կամ երբեմն իր գօրութիւնը յայտնող Գերագոյն էութիւնը, այլ անընդմիջելիօրէն մեզ մերձաւորուած Սէրն է, մերը դարձած ճշմարիտ Կեանքը, մեզ համար մշտապէս բաշխուող եւ մեր էութիւնն աստուածացնող Կենդանի Զօրութիւնը: Եթէ կրօնական փորձառութեան բուն նպատակը Աստուծոյ հետ միաւորումն է, ապա քրիստոնեան գոյաբանօրէն եւ անմիջականօրէն ունի դա, ուստի քրիստոնէական կեանքի նպատակը եւ իդեալը ոչ թէ մեզանից դուրս վերացարկուած մի հասկացութիւն է, այլ մեր մէջ բնակուող ճշմարիտ իրականութիւն: Երկնքի արքայութիւնը մեր մէջ է՝ համաձայն տէրունական խօսքի: Այդ արքայութիւնն Աստուծոյ հետ լինելու, Նրան մեր մէջ ունենալու եւ աստուածանման դառնալու զարմանալի իրողութիւնն է, որ տրուած է մեզ սբ Հաղորդութեամբ: Ինչպէս փոքրիկ թթխմորն է թթուեցնում ողջ զանգուածը, այնպէս էլ Տիրոջ Մարմինն ու Արիւնը, ընդխառնուելով մարդկային բնութեան հետ, աստուածացնում ու պայծառակերպում է այն:

Սբ Հաղորդութիւնը հաստատուած է մեր Տէր Յիսուս Քրիստոսի կողմից՝ խորհրդաւոր ընթրիքի ժամանակ, երբ Նա, իր աստուածային ձեռքը վերցնելով հացը, օրհնեց եւ բեկանեց՝ ասելով. «Առէ՛ք, կերէ՛ք, սա է Իմ Մարմինը»: Ապա վերցնելով բաժակը՝ գոհուութիւն յայտնեց, տուեց աշակերտներին ու ասաց. «Խմէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ դա է Նոր ուխտի Իմ Արիւնը...» [Մատթ. ԻԶ 26—28]: Համաձայն տէրունական պատուիրանի՝ Եկեղեցին այս խորհուրդը շարունակաբար կատարում է «Տիրոջ յիշատակի համար»: Յիշատակն այստեղ սոսկ պատմական մի իրադարձութեան յիշողութիւն չէ կամ Տիրոջ խօսքերի նկատմամբ հաւատարմութեան վկայութիւն, այլ Տիրոջ ներկայութեան մէջ յարատեւելու եւ Նրա խորհրդական մարմնի մաս կազմելու սրբազան կարգ: Տիրոջ խօսքը նախեառաջ ուղղուած է Եկեղե-

ցուն՝ հաւատացեալների հաւաքին՝ Իր հետ միաւորուելու եւ փրկութեան կենսատու շնորհներից անքակ մնալու:

«Տիրոջ յիշատակի» խորհուրդը Սուրբ Հոգու տնօրինական գալուստից յետոյ դարձաւ առաքելական քարոզչութեան եւ Եկեղեցու սպասաւորութեան գլխաւոր ուղղութիւնը եւ առանձնայատկութիւնը: Սբ Վերնատանը առաքեալների կողմից կատարուած առաջին Յիշատակութեամբ փրկագնուած արարչութեան մէջ բացուեց Տէրունական շնորհաբաշխութեան ակունքը եւ դրուեց սկիզբը Եկեղեցու խորհրդական աստուածալաշտութեան: Հաղորդութեան խորհուրդի սրբազան կարգը առաքեալները մեծագոյն զգուշութեամբ փոխանցել են Եկեղեցուն՝ անաղարտօրէն պահպանելու մինչեւ լրումը ժամանակների: Այս մասին է ուսուցանում առաքեալը. «Որովհետեւ ես ընդունեցի Տիրոջից, ինչ որ աւանդեցի ձեզ. այն, որ Տէր Յիսուսը այն գիշերը, երբ մատուցեց, հաց վերցրեց, գոհացաւ, բեկանեց եւ ասաց. «Սա է Իմ Մարմինը, որ ձեզ համար է. արէ՛ք սա Իմ յիշատակի համար»: Նոյն ձեւով էլ ընթրիքից յետոյ վերցրեց բաժակը եւ ասաց. «Այս բաժակը նոր ուխտ է Իմ Արիւնով. արէ՛ք սա Իմ յիշատակի համար, քանի անգամ էլ որ խմէք»: Քանի անգամ որ այս հացն ուտէք եւ այս բաժակը խմէք, պատմէ՛ք Տիրոջ մահը, մինչեւ որ Նա գայ» [Ա. Կոր. ԺԱ. 23—27]:

Հաստատելով սբ Հաղորդութեան խորհուրդը եզրպտական ծառայութիւնից դէպի աւետեաց երկիր անցումը խորհրդանշող Պասեքի կամ Զատիկի երեկոյին՝ Յիսուսը եզրափակեց Հին ուխտի ստուերակերպ գոհերի մատուցումը եւ Ինքն Իրեն մատուցեց որպէս կատարեալ գոհ՝ ազատագրելով մեզ մեղքի ու մահուան կապանքներից եւ երկնքի արքայութեան ժառանգորդներ դարձնելով: Նա Նոր Զատիկն է եւ Անմահ Գառը, Ով մորթուեց ինչի յաւիտենական գոհասեղանի վրայ, Իր Մահով եւ Յարութեամբ մեզ մասնակից դարձրեց նոր զատկական անցումին՝ երկրաւոր պանդխտութիւնից դէպի Արքայութիւն:

Քրիստոսը՝ որպէս յաւիտենական Քահանայապետ, Իր սբ Խաչի չարչարանքներով ու մահով Ինքն Իրեն որպէս Հաշտութեան պատարագ մատուցեց Հօրը՝ մեր բոլորի մեղքերի քաւութեան համար: Նրա Արեան հեղումը դարձաւ լրումը ահարոնեան քահանայադործութեան արիւնոտ պատարագների, իսկ Մելքիսեդեկի անարիւն քահանայադործութեան ընծաները՝ հացն ու գինին, դարձան Նոր ուխտի փրկական քահանայադործութեան նշանակները: Մարդկային կեանքի եւ

ուրախութեան խորհրդանիշները դարձան երկնային կեանքի եւ Աստուծոյ Հետ երանական միութեան նշանակներ:

Տիրոջ օրհնութեամբ Հացի բազմացումը եւ Հազարների կերակրումը նախօրինակն է սբ Պատարագի կենդանի Հացի անհատնում առատութեան, իսկ Կանայի Հարսանիքին ջուրը գինու վերածելու հրաշքը ազդարարում է Մարգու Որդու փառաւորման ժամը եւ մահուան վրայ տարուած յաղթանակի ուրախութիւնը, որը հանապազ բաշխում է սբ Եկեղեցում՝ որպէս նախապատկեր երկնաւոր Հարսանիքի:

Սբ Հաղորդութիւնը մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչի վրայ մատուցած յաւիտենական Պատարագի շարունակական խորհուրդն է Եկեղեցու կեանքում: Համաձայն առաքելական ուսուցման՝ սբ Հաղորդութիւնը հոգեւոր կեանքի շարունակականութեան, սրբութեան, քրիստոնէական սիրոյ, առաքինագործութեան, Եկեղեցու ներքին աստուածապաշտութեան աղբիւրն է: «Եղբայրներ՛, ուրեմն Համարձակութիւն ունենք Յիսուսի արեամբ մտնելու սրբարանից ներս այն նոր եւ կենդանի ճանապարհով, որ Նա բացեց մեզ Համար վարագոյրի միջով, որ է Իր մարմինը: Եւ մեծ քահանայ ունենալով Աստուծոյ տան վրայ՝ մօտենանք ճշմարիտ սրտով, Հաւատքի լիութեամբ՝ սրտներս մաքրած չար խղճմտանքից եւ մեր մարմինը լուացած մաքուր ջրով: Ամուր պահենք անխախտ յոյսի դաւանութիւնը, քանի որ Հաւատարիմ է Նա, Ով խոստացաւ: Եւ հոգ տանենք միմեանց՝ սիրոյ եւ բարի գործերի յորդորելով, եւ զանց չառնենք մէկտեղ Հաւաքուելը, ինչպէս որ սովոր են անել ոմանք, այլ խրախուսենք միմեանց, եւ այդ այնքան աւելի, որքան տեսնում էք Տիրոջ օրուայ մօտենալը» [Եբր. Ժ 19—25]:

Հաղորդութիւնը Եկեղեցու փրկական խորհրդագործութիւնների եւ շնորհաբաշխութիւնների լրումն է: Եկեղեցու բոլոր գործերն ուղղորդուած են դէպի Տիրոջ Մարմնի եւ Արեան կենարար խորհուրդը: Այս առումով Տիրոջ Մարմնի եւ Արեան Հաղորդութիւնը խորհուրդների խորհուրդն է եւ Եկեղեցու սիրտը, որի կենարար երակներից են սնուում եւ որի շուրջ են Հաւաքուած Աստուծոյ տան բոլոր գործերը:

Որպէս մեր երկնաւոր քահանայապետ՝ Քրիստոսն Ինքն է, որ մատուցում է սբ Պատարագը քահանաների միջոցով, եւ Ինքն է, որ մատուցում է: Միայն առաքելական յաջորդականութեամբ փոխանցուած վաւերական ձեռնադրութիւն եւ օծում ունեցող քահանաները կարող են Պատարագ մատուցել: Պատարագի էական նշաններն են բազարջ կամ անթթիմոր Հացը եւ անապակ գինին, որոնք Սուրբ Հոգու

սրբագործութեամբ փոխարկուում են Քրիստոսի Մարմնի եւ Արեան: Անթթխմոր հացը եւ անապակ գինին, ըստ Հայ Եկեղեցու հայրերի, խորհրդանշում են Տիրոջ մարմնի անապակախնութիւնը: Հացի եւ գինու նշանների ներքոյ ճշմարտապէս եւ էապէս ներկայ է ինքը կենդանի եւ փառաւորեալ Քրիստոսը՝ մարդացեալ Բանն Աստուած: Սբ Գրիգոր Տաթեւացին այս մասին գրում է. «Պատահունքն ու որակը մնում են հացի եւ գինու մէջ, իսկ գոյացութիւնը փոխարկուում է Քրիստոսի Մարմնի եւ Արեան՝ չորս պատճառով: Նախ՝ մենք զգայաբաններով, պատահունքների միջնորդութեամբ, հասնում ենք գոյացութեանը, քանզի պատահունքները գոյացութիւնների անբաժանելի յատկանիշներ են: Երկրորդ՝ պատահունքները մնում են, որպէսզի մենք կարողանանք մօտենալ սրբութեանը. քանզի եթէ յայտնի տեսքով միս եւ արիւն լինէր, ոչ ոք չէր համարձակուի մօտենալ: Երրորդ՝ որպէսզի վարձատրուենք հաւատքով, որովհետեւ հաւատքն անտեսանելիի նկատմամբ է, որն է գոյացութիւնը: Ուստի պէտք է աչքով տեսնել զգալիները, իսկ մտքով հայել իմանալին եւ երանուել՝ ըստ այն խօսքի, որ [Տէրն] ասաց Թովմասին. «Դու հաւատացիր, որովհետեւ ինձ տեսար. երանի նրանց, ովքեր առանց տեսնելու կը հաւատան»» [Յովհ. Ի 29]<sup>1</sup>:

Համաձայն տէրունական խօսքի՝ Պատարագը նաեւ մատուցուում է մեղքերի թողութեան համար: Իւրաքանչիւր քրիստոնեայ խորագոյն զղջմամբ եւ ապաշխարութեամբ պէտք է մօտենայ Տիրոջ Մարմնի եւ Արեան սուրբ խորհուրդին: Անարժանութեամբ մօտեցողներին խիստ զգուշացումներ է անում սբ Պօղոս առաքեալը. «Ահա թէ ինչու ով որ ուտի այս հացը կամ խմի Տիրոջ այս բաժակն անարժանօրէն, պարտական կը լինի Տիրոջ Մարմնին եւ Արեանը: Թող մարդ նախ ինքն իրեն փորձի եւ ապա՝ ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից. որովհետեւ ով ուտում եւ խմում է անարժանօրէն, իր իսկ դատապարտութիւնն է ուտում եւ խմում, քանի որ չի տարբերում Տիրոջ Մարմինը [այլ կերակուրներից]: Դրա համար իսկ ձեր մէջ բազում հիւանդներ եւ ցաւագարներ կան, եւ շատերն էլ մեռած են» [Ա. Կոր. ԺԱ 27—30]:

Սակայն պէտք է կեղծ զգուշութեան պատրուակով հեռու մնալ հոգեւոր կեանքի գլխաւոր սրբութիւնից: Եկեղեցին յորդորում է հաւատացեալներին յաճախ հաղորդութիւն ստանալ, գոնէ՝ տաղաւար

1 Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729 թ., էջ 597—598

տօներին: Սբ Հաղորդութիւնից երկար ժամանակ կտրուած մնալը կարող է կործանարար հետեւանքներ թողնել մարդու հոգեւոր կեանքի վրայ եւ իսպառ չորացնել այն:

Սեփական անարժանութեան զգացումը պէտք է հասցնել յոյն Աստուծոց կտրելու աստիճանի, որովհետեւ սբ Հաղորդութիւնն է մեր հոգեւոր կեանքի նորոգման աղբիւրը: Այս մասին սբ Բարսեղ Կեսարացիի ուսուցանում է. «Ոչ ոք անյուսաբար թող չհեռանայ եւ սնտի երկիւղը պատճառ չբերի. այն երկիւղ է, այլ արհամարհանք: Քանզի սա երկնքի արքայութեան դուռն է եւ նոյն ինքը արքայութիւնը, որ Քրիստոսն է՝ Աստուծոյ Որդին եւ մեր Աստուածը, եւ սրբութեամբ մօտեցողներին անջնջելի կերպով որդեգրում է երկնաւոր Հօրը»<sup>2</sup>:

### ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԿ

Սբ Հաղորդութեան խորհուրդի արարողակարգը կոչւում է «Սրբազան Պատարագ» կամ «Սուրբ Պատարագ»: Հայոց Պատարագի արարողութիւնը բիւրեղացումն է Հայ Եկեղեցու ծիսական աստուածպաշտութեան եւ աստուածաբանական սիմվոլիզմի: Հայկական Պատարագը բազմաշերտ ծիսակարգ է, որը ձեւաւորուել է Հայ Եկեղեցու գրեթէ ողջ պատմութեան ընթացքում: Հայկական Պատարագի ակունքները ձգւում են մինչեւ առաքելական Պատարագի հնագոյն աւանդութիւն, որոնցից մէկն էլ ներմուծուեց սբ Գրիգոր Լուսաւորչի կողմից Հայոց դարձից յետոյ: Հայկական Պատարագի վրայ իր ազդեցութիւնն է թողել նաեւ երուսաղէմական ծէսը: Հայկական «Ճաշոց» գրքի պահպանուած արժէքաւոր ձեւագրերից մենք տեղեկանում ենք 5-րդ դարի երուսաղէմական ծէսի մասին, ինչը հաստատում է այնտեղ հիմնովին ձեւաւորուած Հայկական կրօնական համայնքի գոյութիւնը եւ Հայկական ծէսի մէջ երուսաղէմական աւանդութիւնների ներթափանցման հնարաւորութիւնը<sup>3</sup>:

Ե դարում, բնականաբար, մեր սբ Թարգմանիչները կողմից որպէս առաջնահերթութիւն հայացուեցին ծիսական մատեանները Եկե-

2 Ճաշոց գիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1872 թ., էջ 203

3 Renoux, A. Le Codex Armenien Jerusalem 121. *Patrologia Orientalis* 35/1, 36/2 (1970—1971), Brepols

ղեցու հայերէն արարողակարգը ապահովելու համար (ամենայն հաւանականութեամբ՝ նախքան Սուրբ Գրքի ամբողջական թարգմանութիւնը): Հայերէն թարգմանուեցին նաեւ Պատարագի մի շարք յայտնի բնագրեր: Ըստ Հ. Յովսէփ Գաթրճեանի՝ Ե դարի հայկական Պատարագը խարսխուած է երկու կարեւոր սկզբնաղբերներին՝ սբ Բարսեղ Կեսարացու<sup>4</sup> եւ սբ Գրիգոր Աստուածաբանի (Նազիրանցացու)<sup>5</sup> պատարագների վրայ: Փաստօրէն, կապագովկեան բնագրական աղբերը ինչպէս Սուրբ Գրքի, այնպէս էլ ծիսական մատեանների թարգմանութեան մէջ գերիշխող է եղել: Ընդ որում՝ Բարսեղեան Պատարագն աւելի վաղ շրջանառութիւն է ունեցել եւ հաւանաբար գործադրուել է հէնց սբ Սահակի եւ սբ Մեսրոպի կողմից: Աւելի ուշ սբ Գիւտ Արահեցացու եւ սբ Յովհան Մանգակունու կողմից շրջանառութեան մէջ է դրուել Նազիրանցեան Պատարագը որոշ յաւելումներով, որը յետագայում առաւել լայն տարածում է գտել եւ դարձել հայկական Պատարագի հիմքը մինչեւ Ժ դար: Խոսքով Անձեւացու Պատարագն իրենից ներկայացնում է Նազիրանցեան Պատարագի հայկական խմբագրութիւններից մէկը<sup>6</sup>: Ե դարից կիրառութեան մէջ մտած Բարսեղեան եւ Նազիրանցեան պատարագները մեզանում յայտնի են եղել սբ Գրիգոր Լուսաւորչի, սբ Աթանաս Մեծի, սբ Կիւրեղ Ալեքսանդրացու, սբ Սահակ Պարթեւի եւ սբ Մեսրոպի Մաշտոցի, սբ Յովհան Մանգակունու անուններով:

Հայկական Պատարագը, ինչպէս նաեւ Հայ Եկեղեցու ողջ ծիսակարգը հսկայական փոփոխութիւնների ենթարկուեցին կիրիկեան շրջանում: Հայկական ծէսի երբեմն անհարկի ճոխացումները եւ բիւզանդական ազդեցութիւնները զգալիօրէն ծանրաբեռնել եւ երբեմն աղաւաղել են մեր ոսկեդարեան ծէսի վեհութիւնը: Մեր արդի Պատարագի վրայ ամենամեծ ազդեցութիւնն ունեցել է Ներսէս Լամբրոնացին: Սակայն մեր արդի Պատարագի եւ Լամբրոնեան Պատարագի համեմատութիւնն ակնհերեւ է դարձնում, որ դրանց միջեւ նոյնպէս լուրջ տարբերութիւն կայ: Այսինքն՝ Պատարագի փոփոխութիւն-

4 Սրբազան պատարագամտոյցք հայոց, աշխատասիրութեամբ՝ Հ. Յովսէփ վրդ. Գաթրճեանի, Վիեննա, 1897թ. (= Գաթրճեան), էջ 81—216

5 Գաթրճեան, էջ 217—318

6 Գաթրճեան, էջ 286

ները շարունակուել են նաեւ Լամբրոնացուց յետոյ եւ հաւանաբար դադարել 1706 թ. Կ. Պոլսի տպագրութիւնից յետոյ:

Սրբազան Պատարագն ունի երկու գլխաւոր մաս՝ ճաշու ժամի պաշտամունք եւ սբ Պատարագի կանոն կամ Գոհութիւն, որոնց սկզբից եւ վերջից կցուած են Պատրաստութեան եւ Արձակման մասերը:

## Ա. ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Պատրաստութեան կարգը ներկայացուած է Զգեստաւորում, Լուացում, Նախամուտ եւ Առաջադրութիւն ենթակարգերով: Զգեստաւորումը կատարում է եկեղեցու հիւսիսային կողմում գտնուող աւանդատանը, ուր պատարագիչ հոգեւորականը յատուկ աղօթքներով հագնում է երկնային լուսեղէն հանդերձները խորհրդանշող Պատարագի զգեստները՝ Տիրոջը սպասաւորելու համար: Այնուհետեւ «Խորհուրդ խորին» շարականի երգեցողութեան ժամանակ պատարագիչը թափօրով դուրս է գալիս ատեան, ուր Պատարագի սրբութեանը սպասաւորելու համար լուանում է ձեռքերը՝ ասելով Ի՛ն սաղմոսը. «Լուացից սրբութեամբ զձեռս իմ եւ շուրջ եղէց զսեղանով Քով, Տէ՛ր»: Լուացմանը յաջորդում են ժողովրդի առջեւ մեղքերի խոստովանութիւնը եւ արձակումը: Այնուհետեւ քահանան, կատարելով տաճարի երկրպագութիւնը, ԽՐ՝ սաղմոսն ասելով բարձրանում եւ մտնում է երկնքի արքայութիւնը խորհրդանշող սբ Խորան: Խորանում վարագոյրները փակելուց յետոյ քահանան կարդում է սբ Գրիգոր Նարեկացու խորհրդական աղօթքները՝ նուիրուած Սուրբ Հոգուն, եւ ապա օրհնելով ու խնկարկելով նախապատրաստում է սբ Պատարագի ընծաները՝ հացն ու գինին:

## Բ. ՃԱՇՈՒ ԺԱՄԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Պատարագի երկրորդ մասն է ճաշու ժամի պաշտամունքը: Ճաշու ժամի յունարէն համարժէքն է «սինաքսիս»-ը, որը նշանակում է «ժողով» կամ «հաւաք»: Սբ Պատարագի այս մասում Աստուծոյ ժողովուրդը աղօթքներով, սուրբգրային ընթերցուածներով եւ «Հաւատամք» երգելով պատրաստում է Հաղորդութեան: Պատարագի այս մասը կոչւում է նաեւ «Բանի կամ Խօսքի պատարագ», քա-

նի որ այս մասի գլխաւոր թեման Աստուծոյ խօսքի ազդարարումն է Եկեղեցուն: Հին Եկեղեցուն մկրտութեան նախապատրաստողները կամ այսպէս կոչուած երախաները մասնակցում էին մինչեւ Պատարագի այս մասի աւարտը, որից յետոյ նրանք դուրս էին գալիս եկեղեցուց, եւ դռները փակուում էին: Այս պատճառով ձաշու ժամի պաշտամունքը կոչուում է նաեւ «Երախայից պատարագ»: ձաշու ժամի պաշտամունքը սկսուում է Փրկչի՝ աշխարհ գալը խորհրդանշող Խնկարկութեամբ կամ այսպէս կոչուած «Աշխարհ գալոց»-ով. պատարագիչը նախ խնկարկում է սբ Սեղանին եւ ապա Ընծաներին, որից յետոյ թափօրով, հիւսիսային աստիճաններով, իջնում է ժողովրդի մէջ եւ ժողովրդի միջով խնկարկելով անցնելուց յետոյ հարաւային աստիճաններով բարձրանում սբ Խորան:

Խնկարկութեանը յաջորդում է Սկիզբը, որը խորհրդանշում է Յիսուս Բրիստոսի մարդեղութեան միջոցով Աստուծոյ արքայութեան բացայայտումը եւ հաստատումը երկրի վրայ: Ապա քահանան Աստուծոց խնդրում է երկնային զօրքերի մասնակցութիւնը Պատարագի արարողութեանը, եւ «Երեքսրբեանի» երգեցողութեան ներքոյ կատարուում է Աւետարանի հանդիսաւոր վերաբերումը, որը յատուկ կերպով շեշտադրում է Աստուծոյ խօսքի նկատմամբ Եկեղեցու վերաբերմունքը: Եկեղեցին ունի իւրաքանչիւր օրուայ խորհուրդը բացայայտող ձաշու ժամի սուրբգրային ընթերցուածներ: ձաշու մուտքին յաջորդում են նախ Հին ուխտի եւ առաքելական թղթերի ընթերցումը ներքեւից՝ դասից, եւ ապա Աւետարանի ընթերցումը վերեւից՝ սբ Խորանից: Ապա Եկեղեցին երգում է Հաւատոյ հանգանակը, որն աստուածային փրկագործ տնօրինութիւնների հիմնական դրոյթների ամբողջութիւնն է կամ ուղղափառ հաւատքի խոստովանութիւնը: ձաշու ժամն աւարտուում է քահանայական աղօթքով եւ օրհնութեամբ:

### Գ. ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅ ԳԱՏԱՐԱԳԻ

Սբ Պատարագի կանոնը կազմուած է չորս մասից՝ Վերաբերութիւն, Գոհութիւն, Լրում եւ Հաղորդութիւն: «Վերաբերութիւն» նշանակում է Պատարագի ընծաների վեր բարձրացում եւ մատուցում սբ Սեղանին: Վերաբերութիւնը սկսուում է «Մեծ մուտք»-ով, որը խորհրդանշում է Բրիստոսի փրկական վերելքը դէպի խաչի գոհասեղան: Սարկաւազը նախ բարձր ձայնով ազդարարում է, որ Մկրտու-



թեան նախապատրաստողները, թերահաւատները եւ ապաշխարողները չմօտենան սբ Հաղորդութեանը: Այս ազդարարումը սահմանում է սբ Հաղորդութիւն ստանալու դաւանական, բարոյական եւ ծիսական-խորհրդական նախապայմանները. միայն նրանք, ովքեր ունեն ուղղափառ հաւատք, առաքելական յաջորդականութեամբ ստացած վաւերական մկրտութիւն եւ ներքին ուղղափառութեան հիմք հանդիսացող ապաշխարութեան հոգի, կարող են մօտենալ հոգեւոր կեանքի մեծագոյն սրբութեանը՝ Քրիստոսի Մարմնին եւ Արեանը: Խաչի ճանապարհին Տիրոջ հետ կարող են լինել միայն նրանք, ովքեր հաւատում են Խաչի փրկաբեր խորհուրդին, խորհրդաբար մտել են Տիրոջ մահուան մէջ եւ ներքնապէս խաչակից են Քրիստոսին: Ապա Ընծաները վեր են բարձրացւում սբ Խորանի հիւսիսային կողմի պահոցից եւ թափօրով հանդիսաւորապէս բերւում սբ Խորանի հարաւային կողմ, ուր պատարագիչը վերցնում է դրանք եւ խաչակնքելով ժողովրդին՝ մատուցում սբ Սեղանին: Վերաբերումը եզրափակւում է «խաղաղութեան ողջոյնով»: Հաւատացեալները միմեանց ողջունում են՝ ասելով. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»: Առաքելական շրջանից եկող այս հնագոյն աւանդութիւնը կոչւում է նաեւ «սրբութեան համբոյր» (Հռ. ԺԶ 16, Ա Կոր. ԺԶ 20, Բ Կոր. ԺԲ 12). այն եղել է նաեւ այդ ժամանակներում ընդհանրացած ողջոյնի ձեւը: Քրիստոսը մեր խաղաղութիւնն ու հաշտութիւնն է. նրանով խաղաղութիւն է հաստատւում երկնքի եւ երկրի, Աստուծոյ եւ մարդու միջեւ: Հաւատացեալները միմեանց հետ կիսում են Աստուծոյ հետ հաշտութեան նոր ուխտի աւետիսը՝ սիրով եւ խաղաղութեամբ լցուելով միմեանց հանդէպ:

Վերաբերմանը յաջորդող Գոհութիւնը սբ Պատարագի կենտրոնական մասն է: Գոհութեան յունարէն համարժէքն է «էվխարիստիա» կամ «Անաֆորա»: Պատարագի այս մասում Քրիստոսը որպէս երկնային թագաւոր բազմած է սբ Սեղանին՝ շրջապատուած վերին երկնային զօրքերով: Նա որպէս անմահ դառ պատարագ է մատուցւում: Սարկաւազական քարոզները մեզ յորդորում են ամենայն իմաստութեամբ եւ զգուշութեամբ, աստուածային երկիւղով բարձրացնել մեր միտքը դէպի երկնային իրականութիւն եւ ամբողջ սրտով գոհանալ Տիրոջից:

Սերովբէական երգի՝ «Սուրբ, սուրբ»-ի ժամանակ քահանայի կողմից ասուող ծածուկ աղօթքը ներածում է մեզ սբ Վերնատանը

կատարուած խորհրդական իրականութեան մէջ: «Սուրբ, սուրբ»-ին անմիջապէս յաջորդող փրկչական խօսքերի զօրութեամբ «Առէ՛ք, կերէ՛ք. սա Իմ Մարմինն է...», «Խմէ՛ք սրանից բոլորդ. սա նոր ուխտի Իմ Արիւնն է...», սկսուում է Ընծաների սրբազնագործումը: Հացի եւ գինու նշանակների մէջ թափանցում է Տիրոջ հրամանը, եւ եկեղեցում հաւաքուած հաւատացեալները հրաւիրուում են սեղանակից լինելու Վերնատան յաւիտենական ընթրիքին: Սակայն ո՞րն էր Վերնատան Պատարագը: Տէրը հացի եւ գինու նշանակներով առաջնորդում է մեզ դէպի Գողգոթա, դէպի Խաչի զոհասեղան, որի վրայ Նա պատարագուեց եւ Ինքն Իրեն մատուցեց որպէս զոհ, որպէս զառ եւ երկնաւոր հաց: Սա միակ եւ ճշմարիտ Ձոհն է, եւ ոչ մի այլ զոհաբերութեան կարիք չկայ, քանզի Աստուած Ինքն է բաշխողը եւ Ինքն է միշտ անսպառաբար բաշխուում մեր մէջ: Այնուհետեւ սբ Պատարագի արարողակարգը ուղեկցում է մեզ դէպի Պատարագի լրումը, որը մեր Տիրոջ հրաշափառ յարութիւնն է եւ յաղթանակը մահուան ու չարիքի հանդէպ: Նախ յարութեան լոյսն աւետուում է դժոխքում բանտարգելուած հոգիներին, ապա՝ երկնաւոր զօրութիւններին, այնուհետեւ Մարմնացեալ Բանը բազմում է Հօր աջ կողմում, Որից միշտ անբաժան էր աստուածութեամբ:

Աստուծոյ ժողովրդի հազորդութիւնն աւետարանական փրկագործ իրադարձութիւններին եւ դրանցից բխող շնորհներին կատարուում է Սուրբ Հոգու կենդանի ներգործութեամբ: Հոգեպալուստը լրումն է Աստուծոյ մարդեղութեան խորհուրդի: Քրիստոսի խորհրդական մարմինը՝ Եկեղեցին, լի է Սուրբ Հոգով, Ով կենսագործում եւ սրբազնագործում է Աւետարանի ճշմարտութիւնը Քրիստոսով փրկագնուած արարչութեան համար: Ինչպէս Աւետարանում են փրկական տնօրինութիւնները կատարուում Սուրբ Հոգով, այնպէս էլ՝ Եկեղեցում: Այն, ինչ տեղի է ունեցել Խաչի զոհասեղանին, Եկեղեցու համար կատարուում է Սուրբ Հոգու կենսագործ զօրութեամբ: Սուրբ Հոգու վերակոչմամբ տեղի է ունենում սրբազան Ընծաների փոխարկումը կամ սրբազնագործման լրումը, որը սկսուել էր Փրկչի՝ Վերնատանն ասուած խօսքերով: Քահանան նախ երեք անգամ խաչակնքում է սբ Հացը՝ ասելով. «Որով օրհնելով այս Հացը՝ ճշմարտապէս դարձրու մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Մարմինը»: Ապա երեք անգամ խաչակնքում է սբ Գինին՝ ասելով. «Եւ օրհնելով այս Բաժակը՝ ստուգապէս դարձրու մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Արիւնը»:

Յետոյ երեք անգամ խաչակնքում է միասին՝ ասելով. «Որով օրհնելով այս Հացը եւ գինին՝ ճշմարտապէս դարձրու մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը՝ փոխարկելով Քո Սուրբ Հոգով»:

Վերակոչմանը յաջորդող հետեւեալ երգով սկսում են ննջեցեալների յիշատակութիւնները. «Հոգի՛ Աստուծոյ, որ երկնքից իջնելով՝ մեր միջոցով կատարում ես Փառակցիդ խորհուրդը, Նրա արեան հեղմամբ աղաչում ենք Քեզ, հանգի՛ստ տուր մեր ննջեցեալների հոգիներին»:

Սուրբերի եւ ուղղափառ հաւատքով ի Քրիստոս ննջածների հոգիները Եկեղեցու անբաժանելի մասն են: Երկրի վրայ գտնուող մարտնչող Եկեղեցին խորհրդական-չնորհական կապի մէջ է երկնային յաղթական Եկեղեցու հետ: Երկրի վրայ գտնուող Եկեղեցում մատուցուող Պատարագը, սնուելով մէկ եւ միակ երկնաւոր Քահանայապետի կողմից մատուցուող երկնային Պատարագի շնորհներից, ժամանակից դուրս եւ տիեզերական իրողութիւն է, որը միաւորում է Փրկչի միջոցով ազատագրուած նախահայրերին, ի Քրիստոս ննջածներին եւ աշխարհի տարբեր ծագերում ապրող ուղղափառ քրիստոնեաներին: Սուրբերն իրենց բարեխօսութեամբ ներկայ են մեր կեանքում, ուստի մենք խնդրում ենք Աստուծոն, որ մեր կողմից մատուցուող սբ Պատարագով լինի նրանց բոլորի յիշատակութիւնը:

Յիշատակութիւններին յաջորդում է Տէրունական աղօթքը: Որդեգրութեան շնորհները ստացած հաւատացեալները հանդիսաւորապէս երգում են՝ դիմելով իրենց երկնաւոր Հօրը, ինչպէս ուսուցանեց Քրիստոսը: Այնուհետեւ քահանան բարձրացնում է սբ Հացը՝ ազգարարելով. «Սրբութիւնը՝ սուրբերին», ապա՝ սբ Հացը եւ Գինին, երբ դպրաց դասը երգում է. «Միակ սուրբ, միակ Տէր՝ Յիսուս Քրիստոս՝ ի փառս Հայր Աստուծոյ. ամէն»: Մեր սրբութիւնը Քրիստոսն է, եւ մենք բոլորս կոչուած ենք սուրբ լինելու Քրիստոսով: Եւ այդ սրբութեան աղբիւրը սբ Հաղորդութիւնն է, որը մտնելով մեր մէջ՝ սրբացնում եւ աստուածացնում է մեզ:

Գոհութեան մասը եզրափակում է Ամենասուրբ Երրորդութեան անուանների փառաբանմամբ: Նախ փառաբանում են աստուածային անուաններն առանձնակի, ապա՝ միասին, որին հաւատացեալները ձայնակցում են՝ ասելով. «Ամէն»: Մարդեղութեան խորհուրդով աստուածային էութիւնը արտաբացուել է դէպի մարդկութիւնը որպէս Երեք Անձինք եւ Մէկ Աստուածութիւն, որպէս Հայր, Որդի եւ Սուրբ Հո-

գի: Որդու մարմնաւորմամբ մենք ստացել ենք որդեգրութեան պատիւը, ճանաչել մեր երկնաւոր Հօրը եւ Հաղորդակից դարձել Սուրբ Հոգու շնորհներին: Աստուածայինը ոչ թէ հեռաւոր անհասանելիութեան մէջ գտնուող ինքնափակ եզակիութիւն է, այլ մեր տկարութեան մէջ արտաբացուած սիրոյ առատութիւն եւ անբաժանելի միութիւն:

Լրման ենթակարգում քահանան նախ երեք անգամ թաթախում է Տիրոջ սբ Մարմինը անապական Արեան մէջ, ապա շրջուելով ի տես ժողովրդի՝ ասում. «Սրբութեամբ ճաշակենք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի սուրբ, սուրբ եւ պատուական Մարմնից եւ Արիւնից, որ երկնքից իջնելով՝ բաշխուած է մեր մէջ: Սա՛ է կեանքը, յարութեան յոյսը, մեղքերի քաւութիւնը եւ թողութիւնը...»: Ապա փակուած է վարագոյրը: Քահանան նախ խոստովանում է Քրիստոսին, ապա բեկանում է Մարմինը չորս մասի եւ դնում բաժակի մէջ՝ ասելով. «Լրումը Սուրբ Հոգու»: Մենք փրկուած ենք Քրիստոսի Արեամբ: Հետեւաբար, Թաթախումը խորհրդանշում է Քրիստոսի խորհրդական մարմնի՝ Եկեղեցու փրկադնումը Տիրոջ Արեան հեղմամբ: Իսկ բեկանումը յիշատակն է Քրիստոսի կողմից Վերնատանը կատարուած գոհութեան հացի բաշխման, ինչպէս նաեւ խորհրդանիշը՝ Քրիստոսի մարմնի միութեան. թէպէտ այն բեկանուելով բաժանուում է բազմաթիւ հաւատացեալների միջեւ, սակայն մնում է մէկ եւ անբաժանելի, որպէս մէկ Տիրոջ մէկ Մարմին<sup>7</sup>:

Հաղորդութիւնը սբ Պատարագի կանոնի վերջին մասն է: Այն սկսում է նախապատրաստական երգերով եւ աղօթքներով: Այնուհետեւ քահանան Հաղորդում է, յետոյ Հաղորդութիւն տալիս նախ հոգեւոր դասին, ապա՝ ժողովրդին: Հաղորդութիւնը եզրափակում է գոհաբանական երգերով ու աղօթքներով:

Սբ Հաղորդութիւնը Պատարագի արարողութեան բարձրակէտն է: Աստուծոյ ժողովուրդը, նախապէս ապաշխարելով, անցնելով աւետարանական փրկագործ տնօրինութիւնների միջով, արժանանում է գերագոյն շնորհին՝ Աստուծոյ հետ Հաղորդութեան: Քրիստոնեան

7 Ըստ Տիրան արք. Ներսոյեանի՝ Մարմինը չորս մասի բեկանելու սովորութիւնը սկսուել է Դ դարից եւ ընդհանրացել ժ դարում: Հայ Եկեղեցում մինչեւ ժԲ դար Հաղորդութեան երկու տարրերը՝ Մարմինը եւ Արիւնը, գատ-գատ են տրուել Հաղորդողին, եւ աւագ սարկաւազը կրում էր Բաժակը: Հետեւաբար, դրանից առաջ Թաթախում էր կատարում: Տես Տիրան արք. Ներսոյեան, Համառօտ մեկնութիւն պատարագամտոյցի, Փարիզ, 1999:

ճաշակուժ է այն, ինչ վեր է բոլոր մտքերից եւ խօսքերից, իր մէջ է ընդունում այն, ինչն անսահմանօրէն վեր է մարդկային բնութիւնից: Սա քրիստոնէական կրօնի գլխաւոր առանձնայատկութիւնն է: Աստուած մարդացել է, որպէսզի մարդն աստուածանայ: Աստուած-ճանաչողութիւնը քրիստոնեայի համար գոյաբանական հաղորդակցութիւն է եւ ոչ թէ արտաքին գիտելիք: Քրիստոսով մենք տաճարացել ենք Աստուծոյ բնակութեան համար եւ ստացել հոգեւոր կեանքի ճշմարիտ ճանապարհ, եւ այդ հոգեւոր կեանքի ճշմարիտ կերակուրը Տիրոջ անապական Մարմինն ու Արիւնն է, որ միշտ անծախապէս բաշխուժ է սբ Եկեղեցում:

## Դ ԱՐՁԱԿՈՒՄ

Սբ Պատարագի կանոնին կցուած Արձակման կարգը Պատարագի արարողակարգի եզրափակիչ փուլն է: Այն կազմուած է աղօթքից, աւետարանական վերջին ընթերցումից եւ արձակման օրհնութիւնից: Արձակման կարգի աղօթքների հեղինակը սբ Յովհան Ոսկեբերանն է: Վերջին Աւետարանը (Յովհ. Ա 1–14), ըստ էութեան, ամփոփում է սբ Պատարագի խորհուրդը: Նա, որ «ի սկզբանէ էր»՝ նախալուծեան Բանն Աստուած, «ամբին եղաւ» եւ մեզ համար բացեց ճշմարիտ աստուածգիտութեան եւ աստուածապաշտութեան դռները: Հոգեւոր գիտակցութեան միակ իրական հիմքը Բանի մարդեղութիւնն է: Օրհնուելով՝ քրիստոնեաները գնում են աշխարհ՝ իրենց հետ տանելով Մարդացած Աստուծոյ խորհուրդով բացուած նոր կեանքի վկայութիւնը եւ աստուածահաղորդութիւնից սնուցուող իրական հաւատքի լոյսը:

\* \* \*

Հայոց սրբազան Պատարագի ներկայ արեւելահայերէն թարգմանութիւնը կատարուել է Տիրան արքեպիսկոպոս Ներսոյեանի հրատարակած բնագրից<sup>8</sup>: Թարգմանութեան կատարման ժամանակ հարկ

8 Պատարագամտոյց Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցոյ, անգլերէն թարգմանութեամբ եւ բացատրական յաւելուածովք, Տիրան արք. Ներսոյեան, հինգերորդ տպագրութիւն, Լոնտոն, 1984 թ.

եղած դէպքում դիմել ենք նաեւ Արսէն քահանայ Բագրատունու<sup>9</sup> եւ Դանիէլ վարդապետ Ֆընտըգեանի<sup>10</sup> հրատարակութիւնների օժանդակութեանը: Բնագրագիտական ճշգրտումների, համեմատութիւնների եւ թարգմանական երկրամաստութիւնների յստակեցման համար մեր առջեւ է եղել Հ. Յովսէփ Գաթրճեանի՝ հայկական Պատարագին նուիրուած կարեւոր աշխատասիրութիւնը<sup>11</sup>: Անհրաժեշտութեան դէպքում դիմել ենք նաեւ սբ Յովհան Ոսկեբերանի Պատարագի յունարէն բնագրին<sup>12</sup> եւ հայերէն թարգմանութեանը<sup>13</sup>: Թարգմանութիւնն իրականացնելիս մենք հետեւել ենք սբ Պատարագի մեկնութեան երկու կարեւոր սկզբնաղբիւրների՝ Խոսրով Անձեւացու<sup>14</sup> եւ Ներսէս Լամբրոնացու<sup>15</sup> մեկնութիւններին:

Թարգմանութեանն առնչուած արժէքաւոր դիտողութիւնների համար մեր խորին երախտագիտութիւնն ենք յայտնում գերաշնորհ Միքայէլ եպս. Աջապահեանին:

Մեսրոպ քահանայ Արամեան

9 Արսէն Բագրատունի, Արարողութիւն եւ մեկնութիւն խորհրդոյ սրբոյ Պատարագի Հայաստանեայց Եկեղեցւոյ, Թիֆլիս, 1884 թ.

10 Պատարագամտոյց Հայաստանեայց Եկեղեցւոյ, խմբ. Դանիէլ վրդ. Ֆընտըգեան, Ս. Վարդան հրատարակչատուն, Նիւ Եորք, 1999 թ.

11 Տես ծնթ. 4:

12 *The Divine Liturgy of Our Father Among the Saints John Chrysostom; The Greek Text together with a Translation into English; Oxford University Press, 1995*

13 Գաթրճեան, էջ 353—384

14 *Xosrov Anjevac'i, Commentary on the Divine Liturgy; translated by S. Peter Cowe; St. Vartan Press, 1991*

15 Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ Տարսնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս Եկեղեցւոյ եւ Մեկնութիւն խորհրդոյ Պատարագին, Վենետիկ, 1847 թ.

## ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳ

### ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ՝ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

#### ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

#### ԶԳԵՍՏԱԻՈՐՈՒՄՆ

Յորժամ կամիցի քահանայն պարարագ մարուցանել, պարտի այսպէս խորհրդարար զգեստարտիլ:

Մրցէ յաանդարունն հանդերձ սարկասագօք, ուր զգեստքն են պարարագին, եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իրարանչիւր սարիճանի՝ սպասասացեն.

Սաղմ. ՃԼԱ

**Կցուրդ.** Քահանայք Քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք Քո ցնծալով ցնծասցեն:

**Փոխ.** Յիշեա՛, Տէր, զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա:

Որպէս երգուաւ Տեառն եւ ուխտս եղ Աստուծոյ Յակոբայ:

Թէ ոչ մտից ի յարկս տան իմոյ, թէ ելից յանկողինս մահճաց իմոց,

Թէ տաց քուն աչաց իմոց կամ նինջ՝ արտեւանաց իմոց կամ հանգիստ՝ իրանաց իմոց, մինչեւ գտից գտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ:

## ՍՐԲԱԶԱՆՆ ԳԱՏԱՐԱԳ

### ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌՈՒ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ

#### ԳԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

#### ԶԳԵՍՏԱՒՈՐՈՒՄ

Երբ քահանայն կամենում է պարարագ մատուցել, պէտք է խորհրդաբար այսպէս զգեստարարուի:

Մարկաւագների հետ միասին մտնում է սաւնդարուն, ուր պարարագի զգեստներն են, եւ սպասարարներն ըստ իրենց սաւրճանների զգեստարարութեան յետոյ ստում են.

Սաղմ. ՃԼԱ

**Կցուրդ.** Քո քահանայները թող արդարութիւնն հագնեն, եւ Քո սուրբերը թող ուրախութեամբ ցնծան:

**Փոխ.** Տէ՛ր, յիշի՛ր Դաւթին եւ նրա ողջ հեղութիւնը:

Թէ՛ ինչպէս երգուեց Տիրոջը եւ ուխտ արեց Յակոբի Աստուծոյ հետ:

Թէ՛ չեմ մտնի իմ տան յարկի տակ եւ չեմ ելնի իմ հանգստութեան անկողինը.

Քուն չեմ տայ իմ աչքերին կամ նինջ՝ իմ թարթիչներին կամ հանգիստ՝ իմ մարմնին, մինչեւ չգտնեմ Յակոբի Տէր Աստուծոյ տան տեղը:



Ահա լուաք գնմանէ յեփրաթա եւ գտաք զնա ի դաշտս մայրեաց:  
Մտցուք ի յարկս Նորա, երկիրպագցուք ի տեղւոջ, ուր կացեալ  
են ոտք Նորա:

Արի՛, Տէր, ի հանգիստ Քո, Դու եւ տապանակ կտակի սրբու-  
թեան Քո:

Երիցունք Քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք Քո ցնծալով  
ցնծասցեն:

Վասն Դաւթի սիրելւոյ Քոյ մի՛ դարձուցաներ զերեսս Քո յօծե-  
լոյ Քուամէ:

Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ո՛չ ստեաց նմա՝ ի պտ-  
ղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս Իմ եւ զվկայութիւնս Իմ, զոր  
ուսուցից նոցա,

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո:

Հաճեցաւ Տէր ընդ Սիոն եւ ընտրեաց բնակիլ ի նմա. «Այս  
է հանգիստ Իմ յաւիտեանս յաւիտենից, ի սմա բնակեցայց, զի  
հաճեցայ ընդ սա:

Զայրիս սորա օրհնելով օրհնեցից եւ զաղքատս սորա լցուցից  
հացիւ:

Երիցանց սորա զգեցուցից զփրկութիւն, եւ սուրբք սորա ցնծա-  
լով ցնծասցեն:

Անդ ծագեցից եղջիւր ի Դաւիթ, պատրաստ արարից զճրագ օծե-  
լոյ Իմոյ:

Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, եւ ի վերայ նորա ծաղկեսցի  
սրբութիւն Իմ»:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ քարոզեսցէ սարկաւազն.

Խնդրեսցուք հաւատով եւ միաբանութեամբ ի Տեառնէ, զի գո-  
ղորմութեան զշնորհսն արասցէ ի վերայ մեր. ամենակալ Տէր  
Աստուած մեր կեցուցէ եւ ողորմեսցի:

Ահա [խորանի] մասին լսեցինք Եփրաթայրում եւ այն գտանք մայրիների դաշտում:

Մտնենք Նրա բնակութեան յարկերը, երկրպագենք այնտեղ, ուր կանգնած են Նրա ոտքերը:

Ելի՛ր, Տէր, Քո հանգստավայրը, Դու եւ սուրբ Ուխտիդ տապանակը:

Քո քահանաները թող արգարութիւն հագնեն, եւ Քո սուրբերն ուրախութեամբ ցնծան:

Յանուն Քո ծառայ Դաւթի մի՛ դարձրու երեսդ Քո օծեալից:

Տէրը ճշմարտութեամբ երդուեց Դաւթին եւ չստեց նրան՝ խոստանալով նրա որովայնի պողից նստեցնել նրա գահին:

Եթէ քո որդիները պահեն Իմ օրէնքները եւ վկայութիւնները, որ սովորեցնելու եմ նրանց,

Նրանց որդիներն էլ յաւիտեանս յաւիտենից կը նստեն քո գահին:

Տէրը հաւանեց Սիոնը եւ նախընտրեց այնտեղ բնակուել՝ ասելով. «Այս է Իմ հանգստավայրը յաւիտեանս յաւիտենից, այստեղ պիտի բնակուեմ, որովհետեւ հաւանեցի սա:

Պիտի օրհնելով օրհնեմ սրա այրիներին եւ հացով կշտացնեմ սրա աղքատներին:

Սրա քահանաներին փրկութիւն պիտի հագցնեմ, եւ սրա սուրբերը պիտի ուրախութեամբ ցնծան:

Այնտեղ պիտի եղջիւր ծլեցնեմ Դաւթին, եւ Իմ օծեալի համար ճրագ պատրաստեմ:

Նրա թշնամիներին ամօթ պիտի հագցնեմ, իսկ նրա վրայ պիտի ծաղկի Իմ սրբութիւնը»:

Փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն.  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ սարկաւագը քարոզում է.

Հաւատքով եւ միաբանութեամբ խնդրենք Տիրոջից, որ պարգևի մեզ Իր ողորմութեան շնորհը. մեր ամենակալ Տէր Աստուածը թող կեանք տայ եւ ողորմի:

Եւ ասասցեն երկուրասան անգամ.

*Տէ՛ր, ողորմեա՛:*

Աղօթք առանձնական պարարագիչ քահանային՝ յսոսջ քան զզգես-  
րատրեյն.

*Որ զգեցեալ ես զլոյս որպէս հանդերձ, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, անճառելի խոնարհութեամբ յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան շրջեցար: Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեղեկի եւ զարդարեցեր զԵկեղեցի Քո սուրբ: Տէ՛ր ամենակալ, որ պարգեւեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգեհուլ, արժանի՛ արա եւ զիս ի ժամուս յայսմիկ, զանպիտան ծառայս Քո, որ համարձակիմ եւ մերձենամ ի նոյն հոգեւոր պաշտօն փառաց Քոց, որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որ է հանդերձ պղծութեան, եւ զարդարեցայց լուսով Քով: Ընկեա՛ յինէն զչարիս իմ եւ թօթափեա՛ զյանցանս իմ, որպէս զի արժանի եղէց հանդերձեալ լուսոյդ առ ի Քէն: Շնորհեա՛ ինձ քահանայական փառօք մտանել ի պաշտօն սրբութեանց Քոց ընդ այնոսիկ, որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս Քո. զի եւ ես պատրաստ գտայց երկնաւոր առաքաստիդ ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զՔեզ, Քրիստո՛ս, որ բարձեր զմեղս ամենեցուն: Զի Դու ես սրբութիւն անձանց մերոց, եւ Քեզ բարերարիդ Աստուծոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ մարտոցեալ սարկաւագունքն՝ զզեցուցեն նմա զհանդերձսն՝ ասելով.

*Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:*

Քահանայն.

*Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ յետ օրհնութեան դիցէ յսոսջ զխորն ի գլուխն եւ ասասցէ.

*Դի՛ր, Տէր, սաղաւարտ փրկութեան ի գլուխ իմ՝ պատերազմել ընդ զօրութիւնս թշնամւոյն, շնորհօք Տեառն մերոյ եւ Փրկչին Յի-*

Եւ Կասնէրկու անգամ ասում են.

**Տէ՛ր, ողորմի՛ր:**

Պատարագիչ քահանայի առանձնական աղօթք՝ զգեստարարուելոց ասաջ.

Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, որ հագել ես լոյսն իբրեւ հանդերձ, անպատմելի խոնարհութեամբ երեւացիր երկրի վրայ եւ շրջեցիր մարդկանց հետ: Որ յաւիտենական Քահանայապետ եղար ըստ Մեղքիսեղեկի կարգի եւ զարդարեցիր Քո սուրբ Եկեղեցին: Տէ՛ր ամենակալ, որ պարզեցիր մեզ հագնել նոյն երկնային հանդերձը, արժանի՛ արա այս ժամին եւ ինձ՝ Քո անպիտան ծառային, որ համարձակում եւ մերձենում եմ Քո փառքի նոյն հոգեւոր սպասաւորութեանը, մերկանալ իմ բոլոր ամբարշտութիւններից, որ պղծութեան հանդերձ են, եւ զարդարուել Քո լոյսով: Դէ՛ն գցիր ինձանից իմ բոլոր չարիքները եւ թօթափի՛ր իմ յանցանքները, որպէսզի արժանի լինեմ Քո պատրաստած լոյսին: Ծնորհի՛ր ինձ քահանայական փառքով մտնել Քո սրբութեան սպասաւորութեան մէջ նրանց հետ, ովքեր անմեղութեամբ պահեցին Քո պատուիրանները, որպէսզի եւ ես իմաստուն կոյսերի հետ պատրաստ գտնուեմ երկնաւոր առագաստիդ՝ փառաւորելու Քեզ, Քրիստո՛ս, որ բոլորի մեղքերը վերցրիր: Որովհետեւ Դու ես մեր անձերի սրբութիւնը, եւ Քեզ՝ բարերար Աստծուդ, վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ սարկաագները մօտենալով՝ զգեստարարում են նրան՝ ասելով.

**Դարձեալ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը. ընդունի՛ր, կեանք տուր եւ ողորմի՛ր:**

Քահանան.

**Օրհնութիւն եւ փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

Եւ օրհնութիւնից յետոյ նախ սաղասարդը դնում է գլխին եւ ասում.

Տէ՛ր, դի՛ր իմ գլխին փրկութեան սաղաւարտը՝ պատերազմելու թշնամու գօրութիւնների դէմ, մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս:

սուսի Քրիստոսի, Որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շապկին.

Զգեցո՛ ինձ, Տէ՛ր, հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան եւ շուրջ պատեա՛ զգգեստովս փրկութեան, շնորհօք Տեառն...

Փորորարին.

Զգեցո՛, Տէր, պարանոցի իմոյ զարդարութիւն եւ սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց, շնորհօք Տեառն...

Թաշկինակին.

Սրբեա՛, Տէր, զձեռս իմ յամենայն աղտեղութենէ մեղաց, շնորհօք Տեառն...

Գօլուոյն.

Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ եւ զմտացս եւ շիջուցէ ի սոցանէ զխորհուրդս աղտեղիս, եւ զօրութիւն շնորհաց Քոց յամենայն ժամ բնակեսցէ ի սոսա, շնորհօք Տեառն...

Բազպանին.

Տո՛ւր, Տէր, զօրութիւն (աջոյ կամ ձախոյ) ձեռին իմոյ եւ լուա՛ զամենայն աղտեղութիւնս իմ, որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել Քեզ անախտութեամբ հոգւոյ եւ մարմնոյ, շնորհօք Տեառն...

Վակասին.

Զգեցո՛, Տէր, պարանոցի իմոյ զարդարութիւն եւ սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց, շնորհօք Տեառն...

Շորջատին կամ նստիորարին.

Տէ՛ր, ողորմութեամբ Քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ եւ պարսպեա՛ ընդգէմ ներգործութեանց չարին, զի արժանի եղէց փառաւորել զՔո փառաւորեալ անունդ, շնորհօք Տեառն...

տոսի շնորհով, Ուժ վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շապիկը [հագնելիս].

Տէ՛ր, Հագցրո՛ւ ինձ փրկութեան Հանդերձ եւ ուրախութեան  
պատմուճան, շուրջ բոլորս պատի՛ր փրկութեան զգեստով, մեր  
Տէր...

Փորորաբը [հագնելիս].

Տէ՛ր, Հագցրո՛ւ իմ պարանոցին արդարութիւն եւ մաքրի՛ր իմ  
սիրտը մեղքի ամէն տեսակ աղտեղութիւններից, մեր Տէր...

Թաշկինակը [վերցնելիս].

Տէ՛ր, սրբի՛ր իմ ձեռքերը մեղքի ամէն տեսակ աղտեղութիւննե-  
րից, մեր Տէր...

Գօրին [կապելիս].

Հաւատքի գօտին թող պատի իմ սիրտն ու միտքը, սրանց միջից  
Հանգցնի աղտեղի խորհուրդների կրակը, եւ Քո շնորհի զօրու-  
թիւնը թող միշտ բնակուի սրանց մէջ, մեր Տէր...

Բազպանը [հագնելիս].

Տէ՛ր, զօրութի՛ւն տուր իմ (աջ կամ ձախ) ձեռքին եւ լու՛ւ իմ բո-  
լոր աղտեղութիւնները, որպէսզի կարողանամ հոգու եւ մարմնի  
անախտութեամբ սպասաւորել Քեզ, մեր Տէր...

Վակասը [հագնելիս].

Տէ՛ր, Հագցրո՛ւ իմ պարանոցին արդարութիւն եւ մաքրի՛ր իմ  
սիրտը մեղքի ամէն տեսակ աղտեղութիւններից, մեր Տէր...

Շուրջատը [հագնելիս].

Տէ՛ր, Քո ողորմութեամբ Հագցրո՛ւ ինձ պայծառ զգեստ եւ պարս-  
պի՛ր ընդգէ՛մ Հարի ներգործութիւնների, որպէսզի արժանի լինեմ  
փառաւորելու Քո փառաւորեալ անունը, մեր Տէր...

Յեւր զգեարատրելոյ սրբազան զգեարութն սասացէ.

*Յնծասցէ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան  
եւ պատմուճան ուրախութեան, իբրեւ փեսայի եղ ինձ պսակ եւ  
իբրեւ զհարսն զարդու զարդարեաց զիս, շնորհօք Տեառն...*

Եւ յետոյ եկեացեն սուսջի սրբոյ Սեղանոյն:

Դպիրքն եղանակեացեն.

*Խորհո՛ւրդ խորին, անհաս, անսկիզբն, որ զարդարեցեր զվերին  
պետութիւնդ ի յառագաստ անմատոյց լուսոյն, գերապանձ փա-  
ռօք՝ զդասս հրեղինաց:*

*Անճառահարաչ զօրութեամբ ստեղծեր զԱդամ պատկեր տիրական  
եւ նագելի փառօք զգեստաւորեցեր ի դրախտն Ադենի՛ տեղի  
բերկրանաց:*

*Չարչարանօք Քո սուրբ Միածնիդ նորոգեցան արարածք ամե-  
նայն, եւ վերստին մարդն անմահացաւ՝ զարդարեալ ի զգեստ  
անկողոպտելի:*

*Անճրեւածին բաժա՛կ հրահոսան, որ հեղար յառաքեալսն ի սուրբ  
Վերնատանն, հե՛ղ եւ ի մեզ, Հոգի՛դ Սուրբ Աստուած, ընդ պատ-  
մուճանին՝ զՔո գիմաստութիւն:*

*Տան Քու՛մ վայել է սրբութիւն, որ զգեցար զվայելչութիւն,  
սրբութիւն փառաց ընդ մէջ Քո ածեալ. պատեա՛ զմէջս մեր  
ճշմարտութեամբ:*

*Որ զարարչագործ բազուկս Քո տարածեցեր ընդդէմ աստեղաց,  
հաստատեա՛ զբազուկս մեր կարողութեամբ՝ համբարձմամբ ձե-  
ռաց առ Քեզ միջնորդել:*

*Իկնամամբ թագ ի գլուխ պատեսցես զմիտս եւ զգայարանս խա-  
չանիչ ուրարմամբ ըստ Ահարոնի, ծաղկեալ յոսկեթել ի զարդ  
խորանին:*

*Բամից բոլորից տիրապէս աստուածպետական, նափորտապատ  
սիրով զմեզ զգեստաւորեցեր՝ Քու՛մ սուրբ Խորհրդոյդ լինել  
սպասաւոր:*

Մրբազան զգեստներով հանդերձաորուելուց յեղոյ ասում է.

*Թող իմ անձը ցնծայ Տիրոջով, քանզի հազցրեց ինձ փրկութեան հանդերձ եւ ուրախութեան պատմուճան, իբրեւ փեսայի՝ պսակ դրեց ինձ վրայ եւ իբրեւ հարսի՝ զարդերով զարդարեց ինձ, մեր Տէր...*

Ապա գալիս են [արևան]՝ սուրբ Սեղանի առջև:

Դպիրները երգում են.

*Խորհո՛ւրդ խորին, անհաս, անսկիզբ, որ զարդարեցիր վերին պետութիւնդ որպէս առագաստ անմատոյց լոյսի, գերապանձ փառքով՝ հրեղէնների դասերը:*

*Անպատմելի հրաշագործ գորութեամբ ստեղծեցիր Ադամին Քո տիրական պատկերով եւ սքանչելի փառքով զգեստաւորեցիր նրան Ազենի դրախտում՝ բերկրանքի վայրում:*

*Քո սուրբ Միածնի չարչարանքով նորոգուեցին բոլոր արարածները, եւ մարդը վերստին անմահացաւ՝ զարդարուելով անկողնապտելի զգեստով:*

*Հոգի՛՝ Սուրբ Աստուած, որ իբրեւ յորդառատ, հրահոսան բաժակ՝ հեղուեցիր առաքեալների վրայ սուրբ Վերնատան մէջ, այս պատմուճանի հետ մեզ վրայ ե՛լս հեղիր Քո իմաստութիւնը:*

*Սրբութիւն է վայել Քո տանը, որ վայելչութիւն ես հագել եւ փառքի սրբութիւնը մէջքիդ կապել. մեր մէջքը ե՛լս ճշմարտութեամբ պատիր:*

*Որ արարչագործ բազուկներդ ընդդէմ աստղերի տարածեցիր, կարողութեամբ հաստատի՛ր մեր բազուկները՝ ձեռքերի համբարձմամբ միջնորդելու Քո առջեւ:*

*Մեր գլխին թագ հիւսելով՝ պատի՛ր մեր միտքն ու զգայարանները խաչանիչ ուրարով, ինչպէս Ահարոնին պատեցիր ոսկեթելով ծաղկուած ուրարով, որ [Վկայութեան] խորանի զարդարանքի համար էր:*

*Բոլոր արարածների Տէ՛ր, Աստուած՝ եւ Պե՛տ, զգեստաւորեցիր մեզ Քո սիրով՝ իբրեւ շուրջառով՝ Քո սուրբ Խորհրդին սպասաւոր լինելու:*



*Թագաւո՛ր երկնաւոր, զԵկեղեցի Քո անշա՛րժ պահեա եւ զերկր-  
պագոս անուանդ Քում պահեա՛ ի խաղաղութեան:*

### ԼՐՒԱՅՈՒՄՆ

Եւ քահանայն լուսացէ զձեռն՝ ասելով.

Սաղմ. ԻԵ

Քահանայն.

**Կցուրդ.** Լուացից սրբութեամբ զձեռս իմ եւ շուրջ եղէց զսեղա-  
նով Քով, Տէ՛ր:

Սարկաւագն.

**Փոխ.** Դա՛տ արա ինձ, Տէ՛ր, զի ես յանբծութեան իմում գնացի, ի  
Տէր յուսացայ, զի մի՛ եղէց հիւանդ:

Փորձեա՛ զիս, Տէ՛ր, եւ քննեա՛ զիս, փորձեա՛ զերկամունս իմ  
եւ գսիրտ իմ:

Ողորմութիւն քո, Տէ՛ր, առաջի աչաց իմոց. եւ հաճոյ եղէց ճշմար-  
տութեան Քում:

Ո՛չ նստայց ես յաթոռս նանրաց եւ ընդ անօրէնս ես ո՛չ մտից:  
Ատեցի ես զժողովս չարաց եւ ընդ ամբարիշտս ես ո՛չ նստայց:  
Լուացից սրբութեամբ զձեռս իմ եւ շուրջ եղէց զսեղանով Քով,  
Տէ՛ր.

Լսել ինձ զձայն օրհնութեան Քո եւ պատմել զամենայն սքան-  
չելիս Քո:

Տէ՛ր, սիրեցի զվայելչութիւն տան Քո եւ գտեղի յարկի փառաց  
Քոց:

Մի՛ կորուսաներ ընդ ամբարիշտս զանձն իմ եւ մի՛ ընդ արս  
արիւնահեղս զկեանս իմ:

Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են, եւ աջ նոցա լի է կա-  
չառօք:

Ես յանբծութեան իմում գնացի, փրկեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛  
ինձ:

Երկնաւո՛ր Թագաւոր, անսասա՛ն պահիր Քո սուրբ Եկեղեցին  
եւ Քո անուանը երկրպագողներին խաղաղութեան մէ՛ջ պահիր:

### ԼՈՒԱՅՈՒՄ

Եւ քահանան լուսնում է ձեռքերը՝ ասելով.

Սաղմ. ԻԵ

Քահանան.

**Կցուրդ.** Սրբութեամբ կը լուամ իմ ձեռքերը եւ կը քայլեմ Քո  
սեղանի շուրջ, Տէ՛ր:

Սարկաւազը.

**Փոխ.** Դատի՛ր ինձ, Տէ՛ր, քանզի ես անբժութեամբ ընթացայ, Տի-  
րոջ վրայ յոյս դրեցի, որպէսզի չհիւանդանամ:

Փորձի՛ր ինձ, Տէ՛ր, եւ քննի՛ր ինձ. փորձի՛ր երիկամներս ու սիրտս:  
Քո ողորմութիւնը, Տէ՛ր, աչքիս առջեւ է. եւ Քո ճշմարտութեանը  
հաճոյ կը լինեմ:

Ձեմ նստի ես ունայն մարդկանց աթոռին եւ անօրէնների հետ  
չեմ մտնի:

Ատեցի ես չարագործների ժողովը եւ ամբարիշտների հետ չեմ  
նստի:

Կը լուամ սրբութեամբ իմ ձեռքերը եւ կը քայլեմ Քո սեղանի  
շուրջ, Տէ՛ր.

Որպէսզի լսեմ Քո օրհնութեան ձայնը եւ պատմեմ Քո բոլոր  
սքանչելիքները:

Տէ՛ր, սիրեցի Քո տան վայելչութիւնը եւ Քո փառքի բնակու-  
թեան վայրը:

Կորստեան մի՛ մատնիր իմ հոգին ամբարիշտների հետ եւ իմ  
կեանքը՝ արիւնահեղ մարդկանց հետ.

Որոնց ձեռքերն անօրէնութեան մէջ են, եւ նրանց աջը կաշառ-  
քով է լցուած:

Ես անբժութեամբ ընթացայ, փրկի՛ր ինձ, Տէ՛ր, եւ ողորմի՛ր ինձ:

*Ոտն իմ կացցէ յուղղութեան.*

*Յեկեղեցիս մեծս օրհնեցից զՔեզ:*

*Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.*

*Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

*Քահանայն.*

*Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեանն, Տէ՛ր, ընկա՛լ զաղաչանս մեր եւ կեցո՛ղմեզ:*

*Սարկաւագն.*

*Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի եւ գթացեալ կեցուցէ զարարածս Իւր: Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեցո՛ղ եւ ողորմեա՛:*

*Քահանայն.*

*Ընկա՛լ, Տէր, զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի՝ անարատ ծնողի Միածնի Որդւոյ Քո, եւ աղաչանօք ամենայն սրբոց Քոց եւ որոց այսօր է յիշատակ (կամ՝ աւուրս շնորհիւ): Լո՛ւր մեզ, Տէ՛ր, եւ ողորմեա՛, ներեա՛, քաւեա՛ եւ թո՛ղ զմեզս մեր, արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

*Խոսարովանութիւն*

*Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ սրբուհւոյ Աստուածածնին եւ առաջի ամենայն սրբոց եւ առաջի ձեր, Հա՛րք եւ եղբարք, զամենայն մեզս զոր գործեալ եմ. քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով եւ ամենայն մեղօք, զոր գործեն մարդիկ: Մեղա՛յ, մեղա՛յ, աղաչեմ զձեզ, խնդրեցէ՛ք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն:*

*Եթէ մերձակայ քահանայ լինիցի, ասացէ. ասպ թէ ոչ՝ պարասխանի րացեն որք մերձն են.*

*Ողորմեսցի քեզ Աստուած հօրն եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց՝ անցելոյն եւ այժմուս, եւ յառաջակայէն*

*Իմ ոտքը թող ուղիղ ճանապարհի վրայ լինի.*

*Մեծ հաւաքներում կ'օրհնեմ Քեզ:*

*Փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն.*

*Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

*Քահանան.*

*Սրբուհի Աստուածածնի բարեխօսութեան շնորհիւ, Տէ՛ր, ընդու-  
նի՛ր մեր աղաչանքը եւ կեա՛նք տուր մեզ:*

*Սարկաւազր.*

*Սուրբ Աստուածածնին եւ բոլոր սուրբերին բարեխօս դարձնենք  
երկնաւոր Հօր առջ, որ կամենալով ողորմի եւ զթալով կեանք  
տայ Իր արարածներին: Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեա՛նք  
տուր եւ ողորմի՛ր:*

*Քահանան.*

*Տէ՛ր, ընդունի՛ր մեր աղաչանքը բարեխօսութեամբ սուրբ Աս-  
տուածածնի՝ Քո Միածին Որդու անարատ ծնողի, եւ աղաչանքով  
Քո բոլոր սուրբերի եւ նրանց, որոնց յիշատակն է այսօր (կամ՝ այս  
օրուայ շնորհով): Լսի՛ր մեզ, Տէ՛ր, եւ ողորմի՛ր, ների՛ր, քաւի՛ր եւ  
թողութի՛ւն տուր մեր մեղքերին, արժանացրո՛ւ մեզ գոհութեամբ  
փառաւորել Քեզ Որդուդ եւ Սուրբ Հոգուդ հետ այժմ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

*Խոսարովանութիւն*

*Խոստովանում եմ Աստուծոյ, սրբուհի Աստուածածնի, բոլոր  
սուրբերի եւ ձեր առջեւ, հայրե՛ր եւ եղբայրներ, իմ գործած բոլոր  
մեղքերը. որովհետեւ մեղանչեցի խորհրդով, խօսքով, գործով եւ  
բոլոր մեղքերով, որ գործում են մարդիկ: Մեղանչեցի՛, մեղանչե-  
ցի՛, աղաչում եմ ձեզ, Աստծուց թողութի՛ւն խնդրէք ինձ համար:*

*Եթէ արեանում քահանայ կայ, ասում է. իսկ եթէ ոչ՝ մօր կանգնածները  
պարսախանում են.*

*Թող ողորմի քեզ հօր Աստուած եւ թողութիւն շնորհի անցեա-  
լում ու ներկայում գործուած քո բոլոր յանցանքներին, թող  
փրկի քեզ յետագայ յանցանքներից, թող հաստատի բոլոր բա-*

*փրկեսցէ եւ հաստատեսցէ յամենայն գործս բարիս եւ հանգուսցէ  
զքեզ ի հանդերձեալ կեանսն. ամէն:*

*Պատասխանեսցէ եւ ինքն.*

*Ազատեսցէ եւ զձեզ մարդասէրն Աստուած եւ թողցէ զամենայն  
յանցանս ձեր, տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբարիս.  
ուղղեսցէ եւ զառաջակայ կեանս ձեր շնորհօք Սուրբ Հոգւոյն  
Հօրն եւ Ողորմածն, եւ Նմա փառք յաւիտեանս. ամէն:*

*Դպիրքն.*

*Յիշեսլի՛ր եւ զմեզ առաջի անմահ Գառիսն Աստուծոյ:*

*Քահանայն.*

*Յիշեա՛լ լիջիք առաջի անմահ Գառիսն Աստուծոյ:*

## ՆԱԽԱՄՈՒՏ

*Դպիրքն.*

*Սաղմ. ԴԹ*

**Փոխ.** *Աղաղակեսցէ՛ք առ Տէր, ամենա՛յն երկիր, ծառայեսցէ՛ք  
Տեառն ուրախութեամբ:*

*Մտէ՛ք առաջի Նորա ցնծութեամբ, ծաներո՛ւք, զի Նա է Տէր Աստուած մեր:*

*Նա՛ արար զմեզ, եւ ոչ մեք էաք. մեք ժողովուրդք եւ խաչն արօտի  
Նորա:*

*Մտէ՛ք ընդ զրուսն Նորա խոստովանութեամբ եւ օրհնութեամբ  
ի յարկս Նորա:*

*Խոստովանէ՛ր եղբրուք Տեառն եւ օրհնեսցէ՛ք զանուն Նորա:*

*Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն Նորա, ազգէ մինչեւ  
յազգ է ճշմարտութիւն Նորա:*

*Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.*

*Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

րի գործերի մէջ եւ հանգստութիւն պարգեւի քեզ հանդերձեալ կեանքում. ամէն:

Պատասխանում է եւ ինքը.

Թող ազատի եւ ձեզ մարդասէր Աստուած, ների ձեր բոլոր յանցանքները, տայ ժամանակ ապաշխարելու եւ բարի գործեր կատարելու. թող Հօգօրն ու Ողորմածն ուղղի նաեւ ձեր յետագայ կեանքը Սուրբ Հոգու շնորհով, եւ Նրան փառք յաւիտեանս. ամէն:

Դպիրները.

Յիշի՛ր եւ մեզ Աստուծոյ անմահ Գառան առջեւ:

Քահանան.

Յիշուա՛ծ լինէք Աստուծոյ անմահ Գառան առջեւ:

## ՆԱԽԱՄՈՒՏ

Դպիրները.

Սաղմ. ԴԹ

**Փոխ.** Աղաղակեցէ՛ք առ Տէր, երկրի բոլո՛ր բնակիչներ. ծառայեցէ՛ք Տիրոջն ուրախութեամբ:

Նրա առաջ մտէ՛ք ցնծութեամբ, ճանաչէ՛ք, որ Նա է մեր Տէր Աստուածը:

Նա՛ ստեղծեց մեզ, եւ ո՛չ թէ մենք եղանք. մենք Նրա ժողովուրդն ենք եւ Նրա արօտի ոչխարները:

Նրա դռներով մտէ՛ք խոստովանութեամբ եւ Նրա յարկերը մտէ՛ք օրհնութեամբ:

Գոհութի՛ւն մատուցէք Տիրոջը եւ օրհնեցէ՛ք Նրա անունը:

Քաղցր է Տէրը, յաւիտենական է Նրա ողորմութիւնը, սերնդից սերունդ է Նրա ճշմարտութիւնը:

Փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Մարկաւագն քարոզեացէ.

*Սուրբ Եկեղեցեալս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան Իւրոյ: Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա՛:*

Քահանայն.

*Ի մէջ տաճարիս եւ առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ Նշանացս եւ սուրբ տեղւոյս, խոնարհեալ երկիրլիւ, երկիրպագանեմք: Զսուրբ եւ զհրաշալի եւ զյաղթող զՏէրութիւնդ Քո փառաւորեմք եւ Քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Քահանայն եւ սպասարք Սեղանոյն էյցեն ի խորանն՝ ասելով.

Սաղմ. ԽԲ

Քահանայն.

*Կցուրդք. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ՝ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:*

Մարկաւագն.

*Փոխ. Դա՛տ արա ինձ, Աստուած՝, եւ իրա՛ւ արա ինձ ի դատաստանի իմում:*

*Յազգէ, որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ, նենգաւորէ փրկեա՛ զիս:*

*Դու, Աստուած, հզօրիչ իմ ես. ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:*

*Առաքեա՛, Տէր, զլոյս Քո եւ զճմարտութիւն Քո, զի առաջնորդեսցեն ինձ եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս Քո:*

*Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ՝ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:*

*Խոստովան եղէց Քեզ օրհնութեամբ, Աստուած, Աստուած իմ:*

Սարկաւազր քարոզում է.

*Սուրբ Եկեղեցով աղաչենք Տիրոջը, որ սրանով փրկի մեզ մեղքից եւ կեանք տայ իր ողորմութեան շնորհով: Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեանք տուր եւ ողորմի՛ր:*

Քահանան.

*Այս տաճարում, այս աստուածընկալ եւ պայծառացած սուրբ Նշանների եւ սուրբ տեղի առջեւ, երկիւղով խոնարհուելով, երկրպագում ենք: Փառաւորում ենք Քո սուրբ, հրաշալի եւ յաղթող Տէրութիւնը եւ օրհնութիւն ու փառք մատուցում Քեզ Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Քահանան եւ Սեղանի սպասարները ելնում են խորան՝ ստելով.

Սաղմ. ԽԲ

Քահանան.

**Կցուրդ.** *Կը մտնեմ Աստուծոյ սեղանի առջեւ՝ Աստուծոյ մօտ, որ ուրախութեամբ է լցնում իմ երիտասարդութիւնը:*

Սարկաւազր.

**Փոխ.** *Դատի՛ր ինձ, Աստուա՛ծ, եւ արդարացրո՛ւ ինձ դատաստանիս ժամանակ:*

*Ազատի՛ր ինձ անսուրբ ազգից, փրկի՛ր ինձ մեղսագործ ու նենդ մարդուց:*

*Աստուա՛ծ, Դու ինձ գօրացնողն ես. ինչո՞ւ մոռացար ինձ, ինչո՞ւ եմ տխուր գնում, երբ իմ թշնամին նեղում է ինձ:*

*Առաքի՛ր, Տէր, Քո լոյսն ու ճշմարտութիւնը, որ առաջնորդեն ինձ եւ բարձրացնեն Քո սուրբ լեռն ու յարկերը:*

*Կը մտնեմ Աստուծոյ սեղանի առջեւ՝ Աստուծոյ մօտ, որ ուրախութեամբ է լցնում իմ երիտասարդութիւնը:*

*Գոհնութիւն կը մատուցեմ Քեզ օրհնութեամբ, Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ:*



Արդ՝ ընդէ՞ր արտում ես, ա՛նձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագն քարոզեացէ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Օրհնեսցուք զամենակալն Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար մեզ կալ ի տեղւոջս փառաբանութեան եւ երգել զերգս հոգեւորս: Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

Քահանայն ի ձայն.

Ի յարկի սրբութեան եւ ի տեղւոջս փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս, առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ Նշանացս եւ սուրբ տեղւոյս, խոնարհեալ երկիւղիւ, երկիրպագանեմք: Զսուրբ եւ զհրաշալի եւ զյաղթող զՏէրութիւնդ Քո օրհնեմք եւ փառաւորեմք. եւ Քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եթէ եպիսկոպոս լինիցի խորհրդածուն, ւսցէ ի վերայ լանջացն զպարտական եմիփորուն, եւ մարտցեալ առ ընծայարան Սեղանոյն եւ ի ծունկս անկեալ, յորդահոս արդաստօք լոտ եւ անմոռնչ ասացէ զաղօթս առ Սուրբ Հոգին՝ րնօրինիչ գործոյն:

Իսկ եթէ քահանայ լինիցի խորհրդածուն, ձգեսցն զվարագոյրն, եւ քահանայն ասացէ զաղօթս ի ներքս վարագորին ի ծածուկ:

Աղօթք սրբոյն Գրիգորի Մարեկացոյն առ Սուրբ Հոգին

Ամենակա՛լ, բարբրա՛ր, մարդասէ՛ր, Աստուա՛ծ բոլորից, յօրինո՛ղ երեւութից եւ աներեւութից, փրկո՛ղ եւ հաստատո՛ղ, խնամո՛ղ եւ խաղաղարա՛ր, Հօր հզօր Հոգի՛, հայցեմք բազկատարած մաղթանաց դոչմամբ հեծութեան՝ յանդիման եղեալ Քեզ ահաւորիդ: Մատչիմք մեծաւ դողութեամբ, սաստիկ երկիւղիւ՝ մատուցանել

Արք՝ ինչո՞ւ ես տրտում, հոգի՛ իմ, կամ ինչո՞ւ ես խռովեցնում ինձ. յոյսդ դի՛ր Աստուծոյ վրայ, գոհուեթի՛ւն մատուցիր Նրան. իմ փրկիչն Աստուած է:

Փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն.  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Մարկաւարք քարոզում է.

Դարձեալ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը:  
Օրհնենք ամենակալ Աստուծն՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը, որ արժանացրեց մեզ կանգնելու այս փառաբանութեան տեղում եւ Հոգեւոր երգեր երգելու: Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեանք տուր եւ ողորմի՛ր:

Քահանան՝ քարձրաձայն.

Այս սրբութեան յարկում եւ փառաբանութեան տեղում, հրեշտակների այս բնակարանում եւ մարդկանց քաւարանում, այս աստուածընկալ եւ պայծառացած սուրբ Նշանների ու սուրբ տեղի առջեւ, երկիւղով խոնարհուելով, երկրպագում ենք: Փառաւորում եւ օրհնում ենք Քո սուրբ, հրաշալի եւ յաղթող Տէրութիւնը եւ երկնային զօրքի հետ օրհնութիւն ու փառք մատուցում Քեզ Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եթէ խորհրդակալարար եպիսկոպոս է, հանում է պապոսական եմիփորոնը եւ, մօտենալով Սեղանի ընծայարանին ու ծնկի իջնելով, յորդահու արքատարով, լուռ եւ անմունչ ասում է այս աղօթքն առ Սուրբ Հոգին՝ գործի անօրինիչը:

Իսկ եթէ խորհրդակալարար քահանայ է, վարագոյրը փակում են, եւ քահանան ծածուկ ասում է աղօթքը վարագոյրի յետեւում:

Սուրբ Գրիգոր Նարեկացու աղօթքն առ Սուրբ Հոգին

Ամենակա՛լ, բարեբա՛ր, մարդասէ՛ր, Աստուած՝ բոլորի, արարո՛ղ տեսանելիների եւ անտեսանելիների, փրկո՛ղ եւ հաստատո՛ղ, խնամո՛ղ եւ խաղաղարա՛ր, Հօր հզօր Հոգի՛, ներկայանալով Քեզ՝ ահաւորիդ, մաղթանքի հեծութեամբ ձայնելով՝ բազկատարած հայցում ենք Քեզ: Մօտենում ենք Քեզ մեծ զոզով եւ սաստիկ

նախ զբանականս զայս պատարագ Քուժ անգնին զօրութեանդ՝ իբր աթոռակցի, փառակցի եւ արարչակցի հայրենի անկապուտ պատուոյդ, եւ քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց Հօրդ էմմանուէլի՝ զՔեզ առաքչի, փրկչի եւ կենդանատուի եւ արարչի ամենայնի:

Ի ձեռն Քո ծանուցաւ մեզ երբեակ անձնաւորութիւն միասնական Աստուածութեանդ, յորոց մի եւ Դո՛ւ ճանաչիս, անհա՛ս: Քեւ եւ ի ձեռն Քո առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանողք անուանակոչեալք, զանցեալսն եւ զգալոցսն, զեղեալսն եւ զոչ գոյացեալսն, անստուերաբար բարբառով բանի վերապատմեցին:

Հոգի Աստուծոյ քարոզեալ զՔեզ Մովսիսի, որ ի գնալն Քո ի վերայ ջրոցն, անպարագի՛ր զօրութիւն, ահեղ շրջարկութեամբ տածողականաւ, թեւապարփակ պաշտպանողօրէն գթասիրեալ ի ծնունդս նորոգս՝ զԱւագանին խորհուրդ ծանուցեր: Յոր կերպարան օրինակութեան, նախ քան զկառուցանել զլոյծ մածուած վերջնում վարագուրիդ, յօրինեցեր, կարո՛ղ, տիրապէս զբովանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից, ամենայն էից յանէից:

Քեւ ստեղծանին ի նորոգութիւն յարութեան ամենայն եղեալքս առ ի Քէն յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի եւ օր առաջին երկրին կենդանեաց: Քեզ հնազանդեցաւ միութեամբ կամացն՝ որպէս Հօրն Իւրում, ազգակիցն Քո, էակիցն Հօր, անդրանիկն Որդի մերովս կերպիւ. զՔեզ աւետարանեաց ճշմարիտ Աստուած՝ հաւասար եւ համագոյ Հօր Իւր հզօրի, եւ զառ ի Քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց եւ, իբր զաստուածամարտիցն, զՔո հետեւողն չարաբանական բերանս կարկեաց եւ զԻւրն շնորհեաց Արդարն եւ Անարատն, Գտիչն ամենայնի, որ վասն մեզաց մերոց մատնեցաւ եւ յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ: Նմա փառք ի ձեռն Քո, եւ Քեզ բարեբանութիւն ընդ Հօր ամենակալի յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գարձեալ կրկնեսցի ի նոյն կարգ բանի, մինչև փարստութիւնն լուսոյ հրաշապէս յայտնեսցի ազդեալ՝ անտարանեալ վերստին զկրկին խաղաղութիւն:

երկիրը՝ մատուցելու նախ այս բանական պատարագը Քո անգնանքի գորութեանը՝ որպէս հայրական անկողողպտելի պատիւ ունեցող թոռակցի, փառակցի եւ արարչակցի եւ որպէս Քո առաքիչ եւ բոլորի փրկիչ, կենդանատու եւ արարիչ Էմմանուէլի Հօր ամենակատար կամքի խորհուրդների ծածուկ խորքերը քննողի:

Քո միջոցով յայտնի դարձան մեզ միասնական Աստուածութեան երեք անձնաւորութիւնները, որոնցից մէկը նաեւ Դո՛ւ ես ճանաչուում, անհա՛ս: Քեզանով եւ Քո միջոցով նահապետական տոհմի նախկին շառաւիղները, որ տեսանողներ կոչուեցին, անցեալը եւ գալիքը, եղածները եւ չգոյացածները խօսքով յայտնապէս քարոզեցին:

Մովսէսը քարոզում էր, որ Դու Աստուծոյ Հոգին ես, որ շրջելով ջրերի վրայ, անպարագի՛ր գորութիւն, խնամքիդ հզօր հովանաւորութեամբ եւ թեւապարփակ պաշտպանութեամբ գթասիրելով նոր ծնունդներին՝ նախապէս յայտնեցիր [Մկրտութեան սուրբ] Աւագանի խորհուրդը: Որի օրինակով վերջին վարագոյրիդ ջրային հաստատութիւնը կառուցելուց առաջ, կարո՛ղ, տիրապէս ստեղծեցիր ոչնչից բոլոր էերի եւ գոյերի բովանդակ բնութիւնները:

Քո այս բոլոր արարածները Քեզանով են ստեղծուում յարութեան նորոգութեան համար, որը կը լինի այն ժամանակ, որն այս կեանքի վերջին օրն է եւ կենդանեաց երկրի առաջին օրը: Քո ազգակիցը, Հօր էակիցը եւ անդրանիկ Որդին, որ մարդկային կերպարանքի մէջ մտաւ, կամքի միութեամբ հնազանդուեց Քեզ, ինչպէս Իր Հօրը. Նա յայտարարեց, որ Դու ճշմարիտ Աստուած ես՝ հաւասար եւ համագոյակից Իր հզօր Հօրը. քարոզեց, որ Քո դէմ եղած հայհոյութիւնն անքաւելի մեղք է եւ Քեզ հակառակողների՝ որպէս Աստուծոյ դէմ մարտնչողների, չարխօս բերանը լուցրեց. իսկ Իր դէմ հայհոյութիւնը ներեց Արդարը, Անարատը եւ ամէնքին Գտնողը, որ [մահուան] մատնուեց մեր մեղքերի համար եւ յարութիւն առաւ մեզ արդարացնելու համար: Քո միջոցով Նրան փառք, եւ Քեզ ամենակարող Հօր հետ բարեբանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գարձեայ կրկնում է խօսքի նոյն կարգը, մինչեւ որ յոյսի վարահոսիւնը հրաշապէս ներգործելով յայտնում է՝ վերստին ասեարարանելով նոր խաղաղութիւնը:

Աղաչեմք եւ աղերսեմք արտասուելից հառաչմամբ յամենայն անձնէ գփառաւորեալ արարչութիւնդ՝ անեղձ եւ անստեղծ, անժամանակ Հոգւոյդ զթաճի, որ բարեխօսդ եւ վասն մեր յամուռունչ հեծութիւնս առ ողորմածդ Հայր, որ զսուրբսն պահես եւ զմեղուցեալսն մաքրես եւ տաճարս կազմես կենդանի եւ կեցուցիչ կամաց բարձրեալդ Հօր:

Արդ՝ ազատեա՛ զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ Քումդ բնակութեան, եւ մի՛ շիջցին առ ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունքի ի տեսականացս աչաց իմաստից, վասն զի զՔեզ ուսաք միանալ ի մեզ ի ձեռն աղօթից եւ ընտիր վարուց խնկելոց:

Եւ քանզի Մինդ յերրորդութենէդ պատարազի, եւ Միւսդ ընդունի՛ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ Անդրանկի Իւրոյ, իսկ Գու ընկալցիս զմեր պաղատանս եւ յարդարեսցես զմեզ օթեւանս պատուականս ամենայն պատրաստութեամբ՝ ի վայելումն ճաշակման երկնաւոր Գառինդ, առանց պատժոց դատապարտութեան ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան:

Եւ հալեսցի ի հրոյս յայսմանէ գայթակղութիւնս մեր, որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն ի ձեռն ունելեացն մատուցման, զի յամենայնի Քոյդ քարոզեսցի զթուլթիւն, որպէս Որդւովդ Աստուծոյ՝ Հօրդ քաղցրութիւն, որ գանասակ որդին մերձեցոյց ի հայրենի ժառանգութիւնն եւ զպոռնիկան յառաջեցոյց յերկնային արքայութիւնն արդարոցն երանութեան:

Այո՛, այո՛, եւ ե՛ս մի եմ ի նոցանէ, եւ զի՛ս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք Քո ապրեալ, զարեամբ Քրիստոսի ստացեալս: Զի յայսմ ամենայնի՛ յամենայնի ծանիցի Քո Աստուածութիւնդ՝ ընդ Հօր փառաւորեալ համապատուաբար ի մի կամս եւ ի մի իշխանութիւն գոյութեան: Զի Քո է գթութիւն եւ կարողութիւն եւ մարդասիրութիւն, զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եթէ եպիսկոպոս լինիցի խորհրդածուն, դպիրքն եղանակեացն գերզս այս, մինչ եպիսկոպոսն սաւ զաղօթս առ Սուրբ Հոգին ի ծածուկ:

Արտասուլալից հառաչմամբ եւ ողջ հոգով աղաչում ենք եւ աղերսում անեղծ, անստեղծ, անժամանակ եւ զթած Հոգուդ՝ փառաւորեալ Արարչիդ, որ մեզ համար անմռունչ հեծութեամբ միշտ բարեխօսում ես ողորմած Հօրդ, որ սուրբերին պահպանում ես, մեղաւորներին մաքրում եւ բարձրեալ Հօր կենդանի եւ կեցուցիչ կամքի տաճարներ դարձնում:

Արդ՝ ազատի՛ր մեզ ամէն տեսակ անմաքուր գործերից, որոնք հաճելի չեն Քո բնակութեանը, եւ թող շնորհիդ լոյսի ճառագայթները չմարեն մեր մտքի տեսութեան աչքերից, որովհետեւ գիտենք, որ Դու միանում ես մեզ աղօթքի եւ ընտիր ու խնկելի վարքի միջոցով:

Եւ որովհետեւ Երրորդութիւնիցդ Մէկը պատարագւում է, եւ Միւսն ընդունում՝ Իր Անդրանկի քաւչարար արեամբ հաշտուելով մեզ հետ, Դու էլ ընդունի՛ր մեր պաղատանքը եւ մեզ պատուական ու ամենապատրաստ օթեւաններ դարձրու՛ վայելելու երկնաւոր Գառիդ ճաշակումը եւ առանց դատապարտութեան պատժի ընդունելու նոր փրկութեան կեանքի այս անմահացնող մանանան:

Եւ այս հրով թող հալչի մեր գայթակղութիւնը, ինչպէս մարգարէին ունելիներով մատուցուած կենդանախարոյկ կայծով, որպէսզի ամէն բանի մէջ քարոզուի Քո գթութիւնը, ինչպէս Աստուծոյ Որդիովդ՝ Հօրդ քաղցրութիւնը, որ անառակ որդուն մերձեցրեց հայրական ժառանգութեանը եւ պոռնիկներին առաջնորդեց դէպի երկնքի արքայութիւն, դէպի արդարների երանութիւն:

Այո՛, այո՛, ես ե՛ւս նրանցից մէկն եմ, ինձ ե՛ւս ընդունիր նրանց հետ իբրեւ մեծ մարդասիրութեան կարօտ մէկի, ինձ, որ փրկուած եմ Քո շնորհով եւ գնուած՝ Քրիստոսի արեամբ: Որպէսզի այս ամէնում ըստ ամենայնի ճանաչուի Քո Աստուածութիւնը՝ Հօր հետ համապատուաբար փառաւորուելով մէկ կամքով եւ մէկ գովեալ իշխանութեամբ: Որովհետեւ Քոնն են գթութիւնը, կարողութիւնը, մարդասիրութիւնը, զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս յաւիտեանից. ամէն:

Եթէ խորհրդակապարը եպիսկոպոս է, դպիրները երգում են այս երգը, մինչ եպիսկոպոսը ծածուկ ասում է աղօթքն առ Սուրբ Հոգին:

Իսկ եթէ խորհրդածուն քահանայ լինիցի, ձգեսցեն զվարագոյրն, եւ դպիրքն եղանակեսցեն զմեղեդին ըստ պարշաձի ատուրն:  
Դպիրքն եղանակեսցեն.

*Ընտրեա՛լդ յԱստուծոյ, ո՛վ երջանիկ սուրբ քահանայ, նմանեալ Ահարոնի եւ Մովսէսի մարգարէին, այնմ, որ զգեստուցն էր յօրինող, զոր Ահարոն միշտ զգեստը:*

*Յօրինէր զպատմուճան, զոր ի չորից կազմեալ նիւթոց՝ ի կարմրոյ, ի կապուտոյ, ի բեհեզոյ, ի ծիրանւոյ: Թեկ զթեկն յօրինէր: Կարգն առաջին էր կարկեհան:*

*Եւ օձիքն գրապանին շուրջանակի բոլորաչէն: Եւ յընթացս գարշապարին հնչէր երկիր, ցնծայր խորան:*

*Արդ ի նոյն նմանութիւն՝ Քրիստոս զմեր տէրս յօրինէ:*

— *Յորժամ մտցես ի սուրբ խորան, անդ յիշեսցես զմեր ննջեցեալս:*

*Յորժամ առնես զպատարագս, յիշեա՛ եւ զիս՝ զբազմամեղս, զի եւ մեզ ողորմեսցի ի միւս անգամ Իւր գալստեան:*

*Հօրն փառք, Որդւոյն պատիւ եւ Սուրբ Հոգւոյն այժմ, յաւիտեան, յաւիտեանս յաւիտենից, Քրիստոս օրհնեալ ի համայնից:*

Սարկաւագն.

*Օրհնեա՛, տէ՛ր:*

Եպիսկոպոսն՝ ի ձայն.

*Զի Քո է գթութիւն եւ կարողութիւն եւ մարգասիրութիւն, զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Յեղ այսց աղօթից ձգեսցեն զվարագոյրն:

Իսկ եթե խորհրդակարարը քահանայ է, վարագոյրը փակում են, եւ դպիրները երգում են մեղեդի՝ ըստ օրուայ պարշաձուրթեան։  
Դպիրները երգում են.

*Ընտրուածդ Աստծուց, ո՛վ երջանիկ սուրբ քահանայ, նման Ահարոնին եւ Մովսէս մարգարէին, որ պատրաստեց զգետները, որոնք միշտ հագնում էր Ահարոնը:*

*Պատրաստում էր պատմուճանը, որ կազմուած էր չորս նիւթից՝ կարմիր, կապոյտ, ծիրանագոյն կտաւներից եւ բեհեզից: Թել առ թել էր պատրաստում: Առաջին կարգը կարկեհանն էր:*

*Եւ օձիքի բացուածքը շուրջանակի երիզապատուած էր: Եւ գարշապարների ընթացքից թնդում էր երկիրը, ցնծում խորանը:*

*Արդ՝ սրա նմանութեամբ պատրաստում է Քրիստոսը մեր քահանային:*

— Երբ մտնես սուրբ խորան, այնտեղ յիշի՛ր մեր ննջեցեալներին:

*Երբ մատուցես պատարագը, յիշի՛ր եւ ինձ՝ բազմամեղիս, որպէսզի եւ մեզ ողորմի Իր վերստին գալստեանը:*

*Փա՛ռք Հօրը, պատի՛ւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ, յաւիտեան, յաւիտեանս յաւիտենից. Քրիստոսն օրհնուած է ամէնքից:*

Սարկաւագը.

*Օրհնի՛ր, տէ՛ր:*

Եպիսկոպոսը՝ բարձրաձայն.

*Քանզի Քոնն են գթուլթիւնը, կարողութիւնը, մարդասիրութիւնը, զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Այս աղօթքներից յետոյ փակում են վարագոյրը:



**ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ**

Ապա յարուցեալ գայ առ ընծայարան Սեղանոյն, առ որ մնարուցանէ նախասարկատագն զնշխարն՝ ասելով.

*Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:  
Ընկա՛լ, կեցո՛՛ եւ ողորմեա՛:*

Եւ քահանայն խաչակնքեսցէ ի վերայ նշխարին՝ ասելով.

*† Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Զնշխարն առեալ քահանայն դնէ ի մաղզմայն՝ ասելով.

*Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ բազմեալ հանգչի  
յանարուեստ աթոռ:*

*Զմահ խաչի յանձն էառ վասն ազգի մարդկան:*

*† Օրհնեցէ՛ք, գովեցէ՛ք եւ բա՛րձր արարէք զՆա յաւիտեան:*

Ապա նախասարկատագն մնարուցէ զգինին՝ ասելով.

*Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:  
Ընկա՛լ, կեցո՛՛ եւ ողորմեա՛:*

Եւ քահանայն խաչակնքեսցէ ի վերայ գինոյն՝ ասելով.

*† Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ առեալ զգինին՝ արկանէ խաչանիշ ի սկիին՝ ասելով.

*Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան Տեառն Աստուծոյ  
եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որոյ ի կողահոս արեան  
աղբերէն նորոգեցան արարածք եւ անմահացան:*

*† Օրհնեցէ՛ք, գովեցէ՛ք եւ բա՛րձր արարէք զՆա յաւիտեանս:*

Եւ ասացէ զաղօթս Յովհաննու Ոսկերերանի ի ծածուկ.

*Տէ՛ր Աստուած մեր, որ գերկնաւոր հացդ՝ զՏէրն մեր Յիսուս  
Քրիստոս՝ զկերակուրդ ամենայն աշխարհի, առաքեցեր փրկիչ  
եւ կեցուցիչ եւ բարերար՝ օրհնել եւ սրբել զմեզ, Ինքնին Դու,*

**ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ**

Ապա վեր կենայով՝ [խորհրդակատարը] գալիս է դէպի Սեղանի ընծա-  
յարանը, որի դիմաց նախասարկատարը մատուցում է նշխարը՝ ասելով.

**Դարձեալ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը:**  
**Ընդունի՛ր, կեանք տուր եւ ողորմի՛ր:**

Քահանան խաչակնքում է նշխարի վրայ՝ ասելով.

**† Օրհնութիւն եւ փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

Քահանան վերցնում է նշխարը եւ դնում մաղզմայի վրայ՝ ասելով.

**Մեր Տէր Յիսուս Քրիստոսի յիշատակը, Ով բազմած է անձեռա-  
կերտ գաճի վրայ:**

**Նա յանձն առաւ խաչի մահը մարդկութեան համար:**

**† Օրհնեցէ՛ք, գովեցէ՛ք եւ մեծարէ՛ք Նրան յաւիտեան:**

Ապա նախասարկատարը մատուցում է գինին՝ ասելով.

**Դարձեալ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը:**  
**Ընդունի՛ր, կեանք տուր եւ ողորմի՛ր:**

Քահանան խաչակնքում է գինու վրայ՝ ասելով.

**† Օրհնութիւն եւ փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

Եւ վերցնում է գինին ու խաչաձեւ լցնում սկիիի մէջ՝ ասելով.

**Մեր Տէր Աստուած եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի փրկագործ տնօ-  
րէնութեան յիշատակի համար, Ում կողից թափուած արեան աղ-  
բւրից արարածները նորոգուեցին եւ անմահացան:**

**† Օրհնեցէ՛ք, գովեցէ՛ք եւ մեծարէ՛ք Նրան յաւիտեան:**

Եւ ծածուկ ասում է Յովիան Ոսկերեքանի այս աղօթքը.

**Տէ՛ր Աստուած մեր, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որ երկնաւոր  
հացն է եւ ողջ աշխարհի կերակուրը, առաքեցիր իբրեւ փրկիչ,  
կեանք տուող եւ բարիք պարգեւող՝ օրհնելու եւ սրբելու մեզ, Դու**

*Տէ՛ր, օրհնեա՛ր՝ † եւ այժմ գառաջադրութիւնս զայս, ընկա՛լ զսս  
յերկնային Քո Սեղանդ:*

*Յիշեա՛ որպէս բարերար եւ մարդասէր զմատուցողս եւ վասն  
որոց մատուցանի: Եւ զմեզ անդատապա՛րտ պահեա ի քահա-  
նայագործութիւն աստուածային խորհրդոց Քոց: Զի սուրբ եւ  
փառաւոր է ամենապատիւ մեծ վայելչութիւն փառացի Հօր եւ  
Որդոյ եւ Հոգւոյ Արբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-  
տենից. ամէն:*

Եւ արդեացէ զսկիին՝ ասելով.

Սաղմ. ԴԲ

**Փոխ.** Տէր թագաւորեաց, զվայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր  
զօրութիւն՝ ընդ մէջ Իւր էած:

*Հաստատեաց զաշխարհս, զի մի՛ սասանեսցի. պատրաստ է աթոռ  
Քո ի սկզբանէ, յաւիտեանս Դու ես:*

*Ամբարձան գետք, Տէ՛ր, եւ ամբարձին գետք զձայնս իւրեանց.  
եւ յարիցեն գետք ի զնացս իւրեանց:*

*Ի ձայնէ ջուրց բազմաց սքանչելի եղեն զբօսանք ծովու:*

*Աքանչելի ես Դու, Տէ՛ր, ի բարձունս. վկայութեանց Քոց մեք  
յոյժ հաւատացաք:*

*Տան Քուժ վայել է սրբութիւն, Տէ՛ր, ընդ երկայն աւուրս:*

*Փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Արբոյ.*

*Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ խաչակնքեացէ երիցս՝ ասելով.

*Հոգին Սուրբ † եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի  
լիցի ի վերայ քոյ:*

Եւ դպիրքն եղանակեցեն մեղեդի ըստ պարշաճի ատուրն:

*Ինքդ, Տէ՛ր, օրհնի՛ր ՚՛ եւ այժմ այս առաջադրութիւնը, ընդունի՛ր սա Քո երկնային Սեղանի վրայ:*

*Դու, որ բարերար եւ մարդասէր ես, յիշի՛ր այս պատարագը մատուցողներին եւ նրանց, ում համար մատուցոււմ է: Եւ մեզ անդատապա՛րտ պահիր Քո աստուածային խորհուրդների քահանայագործութեան մէջ: Քանզի սուրբ եւ փառաւոր է Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու փառքի ամենապատիւ մեծ վայելչութիւնը այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Ապա սկիհը ծածկում է քողով՝ ասելով.

Սաղմ. ԴԲ

**Փոխ.** *Տէրը թագաւորեց, վայելչութիւն հագաւ. Տէրը զօրութիւն հագաւ, այն կապեց Իր մէջքին:*

*Հաստատեց այս աշխարհը, որ չսասանուի. Քո աթոռը պատրաստ է ի սկզբանէ, Դու յաւիտենական ես:*

*Գետերը բարձրացան, Տէ՛ր, եւ բարձրացրին իրենց ձայնը. գետերը կը բարձրացնեն իրենց ալիքները:*

*Առատ ջրերի ձայնից ծովի ալիքները սքանչելի եղան:*

*Սքանչելի ես բարձունքներում, Տէ՛ր. Քո վկայութիւններին մենք յոյժ հաւատացինք:*

*Տէ՛ր, Քո տանը բազում օրեր սրբութիւն է վայել:*

*Փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն.*

*Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ երեք անգամ խաչակնքում է [Ընծաները]՝ ասելով.

*Սուրբ Հոգին ՚՛ թող դայ քեզ վրայ, եւ Բարձրեալի զօրութիւնը հովանի լինի քեզ:*

Եւ դպիրները երգում են մեղեդի՝ ըստ օրուայ պարշաճութեան:

## ԳԱՇՏՕՆ ՃԱՇՌԻ

### ԽՆԿԱՐԿՈՒԹԻՒՆ

Եւ արկանէ գիտունկն՝ ասելով.

*Խունկ մատուցանեմ առաջի Քո, Քրիստո՛ս, բուրումն հոգեւորական: Ընկա՛լ ի սուրբ յերկնային եւ յիմանալի Քո մատուցարանդ ի հոտ անուշից: Առաքեա՛ առ մեզ փոխարէն գշնորհս եւ զպարգեւս Հոգւոյդ Սրբոյ: Եւ Քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ քարշեացեն զվարագոյրն:

Եւ ասպ ինկելով՝ ի մէջ եկեղեցոյն իջանէ հանդերձ սարկաւագօրն, եւ ելեալ ի վեր՝ երկիրպագցէ Սեղանոյն:

Դպիրքն.

*Յայս յարկ նուիրանաց ուխտի Տեառն տաճարի՝ ժողովեալքս աստանօր ի խորհուրդ պաշտաման պաղատանաց յառաջիկայ սուրբ Պատարագիս, խնկօք անուշիւք խումբ առեալ պարեմք ի վերնայարկ սրահս խորանիս:*

*Ուղղութեամբ ընկա՛լ զաղօթս մեր որպէս բուրումն անուշահոտ խնկոց, ստաշխից եւ կինամոնաց. եւ զմատուցողս պահեա՛ սրբութեամբ՝ միշտ եւ հանապազ Քեզ սպասաւորել:*

*Բարեխօսութեամբ Մօր Քո եւ Կուսի ընկա՛լ զաղաչանս Քոց պաշտօնէից, որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զԵկեղեցի արեամբ Քով, Քրիստո՛ս, եւ ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զգասս առաքելոց եւ մարգարէից, սուրբ վարդապետաց:*

*Այսօր ժողովեալ դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց եւ կղերիկոսաց՝ խունկ մատուցանեմք առաջի Քո, Տէ՛ր, յօրինակ՝ ըստ հնումն Զաքարիայ: Ընկա՛լ առ ի մէնջ զխնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբելի, գ՛նոյի եւ զԱբրահամու:*

## ՃԱՇՈՒ ԺԱՄԻ ԳԱՇՏԱՄՈՒՆՔ

### ԽՆԿԱՐԿՈՒԹԻՒՆ

Եւ [խորհրդակալարը] ինկարկում է՝ ասելով.

*Խունկ եմ մատուցում Քո առաջ, Քրիստո՛ս, որպէս հոգեւոր բուր-  
մունք: Ընդունի՛ր սա անուշահոտութեան համար Քո սուրբ, երկ-  
նային եւ իմանալի մատուցարանի մէջ: Սրա փոխարէն առաքի՛ր  
մեզ Սուրբ Հոգուդ շնորհները եւ պարգեւները: Եւ մենք փառք  
ենք մատուցում Քեզ Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Վարագոյրը բացում են:

Եւ ինկարկելով՝ [խորհրդակալարը] սարկաւազների հետ իջնում է  
եկեղեցի եւ ասլա ելնում վեր եւ երկրպագում Սեղանին:

Դպիրները.

*Այս ուխտի նուիրական յարկում, որ Աստուծոյ տաճարն է, հաւա-  
քուել ենք առաջիկայ սուրբ Պատարագի խորհուրդը պաղատանքնե-  
րով կատարելու. անուշահոտ խունկեր մատուցելով՝ խումբ կազմած  
պար ենք բռնել այս խորանի վերնայարկ սրահներում:*

*Առանց մերժելու ընդունի՛ր մեր աղօթքը որպէս անուշահոտ  
խունկերի, ստաշխների եւ կինամոնների բոյր եւ մատուցողներիս  
սրբութեա՛մբ պահի՛ր՝ միշտ եւ հանապազ Քեզ սպասաւորելու:*

*Քո Մօր եւ Կոյսի բարեխօսութեամբ ընդունի՛ր Քո սպասաւորնե-  
րի աղաչանքը, Քրիստո՛ս, որ սուրբ Եկեղեցին Քո արեամբ աւելի  
պայծառացրիք, քան երկինքը եւ ըստ երկնային նուիրապետու-  
թեան՝ կարգեցիր սրա մէջ առաքեալների, մարգարէների, սուրբ  
վարդապետների դասերը:*

*Այսօր մենք՝ քահանաներիս, սարկաւագներիս, դպիրներիս եւ  
կղերիկոսներիս դասերը, միասին հաւաքուած, խունկ ենք մա-  
տուցում Քո առջեւ, Տէ՛ր, ինչպէս Զաքարիան մատուցեց հնում:  
Ընդունի՛ր մեզանից այս խնկանուէր մաղթանքը, ինչպէս ընդու-  
նեցիր Աբելի, Նոյի եւ Աբրահամի պատարագները:*

*Բարեխօսութեամբ վերին Քո զօրացդ միշտ անշա՛րժ պահեա զԱթոռ Հայկազնեայց:*

Շարական Եկեղեցոյ

*Խնդա՛ յոյժ, դո՛ւստր լուսոյ, մա՛յր սուրբ կաթուղիկէ, մանկամբք քո, Սիրն: Ջարդարեալ պճնեա՛, հա՛րսն պանծալի, երկնանման լուսածե՛մ խորան. զի Օծեալն Աստուած՝ էնն ի յէէն, անծախապէս ի քեզ միշտ պատարագի Հօր ի հաշտութիւն, մեզ ի քաւութիւն բաշխէ զՄարմին եւ զԱրիւն Իւր սուրբ վասն Իւր կատարման սուրբ տնօրէնութեան, շնորհէ զթողութիւն կանգնողի տաճարիս:*

*Ձանապական Կոյսն Մարիամ Աստուածածին խոստովանի սուրբ Եկեղեցի, ուստի տուաւ Հացն անմահութեան եւ Բաժակ մեզ ուրախարար. տո՛ւք օրհնութիւն նմա հոգեւոր երգող:*

## ՍԿԻԶՔՆ

Եւ նախասարկաւագն, կալով ի մէջ եկեղեցոյն, ձայնեացէ.

*Օրհնեա՛, տէ՛ր:*

Եւ քահանայն ասացէ ի ձայն.

*Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ սկսանիցին դպիրքն ժամանուր ըստ պարշաճի աւուրն.

կամ ասացեն զայս յաւուրս կիրականից.

«Միածին Որդի»

*Միածին Որդի եւ Բա՛նդ Աստուած եւ անմա՛հ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի Միշտ Կուսէն:*

*Անփոփոխելիդ մարդ եղեալ՝ խաչեցար, Քրիստո՛ս Աստուած մեր, մահուամբ զմահ կոխեցեր:*

*Մի՛նդ ի Սրբոյ Երրորդութենէն, փառաւորակի՛ց ընդ Հօր եւ Սրբոյ Հոգւոյն, կեցո՛ զմեզ:*

*Քո վերին զօրքերի բարեխօսութեամբ միշտ անսասան պահիր  
Հայոց Աթոռը:*

Շարական Եկեղեցու

*Ուրախացի՛ր քո զաւակներով, դո՛ւստր լոյսի, սուրբ մայր կաթողիկէ՛ [Եկեղեցի], վերի՛ն Սիոն: Զարդարուի՛ր ու պճնուի՛ր, հա՛րս պանծալի, երկնանման լուսածե՛մ խորան. քանզի Օծեալ Աստուած՝ էն էից, անսպառաքար պատարագւում է միշտ քո մէջ՝ Հօր հետ հաշտութեան համար, Իր սուրբ Մարմինն ու Արիւնը բաշխում է մեզ քաւութեան համար, որպէսզի ամբողջացնի Իր սուրբ փրկագործութիւնը, եւ թողութիւն է պարգեւում այս տաճարը կանգնեցնողին:*

*Սուրբ Եկեղեցին Աստուածածին է խոստովանում անապական Կոյս Մարիամին, որից տրուեց մեզ անմահութեան Հացը եւ ուրախարար Բաժակը. նրան օրհնեցէ՛ք հոգեւոր երգով:*

### ՍԿԻԶԲ

Եւ նախասարկասագր, կանգնելով եկեղեցու մէջտեղում, ձայնում է.

*Օրհնի՛ր, տէ՛ր:*

Եւ քահանայն բարձրաձայն ասում է.

*Օրհնեալ է Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու թագաւորութիւնը այժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ դպիրները սկսում են ժամանուրն ըստ օրուայ պարշաձութեան. կամ կիրակի օրերին սա են ասում.

«Միածին Որդի»

*Միածին Որդի, Բա՛նդ Աստուած եւ անմահ էութիւն, որ յանձն առար մարմնանալ սրբուհի Աստուածածնից եւ Միշտ Կոյսից:*

*Անփոփոխելիդ մարդ դառնալով՝ խաչուեցիր, Քրիստո՛ս Աստուած մեր, մահուամբ մահն ընդոտնեցիր:*

*Մէ՛կդ Սուրբ Երրորդութիւնից, փառաւորակի՛ց Հօր եւ Սուրբ Հոգու, կեա՛նք տուր մեզ:*



Եւ յասարդելն ժամանարին ձայնեսցէ նախասարկասագն.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:  
Ընկա՛լ, կեցո՛՛ եւ ողորմեա՛:  
— Օրհնեա՛, տէ՛ր:

Եւ քահանայն ասասցէ.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Արբոյ այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:  
† Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկասագն.

Աստուծոյ երկիրպագեսցուք:

Դպիրքն.

Առաջի Քո, Տէ՛ր:

Եւ քահանայն ասասցէ ի ձայն.

Տէ՛ր Աստուած մեր, Որոյ կարողութիւնդ անքնին է, եւ փառքդ՝  
անհասանելի, Որոյ ողորմութիւնդ անչափ է, եւ գթութիւնդ՝ ան-  
բաւ, Դու ըստ առատ մարդասիրութեանդ Քում նայեա՛ց ի ժո-  
ղովուրդս Քո եւ ի տաճարս այս սուրբ: Եւ արա՛ ընդ մեզ եւ ընդ  
աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն Քո եւ զգթութիւն:  
Զի Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ սկսանիցին ասար դպիրքն ասդմնս Ճաշու եւ շարական Ճաշու ըսար  
պարշաձին: Եւ ի «փառք» րայն դպրաց՝ երկիրպագեն ստաջի բեմին  
ամենեքեան:

Եւ մինչ նոքա երգեն, քահանայն ասասցէ զաղօթս ի ծածուկ.

Տէ՛ր Աստուած մեր, կեցո՛՛ զժողովուրդս Քո եւ օրհնեա՛ զժա-  
ռանգութիւնս Քո. զլրումն Եկեղեցւոյ Քո պահեա՛: Սրբեա՛  
զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան Քո: Դու  
զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ Քով եւ մի՛

Եւ ժամանուորի ասարոյիս նախասարկասազը ձայնում է.

*Դարձեալ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը:  
Ընդունի՛ր, կեանք տուր եւ ողորմի՛ր:  
— Օրհնի՛ր, տէ՛ր:*

Եւ քահանան ասում է.

*Օրհնութիւն եւ փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:  
† Խաղաղութիւն բոլորին:*

Դպիրները.

*Եւ քո հոգուն:*

Սարկասազը.

*Երկրպագենք Աստծուն:*

Դպիրները.

*Քո առջեւ, Տէ՛ր:*

Եւ քահանան բարձրաձայն ասում է.

*Տէ՛ր Աստուած մեր, Որիդ կարողութիւնը անքնին է, եւ փառքդ՝  
անհասանելի, Որիդ ողորմութիւնն անչափ է, եւ գթութիւնդ՝  
անբաւ, Դու ըստ Քո առատ մարդասիրութեան նայի՛ր Քո այս  
ժողովրդին եւ այս սուրբ տաճարին: Եւ Քո ողորմութիւնն ու  
գթութիւնը առատապէս տո՛ւր մեզ եւ մեր աղօթակիցներին:  
Որովհետեւ Քեզ վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ դպիրները սկսում են ճաշու ասղմուր եւ ճաշու շարականը ըստ  
օրուայ պարզաձութեան: Եւ երբ դպիրները «փառք» են րապիս, բոլորը  
երկրպագում են բնա՛ի առաջ:

Եւ մինչ նրանք երգում են, քահանան ծածուկ ասում է այս աղօթքը.

*Տէ՛ր Աստուած մեր, կեանք տուր Քո այս ժողովրդին եւ օրհնի՛ր  
Քո ժառանգութիւնը. պահի՛ր Քո Եկեղեցու ամբողջութիւնը:  
Սրբի՛ր սրանց, որոնք սիրով ողջունեցին Քո տան վայելչութիւ-  
նը: Փառաւորի՛ր Դու մեզ Քո աստուածային զօրութեամբ եւ*

*Թողու՛ր գյուսացեալս ի Քեզ: Զի Քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:*

*† Խաղաղութիւն ամենեցուն:*

*Որ հասարակաց զայս եւ միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, եւ զերկուց եւ զերից միաձայնելոց յանուն Քո զխնդրուածս պարգեւել խոստացար, Դու եւ այժմ զծառայից քոց զխնդրուածս առ ի յօգո՛ւտն կատարեա՛ շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն Քումբ ճշմարտութեան եւ ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականս պարգեւելով: Զի բարերար եւ մարդասէր ես Աստուած, եւ Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

### ՄՈՒՏՔ ՃԱՇՈՒ

*Եւ քահանայն երկրպագելով Սեղանոյն՝ ասացէ զաղօթս ի ծածուկ.*

*Տէ՛ր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս եւ զգինուորութիւնս հրեշտակաց եւ հրեշտակապետաց ի սպասաւորութիւն փառաց Քոց, արա՛ այժմ ընդ մուտս մեր մտանել եւ սրբոց հրեշտակաց եւ լինել պաշտօնակից մեզ եւ փառաբանակից Քումմ բարերարութեանդ:*

*Քահանայն՝ ի ձայն.*

*Զի Քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:*

*Եւ համբորեացեն զՍեղանն:*

*Եւ սարկաւագունքն գոչեացեն.*

*Պռոսխումէ:*

*Ի սարկաւագաց մի ոմն բարձրացուցէ զԱւետարանն սուրբ, եւ դպիրքն ըստ իտրիդոյ սուրն երգեացեն զԵրեքարբեանն:*

մի՛ լքիր Քեզ յուսացողներին: Քանզի Քոնն են կարողութիւնը, զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս. ամէն:

† Խաղաղութիւն բոլորին:

Դու, որ սովորեցրիր մեզ բոլորիս միաձայն եւ միասնական աղօթիլ եւ խոստացար կատարել Քո անուամբ երկու կամ երեք հոգով միաբանուածների խնդրանքները, այժմ եւս Քո ծառաների խնդրանքները յօգուտ իրե՛նց կատարի՛ր՝ այս կեանքում շնորհելով մեզ Քո ճշմարտութեան գիտութիւնը, իսկ հանդերձալում յաւիտենական կեանք պարգեւելով: Քանզի բարերար եւ մարդասէր Աստուած ես, եւ Քեզ վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### ՃԱՇՈՒ ՄՈՒՏՔ

Եւ քահանան, Սեղանին երկրպագելով, ծածուկ ասում է այս աղօթքը.

Տէ՛ր Աստուած մեր, որ հրեշտակների եւ հրեշտակապետերի դասերն ու զօրքերը կարգեցիր երկնքում Քո փառքի սպասաւորութեան համար, այժմ այնպէ՛ս արա, որ մեր մուտքի հետ սուրբ հրեշտակներն էլ մտնեն եւ սպասաւորակից ու փառաբանակից լինեն Քո բարերարութեանը:

Քահանան՝ քարձրաձայն.

Քանզի Քոնն են կարողութիւնը, զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս. ամէն:

Ապա համբարում են Սեղանը:

Եւ սարկաւագները ձայնում են.

Ուշադրութի՛ւն:

Սարկաւագներից մէկը քարձրացնում է սուրբ Աւերարանը, եւ դպիրները երգում են Երեքարեանն ըստ օրուայ խորհուրդի:

Երեքսրբեանս

Զատկի, Յինանց եւ Յարութեան կիրակեից

*Սուրբ Աստուած, սուրբ եւ Հգօր, սուրբ եւ անմահ,  
Որ յարեար ի մեռելոց,  
Ողորմեա՛ մեզ:*

Երիցս կրկնեացեն:

Աստուածայայտնութեան եւ Վարդավառի

*Սուրբ Աստուած, սուրբ եւ Հգօր, սուրբ եւ անմահ,  
Որ յայտնեցար վասն մեր,  
Ողորմեա՛ մեզ:*

Երիցս կրկնեացեն:

Տեանընդառաջի, Հոգեգալստեան, Վերափոխման

*Սուրբ Աստուած, սուրբ եւ Հգօր, սուրբ եւ անմահ,  
Որ եկիր եւ գալոց ես,  
Ողորմեա՛ մեզ:*

Երիցս կրկնեացեն:

Խաչի, Եկեղեցոյ, Սրբոց, Պահոց

*Սուրբ Աստուած, սուրբ եւ Հգօր, սուրբ եւ անմահ,  
Որ խաչեցար վասն մեր,  
Ողորմեա՛ մեզ:*

Երիցս կրկնեացեն:

Եւ քահանայն զոյգ ամին ասացէ ի ծածուկ.

*Աստուած՝ սուրբ, որ ի սուրբս Հանգուցեալ ես, եւ երեքսրբեան  
ձայնիւ սերովբէք գովեն զՔեզ, եւ քերովբէք փառաբանեն, եւ  
ամենայն երկնային զօրութիւնք Քեզ երկիրպագանեն. որ ի  
չգոյ՛ ի գոյ ածեր զամենայն արարածս, որ արարեր զմարդն  
ըստ պատկերի Քոռմ եւ նմանութեան եւ ամենայն շնորհիւ Քով  
զնա զարդարեցեր եւ ուսուցեր խնդրել զիմաստութիւն եւ զգօ-  
նութիւն եւ ո՛չ անտես արարեր զմեղուցեալն, ալլ եղիր ի վերայ  
նորա ապաշխարութիւն փրկութեան. որ արժանի արարեր զմեզ՝*

Երեքսրբեան

Զատկի, Յինանց եւ Յարութեան կիրակիների

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ,  
Որ յարութիւն առար մեռելներից,  
Ողորմի՛ր մեզ:*

Երեք անգամ կրկնում են:

Աստուածայայտնութեան եւ Վարդավառի

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ,  
Որ յայտնուեցիր մեզ համար,  
Ողորմի՛ր մեզ:*

Երեք անգամ կրկնում են:

Տեանընդառաջի, Հոգեգալստեան, Վերափոխման

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ,  
Որ եկար եւ գալու ես,  
Ողորմի՛ր մեզ:*

Երեք անգամ կրկնում են:

Խաչի, Եկեղեցու, Սրբոց, Պահոց

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ,  
Որ խաչուեցիր մեզ համար,  
Ողորմի՛ր մեզ:*

Երեք անգամ կրկնում են:

Իսկ քահանան սրան զուգահեռ ծածուկ ասում է.

*Աստուած՝ սուրբ, որ սուրբերի մէջ ես բնակւում, եւ սերովբէները  
երեքսրբեան երգով գովում են Քեզ, քերովբէները փառաբանում  
են, եւ երկնային բոլոր զօրութիւնները երկրպագում են Քեզ. որ  
անգոյութիւնից գոյացրիր բոլոր արարածներին, որ արարեցիր  
մարդուն Քո պատկերով եւ նմանութեամբ, Քո ամբողջ շնորհով  
զարգարեցիր նրան, սովորեցրիր փնտրել իմաստութիւն ու զգօ-  
նութիւն եւ չանտեսեցիր մեղաւորին, այլ նրա վրայ փրկութեան  
ապաշխարութիւն գրեցիր. որ արժանացրիր մեզ՝ նուաստ եւ*

զնուատացեալ եւ զանարժան ծառայոս Քո, ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան Սեղանոյ Քոյ եւ զօրինաւոր երկրպագութիւն եւ զփառաբանութիւն մատուցանել Քեզ:

Դու, Տէ՛ր, ընկա՛լ ի բերանոյ մեղաւորացս գերեքսրբեան օրհնութիւնս եւ պահեա՛ զմեզ Քոյին քաղցրութեամբդ. թո՛ղ մեզ զամենայն յանցանս մեր զկամայ եւ զակամայ. սրբեա՛ զհոգի, զմիտս եւ զմարմինս մեր եւ շնորհեա՛ ի սրբութեան պաշտել զՔեզ զամենայն աւուրս կենաց մերոց՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին եւ ամենայն սրբոց Քոց, որք յաւիտենից Քեզ բարեհաճոյցան: Զի սուրբ ես, Տէ՛ր Աստուած մեր, եւ Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ի կայարակն Երեքսրբնոյն եւ աղօթիցն՝ սարկաւագն քարոզեսցէ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛:

— Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛:

— Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛:

— Վասն հայրապետին մերոյ տեառն (այս անուն) սրբազնագոյն կաթողիկոսի կենաց եւ փրկութեան հոգւոյ նորին զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛:

անարժան ծառաներիդ, այս ժամին կանգնել Քո սուրբ Սեղանի փառքի առջեւ եւ երկրպագութիւնն ու փառաբանութիւն մատուցել, ինչպէս վայել է Քեզ:

Դու, Տէ՛ր, ընդունի՛ր մեղաւորներիս բերանից այս երեքսրբեան օրհնութիւնը եւ պահի՛ր մեզ Քո քաղցրութեամբ. ների՛ր մեզ կամովին եւ ակամայ գործած մեր բոլոր յանցանքները. սրբի՛ր մեր հոգին, միտքը եւ մարմինը եւ շնորհի՛ր սրբութեամբ ծառայել Քեզ մեր կեանքի բոլոր օրերում՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի եւ Քո բոլոր սուրբերի, որոնք յաւիտենապէս Քեզ Հաճոյ կղան: Քանզի սուրբ ես, Տէ՛ր Աստուած մեր, եւ Քեզ վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտենա յաւիտենից. ամէն:

Եւ երբ ասարկում են Երեքսրբեանը եւ աղօթքը, սարկասազը քարոզում է.

Դարձեալ խաղաղութեան Համար աղաչենք Տիրոջը:

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր:

— Ողջ աշխարհի խաղաղութեան եւ սուրբ Եկեղեցու Հաստատութեան Համար աղաչենք Տիրոջը:

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր:

— Բոլոր սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսների Համար աղաչենք Տիրոջը:

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր:

— Մեր Հայրապետի՝ տէր տէր (այսինչ անուն) սրբազնագոյն կաթողիկոսի կեանքի եւ հոգու փրկութեան Համար աղաչենք Տիրոջը:

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր:



— Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւազաց, դպրաց եւ ամենայն ուխտի մանկանց Եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛:

— Վասն բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց, զօրավարաց եւ զօրաց նոցին զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛:

— Վասն Հոգւոցն Հանգուցելոց, որք ճշմարիտ եւ ուղիղ Հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն.

Յիչեա՛, Տէ՛ր, եւ ողորմեա՛:

— Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ Հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛:

— Զանճինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանճն արասցուք:

Դպիրքն.

Քեզ Տեառնդ յանճն եղիցուք:

— Ողորմեաց մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ.

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛:

Եւ քահանայն բազկադարած ասասցէ զաղօթս ի ծածուկ.

Տէ՛ր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից Քոց վերընկալցիս եւ ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան Քում:

— Վարդապետների, քահանաների, սարկաւազների, դպիրների եւ Եկեղեցու սպասաւորների ողջ ուխտի համար աղաչենք Տիրոջը:

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր:

— Բարեպաշտ թագաւորների եւ աստուածասէր իշխանների, գօրավարների եւ նրանց գօրքերի համար աղաչենք Տիրոջը:

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր:

— Հանգուցեալների հոգիների համար, որոնք ճշմարիտ եւ ուղիղ հաւատքով ննջեցին ի Քրիստոս, աղաչենք Տիրոջը:

Դպիրները.

Յիշի՛ր, Տէ՛ր, եւ ողորմի՛ր:

— Դարձեալ միաբան աղաչենք Տիրոջը մեր ճշմարիտ եւ սուրբ հաւատքի համար:

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր:

— Մեր անձերը եւ միմեանց ամենակալ Տէր Աստուծոյ յանձնենք:

Դպիրները.

Քեզ՝ Տիրոջդ, յանձնենք մեզ:

— Ողորմի՛ր մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ Քո մեծ ողորմութեան. բոլորս միաբան ասենք.

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր, Տէ՛ր, ողորմի՛ր, Տէ՛ր, ողորմի՛ր:

Եւ քահանան քաղկապարած եւ ծածուկ ասում է այս աղօթքը.

Տէ՛ր Աստուած մեր, ընդունի՛ր Քո ծառաների բազկատարած աղաչանքը եւ ըստ Քո մեծ ողորմութեան ողորմի՛ր նրանց: Առաքի՛ր

*Զգթութիւն Քո առաքեա՛ ի վերայ մեր եւ ամենայն ժողովրդեանս, որք ազն ունին առ ի Քէն առատ ողորմութեանդ:—*

Սարկաւագն ձայնեցէ.

*Օրհնեա՛, տէ՛ր:*

Եւ քահանայն ասացէ ի ձայն.

*— Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գորով, եւ Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

### ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ ԶԱՇՈՒ

Յեր այսորիկ երկրպագէ Սեղանոյն քահանայն եւ եկեայ բազմի յասրի-  
ձանն:

Եւ սկսանին դպիրքն սաղմոս Ճաշու ըսր խորհրոյ աւուրն:

Եւ ընթերցցին զգիրս Մարգարէականս:

Ապա ասացեն զմեղեղի ըսր պարշամի աւուրն:

Եւ ընթերցցին զգիրս Առաքելականս:

Եւ զկնի՛ Ալէլուիա՛ ըսր ցուցանելոյ ընթերցուածոյն:

Եւ յաւարումանն սարկաւագն ձայնեցէ.

*Ալէլուիա, օրթի:*

Եւ քահանայն դարձցի եւ իսաչակնքեցէ ի վերայ ժողովրդեանն՝ ասե-  
լով.

*† Խաղաղութիւն ամենեցուն:*

Դպիրքն.

*Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սարկաւագն.

*Երկիւղածութեամբ լուարո՛ւք:*

Սարկաւագն.

*Սրբոյ Աւետարանիս [Յիսուսի Քրիստոսի] որ ըստ Մատթէոսի  
(Մարկոսի, Դուկասու, Յովհաննու):*

*Քո գթութիւնը մեզ եւ այս ամբողջ ժողովրդի վրայ, որը սպասուծ է Քեզանից եկող առատ ողորմութեանը:—*

Սարկաւազր ձայնում է.

*Օրհնի՛ր, տէ՛ր:*

Եւ քահանան բարձրաձայն ասում է.

*— Քանզի Դու, Աստուած լինելով, ողորմած եւ մարդասէր ես, եւ Քեզ վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

### ՃԱՇՈՒ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՆԵՐ

Սրանից յետոյ քահանան երկրպագում է Սեղանին եւ գալիս նստում աստիճանին:

*Դպիրները սկսում են Ճաշու ասիմնուն ըստ օրուայ խորհրդի:*

*Յետոյ ընթերցում են Մարգարէական գրքերը:*

*Ապա մեղեդի են երգում ըստ օրուայ պարզաձայնութեան:*

*Յետոյ կարդում են առաքելական թղթերը:*

*Ապա՝ Ալէլուիա՝ ըստ ընթերցուածի ցուցման:*

*Երբ սա կարդում են, սարկաւազր ձայնում է.*

*Ալէլուիա, ոտքի՛:*

Իսկ քահանան շրջում է դէպի ժողովուրդը եւ խաչակնքում նրան՝ ասելով.

*† Խաղաղութիւն բոլորին:*

Դպիրները.

*Եւ քո հոգուն:*

Սարկաւազր.

*Երկիւղածութեամբ լսէ՛ք:*

Սարկաւազր.

*[Յիսուս Քրիստոսի] Սուրբ Աւետարանն ըստ Մատթէոսի (Մարկոսի, Դուկասի, Յովհաննէսի):*

Դպիրքն.

Փա՛ռք Քեզ, Տէ՛ր Աստուած մեր:

Սարկաւագն.

Պռոսխուճէ:

Դպիրքն.

Ասէ Աստուած:

Եւ սարկաւագն ընթերցցի զԱւերարանն սուրբ:

Եւ յաւարտմանն ասացեն ամենեքեան.

Փա՛ռք Քեզ, Տէ՛ր Աստուած մեր:

### ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ

Եւ այլա ասեն զՆիկիական դասանութիւնն ի լման.

Հաւատամք ի մի Աստուած՝ ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն՝ յէութենէ Հօր: Աստուած՝ յԱստուծոյ, լոյս՝ ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած: Նոյն Ինքն ի բնութենէ Հօր, Որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր՝ մարդկան, եւ վասն մերոյ փրկութեան, իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կտարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ զմարմին, զՀոգի եւ զմիտ եւ զամենայն, որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զանեալս, Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վարձան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կտարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Դպիրները.

*Փա՛ռք Քեզ, Տէ՛ր Աստուած մեր:*

Սարկաազը.

*Ուշադրութի՛ւն:*

Դպիրները.

*Աստուած ասում է:*

Եւ սարկաազն ընթերցում է սուրբ Աւերաբանը:

Եւ երբ աւարտում է, բոլորն ասում են.

*Փա՛ռք Քեզ, Տէ՛ր Աստուած մեր:*

### ՀԱՒԱՏՔԻ ՀԱՆԳԱՆԱԿ

Ապա անբողոքեամբ ասում են Նիկիական դասանութիւնը.

*Հաւատում ենք մէկ Աստուծոյ՝ ամենակալ Հօրը, երկնքի եւ երկրի, տեսանելիների եւ անտեսանելիների Արարչին:*

*Եւ մէկ Տէր Յիսուս Քրիստոսին՝ Աստուծոյ Որդուն՝ ծնուած Հայր Աստծուց՝ միածին, այսինքն՝ Հօր էութիւնից: Աստուած՝ Աստծուց, լոյս՝ լոյսից, ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ եւ ո՛չ արարած: Նոյն Ինքը՝ Հօր բնութիւնից, Որով ամէն ինչ եղաւ երկնքում եւ երկրի վրայ՝ տեսանելիներ եւ անտեսանելիներ: Որ մեզ՝ մարդկանց, եւ մեր փրկութեան համար, երկնքից իջնելով, մարմնացաւ, մարդացաւ, Սուրբ Հոգով կատարելապէս ծնուեց սուրբ Կոյս Մարիամից: Որով վերցրեց մարմինը, հոգին եւ միտքը եւ ամէն ինչ, որ ունի մարդ՝ ճշմարտապէս եւ ո՛չ երեւութապէս: Չարչարուեց, խաչուեց, թաղուեց, հրորդ օրը յարութիւն առաւ, նոյն մարմնով ելաւ երկնք եւ նստեց Հօր աջ կողմում: Գալու է նոյն մարմնով եւ Հօր փառքով՝ դատելու ողջերին եւ մեռելաւորին, Որի թագաւորութիւնը վախճան չունի:*

*Հաւատում ենք եւ Սուրբ Հոգուն՝ անեղին եւ կատարեալին, որ խօսեց Օրէնքում, Մարգարէներում եւ Աւետարաններում: Որ իջաւ Յորդանան, քարոզեց առաքեալների միջոցով եւ բնակուեց սուրբերի մէջ:*

Հաւատամք եւ ի մի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քառութիւն եւ ի թողութիւն մեղաց. ի յարութիւնն մեռելոց, ի դատատանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս:

Մինչ ցասար են հասարոյ բանք:

Սարկասազն.

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր Սուրբ Հոգի, կամ թէ՛ յոչէից եղեն, կամ յայմէ էութիւնէ ասեն լինիլ գՈրդին Աստուծոյ եւ կամ գՍուրբ Հոգին, եւ թէ՛ փոփոխելիք են կամ այլայլելիք, գայնպիսիսն նգովէ Կաթողիկէ եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Ի սրբոյ Լուսատրչէն մերմէ ասացեալ

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան գյաւիտեանս՝ երկիր պագանելով Սրբոյ Երրորդութեանն եւ Միոյ Աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### ԱՂՕԹՔ ԶԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅ

Սարկասազն քարոզեացէ ի ձայն.

Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք:

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛:

— Եւ եւս հաւատով աղաչեսցուք եւ խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման եւ աղօթից, զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ գյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր: Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի Տէրութեան Նորա, եւ Նա տացէ մեզ միաբան միով հաւատով եւ արդարու-

*Հաւատում ենք նաեւ միայն մէկ Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցու, մէկ մկրտութեան, ապաշխարութեան, մեղքերի քաւութեան եւ թողութեան. մեռելների յարութեանը, հոգիների եւ մարմինների յաւիտենական դատաստանին, երկնքի արքայ-յութեանը եւ յաւիտենական կեանքին:*

*Մինչեւ այսրեղ են հասարքի խօսքերը:*

*Սարկաւազը.*

*Իսկ ուղքեր ասում են, թէ կար ժամանակ, երբ չկար Որդին, կամ կար ժամանակ, երբ չկար Սուրբ Հոգին, կամ թէ՛ ոչնչից եղան, կամ ասում են՝ այլ էութիւնից են Աստուծոյ Որդին եւ կամ Սուրբ Հոգին, եւ թէ՛ փոփոխելի են կամ այլայլելի, այնպիսիներին նզովում է Կաթողիկէ եւ Առաքելական Սուրբ Եկեղեցին:*

*Մեր սուրբ Լուսաւորչի կողմից ասուած*

*Իսկ մենք փառաւորենք Նրան, որ յաւիտեաններից առաջ է՝ երկրպագելով Սուրբ Երրորդութեանը եւ Մէկ Աստուածութեանը՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

### **ԱՂՕԹՔ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՆԵՐԻՅ ՅԵՏՈՅ**

*Սարկաւազը բարձրաձայն քարոզում է.*

*Դարձեալ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը:*

*Դպիրները.*

*Տէ՛ր, ողորմի՛ր:*

*— Դարձեալ հաւատքով աղաչենք եւ խնդրենք մեր Տէր Աստուած եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսից այս պաշտամունքի եւ աղօթքի ժամին, որ ընդունելութեան արժանի համարի եւ լսի Տէրը մեր աղաչանքների ձայնը, ընդունի մեր սրտի խնդրուածքները, ների մեր յանցանքները եւ ողորմի մեզ: Մեր աղօթքներն ու խնդրուածքները թող ամէն ժամ մտնեն Նրա մեծ Տէրութեան առաջ, եւ Նա տայ մեզ միաբան, մէկ հաւատքով եւ արդարութեամբ աշխատել*



*Թեամբ վաստակել ի գործս բարիս, զի ողորմութեան զշնորհս Իւր արասցէ ի վերայ մեր: Տէրն ամենակալ կեցուցէ եւ ողորմեսցի:*

Դպիրքն.

*Կեցո՛, Տէ՛ր:*

— *Զժամս սուրբ Պատարագիս եւ զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով՝ ի Տեառնէ խնդրեսցուք:*

Դպիրքն.

*Շնորհեա՛, Տէ՛ր:*

— *Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:*

Դպիրքն.

*Շնորհեա՛, Տէ՛ր:*

— *Զբաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:*

Դպիրքն.

*Շնորհեա՛, Տէ՛ր:*

— *Զսրբոյ խաչին մեծ եւ կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:*

Դպիրքն.

*Շնորհեա՛, Տէ՛ր:*

— *Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք:*

Դպիրքն.

*Տէ՛ր, ողորմեա՛:*

— *Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:*

Դպիրքն.

*Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:*

բարի գործերի մէջ, որպէսզի Իր ողորմութեան շնորհը պարգեւի մեզ: Ամենակալ Տէրը թող կեանք տայ եւ ողորմի:

Դպիրները.

Կեանք տուր, Տէ՛ր:

— Այս սուրբ Պատարագի ժամը եւ այս օրը խաղաղութեամբ եւ հաւատքով անցկացնել խնդրենք Տիրոջից:

Դպիրները.

Շնորհի՛ր, Տէ՛ր:

— Խաղաղութեան հրեշտակին մեր անձերին պահապան խնդրենք Տիրոջից:

Դպիրները.

Շնորհի՛ր, Տէ՛ր:

— Մեր յանցանքներին քաւութիւն եւ թողութիւն խնդրենք Տիրոջից:

Դպիրները.

Շնորհի՛ր, Տէ՛ր:

— Սուրբ Խաչի մեծ եւ կարող զօրութիւնը մեր անձերին օգնութիւն խնդրենք Տիրոջից:

Դպիրները.

Շնորհի՛ր, Տէ՛ր:

— Դարձեալ միաբան աղաչենք Տիրոջը մեր ճշմարիտ եւ սուրբ հաւատքի համար:

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր:

— Մեր անձերը եւ միմեանց ամենակալ Տէր Աստուծոն յանձնենք:

Դպիրները.

Քեզ՝ Տիրոջդ, յանձնենք մեզ:

— Ողորմեա՛ց մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քում. ասացուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛:

Մինչ նոքա երգեն, քահանայն ասացէ զաղօթս ի ծածուկ.

[ա] Տէր մեր եւ Փրկիչ Յիսո՛ւս Քրիստոս, որ մեծդ ես ողորմութեամբ եւ առատ պարգեւօք բարերարութեան Քո, որ Դու Քոյին կամաւդ ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչի եւ մահու յաղագս մեղաց մերոց եւ պարգեւեցեր առատապէս զպարգեւս Հոգւոյդ Սրբոյ երանելի առաքելոցն, հաղորդս արա եւ զմե՛զ, Տէր, աղաչեմք զՔեզ, աստուածային պարգեւացդ, թողութեան մեղաց եւ ընդունելութեան Հոգւոյդ Սրբոյ:—

Քահանայն ի ձայն.

— Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

† Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագն.

Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպիրքն.

Առաջի Քո, Տէ՛ր:

Քահանայն ի ձայն.

[բ] Խաղաղութեամբ Քով, Քրիստո՛ս Փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացո՛ զմեզ եւ աներկի՛ւղ պահեա յամենայն չարէ. հաւասարեա՛ զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս Քո, որք հոգւով եւ ճշմարտութեամբ Քեզ երկիրպագանեն: Վասն

— Ողորմի՛ր մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ Քո մեծ ողորմութեան.  
բոլորս միաբան ասենք:

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր, Տէ՛ր, ողորմի՛ր, Տէ՛ր, ողորմի՛ր:

Մինչ նրանք երգում են, քահանայն ծածուկ ասում է այս աղօթքը.

[ա] Տէր մեր եւ Փրկիչ Յիսո՛ւս Քրիստոս, որ մեծ ես Քո ողորմութեամբ եւ առատ՝ Քո բարերարութեան պարգեւներով, որ Դոև Քո կամքով այս ժամին համբերեցիր խաչի եւ մահուան չարչարանքներին մեր մեղքերի պատճառով եւ առատաբար պարգեւեցիր Սուրբ Հոգուդ պարգեւները երանելի առաքելներին, հաղորդ դարձրու եւ մե՛զ, Տէր, աղաչում ենք Քեզ, աստուածային պարգեւներիդ, մեղքերի թողութեան եւ Սուրբ Հոգուդ ընդունելութեան:—

Քահանայն՝ քարձրաձայն.

— Որպէսզի արժանաւոր լինենք գոհութեամբ փառաւորելու Քեզ Հօր եւ Սուրբ Հոգուդ հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

† Խաղաղութիւն բոլորին:

Դպիրները.

Եւ քո հոգուն:

Սարկաւազը.

Երկրպագենք Աստծուն:

Դպիրները.

Քո առջեւ, Տէ՛ր:

Քահանայն՝ քարձրաձայն.

[բ] Քրիստո՛ս Փրկիչ մեր, Քո խաղաղութեամբ, որ վեր է բոլոր մտքերից եւ խօսքերից, ամրացրո՛ւ մեզ եւ աներկի՛ւղ պահիր ամէն տեսակ չարից. հաւասարեցրո՛ւ մեզ Քո ճշմարիտ երկրպագուներին, որոնք հոգով եւ ճշմարտութեամբ են Քեզ երկրպագում:

*զի Ամենասուրբ Երրորդութեանդ վայել է փառք, իշխանութիւն  
եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:*

*Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:*

Դպիրքն.

*Ամէն:*

Սարկաւագն.

*Օրհնեա՛, տէ՛ր:*

*Քահանայն իսաչակնքէ ի վերայ ժողովրդեանն՝ սուելով ի ձայն.*

*† Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեանդ:*

Դպիրքն.

*Ամէն:*

*Յեր այսորիկ, եթէ եպիսկոպոս իցէ խորհրդածոն, ի բաց հանցէ զեմի-  
փորոնն, զիտյրն եւ զհողաթափան. իսկ եթէ քահանայ իցէ, ի բաց հան-  
ցէ զասղաւարտն եւ զհողաթափան:*

*Քանզի Ամենասուրբ Երրորդութեանդ վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:*

*Օրհնեալ է մեր Տէր Յիսուս Քրիստոսը. ամէն:*

Դպիրները.

*Ամէն:*

Սարկաազր.

*Օրհնի՛ր, տէ՛ր:*

Եւ քահանան խաչակնքում է ժողովրդին՝ քարձրածայն ասելով.

*† Տէր Աստուած թող օրհնի բոլորիդ:*

Դպիրները.

*Ամէն:*

Սրանից յետոյ, եթէ խորհրդակարարը եպիսկոպոս է, հանում է եմիփորոնը, խոյրը եւ հողաթափները. իսկ եթէ քահանայ է, հանում է սաղաւարդը եւ հողաթափները:

ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԿԻ

**ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ**

**Մեծ մուտք**

Մարկաւագն.

*Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից եւ մի՛ ոք յապաշ-  
խարողաց եւ յանմաքրից մերձեացի յաստուածային Խորհուրդս:*

Դպիրքն.

*Մարմին տէրունական եւ Արիւն փրկչական կայ առաջի. երկ-  
նային զօրութիւնք յաներեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ  
բարբառով. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց»:*

Մարկաւագն.

*Սաղմո՛ս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպի՛րք, ձայնիւ  
քաղցրութեամբ զերգս հոգեւորս:*

Դպիրքն ասեն զարքասացութիւն ըստ խորհրդոյ ւտորն:

Կիրակեից, Եկեղեցոյ, Հրեշտակաց.

*Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր, Աստուած՝ զՔո սուրբ  
զեկեղեցի: Հազարք հազարաց հրեշտակապետք կան առաջի Քո,  
եւ բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն զՔեզ, Տէ՛ր. եւ ի մարդկա-  
նէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն ձայնիւ խորհրդականաւ.  
«Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց»:*

(Զարքասացութիւնս ըստ պատշաճի այլ ւտորք փօնից գրցես ի  
յաւելուածի):

Եւ զան խնկարկելով ի սուրբ Խորհուրդն:

Մարկաւագն.

*Յարեւու եհար զխորան Իւր եւ Ինքն որպէս փեսայ, զի ելանէ  
յառագաստէ Իւրմէ:*

## ԿԱՆՈՆ ՍՈՒՐԲ ԳԱՏԱՐԱԳԻ

### ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

#### Մեծ սուար

Սարկաազր.

*Երախաներից<sup>1</sup>, թերահաւատներից, ապաշխարողներից եւ անմաքուրներից ոչ մէկը չմօտենա՛յ այս աստուածային խորհուրդին:*

Դպիրները.

*Տէրունական Մարմինն ու փրկչական Արիւնն է մեր առջեւում. հրկնային զօրութիւններն աներեւոյթ կերպով եւ անզաղար ձայնով երգում են եւ ասում՝ «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութիւնների»:*

Սարկաազր.

*Սաղմո՛ս երգէք մեր Տէր Աստծուն, դպիրներ՛ր, քաղցր ձայնով հոգեւոր երգե՛ր երգէք:*

Դպիրները արասացութիւն են երգում ըստ օրուայ խորհուրդի:

Կիրակիների, Եկեղեցու, Հրեշտակների.

*Աստուած՛, Հրեշտակային կարգաւորութեամբ լցրիր Քո սուրբ Եկեղեցին: Բազմահազար Հրեշտակապետեր կան Քո առջեւ, եւ բազմաբիւր Հրեշտակներ ծառայում են Քեզ, Տէ՛ր. նաեւ մարդկանցից հաճեցիր օրհնութիւն ընդունել՝ խորհրդական երգով. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութիւնների»:*

(Ուրիշ րօներին պատշաճ արասացութիւնները կը գրնեսս յաւելուածում):

Եւ ինկարկելով գալիս են դէպի սուրբ Խորհուրդը:

Սարկաազր.

*Արեւի մէջ հաստատեց Իր վրանը եւ Ինքը փեսայի պէս դուրս է գալիս Իր առագաստից:*



Դպիրքն.

Եւ ցնծայ Նա որպէս հսկայ յընթանալ զճանապարհս Իւր:

Սարկաւագն.

Ճանապարհ արարէք Այնմիկ, որ նստի յերկինս երկնից ընդ արեւելս:

Աստուած ի հարաւոյ եկեցէ, եւ Սուրբն՝ ի Փառան լեռնէ:

Եւ դպիրքն ապա եղանակեացեն.

Որք զքերովբէիցն խորհրդաբար կերպարանիմք

Եւ կենդանարար Երրորդութեանն զերեքսրբեան օրհնութիւնս մատուցանեմք՝

Զամենայն զկենցաղականս ի բաց դնելով զգործս,

Որպէս զի զԹագաւորն ամենեցուն ընդունիցիմք.

Եւ զհրէշտակացն հանդիսապէս ընծայեալ բերեմք զկարգ:

Եւ մինչ նոքա երգեն, քահանայն խոնարհեացի առաջի սրբոյ Սեղանոյն եւ խորհրդաբար աղօթեացէ ի ծածուկ.

Ոչ ոք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք եւ ցանկութեամբ մատչիլ ի Սեղան Քո կամ սպասաւորել արքունական փառաց Քոց, քանզի պաշտել զՔեզ մեծ եւ ահաւոր՝ երկնաւոր զօրութեանցդ իսկ է: Սակայն վասն անչափ բարերարութեան Քոյ, անպարագրելի Բա՛նդ Հօր, եղեր մարդ եւ քահանայապետ մեր երեւեցար. եւ իբր Տէր ամենեցուն՝ այսմ սպասաւորութեան եւ անարիւն զենման զքահանայութիւն աւանդեցեր մեզ:

Վասն զի դու ես Տէր Աստուած մեր, որ տիրես երկնաւորաց եւ երկրաւորաց, որ ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս, սերովբէից Տէ՛ր եւ Թագաւո՛ր Իսրայէլի, որ միայն սուրբ ես եւ ի սուրբս հանգուցեալ: Աղաչեմ զՔեզ, միա՛յն բարերար եւ հեշտալուր, նայեա՛ յիս՝ ի մեղուցեալ եւ յանպիտան ծառայս Քո, եւ սրբեա՛ զհոգի եւ զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին. եւ բաւականացո՛ զիս զօրութեամբ Սուրբ Հոգւոյդ,

Դպիրները.

Եւ Նա ցնծում է որպէս հսկայ՝ Իր ճանապարհներով ընթանալիս:

Սարկաւազը.

Ճանապարհ բացէք Նրան, որ նստում է երկինքների երկնքում՝  
արեւելքում:

Աստուած հարաւից պիտի գայ, եւ Սուրբը՝ Փառան լեռից:

Եւ ապա դպիրները երգում են.

Մենք խորհրդաբար քերովբէների կերպարանքն ենք առնում  
Եւ երեքսրբեան օրհնութիւնն ենք մատուցում կենդանարար  
Երրորդութեանը՝

Մի կողմ թողնելով բոլոր կենցաղական գործերը,

Որպէսզի ընդունենք բոլորի Թագաւորին.

Եւ հանդիսաւոր նուիրաբերմամբ ցոյց ենք տալիս հրեշտակային  
կարգը:

Մինչ նրանք երգում են, քահանայն խոնարհում է սուրբ Սեղանի առջեւ  
եւ խորհրդարար աղօթում ծածուկ.

Մարմնական խոտերով եւ ցանկութիւններով բռնուածներիցս  
ոչ ոք արժանի չէ մօտենալու Քո Սեղանին կամ սպասաւորե-  
լու Քո արքունական փառքին, քանզի Քեզ ծառայելը մեծ եւ  
ահաւոր է նոյնիսկ երկնային զօրութիւններիդ համար: Սակայն  
Քո անչափ բարերարութեան պատճառով Դու, Հայր Աստուծոյ  
անպարագրելի Բանդ, մարդ եղար եւ յայտնուեցիր որպէս մեր  
քահանայապետ. եւ որպէս բոլորի Տէր՝ այս սպասաւորութեան եւ  
անարին զոհի քահանայութիւնը մեզ աւանդեցիր:

Քանզի Դու ես մեր Տէր Աստուածը, որ տիրում ես երկնաւորների  
եւ երկրաւորների վրայ, որ բազմած ես քերովբէական աթոռին,  
Տէ՛ր սերովբէների եւ Թագաւոր Իսրայէլի, որ միակզ ես սուրբ եւ  
բնակուում ես սուրբերի մէջ: Աղաչում եմ Քեզ, միա՛կ բարերար  
եւ քաղցրութեամբ լսող, նայի՛ր ինձ՝ Քո մեղաւոր եւ անպիտան  
ծառային, եւ սրբի՛ր իմ հոգին ու միտքը չարի ամէն տեսակ  
պղծութիւնից. եւ Սուրբ Հոգու զօրութեամբ կարո՛ղ դարձրու ինձ,

որ զգեցեալ եմ զքահանայականս շնորհ, կալ առաջի սրբոյ Սեղանոյս եւ քահանայագործել զՔո անարատ Մարմինդ եւ զպատուական Արիւնդ:

Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ՝ մաղթեմ, մի՛ դարձուցաներ զերեսս Քո յինչն եւ մի՛ մերժեր զիս ի ծառայից Քոց, այլ արժանի՛ արա մատուցանել Քեզ զԸնծայս զայս յինչն՝ ի մեղուցեալ եւ յանարժան ծառայէս Քումմէ: Վասն զի Դու ես, որ մատուցանես եւ մատչիս եւ ընդունիս եւ տաս, Քրիստո՛ս Աստուած մեր. եւ Քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկիզբն Քո Հարբդ եւ ամենասուրբ եւ բարերար Հոգւովդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Այս ի սարկաւագան վերաբերիցի սրբազան Հացն եւ անմահութեան Բաժակն ի սուրբ Սեղանն: Եւ զան յասրիճան խորանին, եւ բարձոյ ահաւոր Խորհրդոյն ասացէ հանդարտութեամբ.

Համբարձէ՛ք, իշխա՛նք, զգրուես ձեր ի վեր. համբարձցին զրուսք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց:

Եւ պարարագողն ինկարկէ եւ հարցանէ.

Ո՞վ է սա Թագաւոր փառաց՝ Տէր հզօր զօրութեամբ Իւրով, Տէր կարող ի պատերազմի:

Սարկաւագն.

Համբարձէ՛ք, իշխա՛նք, զգրուես ձեր ի վեր. համբարձցին զրուսք յաւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց:

Քահանայն.

Ո՞վ է սա Թագաւոր փառաց եւ Տէր զօրութեանց:

Սարկաւագն.

Սա Ինքն է Թագաւոր փառաց:

Եւ պարարագողն երկրպագէ ահիւ եւ դողութեամբ եւ առնու ի ձեռաց սարկաւագին եւ իսպակնքէ ի վերայ ժողովրդեանն՝ ասելով.

Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

որ հագել եմ այս քահանայական շնորհը, կանգնելու այս սուրբ Սեղանի առջեւ եւ քահանայագործելու Քո անարատ Մարմինը եւ պատուական Արիւնը:

Քո առաջ խոնարհեցնելով իմ պարանոցը՝ աղերսում եմ, մի՛ դարձրու Քո երեսն ինձանից եւ մի՛ մերժիր ինձ Քո ծառաների կարգից, այլ արժանացրո՛ւ ինձ՝ Քո մեղաւոր եւ անարժան ծառային, Քեզ մատուցելու այս Ընծաները: Քանզի Դու ես, որ մատուցում ես եւ մատուցում, ընդունում եւ տալիս, Քրիստո՛ս Աստուած մեր. եւ Քեզ՝ անսկիզբ Հօրդ եւ ամենասուրբ ու բարերար Հոգուդ հետ միասին փառք ենք մատուցում այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Այս սարկաւագներից մէկը բարձրացնելով բերում է սրբազան Հացը եւ անմահութեան Բաժակը դէպի սուրբ Սեղանը: Եւ գալով խորանի [հարսաւային] սարիճանի մօտ՝ ահաոր Խորհուրդը վերաբերողն ասում է հանդարտութեամբ.

**Բարձրացրէ՛ք ձեր դռները, իշխաններ՝. թո՛ղ բարձրանան յաւիտեանների դռները, եւ մտնի փառքի Թագաւորը:**

Պարարագիչը ինկարկելով հարցնում է.

**Ո՞վ է փառքի այս Թագաւորը՝ իր զօրութեամբ հզօր Տէրը, պատերազմի մէջ կարող Տէրը:**

Սարկաւագը.

**Բարձրացրէ՛ք ձեր դռները, իշխաններ՝. թո՛ղ բարձրանան յաւիտեանների դռները, եւ մտնի փառքի Թագաւորը:**

Քահանան.

**Ո՞վ է փառքի այս Թագաւորը եւ զօրութիւնների Տէրը:**

Սարկաւագը.

**Սա ինքը փառքի Թագաւորն է:**

Եւ պարարագիչն ահով ու դողով երկրպագում է, [Ընծաները] վերցնում սարկաւագի ձեռքից եւ իսաչակրքում ժողովրդին՝ ասելով.

**Օրհնեալ է Տիրոջ անունով եկողը:**

Դպիրքն.

**Ալէլուիա:**

**Մատուցումն Ընծայից**

Եւ Ընծայքն վերաբերին ի Սեղան: Եւ քահանայն խնկեացէ եւ սպաս լուսացէ զմատուցանս՝ ստելով.

**Լուսացից սրբութեամբ զձեռս իմ եւ շուրջ եղէց զսեղանով Քոով, Տէ՛ր:**

Մարկաւագն.

**Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:**

Դպիրքն.

**Տէ՛ր, ողորմեա՛:**

Մարկաւագն.

Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ Սեղանոյս Աստուծոյ՝ ահիւ: Մի՛ խղճիւ եւ գայթակղութեամբ, մի՛ նենգութեամբ, խորամանկութեամբ, մի՛ պատրանօք եւ խաբէութեամբ, մի՛ երկմտութեամբ եւ մի՛ թերահաւատութեամբ, այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, լի եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան կացցուք յաղօթս առաջի սրբոյ Սեղանոյս Աստուծոյ եւ գտցուք զողորմութեան զշնորհս յաւուր Յայտնութեան եւ ի միւսանգամ Գալստեան Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

**Կեցուցէ եւ ողորմեսցի:**

Դպիրքն.

**Կեցո՛, Տէ՛ր, եւ ողորմեա՛:**

Մինչ նոքա երգեն, քահանայն քազկատարած աղօթեացէ ի ծածով.

Տէ՛ր Աստուած զօրութեանց եւ Արարի՛չ ամենայն լինելութեանց, որ յանէութենէ զբնաւս ի ցուցակութիւն անեալ գոյացուցեր, որ եւ զմերս զհողեղէն բնութիւնս պատուեալ մարգասիրապէս՝ այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս. Դու, Տէ՛ր, Որում պատարագեմք զպատարագիսս, ընկա՛լ առ ի

Դպիրները.

**Ալէէուէիա:**

**Ընծաների մատուցում**

Եւ Ընծաները դրում են Սեղանին: Քահանան խնկարկում է եւ սպաս լուանում մարները՝ ասելով.

**Սրբութեամբ կը լուանամ իմ ձեռքերը եւ կը քայլեմ Քո սեղանի շուրջ, Տէ՛ր:**

Սարկաւագը.

**Դարձեալ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը:**

Դպիրները.

**Տէ՛ր, ողորմի՛ր:**

Սարկաւագը.

**Դարձեալ հաւատքով, սրբութեամբ եւ երկիւղով աղօթքի կանգնենք Աստուծոյ սուրբ Սեղանի առջեւ: Ո՛չ մեղքի խղճմտանքով եւ գայթակղութեամբ, ո՛չ նենգութեամբ, խորամանկութեամբ, ո՛չ կեղծիքով եւ խաբէութեամբ, ո՛չ երկմտութեամբ եւ ո՛չ թերահաւատութեամբ, այլ ուղիղ վարքով, պարզ մտքով, միամիտ սրտով, կատարեալ հաւատքով, սիրով լի, բոլոր բարի գործերով լցուած եւ առատացած՝ աղօթքի կանգնենք Աստուծոյ այս սուրբ Սեղանի առջեւ եւ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի վերստին Գալստեան եւ Յայտնութեան օրը գտնենք ողորմութեան շնորհը:**

**Նա թող կեանք տայ եւ ողորմի:**

Դպիրները.

**Կեանք տուր, Տէ՛ր, եւ ողորմի՛ր:**

Մինչ նրանք երգում են, քահանան քաղկալարարած աղօթում է ծածուկ.

**Տէ՛ր Աստուած զօրութիւնների եւ Արարի՛չ բոլոր արարածների, որ ամէն ինչ անէութիւնից երեւան հանելով գոյացրիր, որ նաեւ մեր հողեղէն բնութիւնը մարդասիրապէս պատուելով՝ այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդի սպասաւոր կարգեցիր. Դու, Տէ՛ր, Որիդ մատուցում ենք այս պատարագը, ընդունի՛ր մեզանից այս**

մէնջ զառաջադրութիւնս զայս եւ աւարտեա՛ զսա ի խորհրդա-  
կանութիւն Մարմնոյ եւ Արեան Միածնի Քոյ, դե՛ղ թողութեան  
մեղաց պարգեւեա ճաշակողացս ՛ զՀացս զայս եւ զԲաժակս:

Քահանայն ի ձայն.

Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի  
Քրիստոսի, ընդ Որում Քեզ Հօր, միանգամայն եւ Հոգւոյդ Արբոյ  
վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւի-  
տեանս յաւիտենից. ամէն:

### Ողջոյն

՛ ինազաղութիւն ամենեցուն:

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագն.

Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպիրքն.

Առաջի Քո, Տէ՛ր:

Սարկաւագն.

Ողջո՛յն տուք միմեանց ի համբոյր սրբութեան:

Եւ որք ոչ էք կարողք հաղորդել աստուածային Խորհրդոյս, առ  
դրունս ելէ՛ք եւ աղօթեցէ՛ք:

Դպիրքն.

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,  
Որ էնն Աստուած՝ աստ բազմեցաւ:

Խաղաղութեան ձայն հնչեցաւ,  
Սուրբ ողջունի հրաման տուաւ:

Եկեղեցիս մի անձն եղեւ,  
Համբոյրս յօդ լրման տուաւ:

առաջադրութիւնը եւ լրումի՛ն հասցրու որպէս խորհուրդ Քո Մի-  
ածնի Մարմնի եւ Արեան՝ մեղքի թողութեան դե՛ղ պարգեւելով  
† այս Հացը եւ Բաժակը ճաշակողներիս:

Քահանան՝ քարձրաձայն.

Մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհով եւ մարդասիր-  
ութեամբ, Ում հետ Քեզ՝ Հօրդ, միեւնոյն ժամանակ եւ Սուրբ  
Հոգւով վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### Ողջոյն

† Խաղաղութիւն բոլորին:

Դպիրները.

Եւ քո հոգուն:

Սարկաւազր.

Երկրպագենք Աստծուն:

Դպիրները.

Քո առջեւ, Տէ՛ր:

Սարկաւազր.

Սրբութեան համբոյրով ողջունէ՛ք միմեանց:

Եւ ձեզանից ովքեր չեն կարող հաղորդուել այս աստուածային  
խորհրդին, թող դուրս ելնեն եւ աղօթեն:

Դպիրները.

Քրիստոսը մեր մէջ յայտնուեց,  
Աստուած, որ էն է, այստեղ բազմեց:

Խաղաղութեան ձայնը հնչեց,  
Սուրբ ողջոյնի հրաման տրուեց:

Եկեղեցին մէկ անձ դարձաւ,  
Համբոյրն այս որպէս լրման կապ տրուեց:



*Թշնամութիւնն հեռացաւ,  
Սէրն յընդհանուրս սփռեցաւ:  
Արդ՝ պաշտօնեա՛յք, բարձեալ զձայն,  
Տո՛ւք օրհնութիւն ի մի բերան  
Միասնական Աստուածութեան,  
Որո՛ւմ սրովբէքն են սրբաբան:*

### ԳՈՀՈՒԹԻՒՆ

#### Նախերգան

*Ոմանք եւ զայս աստն ի հանդիսի փօնի.  
Սարկաւագն.*

*Որք հաւատով կայք յանդիման  
Սուրբ Սեղանոյս արքայական,  
Տեսէ՛ք բազմեալ զՔրիստոս արքայն,  
Եւ շուրջ պատեալ զօրք վերնական:*

*Դպիրքն.*

*Վեր համբառնամք զաչս ունելով  
Եւ պաղատիմք զայս ասելով.  
Զմեղս մեր մի՛ յիշեսցես,  
Այլ գթութեամբ Քո քաւեսցես:  
Ընդ հրեշտակացն օրհնեմք զՔեզ,  
Եւ ընդ սրբոց Քոց, Տէ՛ր, փա՛ռք Քեզ:*

*Եւ սարկաւագն ձայնեսցէ.*

*Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք, եւ նայե-  
ցարո՛ւք զգուշութեամբ:*

*Դպիրքն.*

*Ա. Քեզ, Աստուա՛ծ:*

*Սարկաւագն.*

*Պատարագ Քրիստոս մատչի՛ անարատ Գառն Աստուծոյ:*

*Թշնամութիւնը հեռացաւ,  
Սէրը բոլորի մէջ սփռուեց:  
Պաշտօնեանե՛ր, արդ՝ բարձրաճայն  
Օրհնաբանէ՛ք միաբերան  
Միասնական Աստուածութեանը,  
Որին սերովբէներն են սրբասաց:*

## ԳՈՀՈՒԹԻՒՆ

### Նախերգանք

*Ոմանք նաեւ սա են ասում հանդիսատր րօներին.  
Սարկաւազը.*

*Դուք, որ հաւատքով կանգնած էք դէմ-յանդիման  
Սուրբ Սեղանին արքայական,  
Տեսէ՛ք Քրիստոս Արքային բազմած՝  
Վերին զօրքով շրջապատուած:*

*Դպիրները.*

*Մեր աչքերը բարձրացնելով՝  
Պաղատում ենք՝ սա ասելով.  
Մեր մեղքերը մի՛ յիշիր,  
Այլ գթութեամբ Քո քաւի՛ր:  
Հրեշտակների հետ օրհնում ենք Քեզ,  
Եւ Քո սուրբերի հետ, Տէ՛ր, փա՛ռք Քեզ:*

*Եւ սարկաւազը ձայնում է.*

*Ահով կանգնենք, երկիւղով կանգնենք, բարուք կանգնենք, եւ  
նայէ՛ք զգուշութեամբ:*

*Դպիրները.*

*Դէպի Քեզ, Աստուա՛ծ:*

*Սարկաւազը.*

*Քրիստոսը՝ Աստուծոյ անարատ Գառը, պատարագ է մատուցում:*

Դպիրքն.

*Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:*

Քահանայն դարձցի եւ իսաչակնքեսցէ եւ ասացէ ի ձայն.

*† Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ:*

Դպիրքն.

*Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սարկաւագն.

*Զդրունս, զդրունս:*

*Ամենայն իմաստութեամբ եւ զգուշութեամբ ի վե՛ր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ:*

Դպիրքն.

*Ունիմք առ Քեզ, Տէ՛ր ամենակալ:*

Սարկաւագն.

*Եւ գոհացարո՛ւք զՏեառնէ բոլորով սրտիւ:*

Դպիրքն.

*Արժան եւ իրաւ:*

Իսկ ի հանդիսի ատորս ոմանք զկնի «Արժան եւ իրաւ»-ին ասեն եւ զայս.

Սարկաւագն.

*Եւ զստոյդ փրկութեան, որ միշտ ընդ ամենայն տեղիս, գոհութիւն մատուցանեմք Քեզ, Քրիստո՛ս: Որով եւ զհրաշալի գյարութիւնդ Քո գովեն զօրութիւնք, սարսին սերովբէքն, եւ իշխանութիւնք վերին պետութեանցն պար առեալ քաղցր ձայնիւ եղանակեն եւ ասեն.*

Մինչ նոքա երգեն, քահանայն ձեռնամուծ աղօթեսցէ ի ծածուկ.

*Արժան է ստուգապէս եւ իրաւ՝ ամենայորդոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել զՔեզ, Հա՛յր ամենակալ, որ զանիծիցն բարձեր զկրճիմն Քոյին անգնների եւ արարչակից Բանիւղ,*

Դպիրները.

*Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:*

Քահանան շրջում է եւ խաչակնքելով ասում.

*† Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու շնորհը, սէրը եւ աստուածային սրբարար գօրութիւնը ձեզ բոլորիդ հետ լինեն:*

Դպիրները.

*Ամէն: Նաեւ քո հոգու հետ:*

Սարկաւագը.

*Դռները, դռները:*

*Ամենայն իմաստութեամբ եւ զգուշութեամբ, աստուածային երկիւղով բարձրացրէ՛ք ձեր միտքը:*

Դպիրները.

*Դէպի Քեզ ենք բարձրացնում, Տէ՛ր ամենակալ:*

Սարկաւագը.

*Եւ ամբողջ սրտով գոհացէ՛ք Տիրոջից:*

Դպիրները.

*Վայել է եւ իրաւացի:*

Իսկ հանդիսատր օրերին «Արժան եւ իրաւ»-ից յետոյ ոմնանք ասում են նաեւ սա.

Սարկաւագը.

*Քրիստո՛ս, միշտ եւ ամենուր մատուցում ենք Քեզ ճշմարիտ փրկութեան գոհութիւնը: Որի համար էլ գօրութիւնները գովում են Քո հրաշալի յարութիւնը, սերովբէները սարսում են, եւ վերին պետութիւնների իշխանութիւնները պար բռնած քաղցրաձայն երգում են եւ ասում:*

Մինչ նրանք երգում են, քահանան ձեռնամուտ աղօթում է ծածուկ.

*Ճշմարտապէս վայել է եւ իրաւացի՝ ամենայօժար ջերմեռանդութեամբ միշտ երկրպագելով փառաւորել Քեզ, Հա՛յր ամենակալ, որ Քո անղննելի եւ արարչակից Բանով վերջրբի մեղքի անէձքի*

որ ժողովուրդը *Ինքեան առեալ զեկեղեցի՝ սեպհականեաց զհա-  
լատացեալս ի Քեզ եւ զննելի բնութեամբ ըստ ի Կուսէն տնտե-  
սութեանն՝ հաճեցաւ բնակիլ ի մեզ եւ նորագործ աստուածապէս  
ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար:*

*Վասն զի Որում ոչն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջուկք՝  
զարհուրեալք ի փայլակնացայտ եւ յանմատոյց լուսոյ Աստուա-  
ծութեանդ, եղեալ այգպիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան՝  
չնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս*

*Քահանայն՝ ի ձայն.*

— *Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն միաձայն սրբասացու-  
թեամբ յօրինել նուագս եւ համարձակապէս գոչելով աղաղակել  
ընդ նոսին եւ ասել:*

### Յիշատակն

*Դպիրքն.*

*Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց,*

*Լի են երկինք եւ երկիր փառօք Քո:*

*Օրհնութի՛ւն ի բարձունս:*

*Օրհնեալ, որ եկիր եւ գալոցդ ես անուամբ Տեառն:*

*Ովասննա՛ ի բարձունս:*

*Մինչ նոքա երգեն, քահանայն քազկարարած ասասցէ ի ծածուկ.*

*Սուրբ, սուրբ, սուրբ ես ճշմարտապէս եւ ամենասուրբ. եւ ո՞վ ոք  
պանծացի բովանդակել բանիւ զՔո ի մեզ զանբաւ բարեգորո-  
վութեան զեղմունս. որ եւ անդէն իսկ ի նախնումն զանկեալն ընդ  
մեզօք զանազան եղանակօք խնամեալ սփոփեցեր մարգարէիւք,  
Օրինացն տուչութեամբ, քահանայութեամբ եւ ստուերակերպ  
երնջուցն մատուցմամբ:*

*Իսկ ի վախճան առուրցս այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց  
մերոց խզեալ զդատակնիք՝ հտուր մեզ զՈրդիդ Քո Միածին՝ պար-  
տապան եւ պարտս, զենումն եւ օծեալ, գառն եւ երկնաւոր հաց,  
քահանայապետ եւ պատարագ, վասն զի Ինքդ է բաշխող եւ նոյն  
Ինքդ բաշխի ի միջի մերում միշտ անծախապէս:*

արգելքը, որ իր համար ժողովուրդը ընտրելով Եկեղեցին՝ իրենը դարձրեց Քեզ հաւատացողներին, գննելի բնութեամբ մարմնանալով սբ Կոյսից՝ Հաճեց բնակուել մեր մէջ եւ աստուածապէս նորագործ ճարտարապետելով՝ երկիրը երկինք դարձրեց:

Քանզի Նա, Ում առջեւ չէին կարող կանգնել զուարթունների հոյլերը՝ զարհուրելով Աստուածութեան փայլակնացայտ եւ անմատոյց լոյսից, եղաւ մարդ մեր փրկութեան համար եւ շնորհեց մեզ հոգեղէն պարեր պարել երկնայինների հետ

Քստիանան՝ քարձրաձայն.

— Եւ սերովբէների ու քերովբէների հետ միաձայն սրբասացութեամբ յօրինել այս երգը եւ համարձակապէս գոչելով աղաղակել նրանց հետ եւ ասել:

### Յիշատակ

Դպիրները.

Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութիւնների,

Երկինքը եւ երկիրը լի են Քո փառքով:

Օրհնութի՛ւն բարձունքներում:

Օրհնեալ ես, որ եկար եւ դալու ես Տիրոջ անունով:

Ովսաննա՛ բարձունքներում:

Մինչ նրանք երգում են, քստիանան քաղկայարած ասում է ծածուկ.

Սուրբ, սուրբ, սուրբ ես ճշմարտապէս եւ ամենասուրբ. եւ ո՞վ կարող է պարծենալ, թէ կարող է խօսքով բովանդակել Քո անբաւ բարեգործութեան գեղումները մեր հանդէպ. որ սկզբից իսկ մեղքի մէջ ընկած մարդուն զանազան կերպերով խնամեցիր եւ սփոփեցիր մարգարէներով, Օրէնքի տւելութեամբ, քահանայութեամբ եւ երինջների ստուերակերպ՝ մատուցմամբ:

Իսկ երբ լրացան այդ օրերը, պատուելով մեր բոլոր պարտքերի դատավճիռը՝ մեզ տուեցիր Քո Միածին Որդուն՝ որպէս պարտապան եւ պարտք, որպէս զոհ եւ օծեալ, որպէս գառ եւ երկնաւոր հաց, որպէս քահանայապետ եւ պատարագ, քանզի ինքն է բաշխողը եւ ինքն է միշտ անսպառաբար բաշխւում մեր մէջ:

Վասն զի եղեալ հաւաստեալ եւ առանց ցնորից մարդ, եւ անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յԱստուածածնէն եւ ի սուրբ Կոստէն Մարիամայ՝ ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց, եւ յաշխարհակեցոյցն եւ յառիթն փրկութեան մերոյ եկեալ կամաւ ի խաչ:

Առեալ զհացն ի սուրբ, յաստուածային, յանմահ, յանարատ եւ յարարչագործ ի ձեռս Իւր՝ † օրհնեաց, զոհացաւ, եբեկ եւ ետ Իւրոց ընտրեալ, սուրբ եւ բազմեալ աշակերտացն՝ ասելով.

Քահանայն ի ձայն.

— Առէ՛ք, կերէ՛ք. այս է Մարմին Իմ, որ վասն ձեր եւ բազմաց բաշխի՛ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Դպիրքն.

Ամէն:

Ի ծածուկ.

— Նոյնպէս եւ զբաժակն առեալ † օրհնեաց, զոհացաւ, էարբ եւ ետ Իւրոց ընտրեալ, սուրբ եւ բազմեալ աշակերտացն՝ ասելով.

Քահանայն ի ձայն.

— Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան. այս է Արիւն Իմ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր եւ բազմաց հեղանի՛ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Դպիրքն.

Ամէն: Հա՛յր երկնաւոր, որ զՈրդիդ Քո ետուր ի մահ վասն մեր պարտապան պարտեաց մերոց, հեղմամբ արեան Նորա, աղաչեմք զՔեզ, ողորմեա՛ Քո բանաւոր հօտի:

Ի ծածուկ.

— Եւ զսոյն միշտ Իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար Որդիդ Քո Միածին:

Եւ իջեալ ի ստորին վայրս մահու մարմնովն, զոր ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ, եւ զնիգս դժոխոց աղարտեալ հզօրապէս՝

Քանզի ճշմարտապէս եւ ոչ երեւութապէս մարդ դառնալով եւ անշփոթ միաւորութեամբ մարմնանալով սուրբ Կոյս Մարիամ Աստուածածնից՝ առանց մեղքի անցաւ մարդկային կեանքի բոլոր կրքերի միջով եւ կամովին եկաւ մատնուելու աշխարհակեցոյց եւ փրկաւէտ խաչին:

Առնելով հացն իր սուրբ, աստուածային, անմահ, անարատ եւ արարչագործ ձեռքը՝ † օրհնեց, գոհացաւ, բեկանեց եւ տուեց իր բազմած, ընտրեալ եւ սուրբ աշակերտներին՝ ասելով.

Քահանան՝ քարձրաձայն.

— Առէ՛ք, կերէ՛ք. սա իմ Մարմինն է, որ բաշխուում է ձեզ եւ շատերի համար՝ ի քաւութիւն եւ թողութիւն մեղքերի:

Դպիրները.

Ամէն:

Ծածուկ.

— Նոյնպէս եւ բաժակն առնելով † օրհնեց, գոհացաւ, խմեց եւ տուեց իր բազմած, ընտրեալ եւ սուրբ աշակերտներին՝ ասելով.

Քահանան՝ քարձրաձայն.

— Խմէ՛ք սրանից բոլորդ. սա նոր ուխտի իմ Արիւնն է, որ հեղուում է ձեզ եւ շատերի համար՝ ի քաւութիւն եւ թողութիւն մեղքերի:

Դպիրները.

Ամէն: Հա՛յր երկնաւոր, որ Քո Որդուն մահուան մատնեցիր՝ որպէս պարտապան մեր պարտքերի, աղաչում ենք Քեզ, Նրա արեան հեղմամբ ողորմի՛ր Քո բանական հօտին:

Ծածուկ.

— Եւ Քո բարերար Միածին Որդին որպէս պատուիրան ականդեց մեզ միշտ սա անել իր յիշատակի համար:

Եւ մեր բնութիւնից վերցրած մարմնով իջնելով մահուան ստորին վայրը եւ դժոխքի դռների փականները հզօրապէս խորտակելով՝



*զՔեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ Աստուած՝ զԱստուածդ կենդանեաց եւ մեռելոց:*

Եւ անոս զԸնծայսն ի ձեռսն եւ ասացէ ի ծածուկ.

*Եւ արդ մեք, Տէ՛ր, ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական Մարմնոյ եւ Արեան Միածնի Քոյ, յիշեմք զԴորա որ վասն մեր զփրկագործ չարչարանսն, զկենսատու խաչելութիւնն, զերեքօրեայ թաղումնն, զերանելի յարութիւնն, զաստուածապէս համբարձումնն, զնստիլն ընդ աջմէ Քո, Հա՛յր, զահաւոր եւ զփառաւորեալ զմիւսանդամ գալուստն խոստովանիմք եւ օրհնեմք:*

Եւ քահանայն զԸնծայսն ասկա ինչ բարձրացուցեալ՝ մայրուցէ առ Հայր եւ ասալ դիցէ ի վերայ սրբոյ Սեղանոյն՝ ասելով ի ձայն.

— *Եւ զՔոյս ի Քոյոց Քեզ մատուցանեմք ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:*

Դպիրքն.

*Յամենայնի օրհնեալ ես, Տէ՛ր.  
Օրհնեմք զՔեզ, գովեմք զՔեզ.  
Գոհանամք զՔէն.  
Աղաչեմք զՔեզ, Տէ՛ր Աստուած մեր:*

Մինչ նորա երգեն, քահանայն բազկաբարձ ասացէ ի ծածուկ.

*ՉՔեզ արդարեւ, Տէ՛ր Աստուած մեր, գովեմք եւ զՔէն գոհանամք Հանապազ, որ զանց արարեալ զմերով անարժանութեամբս՝ այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Ո՛չ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ թափուր եմք եւ միշտ ունայն գտանիմք Հանապազ, այլ ի Քո բազմազեղ ներողութիւնդ ցանդ ապաւինեալ՝ Համարձակիմք մերձեանալ ի սպասաւորութիւն Մարմնոյ եւ Արեան Միածնի Քոյ՝ Տեսաւն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, Որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Քահանայն ի ձայն.

† *Խաղաղութիւն ամենեցուն:*

*միայն Քեզ յայտնեց մեզ որպէս ճշմարիտ Աստուած՝ Աստուած ողջերի եւ մեռեալներին:*

Եւ ձեռքն անելով Ընծաները՝ ծածուկ ասում է.

*Եւ արդ մենք, Տէ՛ր, ըստ այդ պատուիրանի առաջ բերելով Քո Միածնի Մարմնի եւ Արեան այս փրկական խորհուրդը՝ յիշում ենք մեզ համար եղած Նրա փրկագործ չարչարանքները, կենսատու խաչելութիւնը, երեքօրեայ թաղումը, երանելի յարութիւնը, աստուածապէս համբարձումը, նստելը Քո աջ կողմում, Հա՛յր, եւ Նրա ահաւոր ու փառաւորեալ վերստին Գալուստը խոստովանում եւ օրհնում ենք:*

Եւ քահանան, Ընծաները փոքր-ինչ քարձրացնելով, մատուցում է Հօրը եւ ապա դնում սուրբ Սեղանի վրայ՝ քարձրաձայն ասելով.

— *Եւ Քոնից Քոնը Քեզ ենք մատուցում ըստ ամենայնի եւ բոլորի համար:*

Դպիրները.

*Ամէն ինչում օրհնեալ ես, Տէ՛ր.  
Օրհնում ենք Քեզ, գովում ենք Քեզ.  
Գոհանում ենք Քեզանից.  
Աղաչում ենք Քեզ, Տէ՛ր Աստուած մեր:*

Մինչ նրանք երգում են, քահանան քաղկապարած ասում է ծածուկ.

*Տէ՛ր Աստուած մեր, Քեզ արդարեւ գովում ենք եւ Քեզանից գոհանում հանապազ, որ մեր անարժանութիւնն անտեսելով՝ այսպիսի ահաւոր եւ անպատում խորհուրդի սպասաւոր կարգեցիր մեզ: Ո՛չ մեր բարեգործութիւնների համար, որոնցից յոյժ թափուր ենք եւ դատարկ միշտ, այլ Քո բազմազեղ ներողութեանդ միշտ ապաւինելով՝ համարձակում ենք մերձենալ Քո Միածնի՝ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Մարմնի եւ Արեան սպասաւորութեանը, Ում վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Քահանան՝ քարձրաձայն.

† *Խաղաղութիւն բոլորին:*

Դպիրքն.

*Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սարկաւագն.

*Աստուծոյ երկրպագեսցուք:*

Դպիրքն.

*Առաջի Քո, Տէ՛ր: Որդի՛ Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտուիթիւն՝ հաց կենաց բաշխիս ի մեզ, հեղմամբ արեան Քո սուրբ, աղաչեմք գՔեզ, ողորմեա՛ արեամբ Քով փրկեալ հօտի:*

**Վերակոչումն**

Մինչ նոքա երգեն, քահանայն խոնարհեալ երկիրպագցէ Սեղանոյն եւ ասացէ.

*Երկրպագանեմք եւ աղաչեմք եւ խնդրեմք ի Քէն, բարերա՛ր Աստուած, առաքեա՛ ի մեզ եւ յառաջի եդեալ Ընծայս այս զմշտնջենաւորակից Քո եւ զէակից Սուրբ Հոգիդ:*

Եւ կացեալ սարկաւագն ստընթեր քահանային երկիւղիս եւ դողութեամբ մեծա՛ւ ասացէ ի ցած.

*Ամէն: Օրհնեա՛, տէ՛ր:*

Եւ քահանայն խաչակնքեացէ զԸնծայսն՝ ասելով ի ծածուկ.

*Որով զհացս ՚՛ օրհնեալ՝ Մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:*

Երիցս կրկնեացէ:

*Եւ զբաժակս ՚՛ օրհնեալ՝ Արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:*

Երիցս կրկնեացէ:

*Որով զհացս եւ զգինիս ՚՛ օրհնեալ՝ Մարմին եւ Արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ փոխարկելով Հոգւովդ Քով Սրբով:*

Դպիրները.

**Եւ քո հոգուն:**

Սարկաւագը.

**Երկրպագենք Աստծուն:**

Դպիրները.

**Քո առջեւ, Տէ՛ր: Որդի՛ Աստուծոյ, որ պատարագւում ես Հօրը [մեզ հետ] հաշտեցնելու համար եւ որպէս կեանքի հաց բաշխուած մեր մէջ, Քո սուրբ արեան հեղմամբ, աղաչում ենք Քեզ, ողորմի՛ր Քո արեամբ փրկուած հօտին:**

**Վերակոչում**

Մինչ նրանք երգում են, քահանան խոնարհուելով երկրպագում է Սեղաւին եւ ասում.

**Երկրպագում, աղաչում եւ խնդրում ենք Քեզանից, բարերա՛ր Աստուած, առաքի՛ր մեզ եւ այս առաջադրուած Ընծաների վրայ Քո մշտնջենաւորակից եւ էակից Սուրբ Հոգուն:**

Եւ սարկաւագը, մեծ երկիւղով ու դողով կանգնելով քահանայի կողքին, ցածրաձայն ասում է.

**Ամէն: Օրհնի՛ր, տէ՛ր:**

Եւ քահանան, Ընծաները խաչակնքելով, ասում է ծածուկ.

**Որով ՛ որհնելով այս հացը՝ ճշմարտապէս դարձրու մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Մարմինը:**

Երեք անգամ կրկնում է:

**Եւ ՛ որհնելով այս բաժակը՝ ստուգապէս դարձրու մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Արիւնը:**

Երեք անգամ կրկնում է:

**Որով ՛ որհնելով այս հացը եւ գինին՝ ճշմարտապէս դարձրու մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը:**

Երիցս կրկնեաց:

Ապա քահանայն ասացէ ի ձայն.

*Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:*

Դպիրքն.

*Հոգի՛ Աստուծոյ, որ զՓառակցի Քո զխորհուրդ իջեալ ի յերկնից կատարես ի ձեռն մեր, հեղմամբ արեան Սորա, աղաչեմք զՔեզ, հանգո՛ զհոգիս մեր ննջեցելոցն:*

### Յիշատակութիւնք

Եւ քահանայն այսուիտարեւ ոչ բարձրագոյն քան զԸնծայսն զձեռնս իւր փարսածեալ, այլ խոնարհագոյն, եւ զասն ի նոյն յառեալ՝ աղօթեաց ի ծածուկ.

*[ա] Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ Եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւազաց, թագաւորաց, աշխարհի իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց, կապելոց, վտանգելոց, աշխատելոց եւ որք ի պատերազմունս բարբարոսաց:*

*Սովաւ եւ օդոց շնորհեա զբարեխառնութիւն եւ անդոց զպտղաբերութիւն եւ ախտացելոց ի պէսպէս ցաւս փութապէս զառողջութիւն:*

*Սովաւ հանգո՛ զամենեսեան յառաջագոյն ի Քրիստոս ննջեցեալսն՝ զնախահարս, զհայրապետս, զմարգարէս, զառաքեալս, զվկայեալս, զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկաւագունս եւ զբնաւ ուխտ Եկեղեցւոյ Քոյ սրբոյ, եւ զամենեսեան յաշխարհական կարգէ՝ զարս եւ զկանայս զհաւատով վախճանեալս:*

Քահանայն ի ձայն.

— Ընդ որս եւ մե՛զ այց արասցես, բարերա՛ր Աստուած, աղաչե՛մք:

Երեք անգամ կրկնում է:

Ապա քահանան քարձրածայն ասում է.

*Որպէսզի սա լինի բոլոր մերձեցողներին սնդատապարտութեան, մեղքերի քաւութեան եւ թողութեան համար:*

Դպիրները.

*Հոգի՛ Աստուծոյ, որ երկնքից իջնելով՝ մեր միջոցով կատարում ես Փառակցիդ խորհուրդը, Նրա արեան հեղմամբ, աղաչում ենք Քեզ, հանգի՛ստ տուր մեր ննջեցեալների հոգիներին:*

### Յիշատակութիւններ

Եւ քահանան, այսուհետեւ ձեռքերը չփարսածելով Ընծաներից քարձր, այլ ատելի ցածր [պահելով] եւ աչքերը յստելով Ընծաներին, ծածուկ աղօթում է.

*[ա] Սրանով շնորհիր սէր, հաստատութիւն եւ ըզձալի խաղաղութիւն ողջ աշխարհին, սուրբ Եկեղեցուն եւ բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, քահանաներին, սարկաւազներին, թագաւորներին, աշխարհի իշխաններին, ժողովուրդներին, ճանապարհորդներին, նաւորդներին, բանտարկուածներին, վտանգուածներին, յոգնածներին եւ բարբարոսների դէմ պատերազմի մէջ եղողներին:*

*Սրանով նաեւ բարեխառնութիւն շնորհիր օգին, պողաբերութիւն՝ դաշտերին եւ շուտափոյթ առողջութիւն՝ պէսպէս ցաւերով հիւանդացածներին:*

*Սրանով հանգի՛ստ պարգեւիր ի Քրիստոս նախկին ննջեցեալներին՝ նախահայրերին, հայրապետներին, մարգարէներին, առաքեալներին, նահատակներին, եպիսկոպոսներին, քահանաներին, սարկաւազներին եւ Քո սուրբ Եկեղեցու ողջ ուխտին, ինչպէս նաեւ աշխարհական դասից հաւատքով ննջած բոլոր այրերին եւ կանանց:*

Քահանան՝ քարձրածայն.

— *Որոնց հետ եւ մե՛զ այցելիր, բարերա՛ր Աստուած, աղաչո՛ւմ ենք:*

Դպիրքն.

*Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Քահանայն.

*Աստուածածնին սրբոյ Կուսին Մարիամու եւ Յովհաննու Մկրտ-  
չին, Ստեփանոսի Նախավկային եւ ամենայն սրբոց եղիցի յիշա-  
տակ ի սուրբ պատարագս, աղաչե՛մք:*

Դպիրքն.

*Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Սարկաւագն յաջակողմն Սեղանոյն ձեռնամաճ ասասցէ.

*Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց եւ  
ամենայն Հայրապետաց սրբոց, առաքելագործ եպիսկոպոսաց,  
երիցանց, ուղղափառ սարկաւագաց եւ ամենայն սրբոց եղիցի  
յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչե՛մք:*

Դպիրքն.

*Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Ի Յարութեան կիրակէս զա՛յս ասս.

Սարկաւագն.

*Օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ, հրաշալի եւ աստուածազարդ  
յարութեանն Քրիստոսի երկիրպագանեմք:*

Դպիրքն.

*Փա՛ռք յարութեան Քո, Տէ՛ր:*

Ի րօնի սրբոցն զա՛յս ասս.

Սարկաւագն.

*Սուրբ եւ աստուածահաճոյ մարգարէին (Հայրապետին, առա-  
քելոյն, մարտիրոսին) (այս անունն), որոյ այսօր գյիշատակն  
կատարեցաք, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղա-  
չե՛մք:*

Դպիրները.

*Յիշի՛ր, Տէր, եւ ողորմի՛ր:*

Քահանան.

*Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածնի, Յովհաննէս Մկրտչի, Ստեփանոս Նախավկայի եւ բոլոր սուրբերի յիշատակութիւնը թող լինի այս սուրբ պատարագով, աղաչո՛ւմ ենք:*

Դպիրները.

*Յիշի՛ր, Տէր, եւ ողորմի՛ր:*

Սարկաւազր, Սեղանի աջ կողմում [կանգնելով], ձեռնամաճ ասում է.

*Սուրբ առաքեալների, մարգարէների, վարդապետների, մարտիրոսների, բոլոր սուրբ Հայրապետերի, առաքելագործ եպիսկոպոսների, քահանաների, ուղղափառ սարկաւագների եւ բոլոր սուրբերի յիշատակութիւնը թող լինի այս սուրբ պատարագով, աղաչո՛ւմ ենք:*

Դպիրները.

*Յիշի՛ր, Տէր, եւ ողորմի՛ր:*

Յարութեան կիրակիներին սա՛ սաս.

Սարկաւազր.

*Երկրպագում ենք Քրիստոսի օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ, Հրաշալի եւ աստուածազարդ յարութեանը:*

Դպիրները.

*Փա՛ռք Քո յարութեանը, Տէ՛ր:*

Սուրբերի փօներին սա՛ սաս.

Սարկաւազր.

*Սուրբ եւ աստուածահաճոյ (այսինչ անուն) մարգարէի (Հայրապետի, առաքեալի, մարտիրոսի), որի տօնն այսօր կատարեցինք, յիշատակութիւնը թող լինի այս սուրբ պատարագով, աղաչո՛ւմ ենք:*



Դպիրքն.

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:

— Առաջնորդացն մերոց եւ առաջին լուսաւորչացն՝ սրբոցն Թադէոսի եւ Բարթողոմէոսի առաքելոցն եւ Գրիգորի Լուսաւորչին, Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսիսի, Սահակայ, Դանիէլի եւ Խաղայ, Մեսրոպայ վարդապետին եւ Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսիսի Կլայեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն, եւ Գրիգորի եւ Մովսիսի Տաթեւացեացն եւ սրբոց Գրիգորիսեանց եւ Ներսիսեանց, Հովուաց եւ Հովուապետացն Հայաստանեայց եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչե՛մք:

Դպիրքն.

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:

— Միանձնացելոց սրբոց, առաքինասէր եւ աստուածոսոյց կրօնաւորացն՝ Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, Ոնոփրիոսի, արքայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսէնի, Եւագրի, Պարսամայ, Յովհաննիսեանց եւ Սիմէոնեանց, սրբոց Ոսկեանց եւ Սուքիասանց եւ ամենայն սրբոց Հարց եւ աշակերտելոց նոցին ընդ տիեզերս, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչե՛մք:

Դպիրքն.

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:

— Թագաւորաց Հաւատացելոց՝ սրբոց Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ եւ Թէոդոսի եւ ամենայն սուրբ եւ բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչե՛մք:

Դպիրքն.

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:

— Ընդհանուր ամենայն Հաւատացելոց՝ արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց եւ ամենայն չափու Հասակի Հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոցն եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչե՛մք:

Դպիրները.

Յիշի՛ր, Տէր, եւ ողորմի՛ր:

— Մեր առաջնորդների եւ առաջին լուսաւորիչների՝ սուրբ Թադէոս եւ Բարթողոմէոս առաքեալների եւ Գրիգոր Լուսաւորչի, Արիստակէսի, Վրթանէսի, Յուսիկի, Գրիգորիսի, Ներսէսի, Սահակի, Դանիէլի եւ Խազի, Մեսրոպ վարդապետի, Գրիգոր Նարեկացու, Ներսէս Կլայեցու, Յովհան Որոտնեցու, Գրիգոր եւ Մովսէս Տաթեւացիների, սուրբ Գրիգորիսների<sup>3</sup> եւ Ներսիսեանց<sup>4</sup>, Հայաստանի հովիւների եւ հովուապետերի յիշատակութիւնը թող լինի այս սուրբ պատարագով, աղաչո՛ւմ ենք:

Դպիրները.

Յիշի՛ր, Տէր, եւ ողորմի՛ր:

— Սուրբ միայնակեացների, առաքինասէր եւ աստուածուսոյց կրօնաւորների՝ Պօղոսի, Անտոնի, Պօղի, Մակարի, Ոնոփրիոսի, արքայ Մարկոսի, Արապիոնի, Նեղոսի, Արսէնի, Եւազրի, Պարսամի, Յովհաննէսների եւ Սիմէոնների, սուրբ Ոսկեանց եւ Սուքիասանց, բոլոր սուրբ հայրերի եւ աշխարհով մէկ սփռուած նրանց աշակերտների յիշատակութիւնը թող լինի այս սուրբ պատարագով, աղաչո՛ւմ ենք:

Դպիրները.

Յիշի՛ր, Տէր, եւ ողորմի՛ր:

— Հաւատացեալ թագաւորների՝ սուրբ Աբգարի, Կոստանդիանոսի, Տրդատի, Թէոդոսի, բոլոր սուրբ ու բարեպաշտ թագաւորների եւ աստուածասէր իշխանների յիշատակութիւնը թող լինի այս սուրբ պատարագով, աղաչո՛ւմ ենք:

Դպիրները.

Յիշի՛ր, Տէր, եւ ողորմի՛ր:

— Ընդհանրապէս բոլոր հաւատացեալներին՝ այրերի եւ կանանց, ծերերի եւ մանուկների, ամէն տարիքի՝ հաւատքով եւ սրբութեամբ ի Քրիստոս ննջածների յիշատակութիւնը թող լինի այս սուրբ պատարագով, աղաչու՛մ ենք:

Դպիրքն.

*Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Եւ մինչ նոքա երգեն զքարոզս, քահանայն սասացէ զաղօթս ի ծածուկ, զի ի միասին սարարեսցին:

*[բ] Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛ եւ օրհնեա՛ զսուրբ կաթողիկէ եւ զառաքելական Եկեղեցի Քո, զոր փրկեցեր պատուական արեամբ Միածնի Քոյ եւ ազատեցեր խաչիւն սրբով: Շնորհեա՛ սմա գանձարժ զխաղաղութիւն:*

*Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛ եւ օրհնեա՛ զամենայն ուղղափառ եպիսկոպոսոսնս, որք ուղիղ վարդապետութեամբ Համառօտեն ի մեզ զբանն ճմարտութեան:*

Քահանայն ի ձայն.

— Եւս առաւել զեպիսկոպոսապետն մեր եւ զպատուական Հայրապետն ամենայն Հայոց զտէր տէր (այս անուն) սրբազնագոյն կաթողիկոսն շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ:

Եւ դարձեալ սարկաւագն գայ ի տեղի իւր՝ ի ձախակողմն Սեղանոյն, եւ քարոզեսցէ քարձր.

*Գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք Քեզ, Տէ՛ր Աստուած մեր, վասն սուրբ եւ անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ Սեղանոյս, զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեսցես:*

*Սովաւ շնորհեա՛ զսէր, զհաստատութիւն եւ զըզձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ Եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, եպիսկոպոսապետին մերոյ եւ պատուական Հայրապետին ամենայն Հայոց տեառն տեառն (այս անուն) սրբազնագոյն կաթողիկոսին եւ վիճակիս բարեխնամ առաջնորդին տեառն (այս անուն) սրբագան (արք)եպիսկոպոսին եւ քահանայիս, որ զպատարագս մատուցանէ:*

*Եւ վասն զօրութեանց եւ յաղթութեանց թագաւորաց քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշտից աղաչեսցուք:*

Դպիրները.

*Յիշի՛ր, Տէր, եւ ողորմի՛ր:*

Եւ մինչ նրանք երգում են քարոզը, քահանայն ծածուկ ասում է այս աղօթքը, որպէսզի միասին աւարտունն.

[բ] *Յիշի՛ր, Տէր, ողորմի՛ր եւ օրհնի՛ր Քո ընդհանրական եւ առաքելական սուրբ Եկեղեցին, որը վրկեցիր Քո Միածնի պատուական արեամբ եւ ազատեցիր սուրբ խաչով: Շնորհի՛ր սրան անսասան խաղաղութիւն:*

*Յիշի՛ր, Տէր, ողորմի՛ր եւ օրհնի՛ր բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, որոնք ուղիղ վարդապետութեամբ ուսուցանում են մեզ ճշմարիտ խօսքը:*

Քահանայն քարձրածայն.

— *Առաւել եւս մեր եպիսկոպոսապետին եւ պատուական Հայրապետին՝ Ամենայն Հայոց տէր տէր (այսինչ անուն) սրբազնագոյն կաթողիկոսին երկար օրեր շնորհի՛ր մեզ ուղիղ վարդապետութեամբ:*

Եւ սարկաւազը, վերադառնալով իր տեղը՝ Սեղանի ձախ կողմը, քարձրածայն քարոզում է.

*Գոհութիւն եւ փառաբանութիւն ենք մատուցում Քեզ, Տէ՛ր Աստուած մեր, այս սուրբ եւ անմահ պատարագի Համար, որ սուրբ Սեղանի վրայ է, որպէսզի սա պարգեւես կեանքի սրբութեան Համար:*

*Սրանով շնորհի՛ր սէր, Հաստատութիւն եւ ըղձալի խաղաղութիւն ողջ աշխարհին, սուրբ Եկեղեցուն եւ բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, մեր եպիսկոպոսապետին եւ Ամենայն Հայոց պատուական Հայրապետին՝ տէր տէր (այսինչ անուն) սրբազնագոյն կաթողիկոսին, այս թեմի բարեխնամ առաջնորդին՝ տէր (այսինչ անուն) սրբազան (արք)եպիսկոպոսին, եւ քահանային, որ մատուցում է այս պատարագը:*

*Աղաչենք քրիստոնեայ թագաւորների եւ բարեպաշտ իշխանների զօրութեան եւ յաղթանակների Համար:*

Եւ խնդրեսցուք եւ վասն հոգւոցն հանգուցելոց, եւս առաւել՝ վասն հանգուցեալ բաբունապետացն մերոց եւ շինողաց սրբոյ եկեղեցւոյս եւ որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ:

Ազատութիւն՝ եղբարց մերոց գերելոց, եւ շնորհ՝ առաջիկայ ժողովրդեանս, հանգիստ՝ հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն:

Եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչե՛մք:

Դպիրքն.

Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Մինչ նոքա քարոզես, քահանայն սասուցէ զաղօթս ի ծածուկ.

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛ եւ ՚ օրհնեա՛ գՔո առաջի կացեալ ժողովուրդս եւ զպատարագիս մատուցողս եւ պարգեւեա՛ սոցա զպիտոյսն եւ զօգտակարսն: Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛ եւ օրհնեա՛ զուխտաւորս եւ զպտղաբերիչս Եկեղեցւոյ Քոլմ սրբոյ եւ որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ, եւ հատո՛ նոցա զպարտս նոցա ըստ ընդաբոյս առատութեան Քոլմ հարիւրապատիկ աստ եւ ի հանդերձելումդ:

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛ եւ գթա՛ ի հոգիս հանգուցելոցն. հանգո՛ զնոսս եւ լուսաւորեա՛ եւ դասաւորեա՛ ընդ սուրբս Քո յարքա-յութեանդ երկնից եւ արժանի՛ արա ողորմութեան Քոլմ:

Յիշեա՛, Տէր, եւ զհոգի ծառայիս Քոյ (այս անուն) եւ ողորմեա՛ նմա ըստ մեծի ողորմութեան Քոլմ եւ հանգո՛ այցելութեամբ ի լոյս երեսոց Քոց:

Եւ եթէ կենդանի է.

Փրկեա՛ զնա յամենայն որոգայթից հոգւոյ եւ մարմնոյ:

Յիշեա՛, Տէր, եւ զայնոսիկ, որք յանձնեցին մեզ յիշատակել յաղթս զկենդանիս եւ զհանգուցեալս, եւ կառավարեա՛ զկամս հայցմանց նոցա եւ զմերս ընդ ուղղորդն եւ որ լին է փրկութեամբ. եւ վարձատրեա՛ բոլորեցունց զանանց եւ զերանելի բարութիւնսդ:

Նաեւ խնդրենք Հանգուցեալ Հոգիների Համար, առաւել եւս՝ մեր Հանգուցեալ բաբունապետերի, այս սուրբ եկեղեցին շինողների եւ նրանց Համար, ովքեր այս եկեղեցու Հովանու տակ են Հանգչում:

[Խնդրում ենք նաեւ] ազատութիւն մեր գերուած եղբայրներին, շնորհ՝ ներկայ ժողովրդին եւ Հանգիստ՝ Հաւատքով եւ սրբութեամբ ի Քրիստոս ննջածներին:

[Նրանց] յիշատակութիւնը թող լինի այս սուրբ պատարագով, աղաչո՛ւմ ենք:

Դպիրները.

Ըստ ամենայնի եւ բոլորի Համար:

Մինչ նրանք երգում են, քահանայն ծածուկ ասում է այս աղօթքը.

Յիշի՛ր, Տէր, ողորմի՛ր եւ † օրհնի՛ր Քո առջեւ կանգնած այս ժողովրդին ու այս պատարագի [Հացն ու գինին] նուիրաբերողներին եւ պարգեւի՛ր բոլորին պիտանին ու օգտակարը: Յիշի՛ր, Տէր, ողորմի՛ր եւ օրհնի՛ր ուխտաւորներին, Քո սուրբ եկեղեցու նուիրատուներին եւ նրանց, ովքեր ողորմածութեամբ յիշում են աղքատներին, եւ ըստ Քո բնական առատաձեռնութեան Հարիւրապատիկ Հատուցի՛ր նրանց պարտքերը այս կեանքում եւ Հանգերձեալում:

Յիշի՛ր, Տէր, ողորմի՛ր եւ գթա՛ Հանգուցեալների Հոգիներին. Հանգի՛ստ տուր նրանց, լուսաւորի՛ր, սուրբերի հետ դասի՛ր երկնքի արքայութեանդ մէջ եւ արժանացրո՛ւ Քո ողորմութեանը:

Յիշի՛ր, Տէր, նաեւ Քո (այսինչ անուն) ծառայի Հոգին, ողորմի՛ր նրան ըստ Քո մեծ ողորմութեան եւ [Քո] այցելութեամբ Հանգի՛ստ տուր նրան Քո երեսի լոյսով:

Իսկ եթէ ողջ է.

Փրկի՛ր նրան Հոգու եւ մարմնի բոլոր որոգայթներէց:

Յիշի՛ր, Տէր, եւ նրանց, ովքեր խնդրեցին մեզ աղօթքների մէջ յիշել ողջերին ու ննջեցեալներին, առաջնորդի՛ր նրանց եւ մեր խնդրանքների ցանկութիւնը ուղիղ եւ փրկաւէտ [ճանապարհով]. եւ բոլորին վարձատրի՛ր Քո անանց եւ երանելի բարիքներով:

Եւ գտեալ զխորհուրդս մեր՝ տաճարացո՛՛ր յընդունակութիւն Մարմնոյ եւ Արեան Միածնի Քոյ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ Որում Քեզ Հօր ամենակալի, հանդերձ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւովդ, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանայն դարձցի եւ խաչակնքեսցէ եւ ասասցէ ի ձայն.

† Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ Փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեսեան:

Դպիրքն.

Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:

### Աղօթք տէրունական

Սարկաւագն.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛:

— Ամենայն սրբովք, զորս յիշատակեցաք, եւս առաւելապէս զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛:

— Վասն մատուցեալ սուրբ եւ աստուածային անմահ պատարագիս, որ ի վերայ սրբոյ Սեղանոյս, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն.

Տէ՛ր, ողորմեա՛:

— Որպէս զի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա ի սուրբ, յերկնային եւ յիմանալի Իւր մատուցարանն, զփոխանակն

Եւ զտելով մեր խորհուրդները՝ տաճարացրո՛ւ [մեզ]՝ ընդունելու Քո Միածնի՝ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը, Ում հետ Քեզ, ամենակա՛լ Հայր, կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգովդ հանդերձ վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանան շրջում է, խաչակնքում եւ բարձրաձայն ասում.

† Եւ մեր մեծ Աստուծոյ եւ Փրկիչ՝ Յիսուս Քրիստոսի ողորմութիւնը լինի ձեզ բոլորիդ հետ:

Դպիրները.

Ամէն: Եւ քո հոգու հետ:

### Տէրունական աղօթք

Սարկաւազը.

Դարձեալ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը:

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր:

— Առաւել եւս մեր յիշատակած բոլոր սուրբերով աղաչենք Տիրոջը:

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր:

— Սուրբ Սեղանի վրայ մատուցուող այս սուրբ եւ աստուածային անմահ պատարագով աղաչենք Տիրոջը:

Դպիրները.

Տէ՛ր, ողորմի՛ր:

— Որպէսզի մեր Տէր Աստուած, որ ընդունեց այս պատարագն իր սուրբ, երկնային եւ իմանալի մատուցարանի վրայ, փոխարէնն



*առաքեսցէ առ մեզ գշորհս եւ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ, զՏէր աղաչեսցուք:*

Դպիրքն.

*Տէ՛ր, ողորմեա՛:*

— *Ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛ եւ պահեա՛ զմեզ, Տէ՛ր, Քոյին շնորհիւդ:*

Դպիրքն.

*Տէ՛ր, ողորմեա՛:*

— *Ձամենասրբուհի զԱստուածածինն զմիշտ Կոյսն Մարիամ Հանդերձ ամենայն սրբովք յիշելով՝ զՏէր աղաչեսցուք:*

Դպիրքն.

*Տէ՛ր, ողորմեա՛:*

— *Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ Հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք:*

Դպիրքն.

*Տէ՛ր, ողորմեա՛:*

— *Ձանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:*

Դպիրքն.

*Քեզ՝ Տեառնդ, յանձն եղիցուք:*

— *Ողորմեաց մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քոմ. ասացուք ամենեքեան միաբանութեամբ.*

Դպիրքն.

*Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛:*

Մինչ ասրկատագն քարոզէ, քահանայն ասասցէ ի ծածուկ.

*Աստուած՝ ճշմարտութեան եւ Հա՛յր ողորմութեան, գոհանամք զՔէն, որ ի վեր քան զերանելի նահապետացն զմեր պարտաւո-*

*առաքի մեզ Սուրբ Հոգու շնորհները եւ պարգեւները, աղաչենք Տիրոջը:*

*Դպիրները.*

*Տէ՛ր, ողորմի՛ր:*

*— Ընդունի՛ր, Տէր, կեանք տուր, ողորմի՛ր եւ պահպանի՛ր մեզ Քո շնորհով:*

*Դպիրները.*

*Տէ՛ր, ողորմի՛ր:*

*— Ամենասրբուհի միշտ Կոյս Մարիամ Աստուածածնին բոլոր սուրբերի հետ յիշելով՝ աղաչենք Տիրոջը:*

*Դպիրները.*

*Տէ՛ր, ողորմի՛ր:*

*— Դարձեալ միաբան աղաչենք Տիրոջը մեր ճշմարիտ եւ սուրբ հաւատքի համար:*

*Դպիրները.*

*Տէ՛ր, ողորմի՛ր:*

*— Մեր անձերը եւ միմեանց ամենակալ Տէր Աստուծոյ յանձնենք:*

*Դպիրները.*

*Քեզ՝ Տիրոջդ, յանձնենք մեզ:*

*— Ողորմի՛ր մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ Քո մեծ ողորմութեան. բոլորս միաբան ասենք.*

*Դպիրները.*

*Տէ՛ր, ողորմի՛ր, Տէ՛ր, ողորմի՛ր, Տէ՛ր, ողորմի՛ր:*

*Մինչ սարկաւազը քարոզում է, քահանայն ծածուկ ասում է.*

*Աստուած՝ ճշմարտութեան եւ Հա՛յր ողորմութեան, զոհանում ենք Քեզանից, որ երանելի նահապետներից աւելի մեծարեցիր մեր՝ դատապարտուածներին բնութիւնը: Քանզի նրանց համար*

րելոցս առաւել մեծարեցեր զբնութիւն: Վասն զի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ Հայր հաճեցար անուանիլ զթալով:

Եւ այժմ, Տէ՛ր, աղաչեմք զՔեզ, զայսպիսի առ ի Քէն զնորոգ եւ զպատուական անուանադրութեանս շնորհ օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո՛ր ի մէջ Եկեղեցւոյ Քու՛մ սրբոյ:

Քահանայն՝ ի ձայն.

— Եւ տո՛ւր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զՔեզ, երկնաւո՛րդ Հայր, երգել եւ ասել.

Եւ դպիրքն բազկաւարսած եղանակեցեն.

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեացէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո որպէս յերկինս՝ եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր. եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն:

Մինչ նոքա երգեն, քահանայն աղօթեցէ ի ծածուկ.

Տէ՛ր տերանց, Աստուած աստուծոց, Թագաւո՛ր յաւիտենական, Արարի՛չ ամենայն արարածոց, Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մի՛ տար զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէ եւ ապրեցո՛ր ի փորձութենէ:

Քահանայն՝ ի ձայն.

— Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

### Խոնարհումն

Քահանայն.

† Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում:

Աստուած կոչուեցիր, իսկ մեզ համար զթալով հաճեցիր Հայր անուանուել:

Եւ այժմ, Տէ՛ր, աղաչում ենք Քեզ, Քո պարգեւած այս նոր եւ պատուական անուանադուլթեան շնորհը օրըստօրէ պայծառաց- նելով ծաղկեցրո՛ւ Քո սուրբ Եկեղեցում:

Քահանան՝ քարձրաձայն.

— Եւ տո՛ւր մեզ համարձակաձայն խօսքով բացել մեր բերաննե- րը, կանչել Քեզ, երկնաւո՛ր Հայր, երգել եւ ասել:

Եւ դպիրները բազկապարսած երգում են.

Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո անունը, Քո ար- քայուլթիւնը թող դայ, Քո կամքը թող լինի երկրի վրայ, ինչպէս որ երկնքում է: Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզ այսօր. եւ ների՛ր մեր պարտքերը, ինչպէս եւ մենք ենք ներում մեր պարտա- պաններին: Եւ մի՛ տար մեզ փորձուլթեան, այլ փրկի՛ր մեզ չարից:

Մինչ նրանք երգում են, քահանան ծածուկ աղօթում է.

Տէ՛ր տէրերի, Աստուա՛ծ աստուածների, Թագաւո՛ր յաւիտենական, Արարի՛չ բոլոր արարածների, Հա՛յր մեր Տէր Յիսուս Քրիստոսի, մի՛ տուր մեզ փորձուլթեան ենթարկուել, այլ փրկի՛ր չարից եւ ազատի՛ր փորձուլթիւնից:

Քահանան՝ քարձրաձայն.

— Քանզի Քոնն են արքայուլթիւնը, զօրուլթիւնը եւ փառքը յաւիտեանս. ամէն:

## Խոնարհում

Քահանան.

† Խաղաղուլթիւն բոլորին:

Դպիրները.

Եւ քո հոգուն:

Սարկաւագն.

**Աստուծոյ երկրպագեսցուք:**

Եւ ամենայն ժողովորդն անկցի ի ծունկս:

Դպիրքն.

**Առաջի Քո, Տէ՛ր:**

Սարկաւագն.

**Օրհնեա՛, տէ՛ր:**

Եւ քահանայն խոնարհեսցի եւ աղօթեսցէ ի ծածուկ.

*Որ աղբիւրդ ես կենաց եւ բղխումն ողորմութեան, Հոգի՛դ Սուրբ, ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիրպագանեն Աստուածութեան Քում:*

*Պահեա՛ գտտաս ամբողջս, տպաւորեա՛ յոգևջ սոցա զձեւ մարմնոյ ցուցակի առ ի ժառանգութիւն եւ ի վիճակ Հանդերձելոցդ բարեաց:*

Քահանայն ի ձայն.

— Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամբ մերով, ընդ Որում Քեզ՝ Հոգևոյդ Սրբոյ, եւ Հօր ամենակալի վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

**Բարձրացումն**

Եւ սարկաւագն ձայնեսցէ.

**Պռոսխումէ:**

Եւ քահանայն սոցէ զսուրբ Հացն ի ձեռն եւ բարձրացուցէ ակներն ամենայն ժողովրդեանն եւ սասուցէ ի ձայն.

**Ի սրբութիւն սրբոց:**

Դպիրքն՝ բարձր ձայնիւ.

**Միայն սուրբ, միայն Տէր՝ Յիսուս Քրիստոս՝ ի փառս Աստուծոյ Հօր. ամէն:**

Մարկաւագր.

**Երկրպագենք Աստծուն:**

Եւ ամբողջ ժողովուրդը ծնկի է գալիս:

Դպիրները.

**Քո առջեւ, Տէ՛ր:**

Մարկաւագր.

**Օրհնի՛ր, տէ՛ր:**

Եւ քահանայն խոնարհուով է եւ ծածուկ աղօթում.

*Որ աղբիւրն ես կեանքի եւ բխումը ողորմութեան, Հոգի՛ Սուրբ, ողորմի՛ր այս ժողովրդին, որ խոնարհուելով երկրպագում է Բո Աստուածութեանը:*

*Պահի՛ր սրանց ամբողջական, դրոշմի՛ր սրանց հոգիներում [իրենց] մարմնի [խոնարհման] օրինակը, որպէսզի ժառանգեն եւ ստանան դալիք բարիքներդ:*

Քահանայն՝ քարձրածայն.

*— Մեր Տէր Յիսուս Քրիստոսով, Ում հետ Քեզ՝ Սուրբ Հոգուդ, եւ ամենակալ Հօրը վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

**Քարձրացում**

Եւ արկաւագր ձայնում է.

**Ուշագրութի՛ւն:**

Եւ քահանայն ձեռքն է վերցնում սուրբ Հացը, քարձրացնում ի րես ամբողջ ժողովրդի եւ քարձրածայն ասում.

**Սրբութիւնը՝ սուրբերին՝:**

Դպիրները՝ քարձր ձայնով.

**Միակ սուրբ, միակ Տէր՝ Յիսուս Քրիստոս՝ ի փառս Հայր Աստուծոյ. ամէն:**

**Փառաբանութիւն**

*Քահանայն.*

*Օրհնեալ Հա՛յր Սուրբ, Աստուած ճշմարիտ:*

*Դպիրքն.*

*Ամէն:*

*— Օրհնեալ Որդի՛դ Սուրբ, Աստուած ճշմարիտ:*

*Դպիրքն.*

*Ամէն:*

*— Օրհնեալ Հոգի՛դ Սուրբ, Աստուած ճշմարիտ:*

*Դպիրքն.*

*Ամէն:*

*— Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

*Դպիրքն.*

*Ամէն: Հա՛յր Սուրբ, Որդի՛դ Սուրբ, Հոգի՛դ Սուրբ:  
Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն.  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

**ԼՐՈՒՄՆ**

**Թաթախումն**

*Մինչ նոքա երգեն զայս, քահանայն խոնարհեացի եւ աղօթեաց է ի ծածուկ.*

*Նայեա՛ց, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, յերկնից ի սրբութենէ Քրոճմէ եւ յաթոռոյ փառաց թագաւորութեան Քոյ. ե՛կ ի սրբել եւ ի կեցուցանել զմեզ, որ ընդ Հօր նստիս եւ աստ պատարագիս: Արժանի՛ արա տալ մեզ յանարատ Մարմնոյ Քրոճմէ եւ ի պատուական Արեւնէ, եւ ի ձեռն մեր՝ ամենայն ժողովրդեանս:*

**Փառաբանութիւն**

*Քահանան.*

*Օրհնեալ Հա՛յր Սուրբ, Աստուած ճշմարիտ:*

*Դպիրները.*

*Ամէն:*

*— Օրհնեալ Որդի՛ Սուրբ, Աստուած ճշմարիտ:*

*Դպիրները.*

*Ամէն:*

*— Օրհնեալ Հոգի՛ Սուրբ, Աստուած ճշմարիտ:*

*Դպիրները.*

*Ամէն:*

*— Օրհնութիւն եւ փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

*Դպիրները.*

*Ամէն: Հա՛յր Սուրբ, Որդի՛ Սուրբ, Հոգի՛ Սուրբ:*

*Օրհնութիւն Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն.*

*Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

**ԼՐՈՒՄ**

**Թաթախում**

*Մինչ նրանք երգում են սա, քահանան խոնարհում է եւ ծածուկ աղօթում.*

*Նայի՛ր, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, Քո երկնաւոր սրբարանից եւ Քո թագաւորութեան փառքի աթոռից. ե՛կ սրբելու եւ կեանք տալու մեզ, որ նստած ես Հօր աջ կողմում եւ պատարագւում ես այստեղ: Արժանի՛ արա Քո անարատ Մարմնից եւ պատուական Արիւնից տալ մեզ եւ մեր միջոցով՝ այս ողջ ժողովրդին:*



Եւ զայս ասացեալ երկիրպագցէ եւ համբորեացցէ զՍեղանն, եւ ստեալ զսուրբ Մարմինն՝ ողջ թացցէ յանասական Արիւնն եւ ասացէ ի ծածուկ.

*Տէ՛ր Աստուած մեր, որ կոչեցեր զմեզ յանուն Միածնի Որդւոյ Քոյ քրիստոնեայս եւ շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգեւոր Աւագանան ի թողութիւն մեղաց եւ արժանի արարեր զմեզ Հազորդիլ սուրբ Մարմնոյ եւ Արեան Միածնի Քոյ, եւ այժմ աղաչեմք զՔեզ, Տէ՛ր, արա՛ զմեզ արժանի ընդունիլ զսուրբ Խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն եւ գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սուրբ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ բարձրացուցէ ակներեւ ժողովրդեանն եւ ասացէ ի ձայն.

*Ի սուրբ, ի սուրբ, պատուական Մարմնոյ եւ յԱրեանէ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից՝ բաշխի ի միջի մերում:*

*Սա՛ է կեանք, յոյս յարութեան, քաւութիւն եւ թողութիւն մեղաց:*

*Սաղմո՛ս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, սաղմո՛ս ասացէք երկնաւոր Թագաւորիս մերում անմահի, որ նստի ի կառս քերովբէականս:*

## Բեկումն

Մարկաւագն ձայնեացէ.

*Սաղմո՛ս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպի՛րք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս:*

*Զի Սմա վայելին սաղմոսք եւ օրհնութիւնք, ալէլուք եւ երգք հոգեւորք:*

*Պաշտօնեա՛յք, հանդերձ երգովք սաղմո՛ս ասացէք եւ զՏէր յիրկինս օրհնեցէ՛ք:*

Եւ ձգեացն զվարագոյրն:

Եւ սա ստելով՝ [քահանան] երկրպագում է եւ համբուրում Սեղանը, սպա վերցնելով սուրբ Մարմինը՝ ամբողջությամբ թաթախում է անսպական Արեան մէջ եւ ծածուկ ասում.

*Տէ՛ր Աստուած մեր, որ Քո Միածին Որդու անունով կոչեցիր մեզ քրիստոնեայ, շնորհեցիր մեզ հոգեւոր Աւագանի մկրտութիւն՝ մեղքերի թողութեան համար, եւ արժանացրիր մեզ հաղորդուելու Քո Միածնի սուրբ Մարմնին եւ Արեանը, այժմ աղաչում ենք Քեզ, Տէ՛ր, արժանի՛ արա մեզ ընդունել այս սուրբ Խորհուրդը մեղքերի թողութեան համար եւ դոհութեամբ փառաւորել Քեզ Որդու եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ բարձրացնում է ի րեւ ժողովրդի եւ բարձրաձայն ասում.

*Սրբութեամբ ճաշակենք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի սուրբ, սուրբ եւ պատուական Մարմնից եւ Արիւնից, որ երկնքից իջնելով՝ բաշխուում է մեր մէջ:*

*Սա՛ է կեանքը, յարութեան յոյսը, մեղքերի քաւութիւնը եւ թողութիւնը:*

*Սաղմո՛ս երգեցէք մեր Տէր Աստծուն, սաղմո՛ս երգեցէք մեր անմահ երկնաւոր Թագաւորին, որ նստում է քերովբէական կառքում:*

## Բեկանում

Մարկաւազը ձայնում է.

*Սաղմո՛ս երգեցէք մեր Տէր Աստծուն, դպիրնե՛ր, քաղցրաձայն երգեցէ՛ք հոգեւոր երգեր:*

*Քանզի Նրան վայել են սաղմոսներ եւ օրհնութիւններ, ալիւլիւաներ եւ հոգեւոր երգեր:*

*Ծառանե՛ր, երգերի հետ սաղմո՛ս երգեցէք եւ օրհնեցէ՛ք Տիրոջը երկնքում:*

Եւ վարագոյրը փակում են:

Մինչ նոքա երգեն, քահանայն անցէ զՄարմինն ի ձեռն եւ համբուրեսցէ արքայստօք՝ ասելով ի ծածուկ.

*Ձո՛ր օրհնութիւն կամ զո՛ր գոհնութիւն ի վերայ Հացիս եւ Բաժակիս ասասցուք: Այլ, Յիսո՛ւս, գ՛ֆեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբ եւ Ամենասուրբ Հոգևովդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Դարձեալ ասասցէ.

*Խոստովանիմ եւ հաւատամ, զի Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ, որ բարձեք զմեզս աշխարհի:*

Եւ բեկեալ արկցէ ի քաժակն Արեան՝ ասելով.

*Լրումն Հոգւոյն Սրբոյ:*

## ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

### Նախահաղորդականք

Եւ դպիրքն եղանակեսցեն.

*Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. ալէլուիա:  
Ձմարմին Իւր տայ մեզ կերակուր եւ սուրբ զԱրիւն Իւր ցօղէ ի մեզ. ալէլուիա:  
Մատի՛ք առ Տէր եւ առէ՛ք զլոյս. ալէլուիա:  
Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք, զի քաղցր է Տէր. ալէլուիա:  
Օրհնեցէ՛ք զՏէր յերկինս. ալէլուիա:  
Օրհնեցէ՛ք զՆա ի բարձունս. ալէլուիա:  
Օրհնեցէ՛ք զՆա, ամենայն հրեշտա՛կք Նորա. ալէլուիա:  
Օրհնեցէ՛ք զՆա, ամենայն զօրութի՛ւնք Նորա. ալէլուիա:*

Եւ դպիրքն երգեսցեն զգրադս խորհրդաւորս ըստ պարշաձի ատորն:

Եւ ասլս անեալ զմի մասն ի ձեռն՝ ասասցէ արքայստօք եւ գոհութեամբ աս Հայր եւ Որդի ի ծածուկ.

*[ա] Հա՛յր Սուրբ, որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ Միածնի Քոյ եւ լուսաւորեցեր մկրտութեամբ հոգեւոր Աւա-*

Մինչ նրանք երգում են, քահանան արդաստրով ձեռքն է առնում Մարմինը և համբուրում՝ ծածուկ ասելով.

*Ի՛նչ օրհնութիւն կամ ի՛նչ գոհութիւն մատուցենք այս Հացի եւ Բաժակի համար: Այլ, Յիսո՛ւս, միայն Քեզ ենք օրհնում Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Դարձեալ ասում է.

*Խոստովանում եւ հաւատում եմ, որ Դու ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին, որ [Քեզ վրայ] վերցրիր աշխարհի մեղքը:*

Եւ [Մարմինը] բեկանելով դնում է Արեան քաժակի մէջ՝ ասելով.

*Լրումը Սուրբ Հոգու:*

## ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

### Հաղորդութեան երգեր և աղօթքներ

Եւ դպիրները երգում են.

*Քրիստոսը պատարագուելով բաշխում է մեր մէջ. ալէլուիա: Իր Մարմինը կերակուր է տալիս մեզ եւ իր սուրբ Արիւնը ցօղում է մեզ վրայ. ալէլուիա:*

*Մօտեցէ՛ք Տիրոջը եւ առէ՛ք լոյսը. ալէլուիա:*

*Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք, թէ որքան քաղցր է Տէրը. ալէլուիա:*

*Օրհնեցէ՛ք Տիրոջը երկնքում. ալէլուիա:*

*Օրհնեցէ՛ք Նրան բարձունքներում. ալէլուիա:*

*Օրհնեցէ՛ք Նրան, բոլոր հրեշտակներ՝ Նրա. ալէլուիա:*

*Օրհնեցէ՛ք Նրան, բոլոր գօրութիւններ՝ Նրա. ալէլուիա:*

Եւ դպիրները երգում են օրուայ խորհուրդին պարշաձ փառեր:

Եւ ասցա [պարարագիչը], մէկ կրտրն առնելով ձեռքը, արդաստրով և գոհութեամբ ծածուկ ասում է Հօրը և Որդուն.

*[ա] Հա՛յր Սուրբ, որ Քո Միածնի անուանակցութեամբ կոչեցիր մեզ [քրիստոնեայ] եւ լուսաւորեցիր հոգեւոր Աւազանի*

զանին, արժանի՝ արա ընդունիլ զսուրբ Խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն: Տպաւորեա՛ ի մեզ զչնորհս Հոգւոյդ Սրբոյ, որպէս ի սուրբ առաքեալսն, որք ճաշակեցին եւ եղեն մաքրիչք ամենայն աշխարհի:

Եւ արդ՝ Տէ՛ր Հայր բարերար, զհաղորդութիւնս զայս մասնաւորեա՛ ճաշակման երեկոյին աշակերտացն՝ բառնալով զխաւար մեղաց: Մի՛ հայիր յանարժանութիւնս իմ եւ մի՛ արգելցես զչնորհս Հոգւոյդ Սրբոյ: Այլ ըստ անբաւ մարդասիրութեան Քում պարգեւեա՛ զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց, որպէս խոստացաւ եւ ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս թէ՛ «Ամենայն, որ ուտէ զՄարմին իմ եւ ըմպէ զԱրիւն իմ, կեցցէ ի յաւիտեան»:

Արդ՝ արա՛ զսա մեզ ի քաւութիւն, զի որք կերիցեն եւ արբցեն ի սմանէ, հանցեն զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

[բ] Գոհանամ զՔէն, Քրիստո՛ս թագաւոր, որ արժանի արարեր զանարժանս հաղորդիլ սուրբ Մարմնոյ եւ Արեան Քոյ:

Եւ այժմ, Տէ՛ր, աղաչեմ զՔեզ, մի՛ լիցի սա ինձ ի դատապարտութիւն, այլ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, յառողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ եւ ի կատարումն ամենայն գործոց առաքինութեան: Որպէս զի սրբեսցէ սա զչունչս իմ եւ զհոգի եւ զմարմին իմ եւ արասցէ զիս տաճար եւ բնակարան Ամենասուրբ Երրորդութեանդ, զի ընդ սուրբս Քո արժանի եղէց փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յովհաննոս Ոսկերեանի ասացեալ աղօթք

[գ] Գոհանամ եւ մեծացուցանեմ եւ փառաւորեմ զՔեզ, Տէ՛ր Աստուած իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուրս յայսմիկ հաղորդակից լինել աստուածային եւ սոսկալի Խորհրդոյ Քում՝ անարատ Մարմնոյդ եւ պատուական Արեանդ:

մկրտութեամբ, արժանի՛ արա մեզ ընդունել այս սուրբ խորհուրդը մեղքերի թողութեան համար: Դրոշմի՛ր մեզ Սուրբ Հոգուդ շնորհներով, ինչպէս սուրբ առաքեալներին, որոնք ճաշակեցին եւ եղան մաքրիչներ ողջ աշխարհի:

Եւ արդ՝ Տէ՛ր Հայր բարերար, այս հաղորդութիւնը աշակերտների խորհրդաւոր ընթրիքի մա՛ս դարձրու՛՛ վերացնելով մեղքերի խաւարը: Մի՛ նայիր իմ անարժանութեանը եւ մի՛ արգելիր Սուրբ Հոգուդ շնորհները: Այլ ըստ Քո անբաւ մարդասիրութեան պարգեւի՛ր սա մեղքերի քաւութեան եւ յանցանքների թողութեան համար, ինչպէս խոստացաւ մեր Տէր Յիսուս Քրիստոսը թէ՛ «Ամէն ոք, որ ուտում է իմ Մարմինը եւ խմում իմ Արիւնը, կ'ապրի յաւիտեան»:

Արդ՝ արա՛ սա մեր քաւութեան համար, որպէսզի սրանից ուտողները եւ խմողները օրհնեն եւ փառաւորեն Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն բոլորին:

[բ] Գոհանում եմ Քեզանից, Քրիստո՛ս թագաւոր, որ անարժանիս արժանի դարձրիր հաղորդուելու Քո սուրբ Մարմնին եւ Արեանը:

Եւ այժմ, Տէ՛ր, աղաչում եմ Քեզ, որ սա չլինի ինձ համար պատճառ դատապարտութեան, այլ մեղքերի քաւութեան եւ թողութեան, հոգու եւ մարմնի առողջութեան եւ առաքինութեան բոլոր գործերի լրման: Որպէսզի սա սրբի իմ հոգին, շունչն ու մարմինը եւ դարձնի ինձ տաճար ու բնակարան Ամենասուրբ Երրորդութեան, որպէսզի Քո սուրբերի հետ արժանի լինեմ փառաւորելու Քեզ Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք՝ ասուած Յովհան Ոսկեթերանի կողմից

[գ] Գոհանում եմ Քեզանից, մեծարում եւ փառաւորում եմ Քեզ, Տէ՛ր Աստուած իմ, որ ինձ՝ անարժանիս, այսօր արժանացրիր հաղորդակից լինելու Քո աստուածային եւ սոսկալի խորհրդին՝ անարատ Մարմնիդ եւ պատուական Արեանդ:

Վասն այսորիկ գոտոս ի բարեխօսութիւն ունելով աղաչեմ՝ յամենայն աւուրս եւ ի ժամանակս կենաց իմոց ընդ սրբութեան՝ Քոյ պաշհա զիս, որպէս զի յիշելով զբարեգթութիւնս Քո՛ն՝ եւ կենդանի եղէց ընդ Քեզ, որ վասն մեր չարչարեցար եւ մեռար եւ յարեար:

Մի՛ մերձեցցի, Տէ՛ր իմ եւ Աստուած, խորտակիչն՝ կնքելով անձին իմոյ պատուական Արեամբդ Քով: Ամենակարո՛ղ, մաքրեա՛ զիս սոքօք յամենայն մեռելոտի գործոց իմոց, որ միայն ես անմեղ:

Ամրացո՛ զկեանս իմ, Տէ՛ր, յամենայն փորձութենէ եւ զպատերազմողն իմ դարձո՛ յինէն յետս, պատկառեալ եւ ամաչեցեալ՝ որչափ յառնէ ի վերայ իմ: Ամրացո՛ զգնացս մտաց եւ լեզուի իմոյ եւ զամենայն ճանապարհս մարմնոյ իմոյ:

Լե՛ր հանապազօր ընդ իս ըստ անսուտ խոստմանց Քոց, թէ՛ «Որ ուտէ զՄարմին իմ եւ ըմպէ զԱրիւն իմ, նա յիս բնակեսցէ, եւ ես ի նմա»: Դո՛ւ ասացեր, մարդասէ՛ր, կացո՛ զբանս աստուածային անլուծելի հրամանաց Քոց: Քանզի Դու ես Աստուած ողորմութեան եւ գթութեան եւ մարդասիրութեան եւ պարգեւիչ ամենայն բարեաց, եւ Քեզ վայել է փառք, հանդերձ Հարբդ եւ Ամենասուրբ Հոգւովդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### Ճաշակումն

Եւ այս պետեանագրեացէ զինքն եւ խնդրեացէ ի ճշմարտէն Աստուծոյ զպէսպէս հայցուածս անձին իւրոյ եւ ժողովրդեան եւ աշխարհի: Եւ թողորթին խնդրեացէ վասն իւրոց թշնամեացն եւ արեղեաց: Եւ անդէն ահիս եւ դողութեամբ ձաշակեացէ ի Մարմնոյն եւ արբցէ ի Բաժակէն՝ ասելով.

Հաւատով հաւատամ յԱմենասուրբ Երրորդութիւնդ՝ ի Հայր եւ Որդի եւ ի Հոգիդ Սուրբ:

Հաւատով ճաշակեմ գոտրբ եւ զկենդանարար եւ զփրկագործ Մարմինս Քո, Քրիստո՛ս Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց:

Ուստի սրանք որպէս բարեխօսութիւն ունենալով՝ աղաչուեմ եմ՝ ինձ Քո սրբութեան հե՛տ պահիր ամէն օր եւ ողջ կեանքիս ընթացքում, որպէսզի յիշելով Քո բարեգթութիւնը՝ նաեւ կենդանի լինեմ Քեզ հետ, որ մեզ համար չարչարուեցիր, մեռար եւ յարութիւն առար:

Տէ՛ր իմ եւ Աստուած, երբ իմ անձը կնքուի Քո պատուական Արեամբ, թող չմերձենայ ինձ խորտակիչը: Ամենակարո՞ղ, որ միակէ ես անմեղ, սրանցով մաքրի՛ր ինձ իմ բոլոր մեռելոտի գործերից:

Տէ՛ր, պաշտպանի՛ր իմ կեանքը ամէն տեսակ փորձութիւնից եւ իմ դէմ պատերազմողին ամէն անգամ իմ դէմ կընելիս ամօթահար յե՛տ դարձրու: Պաշտպանի՛ր իմ մտքի եւ լեզուի ընթացքը եւ մարմնիս բոլոր ճանապարհները:

Միշտ ինձ հե՛տ եղիր ըստ Քո անսուտ խոստումի, թէ՛ «Ով ուտում է Իմ Մարմինը եւ խմում Իմ Արիւնը, նա Իմ մէջ կը բնակուի, եւ Ես՝ նրա»: Դո՛ւ ասացիր, մարդասէ՛ր, հաստատի՛ր Քո աստուածային անքակտելի հրամանի խօսքը: Քանզի Դու ես Աստուածը ողորմութեան, գթութեան ու մարդասիրութեան եւ պաղեւիչը բոլոր բարիքների, եւ Քեզ վայել են փառք՝ Հօր եւ Սուրբ Հոգու հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Ճաշակում

Ապա [բահանան] խաչակնքում է իրեն եւ խնդրանքներ մատուցում ձյնաբիւր Ասրոնն իր անձի, ժողովրդի եւ աշխարհի համար, թողութիւն խնդրում իր թշնամիների եւ իրեն ապողների համար եւ ապա ահուողով ձաշակում Մարմնից եւ խմում Բաժակից՝ ասելով.

Հաւատքով դաւանում եմ Ամենասուրբ Երրորդութեանդ՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն:

Հաւատքով ճաշակում եմ Քո սուրբ, կենդանարար եւ փրկագործ այս Մարմինը, Քրիստո՛ս Աստուած իմ Յիսուս, իմ մեղքերի թողութեան համար:



*Հաւատով ըմպեմ զսրբարար եւ զմաքրիչ Արիւնս Քո, Քրիստոս՝  
Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց:*

*Մարմին Քո անապական լիցի ինձ ի կեանս, եւ սուրբ Արիւն Քո՝  
ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:*

Եւ սարկաւագն հաղորդեացի:

Եւ բացեն զվարագոյրն:

Եւ սարկաւագն յետ հաղորդելոյն գոչէ առ ժողովորդն եւ ասէ բարձր.

*Երկիւղիւ եւ հաւատով յառա՛ջ մատիք եւ սրբութեամբ հաղոր-  
դեցարո՛ւք:*

Եւ դպիրքն՝ բարձր ձայնիւ.

*Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ. օրհնեալ եկեալ անուամբ  
Տեառն:*

Եւ ամենայն արժանատրքն հաղորդեացին:

Յորժամ հաղորդին արժանատրքն, դպիրքն երգեն զլուսղա խորհրդա-  
տրս կամ շարական հաղորդութեան.

*Որ կազմեցեր սեղան խորհրդոյ եւ արբուցեր յանմահական բա-  
ժակէն սրբոց Քոց առաքելոց այսօր ի սուրբ Վերնատանն,  
Աղաչեմք, Փրկի՛՛ջ, ողորմեա՛:*

*Մաքրեա՛ զմիտս եւ զխորհուրդս, զի եւ մեք հաղորդեսցուք  
սրբութեամբ ընդ սրբոց Քոց առաքելոց այսօր ի սուրբ Վերնա-  
տանն.*

*Աղաչեմք, Փրկի՛՛ջ, ողորմեա՛:*

Եւ յետ հաղորդելոյն խաչակնքեացէ քահանայն Ընծային

եւ ասացէ.

*Կեցո՛, Տէր, զժողովուրդս Քո եւ օրհնեա՛ զժառանգութիւնս  
Քո. հովուեա՛ եւ բարձրացո՛ զսոսա յայսմհետէ մինչեւ յաւի-  
տեան:*

Եւ ձգեացն զվարագոյրն:

*Հաւատքով խմուճ եմ Քո սրբարար եւ մաքրիչ այս Արիւնը,  
Քրիստո՛ս Աստուած իմ Յիսուս, իմ մեղքերի թողութեան համար:  
Քո անապական Մարմինը թող լինի կեանք ինձ համար, եւ Քո  
սուրբ Արիւնը՝ մեղքերիս քաւութիւն եւ թողութիւն:*

Սարկաւազը հաղորդում է:

Ապա բացում են վարագոյրը:

Եւ սարկաւազը հաղորդունեաց յետոյ բարձր ձայնով գոչում է դէպի ժո-  
ղովուրդը.

*Երկիւղով եւ հաւատքով մօտեցէ՛ք եւ սրբութեամբ հաղորդուէ՛ք:*

Դպիրները՝ բարձր ձայնով.

*Մեր Աստուածը եւ մեր Տէրը երեւաց մեզ. օրհնեալ է Տիրոջ անու-  
նով եկողը:*

Եւ բոլոր արժանատիները հաղորդում են:

Երբ արժանատիները հաղորդում են, դպիրները երգում են խորհուր-  
դին պարզաճ տաղեր կամ հաղորդութեան շարական.

*Որ սուրբ Վերնատան մէջ այսօր խորհուրդի սեղան պատրաստե-  
ցիր եւ Քո սուրբ առաքեալներին խմեցրիր անմահական բաժակից,  
Աղաչում ենք, Փրկի՛չ, ողորմի՛ր:*

*Մաքրի՛ր [մեր] միտքն ու խորհուրդները, որպէսզի այսօր սուրբ  
Վերնատան մէջ Քո սուրբ առաքեալների հետ նաեւ մենք սրբու-  
թեամբ հաղորդուենք.*

*Աղաչում ենք, Փրկի՛չ, ողորմի՛ր:*

Հաղորդութիւն տալուց յետոյ քահանան սր Հաղորդութեանը խաչա-  
կնքում է եւ ասում.

*Տէ՛ր, կեանք տուր Քո այս ժողովրդին եւ օրհնի՛ր Քո այս ժա-  
ռանգութիւնը. հովուի՛ր եւ բարձրացրո՛ւ սրանց այսուհետ մին-  
չեւ յաւիտեան:*

Եւ փակում են վարագոյրը:

**Գոհարանութիւն**

Եւ դպիրքն երգեսցեն.

*Լցաք ի բարութեանց Քոյ, Տէ՛ր, ճաշակելով զՄարմին Քո եւ զԱրիւն:*

*Փա՛ռք ի բարձունս կերակրողիդ զմեզ:*

*Որ Հանապազ կերակրես զմեզ, առաքեա՛ ի մեզ զՀոգեւոր Քո զօրհնութիւն:*

*Փա՛ռք ի բարձունս կերակրողիդ զմեզ:*

Սարկաւագն.

*Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*

Դպիրքն.

*Տէ՛ր, ողորմեա՛:*

Սարկաւագն.

*Եւ եւս, հաւատով ընկալեալք յաստուածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ եւ անապական Խորհրդոյս, զՏեառնէ գոհացարո՛ւք:*

Դպիրքն.

*Գոհանամք զՔէն, Տէ՛ր, որ կերակրեցեր զմեզ յանմահական Սեղանոյ Քո՝ բաշխելով զՄարմինդ եւ զԱրիւնդ ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:*

Իսկ աստուոր դպիրքն եղանակեն փաղս խորհրդատրս, մինչեւ քահանայն կատարեսցէ զկարգ աղօթիցն:

Քահանայն սասացէ ի ծածուկ.

*[ա] Գոհանամք զՔէն, Հա՛յր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սուրբ զԵկեղեցի՝ տաճար սրբութեան, ուր փառաբանի Ամենասուրբ Երրորդութիւնդ: Ալէլուիա:*

*Գոհանամք զՔէն, Քրիստո՛ս թագաւոր, որ պարգեւեցեր մեզ կենդանութիւն կենարար Մարմնով եւ Արեամբ Քով սրբով. շնորհեա՛ զքաւութիւն եւ զմեծ զողորմութիւն: Ալէլուիա:*

**Գոհարանութիւն**

Եւ դպիրները երգում են.

*Լցուեցինք Քո բարիքներով, Տէ՛ր, ճաշակելով Քո Մարմինը եւ Արիւնը:*

*Քեզ՝ մեզ կերակրողիդ, փա՛ռք բարձունքներում:*

*Որ միշտ կերակրում ես մեզ, առաքի՛ր մեզ Քո հոգեւոր օրհնութիւնը:*

*Քեզ՝ մեզ կերակրողիդ, փա՛ռք բարձունքներում:*

Սարկաւազը.

*Դարձեալ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը:*

Դպիրները.

*Տէ՛ր, ողորմի՛ր:*

Սարկաւազը.

*Դարձեալ գոհացէ՛ք Տիրոջից, որ հաւատքով ընդունեցիք այս աստուածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ եւ անապական խորհուրդը:*

Դպիրները.

*Գոհանում ենք Քեզանից, Տէ՛ր, որ կերակրեցիր մեզ Քո անմահական Սեղանից՝ բաշխելով Քո Մարմինը եւ Արիւնը աշխարհի փրկութեան եւ մեր անձերի կեանքի համար:*

Այսպէղ դպիրները երգում են խորհուրդին պատշաճ փառքեր, մինչեւ քահանան վերջացնի աղօթքի կարգը:

Քահանան ծածուկ ասում է.

*[ա] Գոհանում ենք Քեզանից, Հա՛յր ամենակալ, որ սուրբ Եկեղեցին պատրաստեցիր մեզ որպէս նաւահանգիստ եւ սրբութեան տաճար, ուր փառաբանում է Ամենասուրբ Երրորդութիւնդ: Ալէլուիա:*

*Գոհանում ենք Քեզանից, Քրիստո՛ս թագաւոր, որ կենդանութիւն պարգեւեցիր մեզ Քո կենարար սուրբ Մարմնով եւ Արեամբ. շնորհի՛ր քաւութիւն եւ մեծ ողորմութիւն: Ալէլուիա:*

Գոհանամք զՔէն, Հոգի՛դ ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զԵկեղեցի. անարա՛տ պահեա հաւատով Երրորդութեանդ յայսմհետէ մինչեւ յաւիտեան: Ալէլուիա:

Քահանայն սասաց ի ծածուկ.

[բ] Գոհանամք զՔէն, Քրիստո՛ս Աստուած մեր, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ի սրբութիւն կենդանութեան. սովիմք պահեա՛ զմեզ սուրբս եւ անարատս՝ բնակեալ զմեօք Քո աստուածային խնամօքդ:

Հովուեա՛ զմեզ յանդաստանի կամաց Քոց սրբոց եւ բարեսիրաց, որով ամրացեալք յամենայն բանսարկուին ընդդիմութեանց՝ Քում եւեթ արժանի եղիցուք լսել ձայնի եւ Քեզ միայնոյ քաջայոյթ եւ ճշմարիտ Հովուիդ հետեւիլ եւ առ ի Քէն ընդունիլ զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից, Աստուած մեր եւ Տէ՛ր մեր եւ Փրկի՛չ Յիսուս Քրիստոս, որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Անքնին, անհաս, Երբեակ Ինքնութեանդ՝ հաստիչ, ընդունող եւ անբաժանելի միասնական Սուրբ Երրորդութեանդ, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտենից. ամէն:

Եւ քահանայն լուսաց զսկիին եւ զձեռս իւր եւ դիցէ զասղասարսն եւ արկցէ զկօշիկս իւր:

Եւ այս բացցեն զվարագոյրն:

ԱՐԶԱԿՈՒՄՆ

Աղօթք ի մէջ եկեղեցոյ

Եւ այս անգէ քահանայն զԱւերարանն սուրբ ի ձեռս իւր եւ երիցս երկրպագեալ համբուրեացէ զսուրբ Սեղանն եւ իջանելով ի մէջ եկեղեցւոյն [հանդերձ սարկասագօրն]՝ սասաց զաղօթս ի ձայն.

*Գոհանում ենք Քեզանից, Հոգի՛ ճշմարիտ, որ նորոգեցիր սուրբ Եկեղեցին. Երրորդութեանդ հաւատքով [այն] անարա՛տ պահիր այսուհետ մինչեւ յաւիտեան: Ալէլուիա:*

*Քահանան ծածուկ ստում է.*

*[ք] Գոհանում ենք Քեզանից, Քրիստո՛ս Աստուած մեր, որ բարութեան այսպիսի ճաշակում շնորհեցիր մեզ կեանքի սրբութեան համար. սրանով պահի՛ր մեզ սուրբ եւ անարատ՝ Քո աստուածային խնամքով բնակուելով մեր մէջ:*

*Հովուի՛ր մեզ Քո սուրբ եւ բարեւէր կամքի անդաստանում, որով պաշտպանուելով սատանայի ամէն տեսակ պատերազմներից՝ արժանի լինենք լսելու միայն Քո ձայնը, հետեւելու միայն Քեզ՝ քաջաղթ եւ ճշմարիտ Հովուիդ, եւ Քեզանից ստանալու պատրաստուած տեղը երկնքի արքայութեան մէջ, Աստուա՛ծ մեր եւ Տէ՛ր մեր եւ Փրկի՛չ Յիսուս Քրիստոս, որ օրհնեալ ես Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

*Խաղաղութիւն բոլորին:*

*Անքնին, անհաս, Երբեակ Ինքնութեանդ՝ արարիչ, ընդունող եւ անբաժանելի միասնական Սուրբ Երրորդութեանդ, վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտենից. ամէն:*

*Եւ քահանան լուսնում է սկիիը եւ ձեռքերը, սպա դնում սաղասարդը եւ հագնում կօշիկները:*

*Եւ սպա բացում են վարագոյրը:*

## **ԱՐՁԱԿՈՒՄ**

### **Աղօթք ստեանում**

*Եւ սպա քահանան ձեռքն է վերցնում սուրբ Աւերարանը, երեք անգամ երկրպագելով համբուրում սուրբ Սեղանը, որից յետոյ սարկաագների հետ իջնելով արեան՝ բարձրաձայն ստում է այս աղօթքը.*

Աղօթք սրբոյն Ոսկերերանի

Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զՔեզ, Տէ՛ր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի Քեզ.

Դպիրքն.

Օրհնեալ է Աստուած:

— Կեցո՛ղ զժողովուրդս Քո եւ օրհնեա՛ զժառանգութիւնս Քո. զլրումն Եկեղեցւոյ Քոյ պահեա՛:

Դպիրքն.

Ամէն:

— Սրբեա՛ զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան Քոյ, Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ Քով եւ մի՛ թողուր զյուսացեալս ի Քեզ:

Դպիրքն.

Ամէն:

— Զխաղաղութի՛ւն պարգեւեա ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից եւ զինուորեալ մանկանց նոցին եւ ամենայն ժողովրդեանս:

Դպիրքն.

Ամէն:

— Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալք առ ի Քէն, որ ես Հայր լուսոյ, եւ Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ դպիրքն ասացէն երիցս.

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Եւ քահանայն դարձցի առ ժողովուրդն եւ ասացէ ի ձայն.

Կատարումն Օրինաց եւ Մարգարէից Դու ես, Քրիստո՛ս Աստուած Փրկիչ մեր, որ լցեր զամենայն Հայրակամ տնօրէնութիւնս Քո. լի՛ց եւ զմեզ Հոգւովդ Քով Սրբով:

Սուրբ [Յովհանն] Ոսկեբերանի աղօթքը

**Տէ՛ր, որ օրհնում ես Քեզ օրհնողներին եւ սուրբ ես դարձնում Քեզ յուսացողներին.**

Դպիրները.

**Օրհնեալ է Աստուած:**

— Կեանք տուր Քո ժողովրդին եւ օրհնի՛ր Քո ժառանգութիւնը. պահպանի՛ր Քո Եկեղեցու ամբողջութիւնը:

Դպիրները.

**Ամէն:**

— Սրբի՛ր սրանց, ովքեր սիրով ողջունեցին Քո տան վայելչութիւնը, Դու փառաւորի՛ր մեզ Քո աստուածային զօրութեամբ եւ մի՛ թող Քեզ յուսացողներին:

Դպիրները.

**Ամէն:**

— Խաղաղութի՛ւն պարգեւիր ողջ աշխարհին, եկեղեցիներին, քահանաներին, քրիստոնեայ թագաւորներին, նրանց զինուորներին եւ այս ամբողջ ժողովրդին:

Դպիրները.

**Ամէն:**

— Քանզի բոլոր բարի շնորհները եւ կատարեալ պարգեւները ի վերուստ են իջնում՝ Քեզանից, որ լոյսի Հայրն ես, եւ Քեզ վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ դպիրներն ասում են երեք անգամ.

**Տիրոջ անունը թող օրհնեալ լինի այսուհետ մինչեւ յաւիտեան:**

Եւ քահանան շրջում է դէպի ժողովուրդը եւ բարձրաձայն ասում.

**Դու ես լրումը Օրէնքի եւ Մարգարէների, Քրիստո՛ս Աստուած Փրկիչ մեր, որ կատարեցիր Քո բոլոր Հայրակամ տնօրէնութիւնները. լցրո՛ւ մեզ Քո Սուրբ Հոգով:**



**Վերջին Աւետարան**

Սարկաւագն.

**Օրթի:**

Քահանայն.

† *Խաղաղութիւն ամենեցուն:*

Դպիրքն.

*Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սարկաւագն.

*Երկիւղածութեամբ լուարո՛ւք:*

Սարկաւագն.

*Սրբոյ Աւետարանիս [Յիսուսի Քրիստոսի] որ ըստ Յովհաննու:*

Դպիրքն.

*Փա՛ռք քեզ, Տէ՛ր Աստուած մեր:*

Սարկաւագն.

*Պռոսխումէ:*

Դպիրքն.

*Ասէ Աստուած:*

Քահանայն.

*Ի Հօրէ լուսոյ.*

Յովհ. Ա 1—14

*Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ Նովաւ եղեւ, եւ առանց Նորա եղեւ եւ ոչ ինչ, որ ինչ եղեւն: Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան. եւ Լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, եւ խաւար Նմա ոչ եղեւ հասու:*

*Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս. սա եկն ի վկայութիւն, զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքին*

**Վերջին Աւետարան**

Սարկաւագր.

*Ոտքի՛:*

Քահանան.

† *Խաղաղութիւն բոլորին:*

Դպիրները.

*Եւ քո հոգուն:*

Սարկաւագր.

*Երկիւղածութեամբ լսէ՛ք:*

Սարկաւագր.

*[Յիսուս Քրիստոսի] սուրբ Աւետարանն ըստ Յովհաննէսի:*

Դպիրները.

*Փա՛ռք քեզ, Տէ՛ր Աստուած մեր:*

Սարկաւագր.

*Ուշադրութի՛ւն:*

Դպիրները.

*Ասում է Աստուած:*

Քահանան.

*Լոյսի Հօրից.*

Յովհ. Ա 1—14

*Ի սկզբանէ էր Բանը, եւ Բանն Աստուծոյ մօտ էր, եւ Բանն Աստուած էր: Նա ի սկզբանէ Աստուծոյ մօտ էր: Ամէն ինչ Նրանով եղաւ, եւ առանց Նրա չեղաւ եւ ոչինչ, որ եղել է: Նրանով էր կեանքը, եւ կեանքը լոյսն էր մարդկանց. եւ Լոյսը խաւարի մէջ լուսաւորում է, եւ խաւարը Նրան չտիրեց:*

*Կար մի մարդ՝ Աստուծոց առաքուած, նրա անունը՝ Յովհաննէս. սա եկաւ վկայութեան համար, որպէսզի վկայի լոյսի մասին, որ*

Հաւատասցեն նովաւ: Ոչ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն: Էր Լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ: Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զՆա ոչ ծանեաւ: Յիւրսն եկն, եւ իւրքն զՆա ոչ ընկալան: Իսկ որք ընկալան զՆա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց Հաւատասցեն յանուն Նորա, ոյք ոչ յարենէ եւ ոչ ի կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան: Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս Նորա, զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ:

Դպիրքն.

Փա՛ռք Քեզ, Տէ՛ր Աստուած մեր:

Մարկաւագն.

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան Իւրոյ:

Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

Քահանայն.

Պահպանեա՛ զմեզ, Քրիստո՛ս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւդ Քով ի խաղաղութեան. փրկեա՛ յիրեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն. արժանաւորեա՛ զոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

բոլորը նրա միջոցով հաւատան: Նա՛ չէր լոյսը, այլ առաքուած էր, որ վկայի լոյսի մասին: Կա՛ր ճշմարիտ Լոյսը, որ լուսաւորում է աշխարհ եկող ամէն մարդու: Նա աշխարհում էր, աշխարհը Նրանով եղաւ, եւ աշխարհը Նրան չճանաչեց: Իւրայինների մօտ եկաւ, բայց իւրայինները Նրան չընդունեցին: Իսկ ովքեր ընդունեցին Նրան՝ Իր անուանը հաւատացողներին, իշխանութիւն տուեց Աստուծոյ որդիներ լինելու, ովքեր ո՛չ արիւնից, ո՛չ մարմնի կամքից, ո՛չ մարդու կամքից, այլ Աստուծոց ծնուեցին: Եւ Բանը մարմին եղաւ եւ բնակուեց մեր մէջ, եւ տեսանք Նրա փառքը, փառքը որպէս Միածնի՝ Հօրից, լի շնորհով ու ճշմարտութեամբ:

Դպիրները.

Փա՛ռք Քեզ, Տէ՛ր Աստուած մեր:

Սարկաւազը.

Սուրբ խաչով աղաչենք Տիրոջը, որ սրանով փրկի մեզ մեղքից եւ կեանք տայ Իր ողորմութեան շնորհով:

Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեա՛նք տուր եւ ողորմի՛ր:

Քահանան.

Քրիստո՛ս Աստուած մեր, խաղաղութեան մէջ պահպանի՛ր մեզ Քո սուրբ եւ պատուական խաչի հովանու ներքոյ. փրկի՛ր տեսանելի եւ անտեսանելի թշնամուց. արժանաւորի՛ր գոհութեամբ փառաւորել Քեզ Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

**Օրհնութիւն արձակման**

Սարկաւագն.

[Սաղմ. ԼԳ]

*Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն Նորա ի բերան իմ:*

Եւ քահանայն խաչակնքեսցէ ի վերայ ժողովրդեանն եւ ասասցէ քարձր.

*Օրհնեա՛լք եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն: Երթա՛յք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն:*

Եւ դպիրքն ասասցեն.

Սաղմ. ԼԳ

*Ի Տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք եւ ուրախ եղիցին:*

*Մե՛ծ արարէք զՏէր ինեւ, եւ բարձր արասցուք զանուն Նորա ի միասին:*

*Խնդրեցի ի Տեառնէ, եւ լուաւ ինձ, յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս:*

*Մատի՛ք առ Տէր եւ առէ՛ք զլոյս, եւ երեսք ձեր մի՛ ամաչեսցեն:*

*Այս աղքատ կարգաց առ Տէր, եւ Տէր լուաւ սմա, յամենայն նեղութենէ սորա փրկեաց զսա:*

*Բանակք հրեշտակաց Տեառն շուրջ են զերկիւղածովք Իւրովք եւ պահեն զնոսա:*

*Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք, զի քաղցր է Տէր. երանեալ է այր, որ յուսայ ի Նա:*

*Երկերո՛ւք ի Տեառնէ, ամենայն սո՛ւրբք Նորա, զի ոչինչ է պակասութիւն երկիւղածաց Նորա:*

*Մեծամեծք աղքատացան եւ քաղցեան, բայց ոչք խնդրեն զՏէր, մի՛ պակասեսցի ի նոցանէ ամենայն բարութիւն:*

*Եկա՛յք, որդեա՛կք իմ, եւ լուարո՛ւք ինձ, եւ զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ:*

*Ո՞վ է մարդ, որ կամի զկեանս, սիրէ զաւուրս իւր տեսանել ի բարութեան:*

## Արձակման օրհնություն

Սարկաւագր.

[Սաղմ. 19]

*Կ'օրհնեմ Տիրոջը ամէն ժամ, ամէն ժամ Նրա օրհնութիւնն իմ բերանում կը լինի:*

Եւ քահանան խաչակնքում է ժողովրդին եւ բարձրաձայն ասում.

*Օրհնեա՛լ լինէ՛ք Սուրբ Հոգու շնորհով: Գնացէ՛ք խաղաղութեամբ, եւ Տէրը լինի ձեզ բոլորիդ հետ. ամէն:*

Եւ դպիրները շարունակում են սաղմոսը].

Սաղմ. 19

*Իմ անձը Տիրոջով թող պարծենայ, հեղերը թող լսեն եւ ուրախանան:*

*Մեծարեցէ՛ք Տիրոջն ինձ հետ, եւ մեծարենք Նրա անունը միասին: Խնդրեցի Տիրոջից, եւ Նա լսեց ինձ եւ իմ բոլոր նեղութիւններից փրկեց ինձ:*

*Մօտեցէ՛ք Տիրոջը եւ առէ՛ք լոյսը, եւ ձեր երեսը թող չամաչի:*

*Այս աղքատը կանչեց Տիրոջը, եւ Տէրը լսեց նրան ու փրկեց նրան բոլոր նեղութիւններից:*

*Տիրոջ Հրեշտակների բանակները Նրա երկիւղածների շուրջ են եւ պահպանում են նրանց:*

*Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք, թէ որքան քաղցր է Տէրը. երանելի է այն մարդը, որ յոյսը դրել է Նրա վրայ:*

*Երկիւղէ՛ք Տիրոջից, Նրա բոլոր սուրբեր, քանզի Նրանից երկիւղածները ոչ մի պակասութիւն չունեն:*

*Հարուստներն աղքատացան ու քաղցեցին, բայց ովքեր փնտրում են Տիրոջը, նրանցից ոչ մի բարիք չի պակասի:*

*Եկէ՛ք, որդեակներ՛ր իմ, եւ լսեցէ՛ք ինձ, եւ ես կ'ուսուցանեմ ձեզ Տիրոջ երկիւղը:*

*Ո՞վ է մարդն այն, որ ցանկանում է կեանքը եւ սիրում իր օրերը բարութեան մէջ տեսնել:*

*Լռեցո՛ղ զլեզու քո ի չարութենէ, եւ շրթունք քո մի՛ խօսեսցին  
զնենգութիւն:*

*Խոտորեա՛ ի չարէ եւ արա՛ զբարի, խնդրեա՛ զխաղաղութիւն եւ  
ե՛րթ զհետ նորա:*

*Աչք Տեառն ի վերայ արդարոց, եւ ականջք Նորա ի վերայ աղօ-  
թից նոցա:*

*Երեսք Տեառն ի վերայ չարագործաց՝ սատակել յերկրէ գլխա-  
տակս նոցա:*

*Կարգացին արդարք առ Տէր, եւ Տէր լուաւ նոցա, յամենայն նե-  
ղութենէ նոցա փրկեաց զնոսա:*

*Մերձ է Տէր առ աշխարհ, որք մաշեալ են սրտիւք, եւ զխոնարհս  
հոգևով կեցուցանէ:*

*Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա  
Տէր:*

*Եւ պահէ զամենայն ոսկերս նոցա, եւ մի ի նոցանէ մի՛  
փշրեսցի:*

*Մահ մեղաւորին չար է. բայց որ ատէ զարդարն՝ զղջացի:*

*Փրկէ Տէր զանձինս ծառայից Իւրոց. մի՛ զղջացին ամենեքեան,  
ոյք յուսացեալ են ի Նա:*

*Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.*

*Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ ընդ սաղմոսելն դպրաց՝ քաշխեսցի նշխար: Եւ յասարմանն քահա-  
նայն դարձցի յարեւելս եւ երկիրպագտ առաջի սրբոյ Սեղանոյն երիցս  
եւ ասացտ.

*Տէ՛ր Յիսուս Աստուած, ողորմեա՛ ինձ:*

Եւ մրեալ յասանդարունն՝ մերկասցի ի զգեարուցն եւ երթիցտ խաղա-  
ղութեամբ:

*Լեզուդ պահել՝ը չարութիւնից, եւ շուրթերդ թող նենգութիւն չխօսեն:*

*Խոստափել՝ը չարից ու բարի՝ք գործիր, խաղաղութիւնն փնտրիր եւ դրա՛ն հետեւիր:*

*Տիրոջ աչքերն ուղղուած են դէպի արդարները, իսկ Նրա ահանջները՝ դէպի նրանց աղօթքը:*

*Տիրոջ հայեացքը չարագործների վրայ է՝ նրանց յիշատակն աչխարհից ջնջելու համար:*

*Արդարները կանչեցին Տիրոջը, եւ Տէրը լսեց նրանց ու փրկեց նրանց իրենց բոլոր նեղութիւններից:*

*Տէրը մերձ է նրանց, որոնց սիրտը փշրուած է, եւ Նա փրկում է հոգով խոնարհներին:*

*Արդարների նեղութիւնները շատ են, Տէրն ազատում է նրանց այդ բոլորից:*

*Պահպանում է նրանց բոլոր ոսկորները, եւ դրանցից ոչ մէկը չի փշրուելու:*

*Մեղաւորի մահը չարաչար է, իսկ արգարին ատողը կը գղջայ:*

*Տէրը փրկում է Իր ծառաներին, եւ բոլոր նրանք, որ յոյս են դնում Նրա վրայ, չեն գղջայ:*

*Փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն.*

*Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ դպիրների սաղմուտելու ժամանակ նշխար է քաշխում: Իսկ ասարփին քահանան շրջում է դէպի արեւելք եւ երեք անգամ երկրպագում սուրբ Սեղանին՝ ասելով.

*Տէ՛ր Յիսուս Աստուած, ողորմի՛ր ինձ:*

Եւ մրնելով ասանդարուն՝ հանում է զգեարները եւ գնում խաղաղութեամբ:



ՅԱՆԵԼՈՒԱԾ Ա

### ՊԱՇՏՕՆ ՀՈԳԵՂԱՆԳՍԵԱՆ

**Որ կատարի զկնի «Որ օրհնես զայնոսիկ» աղօթից, յաւարտ սուրբ Պատարագի, ըստ խնդրանաց ազգականաց կամ բարեկամաց ննջեցելոց ի Քրիստոս:**

*Սարկաւագն.*

*Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ր եւ ողորմեա՛:*

*Քահանայն դիցէ զխունկ ի բուրվառն եւ ասացէ.*

*Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

*Դպիրքն երգեսցեն.*

*Շարական հանգարեան Ճաշու ԲԿ*

*Որ յանէից ստեղծող գոյից արարչակից Հօր Բանդ Աստուած, թողութի՛ւն շնորհեա ննջեցելոց Քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:*

*Որ ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար ի սուրբ Կուսէն, թողութի՛ւն շնորհեա ննջեցելոց Քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:*

*Որ ի խաչին անշնչացար, զմահու լուծեր զիշխանութիւն, թողութի՛ւն շնորհեա ննջեցելոց Քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:*

*Որ պսակիչդ ես Քոց սրբոց եւ անվախճան բարեաց բաշխող, թողութի՛ւն շնորհեա ննջեցելոց Քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:*

ՅԱՆԵԼՈՒԱԾ Ա

**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ԿԱՐԳ**

**Որ կատարում է «Տէ՛ր, որ օրհնում ես» աղօթքից յետոյ՝  
սբ Պատարագի աւարտին, ի Քրիստոս ննջածների  
ազգականների կամ բարեկամների խնդրանքով:**

*Սարկաւագը.*

*Դարձեալ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը. քնդունի՛ր,  
կեանք տուր եւ ողորմի՛ր:*

*Քահանան բուրվատի մէջ խունկ է դնում եւ ասում.*

*Օրհնութիւն եւ փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

*Դպիրները երգում են.*

*Ճաշու հանգստեան շարական ԲԿ*

*Դու, որ ոչնչից ստեղծեցիր գոյութիւնները, Հօրն արարչակից  
Բանդ Աստուած, թողութի՛ւն շնորհիր Քո ննջեցեալ ծառաներին,  
երբ դաս դատելու նրանց, ում ստեղծեցիր անարատ ձեռքերովդ:*

*Դու, որ ուղարկուեցիր Հօրից ու մարմնացար սուրբ Կոյսից, թո-  
ղութի՛ւն շնորհիր Քո ննջեցեալ ծառաներին, երբ դաս դատելու  
նրանց, ում ստեղծեցիր անարատ ձեռքերովդ:*

*Դու, որ խաչի վրայ անչնչացար, մահուան իշխանութիւնը խա-  
փանեցիր, թողութի՛ւն շնորհիր Քո ննջեցեալ ծառաներին, երբ  
դաս դատելու նրանց, ում ստեղծեցիր անարատ ձեռքերովդ:*

*Դու, որ Քո սուրբերի պսակիչն ես եւ անվախճան բարիքների  
բաշխող, թողութի՛ւն շնորհիր Քո ննջեցեալ ծառաներին, երբ դաս  
դատելու նրանց, ում ստեղծեցիր անարատ ձեռքերովդ:*

Եւ կամ՝ շարական հոգեհանգստեան ԴՁ

Գթա՛, Տէր, ի հոգիս մեր ննջեցելոց եւ յիշեա՛ որորմութեամբ, քանզի գինք սուրբ արեան Քո են, ի յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռեալքն եւ կան առաջի ահաւոր Քո բեմին:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Զլուսաւորեալքս ծննդեամբ սուրբ Աւագանին մի՛ բարկութեամբ խրատեր եւ մի՛ սրտմտութեամբ Քո յանդիմաներ, ի յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռեալքն եւ կան առաջի ահաւոր Քո բեմին:

Դպիրքն.

Սաղմոս ՃԻԹ

Ի խորոց կարգացի առ Քեզ, Տէր. Տէ՛ր, լո՛ւր ձայնի իմում:  
Եղիցին ահանջք Քո ի լսել գձայն աղօթից իմոց:

Թէ գանօրէնութիւնս իմ քննես, Տէր, Տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի Քո, գի ի Քէն է քաւութիւն:

Վասն անուան Քո համբերի, Տէր, համբեր անձն իմ բանի Քում.  
յուսացաւ անձն իմ ի Տէր:

Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ, ի պահէ առաւօտու յուսացաւ  
Իսրայէլ ի Տէր:

Ի Տեառնէ է որորմութիւն բազում, ի Նմանէ է փրկութիւն, եւ Նա  
փրկեաց զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա:

Սարկաւագն.

Ալէլուիա: Օրթի:

Քահանայն.

† Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագն.

Երկիւղածութեամբ լուարուք:

Եւ կամ՝ հոգեհանգստեան շարական ՌՁ

Գթա՛, Տէր, մեր ննջեցեալների հոգիներին եւ յիշի՛ր ողորմութեամբ, քանզի Քո սուրբ արեան գինն են, երբ փողի հրաշալի ձայնից յառնեն մեռեալներն ու կանգնեն Քո ահաւոր բեմի առաջ:

Փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սուրբ Աւագանի ծննդեամբ լուսաւորուածներս բարկութեամբ մի՛ խրատիր եւ ցասամբդ մի՛ յանդիմանիր, երբ փողի հրաշալի ձայնից յառնեն մեռեալներն ու կանգնեն Քո ահաւոր բեմի առաջ:

Դպիրները.

Սաղմոս ՃԻԹ

[Սրտիս] խորքից կանչեցի Քեզ, Տէ՛ր. Տէ՛ր, լսի՛ր իմ ձայնը: Թող աղանջներդ լսեն իմ աղօթքի ձայնը:

Թէ անօրինութիւններս քննես, Տէր, Տէ՛ր, իսկ ո՞վ կարող է կանգնել Քո առաջ, քանզի Քեզնից է քաւութիւնը:

Քո անուան համար համբերեցի, Տէր, հոգիս համբերեց Քո խօսքին, հոգիս յոյսը Տիրոջ վրայ դրեց:

Առաւօտից մինչեւ երեկոյ, առաւօտից Իսրայէլը Տիրոջ վրայ յոյսը դրեց:

Տիրոջից է մեծ ողորմութիւնը, Նրանից է փրկութիւնը, եւ Նա փրկեց Իսրայէլը բոլոր նեղութիւններից:

Սարկաւագը.

Ալէլուիա: Ոտքի՛:

Քահանան.

† Խաղաղութիւն բոլորին:

Դպիրները.

Եւ քո հոգուն:

Սարկաւագը.

Երկիւղածութեամբ լսէ՛ք:

Քահանայն.

**Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի:**

Դպիրքն.

**Փա՛ռք Քեզ, Տէ՛ր Աստուած մեր:**

Սարկաւագն.

**Պռոսխուժէ:**

Դպիրքն.

**Ասէ Աստուած:**

Քահանայն.

(ԲԿ եւ ԴԿ. Մարթ. ԺԱ 25—30)

**Տէրն մեր Յիսուս Քրիստոս.**

**Յայնմ ժամանակի... բեռն իմ փոքրոզի:**

Աւերարանք որ զկնի՝ ընթերցցին փոխանակ վերնոյն՝ ըսր ձայնից.

ԲԶ եւ ԴԶ. Մարկ. Դ 26—34

ԱԿ եւ ԴԿ. Դուկ. ԺԲ 32—40

ԱԶ եւ ԴԶ. Յովհ. ԺԲ 24—26:

Ապա դպիրքն երգեսցեն ըսր ձայնից զմի ի քանց «Աստուած անւեղ» երգոյն, զոր արարեալ է Տեառն Ներսիսի վասն ննջեցելոց ի Քրիստոս:

ԲԿ. ԴԿ.

**Գերագոյն շնորհաց բաշխող երկնաւորաց եւ երկրայնոց,  
Կեա՛նք եւ կենաց տուող Հոգի՛, Հօր եւ Որդւոյ արարչակից,  
Խնդրե՛մք ի Քէն, աղբի՛ւր բարեաց, արբուցանող ծարաւեաց,  
Ողորմեա՛ Քո ստեղծուածոյս՝ յուսով ի Քեզ ննջեցելոյս:**

ԲԶ. ԴԶ.

**Կեա՛նք ի Կենաց, Լո՛յս ի Լուսոյ, որ ստեղծեր զմեզ ի Հոգոյ,  
Նորոգեցեր դարձեալ կրկին ծննդեամբ սրբոյ Աւագանին,  
Զոր կեցուցեր շնորհիւ Քոյին ի մահուանէն այն առաջին,  
Ի յօթեւանս Հօր Քոյ լուսոյ զննջեցեալս մեր հանգո:**

Քահանան.

**Յիսուս Քրիստոսի սուրբ Աւետարանը՝ ըստ Մատթէոսի:**

Դպիրները.

**Փա՛ռք Քեզ, Տէ՛ր Աստուած մեր:**

Սարկաւազը.

**Ուշադրութի՛ւն:**

Դպիրները.

**Ասում է Աստուած:**

Քահանան.

(ԲԿ եւ ԴԿ. Մարթ. ԺԱ 25—30)

**Մեր Տէր Յիսուս Քրիստոսը.**

**Այդ ժամանակ... Իմ բեռը՝ թեթեւ:**

Հերեւեալ ստեղծարանական հայրուածներն ընթերցում են վերորերեւալի փոխարէն՝ ըստ ձայների.

ԲԶ եւ ԴԶ. Մարկ. Դ 26—34

ԱԿ եւ ԴԿ. Դուկ. ԺԲ 32—40

ԱԶ եւ ԴԶ. Յովհ. ԺԲ 24—26:

Ապա դպիրները, ըստ ձայնի, երգում են ի Քրիստոս ննջեցեալների համար Տէր Եւրսէս [Եւորիստոս] սրբեղծած «Աստուած անեղ» երգի փնտրից մէկը:  
ԲԿ. ԴԿ.

**Գերագոյն շնորհի՛ բաշխող՝ երկնայիններին ու երկրայիններին,  
Կեանք եւ կենսատո՛ւ Հոգի, Հօրն ու Որդուն արարչակից,  
Խնդրում ենք Քեզ, բարիքների՛ աղբիւր, ծարաւների՛ն յագեցնող,  
Ողորմի՛ր Քո այս ստեղծուածին՝ ի Քեզ յոյսով ննջածին:**

ԲԶ. ԴԶ.

**Կեանք Կեանքից, Լո՛յս Լոյսից, որ ստեղծեցիր մեզ հողից,  
Նորոգեցիր վերստին սուրբ Աւագանի ծնունդով,  
Նրան, ում կեանք տուիր Քո շնորհով՝ [ազատելով] այն  
առաջին մահուանից,  
Մեր ննջեցեալի՛ն, հանգի՛ստ պարգեւիր Քո լոյս Հօր օթեւաններում:**

ԱԿ. ԳԿ.

*Ուրախութեամբ զօրք երկնային յերկնից յերկիր իջանէին,  
Յորժամ յարեար ի մեռելոց, լոյս ծագեցար  
արարածոց.  
Սուրբ յարութեամբ Քո կենարար յարո՛ր զսա ի կեանս անմահ.  
Լի լապտերօք մո՛յժ յառազաստ ընդ իմաստուն սուրբ  
կուսանացն:*

ԱԶ. ԳԶ.

*Քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի Քէն, Տէ՛ր բարեգութ,  
Ընդ ննջեցեալսն հաւատով ընկա՛լ զմեզ նովին յուսով  
Յերուսաղէմ քաղաք վերին, յորում արդարքն ժողովին,  
Փառս վերերգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ Երբեակ  
Անճին:*

Եւ դպիրքն երգեսցեն.

*Ի վերին Երուսաղէմ՝ ի բնակարանս հրեշտակաց,  
Ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղանակերպ՝  
Ի դրախտին եղեմական պայծառացեալ արժանապէս.  
Ողորմա՛ծ Տէր, ողորմեա՛ Հոգւոցն մեր ննջեցելոց:*

Ապա քահանայն ասասցէ.

*Հոգւոցն հանգուցելոց, Քրիստո՛ս Աստուած, արա՛ հանգիստ եւ  
ողորմութիւն եւ մեզ՝ մեղաւորացս, շնորհեա՛ զթողութիւն յան-  
ցանաց:*

Սարկաւագն.

Քարոզ հոգեհանգստեան

*Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*

*Վասն հանգուցեալ Հոգւոցն աղաչեսցուք զՓրկիչն մեր Քրիս-  
տոս, զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ եւ զմեզ կեցուցէ շնոր-  
հիւ ողորմութեան Իւրոյ: Ամենակալ Տէր Աստուա՛ծ մեր, կեցո՛  
եւ ողորմեա՛:*

ԱԿ. ԳԿ.

Երկնային զօրքն ուրախութեամբ իջնում էր երկնքից երկիր,  
Երբ յարութիւն առար մեռելների միջից, որպէս լոյս ծագեցիր  
արարածներին.

Քո կենարար սուրբ յարութեամբ յարութի՛ւն տուր սրան անմահ  
կեանքի համար.

Լի լապտերով մտցրո՛ւ առագաստ իմաստուն սուրբ կոյսերի հետ:

ԱԶ. ԳԶ.

Քահանաներ եւ ժողովուրդ՝ հայցում ենք Քեզ, Տէ՛ր բարեգութ,  
Հաւատքով ննջածների հետ ընդունի՛ր մեզ նոյն յոյսով,  
Վերին քաղաք Երուսաղէմ, ուր արգարներն են ժողովւում,  
Փառաբանութիւն երգելու միշտ նրանց հետ Երրորդութեանդ  
Երեք Անձին:

Դպիրները երգում են.

Վերին Երուսաղէմում՝ հրեշտակների բնակարաններում,  
Ուր Ենովքն ու Եղիան ծերացել են աղաւնակերպ՝  
Եգեմական դրախտում պայծառացած արժանապէս,  
Ողորմած՝ Տէր, ողորմի՛ր մեր ննջեցեալների հոգիներին:

Ապա քահանան ասում է.

Հանգուցեալ հոգիներին, Քրիստո՛ս Աստուած, հանգիստ ու  
ողորմութի՛ւն պարգեւիր եւ մեզ՝ մեղաւորներու, յանցանքների  
թողութի՛ւն շնորհիր:

Սարկաւազը.

Հոգեհանգստեան քարոզ

Դարձեալ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը:

Հանգուցեալ հոգիների համար աղաչենք մեր Փրկիչ Քրիստո-  
սին, որ արգարների հետ դասի նրանց և մեզ կեանք տայ Իր  
ողորմութեան շնորհով: Ամենակալ Տէր Աստուած՝ մեր, կեանք  
տուր եւ ողորմի՛ր:



Քահանայն ասացէ.

Աղօթք հոգեհանգստեան

Տէ՛ր, ողորմեա, Տէ՛ր, ողորմեա, Տէ՛ր, ողորմեա:

Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ, անոխակա՛լ եւ բարեգուլթ, գլթա՛ Քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից Քոց: Յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութեան Քոյ, արա՛ արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց, դասաւորեալ պայծառացո՛ ընդ սուրբս Քո յաջակողմեան դասուն: Զի Դու ես Տէր եւ Արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց, եւ Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագն.

Քարոզ իսաշի

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան Իւրոյ:

Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

Քահանայն.

Աղօթք իսաշի

Պահպանեա՛ զմեզ, Քրիստո՛ս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւդ Քով ի խաղաղութեան. փրկեա՛ յերեւելի եւ յանրեւոյթ թշնամւոյն. արժանաւորեա՛ դոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ դարձեալ ասացէ.

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Եւ ասացեն.

Աղօթք Տէրունական

Հա՛յր մեր, որ յերկինս ես...

Քահանան ասում է.

Հոգեհանգստեան աղօթք

Տէ՛ր, ողորմիր, Տէ՛ր, ողորմիր, Տէ՛ր, ողորմիր:

Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ, անոխակա՛լ եւ բարեգուլթ, Քո արար-  
չական սիրով գլթա՛ Քո հանգուցեալ ծառաների հոգիներին:  
Յիշի՛ր Քո արքայութեան մեծ գալստեան օրը, արժանացրո՛ւ  
ողորմութեան եւ մեղքերի քաւութեան ու թողութեան, կարգիր ու  
պաշտօնացրո՛ւ սուրբերի հետ աջակողմեան դասում: Քանզի Դու  
ես ամէնքի Տէրն ու Արարիչը, ողջերի եւ մեռեալների դատաւորը,  
եւ Քեզ վայել են փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագր.

Խաչի քարոզ

Սուրբ խաչով աղաչենք Տիրոջը, որ սրանով փրկի մեզ մեղքից եւ  
կեանք տայ Իր ողորմութեան շնորհով:

Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեանք տուր եւ ողորմի՛ր:

Քահանան.

Խաչի աղօթք

Քրիստո՛ս Աստուած մեր, խաղաղութեան մէջ պահպանի՛ր մեզ Քո  
սուրբ եւ պատուական խաչի հովանու ներքոյ. փրկի՛ր տեսանելի  
եւ անտեսանելի թշնամուց. արժանաւորի՛ր գոհութեամբ փառա-  
ւորել Քեզ Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից. ամէն:

Դարձեալ ասում է.

Օրհնեալ է մեր Տէր Յիսուս Քրիստոսը. ամէն:

Եւ ասում են.

Տէրունական աղօթք

Հա՛յր մեր, որ երկնքում ես...

Մարկաւագն.

*Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւնն Նորա  
ի բերան իմ:*

Քահանայն.

Արձակումն

*Օրհնեա՛լք եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն: Երթա՛յք խա-  
ղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ: Ամէն:*

Եւ երթիցեն ի խաղաղութիւն:

Մարկաուզը.

*Կ'օրհնեմ Տիրոջը ամէն ժամ, ամէն ժամ Նրա օրհնութիւնն իմ բերանում կը լինի:*

Քահանան.

Արձակում

*Օրհնեա՛լ լինէ՛ք Սուրբ Հոգու շնորհով: Գնացէ՛ք խաղաղութեամբ,  
եւ Տէրը լինի ձեզ բոլորի՛զ հետ. ամէն:*

Եւ խաղաղութեամբ հեռանում են:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ

**ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆՔ**

Ծննդեան, Աւերտաց, Վարդապետի եւ Աստուածածնի

Բազմութիւնք հրեշտակաց եւ զօրաց երկնաւորաց իջեալ ի յերկնից ընդ Միածին թագաւորին: Որք երգէին եւ ասէին. «Աս' է Որդին Աստուծոյ»: Ամենեքեան ասասցուք. «Ուրախ լերուք, երկի՛նք, եւ ցնծասցեն հիմունք աշխարհի: Զի Աստուածն յաւիտեանական ի յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուցէ զանձինս մեր»:

Մեծի հինգշաբաթի

Որ ի վերայ նստիս ի կռուս հրանիւթս քառակերպեանս, անճառելի Բանդ Աստուած, այսօր իջեալ ի յերկնայնոցն վասն Քոյ արարածոցս՝ յանձն առեր բազմիլ ընդ աշակերտսն: Եւ սերովբէքն եւ քերովբէքն հիացեալ զարմանային, եւ պետութիւնք վերին զօրացն սքանչացեալ աղաղակէին՝ ասելով. «Սուրբ, սուրբ, սուրբ, Տէ՛ր զօրութեանց»:

Յինանց եւ Խաչի

Ո՞վ է որպէս Տէր Աստուած մեր. խաչեցաւ վասն մեր, թաղեցաւ եւ յարեաւ. հաւատարիմ եղեւ յաշխարհի եւ համբարձաւ փառօք: Եկա՛յք, ժողովո՛ւրդք, զօրհնութիւն ընդ հրեշտակս երգեսցուք Նժա՛ ասելով. «Սուրբ, սուրբ, սուրբ ես, Տէ՛ր Աստուած մեր»:

Կիրակեից, Եկեղեցոյ, Հրեշտակաց

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր, Աստուած, զՔո սուրբ զԵկեղեցի: Հազարք հազարաց հրեշտակապետք կան առաջի Քո, եւ բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն զՔեզ, Տէ՛ր. եւ ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն ձայնիւ խորհրդականաւ. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց»:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ

## ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծննդեան, Աւերման, Վարդապատի եւ Աստուածածնի փօսերի

Հրեշտակների եւ երկնային զօրքերի բազմութիւնները երկնքից իջան Միածին Թագաւորի հետ: Երգում ու ասում էին. «Սա՛ է Աստուծոյ Որդին»: Ամէնքս ասենք. «Ուրա՛խ եղիր, երկի՛նք, եւ թող ցնծան աշխարհի հիմքերը: Քանզի յաւիտենական Աստուած երեւաց երկրում եւ շրջեց մարդկանց հետ՝ փրկելու մեր հոգիները»:

Ասագ հինգշաբթի օրուայ

Որ նստում ես հրանիւթ, քառադէմ կառքում, անճառելի՛ Բանդ Աստուած, այսօր երկնայինների մօտից իջար մեզ՝ Քո արարածների համար եւ յանձն առար բազմել աշակերտներիդ հետ: Սերովբէներն ու քերովբէները հիացել զարմացել էին, եւ վերին զօրքերի պետութիւնները սքանչացած յաղապարհում էին՝ ասելով. «Սուրբ, սուրբ, սուրբ, զօրութիւնների՛ Տէր»:

Յինունքի եւ Խաչի

Ո՞վ է մեր Տէր Աստուծոյ նման. իսաչուեց մեզ համար, թաղուեց ու յարութիւն առաւ. հաւատարիմ եղաւ աշխարհում եւ համբարձուեց փառքով: Եկէ՛ք, ժողովուրդներ՛, հրեշտակների հետ օրհնութի՛ւն երգենք Նրան՝ ասելով. «Սուրբ, սուրբ, սուրբ ես, Տէ՛ր Աստուած մեր»:

Կիրակիների, Եկեղեցու, Հրեշտակների

Աստուա՛ծ, հրեշտակային կարգաւորութեամբ լցրիր Քո սուրբ Եկեղեցին: Բազմահազար հրեշտակապետեր կան Քո առջեւ, եւ բազմաբերւր հրեշտակներ ծառայում են Քեզ, Տէ՛ր. նաեւ մարդկանցից հաճեցիր օրհնութիւն ընդունել՝ խորհրդական երգով. «Սու՛րբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութիւնների՛»:

*Պահոց եւ ննջեցելոց*

*Վասն յիշատակի հանգուցելոցն ընկա՛լ, Հա՛յր, սո՛ւրբ, մարդա-  
սէ՛ր, զպատարագս: Եւ համարեա՛ զհոգիս նոցա ի թիւ սրբոց Քոց  
յարքայութեանդ երկնից: Մանաւանդ զի հաւատով մատուցուք  
զպատարագս, հաշտեսցի Աստուածութիւնդ եւ հանգուցէ զհո-  
գիս նոցա:*

*Մարտիրոսաց*

*Սրբութի՛ւն սրբոց, մեծ ես եւ ահաւոր: Եւ զինուորութիւնք հրեշ-  
տակացն օրհնեն զՔեզ եւ ասեն. «Փա՛ւք ի բարձունս Աստուծոյ  
եւ յերկիր խաղաղութի՛ւն»:*

*Մարգարէից, սուսբելոց եւ հայրապետաց*

*Ամենակալ ես, Տէ՛ր զօրութեանց, որ թագաւորդ ես յաւիտենից:  
Որ նստիս յերկնից ի յերկինս եւ լոյս ծագես յարարածս Քո: Որ  
խոնարհութեամբ իջեր ի յերկիր, Քեզ պատարագս մատուցանեմք:  
Եւ սուրբ զանունդ Քո փառաւորեմք, Տէր, որ պսակիչդ ես Քոց  
սրբոց (այս անուն): Վասն զի սոքա են մեզ բարեխօս, Տէ՛ր ամե-  
նակալ, ի Քու՛մ յարքայութեանդ:*

*Պահքի և ննջեցեալների*

*Հանգուցեալների յիշատակի համար ընդունի՛ր այս պատարագը, Հա՛յր, սո՛ւրբ ու մարգասէր: Եւ նրանց հոգիները Քո սուրբերի թևո՛ւմ կարգիւր երկնքիդ արքայութեան մէջ: Մանաւանդ [չնորհի՛ր] հաւատով մատուցել այս պատարագը, որ Աստուածութիւնդ հաշտուի եւ նրանց հոգիներին հանգիստ պարգեւի:*

*Մարտիրոսների*

*Սրբութի՛ւն սրբերի, մեծ ես ու ահաւոր: Հրեշտակային զօրքերն օրհնում են Քեզ եւ ասում. «Փա՛ռք Աստծուն բարձունքներում եւ խաղաղութի՛ւն՝ երկրում»:*

*Մարգարէների, առաքեալների և հայրապետների*

*Ամենակալ ես, Տէ՛ր զօրութիւնների, Դու, որ թագաւոր ես յաւիտեանական: Որ նստում ես երկինքների երկնքում եւ լոյս ծագեցնում Քո արարածների վրայ, որ խոնարհութեամբ իջար երկիր, Քեզ պատարագներ ենք մատուցում: Եւ փառաւորում ենք Քո սուրբ անունը, Տէր, որ պսակում ես Քո (այսինչ անուն) սուրբերին: Քանզի նրանք բարեխօս են մեզ համար, Տէ՛ր ամենակալ, Քո արքայութեան մէջ:*



### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Երախայ – դեռ չմկրտուած, բայց մկրտութեան պատրաստուող անձնաւորութիւն:
2. Տես եբր. Ժ 1 եւն:
3. «Գրիգոր» կամ «Գրիգորիս» անունով մի քանի հայրապետերը՝ Գրիգոր Բ Վկայասէրից սկսած: Տես Շնորհք արք. Գալուստեան, Հայագգի սուրբեր, 1997, էջ 289:
4. Հաւանաբար, Ներսէս Լամբրոնացին եւ նրա որոշ մեծանուն աշակերտները, ինչպէս օր.՝ Գրիգոր Սկեւռացին: Տես «Գանձասար», Բ, 1992, էջ 305:
5. Գրաբարեան բնագրի «Ի Սրբութիւն սրբոց» խօսքի եւ դրա աշխարհաբար թարգմանութեան միջեւ առկայ իմաստային տարբերութեան պատճառը Հայոց Եկեղեցու Պատարագի գրաբարեան բնագրի՝ դարերի ընթացքում ընդունած փոփոխութիւններն ու աղաւաղումներն են: Նախնական տարբերակում «ի» նախդիրն այս խօսքում բացակայել է: Խոսքով Անձեւացու՝ Ժ դարում գրած «Մեկնութիւն սրբոյ պատարագի» երկում (Ժ դ.) այդ խօսքի փոխարէն առկայ է հետեւեալը՝ «Սրբութիւնք սրբոց վայելին» (տես *Commentary on the Divine Liturgy by Xosrov Anjevac'i; translated with an introduction by S. Peter Cowe; Armenian Church Classics, St Vartan Press, 1991, էջ 208*), որը իմաստով համապատասխանում է յունարէն բնագրին:

## ԵՐԳ ԵՐԳՈՑ

### ՀԱՆԴԵՐՁ ՄԵԿՆՈՒԹԵԱՄԲՆԱԽՆԵԱՑ

#### ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Աստուծոյ խօսքը, բխելով Արարչի անքննելի էութեան խորքերից, նորոգութեան, սրբութեան եւ կատարելութեան է կոչում արարածին: Այն Տիրոջ կենդանի գորութիւնն է, որ մարդուն անվերջօրէն մօտեցնում է աստուածային անսահմանելիութեանը՝ իր էութեամբ մնալով խորհրդաւոր եւ անըմբռնելի, քանզի պատուած է աստուածային թաքնախորհուրդ լութեամբ եւ անպատմելիութեամբ: Աստուծոյ խօսքի բուն նպատակը փրկագործութիւնն է. Քրիստոս մարդու փրկութիւնը սկզբնաւորող արքայութեան խօսքը նմանեցրեց ցորենի հատիկի, որ սերմանւում է մարդկային հոգիների անդաստանում [Մատթ. ԺԳ 4–8]. Աստուծոյ խօսքի սերմից ծնւում է մարդու հաւատքն առ Աստուած [Հռոմ. Ժ 17], այն կենդանի առաջնորդութիւն է հոգեւոր կեանքի ողջ ընթացքում [Սաղմ. ՃԺԸ 105, 170. Մատթ. Դ 4. Եփես. Զ 17. Ա Տիմ. Դ 5], որի արդիւնքն Աստուած պահանջելու է վախճանաբանական հունձքի ժամանակ [Մատթ. ԺԳ 30]:

Աստուածաշունչ գրքերը կամ Սուրբ գրքերն<sup>1</sup> Աստուծոյ խօսքի գրաւոր վկայութիւններն են, որոնք, ըստ ուղղափառ դաւանութեան, անմիջական արտայայտութիւնն են Սուրբ Հոգու տնօրինական նախախնամութեան. «Հաւատում ենք եւ Սուրբ Հոգուն՝ անեղին եւ կատարելին, որ խօսեց Օրէնքում, Մարգարէներում եւ Աւետարաններում...»<sup>2</sup>: Սուրբ Հոգին դարեր շարունակ մարգարէների բերանով յայտնել է Աստուծոյ փրկութեան մասին՝ Քրիստոսի Աւե-

---

1 Աստուածաշունչ գրքերի [Բ Տիմ. Գ 16] կամ Սուրբ գրքերի [Բ Տիմ. Գ 15. Հռոմ. Ա 2] ամբողջութիւնը բոլորին քաջ յայտնի Աստուածաշունչն է կամ Սուրբ Գիրքը:

2 Հաւատամբ, Աղօթագիրք, «Գանձասար» հանդէս, 1992, էջ 79

տարանի լոյսին նախապատրաստելով մարդկութեանը. «Աստուած բազում ձեւերով եւ բազում օրինակներով խօսեց մեր հայրերի հետ մարգարէների միջոցով. այս վերջին օրերին խօսեց մեզ հետ Որդու միջոցով...» [Եբբ. Ա 1–2]: Աստուծոյ Խօսքի մարմնաւորումը էապէս վերափոխուում է Աստուծոյ եւ մարդու փոխյարաբերութիւնը: Արտաքուստ տրուող ահեղ հրամանն ու պատգամը վերածուում են սիրոյ ներքին գրոյցի եւ երկնային վերընթացի երանական յորդորի: Աստուծոյ մարգանալով՝ մարդը ստանում է աստուածացման հնարաւորութիւն: Ճշմարիտ քրիստոնեան ոչ թէ արտաքին օրէնքի հետեւորդ է, այլ կոչուած է լինելու Աստուծոյ տաճար եւ Քրիստոսի խորհրդական մարմնի (Եկեղեցի) կենդանի քարերից մէկը: Մարդկային կեանքի հոգեղինացումը Քրիստոսի փրկագործութեան արդիւնքն է: Սուրբ Հոգին բնակուում է փրկագործուած արարչութեան մէջ՝ լցնելով ու կենսագործելով Եկեղեցին, որը աստուածային իրականութեան ամբողջութիւնն է արարչութեան մէջ: Սուրբ Հոգին է կատարում բոլոր աստուածային խորհուրդներն ու շնորհաբաշխութիւնները, եւ Նա է սրբութեան ու աստուածային յայտնութիւնների շարունակական մատակարարը: Այս է վկայում սբ Իրենէոսը. «Ուր Եկեղեցին է, այնտեղ էլ Աստուծոյ Հոգին է. ուր Աստուծոյ Հոգին է, այնտեղ էլ Եկեղեցին է»<sup>3</sup>: Սուրբ Հոգին Երրորդութեան կամքով ներկայ է աշխարհում արարչագործութիւնից մինչեւ փրկագործութիւն. Բանի մարմնաւորումը տեղի է ունենում Սուրբ Հոգով, Քրիստոս Սուրբ Հոգով է բժշկում, դեւեր հանում, հրաշքներ գործում... Սակայն Յովհաննու Աւետարանն ասում է. «Քանզի դեռ չկար Հոգին, որովհետեւ Յիսուս դեռ չէր փառաւորուել» [Յովհ. է 39]: Հետեւաբար, Սուրբ Հոգու գործունէութեան բնոյթը էապէս փոխուում է Հոգեգալուստից յետոյ:

Քրիստոս ասում է. «Բայց երբ գայ Միսիթարիչը, Որին Ես ձեզ կ'ուղարկեմ Հօրից, ճշմարտութեան Հոգին, որ ելնում է Հօրից, Նա կը վկայի Իմ մասին» [Յովհ. ԺԵ 26]: Հոգեգալուստը Բանի մարմնաւորման հետեւանքն է: Քրիստոսի գործը նախապատրաստում էր Սուրբ Հոգու գործը. «Եկայ՝ կրակ գցելու երկրի վրայ եւ ի՞նչ եմ կամենում. որ արդէն իսկ բորբոքուէր...» [Ղուկ. ԺԲ 49]: Այսպիսով՝ Հոգեգալուստն աստուածային փրկակական տնօրէնութեան վերջնական նպատակն

է երկրի վրայ: Քրիստոս ելնում է Հօր մօտ, որպէսզի գայ Սուրբ Հոգին. «Լաւ է ձեզ համար, որ Ես գնամ, որովհետեւ, եթէ Ես չգնամ, Միւրթարիչը չի գայ ձեզ մօտ, իսկ եթէ գնամ, կ'ուղարկեմ Նրան ձեզ մօտ» [Յովհ. ԺՁ 7]:

Հոգեգալուստից յետոյ Քրիստոսի Եկեղեցին լի է Սուրբ Հոգով. Նա քարոզել է առաքելաների բերանով, յիշեցրել եւ պատմել աւետարանիչներին, աստուածային գիտութեամբ եւ հանճարով պայծառացրել վարդապետներին, բնակուել սուրբերի մէջ եւ բազմապիսի հրաշքներ գործել... Եկեղեցին կրիչն է Սուրբ Հոգու կենդանի ներկայութեան, աւանդութեան, ժառանգութեան, իրականութեան... Եւ միայն այս աստուածային կենդանի իրականութեան մէջ կարելի է խօսել որեւէ հոգեւոր արժէքի մասին: Եթէ Աստուածաշունչը դարերի ընթացքում շարունակաբար գրուել է Սուրբ Հոգով, ապա այդ գործունէութիւնը չի կարող դադարել սկսած որեւէ պահից, քանզի Աստուծոյ Հոգին ցայսօր գործում է Իր Եկեղեցում: Հետեւաբար, Սուրբ Գիրքը չի կարելի առանձնացնել Եկեղեցու հայրերի հոգեշունչ մեկնութիւններից, որոնք ինչ-որ իմաստով կենդանի, շարունակական, բացատրական թարգմանութիւններ են. Սուրբ Հոգու շնորհներով զարդարուած վարդապետները որոճացել են Սուրբ Գրքի խօսքերը եւ մեկնողաբար մանրել՝ ի պէտս ունկնդիրների:

Մեր սբ Թարգմանիչներն ինչ-որ գրական գործի՝ մի լեզուից մէկ այլ լեզու փոխադրողներ չեն, այլ նախ եւ առաջ՝ Սուրբ Հոգու թարգմանիչներ եւ Աստուծոյ անքննելի իմաստները **տնօրինաբար զարդարողներ**. ահա թէ ինչու նրանց շարքերում են սբ Գրիգոր Նարեկացին, սբ Ներսէս Շնորհալին, ովքեր անմիջականօրէն չեն մասնակցել Սուրբ Գրքի թարգմանութեանը: Արդէն իսկ Ե դարում սբ Թարգմանիչների կողմից թարգմանուեցին Եկեղեցու նշանաւոր հայրերի՝ սբ Բարսեղ Կեսարացու, սբ Յովհան Ոսկեբերանի, սբ Գրիգոր Նիւսացու, սբ Աթանաս Աղեքսանդրացու, սբ Եփրեմ Ասորու եւ այլոց մեկնողական շատ երկեր. սա լաւագոյն ապացոյցն է այն բանի, որ մեր հայրերն Աստուածաշունչը եւ նրա մեկնութիւնները դիտել են որպէս մէկ ամբողջականութիւն եւ, ամենայն հաւանականութեամբ, նրանց թարգմանութիւնը հիմնուած է եղել մեկնութիւնների խոր իմացութեան վրայ: Եկեղեցու հայրերի մեկնութիւնների հայացումը նպաստեց հայ մեկնաբանական մտքի զարգացմանը, որի հետեւանքն է մեզ հասած հսկայածաւալ մեկնողական գրականութիւնը: Եւ այսօր անհնար է

առանց այդ մեկնութիւնների ուղղափառ պատկերացում ձեռք բերել Սուրբ Գրքի մասին: Աստուածաշնչի ուղղափառ ըմբռնումը ծնւում է Սուրբ Հոգուց յորդող շնորհական գիտակցութիւնից, որին պարտ է եւ պատշաճ, որ նախորդի նոյն շնորհական գիտակցութեամբ կատարուած մեկնութիւնների ուսանումը: Եկեղեցու հայրերի մեկնութիւնները խստորէն ազերսուած են աստուածպաշտական ներընթացի հետ, նրանք պարունակում են հոգեւոր գործառնութեան կարեւոր բանալիներ, որոնք վրիպում են հերձուածողական-մակերեսային եւ գիտական-աշխարհիկ աչքից: Այս ամէնն ուսանած անձը ձեռք է բերում այն անհրաժեշտ հոգեվիճակները, որոնք նախադրեալ են Աստուծոյ խօսքի շնորհական իւրացման համար:

Դարեր շարունակ՝ մինչեւ այսօր, ակնյայտ կամ քօղարկուած աղանդաւորութիւնը ստուերի պէս հետեւում է ուղղափառ գիտակցութեանը: Ուստի հարկ է զգուշանալ Աստուածաշնչի ոչ ուղղափառ կամ հերձուածողական ըմբռնումներից, որոնք ծնունդ են առնում Աստուծուց կտրուած շնորհազուրկ ընկալումներից, մարդկային մեծամտութիւնից, ինքնամիտ-ինքնածին մօտեցումներից, հայրերի գրուածքները տգիտաբար արհամարհելուց: Ըստ էութեան՝ Սուրբ Հոգու ներգործութիւնից դուրս ծնուած իւրաքանչիւր միտք աղանդաւոր ընդերք ունի, որքան էլ այն պաճուճուած լինի շինծու բարեպաշտութեամբ եւ արտաքին գիտութեամբ:

Այս աշխատութիւնն Աստուածաշնչի ուղղափառ ըմբռնում ստեղծելու մէկ փորձ է: Աստուածաշունչ գրքերից ընտրուած է «Երգ երգոց»-ը, որովհետեւ այն առաւել կարիք է զգում մեկնաբանութեան իր բացառիկ նշանակայնութեան (սիմվոլիզմի) պատճառով: «Երգ երգոց»-ի արեւելահայերէն թարգմանութեանը<sup>4</sup> զուգահեռ վերլուծաբար ներկայացուած են «Երգ երգոց»-ի նշանաւոր մեկնութիւնները, որոնք մեզ աւանդուել են գրաբարով: Մեկնողական գրականութեան լեզուաոճական խրթնութեան պատճառով պատշաճ նկատուեց հայրերի մեկնութիւնները վերաշարադրել, երբեմն ուղ-

4 «Երգ երգոց»-ի արեւելահայերէն թարգմանութիւնն իրականացուած է Սուրբ Գրքի՝ Զօհրապեանի տպագրած բնագրից (Վենետիկ, 1805): Թարգմանութեան համար շատ արժէքաւոր են եղել հ. Համազասպ Ոսկեանի «Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանութիւնը» աշխատասիրութիւնը (Վիեննա, 1924) եւ նրանում գետեղուած քննական բնագիրը:

դակիորէն թարգմանել՝ զերծ մնալով կրկնութիւններից: Յղումներն իմաստային բնոյթ ունեն, եւ փակագծերի մէջ նշուում է, թէ որ հօրն է պատկանում ներկայացուած միտքը: Փաստօրէն, կատարուած է հայրերի հոգեշունչ մտքերի համագրում՝ առանց նոր միտք յօրինաբանելու յանդգնութեան: Վերաշարադրելիս բնագրերին որոշակի հոգեհարազատութիւն ենք պահպանել, որպէսզի ընթերցողին փոխանցուի այդ գրուածքների շունչը:

Նման մօտեցումն ինքնին պահանջում է սուրբգրային բնագրի որոշակի թարգմանութիւն, այսինքն՝ բնագրի թարգմանութիւնը պէտք է համաձայնեցուած լինի հայրերի մեկնութիւնների հետ, որն էլ եղել է մեր բուն նպատակը: Աշխատել ենք արեւելահայերէնով առանց աղաւաղման արտացոլել «Երգ երգոց»-ի բնագրի՝ մեր Եկեղեցու ըմբռնումը՝ մեր մարդկային մտքերով չխախտելով հայրերի հոգեբուխ մեկնութիւնների ներդաշնակութիւնը: Այս կապակցութեամբ հարկ է նշել, որ Սուրբ Գրքի բնագրին քննական մօտեցումն ամենեւին էլ խորթ չի եղել հայրերին. իրենց մեկնութիւններում նրանք բազմիցս անդրադառնում են եբրայերէն եւ յունարէն բնագրերին՝ երբեմն ուղղակիօրէն ցոյց տալով եբրայերէնից յունարէն անցման անճշտութիւններ եւ առաջադրելով աւելի ճիշտ տարբերակներ:

Ինչպէս արդէն ասուեց, Սուրբ Գիրքը պէտք է դիտել Սուրբ Հոգու կենդանի աւանդութեան մէջ. Աստուածաշունչը սոսկ գրական կոթող չէ. նրա խօսքերը նախ եւ առաջ զօրութիւններ են: Աստուծոյ խօսքը հնչում է աստուածային անհասանելի բարձունքներից, դէպի ուր միշտ պէտք է ձգտի թարգմանչի հոգին. Աստուծոյ խօսքը կենդանացնում եւ իր անստուեր լոյսով է լցնում Աստուծոյ կամքին հնազանդ թարգմանչի հոգին եւ թարգմանչի շնորհիւ փոխանցում ընթերցողին: Այսպիսին էին մեր զարմանալի հայրերը, որոնց թարգմանութիւնն անկրկնելի է, որոնց լոյսը դարեգար աննուազ լուսաւորում է նրանց գաւակների հոգիները:

«Երգ երգոց»-ն առանձնայատուկ ուշադրութիւն է գրաւում Աստուածաշունչ գրքերի մէջ. արդէն իսկ «Երգ երգոց» գերադրական վերնագիրը, որ արդի հայերէնում նշանակում է «Երգերի Երգ», ակնարկում է այս գրքի վերին, երկնային, խորհրդական բնոյթը: Անմիջապէս յաջորդող բացատրութիւնը՝ «որ օրհնութիւնների օրհնութիւն է», հաստատում է նրա շնորհական-յայտնութեանական էութիւնը՝ բացառելով որեւէ մարմնական, երկրահակ, աշխարհիկ ըմբռնում:

Իր արտաքին փայլուն բանաստեղծականութեամբ, ներքին հարուստ իմաստներով, աստուածաբանական խորհուրդների բարձր արտայայտչականութեամբ, մարգարէական հզոր շնչով «Երգ երգոց»-ը եղել եւ մնում է հոգեշունչ իմաստութեան եւ սրբազան բանաստեղծութեան անգերազանցելի երկ: Նրանում հանճարեղ այլաբանութեամբ եւ կանխասացութեամբ նկարագրուած են Քրիստոսի փրկագործութեամբ հաստատուած նոր արարչութեան երկնային գեղեցկութիւնը եւ Աստուծոյ հետ խորհրդական առնչութեան, արարածի աստուածացման նրբին ծալքերը եւ աննկարագրելի շերտերը:

«Երգ երգոց»-ը խորհրդական զրոյց է Քրիստոս-Փեսայի եւ Հարս-Եկեղեցու միջեւ: Ըստ եկեղեցական ըմբռնման՝ «Երգ երգոց»-ը նկարագրութիւնն է Քրիստոս-Եկեղեցի, Աստուած-մարդ շնորհական միութեան եւ հինկտակարանեան բարձրագոյն մարգարէութիւնն է Մեսիայի մասին: Այն նոյնիսկ վեր է մարգարէութիւնից, քանզի նշանական նկարագրութիւնն է մարմնաւորուած Բանի փրկագործութեան պատմական իրադարձութիւնների: Ուստի «Երգ երգոց»-ն իրաւամբ կարելի է համարել Քրիստոսի նշանական Աւետարանը:

Սբ Աթանաս Աղեքսանդրացին Սուրբ Գրքի իր «Համայնապատկերում» գրում է. «Նրա մէջ ամէն ինչ սկզբից մինչեւ վերջ գրուած է խորհրդաբար, առեղծուածային այլաբանութեամբ. նրա մէջ ամփոփուած դաւանական իմաստները ոչ թէ տառի մէջ են, այլ խորապէս ծածկուած են նրա տակ... Ահա թէ ինչու միայն կատարեալները կարող են կարգաւ այս գիրքը, սակայն նրանք էլ կարգալիս պէտք է նկատի ունենան այլաբանութիւնը, որպէսզի անիմաստների տգիտութեամբ չծաղրուի նրա մէջ շարադրուածը: «Երգ երգոց» է անուանուում նրա համար, որ գալիս է միւս երգերից յետոյ, եւ այս երգից յետոյ չի կարելի սպասել այլ երգ... Բոլոր աստուածային Գրքերը մարգարէանում են Բանի առ մեզ խոնարհուելու եւ մարմնով յայտնուելու մասին... Բոլոր մարգարէութիւններն, ըստ էութեան, երգեր են, իսկ «Երգ երգոց»-ը որպէս թէ այլեւս չի մարգարէանում եւ կանխասում, այլ ցոյց է տալիս Նրան, Ում մասին ուրիշները մարգարէացել էին՝ որպէս եկած եւ վերցրած մարդկային մարմինը: Ուստի «Երգ երգոց»-ը որպէս թէ երգում է Բանի մարդկային բնութեան հետ միաւորման հարսանեաց երգը... Ինչպէս Օրէնքում կայ Սրբութիւնը եւ Սրբութիւնից յետոյ՝ Սրբութիւն Սրբոցը, իսկ Սրբութիւն Սրբոցից յետոյ արդէն աւելի ներքին տեղ չկայ, այնպէս էլ երգերից յետոյ գեռ կայ «Երգ եր-

գոց»-ը, իսկ «Երգ երգոց»-ից յետոյ արդէն անկարելի է սպասել աւելի ներքին եւ նոր խոստման, քանզի Բանը մի անգամ մարմին եղաւ եւ կատարեց [փրկութեան] գործը...»<sup>5</sup>: Այս իմաստով «Երգ երգոց»-ը նշանական աստուածաբանութեան ամենաբարձր երկն է: Բանի մարմնաւորման տնօրինական նախախնամութեան, Քրիստոս-Եկեղեցի առնչութեան անպատմելիութիւնը եւ անքննելիութիւնը ներկայացուած է անկրկնելի նշանական մտքով եւ այլաբանական նկարագրութեամբ, որոնք մեզ Հնարաւորութիւն են ընձեռում թափանցել աստուածգիտութեան անմատոյց եւ գերլուսաւոր մէզի<sup>6</sup> մէջ, այսինքն՝ մուտք գործել խորհրդական աստուածաբանութեան լուութեան մէջ: Այսպիսով Եկեղեցին ընդունում է, որ «Երգ երգոց»-ն այլաբանութիւն է՝ բարձրագոյն կրօնա-հոգեւոր իմաստով: «Երգ երգոց»-ի այլաբանական ըմբռնումը Հին Հրէական եւ քրիստոնէական մեկնիչները համար միանգամայն բնական եւ անխուսափելի է, եւ ահա թէ ինչու: Արդէն իսկ երկի վերտառութեան գերագրական իմաստն ինքնին ասում է, որ հեղինակը նրա պարունակութեանը վերագրում է գերագոյն իմաստ եւ բնաւ չէր կարող տառացիօրէն տեսնել մարմնական սիրոյ նկարագրութիւն: Կարո՞ղ էր արդեօք այլ կերպ լինել, որ ճշմարիտ իսրայելացին այդպիսի գիրքը վեր դասէր սաղմոսներից, Մովսէսի երգից, մարգարէների հոգեշունչ խօսքերից: Վերջապէս, «Երգ երգոց»-ի այլաբանական, ոչ տառացի ըմբռնումն անխուսափելի է նրա ամբողջական ընկալման համար. տառացի ըմբռնման դէպքում անմիջապէս ծառանում են մի շարք անլուծելի հակասութիւններ... «Երգ երգոց»-ի Փեսան միաթամանակ հովիւ է [Ա 6, 2] եւ արքայ [Ա 3, 9 11]. արդէն իսկ սկզբից պարզում է, որ Փեսան ստինքներ ունի [Ա 1]... Հարսը մե՛րթ հովուհի է [Ա 7], մե՛րթ այգու պահապան [Ա 5], մե՛րթ որպէս թագուհի [2 7-8]: Իրենց յարաբերութիւններում Փեսան եւ Հարսը մե՛րթ եղբայր ու քոյր են [Գ 12], մե՛րթ Փեսայ ու Հարս կամ ամուսիններ [Ա 14-16, Բ 6-7]: Այնուհետեւ գործողութիւններում Հարսը ե՛լ անչափահաս է [Ը 8],

5 Թարգմանուած է հետեւեալ հրատարակութիւնից՝ Христи. Чтен. 1841, Ч. 4, с. 370-374:

6 Տես «Աթենացիների Դիոնեսիոս Արիսպագացի եպիսկոպոսի [Թուղթը] եփեսացիների Տիմոթէոս եպիսկոպոսին խորհրդական աստուածաբանութեան մասին», «Քանձասար» Հանդէս, Բ Հատոր, 1992, էջ 144-150:



հ'և կատարեալ [Ձ 8]. մերձ լինելով իր Սիրեցեալի հետ՝ Հարսը չգիտի Նրա տեղը [Ա 6] եւ փնտրում է Նրան քաղաքի մուտք փողոցներում [Գ 2–3] երուսաղէմական կանանց խմբի մասնակցութեամբ [Ե 8–17], որոնց պարբերաբար տարօրինակ կերպով երգուեցնում է [Բ 7, Գ 5, Ե 8, Ը 4], քաղաքի պահապանները հանդիպում են Նրան, զարկում եւ հանում քօղը [Ե 7]...

Այս հակասութիւնները, որոնք անլուծելի են տառացի ընկալման դէպքում, ինքնին ակնարկում են այլ բարձրագոյն եւ այլաբանական մեկնութիւն: Այսուհանդերձ, թէ՛ հրէական սինագոգի, թէ՛ Եկեղեցու այլաբանական մեկնութիւնների ընդհանուր ներդաշնակութիւնը երբեմն խզուել է առանձին ձայների ղարձակով, որոնք փորձել են տառացիօրէն եւ ուղղակիօրէն ըմբռնել եւ բացատրաբանել «Երգ երգոց»-ը: Սակայն դրանք այս կամ այն կերպ ընդհանուր աւանդութեան հետ կապը խզած մարդկային անհատական կարծիքներ են եւ ոչ աւելին:

Սակայն նոյնիսկ այլաբանական մեկնութիւնների դէպքում կատարեալ ներթափանցման եւ ըմբռնման հասնելը յոյժ դժուար է եւ երբեմն՝ անհնարին, որովհետեւ Սուրբ Գիրքը եւ յատկապէս «Երգ երգոց»-ն ունեն անքննելի խորքեր եւ իմաստներ, իրադարձութիւնների յաջորդականութեան անորսալի ծաւալումներ, որոնք պատուած են աստուածային անճանաչելիութեան ամպով:

Համաձայն Որոգինէսի վկայութեան՝ Իսրայէլում մինչեւ երեսուն տարեկան հասակն արգելուած էր կարդալ այս գիրքը (ինչպէս նաեւ Աստուածաշնչի սկիզբը, Եզեկիէլի մարգարէութեան սկիզբն ու վերջը): Սբ Աթանաս Աղեքսանդրացու խօսքերից պարզ է դառնում, որ նման զգուշութիւն անհրաժեշտ է նաեւ Եկեղեցում: Ուշագրաւ է սբ Գրիգոր Նարեկացու «Երգ երգոց»-ի մեկնութեան ներածութեան եզրափակումը. «Ով կարդում է այս գիրքը, պէտք է մաքրի միտքը եւ խորհուրդներն ամէն տեսակ մարմնաւոր ամուսնական մտածութիւններից եւ ապա ձեռնամուրի լինի լսելու: Քանզի այս գիրքն աստուածաբանակ Քորէբ լեռն է. եւ ինչպէս այնտեղ, երբ դազանը մերձենում էր լեռանը, քարիծուում էր, նոյնպէս էլ նա, ով դազանաբարոյ մտքով մերձենում է այս գրքի երեւելի խօսքերին, նոյնպիսի պատուհասներ է կրում: Ուստի պէտք է հեռանանք ամէն տեսակ մարմնական խորհուրդներից՝ փակելով մարմնի աչքը եւ բացելով հոգու աչքը, որպէսզի Մովսէսի պէս կարողանանք ելնել այս աստուածաբանակ իմանալի լեռը եւ նրա

վրայ, ըստ կարողութեան, յայտածել աստուածային խորքերի ծածուկ [իմաստները]...»<sup>7</sup>:

«Երգ երգոց»-ն Աստուածաշնչի ամենից մեկնաբանուած գրքերից է: Նրա բազում մեկնութիւնների մէջ մեզ համար կարեւորը Եկեղեցու այլաբանական-խորհրդական մեկնութիւններն են եւ յատկապէս նրանք, որոնք մեզ աւանդուել են մեր հայրերի կողմից: Այդ մեկնութիւնները, ծնունդ առնելով նրանց աստուածամերձ կեանքից, հոգեշունչ բնոյթ ունեն, այսինքն՝ գտնուում են Սուրբ Հոգու կենդանի աւանդութեան մէջ, որի կրիչն է Սուրբ Եկեղեցին: Այդ մեկնութիւնները դարերով կրթել են Հայ Եկեղեցու զաւակների միտքը՝ գերծպահելով նրանց հոգեկործան շեղումներից ու դաւանական աղաւաղումներից:

Սոյն աշխատութիւնն իմաստային համապատում է Հիպոդիտոս Բոստրացու, Որոգինէս Աղեքսանդրացու, Գրիգոր Նիւսացու, Վարդան Արեւելցու, Գրիգոր Տաթեւացու մեկնութիւններին: Ընդգրկուած են բոլոր մեկնութիւնները մինչեւ Տաթեւացի, որոնք իրաւամբ կարելի է համարել «դասական», քանզի Գրիգոր Տաթեւացին հայ մեկնաբանական (եւ ոչ միայն) մտքի մեծագոյն ընդհանրացնողն ու դասակարգողն է: Մենք մտադիր էինք նշուած երկերին կցել ԺԸ-ԺԹ դ.դ. (Աբրահամ Կ. Պոլսեցի, Յակոբ Կարնեցի, Խաչատուր Կարնեցի, Պետրոս Բերդումեան), ինչպէս նաեւ մի քանի անյայտ հեղինակների մեկնութիւններ, սակայն ուսումնասիրութիւնը ցոյց տուեց, որ դրանք կառուցուած չեն դասական մեկնաբանական մտքի լուրջ իմացութեան վրայ եւ լի են եկամուտ տարրերով: Ուստի աշխատութիւնն աւելի ու աւելի կը խճողուէր նորանոր եւ յաճախ ոչ էական բացատրութիւններով՝ դժուարացնելով հայրերի հոգեշունչ մեկնութիւնների իւրացումը:

Սբ Գրիգոր Նիւսացու մեկնութիւնը բաղկացած է տասնհինգ խօսքերից կամ ճառերից, որոնք ընդգրկում են «Երգ երգոց»-ի Ա 1 – 2 8 մեկնութիւնները<sup>8</sup>: Սակայն հայերէն ձեռագրերը մեզ են հասցնում

7 Գրիգորի Նարեկայ վանից վանականի մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի, «Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 277

8 *Sbu Migne*, PG, 44, 755–1120:

միայն առաջին տասնչորսը<sup>9</sup>, որոնք ընդգրկում են Ա 1 – Ե 16 մեկնութիւնները<sup>10</sup>: Երկը սկսւում է «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացոյ թուղթ յաղագս Երզոյ երգոց» ներածական թղթով, ուր սուրբ Գրիգորը սուրբբային բազում տեղիների մէջբերմամբ հաստատում է, որ այլաբանութիւնը (կամ առակաւոր խօսքը) յատուկ է Սուրբ Գրքին եւ իր ամենաբարձր կատարելութեանն է հասել «Երգ երգոց»-ում: Արդէն իսկ Նիւսացու օրօք գոյութիւն են ունեցել բազում մեկնութիւններ, որոնցից նա առանձնացնում է Որոգինէսի աշխատասիրութիւնը: Իր ժամանակակից ուսումնասիրողների մասին ասում է. «Կէսը վերցնելով նրանցից, ովքեր աւելի յարմար նշանակներ ունէին նրանց համար, [այսինքն՝ «Երգ երգոց»-ի խօսքերի], եւ մնացածն ինձանից վերցնելով, որ հարկաւոր էր խօսքն ամբողջացնելու համար...»: այս արտայայտութիւնից պարզ է դառնում, որ սբ Գրիգորն իր ժամանակի նշանական աստուածաբանութեան սիւներից է: Այսուհանդերձ, նա կամենում է աշխատութիւնն աւանդել (հաւանաբար՝ անբաւարար համարելով եղած մեկնութիւնները)<sup>11</sup> յիշելով աստուածային Պօղոսին. «Թող իւրաքանչիւր ոք իր վարձը ստանայ՝ ըստ իր վաստակի» [Ա Կոր. Գ 8]: Նիւսացու այս աշխատութիւնը մեկնաբանական մտքի զլուխգործոց է. աստուածաբանական խորութիւնները, ներանձնական կեանքի անդրադարձները, լեզուի անկրկնելի շքեղութիւնը ցոյց են տալիս երկի բացառիկ հոգեշունչ բնոյթը: Ընթերցողն անմիջապէս զգում է Սուրբ Հոգու հեղման ծաւալումները եւ սքանչանում տիեզերալոյս ուսուցչի շնորհառատ վարդապետութեամբ:

Ուշադրաւ է, որ սուրբ Գրիգորը զգուշացնում է, երբ զիտելիքն անմիջականօրէն Սուրբ Հոգուց չի ստացել<sup>11</sup>, որքան էլ միտքը գեղեցիկ եւ խոր լինի: Այս մեկնութիւնը սոյն աշխատութեան մէջ առանցքային տեղ է զբաղում:

9 ՄՄ ձեռ. N 2684 (1ա–240բ) N 1013 (41ա–120բ), N 5253 (65ա–210բ), N 1152 (1ա–136ա), N 1851 (81–133)

10 Վարդան Արեւելիցին, որի մեկնութիւնը կառուցուած է Նիւսացու մեկնութեան վրայ, Զ 6 մեկնութեան վերջում գրում է. «Մինչեւ այստեղ մեկնել է Գրիգոր Նիւսացին, եւ սրանից յետոյ առաջնորդ ենք խնդրում Սուրբ Հոգին...» (ՄՄ ձեռ. N 6720, 130ա): Այստեղից երեւում է, որ Արեւելցուն յայտնի է եղել Նիւսացու տասնչորսերորդ ճառը կամ հայերէն, կամ յունարէն բնագրով:

11 Տես Դ-1 սոյն աշխատութեան մէջ:

**Որոգիւնէս Աղեքսանդրացու** (+254) անունով մեզ հասած Հայերէն մեկնութիւնը<sup>12</sup> անվաւեր է եւ չի նոյնանում ո՛չ հերոնիմեան, ո՛չ ոււփրինեան թարգմանութիւնների հետ: Ըստ երեւոյթին, սոյն երկն ինչ-որ Հայ հեղինակի համառօտ խորհրդածութիւններ են Որոգիւնէսի մեկնութեան շուրջ: Հաւանաբար հեղինակը Ներսէս Լամբրոնացին է<sup>13</sup>: Այս երկը յայտնի է՛ նարեկացուն, սակայն այն լայնօրէն գործածում է Արեւելցին: Այսուհանդերձ, աշխատութիւնը շատ կարեւոր է մեզ համար, քանզի այն ինչ-որ իմաստով Հայ մեկնաբանական մտքի արտադրանք է, որի մատուցումը մեր բուն նպատակն է: Ուշագրաւ է, որ Վարդան Արեւելցու մեկնութեան մէջ Որոգիւնէսի անունով առկայ որոշ պատառիկներ չեն համընկնում սոյն մեկնութեան հետ:

**Հիպոդիտոս Բոստրացու** (+236) անունով յայտնի են երկու մեկնութիւններ. մէկը՝ վաւերական, միւսն՝ անվաւեր: Երկուսն էլ թարգմանուել են Հայերէն: Վաւերականի թարգմանութեան ապացոյցն է Հայերէնից վրացերէն կատարուած թարգմանութիւնը, որի հայերէն բնագիրը չի պահպանուել: Վարդան Արեւելցու մեկնութեան մէջ առկայ են բաւականին հատուածներ թէ՛ վաւերականից, թէ՛ անվաւերից: Այդ հատուածները, սակայն, ըստ մեզ, ոչ թէ՛ Վարդան Արեւելցու կողմից են մէջբերուած, ինչպէս ընդունուած է կարծել (Ն. Մառ, Կ. Հ. Ոսկեան), այլ յետագայ յաւելումներ են: Ահա թէ ինչու մեզ յայտնի հնագոյն ձեռագիրն այդ յաւելումները չունի<sup>14</sup>: Մնացած ձեռագրերում այդ հատուածներն աւելացուած են խօսքի մեկնութիւնների վերջում: Եւ վերջապէս, Արեւելցին Հիպոդիտոսի մեկնութեան մասին իր նախադրութեան մէջ չի յիշատակում՝ ի տարբերութիւն Նիւսացու, Նարեկացու, Որոգիւնէսի: Հիպոդիտոսի անունով մեզ հասած Հայերէն մեկնութիւնը<sup>15</sup>, ըստ երեւոյթին, ինչ-որ Հայ հեղինակի խորհրդածութիւններ են Հիպոդիտոսեան մեկնու-

12 ՄՄ ձեռ. N 4066 (350ա–365բ), N 2602, N 6720 (62ա–87բ)

13 Այս է ակնարկում, օրինակ, N 2602 ձեռագրում գետեղուած բնագրի վերտառութիւնը՝ «Խաւսք Եւրոգիւնէսի ի Ներսէսէ յերգ երգոցին մեկնութիւն»: Բնագիրը ներկայացուած է Լամբրոնացու՝ Սողոմոնի գրքերի մեկնութեան շարքում:

14 Տես «Հոգիապայծառ սուրբ հաւերն Վարդանայ լուսաւոր վարդապետի արարեալ համառատ մեկնութիւն Երգոյ Երգոցն պարզ եւ դիւրահաս», ՄՄ ձեռ. N 4066 (193ա–218բ):

15 Տես ՄՄ ձեռ. N 4066 (334ա–349բ), N 1138 (127ա–143ա), N 3215 (115բ–121բ):

թիւնների շուրջ: Նորից այդ հեղինակը թէպէս Լամբրոնացին է, որի մասին է ականարկում N 4066 ձեռագրում առկայ Հիպոդրիտոսի մեկնութեան յիշատակարանը. «Ես՝ բազմամեղ Հոգի Կոստանդին, գրի գրեալ յոյժ գեղեցիկ սրբոյ Հաւրն մերոյ տեառն Ներսիսի Տարսոնի եպիսկոպոսի եւ ի միջոյն ի վեր իւր իսկ մեկնեալ...»<sup>16</sup>: Զանազանելու համար Հիպոդրիտոսի վաւերական եւ անվաւեր մտքերը, անվաւեր մտքերը ներկայացնում ենք «Կեղծ-Հիպոդրիտոս» անուամբ:

Սբ Գրիգոր Նարեկացու (+1003) մեկնութիւնն<sup>17</sup> առաջին հայայեցու մեկնութիւնն է: Այն գլխաւորապէս հիմնուած է Նիւսացու մեկնութեան վրայ. Նիւսացին, ըստ Նարեկացու, «կատարեալ վարդապետ էր եւ հոգիաբանակ»<sup>18</sup>: Շատ տեղերում Նարեկացին աւելի հանգամանալից մեկնութիւն ցանկացողներին յղում է Նիւսացու մօտ: Փաստօրէն, բուն Նարեկացին սկսում է Ձ գլխից, երբ վերջանում է Նիւսացու մեկնութիւնը: Սակայն նոյնիսկ այն տեղերում, ուր Նարեկացին համառօտակի շարադրում է Նիւսացու մեկնութիւնը, կան յոյժ ուշադրաւ ինքնուրոյն մտքեր: Սբ Վարդան Արեւելցու (+1271) մեկնութիւնը<sup>19</sup>, որը որոշ ձեռագրերում անուանուած է պարզութիւն<sup>20</sup> (օրինակ՝ ձեռ. N 4834), հայ մեկնաբանական մտքի կարեւոր երկերից է: Արեւելցին դիւրահաս կերպով փորձում է ներկայացնել իր նախորդ մեկնութիւնների ամբողջական պատկերը: Երկի հիմքը Նիւսացու մեկնութիւնն է: Արեւելցին պարզաբանելով շարադրում է «Եկեղեցու մեծ աղբիւր» սբ Գրիգոր Նիւսացու մտքերը՝ լրացնելով Որոգինէսի եւ Նարեկացու մեկնութիւններով (յետագայում նաեւ աւելացել են Հիպոդրիտոսեան հատուածները). «Զմնացեալն յԵրգոց Երգոյն... առաջնորդութեամբ Որոգինեա համառօտեալ եւ գայլս սակաւ ինչ եղեալ ի Գրիգորէ Նարեկացւոյ»<sup>21</sup>: Սբ Վարդան Արեւելցին հայ մեկնաբանական (եւ ոչ միայն մեկնաբանական)

16 Տես ՄՄ ձեռ. N 4066, էջ 349բ:

17 Գրիգորի Նարեկայ վանից վանականի մեկնութիւն «Երգոց Երգոյն» Սողոմոնի, տես «Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վննհտիկ, 1840, էջ 271–367:

18 Տես նոյն, էջ 271:

19 Տես ՄՄ N 4066 (193ա–218բ), N 4834 (1ա–58ա), N 1460 (244ա–297ա), N 6720 (88բ–147բ):

20 Պարզութիւն – պարզաբանութիւն:

21 Տես, օրինակ, N 6720, 88ա:

մտքի ամենակարկառուն դէմքերից է: Ահա թէ ինչպէս է նրա անունը յիշատակուում ձեռագրերում. «Հոգիապայծառ սուրբ հաւերն Վարդանայ լուսաւոր վարդապետի արարեալ...»<sup>22</sup>, «Եռամեծի սրբոյ Վարդանայ վարդապետի արարեալ»<sup>23</sup>, «Հոգիապայծառ եւ տիեզերալոյս վարդապետին Վարդանայ արարեալ...»<sup>24</sup>: Սբ Գրիգոր Տաթեւացին նրան միշտ յիշում է Մեծն Վարդան անունով: Նկատի ունենալով նրա լուսաշաւիղ կեանքը եւ աստուածաբանական անկրկնելի ժառանգութիւնը՝ չվարանցիւք նրան «սուրբ» մակագրութեամբ ներկայացնել, ինչպէս եւ ներկայացնում են մեր ձեռագրերը: Արեւելցին մի ամբողջ մեկնաբանական դպրոցի հիմնադիր է: Նա նախորդներին համակարգելիս սոսկաբար չի շարադրում նրանց մտքերը, այլ առաջագրում է նաեւ սքանչելի մեկնութիւններ, որոնք չունեն նախորդները: Սրանում համոզուեցինք՝ մանրամասնաբար բաղդատելով Նիւսացու եւ Արեւելցու մեկնութիւնները: Իսկ երբ սկսում է բուն Արեւելցին («Երգ երգոց»-ի մեկնութեան մէջ Զ 7-ից), ուղղակիորէն հաւաստիանում ես նրա վարդապետական հզօր շունչի մէջ:

**Սբ Գրիգոր Տաթեւացու** (+1409) մեկնութիւնը<sup>25</sup> դժուարիմաց խօսքերի լուծմունք<sup>26</sup> է: Երկը հիմնականում համառօտ վերաշարադրանք է Արեւելցու մեկնութեան, սակայն անմիջապէս զգացում է, որ Տաթեւացին քաջատեղեակ է Մեծն Վարդանին նախորդած բոլոր մեկնիչներին: Տաթեւացին, լինելով հայ աստուածաբանական մտքի մեծագոյն ընդհանրացնողն ու համակարգողը, իրեն ժառանգութիւն հասած աստուածաբանական աւանդը համակարգելիս, տալիս է բազում հոգեբուխ մտքեր, որոնք չունեն նախորդները, եւ նրանց մտքերը յաւելում կարեւոր հանգոյցներով: Անշուշտ կարեւոր եւ ցանկալի կը լինէր այս աշխատութեանը կցել նշուած բոլոր երկերի քննական բնագրերը, որպէսզի մեկնաբանական մտքի մէջ խորանալ կամեցողները կարողանային օգտուել նրանցից, սակայն դա չափազանց ծաւալուն կը դարձնէր այս աշխատանքը եւ կը ծանրա-

22 ՄՄ ձեռ. N 4066, 193ա

23 ՄՄ ձեռ. N 4066, 193ա

24 ՄՄ ձեռ. N 2642, 589ա

25 ՄՄ ձեռ. N 1200 (367ա–395բ), N 5869 (376բ–399բ)

26 Լուծմունք – վերլուծութիւն:

բեռնէր այն ընթերցողի համար: Մեր նպատակն է եղել հարագատօրէն ներկայացնել մեր հայրերի մեկնաբանական միտքը այսօրուայ մարդուն, որպէսզի նա իր սուրբգրային ըմբռնումները ձեւաւորի Եկեղեցու սրբազան աւանդութեան վրայ:

\*\*\*

Իմ խորին երախտագիտութիւնն եւ յայրնում սր Մեսրոպ Մաշտոցի անուան Մարտինարարանի աշխատակիցներ Յակոբ Քեռուէեանին եւ Յովհաննէս (այժմ՝ Տ. Ծսիէ քահանայ) Հայրապետեանին, որոնց օժանդակութիւնը մարտնագիտական հարցերում մեծապէս նպաստեց սոյն աշխատութեան իրականացմանը:

Մեսրոպ քահանայ Արամեան

2016

(1992 թ. առաջին հրատարակութեան  
նախաբանի վերանայուած տարբերակ)

**ԵՐԳ ԵՐԳՈՑ՝**  
**ՀԱՆԴԵՐՁ ՄԵՎՆՈՒԹԵԱՄԲ ՆԱԽՆԵԱՅ**

**ԵՐԳ ԵՐԳՈՑ,**  
**ՈՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Է՝**  
**ԱՍՈՒԱԾ ԻՍՐԱՅԷԼԻ ԱՐՔԱՅ ՍՈՂՈՄՈՆԻ ԿՈՂՄԻՑ**

**Ա**

Հարսն ասում է.

*1. Թող համբուրի ինձ Իր քերանի համբոյրներով, քանզի Քո սրիւր-ները լաւ են գինաց, եւ Քո խղերի հուրը՝ բոլոր խոսնկերից:*

*1. Բան Աստուծոյ մարմնաւորումով Աստուած անընդմիջելիօրէն մերձաւորուեց մարդկային բնութեանը: Համբոյրն այստեղ խորհրդանշում է Աստուծոյ եւ մարդու գոյաբանական միութիւնը («Եւ Բանը մարմին եղաւ եւ բնակուեց մեր մէջ...» [Յովհ. Ա 14]): Այս փրկարար միութեանն էր սպասում ողջ արարածը. հրեաները՝ Օրէնքով եւ մարգարէներով, իսկ հեթանոսները՝ արտաքին գիտութեամբ (Աւետարանում դա արտայայտուած է Սիմէոն ծերունու վկայութեամբ [Ղուկ. Բ 25] եւ մոգերի երկրպագութեամբ [Մատթ. Բ 1]): Այսպիսով՝ Հարս-Եկեղեցին, ասելով թող համբուրի, արտայայտում է Աստուծոյ փրկութեան լոյսի հինկտակարանեան սպասումը (Որդիինէս):*

*Նիւսացու մեկնութեան մէջ աւելի ընդգծուած է սուրբերի՝ Աստուծոյ հետ խորհրդական եւ ներանձնական-չնորհական միութիւնը... Մարդու հոգին անյազօրէն ձգտում է միաւորուել Աստուծոյ հետ: Եւ քանի որ Փեսայ-Քրիստոսի խօսքը հոգի է եւ կեանք, իսկ Հոգուն միաւորուողը հոգի է լինում, եւ Կեանքին հպուողը մահուանից վերափոխւում է կեանքի՝ ըստ Տիրոջ խօսքի [տես Ա Յովհ. Գ 14], ուստի հոգին բաղձում է մերձենալ հոգեւոր կեանքի աղբիւրին, այսինքն՝*



Փեսայի բերանին, որտեղից բխում են յաւիտենական կեանքի խօսքերը եւ լցնում Աստուծու ձգտող հոգին (Նիւսացի):

Համարյոք, համաձայն կեղծ-Հիպոդիտոսի մեկնութեան, խորհրդանշում է աստուածատեութիւնը, ինչպէս Մովսէսը Սինա լեռան վրայ առանց միջնորդի («բերան առ բերան») խօսեց Աստուծոյ հետ, սակայն դրան պէտք է նախորդի սրբակենցաղ վարքը (կեղծ-Հիպոդիտոս):

Ըստ Նարեկացու՝ վերստին ծնուածներս աղաչում ենք Ծնողին մայրական սիրով համբուրել մեզ, մերձեցնել աստուածային բերանը, որպէսզի մեզ համբուրելիս արբենք Նրա բերանից: Այս մասին Քրիստոս ինքը վկայեց ամենասուրբ բերանով. «Ով ծարաւ է, թող գայ ինձ մօտ եւ խմի» [Յովհ. է 37]: Նարեկացին նաեւ յիշատակում է անառակ որդու առակը. լինելով անառակ որդիներ՝ համբուրում ենք երկնաւոր Հօրից, եւ այն սէրը, որով սիրեց մեզ, աղաչում ենք, որ որպէս համբոյր առաւելանայ (Նարեկացի):

Տաթեւացին որպէս կատարեալ միաւորութեան եւ հոգեւոր համբոյրի օրինակ է բերում Տիրոջ Մարմնի եւ Արեան հաղորդութիւնը: Ծաշակելով Տիրոջ Մարմինը եւ Արիւնը՝ հաւատացեալները խորհրդականօրէն միաւորւում են Աստուածութեան հետ:

Այժմ քրիստոնեաները երկու եղանակով են համբուրում Քրիստոսին՝ անընդմիջաբար եւ միջնորդութեամբ: Անընդմիջաբար համբուրում ենք ներքին զգայութիւններով՝ իմացմամբ, աղօթքով, հաւատքով, յոյսով, սիրով եւ զղջմամբ, ինչպէս նաեւ նշաններով՝ քահանայի օծութեամբ, պաշտօնեայի ձեռնադրութեամբ եւ այլն: Նմանապէս համբուրում ենք արտաքին զգայարանների միջնորդութեամբ՝ շուրթերով խաչ, Եկեղեցի, Արբուլիւն համբուրելով եւ սք Հաղորդութեամբ, խօսելով եւ լսելով Աստուծոյ խօսքը, ինչպէս նաեւ տեսնելով, հոտոտելով եւ շօշափելով [սրբութիւնները] (Տաթեւացի):

Ստիկսները նշանակն<sup>1</sup> են սրտի. դրանցով անձը սնւում է՝ հաւատքի միջոցով իր վրայ հրաւիրելով աստուածային կաթի առատ շնորհը: Այստեղ հոգեւոր ստինքների շնորհական կերակուրը գերադրւում է մարդկային իմաստութեան եւ հանճարի գինուն: Տեսանելի եւ հասանելի երեւոյթների ողջ զօրութիւնն անկարող է գուգահաւասարուել աստուածային պարզագոյն ուսման կերակուրներին: Աստուածային

1 Նշանակ – սիմվոլ:

խօսքի վարդապետութիւնն աւելի կատարեալ է, քան արտաքին իմաստութեան գինին (Նիւսացի):

Ստիքնէրը խորհրդանշում են նաեւ առաքեալների եւ մարգարէների վարդապետութիւնը: Հոգեւոր ստինքների կաթը ճաշակողները լցում են աստուածային ուրախութեամբ, որը վեր է այս աշխարհի գինու ժամանակաւոր ուրախութիւնից (կեղծ-Հիպոդիտոս):

Խումկն առաքինութիւնն է: Ինչպէս խունկն ունի քառամասնեայ բազալդրութիւն (ստաշի, եղունգ, քաղբան, կնդրուկ) [Ելք Լ 34], այնպէս էլ՝ առաքինութիւնը (խոհմտութիւն, արիութիւն, ողջախոհութիւն, արդարութիւն) (Նիւսացի): Խունկը, մերձենալով հրին, բուրում է իր հոտը. նոյնպէս եւ չորս առաքինութիւններով զարդարուած հոգին, մօտենալով ու հպուելով աստուածային սիրոյ հրին, բուրում է երկնային կեանքի անուշահոտութեամբ: Խումկը նաեւ խորհրդանշում է մեղքերի՝ ապաշխարութեամբ քաւութիւնը եւ հաշտութիւնն Աստուծոյ հետ (Տաթեւացի):

Իւղը (կամ Միւռոնը) նշանակն է Աստուածութեան (ինչպէս նաեւ՝ Սուրբ Հոգու շնորհների (կեղծ-Հիպոդիտոս)), իւղի անուշահոտութիւնն Աստուծոյ ներկայութեան բուրմունքն է: Աստուածային իւղի օծմամբ, այսինքն՝ շնորհով է մարդը ստանում Աստուծոյ ամբողջականութիւնը, հագնում Աստծուն, աստուածանում եւ ստանում Հոգեւոր, երկնային, վերին կեանքի բերկրանքը եւ ոչ թէ ըստ առաքինութիւնների կամ ապաշխարութեան կամ գործերի: Ահա թէ ինչու աստուածային իւղերի (յոգնակիութեամբ արտայայտում է շնորհների բազմազանութիւնը) հոտը գերազասելի է բոլոր խունկերից (Նիւսացի):

Իւղը նաեւ խորհրդանշում է ապաշխարութեամբ մաքրուած հոգու բոյրը. ապաշխարողների վարքն աւելի անուշահոտ է, քան փարիսեցիների ձեւական առաքինութիւնը (Արեւելցի):

2. Քո անունը հեղոսած անուշ խղ է, դրա համար օրիորդները սիրեցին Քեզ եւ [դէպի իրենց] ձգեցին Քեզ:
3. Քո իւղերի յերեսից կ'ընթանանք մենք:

Հարսը պատմում է օրիորդներին Փեսայի մասին, թէ ինչ է շտրիել իրեն.

Արքան Կարաւ ինձ իր սենեակը:

Հարսը պատմում է օրիորդներին, եւ նրանք ասում են.

Յնծանք եւ ուրախ լինենք քեզանով եւ սիրենք քո սպիւնները գինսոց  
սակի:

Օրիորդները Հարսին ասում են Փեսայի անունը.

Ուղղութիւնը սիրեց քեզ:

2-3. Աստուծուն տրուած ոչ մի անունն ցոյց չի տալիս Աստուծոյ բնութիւնը, քանզի այն անգնին է եւ անճանաչելի, սակայն աստուածային անունները բերում են Աստուծոյ որոշակի ճանաչողութեան: Հեղուած իղ է Քո անունը արտայայտութիւնը մարդարէական խորհուրդ է կրում... Հեղուած իղը Քրիստոսն է՝ Օծեալը: Աստուածութեան իւրը հեղուում է մեր բնութեան մէջ, անբաժանելիօրէն միաւորուում նրա հետ, օծում եւ աստուածացնում այն: Նախայաւիտեան Բանը հեղուում է մեր բնութեան մէջ՝ ճշմարտապէս մարդանում սուրբ Կոյսից (Նիւսացի-Տաթեւացի):

Օրիորդները հրեշտակներն են, ինչպէս նաեւ մեղքերից մանկացածները, այսինքն՝ հրեշտակային վարք ստացածները (Նարեկացի): Ըստ Նիւսացու՝ օրիորդները երիտասարդներն են՝ թէ՛ այր, թէ՛ կին, որոնք հաւատքի մէջ կատարեալ են մտքով, արի՛ վարքով եւ ողջախոհ՝ խորհուրդներով: Աստուածային գեղեցկութիւնը ցանկալի է նրանց, ովքեր հեռացել են մանկական կրքերից, ալեկոծութիւններից եւ տխմարութիւններից, նաեւ ծերունական հնութիւնից, կարկամութիւնից եւ տկարութիւնից, որոնք կայուն են ցանկութիւնների մէջ, կատարեալ հոգեւոր հասակ են ձեռք բերել, ողջ սրտով եւ զօրութիւններով սիրում են երկնայինը: Այդպիսիներին Նիւսացին անուանում է հոգևոր կոյսեր կամ օրիորդներ (Նիւսացի):

Աստուածային իւղի փափագումը զուարթացնում է ցանկացողների սրտերը: Ահա թէ ինչու օրիորդները Փեսայի իւղերի յետեւից ընթացան. բոլոր սուրբերը թողեցին այս աշխարհը եւ գնացին Նրա յետեւից (Կեղծ-Հիպոդիտոս):

Առաքինութեամբ աճած եւ մաքուր այս օրիորդները, արդէն իսկ աստուածային խորհուրդների առաքատում լինելով, սիրում են Փեսայի գեղեցկութիւնը եւ սիրոյ միջոցով Նրան դէպի իրենց դարձնում: Այսպիսով՝ նրանք իրենց մէջ են ձգում անապական Փեսայի սէրը, նրանք ցանկանում են Տէր Աստուծոյ յետեւից գնալ. նրանց բուռն սիրոյ պատճառն աստուածային իւղերի անուշահոտութիւնն է, դէպի որը, մոռացած ամէն մի երկրաւոր բան, ընթանում են նրանք (Նիւսացի):

Ինչո՞ւ է Հարսն օրիորդներին պատմում ծածուկ խորհուրդը: Հարսը, չկարողանալով ծածկել իր խնդութիւնը, յայտնում է օրիորդներին Աստուծոյ սքանչելիքները, որպէսզի նրանք ուսանեն եւ սրբութեամբ ընթանան՝ վայելելու նոյն բարիքները (Տաթեակցի):

Աստուած կատարում է Իրենից երկիւղածներէ կամքը եւ յուսացածից աւելին շնորհում... Աստուած մարդկային բնութիւնը պատուեց մայրութեամբ՝ սուրբ Կոյս Մարիամով, որը դարձաւ Նրա առանձնարան-սենեակը, ուր միացան Թագաւորը եւ Թագուհին: Բանն Աստուած Հօր եւ Սուրբ Հոգու Հետ խորհրդակցաբար լուեկայն միաւորուեց մեր բնութեան հետ եւ, վերցնելով այն, տարաւ Իր սենեակը՝ երկինքների երկինքը, յարուստիւն տուեց մարդկային բնութեանը եւ անպատում ժառանգութեան արժանացրեց... Սենեակ է անուանուում նաեւ Հագարամեայ արքայութիւնը<sup>2</sup> [տես Յայտ. Ի 4, 6], ուր փոքրն աւելի մեծ է, քան հին [Ուխտի] մէջ՝ Յովհաննէսը [Մատթ. ԺԱ 11] (Արեւելցի):

Տաթեակցին, հետեւելով Հիպոդիտոսին, նկարագրում է Աստուծոյ հետ ներանձնական յարաբերութեան խորհուրդը: Սենեակը սիրտն է (Հիպոդիտոս). եւ տարաւ ինձ Իր սենեակը արտայայտութիւնը ցոյց է տալիս սուրբերի՝ Աստուծոյ հետ իրենց սրտում առանձնանալու եւ միաւորուելու խորհուրդը (Տաթեակցի):

Հինկտակարանեան եւ նորկտակարանեան բոլոր սուրբերը ցնծում են Հարսի հետ եւ կիսում ուրախութիւնը. նրանք հոգեւոր վարդապետութեան կաթը նախընտրում են արտաքին իմաստութեան գինուց (Արեւելցի):

Աստուած անուանում է Ուղղութիւն: Ուղղութիւն, ճշմարտութիւն եւ Արդարութիւն է Աստուած եւ ուղղութիւն է բոլորի համար (Կեղծ-Հիպոդիտոս): Իր բնութեամբ լինելով ուղիղ՝ Աստուած սիրում է ուղիղներին՝ սրտով, հաւատքով, գործով ու խօսքով մաքուրներին, եւ այսպիսիները բնակուում են Աստուծոյ մօտ: Ուստի Աստուծու փնտրողները պէտք է ունենան մտքի ուղղութիւն, բերանի ճշմարտութիւն եւ գործերի արդարութիւն. մտքի ուղղութիւնը սկիզբն է, բերանի ճշմարտութիւնը՝ միջինը, գործերի արդարութիւնը՝ վերջը (Տաթեակցի):

2 Հագարամեայ արքայութիւնն, ըստ եկեղեցու վարդապետների, Առաջին դարու սուրբ Երկրորդ գալուստ ընկած ժամանակահատուածն է:

Հարսն ասում է.

4. Սեւ եւ՛ ես եւ գեղեցիկ, դուստրե՛ր Երուսաղէմի, Կեդարի վրանների եւ Սողոմոնի խորանի պէս:

4. Սեւութիւնը խորհրդանշում է մեղքը եւ նրա հետեւանքները: Սեւ եւ, այսինքն՝ մեղաւոր եմ, հեռացայ դրախտի փառքից, սակայն՝ գեղեցիկ, քանզի փրկագործուել եմ Քրիստոսով, Աստուծոյ շնորհով գղջացել, ապաշխարութեան ակազանով մաքրուել մեղքի սեւութիւնից, վերստացել նախաստեղծ գեղեցկութիւնը (կեղծ-Հիպոդիոտոս-Որոգինէս):

Կեդարը թարգմանւում է խաւար, իսկ Սողոմոնը՝ խաղաղութիւն: Այսինքն՝ ուզում է ասել, թէ՛ մի ժամանակ խաւար էի Կեդարի վրանների պէս, խաւարի եւ մեղքի իշխանութեան տակ էի, սակայն Աստուծոյ լոյսի ծագումով վերստին լուսաւորուեցի, ապաշխարութեամբ թօթափուեցի սեւ աղջամուղջից եւ պայծառացայ հաւատքով: Թէպէտ մոլորութեան հոգու մէջ էի, սակայն այժմ ողողուեցի լուսաւոր շնորհներով (Նիւսացի): Կեդարը, ըստ կեղծ-Հիպոդիոտոսի, թարգմանւում է պանդխտութիւն, որով ակնարկում է մեր՝ դրախտից արտաքսուելը եւ երկրի վրայ պանդխտութեամբ բնակուելը: Իսկ Սողոմոնը թարգմանւում է խաղաղութիւն, որը Քրիստոս տուեց մեզ՝ երկնքից պանդխտացածներին, ինչպէս ասում է Պօղոսը. «Եկաւ եւ խաղաղութիւն աւետարանեց հեռաւորներին եւ մերձաւորներին» [Եփես. Բ 17], եւ դարձեալ՝ «... Պանդուխտներ չէք, այլ սուրբերի քաղաքակիցներ եւ Քրիստոս Աստծուն ընդունողներ» [Եփես. Բ 19] (կեղծ-Հիպոդիոտոս):

Ինչո՞ւ է երկնայիններին անուանում դուստրեր. ա) դուստր անունով ցոյց է տալիս, որ կենդանածնուած եւ արարուած են Աստծուց, բ) որպէս դուստրեր մնում են իրենց Արարչի մօտ եւ մեզ պէս չեն, որ հեռացանք դրախտից, գ) կոյս-դուստրն աւելի համեստ եւ պատկառոտ է, ինչպէս տեսիլքի մէջ սերովբէները ծածկում էին ձեռքերն ու ոտքերը, դ) Ծնողի կամարարներն են (Տաթեւացի):

5. Մի՛ նայէք ինձ, քանզի ես սեւացել-թիւացել եմ, քանզի Արեգակը խեթ նայեց ինձ վրայ: Իմ Մօր որդիները մարտնչեցին ինձ հետ. եւ ինձ այգեպարանի պահապան դրեցին, որովհետեւ իմ [իսկ] այգին չպահեցի:

5. Արեգակն Աստուծոյ կողմից թոյլ արուած փորձութիւններն են: Երբ Աստուծոյ խօսքը սերմանւում է ապառաժուտ հօգիներում,

խոր արմատներ չի ձգում եւ փորձութեան արեգակի տապի սաստկութիւնից արագ չորանում է (Նիւսացի): Նարեկացու մօտ արեգակը ենթակայական իմաստ է ձեռք բերում. Աստուած-Արեգակը խեղ նայեց ինձ վրայ, այսինքն՝ դառը պատիժներով պատուհասեց, մերժեց Իր երեսից եւ դրախտից: Այս ամէնը եղաւ նախաստեղծների պատուիրանազանցութեան հետեւանքով: Իմ Մօր որդիները սատանան եւ նրա արբանեակներն են, եւ իմ Մօր արտայայտութիւնը ցոյց է տալիս այն, որ բոլորը ստեղծուած են միեւնոյն Արարչից: Եւ ինձ այգեստանի պահապան դրեցին, որովհետեւ իմ այգին չպահեցի. այս խօսքն այլաբանական վերապատումն է Սուրբ Գրքի հետեւեալ տեղիի. «Եւ դրեց նրան ուրախալից դրախտի մէջ՝ պահելու եւ մշակելու այն» [Ծն. Բ 15]: Ոչ թէ որեւէ գործի կամ պահպանութեան կարիք ունէր դրախտը, որ լի էր ամէն տեսակ վայելչութիւններով եւ պահպանում էր Աստուծոյ կողմից, այլ պատուիրում է մարդուն գործել արդարութիւն եւ պահել պատուիրանը (Նիւսացի-Տաթեւացի):

Հարսին պահապան են կարգել պանդխտութեան երկրի այգեստանում, որովհետեւ Հարսն իր բուն այգին չի պահել, այսինքն՝ դրախտի ժառանգութիւնը (Կեղծ-Հիպոդիտոս):

Ըստ Որոգինէսի՝ այգին հինկտակարանեան Եկեղեցին է՝ պարսպուած Օրէնքի ամրութեամբ, որը հրեաները չպահեցին եւ մեղանչեցին Աստուծոյ դէմ:

Արեւելցին, հետեւելով Նիւսացուն, ուշադրաւ մեկնութիւն է առաջագրում. իմ Մօր որդիները մտքերից եւ խորհուրդներից ծնունդ մեղքերն են՝ բարկութիւն, ցանկութիւն, հպարտութիւն, ագահութիւն... Այգին այստեղ նորկտակարանեան պատուիրանն է. «Ես որթն եմ, դուք՝ ուռերը, մնացէ՛ք Իմ մէջ, եւ ես՝ ձեր մէջ» [Յովհ. ԺԵ 5] (Արեւելցի):

Այստեղ կարող է այն տպաւորութիւնը ստեղծուել, որ Մօր որդիները նրան պահապան կարգեցին, սակայն Նիւսացին եւ Արեւելցին զգուշացնում են, որ դա գալիս է երբայերէնից յունարէն ոչ ճշգրիտ թարգմանութիւնից: Իրականում դրանք երկու տարբեր ենթականեր ունեցող նախադասութիւններ են՝ «Իմ մօր որդիներն ընդդիմամարտեցին...» եւ «Ինձ պահապան դրեցին...». վերջինիս ենթական սղուած է:

Հարսն ասում է Փետային.

6. Պարսի՛ր ինձ, իմ հոգո՛ւ Սիրելի, որպե՞ղ ես հովուում, որպե՞ղ ես հանգիստ փալիս միջօրէին. գոցէ թափստականի պէս լինեմ՝ Քո ընկերների երամակների մէջ:

6. Հարսը, համաձայն Որոգիհնէսի մեկնութեան, հարցնում է, թէ՛ «Երբ դաս, որտե՞ղ ես ծնուելու, որո՞նք են Եկեղեցիները, որոնց հովուելու ես եւ հանգստացնելու զանազան ազգերի դայլերին եւ գառներին՝ միջօրէի պէս լուսաւորելով նրանց» (Որոգիհնէս):

Հարսի խօսքի մէջ վախճանաբանական երկիւղ կայ. նա զգուշանում է, որ չլինի թէ Յովհաննու «Յայտնութեան» մոլորեալ վիշապի եւ նրա ընկերների հետ [Յայտ. ԺԲ 9] ընկնի խաւարի մէջ՝ խոտորուելով Տիրոջ հօտից (Որոգիհնէս-կեղծ-Հիպոդիտոս):

Մարդկային բնութիւնը մի մոլորեալ ոչխար է, որ փնտրում է ճշմարիտ Հովուի երկնային արօտավայրերը: Այս փնտրումը նախ եւ առաջ սիրոյ փնտրում է. Հովիւ-Փեսան Իր կեանքը տուել է Իր ոչխարներին համար. սա՛ է մեծագոյն սէրը: Հարսն այդ սէրն է փնտրում, կամենում է լինել փրկական արօտավայրերում եւ զմայլուել երկնային կերակուրներով...

Միջօրէի լոյսը Քրիստոսի գալուստն է: Ընկերները սատանան եւ նրա արբանեակներն են, որոնց նախապէս անուանեց Սօր որդիներ: Հարսը վախենում է լինել նրանց երամակներում եւ չճանաչուել Տիրոջ կողմից (կեղծ-Հիպոդիտոս):

Միջօրէին արեգակը գտնուում է երկնակամարի գագաթնակէտում, եւ ստուերներն անհետանում են: Միջօրէին հանգստանալու արժանացածներն անստուեր լոյսի որդիներն են: Հարսը կամենում է մտնել միջօրէի աստուածային հանգստի մէջ եւ ողողուել արգարութեան Արեգակի լոյսով (Նիւսացի):

Ըստ Տաթեւացու՝ միջօրէն Նոր Ուխտն է՝ Երրորդութեան անստուեր լոյսով ճառագողած, ի հակադրութիւն ստուերակերպ Հին Ուխտի (Տաթեւացի):

Փեսան ասում է Հարսին.

7. Եթէ չճանասես քո անձը, գեղեցի՛կը կանանց մէջ, հեղուի՛ր դու հօբերի ուրսահեղուքներին եւ արածեցրո՛ւ քո ուլերին հովիւների վրանների մօտ:

7. Ինքնաքննութեան, առաքինութեան եւ պատուիրանապահութեան կոչ է, որը Նիւսացին զիտում է գոյաբանական հարթութեան մէջ. Աստուած ակնարկում է. «Նայի՛ր քեզ, զգո՛յշ եղիր պահպանութեան մէջ: Իմացի՛ր, որ այլ արարածների՛ պէս չպատուեցիր Արարչից. ո՛չ

հրկինքն Աստուծոյ կերպարանք եղաւ, ո՛չ արեգակը, ո՛չ լուսինը, ո՛չ գեղեցիկ աստղերը, ո՛չ էլ երեւելի արարածներից որեւէ մէկը, այլ դո՛ւ միայն եղար բնութեան ամէն մի կերպարանքից գերազանց: Դու ճշմարիտ Աստուծոյ կողմից տպաւորուած ես անապական գեղեցիկութեան նմանութեամբ, երանելի կեանքին ընդունակ, ճշմարիտ լոյսի պատկեր» (Նիւսացի): Այս խորհրդածութիւնները շարունակուած է Նարեկացին. «Եթէ այս ամէնը չլիչես, չնայես քեզ եւ չխոնարհուես քո ամբարտաւանութիւնից... եթէ Հպարտանաս առաքինութիւններով եւ այսուհետ չզնաս բարի ուղիով, կ'ելնես Իմ հօտից, որ պտղաբերում է կաթով ու բրդով, եւ կը խառնուես բարի Հովուից օտարացած անպտուղ ուլերին եւ այլեւս չես գտնի Նրան»:

Հարսին զգուշացնում է գանազանել հետքերը, գառներինը չչփոթել ձախակողմեան ուլերի հետքերի հետ. դրանց հովուում են անօրէն հովիւները, որոնք ունեն ճշմարիտ Հովուի կերպարանքը, սակայն չեն փրկի գայլերից (կեղծ-Հիպոդիտոս):

Որոգիւնէսեան ըմբռնումը փրկաբանական է: Փեսան ակնարկում է. եթէ մոռանաս Իմ երախտիքները, թէ ինչպէս Հանեցի քեզ Եգիպտոսից եւ բնակեցրի Աւետեաց երկրում, եթէ մոռանաս մեծամեծ շնորհները, որոնցով գեղեցկացար, կը ցրուես բաբելացիների եւ յետագայում՝ այլազգիների մէջ. եւ Մովսէսի ուլերն արածեցնելու փոխարէն հեթանոս թագաւորների պաշտամունքը եւ կարգը կը կատարես:

8. Մերձատ՛ր Իմ, քեզ ամանեցրի Իմ երկվարներին՝ փարաւոնի կառքի մէջ:

Ճ. Ի՞նչ է մերձատրը: Նախ՝ Աստուած է, Ով Աստուածութեամբ մերձ է ամէն ինչի, ինչպէս ասում է մարգարէն. «Ես մերձաւոր Աստուած եմ» [Երեմ. Ի 9 23], նաեւ՝ մերձ եղաւ մեզ եւ կցորդուեց արեան ու մարմնի [տես Եբր. Բ 14]: Երկրորդ՝ մենք ենք. որովհետեւ Աստուծոյ պատկերն ենք, նաեւ՝ անդամներ եւ ազգակիցներ ենք (Տաթեւացի):

Այստեղ Հարսը նմանեցւում է փարաւոնի կառքին լծուած զօրաւոր երկվարներին, որոնք Փեսայինն են... Նրանք փարաւոնի կողմից բռնութեամբ վարուեցին, մինչեւ նրան իր կառքերով Հանդերձ ծովի մէջ ընկղմեցին, եւ Հարսը յաղթեց թշնամուն (կեղծ-Հիպոդիտոս): Համաձայն Նիւսացու մեկնութեան՝ Աստուած Իր Հրեշտակային Հրեղէն կառքերը (որոնցով բարձրացրեց Եղիային) ուղարկեց եւ կործանեց



փարաւոնի կառքերը: Առաւելապէս այդ հրեղէն երիվարներին է նմանեցւում Հարսը (Նիւսացի):

Որոգիւնէսը հրէական ձիերով լծուած հեթանոսական կառքի մէջ տեսնում է քրիստոնէական Եկեղեցու ժառանգաբանութիւնը. հրեաներից եւ հեթանոսներից վայելչացած՝ Եկեղեցին զօրացաւ եւ իր մէջ կրեց մարմնացեալ Բանին:

Ըստ Նիւսացու՝ նմանուել եգիպտական կառքերն ընկղմող ձիուն՝ նշանակում է խորհրդական ջրով ազատուել հակառակամարտ չարի ծառայութիւնից, բոլոր եգիպտական խորհուրդները, այլազգի չարութիւնները եւ մեղքերը ջրի մէջ թողնելով՝ մաքուր վեր ելնել... Այսպիսին է արժանանում մարմնացեալ Բանի կրող լինելու (Մկրտութեան խորհուրդ):

Ձին մարդկային բնութիւնն է, որն Աստուծոյ արարչութեան կատարեալ եզրափակումն է, Աստուծոյ Հանգստարանը, բնակարանը եւ տաճարը: Մարդը հեռացաւ Արարչից եւ սկսեց կառավարուել սատանայից (կամ փարաւոնից), սակայն Տէրն Իր խաչով ընկղմեց սատանային եւ հաստատեց սուրբ Եկեղեցին, այսինքն՝ Իր ձի-հանգիստը (Նարեկացի-Տաթեւացի):

Օրիորդներն ասում են.

9. Քանզի գեղեցկացան քո ծնօրները փարաւակի պէս եւ քո պարսւնցը՝ մանեակների պէս:

9. Տաթեւացին ընդհանրացնում է Որոգիւնէս-Նիւսացի-Նարեկացի մեկնութիւնները: Տաթրակը չորս յատկութիւն ունի. ա) մեղմ եւ հանդարտ է, բ) ողջախոհ է, գ) քաղցրաբարբառ է, դ) [առաքինի]: Այս յատկութիւնները համապատասխանում են մարդկային էութեան ճշմարիտ նկարագրին՝ մտքի եւ մարմնի համեստութիւն, մարմնի եւ հոգու ողջախոհութիւն, սուրբ դաւանութեան քաղցրաբարբառ խոստովանութիւն, զանազան առաքինութիւններով զարդարուածութիւն:

Ըստ կեղծ-Հիպոդիտոսի՝ Հարսը ձեռք է բերել աստուածանմանութիւն (մեղմատեսիլ ու քաղցրախօս տատրակի պէս), որի հիմքն է ճշմարիտ դաւանութեան խոստովանութիւնը եւ սրբութեամբ Տիրոջ Մարմնի ճաշակումը:

Պարսւնցը մանեակի պէս է լինում, երբ վերցնում է Քրիստոսի խաչը եւ գնում Նրա յետեւից: Մանեակ է կոչւում նաեւ ծովեզրի նաւա-

Հանգիստը, այսինքն՝ գովաբանում է Հարսի՝ այս աշխարհի ալեկոծ կենցաղից եւ Հարի խռովայոյց փորձութիւններից հեռացած լինելը եւ աշակերտներին վարդապետութեամբ հանգստացնելը (Հիպոլիտոս):

Ըստ Որոգինէսի՝ նշուած մանեակը չորս Աւետարանների քառամանեակ-լուծն) է, որ դրուած է քահանաների լանջերին: Մանեակը նաեւ առաքիչութիւններն են, որոնցով զարգարուած է հոգու պարանոցը. ինչպէս նաեւ՝ շնորհների պսակն է (Նիւսացի):

10. Ոսկու պէս դարձնենք քեզ՝ արծաթէ կիրոսաձներով<sup>3</sup> հանդերձ,

10. Ըստ Նիւսացու՝ ոսկին եւ արծաթը խորհրդական աստուածաբանութեան նշանակներ են: Ոսկու նմանութիւն... «Անճառելի բնութեան մասին բոլոր վարդապետութիւնները, թէպէտ աստուածավայելուչ են եւ մտքով բարձրագոյն, այսուհանդերձ ոսկու նմանութիւն են, ոչ թէ հէնց ինքը ոսկին, քանզի անհնար է յայտնապէս ներկայացնել միտքը գերազանցող Բարին... Խորհուրդները ճանաչելու համար մեզ աւանդուած բոլոր բարի մտածութիւններն ի գորու չեն նկարագրելու [Աստուծոյ] բնութիւնը, այլ փառքի նշոյլները... Ուստի ովքեր կարողանում են հայել վեր՝ դէպի ճշմարտութիւնը, նրանց [յայտնում] է ոչ որպէս ոսկի, այլ՝ ոսկու նմանութեամբ՝ արծաթէ նախշերով: Արծաթը խօսքի նշանակն է, ինչպէս ասում է Գիրքը. «Արդարի լեզուն փորձուած արծաթ է» [Առակ. Ժ 20] (Նիւսացի):

Նմանութեամբ ակնարկում է Մովսէսի ստուերակերպ Օրէնքը, որով ոչ ոք չի արգարանում. հինկտակարանեան իրազարձութիւնները նմանութիւններ, օրինակներ եւ ստուերներ են (Որոգինէս):

Տաթեակացին ոսկին եւ արծաթը դիտում է միտք-խօսք յարաբերութեան մէջ: Ոսկին չորս յատկութիւն ունի. ա) բնութեամբ անապական է, ինչպէս եւ միտքը, բ) հրագոյն է, ինչպէս մտքի սէրը, գ) դեղին է, լուսատես աչքի պէս է, դ) ճաճանչափայլ է լինում արեգակից, ինչպէս մեր միտքը՝ իմանալից: Նմանապէս էլ արծաթը չորս յատկութիւն ունի. ա) պարզ ստացւում է հողից, ինչպէս մեր խօսքը՝ սրտից, բ) պայծառութիւն է աչքերի համար, ինչպէս խօսքը՝ մտքի, գ) անժանդ է,

3 Կիտուած – կէտ-կէտ՝ պոտ-պոտ յօրինուած, զարգարուած նկար, գործուածք, բանուածք (ՆԲՀԼ եւ Առձեռն բառարան Հայկազեան լեզուի):

ինչպէս խօսքն է անապական, դ) գոյնով սպիտակ է, ինչպէս եւ խօսքն է տեսքով լուսաւոր:

Նկարագրուած զարդն արդարութիւնն է. ովքեր Տիրոջ երկիւղով եւ սրբութեամբ ընթանում են արդարութեան յետեւից, Արքան Իր գիրկը կ'ընդունի նրանց՝ երկնքի արքայութեան մէջ (Կեղծ-Հիպոդիտոս):

11. մինչեւ Արքան Իր գիրկն ընդունի քեզ:

11. «Բանը մարմին եղաւ...» [Յովհ. Ա 14]: Եւ վերջրեց մանկանն ու ասաց. «Այսպիսինքնինն է երկնքի արքայութիւնը» [Մատթ. ԺԹ 14]: Մարմնացեալ Բանը Կոյսից վերջրած մարմնի գիրկն է ընդունում եւ Հանգստացնում կուռքերից տառապած եւ յոգնած ազգերին, քանզի Իր Մարմինն անուանեց Եկեղեցի եւ Իր գիրկը ժողովեց [երկնքի արքայութիւնը փնտրողներին] (Որոգիւնէս):

Հարսն ասում է իրեն եւ Փեսային.

12. Իմ նարդուն<sup>4</sup> արձակեց իր հոտը, սրաշիսի<sup>5</sup> ծրար է ինձ համար իմ Եղբորորդին, թող հանգստանայ իմ սրիսքների մէջ:

12. Նարդոս իւղն այտեղ խորհրդանշում է բոլոր անուշահոտ եւ ազնիւ իւղերի (առաքինութիւններ) ամբողջութիւնը, որով մեր

4 Նարդոս – (եբր. נֶרְד / nerd) Արեւելքում քաջ յայտնի անուշահոտ բոյս է՝ կատուախոտների ընտանիքից (Valeriana Nardostachys jatamansi), որից պատրաստւում է յոյժ անուշահոտ եւ մեծարժէք իւղ [Մարկ. ԺԳ 3, Յովհ. ԺԲ 3–5]: Հնում այդ իւղով օժուում էին խնջոյքների ժամանակ. այն ցայտօր էլ գործածւում է մագերի համար: Նարդոսի հայրենիքը Հիմալայներն են, եւ Հիմնականում արտահանւում էր Հնդկաստանից: Պաղեստինում եւ Հարեւան երկրներում նարդոսը շատ քանակով լինում է սարերում եւ Հարթավայրերում: Հրեաները նարդոսի իւղ հիմնականում ստանում էին Փոքր Ասիայից. նարդոսի լաւագոյն իւղը պատրաստւում էր Տարսոսում:

5 Ստաշիս – (եբր. שֹׁשֵׁבִית / nataph) Խունկի բաղադրամասերից է [Ելք Լ 34]: Եբրայերէն անունը նշանակում է «կաթող», որը ցոյց է տալիս, որ ստաշիսը ստացւում է կաթիլների տեսքով: Հնարաւոր են երկու բոյսեր. Commiphora gileadensis, որի հայրենիքն է Հարաւային Արաբիան, եւ Styrax officinale, որն աճում է պաղեստինեան բլուրներում: Առաջինը խիտ ճիւղերով բոյս է՝ մարդու հասակից ցածր, եռամասնեայ փոքրիկ տերեւներով: Խէժը ստանում են երկուսից էլ՝ ճիւղերի վրայ ճեղքուածք բացելով: Եբրայերէն բնագրում այստեղ գործածուած է գմուռս (מוֹר / mor) բառը, որի մասին տես [Գ 6]-ի համապատասխան ծանօթագրութեան մէջ:

հոգին զգուճ է Աստուծոյ անուշահոտութիւնը. Հարս-Եկեղեցին իր սրբութեամբ ճանաչում է Սուրբին, ողորմածութեամբ՝ Ողորմածին, անապականութեամբ՝ Անապականին... (Նիւսացի-Արեւելցի):

Նարդոսը, որ հեղուկեց Տիրոջ գլխին եւ անուշահոտութեամբ լցրեց տունը [տես Մատթ. ԻԶ 7, Մարկ. ԺԴ 3, Յովհ. ԺԲ 3], խորապէս կապուած է այս խօսքի մեկնութեան հետ. ա՛յս է իւղը, որ Փեսայի հոտը փոխանցում է Հարսին: Տիրոջ վրայ հեղուած իւղն անուշահոտութեամբ լցրեց տունը, ուր հաւաքն էր (Եկեղեցի): Սա Տիրոջ մահուան խորհրդի մարդարէական կանխասացութիւնն էր... Տունն աշխարհն է, որ լցուեց Աւետարանի քարոզութեամբ (Նիւսացի):

Հարս-Եկեղեցուն փոխանցուած անուշահոտութիւնը սկսում է բուրբլ Եկեղեցու բոլոր անդամներից՝ քահանաներից, սարկաւազներից, կոյսերից եւ ուրիշներից (Արեւելցի):

Նարդոս իւղն իր անուշահոտութեամբ, բժշկող յատկութիւններով, մաքրութեամբ, սրբութեամբ, անապականութեամբ խորհրդանշում է առաքինութեան բոլոր նիւտերը՝ աստուածահաճութիւն, Աստուծոյ սիրով տողորուածութիւն, սրբութիւն, ողորմածութիւն եւ այլն (Տաթեւացի):

Նարդոսի հոտը, ըստ կեղծ-Հիպոդիտոսի, ամենակատար առաքինութեամբ զարդարուած արդարութիւնն է, որ բուրում է երկրի վրայ, եւ մարդիկ նրա համար փառաւորում են Աստուծուն (կեղծ-Հիպոդիտոս):

Ստաշխը Տէրն է, որ ծրարուեց մեր փոքր բնութեան մէջ (ստիսքների մէջ), ամենակալ Աստուած՝ Մարիամի մէջ, ինչպէս նաեւ՝ արժանաւոր հաղորդուողների սրտի մէջ (ստիսքների մէջ) (Հիպոդիտոս):

Ստաշխը Բանն էր Հօր ծոցում, որ եկաւ մեզ մօտ, վերցրեց մեր բնութիւնը, արձակեց իր հոտը եւ լցրեց երկինքը եւ երկիրը: Նաեւ մեր մէջ է վառում Աստուծոյ ստաշխը, որքանով մարմնի սրբութիւն ենք ցուցաբերում: Ստաշխի ծրար են սուրբերը, որ Աստուծոյ երկիւղը եւ պատուիրանները կրում են իրենց սրտում եւ տալիս են ուրիշներին (Որոգինէս-Նարեկացի-Արեւելցի):

Նիւսացին մեկնում է այս խօսքի խորհրդական-մարդաբանական շերտը: Ստիսքները սրտի նշանակն են, եւ սիրտն է այն ծրարը, ուր բարի գանձերն են: Սիրտը, լինելով մարմնի կենսարար եւ ջերմարար կենտրոնը, նախապէս ընդունում է Քրիստոսի անուշահոտութիւնը եւ վերածւում Տիրոջ խունկի ծրարի եւ ապա առաքինութեան գործերի

Համար ջերմացնում եւ պատրաստում մարմնի անդամները (խունկի անուշահոտութեամբ լցնում) (Նիւսացի):

Հարսը ողջ սրտով, հոգեւոր եւ մարմնաւոր բոլոր զօրութիւններով փնտրում է Փեսային (կեղծ-Հիպոդիտոս):

Ինչո՞ւ է Քրիստոս անուանուում Եղբորորդի. որովհետեւ՝ ա) հեթանոսները եւ հրեաները եղբայրներ են՝ մէկ Ազամից, բ) ծնուեց Յուդայի ցեղից եւ եղբորորդի է հրեաներին, գ) Ղուկասը Նաթանից է հիմնում ազգահամարը, եւ Քրիստոս կոչւում է Սողոմոնի եղբորորդի, դ) Դաւիթը մեր մեղաւոր եւ զղջացած եղբայրն է, իսկ Քրիստոս՝ նրա Որդին, ուստի Քրիստոս եղբորորդի է մեզ ըստ մարմնի (Տաթեւացի):

13. Նոճո՞ւ ողկոյզ է ինձ համար իմ Եղբորորդին՝ Եսապիի այգեւ-  
փաննների մէջ:

13. Եսապիի բերրի այգեստանների անփուտ նոճին խաչն է, որի վրայ բարձրացաւ Տէրը որպէս ողկոյզ (Որոգիւնէս): Քրիստոս անուանուում է ողկոյզ, որովհետեւ ճմլուեց խաչի հնձանում եւ եղաւ փրկութեան գինի եւ, ըստ հաւատքի ունակութեան չափի, բաշխուում է հաւատացեալներին: Նարդոս, ծրար եւ ողկոյզ անունների յաջորդականութիւնը պատահական չէ. նախայաւիտեան Բանը, որ Հօր մօտ էր, ծրարուում է սուրբ Կոյսի արգանդում, ապա կամովին գալիս չարչարանքների եւ խաչելութեան՝ մեղքի իշխանութիւնից մեզ փրկելու համար (Որոգիւնէս-Տաթեւացի):

Փետան ասում է Հարսին.

14. Ահա գեղեցիկ ես, մերձատ՛ր Իմ, ահա գեղեցիկ ես. քո աչքերն աղանիւներ են:

14. Ահա գեղեցիկ ես... Այսինքն՝ Քրիստոս-Փեսայի մաքուր եւ պատրաստ Հարս-Տաճարն են՝ ըստ մարգարէների վկայութեան:

6 Նոճի – (եբր. ִקְוֵה / kofar) *Lawsonia inermis*: Աճում է թփերով. սիրում է տաք պայմաններ, ինչպէս, հաւանաբար, Սողոմոնի՝ Ենգադդի այգիներում էր: Նրա անուշահոտ սպիտակ ծաղիկները յիշեցնում են խաղողի ողկոյզներ եւ արեւելեան կանանց սիրած ծաղիկներն են: Հնում նրա չորացրած եւ ազացած տերեւներից պատրաստում էին զանազան օճանելիքներ՝ կանացի մածուկներ, քոսեքներ՝ դեղին գոյն տալու մաշկին, ձեռքերին, տղամարդկանց մօրուքներին... Անուանուում է նաեւ կիպրոս:

Դու աւելի գեղեցիկ ես, քան քարեղէն եւ փայտեղէն հռչակաւոր տաճարները, քանզի Իմ գալստեամբ ստացար այդ գեղեցկութիւնը (Որոգիւնէս): Հարսը գեղեցիկ է, քանզի մերկացել է հին մարդուց եւ հագել Նորը, որ Քրիստոսն է (Կեղծ-Հիպոդիտոս):

Ըստ Նիւսացու սոյն խօսքը կոչ է Հարսին՝ վերստին ստանալու չարի հետ համագործակցութեամբ կորցրած սկզբնատիպ գեղեցկութիւնը: Մարդկային կրական բնութիւնը մերձաւոր է անուանուում Աստծուն, այսինքն՝ իր մէջ կրում է Նրան (Հիպոդիտոս): Մերձաւորը ցոյց է տալիս գոյաբանական մերձաւորութիւնը. մարդն արարուած է Աստուծոյ պատկերով [Ծն. Ա 27] (Կեղծ-Հիպոդիտոս):

Ադամին Սուրբ Հոգու խորհրդանիշն է. Հարսը ստացել է Սուրբ Հոգին, այսինքն՝ նրա Հոգու աչքերն աղանապէս մաքրուել են, առանց որի անհնար է տեսնել Փեսայի գեղեցկութիւնը եւ Տէր խոստովանել Նրան (Նիւսացի-Նարեկացի): Ադամին նաեւ հեղութեան, անմեղութեան, սրբութեան, միամտութեան եւ զանազան առաքինութիւնների նշանակն է. այս բոլոր յատկութիւններն ունի հարսնացած եկեղեցին (Տաթեւացի):

Հարսն ասում է Փեսային.

15. Ահա բարենշան ես, Եղորորդեա՛կ իմ, այլե՛ գեղեցիկ մեր հանգադարանի մէջ:

15. Հարսը հեռացել է ամէն տեսակ աշխարհիկ «գեղեցկութիւնները» (Նիւսացի), ձեռք է բերել կատարեալ հոգեւոր տեսողութիւն եւ տեսնում է Քրիստոսի ճշմարիտ գեղեցկութիւնը (Նարեկացի): Քրիստոս ունի սկզբնատիպ գեղեցկութիւնը՝ որպէս Աստուծոյ եւ մարդու միաւորման արտայայտութիւն. Քրիստոս ամենագեղեցիկ մարդն է, քանի որ նրա մարդեղութիւնը պայծառակերպուած եւ ներթափանցուած է Աստուածութեան լոյսով (Նիւսացի-Տաթեւացի):

Գրաբարեան գահը կամ գահոյքը Տաթեւացու բացատրութեամբ մահիճն ու նրան հովանի ծածկոյթն է, որը սոյն թարգմանութեան մէջ ներկայացուեց որպէս հանգադարան: Մահիճը՝ ա) Բան Աստուծոյ միաւորութիւնն է մարդկութեան հետ, բ) հանգստեան տեղ է, գ) այս կենցաղի գիշերն է, դ) խորհրդանշում է Քրիստոսի էջըը դժոխք: Հովանի ծածկոյթը մարմինն է, որով Քրիստոս ծածկում է Աստուածութիւնը, որպէսզի կարողանանք տեսնել Նրան եւ կենդանի մնալ:

Գահոյքը տունն է՝ մարդկային մարմինը, որ աստուածային գորութեան հովանու տակ է, որ միշտ շրջում է մեզ հետ՝ պահելով մեզ չարից (կեղծ-Հրպողիտոս):

16. Մեր փան գերաւնները մայրիներ են<sup>7</sup>, մեր դարսասանդները<sup>8</sup> սոճիներ<sup>9</sup>:

7 Մայրի – (եբր. עֵרֶץ / ezez) *Cedrus Libani*: Լիբանանի մայրին փշատերեւ ծառ է, որի փայտը բարձր է գնահատուում իր երկարակեցութեան պատճառով: Լիբանանի մայրին արեւելեան անտառների ամենից բարձր գնահատուող եւ հսկայ ծառերից է: Փշատերեւ է եւ մշտադալար: Ունենում է մօտաւորապէս 20–25 մ բարձրութիւն: Ճիւղերը խիտ են, երկար եւ գրեթէ հորիզոնական են տարածուում բնից: Մայրու բուներ կարմրուուն գոյն ունի, եւ փայտը դառնահամ է, որի համար էլ միջատները հագողադէպ են փչացնում այն, որի հետեւանքով առանձնանում է յատուկ պնդութեամբ եւ, ըստ բնախոյզների վկայութեան, երբեմն աճում է 2 հազար տարուց աւելի: Մայրիները միշտ գործածուում էին հարուստ եւ արժէքաւոր շինութիւնների համար: Լիբանանի լեռները մի ժամանակ հռչակաւոր էին իրենց բարձր մայրիներով: Բայց զարմանալիորէն կատարուեց Նսայու մարգարէութիւնը Լիբանանի մայրիների մասին. «Եւ նրանցից մնացածները հաշուած կը լինեն, եւ երեխան կը հաշուի նրանք» [Եւ. Ժ 19]: Սուրբ Գրքի իւրաքանչիւր ընթերցող յաճախ կարող է հանդիպել այնպիսի տեղերի, ուր բանաստեղծական յիշատակումներ կան մայրիների՝ բնութեան թագաւորութեան այդ իսկապէս հսկայ ներկայացուցիչների: Նրանք երեւակայութիւնն ակամայ ապշեցնում են հսկայական բարձրութեան տպաւորութեամբ, համաչափութեամբ, հաստութեամբ եւ անուշահոտութեամբ: Մայրու երկար ճիւղերը վիհ տեսք են տալիս նրան եւ լաւ ստուեր ու գովութիւն՝ շոգին: Մայրին իր հոտաւէտ խէժով իւրապատուկ անուշահոտութիւն է արձակում եւ նրանով լցնում լիբանանեան սարերը:

8 Դարանաւանդ – պրշակ, պչրաք, տան առաստակալ գերանների վրայ հիմնուած տախտակամած:

9 Նոճի – (եբր. תִּרְשָׁו / berot‘) *Cupressus sempervirens*: Շատ յայտնի փշատերեւ եւ մշտասաղարթ ծառ է. աճում է Սիրիայում եւ Փիւնիկիայում: Բարձր եւ գեղեցիկ է, ըստ Սբ Գրքի, Լիբանանի փառքն է մայրու հետ [Եւ. Կ 13]: Նոճու փայտը ամուր է, պինդ, հոտաւէտ եւ սքանչելի կարմրուուն երանգ ունի: Որպէս անփուշ փայտ՝ այն յարմար շինանիւթ է, որի համար էլ Սողոմոնի կողմից գործածուեց տաճարի շինութեան համար: Հայերէնում կարող է շփոթ առաջանալ նոճու (կիպարիս) եւ կիպրոսի միջեւ, որը նոյնպէս թարգմանուում է նոճի [տես Ա 13]:

16. Գերանը սիրոյ խորհուրդն է. անփուտ եւ ամուր է մայրին, անսպական եւ զօրաւոր է սէրը՝ հոգեւոր կեանքի գլխաւոր առաքինութիւնը: Դարանաւանդները շինութեան մարդակներն ու տախտակներն են եւ խորհրդանշում են առաքինութիւնները: Առաքինութիւններն, ամրանալով սիրոյ գերանին, կազմում են հոգեւոր շինութեան ծածկոյթը, ուր, ազատ ամէն տեսակ փորձութիւններից եւ ախտերից, արգասաւորում է հոգեւոր կեանքը (Նիւսացի-Տաթեւացի):

Այսպիսի ծածկոյթի տակ է բնակւում Յիսուս-Փեսայի հոգին (Հիպոդիտոս):

Տունը եկեղեցին է, որի անկեան վէճը Բանի մարդեղութիւնն է: Գերանները եւ դարանաւանդները Յիսուս Քրիստոսն է եւ Տիրոջ տան սպասաւորները մարգարէները եւ առաքեալներն են՝ իրենց կանխասացութիւններով եւ քարոզչութեամբ (Որոգիւնէս):

Ակնարկւում է սուրբ առաքեալների ճշմարիտ վարդապետութեան քարոզութիւնը: Նոճի-դարանաւանդները մարգարէների եւ վարդապետների խօսքերն են (կեղծ-Հիպոդիտոս):

## Բ

Փեսան ասում է Իրեն եւ Հարսին.

Ես դաշտերի ծաղիկ եմ, հովիտների շուշան<sup>10</sup>:

1. Ըստ Հիպոդիտոսի՝ դաշտը (նմանապէս՝ հովիտը) սբ Կոյսն է, որից ծաղիկեց Քրիստոս՝ հովտի շուշանը եւ դաշտի ծաղիկը:

Դաշտը, ինչպէս նաեւ հովիտը, որ բարձրադիր (նկատի ունի լեռան ստորոտների բարձրութիւնը) դաշտն է, մարդկային բնութիւնն է: Երբ այն մշակւում է, վեր է հանում անուշահոտ, մաքուր եւ պայծառ ծաղիկներ (Նիւսացի):

10 Շուշան – (եբր. ܫܘܫܢ / šošana) յայտնի են մի քանի տեսակներ. *Hyacinthus orientalis*, որը կոճեղգաւոր բոյս է՝ կապոյտ ծաղիկներով, *Tulipa sharonensis* կամ *Anemone coronaria*, որը կարմիր գոյն ունի (հաւանաբար այս տեսակը նկատի ունի Ե 13 խօսքում նկարագրուածը). *Lilium candidum*, որը սպիտակ *madonna* շուշանն է՝ վայրի, լեռնային տեսակը, որն աճում է ժայռոտ տեղերում: Յայտնի է նաեւ դաշտային (մարգագետնային) կամ ջրային դեղին շուշանը (*Iris pseudacorus*), որը կոչւում է հարսնարմատ կամ նունուֆար:



Հովիտն իր ցածրադիրութեամբ, ջրառատութեամբ եւ բազմարդիւն բուսականութեամբ խորհրդանշում է հոգով խոնարհ, իմաստութեան ջուրն ունեցող եւ արդարութեան բազում բարեգործութիւններով զարդարուած անձը: Նոյնպէս էլ դաշտն ընդարձակ է, հարթ եւ ջերմ. դա այն բազում բարիքներ կրող, արդարութեամբ ու ջերմ սիրով լի հոգին է, ուր բնակուում է Քրիստոս: Դաշտի ծաղիկը վարդն է, հովտի շուշանը՝ նոնուֆարը, որն աճում է ջրերի մէջ եւ դեղին գոյն ունի: Նկատի չի առնուած լեռնային շուշանը, որն ունի սպիտակ գոյն, այսինքն՝ հրեշտակները, քանզի [մարդկային բնութիւնը] վերցւում է ոչ թէ հրեշտակային բնութիւնից, այլ Աբրահամի զաւակից: Եւ Քրիստոսի զաւստեամբ ծաղկեց երկիրը, այսինքն՝ մարդկային բնութիւնը, սրբութեան զանազան որակներով: Այստեղ գոյներն այդ որակների արտայայտութիւններն են. սպիտակը՝ կուսութեան, դեղինը՝ ճշմարտութեան, կարմիրը՝ մարտիրոսութեան, կապոյտը՝ մշտապէս երկնայինը խոկացողների, սեւը՝ արտաձգեաց ապաշխարողների (Տաթեւացի):

Բերրի եւ պարարտ դաշտը (ինչպէս նաեւ հովիտը) խորհրդանշում է եկեղեցիները, ուր որպէս ծաղիկ ներկայ է Քրիստոս: Շուշանի գոյնը խորհրդանշում է աշխարհի նկատմամբ մեռելութիւնը (կեղծ-Հիպոդիտոս):

2. Ինչպէս շուշանը<sup>11</sup>՝ փշերի մէջ, այնպէս է Իմ մերձատրը դուստրերի մէջ:

2. Փեսան դուստրերով շրջապատուած Իր մերձաւորին՝ Հարսին, նմանեցնում է փշերով շրջապատուած շուշանի: Որոշ բնագրերում մերձատրի փոխարէն առկայ է քոյր տարբերակը, որին էլ հետեւում է մեկնիչներին մեծ մասը (Որոգիւնէս, Նիւսացի, Արեւելցի, Տաթեւացի):

Հարսը վեր է ընթանում երկնքի արքայութեան ճանապարհով, կատարում է երկնաւոր Հօր կամքը, ուստի նա եղբայր է, քոյր եւ մայր (Նիւսացի): Հարսն անուանւում է քոյր, որովհետեւ անախտ սիրով սիրեց Փեսային եւ քոյր է ո՛չ թէ ըստ բնութեան, այլ ըստ շնորհի (Տաթեւացի):

11 Տես Բ 1:

Փուլ-դուստրերը կենցաղական հեղձուցիչ փշերն են կամ մարդկային կեանքի թշնամի գորուծիւնները (Նիւսացի), ինչպէս նաեւ դեւերը, հերձուածողները (Արեւելցի) եւ մեղաւորները (Նարեկացի):

Տաթեւացին, յիշատակելով Փիլոնին, ասում է, որ ջրերում աճող գեղեցիկ, հաստատուն, բուժիչ եւ հոտաւէտ շուշանը շրջապատուած է եղէգներով (նշեր)՝ տգեղ, խոցոտիչ, դարչահոտ եւ անհաստատ, ինչպէս եկեղեցին՝ հերձուածողներով եւ չարերով:

Փշերով շրջապատուած շուշանը, ըստ կեղծ-Հիպոլիտոսի, Յիսուս Քրիստոսն է՝ հրէական եւ հեթանոսական փշերի մէջ:

«Երգ երգոց»-ում մեղաւորներով շրջապատուած արդարի պատկերը երկու նպատակ ունի. նախ՝ որ արդարների վարքն առաւել եւս ընդգծուի, երկրորդ՝ որ մեղաւորները դարձի գան եւ նմանուեն արդարներին (Նարեկացի):

Հարսն ասում է Փեսային.

3. Ինչպէս խնձորենին՝ անբարի ծառերի մէջ, այնպէս է իմ Երրորդդին՝ որդիների մէջ: Նրա հովանու տակ նստել փափագեցի եւ նստեցի. եւ նրա պտուղը քաղցր է իմ կոկորդում:

3. Անտառը մարդկային ընկած բնութիւնն է՝ անպտուղ, մացառուտ, գազաններով լի, խաւարամած... Ահա այս անտառում յայտնուում է Կենաց Խնձորենին (որ որպէս փայտ համազոյ է մեզ), Իր պտղի անուշահոտ բուրմունքով լցնում այն եւ որպէս փրկութեան քաղցրահամ կերակուր բաշխում մեզ՝ քաղցրանալով մեր քիմքում (Նիւսացի-Տաթեւացի):

Անտառի ծառերով շրջապատուած խնձորենին, ըստ կեղծ-Հիպոլիտոսի, խորհրդանշում է Քրիստոսին՝ մարգարէների, նահապետների եւ հրեշտակների մէջ:

Խնձորենին, ըստ Որոգիւնէսի, խաչափայտն է, նրանից կախուած խնձորը՝ Յիսուս Քրիստոս: Խնձորի կարմրութիւնը եւ սպիտակութիւնը մարդեղութեան եւ Աստուածութեան նշանակներն են: Հարսը ցանկանում է նստել խաչի (Փրկչի մարդեղութեան) հովանու տակ, հաւատալ Աստծուն եւ հնազանդուել, փափագել Նրա խօսքի քարոզութիւնը, որ սկզբում մանանիխի հատիկի եւ փոքրիկ թթխմորի նմանուեց... (Որոգիւնէս):

«Քանզի այնժամ զգայութիւնը կը քաղցրանայ Հոգու խօսքով, երբ Խնձորենու Հովանին, գատելով, պատասպարի փորձութիւնները բոցից...» (Նիւսացի):

Տիրոջ Մարմնի պտուղը եւ վարդապետութեան խօսքը քաղցր է կոկորդում, սակայն ոչ՝ տեսանելիօրէն, այլ՝ երբ Հարսը ծամել է, այսինքն՝ շնորհով մտաքննել է մեղքերի թողութիւնը եւ երկնային կոչման յոյսը (կեղծ-Հիպոդիտոս):

Կոկորդում քաղցրացած խօսքն, ըստ Արեւելցու, իմաստութիւնն է:

Հարսն ասում է օրիորդներին.

4. Գինու րոնն րարէք ինձ եւ կարգեցէ՛ք ինձ վրայ Սէրը:

4. Հարսը տակաւին ծարաւ է... Սակայն այնքան երկար է տոչորուել ծարաւից, որ այլեւ չի բաւարարուում «խառնուած» իմաստութեամբ եւ բաւական չի համարում ծարաւը յագեցնելու համար թակոյկի ողջ բովանդակութիւնը բերանը հեղել, այսինքն՝ չի բաւարարում Բանի մարդեղութեան մասին մարգարէութիւններով... Այլ հայցում է Գինու տուն մտնել, բերանը հպել հնձանների տակից հոսող հեշտալի գինու շիթերին... Հարսը բաղձում է լինել այն յարկի տակ, ուր Գինու խորհուրդն է, այսինքն՝ Բան Աստուծոյ [մարդեղութեան] ուրախարար տան մէջ (Նիւսացի-Որոգինէս), որը սուրբ Եկեղեցին է, ուր պատմուած են Բանի մարդեղութեան տնօրինական խորհուրդները (Արեւելցի):

Պօղոսն ասում է. «Տալու է ձեզ իմաստութեան եւ յայտնութեան հոգին, որպէսզի լցուէք Քրիստոսի սիրոյ լրութեամբ» [Եփես. Ա 17]: Գինին խորհրդանշում է երկնային իմաստութեան ուրախութիւնը, երբ հոգին խորհում է վերինը, ուր Քրիստոսն է՝ չօր աջ կողմում [տես Կող. Գ 1]: Աստուած կատարեալների հոգիներում հաստատում է սէրը, ինչպէս ասաց. «Եղէ՛ք Իմ մէջ, ինչպէս ես՝ ձեր մէջ» [տես Յովհ. ԺԵ 5] (կեղծ-Հիպոդիտոս):

Աստուած սէր է, քանզի Աստուծոյ անունը յայտնի է որպէս սէր, ինչպէս ասում է առաքեալը, թէ՛ «Աստուած սէր է, եւ ով սիրոյ մէջ է, նա բնակուած է Աստուծոյ մէջ, եւ Աստուած՝ նրա մէջ» [Ա Յովհ. Դ 12-13]:

Արդ՝ Հարսն աղաչում է Փեսայի սիրով ջեւացող բարեկամներին հեռաւորութեամբ չպատգամաւորել, ինչպէս նախկինում մարգարէները, այլ իրեն առաքելաբար մտցնել Քրիստոսի տունը, Ում Գինի կոչեց, որպէսզի աստուածտեսութեամբ առաւել բորբոքուի Աստուծոյ սիրով

(Նարեկացի), սիրի Աստծուն ողջ սրտով, հոգով, գորութիւններով եւ զգայութիւններով [տես Մարկ. ԺԲ 30], սիրի ընկերոջը սեփական անձի պէս... սիրի մինչեւ իսկ թշնամիներին եւ բարեգործութեամբ հասուցի անիրաւութիւնը (Նիւսացի):

Գինու տունը, ըստ Հիպոդիտոսի, Վերին Երուսաղէմն է՝ Հօր սեղա-նը, որով ցնծում են արդարները:

5. Հասարակեցէ՛ք ինձ իղով, ինձո՛ր լցրէք ինձ վրայ, քանզի ես խանդակաթ եմ սիրով:

5. Իսկ անաքինութեան խորհրդանիշն է. անաքինութիւնը ոչ միայն բարին տեսնելն է եւ լաւագոյնին ընդունակ լինելը, այլեւ բարու մէջ անփոփոխելի մնալը: Արդ՝ Հարսը ցանկանում է հաստատուել անաքինութիւնների իւղերով եւ հեռանալ մեղքերի ամէն տեսակ ժահահոտութիւնից (Նիւսացի):

Իսկ նաեւ ողորմութեան նշանակն է. Հարսը հոգու բացուած աչքով տեսնում է Փեսայի անչափ ողորմութիւնը, որ արեց մեզ համար, եւ ցանկանում է հաստատուել, ողորմութեամբ ողորմութիւն գտնել (Հիպոդիտոս-Նարեկացի):

Իսկ, ըստ կեղծ-Հիպոդիտոսի, նշանակն է Սուրբ Հոգու ներգործութիւնների: Հարսը ցանկանում է հաստատուել իւղերով, այսինքն՝ Սուրբ Հոգու ներգործութիւններով, Ով պիտի ուսուցանի եւ յիշեցնի ամէն ինչ եւ մեր ներքին մարդու մէջ հաստատի Քրիստոսին: Իսկ խնձորներն Աստուծոյ պէս-պէս գլխութիւնների արտայայտութիւններն են (նշաններ, սքանչելիքներ...) (կեղծ-Հիպոդիտոս):

Հիպոդիտոս-Նիւսացի մեկնութիւնները հիմնուած են խնձորենի-ներով ծածկէք ինձ տարբերակի վրայ: «Որ մեր բնութեան անտառի մէջ մարդասիրաբար բուսաւ, մարմնի եւ արեան հաղորդ լինելու համար խնձորենի եղաւ... Արդ՝ հոգին, յարածամ զուարճանալով աստուածայինով, բազմում է տեսնել այս յարկերը: Սա ուսանում ենք առակով. դէպի վեր հայելով՝ տեսնում ենք երկնային խնձորենիները՝ աւետարանական վարդապետութիւններով առաջնորդուելով դէպի անաքինութիւն, որն ի վերուստ եկեալը եւ ամէն ինչից Վերը ցոյց տուեց մեզ՝ մարմնի մէջ երեւալով: Բոլոր բարի անաքինութիւնների օրինակն իր մէջ ցոյց տուեց, ինչպէս ասում է Տէրը, թէ՛ «Սովորէ՛ք Ինձանից, քանզի հեզ եմ եւ խոնարհ սրտով» [Մատթ. ԺԱ 29]» (Նիւսացի):

Խանդակաթ եմ սիրով (կամ որոշ տարբերակներում՝ խոցոտուած եմ սիրով): Ակնարկում է խանդակաթ սիրով ծառայելն Աստծուն (Հիպոդիտոս): Խանդակաթ եմ, այսինքն՝ Փեսայի սիրոյ նախանձը կաթեց իմ մէջ, կամ՝ բոցավառուած եմ Փեսայի սիրով (Արեւելցի):

Հարսի սիրտը լցուած է Աստուծոյ բերկրանքով, որի դէմ անզօր են այս աշխարհի նանրութիւնները (կեղծ-Հիպոդիտոս):

Հարսը խոցուած է Աստուծոյ սիրոյ փրկաբեր նետով: Աստուած Իր Միածին-Նետն առաքեց փրկուածներին՝ Սուրբ Հոգու կեանքով Եռասայր սլաքի շուրջն օծելով: Սլաքն [Ամենասուրբ Երրորդութեան] հաւատքն է, որպէսզի ում մէջ մտնի, իր հետ ներմուծի Նետը եւ Աղեղնաւորին, ինչպէս ասում է Տէրը, թէ՛ «Ես եւ Հայրս կը դանք եւ կ'օթեւանենք Նրա մէջ» [Յովհ. ԺԳ 23] (Նիւսացի):

6. Նրա ձախ ձեռքը գլխիս փակ է, իսկ Նրա աջը թող գրկի ինձ:

6. Փեսայի ձախ ձեռքը Հարսի գլխի տակ է, որով նետն ուղղում է դէպի նպատակը, իսկ Նրա աջն Իր մօտ է քաշել Հարսին: Եւ ձգելով թեթեւօրէն վեր է առաքում... Այսուհանդերձ, Հարսն անբաժանելի է մնում Փեսայից: Փեսայի աջը եւ ձախն իմաստնօրէն հովանի եւ պահպան են Հարսին. աջից կեանքի երկարակեցութիւնն է, ձախից՝ Հարս-Եկեղեցու ճոխութիւնը եւ փառքը (Նիւսացի-Նարեկացի):

Փեսան զրկել է նախ՝ մարգարէներով եւ այժմ՝ անքակտելիօրէն Բանի մարգեղութեամբ (Որոգիւնէս): Աստուած նախախնամութեամբ զրկել է Եկեղեցին եւ Իր մէջ է պահում (կեղծ-Հիպոդիտոս):

Հարսն ասում է օրիորդներին.

7. Երդուեցում եմ ձեզ, դուստրե՛ր Երուսաղէմի, անդաստանի զօրութիւններով եւ ուժգնութիւններով. եթէ վեր կենաք, արթնացրէ՛ք Սէրն Իր կամենալուն պէս:

7. Նկատի է առնուած հրեշտակային իմանալի անդաստանը, ուր բնակում է Տէրը: Անդաստան է նաեւ աշխարհը, իսկ անդաստանի զօրութիւնը Բանի մարմինն է, որով խոնարհուեց երկիր, ուր նահատակները հեղեցին իրենց արիւնը: Հարսը նրանց է կոչում Երուսաղէմի դուստրեր:

Հարսը երգուեցնում է Երկնային Երուսաղէմի ցանկացողներին այլեւս չլքել Տիրոջը (Որոգիւնէս):

Համաձայն կեղծ-Հիպոդիտոսի՝ Հարսը հրդուեցնում է հրեշտակներին Քրիստոսի Մարմնով, որ զօրութեամբ եւ ուժգնութեամբ ծաղկեց երկրային նւթից եւ երկրի անէծքը փոխեց արդարութեան: Եթէ վեր կենաք, այսինքն՝ երբ երկրից երկինք ելնէք եւ տեսնէք Աստուծոյ հրեար, արթնացրէք ի սէր եւ ի խնամս Եկեղեցւոյ (կեղծ-Հիպոդիտոս):

Ըստ Նիւսացու՝ զօրութիւնները եւ ուժգնութիւնները հրեշտակային բնութիւններն են: Հարսն այս երկնային զօրութիւններով հրդուեցնում է աշակերտողներին, որոնք եղան Վերին Երուսաղէմի դուստրեր, որպէսզի նրանց միտքը հաստատուի իմանալի բնութիւնների ուժգնութեամբ եւ ոչ թէ՛ երկրային իրողութիւններով, որպէսզի միշտ նրանց հայեան եւ հաստատուեն առաքինութեան վարքով եւ ապա՝ յարութեան կեանքով: Հարսը կամենում է աշակերտողների կեանքն այս աշխարհի անզաստանից ուղղել դէպի հրեշտակային անախտութիւնը եւ մաքրութիւնը... Հարսը յորդորում է վեր ելնել եւ արթնացնել սէրը նրա կամենալուն պէս, այսինքն՝ բարձրանալ եւ յաւելուածով աճել մեծագոյն բաների համար, այսինքն՝ բարի կամքը կատարել թէ՛ երկրի վրայ, թէ՛ երկնքում (Նիւսացի):

Հարսը կամենում է, որ աշակերտողները ցանկան, խաչուելով եւ յարութիւն առնելով, յառնել Քրիստոսի հետ եւ արթնացնել Աստուծոյ սէրը Եկեղեցու նկատմամբ (Արեւելցի): Ըստ Նարեկացու՝ անդաստանն այս աշխարհն է, ինչպէս նաեւ՝ երկինքը (զգալի եւ իմանալի աշխարհներ): Անդաստանի զօրութիւնը եւ ուժգնութիւնն Աստուած է, Որով հաստատուեց արարչութիւնը: Հարսն Աստուծոյ զօրութեամբ հրդուեցնում է Վերին Երուսաղէմի դուստրերին՝ սուրբերին եւ հրեշտակներին, յառնել, աղօթել եւ արթնացնել նոյն իրեն՝ Քրիստոսի բովանդակ սէրը, որպէսզի իր կամքը լցնի մեր մէջ: Այսպէս հրամայեց աղօթել Ինքը Տէրը. «Թող Քո կամքը լինի ինչպէս երկնքում, այնպէս էլ երկրի վրայ» [Մատթ. 2 10] (Նարեկացի): Հարսը Երուսաղէմի դուստրերին խրատում է առաջին կանոնով՝ ելնել դէպի Քրիստոսի սէրը, քանզի թէ՛պէս հաւատքով դուստրեր եղան եւ յոյսով առաքինութիւն գործեցին, սակայն լրումը սէրն է: Երկրորդ կանոնը հետեւեալն է, թէ՛ արթնացրէք Փեսային, որպէսզի այցելի մեզ եւ հատուցի Եկեղեցու թշնամիներին, ինչպէս Ինքն է կամենում: Երկրորդ կանոնն է երդումով, [այսինքն՝] ողջ զօրութեամբ, սիրել Նրան եւ կատարել Նրա կամքը (Տաթեւացի):

Լսում է Փեսայի ձայնը և ասում.

Ց. Իմ Եղբորորդու ձայնն է. սեսա Նա գայիս է, վազում լեռների վրայ-  
յով՝ հանգաբանսայով բլուրների վրայ:

Ց. Հարսը լսում է Եղբորորդու ձայնը և ճանաչում... Հարսը լսում է Աստուծոյ ձայնը Օրէնքով և մարգարէներով, Բան Աստուծոյ տնօրինութեան մասին, և ապա տեսնում Աւետարանով. «Բազում կերպերով և օրինակներով Աստուած կանխապէս մարգարէներով խօսեց մեր հայրերի հետ, իսկ վերջին օրերում մեզ հետ խօսեց Որդու միջոցով» [Եբբ. Ա 1, 2] (Նիւսացի-Որոգիներէս):

Առաւել խորունկ և համակողմանի է Տաթեակացու մեկնութիւնը:

Լեռները և բլուրները խորհրդանշում են՝ ա) դեւերին, որոնք վեր էին խոյացել հպարտութեամբ, հաստատուել չարութեամբ և սառել սիրուց. Տէրն ազդու գորութեամբ ընդոտնում է նրանց, որի մասին ասում է Դաւիթը. «Խռովուեցին լեռները Նրա գորութիւնից» [Սաղմ. ԽԵ 4]. բ) մեղքերի չարութիւնը, որն արգելք էր արդարութեան ճանապարհին, և որը ընդոտնեց և հաւասարեցրեց Տէրը. գ) առաքիներութիւնները, որոնք բարձր և դժուարընթաց էին մինչև Քրիստոս, և որոնք Տէրը, գալով, գորութեամբ և խնդութեամբ ամբողջացրեց և բոլորի համար դիւրին և մատչելի դարձրեց. դ) մշտնջենաւորներին, վերին գորութիւններին (լեռներ) և ներքին դասերին (բլուրներ): Տէրը վազում է լեռների վրայով, ուստի երկնային դասերը չեն հասցնում տեսնել. նրանց համար ծածկուած է Բանի տնօրէնութիւնը: Եւ, ընդհակառակը, Տէրը հանգստանում է (որոշ տարբերակներում՝ խայտում է, խաղում է կամ խաղաղանում է) բլուրների վրայ, որոնք սպասաւոր էին Նրա տնօրէնութեանը. ե) նահապետներին (լեռներ) և մարգարէներին (բլուրներ). նահապետներն աւելի սակաւ էին ծանօթ Տիրոջ մարմնաւորման խորհրդին, քան մարգարէները, որոնք աւելի տեղեակ էին և լի՝ Տիրոջ գալստեան խնդութեամբ. գ) ուղղակիօրէն նիւթական լեռները, որոնց վրայ մինչև մարմնաւորուելը և մարմնաւորուելուց յետոյ աստուածածանօթութեամբ երեւաց Տէրը (Աբբահամին, Մովսէսին, աշակերտներին...): Նոյնպէս էլ լեռան վրայ փորձուելիս ընդոտնեց սատանային, Թաբոր լեռան վրայ պայծառակերպուեց, Գողգոթայի վրայ խաչուեց, Զիթենեաց լեռան վրայից համբարձուեց... (Տաթեակացի):

Ըստ կեղծ-Հիպոդիտոսի՝ լեռները և բլուրները Եկեղեցիներն են (Տիրոջ լեռներ). նրանց վրայ է Քրիստոս մինչև վախճան:

9. Իմ Եղորտորդին նման է այժեամբ կամ եղնիկների հորթերի՝ Բեթելի լեռների վրայ:

Հարսը ցոյց է տալիս օրիորդներին Փեսայի [տեղը].

Ահա Նա կանգնած է մեր որսի յերեսում, ձգուել է դէպի պարտուհանները, նայում է ձաղերի միջով:

10. Իմ Եղորտորդին պարաստանում է ինձ եւ ասում.

Վե՛ր կաց, ե՛կ, մերձատո՛ր Իմ, գեղեցի՛կ Իմ, աղաւի՛ր՝ Իմ:

9–10. Այժեամբ սրատես է եւ արագընթաց: Սա նշանակն է Տիրոջ, որ ամենահայեաց տեսութեամբ տեսնում է գալիքը եւ քննում սրտերը, որ արագընթաց հեռացաւ որսողից, եւ խաւարը չհասաւ Նրան: Եղնիկն օձահալած է եւ բնակւում է բարձունքներում. այնպէս էլ Տէրը խորտակեց Վիշապին, զօրացրեց առաքեալներին, բարձրացաւ երկինք եւ այն խոստացաւ իւրայիններին (Նիւսացի-Տաթեւացի): Բեթելն Աստուծոյ տունն է՝ սուրբ Կոյս Մարիամը, ուր ներտաղաւարուեց Բանն Աստուած (Որոգիհնէս): Ըստ Նարեկացու՝ Բեթել եբրայերէն նաեւ նշանակում է երկինք, ուր Տէրը բարձրացնում է օձից փրկուածներին (Նարեկացի):

Բեթել-Աստուծոյ տունը նաեւ մեր հոգիներն են, ուր Տէրն այժեամբ պէս շրջում է, զօրացնում եւ հաստատում բարի գործերում (կեղծ-Հիպոդիտոս):

Որսը Կոյսից վերցրած մարմինն է (Նարեկացի): Պատուհանները մարգարէներն են, որոնք Աստուծոյ լոյսը ներմուծեցին մեր բնութիւն: Ճաղերն Օրէնքի փոխհիւսուած պատուիրաններն են: Արդ՝ նախապէս մարգարէների եւ Օրէնքի իմաստներով լուսաւորուեց հոգին, այսինքն՝ Աստուծոյ լոյսը նշուլուեց պատուհաններով ու ճաղերով եւ համակեց մաքուր օգում արեգակը տեսնելու բաղձանքով, եւ ապա եկաւ Փափագելին՝ կատարելու Իր փրկութիւնը (Նիւսացի):

Որսի յետևում. ցոյց է տալիս մինչեւ Օրէնք ժամանակը, երբ Աստուած ծածուկ էր մարդկանց համար: Ճաղապատ պատուհանն Օրէնքն է, որ ճշմարտապէս քարոզեց Մէկ Աստուածութիւն եւ ծածկաբար՝ Երրորդութիւն (կեղծ-Հիպոդիտոս):

Փեսան կանչում է Հարսին՝ յառնելու լարձող մեղքերի գայթակղութեան գլորումից եւ մեղքի կործանարար նինջից, ապա՝ մերձաւորուելու բարի գործերի առաջադիմութեամբ, առաքինութիւնների կատարմամբ եւ յատկապէս Քրիստոսի մարմնակցութեամբ (գոյաբանական մեր-



ձաւորութիւն): Մեր՝ Աստծոց հեռացած եւ մեղքով սեւացած բնութիւնը, մերձաւորուելով աստուածային գեղեցկութեանը, ձեռք է բերում սկզբնատիպ գեղեցկութիւնը եւ լցում Աստուծոյ լոյսով: Այդ գեղեցկութիւնը Քրիստոսի փրկութեամբ դառնում է մարդկային բնութեան անբաժանելի յատկանիշը (Աւագանի լուացում): Իսկ Սուրբ Հոգին հագնելով՝ մեր բնութիւնն աղանակերպ է դառնում (Դրոշմի օծում) (Նիւսացի-Նարեկացի):

Ըստ Տաթեւացու՝ Փետան Օրէնքով եւ Աւետարանով, ինչպէս նաեւ՝ մկրտութեամբ եւ ապաշխարութեամբ, հաւատքի եւ գործերի կոչ է անում Հարսին՝ յորդորելով հոգեւոր զգուշութեան եւ շրջահայեցութեան:

11. Քանզի ահա ձմեռն անցաւ, անձրեւներն անցան ու գնացին-հեռացան.

11. Ձմեռը բազմատեսակ չարութիւնների նշանակն է՝ կռապատութեան (որ հալուեց), բարի գործերի անպտղութեան (որ փոխուեց ծաղկման), արեգակի հեռու լինելու (արեգակը մերձեցաւ), ցրտութեան (որ փոխուեց ջերմութեան):

Ձմեռ էր մինչեւ Փրկչի գալուստը (Տաթեւացի-Նիւսացի), երբ մարդկութիւնը մեղքի սառնամանիքի մէջ էր եւ չէր գտնում ապաշխարութեան ճանապարհը (կեղծ-Հիպոդիտոս):

Անձրեւները նշանակներն են սատանայի խաբէութիւնների եւ փորձութիւնների, որ կերպարանւում են որպէս բարի, սակայն կորստեան են մատնում (Նարեկացի-Արեւելցի), ինչպէս նաեւ՝ կռապատութեան մրրկուած խռովութիւնների (կեղծ-Հիպոդիտոս):

12. Ծաղիկներ երեսացին մեր երկրում, հասաւ էրեղու ժամանակը, րսարակի ձայն լսուեց մեր երկրում:

12. Նկարագրուած է Քրիստոսի գալստեամբ եկած հոգեւոր գարնան գեղեցկութիւնը: Մեր բնութիւնը գեղեցկացաւ ավետարանական առաքինութիւնների ծաղիկներով: Իւրաքանչիւր ծաղիկ նշանակ է որոշակի հոգեւոր առաքինութեան. շուշանը՝ ողջխոսհոլութեան, վարդը՝ պատկառանքի, մանուշակը՝ Քրիստոսի անուշահոտութեան... Հոգին պէտք է պսակներ հիւսի այս ծաղկի առաքինութիւններով եւ զարգա-

րի իրեն (Նարեկացի): Ծաղիկները նաև խորհրդանշում են Քրիստոսի մասին մարգարէութիւնների կատարումը (կեղծ-Հիպոդիտոս):

Հասաւ էտելու ժամանակը. այս է վկայում տատրակի ձայնը, որ Յովհաննէս Մկրտիչն էր: Նա ընդառաջեց պայծառ գարնանը եւ ուսուցանում էր չարից հեռանալը, ապաշխարութեան մկրտութիւնը եւ առաքինութեան վարքը (Նիւսացի):

Հասաւ մարմնաւորը հատելու եւ հոգեւորը տնկելու եւ աճեցնելու ժամանակը (կեղծ-Հիպոդիտոս): Հասաւ պիղծերին սուրբերից կտրելու եւ հեռացնելու ժամանակը: Տատրակի ձայն լսուց մեր երկրում. ինչպէս թռչունները գարնանը տարածւում եւ բոյն են դնում հրկրի վրայ, այնպէս էլ սուրբերը ցնծում են հոգեւոր գարնան գալստեամբ, մանաւանդ՝ առաքեալներն ու վարդապետները եւ նրանց հրեշտակային քարոզութեամբ ու հոգեւոր երգերով զիշեր-ցերեկ Աստուծոյ օրհնողները (Նարեկացի):

13. Թզնիսի ընձիտեց իր բողբոջը, մէր ծաղկած որթերն արձակեցին իրենց հոյրը: Վե՛ր կաց, ե՛կ, մերձաւո՛ր Իմ, գեղեցի՛կ Իմ, աղաւնի՛ Իմ, եւ ե՛կ դու, աղաւնեա՛կ Իմ:

13. Թզնու բողբոջները եւ ծաղկած որթերի բուրմունքը սկիզբն են հոգեւոր պտուղների. այս տեսնողը վստահանում է սպասուելիք հոգեւոր պտուղներով... Բողբոջները խոստովանութեան արտայայտութիւնն են. հոգին բողբոջում է խոստովանութեամբ, այսինքն՝ պատրաստւում հոգեւոր կեանքի՝ պտղաբերելու առաքինութեան վարքով եւ հասնելու հանգերձեալ քաղցրութեանը: Գինին հոգեւոր իմաստութեան խորհուրդն է. հոգին ծաղկած որթերի բուրմունքով նախապայելում է հոգեւոր ճանաչողութեան պտուղները (Նիւսացի): Տիրոջ այգին՝ հաւատացեալները, ծաղկել են այլազան եւ պէս-պէս գոյներով, պտուղներով եւ հոտերով, մէկը՝ մարտիրոսութեամբ, մէկը՝ զանազան առաքինութիւններով, մէկը՝ բարեգործութիւններով (Նարեկացի):

Թուրը, ըստ կեղծ-Հիպոդիտոսի, նշանակում է խաւար. Քրիստոսի փրկագործութեամբ՝ խաւարի մէջ նստածները լոյս տեսան [Մատթ. Դ 16] (կեղծ-Հիպոդիտոս):

14. Ե՛կ պարսպի պարուարին մերձ վէմի հովանոս րսակ: Յո՛յց րուր Ինձ քո երեսը եւ լսելի՛ արս Ինձ քո ձայնը, քանզի քո ձայնը քաղցր է, եւ քո պարկերը՝ գեղեցիկ:

14. Փեսան վերստին կոչ է անում Հարսին կամաւորաբար եւ յօժարամտութեամբ դալ առ Աստուած... Փեսան առաջին անգամ կանչեց Յովհաննէս Մկրտչի միջոցով (ապաշխարութեան մկրտութիւն), իսկ երկրորդ անգամ՝ առաքեալներով՝ Սուրբ Հոգով մեղքերի թողութեան (կեղծ-Հիպոդիտոս):

Վէմը Քրիստոսն է, քանզի ասում է առաքեալը. «Քրիստոս Ինքն էր վէմը» [Ա Պետ. Բ 6–8], իսկ պարիսպն Օրէնքի պատուիրաններն են: Այսպիսով հրամայում է այսուհետ ապրել Աւետարանով ու նրա քարոզութեամբ եւ ոչ թէ [սոսկ] Օրէնքով... Այս մասին է վկայում առաքեալը. «Օրէնքով արդարացողներդ խափանուած էք Քրիստոսից» [տես Հռոմ. Գ 20, հմմտ. Գաղ. Բ 16, Գ 11]: Պարսպի պատի մօտ արտայայտութիւնը ցոյց է տալիս, որ, Աւետարանը պահելով, հեռու չես Օրէնքից, քանզի, ըստ առաքեալի, «Օրէնքի լրումը Քրիստոսն է» [Հռոմ. Ժ 4]: Եւ Տիրոջ խօսքը, թէ՛ «Եկայ կատարեալ դարձնելու Օրէնքը» [տես Մատթ. Ե 17], ցոյց է տալիս, որ Օրէնքը թերի էր (Որոգինէս-Նիւսացի-Նարեկացի):

Հարսը կամենում է նստել Քրիստոս-Վէմի հովանու տակ (կեղծ-Հիպոդիտոս):

Յոյց տուր Ինձ քո երեսը... Այնպէս, ինչպէս քեզ ստեղծեցի Իմ ձեռքերով: Լսելի՛ արա քո ձայնը, այսինքն՝ երգակցի՛ ը հրեշտակներին (կեղծ-Հիպոդիտոս):

Յոյց տուր ինձ քո երեսը... Բնագրում Փեսան այսպէս դիմում է Հարսին: Սակայն Նիւսացին սա մեկնում է որպէս Հարսի՝ Փեսային ուղղուած կոչ: Հարսը, աղաւնի դարձած եւ ճանաչելով Վէմ-Քրիստոսին, աղաչում է ցոյց տալ Իր երեսը, այլեւս չխօսել մարգարէներով եւ Օրէնքով, այլ, որչափ տեսանելի է մարմնաւորներին, այնքանով ցոյց տալ Իր երեսը, որպէսզի Հարսը տեսնի եւ յագենայ Նրա փառքի երեւմամբ: Հարսն աղաչում է Փեսային, որ մարդկային լսողութեան կարողութեան չափով լսեցնի Իր աստուածային ձայնը, որպէսզի Հարսն արածի աւետարանական քարոզութեան հովանու տակ եւ չգնայ օտար հովիւների հետ (Նիւսացի-Նարեկացի):

Փեսան այսպէս է ասում օրիորդներին.

15. Բունեցէ՛ք մեզ համար փոքրիկ աղոսներին՝ այգիների ապակաւնիչներին, եւ մեր որթերը կը ծաղկեն:

15. Աղուէսը սատանան եւ նրա իւրայիշններն են, որոնք խոչընդոտում են մարդկանց՝ արդարութիւն գործելու:

Աղուէսը չորս յատկութիւն ունի՝ գիշակեր է, տկար, քծնի եւ ապականում է այգին: Սատանան նոյնպէս զագրակեր է մեղքերով, զօրութեամբ՝ տկար, խաբեբայ եւ Եկեղեցու եւ մարդկանց հոգիների ապականիչ՝ ըստ Սամսոնի աղուէսների օրինակի, որոնք ապականեցին այլագգիների անդաստանները: Սատանան էլ նախ ապականեց երկնաւոր դասերի այգին եւ դէպի իրեն քաշեց, երկրորդ՝ ապականեց դրախտի այգին, երրորդ՝ ապականեց Հին Օրէնքի այգին, չորրորդ՝ ապականեց Նոր Եկեղեցու այգին (Տաթեակցի):

Այլ տեղերում սատանան անուանւում է լեռ, վիշապ, այս աշխարհի իշխան, սակայն այստեղ՝ փոքր եւ աղուէս՝ առաքեալների ահարկու գօրութեան պատճառով (Նարեկացի):

Հարսն այսպէս է ասում.

16. Իմ Եղորորդին իմն է, եւ ես՝ Նրանը, որ հովուում է շուշանների<sup>12</sup> մէջ:

Մինչ ցերեկը լուսատրի, եւ արուերները շարժուն,

17. վերադարձի՛ր, Եղորորդի՛ իմ, նմանութի՛ր այծեամի կամ եղնիկների հորթերի՝ ինկաբեր լեռների վրայ:

16–17. Պօղոսն ասում է. «Ո՞վ կարող է բաժանել մեզ Քրիստոսի սիրուց» [տես Հռոմ. Ը 38–39], եւ Քրիստոս ասում է. «Եղէ՛ք իմ մէջ, եւ ես՝ ձեր մէջ» [տես Յովհ. ԺԵ 5]. Նա իր Եկեղեցին հովւում է այնտեղ, ուր բնակւում է՝ այս աշխարհի մեռելութեան մէջ (շուշանների մէջ), եւ Սուրբ Հոգու անուշահոտ շնորհները պարգեւում այս աշխարհի համար մեռած (չուշանագոյն) աշակերտներին (կեղծ-Հիպոդիտոս-Որոգինէս):

Նիւսացու մօտ շուշանն առաքինութեան նշանակն է... Քրիստոս իր հօտը ոչ թէ կերակրում է խոտով, որն անասնացած մարդու կերակուրն է եւ խորհրդանշում է մարմնաւոր վայելքները, այլ հոգեւոր կերակուրներով (շուշաններով), որոնք եւ բոլոր սուրբերը կերան եւ զմայլուեցին, արհամարհեցին սնտոի ցանկութիւնները (Նիւսացի-Նարեկացի):

12 Տես Բ 1:

Շուշանը ջրի մէջ աճող մաքուր, բուժիչ յատկութիւններով անուշահոտ ծաղիկ է: Քրիստոս այդպէս է հովուում Եկեղեցին. մաքրում է ջրով, բժշկում մեղքերից, տալիս անուշահոտ վարք եւ ծաղկեցնում խօսքով, որով մշտապէս կերակրում է նրանց (Տաթևացի):

Մեր բնութիւնը լուսաւորուել է Սուրբ Հոգու ճառագայթներով, եւ մեր կենցաղի ստուերները սկսել են փոփոխուել. վերջիններս վրայ փութանակի նայում են նրանք, ովքեր ճշմարտութեան լոյսով չլուսաւորեցին Հոգու աչքերը, ովքեր ստուերը եւ սնոտին իբրեւ հաստատուն են տեսնում, իսկ ճշմարիտը՝ որպէս ոչէ, անտեսում: Իսկ շուշաններով կերակրուողները, այսինքն՝ մաքուր եւ անուշահոտ կերակուրներով հոգիները պարարողները, բոլոր մոլորութիւնները եւ խաւարատեսակ երեւմունքները մերժելով, տեսնում են ճշմարիտ իրերի հաստատութիւնը՝ կոչուելով լուսոյ եւ ցերեկուայ որդիներ [տես Ա. Թեազ. Ե 5] (Նիւսացի): Նրանց սրտում ծագել է Քրիստոսի ճշմարտութիւնը, եւ Օրէնքի ստուերները սկսել են նահանջել (կեղծ-Հիպոդիտոս):

Որոգիւնէս-Նարեկացի ըմբռնումը վախճանաբանական է:

Մինչ ցերեկը լուսաւորուի, եւ ստուերները շարժուեն... Այսինքն՝ մինչեւ գայ հանդերձեալը, ուր բոլոր այժմեան ստուերները կը վերափոխուեն ճշմարտութեան (Որոգիւնէս):

Նրանք, ովքեր արհամարհեցին այս աշխարհը, հաստատուած են անստուեր լոյսի ծագման յոյսով, որ լինելու է Վերջին Օրը... Այդ Օրը սուրբերը կը յագեցնեն Քրիստոս-Փեսայի հանդէպ իրենց սիրոյ անչափ ծարաւը (Նարեկացի): Հարսը կոչ է անում բարձունքներում նստած Աստուծոյ սրահայեաց աչքով (այծեամի պէս) նայել ամբարիշտների գործերին եւ (եղիկներին պէս) ոտնակոխ անել օձերին ու վիշապներին (Նիւսացի-Նարեկացի):

Խնկաբեր լեռներն առաքինութեան բարձունքներն են (Արեւելցի):

## Գ

1. Գիշերն անկողնուս մէջ փնտրեցի իմ հոգու Սիրելիին, փնտրեցի Նրան եւ չգտայ, կանչեցի, եւ ձայն չտուեց ինձ:

1. Գիշերն անկողնուս մէջ... նկատի են առնուած այն ժամանակները, երբ մարդասպան օձը մարդկանց իր պէս նսեմացրեց ախտերով

ու մոլորութեամբ եւ մեղքի մահիճը նետեց: Մարդիկ հրեշտակներից հարցնում են Բանի մարդեղութեան եւ նրանում (մարդեղութեան մէջ) ծածկուած դանձի մասին, որ փրկութիւն պարգեւեց մեզ. եւ չեն գտնում... Քանզի յաւիտեաններից եւ ազգերից ծածկուած էր այն փրկութիւնը, որ ճանաչեցին Եկեղեցու միջոցով (Արեւելցի-Որոգիւնէս):

«Անկողին է անուանում կատարեալ բարու ընդունելութիւնը եւ գիշեր է անուանում անկողնային ժամանակը. գիշերը ցոյց է տալիս աներեւոյթի տեսութիւնը, ինչպիսին Մովսիսինն էր, որ մտաւ մառախուղի մէջ, ուր Աստուած էր: «Ով,— ինչպէս ասում է մարգարէն,— խաւարը ծածկոյթ է դարձրել Իր շուրջ» [Սաղմ. ԺԷ 12]: Որի մէջ [այսինքն՝ մէզում] լինելով միայն՝ [մարդկային հոգին] ուսանում է, թէ որքան հեռու է կատարելութիւնից... Ձգայութիւնները յարաժամ լքած, աներեւութեան ներսում լինելով, յարաժամ շրջապատուած աստուածային գիշերով...»: Սակայն Սիրելին դուրս է խորհուրդների ըմբռնումից, աստուածային բնութիւնն անճանաչելի է մարդու համար: Հարսն անունով կանչում է Նրան, սակայն որեւէ անուն չի կարող հասու լինել Աստծուն, քանզի Նա վեր է բոլոր անուանումներից (Նիւսայցի):

«Անկողին է անուանում խորհուրդների շտեմարանը, որ սիրտն է»: Իսկ գիշերը խորհրդանշում է աստուածգիտութեան աներեւոյթ եւ անհասանելի խորհուրդը (կեղծ-Հիպոդիտոս):

Ըստ Նարեկացու՝ Հարսը, կարծելով, թէ կատարելապէս հասել է Քրիստոսի գիտութեանը, անհոգացաւ, ինչպէս յոգնած եւ անկողին մտած մարդը... Գիշերն այս կեանքն է՝ համեմատութեամբ հանդերձեալ կեանքի, մթին, աղջամղջին եւ մարմնի մէջ բանտարկուած: Փնտրեցի նրան եւ չգտայ... այսինքն՝ որչափ էլ փնտրեմ Աստուծոյ գորութիւնը կամ փառքի տեսութիւնը կամ անուան մեծութիւնը կամ արդարների համար պատրաստուած պարգեւները, օտարացած եմ գտնում ինձ (Նարեկացի):

Նկատի են առնուած նաեւ իւզաբեր կանայք, ովքեր Նրան չգտան գերեզմանի մէջ եւ յետոյ ընկան Նրա ոտքերը եւ երկրպագեցին (Տաթեակացի):

2. Վեր կենամ ու շրջեմ քաղաքով, փողոցներով ու հրապարակներով եւ փնտրեմ իմ հոգոս Սիրելիին: Փնտրեցի Նրան եւ չգտայ, կանչեցի Նրան, եւ ձայն չլսուեց ինձ:

3. Քաղաքում շրջող պահապանները հանդիպեցին ինձ:

Հարսն ասում է պահապաններին.

Արդեօք չէ՞ք տեսել իմ հոգու Սիրելիին:

2–3. Հարսը շրջում է Օրէնքի եւ մարգարէներին (մինչեւ Յովհաննէս) անդաստանով, փնտրում Սէրը եւ չի գտնում մինչեւ Բանի մարդեղութիւնը, երբ Սէրը զարթնեց եւ մարմնաւորուեց (Որոգիւնէս):

Հարսը նաեւ փնտրում է իմանալի երկնքում՝ հրեշտակային դասերի մէջ, սակայն Աստուած վեր է բոլոր զգալի-նիւթական եւ իմանալի-հոգեւոր էերից (կեղծ-Հիպոդիտոս):

Քաղաքը (բազմութիւն), փողոցը (առատութիւն) եւ հրապարակը (մերձաւորութիւն) հրեշտակային վերին բնակատեղերի նշանակներն են: Այս երեք տեղերում չի գտնում Սիրելիին, այսինքն՝ Նա կատարելագէտ չի ճանաչւում Սուրբ Գրքից, քանզի շատից քիչը գիտենք եւ մարգարէանում ենք [տես Ա. Կոր. ԺԳ 9], չի ճանաչւում անուսներից, քանզի գործերն են յայտնում, չի գտնւում վերին զօրքերի մէջ, որովհետեւ անհասանելի է նրանց (Նիւսացի-Տաթեւացի):

4. Երբ նրանցից մի փոքր անցայ, գրայ իմ հոգու Սիրելիին:

Գտնելով Փեսային՝ ասում է.

Բունեցի Նրան եւ չթողեցի Նրան, մինչեւ չգրայայ Նրան իմ Մօր րտնը եւ ինձ Յղացողի սենեակը:

4. Մի փոքր անցայ... Այսինքն՝ մարգարէութիւնները փոքր-ինչ լուցին, եւ Բանը մարմին եղաւ: Հարսը հաւատացել եւ փափագել է Քրիստոս Փեսային, մինչեւ իսկ տանջանքներ եւ պէս-պէս վշտեր կրելով՝ չի հեռացել Նրանից, մինչեւ աւազակի միջոցով Նրա հետ չմտաւ դրախտ եւ երկնքի արքայութիւն (Որոգիւնէս):

Հարսը մի կողմ է թողել բոլոր արարածներին եւ զանց առել բոլոր ստացական [բնութիւնները], լքել է հասնելու ամէն մի հնար, դիմել հաւատքին [եւ Սուրբ Հոգու շնորհներին] (Նարեկացի) եւ գտել Սիրեցեալին: Հարսն այլեւս չի կամենում թողնել իր հաւատքի գիւտը, մինչեւ չտանի իր շտեմարանը, որը սիրտն է, որպէսզի ընդունակ լինի

Աստուծոյ բնակութեան համար, ինչպիսին էր սկզբում, երբ ստեղծուեց Յղացածից՝ առաջին Մօրից, որ արարչութեամբ մեր բնութեան պատճառ եղաւ (Նիւսացի):

Հարսը գտել է, այսինքն՝ որ Նա ճշմարիտ Աստուած է, սակայն ինչպիսին է Նրա էութիւնը՝ անհասանելի է մնացել (Կեղծ-Հիպոդիտոս):

Մի փոքր անցնելը ցոյց է տալիս, որ մեր միտքը, անցնելով հրեշտակներից եւ մերձենալով իմանալի խորանին, այլեւս ոչինչ չի տեսնում: Ինչպէս մեր զգալի աչքերը մինչեւ երկինք են տեսնում, այնպէս էլ եղական միտքը տեսնում է եղականները եւ չի կարող հայել անմատոյց խորանը եւ վարագոյրի այն կողմը: Եւ գտնելն այն է, որ իմացանք, թէ Աստուած անհասանելի է: Մեր տունը եւ սենեակն Աստուծոյ արարչական եւ բարի կամքն են, եւ այնտեղ մտնել նշանակում է վայելել Նրա բարիքները:

Յղացումը երկշերտ ընկալում ունի. նախ՝ որ յղացում ենք եւ ապա ծնւում, այսինքն՝ բոլորի լինելիութիւնը կար նախագիւր տեսութեան մէջ, եւ յետոյ գոյացան էութեամբ («Մինչեւ աշխարհի լինելն ընտրեց մեզ» [Եփես. Ա 4]): Երկրորդ՝ ինչպէս ծնուածը նոյնն է եւ նախապէս անբեւոյժ էր, նոյնպէս էլ արարածները եղան գոյութեամբ այն, ինչ նախապէս տեսութեամբ էին (նախասահմանութիւն) (Տաթեւացի):

Հարսը երկրորդ անգամ է երդուեցնում օրիորդներին.

5. Երդուեցնում եմ ձեզ, դուստրե՛ր Երոսաղէմի, ազարակի զօրութիւններով եւ հասարարութիւններով. եթէ վեր կենաք, արթնացրե՛ք Սէրն Իր կամենալուն պէս:

5. Հարսը երկրորդ անգամ է երդուեցնում [տես Բ 7]... Քրիստոսի սէրը, որում բնակւում է Հարսը, այնպէս է դարձնում մարդկանց: Հասնելով անչափ շնորհների եւ գիտութեան, որպէս թէ չհասած՝ երդուեցնում է արթնացնել սէրը, որին ինչ-որ ժամանակ չէր հասնում եւ չգիտէր (Նարեկացի):

Քրիստոսն է սէրը: Հարսը խնդրում է արթնացնել Նրա կամենալուն պէս... Տէրը զարթնում է չորս կերպ՝ մարմնաւոր ծննդեամբ, մկրտութեամբ, խաչելութեամբ եւ յարութեամբ (Տաթեւացի):

Փեսան ասում է Հարսի մասին.



6. Ո՞վ է սա, որ գալիս է անսպասից ինչպես ծառացած-բարձրացած ծուխ: [Բորում է ինչպես] զմոռու<sup>13</sup> եւ կնդրուկ<sup>14</sup> իղապործների ամէն րեսակ փոշիներով:

6. Նիւսացու մօտ բնագիրն այսպիսին է. «Ո՞վ է սա, որ ելնում է անսպասից ծխացող խոնկի ծառի պէս...»: Անսպասից դուրս գալը վկայում է այն մասին, որ Հարսը ցանկութեամբ եւ ժուժկալութեամբ վերընթանում է դէպի աստուածային բարձունքներ, Հարսը ծարաւ է աստուածային աղբիւրներին եւ, յարածամ իր մարմինն անապատ, անկոխ եւ անջուր պահելով, ստացել է աստուածային ծարաւը... Հարսի գեղեցկութիւնը ստացել է խոնկի ծխի կերպարանք՝ զմոռուի եւ կնդրուկի խառնուրդներով... Զմոռու մեռելութեան խորհուրդն է, իսկ կնդրուկն անձի բնծայաբերումն ու մատուցումն է ի սպասաւորութիւն Աստուծոյ: Նախ պէտք է գմուռու լինել, սպանել սեփական անդամները,

13 Զմոռու – (եբր. מֹר / mor) սուր անուշահոտութեամբ խէժ է՝ դեղին-սպիտակաւուն կամ կարմրաւուն, օգտագործւում է նաեւ բժշկութեան մէջ: Լինում է թէ՛ հեղուկ, թէ՛ պինդ վիճակում: Ստանում են *Balsamodendron Myrrha* Nees-ից, որն աճում է Հնդկաստանում, Եգիպտոսում, Նիբիւյում եւ Հաւանաբար աճեցուել էր Սողոմոնի կողմից իր այգիներում: Հնուց ի վեր գմուռուն առետրի առարկայ էր եւ բարձր էր գնահատւում եգիպտացիների եւ հրեաների, ինչպէս նաեւ յոյների եւ հռոմէացիների կողմից: Հնում գմուռուն օգտագործւում էր մասամբ սուրբ օծութեան իւղ (միւռոն) եփելու համար [Ելք Լ 23–33], մասամբ՝ ծխեցնելու համար հանդերձներն ու սենեակները եւ վերջապէս՝ բժշկութեան եւ մահացածների մարմիններն օժելու եւ գմուռնու համար [Յուդ. ԺԹ 39]: Երբեմն խառնել են դիւռու հետ [Մարկ. ԺԵ 23]: Զմոռուն առկայ է նաեւ Յիսուսին երկրպագութեան եկած մոգերի բնծանների մէջ [Մատթ. Բ 11], ինչպէս նաեւ Նրա մարմնի օժման նիւթերից էր:

14 Կնդրուկ – (եբր. לֵוֹנוֹ / levona) խէժ է, որ արտադրւում է *Boswellia* ծառերից: Գլխաւոր նմուշներն են՝ *B. frereana*, *B. carteri*, *B. papyrifera*՝ հիւսիս-արեւելեան Աֆրիկայում, *B. sacra*՝ հարաւային Արաբիայում, *B. serrata*՝ հիւսիս-արեւմտեան Հնդկաստանում, ուր նրանք աճում են կիսաանապատ (ամայի) լեռներում: Սպիտակադեղնաւուն անուշաբոյր խէժը ստացւում է կեղեի ճեղքումով եւ թէպէտ դառնահամ է, սակայն՝ չափազանց անուշահոտ: Խոնկի բաղադրամասերից է [Ելք Լ 34], մատուցւում էր որպէս անուշահոտութիւն ողջակէզների ժամանակ [Ղեւ. Զ 15], դրւում էր առաջաւորաց հացի վրայ [Ղեւ. ԻԳ 7], գմուռնի հետ առկայ է մոգերի բնծանների մէջ [Մատթ. Բ 11]: Մեր լեզուում արմատացած խոնկն իրականում կնդրուկն է, որը խոնկի չորս բաղադրամասերից է:

մեռնել եւ թաղուել Նրա հետ, որ մեզ համար մեռաւ. սա պատճառ է ամէն տեսակ խոնկերի առաքինութիւններով զարդարուած վարքի, որն, ընդխառնուելով մանրացուած հեշտալի փոշոյ հետ, անուշահոտ է դառնում՝ լցուելով Սուրբ Հոգու անուշ իւզով (Նրւսացի):

Հարսն անապատացել է, այսինքն՝ հեռացել չար գործերից... Խոնկի ծուխն առաքինութիւններն են ու բարեգործութիւնները...

Ձմուռը մեռելութեան խորհուրդն է, կնդրուլը՝ անուշահոտ վարքի: Քրիստոնեան պէտք է նախ մեռցնի մեղքի մարմինը, մահակից լինի Քրիստոսին եւ անուշահոտ վարքով հաւասարուի Քրիստոսի մաքրութեանը, ապա կարող է Քրիստոսի հարս դառնալ եւ վերադառնալ Քրիստոսի մօտ (Նարեկացի):

Հարսը զմուռսով կցորդ եղաւ չարչարանքներին եւ կնդրուկով հազորդ եղաւ փառքին (Արեւելցի): Կեղծ-Հիպոդիտոսի ըմբռնումը վախճանաբանական է. «Ելնում է երկրից, որ անապատի պէս է դառնալու, երբ ամպերով Տիրոջն ընդառաջ ելնեն վարքով անուշահոտները, Քրիստոսի սիրով մեռածները (զմուռսով մեռածները), Սուրբ Հոգու շնորհների անթիւ փոշեհատիկներ ընդունածները եւ ամէն տեսակ առաքինութիւններով զարդարուածները» (Կեղծ-Հիպոդիտոս-Արեւելցի):

Ըստ Տաթեւացու՝ հոգեւոր մահը երկակի է. նախ՝ ախտերը մեռցնում ենք մեր մէջ եւ սպանում, երկրորդ՝ մեռնում ենք ընդդէմ ախտերի: Նմանապէս էլ երկակի է հոգեւոր թաղումը. նախ՝ մեր մէջ թաղում ենք մեղքերի թանձրութիւնը, եւ երկրորդ՝ առաքինութիւններով թաղում ենք մեր մարմինը, ինչպէս ծուխն է ծածկում խոնկը: Եթէ խոնկը մարմնաւոր առաքինութեան խորհուրդն է կրում, ապա իւր եփելը՝ հոգեւոր առաքինութեան (Տաթեւացի):

Օրիորդներն այսպէս ասացին.

7. Ահա՛ Սողոմոնի գահոյքը, նրա շորջ վաթսուն սպասազէններ են Իսրայէլի քաջերից:

8. Բոլորը՝ պայտերազմի հմուտ սուսերատրներ, իւրաքանչիւր այր սուր [ունի] ազդրին՝ ընդդէմ գիշերուայ արհաւիրքների:

7–8. Մարմնաւորուած Բան Աստուծոյ մարդեղութեան գահոյքի շուրջ հրեշտակային գօրքերն են՝ որպէս սուսերատրներ՝ ազդրի վրայ սուր կրելով ընդդէմ արհաւիրքների, որ խաւարի մէջ խոցոտում են ուղիղ-

ներին: Տէրը գաւոյք է նաեւ կոչուում, որովհետեւ վաստակածների եւ բեռնաւորուածների Հանգստեան տեղն է, եւ դարձեալ՝ ազդրի վրայի սուրը Քրիստոսի թշնամիների դէմ է (Որդիներէս):

Նիւսացու մօտ բնագիրն այսպիսին է. «Ահա՛ Սողոմոնի մահիձը...»: Նիւսացու մեկնութիւնը ներանձնական կտրուածք ունի... Մարմնի ախտաւոր եւ աղտեղի հեշտութիւնները, նստելով մարմնի անգամների մէջ, որպէս աւազակների բանակներ դարանակալ են լինում մտքերին եւ բազում անգամ գերի տանում՝ հոգին յափշտակելով իրենց ախորժումի մէջ եւ Աստուծոյ թշնամի դարձնելով, քանզի, ըստ առաքելի, «մարմնի խորհուրդը թշնամութիւն է Աստուծոյ դէմ» [տես Հռոմ. Ը 7]... Ուստի պէտք է, հակառակ մարմնական ցանկութիւններին, ընտրել աստուածայինը: Երբ մարդը հեռանում է մարմնական հեշտութիւններից, ձեռք է բերում աներկիւղ հոգեւոր արիւթիւն եւ արի բարկութեամբ հալածում հեշտութիւնները: Երբ հոգին սրբւում է մարմնական ախտի ցանկութիւնից, վերստանում է իր աստուածանման գեղեցկութիւնը:

Թագաւորի հարսանեկան մահիձը շրջապատուած է գօրաւորներով (բնագրում՝ սպառազններ), որոնք ունակ են պատերազմելու, ձեռքը պատրաստ պահում են ազդրին դրուած սրի վրայ, զարհուրեցնում եւ ահաբեկում են աղջամղջին խորհուրդները... Հարսանեկան մահիձը շրջապատուած է հեշտութիւնների աղտեղութիւնները մերժող եւ հեռացնող սպառազնութեամբ:

Սուրը ողջախոհութեան նշանակն է: Ողջախոհութեան գէնք ունեցողներն են փափագելի Երկնաւոր Փեսայի անապական գաւոյք-մահ-ճին: Վաթսանը խորհրդական իմաստ ունի. դա Իսրայէլի տասներկու ցեղերն են՝ սպառազնուած հինգ զգալարանների մաքրութեամբ: Իւրաքանչիւր զգալարան իր սուրն ունի. աչքի սուրն է յարածամ Տիրոջը տեսնելը, առաքինապէս հայելը եւ աղտեղիների տեսութեամբ ամենեւին չգարշանալը. լսելիքի գէնքն է աստուածային վարդապետութեան լսելութիւնը եւ երբեք սնոտի խօսքեր ներս չընդունելը. նմանապէս էլ ճաշակելիքը, հոտոտելիքը եւ շօշափելիքը պէտք է զինել ժուժկալութեամբ: Իսրայէլի բոլոր որդիները ճշմարիտ իսրայելացի չեն: Վաթսունը խորհրդանշում է ընտրեալներին, ովքեր հագել են աստուածային սպառազնութիւնը եւ արժանացել են կանգնելու թագաւորական գահոյքի շուրջ:

Մահիձը նաեւ փրկուածնեբրի հանգիստն է: Զօրաւորնեբրն արդարութեան գինուորնեբրն են, ովքեր անախտութեամբ հաստատուեցին եւ մանուկներ կոչուեցին: Սուրն առաքինի վարքն է (Նիւսացի):

Մահիձն, ըստ կեղծ-Հիպոդիտոսի, զգայարաննեբրի ցանկութիւնն է՝ կա՛մ բարու, կա՛մ չարի: Իսկ պատերազմի մէջ հմուտ լինելը չարից դէպի բարին ելնելու իմաստութիւնն է: Իւրաքանչիւրը սուր ունի ազդրին՝ ընդդէմ գիշերային արհաւիրքների: Սուրը Աստուծոյ խօսքն է, որ բոլոր երկսայրի սրեբրից աւելի հատու է, անցնում է հոգու եւ շնչի միջով եւ ամէն ինչ տեսնում [Եբբ. Դ 12]: Ովքեր սուրբ են եւ տեսնում են Աստուծուն, նրանք Նոր Իսրայէլ են դարձել եւ չեն վախենում դիշերային չար գազաննեբրից (դեւեր) (կեղծ-Հիպոդիտոս):

Հին Իսրայէլն է Սողոմոնի թագաւորութեան գահոյքը եւ կամարանեբրը: Նմանապէս էլ հիմայ ողջ տիեզերքն է Երկնային Սողոմոնի գահոյքը, ուր բնակուում է Աստուծոյ կամքը: Նոր Իսրայէլի գօրաւորները կամ սուտերաւորները բոլոր սուրբ հաւատացեալներն են: Սուրը հոգու սուսերն է, այսինքն՝ Աստուծոյ խօսքը, որով սովորեցին պատերազմել աներեւոյթ թշնամու դէմ: Գիշերային եւ խաւարային արհաւիրքները երկնքից ընկած դեւերն են (Նարեկացի):

Երկնային Սողոմոնի գահոյքի պահապանները նաեւ տաներկու առաքեալներն են՝ խօսքի սուրը կրելով ազգրին եւ սարսափեցնելով նրանց, որ չընում են խաւարում եւ նետահարում անմահ Փեսային ճշմարիտ հաւատքով հարսնացածներին: Իսկ վաթսուը նրանց [հոգիների] հինգ-հինգ արթում եւ պաշտպանող զօրութիւններն են, որոնք կենդանի Սուրբ Հոգով հանդցնում են չարի այրող նետերը (Արեւելցի):

Այլեւ Քրիստոսի գահոյք են Տիրոջ խօսքից երկիւղածները (կեղծ-Հիպոդիտոս), նաեւ իւրաքանչիւր հեզ եւ խոնարհ հոգի Քրիստոսի գահոյք եւ հանգստարան է (կեղծ-Հիպոդիտոս-Տաթեւացի):

Ըստ Հիպոդիտոսի՝ Սողոմոնի գահոյքը սուրբ Կոյս Մարիամն է, որն Աստուծոյ հանգստարան դարձաւ:

Համաձայն Տաթեւացու բացատրութեան՝ գահոյքը բարձր տախտ է, ուր բնակուում են Հարսն ու Փեսան. նախ՝ Ադամի եւ Եւայի բնակութեան վայր դրախտի բարձրութեան օրինակով, երկրորդ՝ երկնքի բարձրութեան, ուր ելնում են սուրբերն այս կեանքից յետոյ, երրորդ՝ խորհրդանշում է անմատոյց խորանը՝ վարագոյրի ներքին կողմը, ուր Տէրը մտաւ (Տաթեւացի):

9. Սողոմոն Արքայն գահաժողովի պատրաստեց Իր համար Լիբանանի փայտից:

10. Նրա սխևերն արեց արծաթ, կոնքերը՝ ոսկի, ձեղնը՝ ծիրանի եւ նրա ներսն՝ ակնազարդ. [այնպէղ] փարսածուած է Իսրայէլի դասարների սէրը:

9–10. Սողոմոն թագաւորը նախօրինակն է ճշմարիտ Թագաւորի: Սողոմոն նշանակուած է խաղաղութիւն. նա տաճար էր շինուած, անչափ իմաստութիւն ունէր, Իսրայէլի թագաւոր էր, արդարադատ էր եւ Դաւթի գաւազ... Այս ամէնը նախադրուած է Աւետարանի գորութիւնը: Քրիստոս՝ Դաւթի Որդին, Իր ճշմարիտ խաղաղութիւնը պարգեւեց՝ Խաչի մահով, եւ առաքեալներն եւ մարգարէների հիմքի վրայ անհաս իմաստութեամբ շինեց Իր սուրբ Եկեղեցին՝ կենդանի եւ հոգեւոր քարերը հաւատքով ու խաղաղութեամբ միացնելով: Նա է արդար Դատաւորը, որ Ահեղ Դատաստանին պիտի արդարապէս դատի կենդանիներին եւ մեռեալներին (Նիւսացի-Արեւելցի):

Լիբանանի մայրիկ [Սողմ. ԼԳ 35] չարութեան նշանակն է, ինչպէս նաեւ դեւերի, մեղքի, հպարտութեան եւ ամբարշտութեան, որովհետեւ բարձր է, անպտուղ, խաւարեալ եւ գազանների որջ (Տաթեւացի):

Լիբանանի փայտը մեր հեթանոսական անցեալն է, երբ արմատացել էինք Լիբանանի հակառակամարտ գորութիւններն լեռան վրայ չար վարքով եւ կռապաշտութեան մոլորութեամբ: Սակայն բանական կացնով հատուցեցինք եւ Արհեստաւորի ձեռքով դարձանք գահաժողով: Վերստին ծննդեամբ մեր փայտեղէն բնութիւնը զարդարուեց ոսկով, արծաթով, քաջածաղիկ ծիրանիով եւ պայծառ քարերով (Սուրբ Հոգու պարգեւներ), որոնք Աստուած բաժանեց իւրաքանչիւրին՝ ըստ նրա կարողութեան չափի (Նիւսացի):

Արծաթը ճշմարտութեան խօսքի եւ հաւատքի խոստովանութեան խորհուրդն է, ծիրանին՝ թագաւորական խոհեմութեան, ոսկին՝ մաքուր յոյսի եւ սիրոյ: Նրա ներսն ակնազարդ է... Ակնարկուած են ջերմ սրտի մէջ ազանակապ չորս առաքիներն<sup>15</sup>, կապուած Աստուծոյ սիրոյ եւ մայր Վերին Երուսաղէմի հետ: Երուսաղէմի դուստրերը հաւաքականօրէն Եկեղեցին, իսկ անհատապէս՝ Եկեղեցիներն են, որոնք

15 Նկատի են առնուած խոհականութիւնը, արիութիւնը, ողջախոհութիւնը, արդարութիւնը:

Քրիստոսի մարմնի անդամներն են եւ ծննդաբերում են ուրիշներն՝ յորդեգրութիւն Երկնաւոր Հօրը (Արեւելցի)։

Ըստ Նիւսացու՝ ծիրանին խորհուրդն է մեր աստուածածանաչողութեան, իսկ ոսկին մաքուր ականդութիւնն է, ուր Տէրն ընկողմանում է գլուխը։ Ուղքեր, զարդարուած բարձր առաքինութիւնների պատուական քարերով, վեր են հինում արքայութիւն, նրանց մէջ Հաստատուած է Իսրայէլի դուստրերի սերը (Նիւսացի)։

Խարիսխը (բնագրում՝ ձեղուն) հաւատքն է, այսինքն՝ ճշմարտութիւնը (Տաթեկացի)։

11. Դուստրե՛ր Սիոնի, ելէ՛ք եւ նայէ՛ք Սողոմոն Արքային՝ այն պսակով, որով պսակեց Նրա Մայրը Նրա փեսայութեան եւ Նրա սրբի ուրախութեան օրը։

11. Կոչ է՝ դուրս գալու Հին մարդու երկրաւոր ցնորքների ծածկոյթից (ինչպէս Աստուած ասաց Աբրահամին. «Ելի՛ր քո երկրից» [Ծն. ԺԲ 1]) (Հիպոդիտոս), ելնելու մարմնաւոր ախտերից, բողբոջի մեռնելու մարմնաւոր ախտերի հանդէպ, որպէսզի մարդը, յարութիւն առնելով Քրիստոսի հետ, աստուածանման լինի (Որոգիւնէս)։

Ըստ Նարեկացու՝ կոչ է արւում Վերին Երուսաղէմի դուստրերին (հրեշտակներ) նայելու իրենց Տիրոջը եւ Նրա գլխին դրուած փշէ պսակին, որը Նա յանձն առաւ Եկեղեցու համար։ Կոչ է արւում նաեւ երկրաւոր Երուսաղէմի դուստրերին, դէպի որոնք Նա շրջուեց եւ ասաց. «Դուստրե՛ր Երուսաղէմի, մի՛ լաք Ինձ վրայ» [Ղուկ. ԻԳ 28]։

Մայր է անուանւում Սիոնը (Սիոն թարգմանւում է մայր), եւ Տիրոջ գլխին պսակ դնողները Նրա վրայ են բնակւում։ Ահա թէ ինչու պսակուեցին ասւում է մօրից (այսինքն՝ Սիոնից)։

Նրա փեսայութեան եւ ուրախութեան օրը չարչարանքների օրն է, քանզի Տէրն Ինքն է ասում. «Հասաւ ժամը, որ փառաւորուի Մարդու Որդին» [Յովհ. Ժէ 1]։ Քանի որ մեր մեղքերը վերցնում է Իր վրայ, դրա համար էլ այնպիսի պսակ յանձն առաւ։ Իսկ մենք, որ դրախտի կորստից ի վեր ընկել էինք փառքից եւ զրկուել լուսեղէն գգեստներին, փեսայացանք եւ ուրախացանք (Նարեկացի)։

Սիոնը նշանակում է բարձր դիտանոց, ուր կոչ է արւում բարձրանալ եւ նայել ճշմարիտ ինչպէս թեանը եւ Նրա պսակին, որը Եկեղեցին է։ Յիսուսի պսակը զարդարուած է առաքինութեան բոլոր քարերով,

որոնցով Աստուած զարգարեց Նրան, Ում մարգարէն Մայր է անուանում<sup>16</sup>, եւ «Նրա գլխին պատուական քարից պսակ դրեց» [Սաղ. Ի 4] (Նիւսացի-Արեւելցի):

## Դ

Փեսան ասում է Հարսին.

1. Ահա գեղեցիկ ես, մերձասո՛ր Իւ, ահա գեղեցիկ ես, քո աչքերն աղանիններ են՝ քո լուսինից դուրս: Քո վարսերը նման են այծերի երանակներին, որոնք երեսացին Գաղասադից:

1. Փեսան նորից Հարսին գեղեցիկ է անուանում... Այդ գեղեցկութիւնը նոր արարչութեան գեղեցկութիւնն է, որն աւելին է, քան այն, որ Ադամն ունէր իր փառքի մէջ: Այդ գեղեցկութիւնն Աւագանի մաքրութեամբ եւ Սուրբ Հոգու օծումով շնորհուող նոր ծննդեան արտայայտութիւնն է... Փեսան՝ Քրիստոս, փշէ պսակով Իր վրայ է վերցրել մարդկանց մեղքերը, այսինքն՝ մարդկային բնութեան մէջ արմատացած բոլոր տգեղութիւնները եւ Իր փրկագործութեամբ զարգարել է մարդկային բնութիւնը նոր գեղեցկութեամբ, նոր արարչութեան գեղեցկութեամբ... (Նարեկացի):

Փեսան մէկառմէկ սկսում է նկարագրել Հարս-Եկեղեցու անդամների գեղեցկութիւնը, որոնցից ամենապատուականը աչքն է. այն նմանեցնում է աղանու: Աղանին Սուրբ Հոգու նշանակն է. Եկեղեցին հեռացել է նիւթական եւ մարմնաւոր կեանքից, հաստատուել Հոգեւոր եւ աննիւթ վարքով եւ լցուել Սուրբ Հոգու շնորհներով, ինչը կերպարանուած է աչքերում:

Առանց քո լուսնեան (բնագրում Քո լուսնինից դուրս), քանզի բարի վարքի մէջ ինչ-որ բան քաջայայտ է մեզ եւ ծանօթ՝ մարդկանց, եւ ինչ որ բան՝ ծածուկ եւ անճառելի՝ տեսանելի միայն Աստծուն: Իսկ չկատարուածները Տեսնողը եւ գաղտնիքները Հայողը, Հարսի դէմքը գովելիս, տեսանելիից աւելի վկայում է լուսնեան մէջ ծածկուածի մասին (Նիւսացի):

16 Սակայն Աստուծոյ մէջ ոչ մի սեռականութիւն չկայ: Այս առումով իւրաքանչիւր անուն պայմանական է եւ նշանական, օրինակ՝ մայր, հայր, որդի, դուստր, փեսայ, հարս:

Փեսան վկայում է, որ Հարսն աղանու պէս մաքուր եւ միամիտ է. սակայն ինչպիսին է՝ փակուած է լուութեամբ, որը Փեսան չի կամենում յայտնել, քանզի Հարսի լսելիքն ի գօրու չէ լսելու անճառելին (Նարեկացի):

Հարսի լուելեայն առաքինութիւնը յայտնի է լինելու հանդերձեալում. այս գովութիւնը այն բարքերի մասին է, որոնք ծածկուած չեն լուութեամբ (Արեւելցի):

Աղաւնին նաեւ անմեղութեան եւ սրտի սրբութեան նշանակն է. այսպիսին են վարդապետները՝ Հարս-Եկեղեցու աչքերը:

Քո յուրթինից դուրս... Մարգարէական գրքերը դեռեւս չեն բացուել, քանզի նրանց բացումը Բանի տնօրինութեամբ եղաւ (Որոզինէս):

Տաթեւացին չորս պատճառ է նշում, ըստ որոնց այժմ Եկեղեցին իր հոգեւոր գեղեցկութեամբ առաւել է, քան Ադամը՝ դրախտի մէջ. ա) Ադամը ստեղծուեց Աստուծոյ ձեռքով եւ խօսքով, իսկ Եկեղեցին Քրիստոսի սուրբ մարդեղութեամբ եւ չարչարանքներով, մահով եւ յարութեամբ է սրբուել, բ) Ադամը մահուան եւ կեանքի մէջ էր, իսկ Աւագանով սրբուածներն անմահութեան մէջ գրուեցին, գ) Ադամը խոստումով միայն ունէր վերին արքայութիւնը, իսկ մկրտուածը գործնականօրէն ստացաւ նրան խոստացուած տեղը, դ) Ադամն արարուեց Աստուծոյ պատկերով, իսկ մկրտուածն Աստուծոյ որդի է, Քրիստոսի ժառանգակից եւ պատկերակից: Աչքերը Եկեղեցու հոգեւոր տեսողութեան զգայարաններն են: Հոգեւոր աչքերը եպիսկոպոստներն են, որոնք տեսուչներ են եւ վարդապետներ. նրանք պէտք է ընդունեն Հոգու իմաստութեան լոյսը, ճանաչեն չարն ու բարին, իւրաքանչիւրին հրաւիրեն բարի գործերի եւ ուղղեն նրանց ճանապարհը (Տաթեւացի):

Տաթեւացին ընդհանրացնում է Նիւսացու մեկնութիւնը.

Մազը (բնագրում՝ վարս) ունի բազմաթիւ յատկութիւններ. ա) կնոջ փառքն է, բ) գլխի ծածկոյթն է, գ) դէմքի պատկառանքն է, դ) երեսի պարկեշտութիւնն է, ե) մեռած ու անզգայ է, զ) օծուելիս չի ուրախանում, է) անխնամ թողնուելիս չի տխրում, ը) այրուելիս ու կտրուելիս չի ցաւում, թ) ներքեւ է իջնում, ժ) միշտ աճում է:

Ովքեր այսպիսի յատկութիւններ ունեն, նրանք Եկեղեցու մագերն են, այսինքն՝ նա, ով մեռնում է խստերի դէմ, ով գովուելիս չի ուրախանում եւ պարսաւուելիս չի տրտմում: Թէկուզ չարչարուի Քրիստոսի համար, ցաւ չի զգայ, միշտ մնում է խոնարհութեան մէջ եւ հանապազ առաքինութեամբ աճում բարութեան մէջ: Այսպիսիները



սուրբ Եկեղեցու փառքը, պատիւը, ծածկոյթը եւ պարկեշտութիւնն են (Նիւսացի-Տաթեւացի):

Որոնք երեւացին Գաղաաղից. այս մասին Նիւսացին ասում է. «Ինչ պարտ եւ արժան է հաւաստիաբար ճանաչել այս մասին, դեռ եւս չկարողացանք հասու լինել, բայց կարծում եմ...»: Գաղաաղու այլազգիները լեռն է եւ խորհրդանշում է նրանց, ովքեր եկան հեթանոսութիւնից ու անհաւատութեան հպարտութիւնից եւ հետեւեցին քաջ Հովուին՝ դառնալով Եկեղեցու մազեր, այսինքն՝ ձեռք բերեցին կատարեալ մեղքութիւն այս աշխարհի նկատմամբ (Նիւսացի):

Եղիան իմաստասիրում էր լեռան վրայ շատ ժամանակներ լտես Գ Թագ. ԺԹ 8]՝ ժուժկալութեամբ, թաւ մագերով եւ փափուկ զգեստների փոխարէն այծի մորթիներով ծածկուած: Արդ՝ բոլոր նրանք, ովքեր մարգարէի պէս են ուղղում իրենց վարքը, Եկեղեցու զարդ են դառնում (Նիւսացի), մանաւանդ լեռնաբնակ միայնակեացեցները (Արեւելիցի):

2. Քո արամները նման են խուզած ոչխարների երամակների, որոնք ելնում են ասագանից. բոլորն էլ երկածին են, եւ անտրոյի չկայ նրանց մէջ:

2. Եկեղեցու հոգեւոր ատամներն այն զօրութիւնն են, որ մանրում է վարդապետութիւնը՝ ի պէտս աստուածային ուսումն ընդունողների...

«Ովքեր մանրամասն մեկնութեամբ յայտնի են դարձնում աստուածային խորհուրդները, որպէսզի դրանք դիւրընկալ հոգեւոր կերակուր լինեն Եկեղեցու մարմնի համար, նրանք ատամների գործն են կատարում, թանձր եւ կարծր հացն իրենց բերանն են առնում եւ մանրամասն տեսութեամբ դարձնում դիւրաւ ուտելի՝ ընդունող անձանց համար...»:

Ըստ Պօղոս առաքեալի՝ Եկեղեցուն պէտք են ատամներ՝ մանրելու վարդապետութիւնների յայտնութիւնները եւ այնուհետեւ որոճացնելու մեզ աստուածային խօսքերը:

Ովքեր Եկեղեցում կարգուեցին ատամների սպասաւորութեան, նախ պէտք է մաքուր լինեն, այսինքն՝ մերկանան ամէն տեսակ նիւթական ծանրութիւնից եւ ապա մտքով լուացուած եւ մարմնի ու հոգու ազտեղութիւններից լիովին սրբուած լինեն, այլեւս յետ դառնալով՝ չենք աշուտեն չարի խորխորատը: Այս ամէնից գատ, կրկնակի բարիքների ծնունդներով՝ ըստ ամէն տեսակ առաքելութիւնների, պէտք

է զուարճանան, ոչ մի բանով անծնունդ չլինեն գեղեցիկ գործերի համար: Այսպիսի ատամները երկածին են՝ հոգով՝ անախտութիւնը եւ մարմնական վարքով՝ պարկեշտութիւնը ծնելով (Նիւսացի):

Աւագանից դուրս եկող խուզած ոչխարները խորհրդանշում են վարդապետներին, որ հեռացել են ամէն տեսակ աշխարհիկ ծանրութիւնից, սիրտը լուացել խղճմտանքից եւ ապա բարձրացել առաքինութեան լեռը երկակի ծննդեամբ՝ ըստ հոգու եւ ըստ մարմնի (Արեւելցի): Բանի տնօրէնութեան սպասաւորները բազմածնունդ են, այսինքն՝ զարդարուած են տեսական եւ գործնական առաքինութիւններով (երկածնութիւնն այստեղ բազմածնութեան խորհրդանիշն է) (Որոգինէս):

Աւագանից դուրս եկող խուզած ոչխարները նաեւ նրանք են, ովքեր մկրտութեան լուացմամբ հեթանոսութիւնից դէպի քրիստոնէութիւն են գալիս (Որոգինէս) եւ անգիտութիւնից ելնում դէպի գիտութիւն. երկածնութեամբ ակնարկուում են քահանաներն ու աշխարհականները: Նրանք, Աստուծոյ ահով եւ երկիւղով յղացած, ծնում են հոգու եւ մարմնի փրկութիւնը, նաեւ սէրն առ Աստուած եւ ողորմութիւնն առ մարդիկ (Արեւելցի):

Տաթեւացիի ամփոփում է Նիւսացի-Արեւելցի մեկնութիւնները.

Առաւմները եկեղեցու վարդապետներն են, իսկ կերակուրը՝ Սուրբ Գրքի գիտութիւնը: Մաքուր կենդանիները կերակուրը նախ մանրում են ատամներով, ապա ուտում, որից յետոյ որոճում: Նոյնպէս էլ վարդապետը նախ քննում է Գիրքը, ապա ինքն ուսանում եւ յետոյ վերստին յիշում եւ ուսուցանում մանուկներին: Լուացուած եւ խուզուած ոչխարը խուզուած է բրդից, լուացուած է, բարձրացել է լեռը եւ արածում է արօտավայրերում: Նմանապէս էլ վարդապետը պէտք է թեթեւանայ աշխարհի ծանրութիւնից, սիրտը լուանայ խղճմտանքից, բարձրանայ առաքինութեան լեռը, ապա ուսանի եւ ուսուցանի (Տաթեւացի):

Ատամներով ծամում ենք անարատ Գառը, ուստի պէտք է խուզել հին մարդու զգեստը եւ դէն նետել, լուացուել լուսաւոր Աւագանով եւ սուրբ ապաշխարութեամբ (կեղծ-Հրպողիտոս):

3. Քո շորթերը նման են որդան կարմիր թելի, եւ քո խօսքերը գեղեցիկ են: Քո այրերը նման են նոսան կեղեւի՝ քո լոռութիւնից դուրս:

3. *Փեսան Եկեղեցու շուրթերը նմանեցնում է որդան կարմիր թելի (գրաբարում՝ լար)...* Լարով խրատում է համակամուրթեան ձգտել, որպէսզի բոլորը մի լար եւ մի հիւսուածք լինեն՝ զանազան նիւթերից մանուած: Կարմիրը Քրիստոսի փրկաբեր Արիւնն է, եւ բերանով միշտ պէտք է խոստովանել Նրան, Ով Իր Արեամբ փրկեց մեզ: Կարմիր լարը սիրով զօրացած հաւատքն է: Եթէ կարմիրը խորհրդանշում է հաւատքը, ապա լարը՝ սէրը...

Այսպիսի շուրթերն ասում են ճշմարտութիւնը, այսինքն՝ բերանով Տէր են խոստովանում Յիսուս Քրիստոսին. «Քանզի սրտով հաւատում էք յարդարութիւն եւ բերանով խոստովանում ի փրկութիւն» [Հռոմ. Ժ 9–10]. սրանք են գեղեցիկ խօսքերը, որոնցով Եկեղեցու շուրթերը կարմիր լարի պէս քաջավայելչաբար ծաղկում են (Նիւսացի):

Լարը խորհրդանշում է սրտի ուղղութիւնը (ճշմարտութիւն, արդարութիւն), իսկ կարմիրը ցոյց է տալիս, որ ներկուած (փրկուած) ենք անմահ Գառի Արիւնով (կեղծ-Հիպոդիտոս):

Կարմիր շուրթերն աւետարանական խօսքով, ինչպէս նաեւ ամենայն հոգեւոր խօսքով բարբառող շուրթերն են: Կարմիր, այսինքն՝ աւետարանող շուրթերից ելնող խօսքը լար է, որը որսում է մարդկանց եւ բարւոք ձգումով տանում առ Աստուած (Նարեկացի):

Ըստ Տաթևացու՝ կարմիր լարը վարդապետի խօսքն է, որը հիւսուած է բազում թիւերից, այսինքն՝ բազում գիտութիւնից, միաւորուած է սիրոյ հետ եւ որսում ու ձգում է մարդկանց:

Հարսը տեսնողների համար յայտնապէս երեւում է աղաւնու անմեղութեամբ եւ օձի խորագիտութեամբ (կեղեկ կարմրութիւն, դառը համ, անուշ հոտ) (Որոգիւնէս):

Փեսան նաև օրինակով գովում է Հարսի՝ պատկառանքով շառագունած ողջախոհութիւնը: Մասն դառը կեղևը սնուցում եւ պահպանում է ներսում պարունակուող պտղի քաղցրութիւնը, նմանապէս էլ խստամբեր վարքի դառնութիւնը եւ ժուժկալուութիւնը ողջախոհութեան բարիքների պահպան են: Այսպիսի վարքի կեղեկով ծածկուած հոգեւոր կեանքի հասուն եւ քաղցրահամ պտուղները գեղեցիկ են մարդկանց աչքի համար եւ ներսի հատիկներով հաճելի՝ Աստծուն (Հիպոդիտոս-Նիւսացի): Ըստ Նարեկացու՝ Քրիստոսի Եկեղեցին իր երեսը սքօղել է առաքինական վարքով եւ խստակրօն ու տաժանելի կենցաղավարութեամբ: Այսպիսի կեղևի տակ Եկեղեցին ամբարել է առաքինութիւնները (Նարեկացի):

Աստուած ճանաչում է Հարսի առաքինասէր վարքի գեղեցկութիւնը եւ յայտնելու է Վերջին Օրը այն, «ինչ աչքը չտեսաւ, եւ ունկը չլսեց» [Ա. Կոր. Բ 9]: Այժմ այն զարդարուած է բերանի պահպանութեամբ ու լուրջամբ եւ ծածկուած՝ սրտի ներսում (Արեւելցի):

4. Քո պարանոցը նման է Դաւթի աշտարակին, որ շինուած է Թալպիովթում. հազար վահաններ են կախուած նրանից եւ սպասուգէների բոլոր ներերը:

4. Պարանոցն արմատացած է ուսերի միջեւ եւ իր վրայ է կրում գլուխը: Պարանոցով են ներհոսում օդը, կերակուրը, այնտեղ են տեղադրուած ձայնի գործարանները... Ո՞վ է եկեղեցական մարմնի պարանոցը, որին նմանեցուցում է Դաւթի աշտարակը. ո՞վ է նա, ով իր վրայ է կրում բոլորի ճշմարիտ գլուխ Քրիստոսին, ով ունակ է ընդունելու Սուրբ Հոգին, որ ջնուցում եւ հրկիզում է մեր սիրտը, ով քաջահունչ ձայնով սպասուորում է Աստուծոյ խօսքին: Եկեղեցու պարանոցն ընդունում է նաեւ Եկեղեցու վարդապետութեան կերակուրը, որ, բերանից գալով, կենդանի է պահում մարմինը, եւ որի պահասութեան դէպքում խամրում եւ ապականում է մարմինը:

Այսպիսի պարանոց էր Պօղոսը (եւ նրա պէս վարք ունեցողները), որ իր վրայ էր կրում Տիրոջ անունը՝ ընտիր անօթ լինելով: Եւ ամէնքի Գլուխն այնպէս հաւաստիօրէն էր յարմարուած նրա վրայ, որ երբ վերջինս խօսում էր, ի՛նքը չէր խօսում, այլ Գլուխն էր բարբառում: Խօսելիս ձայնեղ եւ քաջահունչ էր՝ Սուրբ Հոգով կապակցելով ճշմարտութեան խօսքը: Նրա քիմքը քաղցրանում էր՝ իր միջոցով կերակրելով մարմինը կենարար վարդապետութեամբ:

Ով բոլորին ի մի մարմին է յարմարեցնում սիրոյ եւ խաղաղութեան կապանքներով, ով վարդապետում է՝ պարանոցը խոնարհեցնելով յետինների (արարածի) առջեւ եւ, դարձեալ ուղղելով, վերինը խորհում, երկու կողմերը դիտում, դիւրութեամբ շրջում եւ դիւրաշարժ է, խորշում եւ զգուշանում է սատանայի զանազան խաբէութիւններից, նա՛ է Դաւթից շինուած ճշմարիտ պարանոցը: Աշտարակը մարդկային բնութիւնն է, որն անկումից յետոյ վերստին նորոգուեց շնորհով՝ բազում վահաններով ամրացուելով, որպէսզի նա իր հետ պատերազմողների խարդախութիւններին կոխան չլինի՝ վահաններով եւ նետերով ահաբեկելով պատերազմողներին: Ըստ երեւոյթին՝ վահանների բազ-

մութեամբ նկատի է առնուած հրեշտակային պահպանութիւնը, իսկ զօրաւորների նետերով ցոյց է տրւում նրանց մարտակցութիւնը: Հազարը բազմութեան, առատութեան խորհրդանիշն է (Նիւսայցի):

Արեւելցին Նիւսացու մարդաբանական յղացքներն ամբողջացնում է եկեղեցաբանական հարթութեան մէջ: Թշնամիներին ահաբեկելու համար կախուած վահաններով ակնարկւում է սուրբ Եկեղեցին, ուր հրեշտակների բանակներ են՝ հազարների հազարներ. նրանք զգուշանում են՝ Եկեղեցու մանկանց ցոյց տալով թշնամիներին (Արեւելցի): Վահանը հաւատքի նշանակն է՝ ըստ առաքեալի, որ ասում է. «Հաւատքի վահան՝ վերցրէք» [Եփես. 2 16], որ մի է եւ բազմամասն ու բազմապատիկ՝ առաքինութիւններով (Նարեկացի): Նետերն Աստուածաշունչ գրքի խօսքն է, որը Պօղոսը հրամայում է վերցնել որպէս Հոգու սուսեր [Եփես. 2 17] (Արեւելցի):

Զօրաւորները (բնագրում՝ սպառազէներ) հրեշտակներն են, իսկ նետերը՝ դիւահալած զօրութիւնները: Վահանը Սուրբ Հոգու զօրութիւնն է, որն ընդունեցինք սբ Մկրտութեան հաւատքով, եւ որով կարող ենք թշնամու բոլոր խարդախ նետերը հանգցնել, ինչպէս կայծը՝ ջրի մէջ: Այսպէս է պահուում թագաւորաշէն Աշտարակ-Եկեղեցին, որ շինուել է առաքեալների եւ մարգարէների հիմքի վրայ, եւ որի գլուխն է Քրիստոս (կեղծ-Հիպոդիտոս):

5. Քո երկու սրինքները նւնան են այծեամի երկու երկուորեակ ուլերի, որոնք արածում են շուշանների<sup>17</sup> մէջ:

6. Մինչեւ ցերեկը հանգի եւ արոտները շարժուեն, Ես ինքս կը գնամ գմոնենիների<sup>18</sup> լեռը եւ կնդրուկի<sup>19</sup> բլուրը:

5–6. Երկու սրինքներն Օրէնքն ու մարգարէներն են, որոնք իբրեւ դաստիարակներ հովուում էին շուշանների մէջ, այսինքն՝ մարմնաւոր պարզեւների մէջ՝ առանց յարութեան յոյսի: Իսկ երբ ծագեց (ըստ որոշ բնագրերի) ցերեկուայ Լոյսը, ստուերները [այսինքն՝ ստուերակերպ Հին Ուխտը] շարժուեցին դէպի ճշմարտութիւն՝ ըմբռնելու փրկութեան խորհուրդի կատարումը (Որոգինէս):

17 Տես Բ 1:

18 Տես Գ 6:

19 Տես Գ 6:

Իր մեկնություններին մէջ Նիւսացիին ելնում է մարդաբանական ենթադրություններից: Մարդը հոգի է եւ մարմին, որոնք զուգահեռաբար արարուեցին Արարչի կողմից, «քանզի հոգին մարմնից առաջ չի գոյացել, ոչ էլ մարմինն է մինչեւ հոգին կազմուել»: Երկու ստիքները հոգին եւ մարմինն են, որոնք նմանեցւում են շուշանների մէջ արածող անմեղ ուլերի: Ծուշանն իր անուշահոտութեամբ եւ գեղեցկութեամբ խորհրդանշում է Քրիստոսի անուշահոտութիւնը (հոգեւոր կեանք) եւ մարմնի սրբութիւնը (մարմնական սրբութիւնը լցուած է հոգեւոր կեանքի անուշահոտութեամբ): Հոգու եւ մարմնի կերակուրը մաքուր եւ անուշահոտ առաքինութեան ծաղիկներն են: Իսկ փշերն ու տատակները մեղքերն են (Նիւսացի):

Ծուշաններն, ըստ Արեւելցու, Օրէնքի եւ մարգարէների ծաղիկներն են, որոնցով մարդկային բնութիւնը կերակուրում էր անկումից յետոյ, իսկ փշերը եւ խոտերը հեթանոսներն ու հերձուածողներն են (Արեւելցի):

Ծուշանը լուսափայլ եւ անուշահոտ պատուիրանն է, որ բնակեցուեց մեր բնութեան մէջ, որպէսզի ինչ նախապէս սահմանուած էր, դէպի այն ընթանանք (կեղծ-Հիպոդիտոս):

Յերեկը եւ լոյսը Սուրբ Հոգին է, որի շունչը (ըստ որոշ բնագրերի) հալածում եւ ունայնացնում է խաւարը, հեռացնում եւ փախստեան է մատնում ստուերները (Նիւսացի): Օրէնքի ստուերները Սուրբ Հոգու լոյսից շարժուեցին եւ գնացին (Արեւելցի):

Յերեկը եւ լոյսը նաեւ Քրիստոսն է, որ մտքից հալածում է ստուերները՝ ըստ խօսքի. «Քեզանից է, Տէ՛ր, կեանքի աղբիւրը, եւ Քո երեսի լոյսով ենք տեսնում լոյսը» [Սաղմ. ԼԵ 10]: Տիրոջ լոյսով է լուսաւորուում նաեւ մեր սիրտը, որ ստինքների մէջ է: Իր հոգեւոր ստինքներով է Եկեղեցին կերակուրում մանկանց (Նարեկացի) եւ այծեամի սրատեսութեամբ զգուշանում օտարներից (Արեւելցի):

Այծեամի, ըստ կեղծ-Հիպոդիտոսի, խորհրդանշում է մտքի արագ-ընթացութիւնը եւ սրատեսութիւնը:

Զմուռախ լեռը մահուան լեռն է, ուր, մեզ համար պատերազմելով, մենամարտեց Տէրը: Այն նաեւ կնդրուկի բլուր է, քանզի միաւորուած Աստուածութեամբ խաչի վրայ ճմլեց հնձանը (Նարեկացի): Զմուռսով յայտնուում են չարչարանքները, իսկ կնդրուկով՝ Աստուածութեան փառքը (Նիւսացի):

*Որոգիւնէսեան ըմբռնումը մարդաբանական է: Չմոտար եւ կնդրուկը Տիրոջ Մարմնի անապականութեան նշանակներն են: Չմոտար նշանակն է Տիրոջ մահականացու մարմնի, որը կնդրուկի պէս անուշահոտ է բոլոր կրքերով (Որոգիւնէս):*

*Փեսան յորդորում է Հարսին բարձրագոյն փառքի ախորժումով: Ես ինքս գնացի... Տէրը կամաւորաբար գնաց Գողգոթա՝ զմուռսի լեռը, ուր խաչուեց եւ, զմուռսով պատուելով, թաղուեց՝ ոչ թէ հարկադրաբար եւ որեւէ մէկի արժանիքի համար, այլ Ինքը մարդասիրեց: Եւ յարութիւն առաւ՝ ելնելով Աստուածութեան փառքը՝ կնդրուկի բլուրը, որին մատուցում են առաքինութեան բոլոր խունկերը, եւ որի առաջ բոլորը ծնկի են գալիս... Փեսան ցոյց է տալիս աստուածացման ճանապարհը. ոչ ոք չի կարող հաղորդուել Աստուածութեանը, եթէ չկցորդուի Հարչարանքների գմուտսին եւ Հարչարանքներով չզմուռի իր անձը: Ովքեր կարիքներով եւ պէտքերով իրենց մարմինը խաչ բարձրացրին, դարձան կնդրուկի բլուր, ուր հանգչում է Աստուածութեան փառքը (Հիպոդիտոս-Նիւսացի-Արեւելցի), եւ ցնծութիւն հագան (կեղծ-Հիպոդիտոս):*

*7. Ամբողջովին գեղեցիկ եւ, մերձաւոր Իմ, եւ ոչ մի արայր չկայ քեզ վրայ:*

*7. Հարսը ձեռք է բերել անարատ գեղեցկութիւն... Սակայն այս գեղեցկութիւնը ստացական է: Հարսն անմահ Գառի արեամբ է մաքրուել մեղքի բծերից ու արատներից եւ ստացել երկնային գեղեցկութիւնը (Նարեկացի):*

*Աստուածայինը Քրիստոսի փրկութեամբ դոյաբանօրէն միաւորուել է մարդկային բնութեանը. մարդկային բնութիւնն աստուածանալու շնորհ է ստացել: Սակայն Աստուծոյ փրկութեանը պէտք է ընդառաջ ելնել՝ սեփական մարմինը խաչ բարձրացնելով այս աշխարհի համար եւ Հարչարակից լինելով Քրիստոսին: Ով մեռնում է այս աշխարհի համար, նա յարութիւն է առնում Քրիստոսի Հետ եւ Աստուծոյ փառքի մէջ մտնում, ամբողջովին գեղեցիկ դառնում, հեռու լինում հակառակամարտ արատից (կեղծ-Հիպոդիտոս-Արեւելցի):*

*8. Ե՛կ Լիբանանից, ո՛վ Հարս, այսպէղ ե՛կ Լիբանանից: Ե՛կ եւ անցի՛ր հաւայրքի գագաթից, Սանիրի եւ Հերմոնի կայսարից, առիւծների մայրիներից եւ ինձերի լեռներից:*

8. Մշտագոյ բարիքների Աղբիւրը ծարաւեալներին Իր մօտ է կանչում, ինչպէս ասում է Աւետարանում. «Ով ծարաւ է, թող գայ Ինձ մօտ եւ խմի» [Յովհ. է 37]: Սրանով Տէրը յորդորում է մշտնջենաւորապէս ծարաւելի, ըմպելի եւ ձգտելի Իր մօտ: Եւ ովքեր ճաշակում են, փորձով անմիջապէս ուսանում են, որ քաղցր է Տէրը, ինչը յորդորում է առաւել մեծ ճաշակման, աւելի բարձրանալու առ Աստուած՝ մեծագոյնին յարժամ ձգտելով:

Հարսին կանչում է Լիբանանից (կնդրուկի լեռներից, այսինքն՝ աստուածացման բարձունքներից)... Հարսը Տիրոջ հետ ելաւ գմուսի լեռը, այսինքն՝ մկրտութեամբ մեռաւ ու թաղուեց Տիրոջ հետ: Հարսը նաեւ բարձրացաւ կնդրուկի բլուրը, այսինքն՝ յարութիւն առաւ եւ Աստուածութեան հաղորդակցութեամբ բարձրացաւ... Այժմ Փեսան կոչ է անում գիտութեամբ աւելի բարձրանալ, երբեք չդադարել վեր ելնելուց, որպէսզի կատարելութեան վեր ելած կնդրուկը, որին Փեսան յարութեամբ սկզբում հաղորդուեց բարձրագոյն բարիքների ընթացքով, հաւատքի սկիզբ լինի Հարսի համար: Փեսան ասում է. «Արդ՝ այս սկզբով, որը հաւատքն է, այսուհետեւ արի՛ եւ անցի՛ր»:

Մանիրի եւ Հերմոնի կատարից. ակնարկում է վերստին ծննդեան խորհուրդը: Քանզի Յորդանանի աղբիւրներն այնտեղից են բխում, եւ այդ աղբիւրների հոսանքներից սկզբնաւորուեցին առ աստուածայինը վերափոխման շնորհները (Մկրտութեան աւազանի շնորհները): Անմիջապէս մերձադրւում է տրամական առիծների եւ ինձերի յիշատակումը, որպէսզի առաւել քաղցրանայ հրճուանքի վայելումը: Քանզի մարդը, հեռանալով աստուածայինից, անասունների բնութեան պէս գազանացաւ, չար գործերով ինձ ու առիծ եղաւ: Քանզի մորենու մէջ դարանակալած առիծից որսուեց եւ նրա որոգայթների մէջ խոնարհուեց, նրա բնութեամբ կերպարանուեց եւ գազանացաւ: Նմանապէս էլ ինձ է դառնում նա, ով աղտեղի վարքով խայտաբղէտ է դարձնում սեփական անձը: Այսպիսին էր մարդկային կենցաղը՝ կռապաշտութեամբ, հրէական խաբէութեամբ եւ գանազան մեղքերի չարութեամբ մոլորուած, եւ ապա Յորդանանով, զմուռսով ու կնդրուկով բարձրացաւ առ Աստուած (Նիւսացի):

Հիպոդիտոս-Նարեկացի-Արեւելցի մեկնութիւններում Լիբանանը խորհրդանշում է մինչքրիստոսեան ընկած մարդկութեան նկարագիրը:

Տէրը կոչ է անում անպտուղ անտառում յողնած (Հիպոդիտոս), մեղքով անտառացած (Նարեկացի), կռապաշտութեամբ եւ հպարտութեամբ



արմատացած (Արեւելցի) մարդկային բնութեանը հեռանալ ամէն տեսակ որոգայթներից, գալ հաւատքի սկիզբ՝ մկրտութեամբ մերկանալով դազանական տգեղութիւններից եւ բռնութիւններից (Հիպոդիոտոս-Նարեկացի-Արեւելցի):

Ըստ Որոգիւնէսի՝ հաւատքի գլուխն Օրէնքը եւ մարգարէներն են, որ հանդերձեալ բարիքների ստուերներն ունէին. արդ՝ Փեսան սկզբից եւեթ կանչում է նրանց դէպի Աւետարանի հաւատքը: Իսկ Սանիորը, Հերմոնը, առիծների մայրիները եւ ինձերի լեռները կռապաշտական ժողովարաններն են: Տէրը հրեաներից եւ հեթանոսներից ժողովեց մէկ Եկեղեցի եւ բոլորին Աբրահամի հաւատքի որդիներ դարձրեց (Որոգիւնէս):

9. Սրբակաթ արեցիր մեզ, քո՛յր մեր Հարս, սրբակաթ արեցիր մեզ քո մի աչքով եւ քո պարանոցի մի քառանկանակով:

9. Արտայայտում է հրեշտակների եւ մարգարէների բազմանքը. «Միրտ տուեցիր մեզ հաւատքի ուղիղ հայեացքով եւ Նրա նկատմամբ հաւատքի սրտակաթ տենչման քառամանակ գործերով» (Որոգիւնէս):

Եկեղեցին Հարս է անուանում Աստուծոյ հետ միաւորման պատճառով եւ այժմ՝ քոյր՝ անախտ ազգակցութեան պատճառով (Նիւսացի): Հիպոդիոտոս վարդապետը քոյր-հարս համադրոյթը դիտում է զարգացման մէջ. Փեսան նշանակալորէն ասում է. «Թէպէտ բանական հոգով քոյր ես, սակայն դերազանց եղար, քանզի հարանացար բոլորի Արարչին»: Իսկ սրտացրիւրը (ըստ որոշ բնագրերի) ըստ երեւոյթին նշանակում է հոգիացրիւր, այսինքն՝ մեր մէջ սիրտ դրեցիր... կամ զարմացրիւր՝ նախանձաւոր լինելու հոգեւորին (Նիւսացի-կեղծ-Հիպոդիոտոս):

Փեսայի բարեկամները (ըստ Նարեկացու՝ բարեկամները հրեշտակներն են: Մարդիկ եւ հրեշտակները քոյրեր են, քանզի միեւնոյն Արարչից են արարուած՝ բանականութեամբ եւ մաքրութեամբ (Տաթեւացի)) Հարսի միջոցով տեսնում են Փեսայի գեղեցկութիւնը եւ սքանչանում: Այդ գեղեցկութիւնը բոլորի համար անտեսանելի էր եւ անասմանելի... Նրանք մաքուր հայելիով՝ Եկեղեցով, տեսնում են արդարութեան Արեգակին եւ երեւելիով՝ իմանալին...

Քո մի աչքով... Այսինքն՝ հոգու մէկ տեսութեամբ, մէկ հայեացքով, Միակին հայող հոգեւոր տեսութեամբ: Նիւսացին միական, միատես

Հոգեւոր տեսողութիւնը հակադրում է բազմական եւ բազմատես արտաքին տեսութեանը... «Մէկով տեսնում է ճշմարտութիւնը, միւսով հեռացել է սնտրի մոլորութիւններից, քանզի Հարսի մէկ աչքը բացուած է դէպի բարու բնութիւնը, իսկ միւսն անգործ է: Այս պատճառով բարեկամները գովութիւն են ընծայում այն մէկ աչքին, որով է միայն Հարսը տեսնում Միակին, այսինքն՝ Յատուկին, որ բնութեամբ անփոփոխելի եւ մշտնջենաւոր է իմացուած, ճշմարիտ Հօրը, Միածին Որդուն եւ Սուրբ Հոգուն, քանզի ճշմարտապէս Միակ է եւ Մէկ Բնութեան մէջ է իմացուած՝ ըստ բնութեան չզանազանուելով որեւէ բաժանութեամբ եւ օտարութեամբ: Քանզի կան ոմանք, որ զանազան աչքերով չարաչար անտեսում են անգոյնների պէս՝ Միակը խոտորելով եւ աչքի տեսութեամբ բաժանելով բազում բնութիւնների. այսպիսիներն են, որ կոչւում են բազմահայեացք, որոնք, շատ նայելով, ոչինչ չեն տեսնում... Ապա ուրեմն կոյր է բազմաչեան, որ շատ աչքերով նայում է սնտրի բաների վրայ, սրահայեաց եւ տեսնող է նա, ով Հոգու մէկ աչքով հայում է Միակ Բարուն»:

Հարսը միատես է, այսինքն՝ «մէկ հոգով» է վկայում եւ «միատես առաքինութեան կեանքով» հայում, Միակին առաջն ունենալով՝ միացնում մտածութիւնները... (Նիւսացի): Հարսը երկու աչքով նայում է Միակին (կեղծ-Հիպոդիտոս):

Պարսնոցի քառամանեակը Քրիստոսի լուծն է... (Նիւսացի):

10. Քանզի գեղեցկացան քո սրինքները, քո՛յր Իմ Հարս, քանզի գեղեցկացան քո սրինքները գինոց [աւելի], եւ քո հանդերձների հոտը՝ բոլոր խունկերից:

10. Ստինքները վարդապետութեան աղբիւրներն են, որոնք արդէն չեն բխեցնում մանուկների կաթը, այլ աղբիւրացնում են անարատ գինին՝ յուրախութիւն կատարեալների (Նիւսացի):

Ստինքները խորհրդանշում են սուրբերի սրտի մաքրութիւնը... Կաթից գինի անցումն արտայայտում է Հոգեւոր աճի օրինաչափութիւնները: Պօղոս առաքեալն ասում է. «Ով կաթնակեր է, տգէտ է արդարութեան խօսքի համար» [Եբր. Ե 13] եւ «Իբրեւ ի Քրիստոս մանուկների կաթով կերակրեցի ձեզ եւ ոչ՝ [պինդ] կերակրով» [Ա Կոր. Գ 2]: Եթէ կաթը բնորոշ է մանուկներին, ապա գինին՝ հասակով կատարեալներին: Գինին ուրախութեամբ է լցնում կերակրողներին...

Նմանապէս սուրբերի սրտից, այսինքն՝ հոգեւոր ստինքներից, բխող Սուրբ Հոգու խօսքերը զուարճացնում են լսողներին եւ ուրախութիւն ու կենդանութիւն հաղորդում (Նարեկացի):

Գինին, ըստ Տաթեւացու, նշանակն է իմաստութեան:

Նիւսացու մօտ բնագիրը հետեւեալն է. «Քո իւղերի հոտը՝ բոլոր խոնկերից»: Այս խօսքն ուսուցանում է, որ ճշմարտութեան խորհուրդը՝ աւետարանական վարդապետութեամբ յայտնուած, աւելի անուշահոտ է Աստուծոյ համար, քան Հին Օրէնքի բոլոր խոնկերը (նկատի ունի ողջակէզների, պատարագների, ընծաների եւ ամէն տեսակ անուշահոտութիւնների մատուցումը), քանզի Աստուծոյ պատարագը «խորտակուած» հոգին է, Աստուած փշրուած եւ «նուաստացած» սիրտը չի արհամարհում [տես Սաղմ. Ծ 19]... Հարսի վարքի անուշահոտութիւնը վեր է Օրէնքի մարմնաւոր խոնկերից եւ յոյժ ցանկալի եւ ընդունելի՝ Փեսայի համար (Նիւսացի):

Նմանապէս պէտք է հասկանալ հանդերձների խնկաբոյր հոտը: Քանզի ովքեր ձեռնամուխ են լինում անուշահոտ առաքինութիւնների եւ բարի գործերի, ոչ միայն փրկութեան պատճառ են լինում, այլեւ օգտակար լինում իրենց մերձեցողներին եւ տեսնողներին՝ ոչ միայն կենդանութեան օրօք, այլեւ եւ առաւելապէս՝ յետմահու (Նարեկացի):

Ըստ Տաթեւացու՝ հանդերձը խորհրդանշում է առաքինութիւնը, Բանի մարմնաւորուելը եւ հեթանոսների դիւրին դարձը: Իսկ հոտն այն ծածուկ զմայլումն է, որ բուրում է Քրիստոսից, Եկեղեցու խորհուրդներից եւ առաքինութիւններից՝ ի հաճութիւն Աստուծոյ եւ մարդկանց (Տաթեւացի):

Երբ մարդը սուրբ սրտով եւ անկեղծ հաւատքով ճանաչում է Աստուծուն, նրա գործերը խոնկից աւելի անուշ են բուրում (կեղծ-Հիպոդիտոս):

11. Մեղր է կաթում քո շորթերից, քո՛յր Իմ Հարս, մեղր ու կաթ է քո լեզուի փակ, եւ քո հանդերձների հոտը նման է կնդրոսկի<sup>20</sup> հոտի:

11. Քաղցր եւ ախորժելի մեղր է կոչում վարդապետութիւնը, որով Քրիստոսին հարսնացածներից եւ մերձաւորներից կերակրում են մարդիկ եւ քաղցրանում լսողների սրտերը՝ ըստ Դաւթի, թէ՛

«Մեղրից քաղցր են Քո խօսքերն իմ քիմքում» [Սաղմ. ՃԺԸ 103]: Մեղր ու կաթ է քո լեզուի տակ. կաթը մանուկների համար է, մեղրը՝ հասակով կատարեալների: Նարեկացին այստեղ յիշում է սուրբ Յովհան Ոսկեբերանին որպէս բոլոր լեզուներից աւելի անուշ կերակուրներով կերակրողի (Նարեկացի):

«Մեղրը սուրբ աղօթքն է, որ քաղցրացնում է Աստծուց մեզ տրուած բարիքների պարգեւները» (Կեղծ-Հիպոդիոտոս):

Հարսի շուրթերից բուրում են ոչ թէ խօսքեր, այլ զօրութիւններ... Հարսի հանդերձների հոտը (առաքինութիւն) նախ գերադասուեց բոլոր խոնկերից, իսկ այժմ նմանեցուեց կնդրուկի... Առաքինութեան կեանքի լրումն աստուածանմանութիւնն է: Կնդրուկին աստուածային պատիւ է ընծայուած. Հարսի առաքինութեան զգեստը նման է աստուածային երանութեանը, մաքրութեան եւ անախտութեան պատճառով նման է անմեքձեհալի Բնութեանը: Հարսը Քրիստոսին է հազել եւ առաքինութեան վարքը հասցրել կատարելութեան (Նիւսացի):

Հանդերձների անուշահոտութիւնը խորհրդանշում է Աստծուն հաճելի անուշահոտ պատարագը: Ո՞րն է ընդունելի պատարագը, որն Աստուած հոտոտում է իբրեւ անուշահոտութիւն... Ովքեր իրենց կամքը, խորհուրդները եւ մարմինը որպէս ողջակէզ մատուցում են Աստծուն (Նարեկացի):

12. Փակուած պարտէզ եւ, քո՛յր Իմ Հարս, փակուած պարտէզ եւ եւ կնքուած աղբիւր:

12. Տաթեւացին, էպպէս լրացնելով Նիւսացի-Որոգինէս մեկնութիւնները, համակողմանի եւ ամբողջական մեկնութիւն է առաջադրում:

Աղբիւրը մտքի զօրութիւնն է (Նիւսացու ծօտ աղբիւրը մտաւոր հոգու զօրութիւնն է, որ մեր մէջ բխեցնում եւ աղբիւրացնում է բոլոր խորհուրդները): Երբ շարժուում ենք եւ յօժարում բարի գործերի, այնժամ կնքուած է մեր մէջ, իսկ երբ յօժարում ենք չար խորհուրդների, մեր մտքի աղբիւրը վատնւում եւ արտահոսում է դուրս՝ դէպի մեղքի փուշը եւ տատասիլը: Պարտէզը մեր առաքինութիւններն են: Փակուած է, որ չլինի կեղծիքով եւ ի ցոյց մարդկանց: Փակուածութիւնը նշանակում է նաեւ, որ մեր հոգին փակ ենք պահում մեղքի փշի եւ տատասկի առջեւ, այսինքն՝ մեր զգայութիւնների անդաստանը գերծ

ենք պահում չարի որոմներից: Ինչպէս նաեւ պէտք է սրբութիւնը տալ շնորհին եւ Աստուծոյ իմաստութեան մարգարիտները՝ խոզերին [տես Մատթ. է 6]: Աղբիւրը նաեւ ներքին խոհեմութիւնն է (ու պարկեշտութիւնն է, որպէսզի միտքը չնայի օտար ազբիւրներին, ուր մնաց թէ մօտենայ (կեղծ-Հիպոդիտոս)). այն պէտք է կնքել, որ չպղտորուի: Պարտէզը եւ աղբիւրը խոր առնչութիւն ունեն իրար հետ... Եթէ պարտէզը մեր առաքինութիւններն են, ապա աղբիւրը Սուրբ Հոգու վարդապետութիւնն է, առանց որի ամէն տեսակ առաքինութիւն արագ չորանում է եւ հոգեւոր կեանքը՝ վերանում: Փակուածութիւնը եւ կնքուածութիւնը խորհրդանշում են Օրէնքը եւ մարգարէներին, որ ծածկուած էին ազգերից ու ժամանակներից եւ ծածկապէս յայտնում էին Բանի մարդեղութեան խորհուրդը: Եւ պէտք էր, որ պարտէզի Տէրը եւ Նրա բարեկամները վայելեն, ուտեն եւ ըմպեն, եւ ոչ թէ օտար խոզերը թաւալեն եւ ընդոտնեն: Նմանապէս էլ այժմ Եկեղեցին է կնքուած եւ փակուած. ա) փակ է օտարների եւ անարժանների համար, բ) փակուած եւ կնքուած է, որպէսզի ամուր եւ անսասան պահենք, գ) փակուած եւ կնքուած է, որովհետեւ թէպէտ Աստուծոյ շնորհները եւ իմաստութիւնը բխում են արարածների մէջ, սակայն Եկեղեցին չի առաւելանում կամ պակասում, այլ մնում է նոյնը:

Փակուած պարտէզն ունի նաեւ Աստուածամօր խորհուրդը, եւ կնքուած աղբիւրը կենդանի ջրի ակունքն է՝ միայն Բան Աստուծով բացուած, որ իջաւ Իր պարտէզի մէջ, այսինքն՝ Իր ձեռագործ ստեղծուածի եւ պատկերի մէջ (Տաթեւացի):

13. Քո պարզամտութիւնը նոննիների դրախտ է՝ մրգաբեր ծառերի պտուղներով հանդերձ. կիպրոս<sup>21</sup>՝ նարդաւ<sup>22</sup> հանդերձ,

13. Այս խօսքերի ճշմարիտ իմաստները, ըստ Նիւսացու, «խկապէս յայտնի են միայն նրանց, ովքեր սուրբ Պողոսի պէս գիտեն խօսել աստուածային խորհուրդները... Ովքեր կարող են քննել Աստուծոյ գիտութեան, իմաստութեան եւ մեծութեան խորքերը...» (նկատի ունի 13–15 տները):

21 Կիպրոս – տես Ա. 13. նոճի:

22 Տես Ա. 12:

Նրևսացու մօտ բնագիրը հետեւեալն է. «Քո առաքումը՝ քո բերանից, նռնենիների դրախտ է...»: Սակայն, ըստ Նրևսացու, եբրայական բնագիրը պէտք է հասկանալ հետեւեալ իմաստով. «Քո բերանից առաքուած խօսքը նռնենիների դրախտ է...»: Նկատի է առնուած հաւատքի խօսքը, որ, լսողութեամբ ընկնելով ընդունողների սիրտը, դառնում է դրախտ՝ տնկախիտ եւ հոծ բուսած ծառերի անտառ: Նռնենիներ են անուանուած ծառերը, որոնք տնկագործում է Հարսի բերանից առաքուած խօսքը: Նռնենին փշերի պատճառով դժուարամտօքն է քողերի համար: Պտուղը դառնահամ ծածկոյթ ունի, իսկ միջուկի հասունանալուց յետոյ յոյժ գեղեցիկ է աչքերի համար, ախորժիկ ու քաղցր՝ ճաշակողների համար, անտրտմելի դինով քաղցրացնում է ճաշակելիքի զգայութիւնը:

Նռնենիների դրախտը լսողների անձերում է. այն մշակուած է Հարսի առաքած խօսքով: «Որպէսզի ուսանենք ո՛չ թէ փափկութեամբ եւ մեղկութեամբ կակղանալ առաջիկայ կեանքում, այլ խիստ ժուժկալութեամբ վարքն ընտրել, քանզի այսպիսի ժուժկալութեան զգեստով ամբացած պտուղը, թերեւս, անմերձենալի է գողի համար: Եւ պարկեշտութեամբ ու տխրութեամբ (հաւանաբար նկատի ունի ապաշխարութիւնը), որպէս փշերով, խոցոտում է չարութեամբ հպուռողներին...» (Նրևսացի): Նաեւ սիրով պիտի համբերի Հարսը թէ՛ ընկերների, թէ՛ սատանայի կողմից եկող փորձութիւններին՝ ակամաները յանուն Աստուծոյ սիրոյ կամաւոր դարձնելով, եւ ապա կը լինի Աստուծոն ախորժիկ պտուղ, ինչպէս նռնենին, որ մինչեւ հասնելը պատուած է փշերով (Նարեկացի): Այսպիսին, երբ վայելման ժամանակ տալիս է ներսի պտուղները, պտղաբերութեամբ գերազանցում է բոլոր ծառերի պտուղները՝ այլազան եւ յոգնատեսակ խունկի ծառերի պտուղներով շրջապատուած (Նրևսացի):

Կիպրոսը անուշահոտ ծառ է, որ թարգմանուած է նոճի կամ կիպարիս (Նարեկացու եւ կեղծ-Հիպոդիտոսի մօտ բնագրում կիպրոսի փոխարէն ծաղիկ է):

14. նարդու<sup>23</sup> եւ բրքու<sup>24</sup>, խոնկեղէգ<sup>25</sup> եւ կինամոն<sup>26</sup>՝ Լիբանանի բոլոր ծառերով հանդերձ, զմոսս<sup>27</sup> եւ հալու<sup>28</sup>՝ բոլոր գլխատր խոնկերով հանդերձ:

14. Քրքումը լծակցուած է նարդոսին: Նարդոսի անուշահոտութեան խորհրդին ծանօթացանք Ա 12-ի մեկնութեան մէջ, իսկ քրքումը չա-

23 Տես Ա 12:

24 Քրքում – (եբր.  $\text{כַּרְכֹּמ} / karkom$ ) *Crocus sativus*: Պարտէզային հոտաւէտ բոյս է: Աճում է Հարաւային Եւրոպայում՝ ամենուր (Հայրենիքն են Յունաստանը եւ Փոքր Ասիան), տեղ-տեղ էլ՝ Գերմանիայում: Կոճղեղաւոր բոյս է՝ երկար ցողունով եւ շատ նեղ, մուգ կանաչ տերեւներով եւ անմիջապէս արմատից է աճում: Աշնանը տերեւների արանքից աճում է կարճ ընձիւղով բաց մանուշակագոյն ծաղիկը, որը տեսքով նման է շուշանին, իսկ մեծութեամբ՝ փոքրիկ կակաչին: Նրա միջում վարսանդը վերջանում է երեք մսոտ ծիլերով, որոնք էլ չոր վիճակում կազմում են հոշակաւոր քրքումը: Արեւելքում քրքումը բարձր էր գնահատում: Պակաս բարձր չէր գնահատում յոյների եւ հռոմէացիների մօտ: Քրքումից պատրաստում է անուշահոտ ջուր, որով ցողում են սենեակները, շորերը, գցում ուտելիքի եւ ըմպելիքի մէջ: Քրքումից հոտաւէտ քսուք էին պատրաստում: Հին Եգիպտոսում աճեցւում էր մէկ այլ բոյս՝ *Carthamus tinctorius*, որը քրքումի պէս ապրիս էր դեղին ներկ՝ մուսիաների Հանդերձները ներկելու համար:

25 Խունկեղէգ (անուշ) – թէպէր՝ *Acorus calamus* բոյսն է: Լաւագոյն խունկեղէգն աճում էր Արաբիայում եւ Հնդկաստանում, իսկ ցածրորակները՝ Եգիպտոսում եւ Սիրիայում: Սուրբ օծութեան իւղի բաղադրանիւթերից է [Ելք Լ 23]:

26 Կինամոն – (եբր.  $\text{קִּינָמֹן} / qinnamon$ ) *Cinamomum zeylanicum*: Անուշահոտ բուրմունքով կեղեւ է, որը հանում է գափնիների ընտանիքի ծառերի մի տեսակից: Նրա աղացած փոշին սուրբ օծութեան իւղի բաղադրանիւթերից է [Ելք Լ 23]: Այժմ աճեցւում է Ցիլոնում եւ Զաւայում:

27 Տես Գ 6:

28 Հալուէ – (եբր.  $\text{אַהֹלוֹת} / ahalot$ ) *Aloe barbadense*, յայտնի է նաեւ *A. vera* վայրի վիճակով, որն աճում է Եմենում: Հայնօրէն աճեցւում է տնական պայմաններում: Քաջ յայտնի է կղզոտիկ բոյս է՝ լայն, շատ հաստ տերեւներով, որոնց եզրերին փշեր են: Այս բոյսի հիւթը բուժիչ դեղ է, որ յայտնի է պոէ անունով: Այն, բնախոյզների վկայութեամբ, գործածւում էր մահացածների մարմինն օձելու համար: Նիկողեմոսը Տիրոջ մարմինը գերեզման դնելիս բերեց Հալուէ՝ զմուռսով խառն [Յովհ. ԺԹ՝ 39]: Հալուէն ունի շատ սուր եւ անուշ հոտ, որի համար էլ բոլոր արեւելեան ժողովուրդների կողմից գործածւում էր ինչպէս մեծարժէք կնդրուկը: Հալուէն իր անուշահոտութեամբ դրւում է զմուռսի եւ կաօրասի կողքին [Սաղմ. ԽԴ՝ 9]: Կարող է լինել ժամանակակից *Aquilaria agalocha*-ն, որ այսօր լինում է Արեւելեան Բենգալում, Չինաստանում:

փառոր զօրութիւն ունի. ո՛չ շատ սառն է, ո՛չ էլ շատ տաք, ցաւերն ամոքող զօրութիւն ունի: Քրքումի յատկութիւններով այլաբանօրէն իմաստասիրում է առաքինութեան մասին, քանզի առաքինութիւնը միջինն է երկու ծայրայեղութիւնները՝ բարու պակասութեան եւ չափազանցութեան (օրինակ՝ ժլատութիւն եւ շռայլութիւն, երկչոտութիւն եւ յանդգնութիւն...): Հոգեւոր կեանքում քրքումը խորհրդանշում է չափաւորութիւնը եւ խոհեմութիւնը: Այսինքն՝ առաքինութեան գործերում պէտք է դիմել տրուել անչափութեան, որպէսզի հոգեւոր կեանքը չվնասուի: Պէտք է հաստատուն հաւատքով ապրել, գրուածից աւելիին չհետամտել եւ անքննելին չքննել, այլ բոլոր անկարելի, անլինելի եւ անհաւատալի բաներից աւելի պէտք է հաւատալ Աստուծոյ ամենակարող զօրութեանը: Նմանապէս, եթէ մէկը գործած մեղքերի համար սուգի մէջ է, չպէտք է սգայ չափից աւելի, որպէսզի յուսահատութեան մէջ չընկնի եւ չասի՝ փրկութիւն չկայ, եւ այդ պատճառով չմնայ մեղքերի մէջ կամ Յուդայի պէս ընկնի, որ խեղդուեց (Նիւսացի-Նարեկացի):

Խոնկեղէզը բոլոր խոնկերից անուշահոտ է. այն հրամայուեց խառնել խոնկի հետ՝ խորանում Աստուծոյ համար ծխելիս (Նարեկացի). խորհրդանշում է առաքինութեան վարքը (Արեւելցի):

Նիւսացին նկարագրում է, որ կինսամոն ունի շոգին կամ ջերմութիւնը զովացնելու կամ սառեցնելու արագ զօրութիւն եւ այլ գարմանալի յատկութիւններ: Կինսամոնը հրեշտակահաւասար վարքի խորհուրդն է. այն ունեցողն այլեւս չի ընդունում մարմնաւոր ախտերի այցերը (պոռնկութիւն, ազահութիւն, բարկութիւն...), այլ արթուն, անքուն, անխտ եւ անկարիք կենցաղավարութեամբ է ապրում (Նիւսացի-Նարեկացի):

Լիբանանի ծառերից ծորում է կնդրուկը, այսինքն՝ Լիբանանի ծառերի գեղեցկութիւնը կերպարանում է աստուածային տեսութիւնը. եւ աստուածային փառքին ոչ ոք հաղորդ չի լինում, եթէ նախապէս կերպարանակից չլինի Տիրոջ մահուանը (Նիւսացի):

Զմուտը (տես Գ 6) եւ հալուէն այն նիւթերն են, որ Տիրոջ թաղմանը Յովսէփը եւ Նիկողեմոսը բերեցին: Զմուտը նշանակն է անպական մարմնի, հալուէն՝ անուշահոտ Աստուածութեան: Զմուտը նաեւ խորհուրդն է թաղման, իսկ հալուէն՝ յարութեան (Տաթեւացի):



15. Բուրասարանների աղբիւր եւ կենդանի ջրի ակունք, որ բխում է Լիբանանից:

15. Ում բերանի առաքումը նռնենիների եւ խնկենիների դրախտ էր, Նա այժմ աղբիւր է լինում՝ Իրենից բուսեցրած պարտէզն արբեցնելով... Ապա ամենաբարձր գովութեան խօսքն է ասում Հարսի մասին. նրան կենդանի ջրի ակունք է անուանում, որ բխում է Լիբանանից: Նկատուում է Հարսին տրուող անուանների հետզհետէ խտացում՝ պարտէզ, պարտէզների աղբիւր, կենդանի ջրի ակունք... Առաքինութեան գործերից մինչեւ աստուածացման գագաթ, քանզի կենդանի ջուրն աստուածային բնութիւնն է, եւ Աստուած Ինքն է կենդանի ջրի ակունքը. «Թողցիր Տիրոջը՝ կենդանի ջրի աղբիւրին» [Երեմ. Ժէ 13], «Եթէ դու գիտենայիր Աստուծոյ պարգեւները, եւ թէ ով է, որ քեզ ասում է. «Ինձ խմելու ջուր տուր», գուցէ դու խնդրէիր Նրանից, եւ Նա քեզ կենդանի ջուր տար» [Յովհ. Դ 10], «Ով հաւատում է Ինձ, ինչպէս եւ Գիրքն է ասում, նրա որովայնից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն» [Յովհ. Է 38]: Այսպիսով՝ ինչպէս Տիրոջը մահակից լինողները եւ հարսնացողները հաղորդուեցին Աստուածութեան անուշահոտութեանը, այնպէս էլ Նրա պէս կենդանի ջրի ակունք պիտի դառնան, թէկուզ Լիբանանից եկած լինեն, այսինքն՝ մեղքի անտառից: Նոյնն է մեկնում աւետարանիչը. «Սա ասում էր Հոգու մասին, որ պիտի ընդունէին Նրան հաւատացողները» [Յովհ. Է 39] (Նիւսացի-Նարեկացի):

16. Վե՛ր կաց, հիւսիսային՝ քամի, եւ ե՛կ, հարսային՝ քամի, փչի՛ր Իմ պարտէզում, եւ թող բուրեն Իմ խոնկերը:

16. Ըստ Նիւսացու՝ Փեսան հիւսիսային քամուն իր հրամանով մերժում է եւ հարսային քամուն խնդամտութեամբ կանչում. հիւսիսայինին հրամայում է հեռանալ եւ փախչել, որպէսզի հարաւայինն անխափան փչի, եւ նրա ընթացքը ոչ ոք չարգելի (Նիւսացի):

Հիւսիսն իր սառնութեամբ եւ արեգակից հեռու լինելով խորհրդանշում է սատանային եւ նրա գործերը, որոնք են բարկութիւն (կարկուտ), փորձութիւն (ձիւն), կռապաշտութիւն (սառոյց), ատելութիւն եւ Աստուծոյ սիրոյ պակասութիւն (ցուրտ) եւ այլն:

Հարաւը լոյսով, ջերմութեամբ, ցածրադիրութեամբ կրում է Սուրբ Հոգու խորհուրդը, որ լոյս է եւ սիրոյ ջերմութեամբ ու խոնարհութեամբ իջնում է մեզ մօտ եւ հալեցնում մեղքի ու անհաւատութեան սառոյցը:

Այստեղ պարտէզն առաքեալներն են, որ ընդունեցին Սուրբ Հոգին եւ ապա Սուրբ Հոգով մեզ բուրեցին հոգեւոր կեանքի անուշահոտ քաղցրութիւնը: Պարտէզ իջնելը երեք կերպ է իմացւում. Սուրբ Կոյսին աւետելը, գերեզմանի պարտէզն իջնելը կամ սուրբ սրտերի մէջ հանապազ իջնելը (Նարեկացի-Տաթեւացի):

Ե

Հարսն աղաչում է, որ իր Փեսան ցած իջնի.

1. Թող իմ Եղբորորդին իջնի Իր պարպէզը եւ ուրի Իր ծառերի պտուղները:

Փեսան ասում է Հարսին.

Մրայ Իմ պարպէզը, քո՛յր Իմ Հարս, հասարեցի Իմ գմնուն Իմ խունկերով հանդերձ, կերայ հասց Իմ մէղրով, արեցի զինիս Իմ կաթով. կերէ՛ք, մերձատուն՛ն Իմ, արբէ՛ք եւ արբէ՛ք, եղբորորդին՛ն Իմ:

1. Ծառերի պտուղները նրանք են, ովքեր Յիսուսից յետոյ մահուամբ նահատակուեցին: Եկեղեցու պարտէզի մէջ աճած նրանց պտուղը քաղցր է Փեսայի համար. ուստի Հարսն աղաչում է ուտել, ըստ այնմ՝ «Ով ինձ խոստովանում է մարդկանց առաջ, ես էլ կը խոստովանեմ նրան Հօր առաջ» [Մատթ. Ժ 32] (Որոգիւնէս):

Հարսը համարձակւում է պատուասիրել եւ մեծապարգեւել Նրան, Ով վեր է ամէն մի առակելութիւնից. Հարսն ուտելու է հրաւիրում Նրան, Ումից ամէն ինչ է, Ումով ամէն ինչ է, Ում մէջ ամէն ինչ է: Ով ժամանակին կերակրում է բոլորին, Ով երկնքից իջած հացն է, աշխարհի կեանքը, բոլոր էերին կենդանութիւն տուողը, Նրա՛ առջեւ է Հարսը սեղան դնում: Հարսը մեր բնութեան պարտէզն է, մենք՝ ծառերը, իսկ պտուղները՝ Հօր կամքը կատարելը, այսինքն՝ մեր փրկութիւնը եւ ճշմարտութեան գիտութեան դալը: Հարսը նախապէս քաղցրացել է խնձորենու պտուղով եւ ապա քաղցր պտուղ դարձել...

Հարսն աղօթում է, որ Փեսան նայի առաքինութեան ծառերի պտղաբերութեանը, մարդասիրութեամբ իջնի, ընդունի ներքեւում

գտնողներին եւ բարձրացնի: Փեսան մինչեւ Հարսի աղօթելը լսում է նրան, նայում նրա սրտի պատրաստութեանը եւ գալիս այն պարտէզը, ուր փչեց հարաւային քամին, հաւաքում խնկենինների պտուղները՝ գմայլուելով առաքինութեան ծառերով, եւ պատմում խրախճանութեան մասին... (Նիւսացի): Նախ՝ որպէսզի մեզ յորդորի ճաշակելու, ինչպէս բժիշկն է նախ ճաշակում դեղը եւ ապա այն տալիս հիւանդին: Երկրորդ՝ Ինքը ճաշակեց խաչի չարչարանքները եւ մեզ փրկութիւն պարգեւեց՝ ուսուցանելով, որ ով ճաշակում է Նրա սուրբ Մարմինը եւ Արիւնը, պէտք է պատրաստ լինի չարչարանքների եւ հալածանքների (Տաթեւացի):

Ըստ Որոգիւնէսի՝ Փեսան մտել է Հարս-Եկեղեցու Աւագանից ծնուածների պարտէզը եւ հաւաքում է Իր հրամանի լրումը, քանզի ով կորցնում է իր անձը, փրկում է այն՝ ըստ Նրա անուշահոտ հրամանի [տես Մատթ. Ժ 39]... (Որոգիւնէս):

Իմ գնումս՝ Իմ խունկերով հանդերձ... Նկատի ունի մեռելութեան միջոցով եփուած մաքուր եւ անուշահոտ իւղը, այսինքն՝ զանազան եւ տեսակ-տեսակ առաքինութիւնների խունկերով ընդխառնուած վարքը (Նիւսացի), ինչպէս նաեւ անուշահոտ Աստուածութեան խունկերով բուրոզ չարչարանքները՝ ի լրումն առաջին արդարների աղօթքի (Արեւելցի):

Տէրը հաւաքում է Իր մահուան պտուղները, որոնք բուրում են Հարսի առաքինութեան խունկերով (Մկրտութիւն՝ Քրիստոսի փրկագործութեան հաւատքով, եւ աստուածահաճոյ վարք՝ հաւատքի գործերով): Խունկի անուշահոտութիւնը խորհրդանշում է նաեւ Աստուծոյ սէրը՝ մարմնի հետ միաւորուած (Նարեկացի):

Հասց կերայ Իմ մեղրով... Կատարելագոյն կերակուրը հացն է՝ ոչ թէ Օրէնքի դառնութեամբ ճաշակուող, այլ ինքն իրենից մեղր առաջացնող. առաքինութեան պտուղները մշտապէս քաղցրացնում են հոգու զգայութիւնները: Մեղրով հացը խորհրդանշում է քաղցրացած պատուիրանը: Մեղրի քաղցրութեամբ անուշացած հացի օրինակ է Տէրը, որ Յարութիւնից յետոյ երեւաց աշակերտներին (Նիւսացի):

Հարսը ոչ միայն կերակրում է Փեսային առաքինութեան հացով, այլև քաղցրացել է մեղրի խորիսխի պէս (Նարեկացի):

Մեղրով, ըստ կեղծ-Հիպոդիտոսի, ակնարկուում է, որ Հարսը կատարել է Աստուծոյ կամքը:

*Ըստ Արեւելցո՛ւ՝ նկատի է առնուած Օրէնքի մեղորձ խառնուած Աւետարանի հացի հետ:*

*Արբեցի գինիս Իմ կաթով... Ակնարկում է այն դրուագը, երբ հրեաները կարկառեցին լեղիով եւ քացախով սպունգը... Տէրն ասում է. «Քաղցեցի, եւ կերակրեցիք Ինձ, ծարաւեցի, եւ արբեցրիք Ինձ» [տես Մատթ. ԻԵ 35]՝ կաթը գինու հետ խառնելով: Կաթը մարդկային բնութեան առաջին կերակուրն է՝ յտակուլթիւն, մաքրութիւն, աննենգ ճշմարիտ մանկականութիւն (Նիւսացի):*

*Կաթն անմեղութեան նշանակն է: Վերնատանը Տէրն անմեղութեամբ (կաթով) ըմպեց գինին (Արեւելցի):*

*Փրկիչն անմեղութեամբ (կաթով) ըմպում է մեր փրկագործութեան բաժակը՝ լցուած գինով՝ Իր խորհրդական Արեամբ (Նարեկացի):*

*Փեսան կոչ է անում մերձատրոներին եւ եղբորորդիներին (Նիւսացու մօտ՝ եղբայրներին) ճաշակելու եւ ըմպելու... Այսինքն՝ նրանց, ովքեր ճանաչում են Աւետարանի խորհրդական ճայնը, ովքեր դարձել են Քրիստոսի Մարմնի անդամներ, կոչ է անում յագենալու աստուածային կերակուրներով եւ ըմպելիքներով: Տէրը գեղեցկապէս հրամայում է առաքինութեամբ մերձաւորներին, ոչ թէ հեռաւորներին, արժանաւորութեամբ ճաշակել Իր Մարմնի խորհրդական հացը եւ ըմպել Իր Արեան մաքուր հեղման շնորհները՝ ի սրբութիւն իրենց անձանց (սուրբ Հաղորդութիւն): Այս կերակուրին արժանաւորներին է եղբայրներ կոչում, քանզի ով կատարում է Նրա կամքը, եղբայր է, քոյր եւ մայր [տես Մատթ. ԺԲ 50] (Նիւսացի-Որոգինէս):*

*2. Ես ննջում եմ, բայց իմ սիրտն արթուն է:*

*Հարսը զգում է, որ Փեսան բախում է դուռը:*

*Իմ Եղբորորդոս ձայնն է, դուռն է բախում:*

*Փեսան ասում է.*

*Բսւ՛ց Իմ առաջ, քո՛յր Իմ, մերձատ՛ր Իմ, աղանի՛ Իմ, կարարեա՛լ Իմ, քանզի գլուխս պարտուել է ցողով, եւ վարսերս գիշերոսպ շաղով:*

*2. Արբեցմանը յաջորդում է քունը, որպէսզի զգայութիւնների թմբկով՝ հոգին արթնանայ: Ուստի ընդարձակ եւ ճոխ սեղանից յետոյ Հարսը քնում է սիրալի քնով. մի քնով, որն օտար էր բնական սովորութեանը, քանզի սովորական քնի մէջ չեն հսկում եւ հսկման ժամանակ չեն քնում, քունը եւ հսկումը բացառում են միմեանց...*

Սակայն այստեղ հակառակ տարրերի մի նոր եւ հրաշափառ ընդխառնում եւ ուղեկցութիւն է, քանզի ասում է. «Ես ննջում եմ, եւ իմ սիրտը հսկում է»: Քուներ նման է մահուան, քանզի նրա մէջ դադարում է զգայարանների աշխատանքը, թուլանում է մարմնի պնդութիւնը, մոռացութեան են մատնւում մարդկային հոգսերը, հանդարտում են հոգու յուզումները... Երբ քնի մոռացումով լքւում է մարդկային բնութիւնը, այնժամ մաքուր սրտի խորհուրդները վեր են ելնում առանց պղտորուելու ջրջակայ զգայական շարժումների ամբոխներից: «Քանզի մարդկային բնութիւնը երկու ճանապարհով է ընթանում. մէկով զօրանում է հոգու անախտութեամբ, միւսով՝ մարմնական ախտերով... Ով հայում է զգայութիւններին եւ իր մէջ առնում նրանցից բոլսած մարմնական հեշտութիւնները, անճաշակ<sup>29</sup> է մնում աստուածային ուրախութիւններին»: Ով փափագում է աստուածայինը, պէտք է փախչի զգայութիւնների կախարդանքից եւ հրճուի էջերի տեսութեամբ, պէտք է քնեցնի մարմնական շարժումները եւ մերկ ու մաքուր մտքով, աստուածային արթնութեամբ ընդունի Աստուծոյ ձայնը (Նիւսացի):

Նիւսացու ըմբռնումները ճգնաւորական են. սակայն ճգնաւորական մահուան հիմքը Տիրող փրկագործ մահն է (փրկաբանական մահ)...

«Թէպէտ խաչուեց որպէս մարդ, սակայն չննջեց մարդու պէս: Այլ մարմնով ննջելիս արթուն Աստուածութեամբ բռնեց նրան<sup>30</sup>, ով մահուան իշխանութիւն ունէր...» [տես Եբր. Բ 14] (Որոգիւնէս):

Փրկաբանական մահն ունի իր անմիջական մարդաբանական արտապատկերումը. դա վկայական մահն է... «Ունենալով մարդկային բնութիւնը՝ ննջում են, սակայն արթուն են՝ Սուրբ Հոգու շնորհներն իրենց մէջ ընդունելով: Արդ՝ եթէ այդպէս չլինէր, ինչպէ՞ս կարող էին այս տկար մարմնի մէջ անչափ նեղութեամբ այսպիսի չարչարանքներ կրել առաքեալները եւ մարտիրոսները, նմանապէս էլ՝ ճգնազգեաց հայրերը, մանաւանդ՝ մեր Լուսաւորիչը, ում տասն այրեր, ութ օր կախադանից գլխիվայր կախած, բրածեծ էին անում եւ, այսպիսի դառը տանջանքների ենթարկելով, չկարողացան թմրեցնել նրա սրտի արթնութիւնը: Այլ, միտքն արթնութեամբ առ Աստուած բարձրացրած, այն օրերին նա անընդհատ աղօթքով խօսում էր Աստուծոյ հետ եւ Աստուծոյ առջեւ հեղում աղերսանքների գուլթը մեր

29 Անճաշակ – անհաղորդ:

30 Նկատի ունի աստանային:

աշխարհի փրկութեան համար: Գաւազանի մէկ հարուածը բաւական է՝ թմրութեան հասցնելու մեր միտքը, իսկ երանելին, այնպիսի անչափ չարչարանքների մէջ, միտքն անխոտոր եւ լեզուն անդրդուելի պահելով առ Աստուած խնդրուածքների մէջ, արդեօք չէ՞ր նմանում Քրիստոսի արթուն սրտին...» (Նարեկացի):

Դարձեալ ասուում է, որ Տէրը երկայնատութեամբ ննջում է՝ ժամանակ տալով ապաշխարողներին: Նաեւ Եկեղեցին անտանելի վշտեր կրեց՝ տեսնողների համար անզգայ համարուելով, սակայն գիտէր, որ Տիրոջ համար է համբերում (Որոգինէս-Արեւելցի):

Ըստ Տաթևացու՝ սուրբ Հաղորդութեան ճաշակմամբ մենք մոռտք ենք գործում Տիրոջ մահուան մէջ եւ արթնանում առ Աստուած: Այս կեանքում դա արտայայտում է զգայական մահուամբ եւ հոգու արթնութեամբ, իսկ մարմնով մեռնելիս [վերջին Հաղորդութեամբ] կենդանանում ենք հոգով: «...Ով ճաշակում է Քրիստոսի փրկական խորհուրդը, [թէպէտ] զգայարաններն անգործ են աշխարհիկ հեշտութիւնների մէջ, սակայն հոգին արթուն է եւ հսկում է առ Աստուած... Ով հաւատքով ու յոյսով ճաշակում է Տիրոջ Մարմինը, թէպէտ մեռնում է մարմնով, սակայն կենդանի է հոգով՝ ըստ այնմ, թէ՛ «Ով ուտի Իմ Մարմինը, յաւիտեան կ'ապրի» [Յովհ. Զ 50-59], եւ թէ՛ «Ով հաւատայ Ինձ, մահ չի տեսնի» [նոյն]» (Տաթևացի):

Քրիստոս թէպէտ մարմնով համբարձուեց երկինք, սակայն սիրտն արթուն է, այսինքն՝ աստուածային շնորհները հեղում են մարդկանց վրայ, որոնցով նախախնամուում են Քրիստոսի Պատարագի պատուարի տակ:

Հարսը զգում է, որ Փեսան բախում է դուռը.

«Իմ Եղօրորդու ձայնն է, դուռն է բախում»:

Պէտք է հսկել, արթնանալ կենցաղի պատրանքների մէջ սուզող քնից, բացել հոգու աչքերը, հաստատուն մնալ եւ վառել հոգու լապտերները, հեռանալով չարութիւնից եւ մոլորութիւնից՝ առաքինութեամբ պատրաստ լինել հոգու դուռն առջեւ Տիրոջ Գալստեանը... «Քանզի երբ գայ եւ բախի դուռը, երանի՛ր այն ծառային, ում Տէրը, գալով, դուռն մօտ գտնի» [տես Ղուկ. ԺԲ 36-37]:

Հոգին, յարածամ հայելով երանութեանը, դուռն յետեւից զգում է Տիրոջ ներկայութիւնը. սակայն Աստուած անբաւարար անըմբռնելի է եւ անհասանելի, ուստի երբեք աչքի առջեւ չեկաւ...

Հարսը մշտապէս սքանչանում եւ հիանում է գիտութեամբ, սակայն երբեք գիտութեամբ չի դադարում Աստուծոյ սէրը ցանկալուց. այս պատճառով անմիջապէս զգում է դուռը բխողի ներկայութիւնը:

Ապա, մի փոքր հանդարտութիւն տալով լսելիքին, Հարսը լսում է Փեսայի ձայնը.

Բա՛ց Իմ առաջ, քո՛յր Իմ, մերձաւոր Իմ, աղանի՛ Իմ, կատարեա՛լ Իմ, քանզի գլուխս պատուել է ցօղով, եւ մազերս՝ գիշերուայ շաղով: «Մեծն Մովսէսի տեսիլքի մէջ Աստուծոյ ձայնը լոյսով սկսուեց, իսկ յետոյ Աստուած ամպով էր խօսում Նրա հետ: Ապա, բարձրագոյն եւ կատարեալ լինելով, աղջամղջի մէջ էր Մովսէսը տեսնում Աստուծուն»: Ուստի պէտք է հեռանալ Աստուծոյ մասին երեւակայական կարծիքներիցօղից, խաւարից դէպի լոյս փոխուել՝ երեւելի բաների ամպով առաջնորդուելով դէպի աներեւոյթ բնութիւնը... Ուրքեր լքում են մարդկային բնութիւնը եւ ներս մտնում անմտանելի աստուածագիտութեան մէջ՝ ամէն կողմից պատուելով Աստուծոյ շամանդաղով, նրանց համար երեւելի եւ ըմբռնելի ամէն ինչ դուրս է մնում, Հոգու տեսութեամբ անտեսանելի եւ անըմբռնելի դառնում: Այժմ աստուածային գիշերուայ մէջ Փեսան մերձ է եւ չի երեւում... Ի՞նչ են նշանակում Հոգու այսպիսի խորհրդածութիւնները գիշերուայ մէջ:

Դուռը մտածական անճառելիների իմաստների նշանակն է, որի միջոցով ներս է մտնում Որոնելին, քանզի ճշմարտութիւնը մեր բնութիւնից դուրս է գիտութեան մասնակիութեան պատճառով... Փեսան բախում է մեր մտքի դուռը՝ ասելով՝ բա՛ց: Այդ դուռն բանալիները ծածուկ խորհուրդները բացայայտող անուններն են՝ քոյր, մերձաւոր, աղանի, կատարեալ: Քանզի եթէ մէկը կամենում է բացել Հոգու դռները, որպէսզի փառքի Թագաւորը ներս մտնի, պէտք է լինի քոյր (այսինքն՝ կատարի Աստուծոյ կամքը), մերձաւոր (այսինքն՝ մերձենայ ճշմարտութեանը եւ ոչ մի բանով չպատասպարուի), աղանի եւ կատարեալ (այսինքն՝ աղանու պէս կատարելութիւն ունենայ, կատարեալ անմեղ ու մաքուր լինի): Յոյժ Հոգեշահ է Փեսային ներս ընդունել եւ բնակեցնել. Նրա գլուխը պատուած է ցօղով, եւ վարսերը՝ գիշերուայ շաղով... Յօղը բժշկութիւնն է, ինչպէս յայտնապէս ասում է մարգարէն. «Յօղը, որ Քեզանից է, բժշկութիւն է նրանց համար» [Եսայի ԻԶ 19]: Իսկ գիշերուայ շաղը նկարագրում է աստուածատես նախնիներին՝ արդարներին եւ մարգարէներին, քանզի ոչ ոք չհանգիպեց

գիտութեան սաստիկ անձրեւի կամ վտակների, այլ փոքրիշատէ ցօղուում էին ճշմարտութեան գիտութեամբ՝ սուրբ եւ աստուածազգեստ բանական ցօղի միջոցով: Վարսերը մարգարէները, առաքեալներն ու աւետարանիչներն են, որոնցից իւրաքանչիւրը կրում էր գաղտնի եւ անտեսանելի գանձեր՝ մեզ համար վարդապետութեան ջրառատ գետեր լինելով: Յօղը եւ շաղն արտայայտում են մեր աստուածճանաչողութեան սահմանափակութիւնը. «Շատից քիչը գիտենք եւ մարգարէանում ենք» [Ա Կոր. ԺԳ 9]: Աստուածային վարդապետութեան գետը գոյանում է այսպիսի մանր կաթիլներից (Նիւսացի):

Գիշերուայ խաւարն աստուածգիտութեան անհասութիւնն է: Յօղը եւ շաղը խորհրդանշում են Աստուծոց տրուած հաւատքը, որը միամիտ աղօթքով եւ արտասուքով լցուեց աստուածգիտութեամբ (կեղծ-Հիպոդիտոս):

Որոգիւնէսեան ըմբռնումն առնչուած է Աւետման հետ. Գաբրիէլ հրեշտակապետն աւետում է դռան յետեւում կանգնած մարգկային բնութեանը՝ ասելով. «Մի՛ երկնչիր, Իմ Աստուածութեան գլուխը պատուեց մարգարէների՝ փրկութիւն հայցող խօսքերի ցօղով եւ հեթանոսների բանական առաքինութեան գիշերային շաղով» (Որոգիւնէս):

Ըստ Նարեկացու՝ ովքեր ըմպում են այն բաժակը եւ գինին (չար-չարակից եւ մահակից են լինում Քրիստոսին), յոյժ արթուն միտք են ստանում այս քնալից կեանքում... Հարսը լուսաւորուել է Մկրտութեամբ, հոգու ծնունդով եւ խորհրդական արեան արբամբ դարձել քոյր եւ մերձաւոր, արդարացել Սուրբ Հոգով եւ դարձել աղանակերպ ու որդեգրութեամբ կատարեալ: Յօղը եւ շաղը նշանակներն են Տիրոջ քրտինքի, որով Նա պատուեց մատնութեան գիշերը մահուան ահի պատճառով [տես Ղուկ. ԻԲ 44] (Նարեկացի): «Որպէսզի յորդորի հաւատացեալներին, թէ Նրա չարչարանքներով փրկուեցինք եւ պէտք է սպասենք Նրա միւս Գալստեանը» (Տաթեւացի): Յօղը, ըստ Արեւելցու, մարգարէների իմաստութիւնն է մինչեւ Քրիստոսի Գալուստը:

«... Ասում է՝ բա՛ց Իմ առաջ, քանզի մեր կամքով է մեր միտքը բացելը եւ Քրիստոսին ընդունելը, նմանապէս էլ՝ փակելը եւ արտաքսելը: Տիրոջ գլուխը նա է, ով այժմ Եկեղեցու գլուխն է, ինչպէս՝ հայրապետները եւ կաթողիկոսները: Յօղով պատուածութիւնը խորհրդանշում է Սուրբ Հոգու ընդունելութեան շնորհները...» (Տաթեւացի):



3. Հանեցի իմ պատմումանը, ինչպե՞ս հագնեմ այն. լուսցի ուրբերս, ինչպե՞ս աղյուրեմ դրանք:

3. Հարսը, շնորհներով հիացած, ասում է. «Մերկացայ Փառքի պատմուճանից, որ ունէի դրախտում, արդ ինչպե՞ս պիտի հագնեմ նոյնը, ինչպէս ասում էր Մարիամը. «Այդ ինչպե՞ս կը լինի» [Ղուկ. Ա. 34]»: Ինչպէս նաեւ ոտքը, որ լուսացուեց շնորհով, չի կարող ընթանալ մոլոր ընթացքով, որով Աստուծուն մերձենալը դժուարանում է (Որոգիւնէս):

Հարսը մաքրել է հոգին (հանել է պատմումանը) առաքինութեան գործերով, իսկ մարմինը (նոսրերը) լուսացել աղտեղի հեշտութիւններից: «Թէպէտ դրախտակործան մարմնի բնութեան մէջ է, սակայն, Քրիստոսին իր մէջ բնակեցնելով, այլեւս չի ցանկանում շաղախուել նոյնին» (Կեղծ-Հիպոդիտոս):

Հարսը մերկացել է մաշկեղէն պատմումանից, որ հագաւ մեղքից յետոյ, եւ նոսրերը լուսացել է երկրայինից... Աստուածային առաքեալը հրամայում է մերկանալ հին մարդուց նրանց, ովքեր պատրաստուում են Մկրտութեամբ լուանալ հոգու աղտերը [տես Կող. Գ. 9]: «Արդ՝ ով մերկանում է արտաքին մարդուց, հեռացնում է սրտի ծածկոյթը եւ ներսում ճանապարհ բացում Բանի համար... ըստ առաքեալի, որ հրամայում է մերկանալ հին մարդու պատառոտուած զգեստից եւ հագնել Աստուծով տրուած նոր պատմուճանը՝ սրբութեամբ եւ արդարութեամբ, որը Հարսի [հաւատքի] խոստովանութեան զգեստն է»: Աստուածային զգեստներով զարդարուածներն այլեւս չպէտք է հագնեն մեղքի պատմուճանը, քանզի ի՞նչ հաղորդութիւն կայ խաւարային զգեստի եւ լուսատեսակի ու աննիւթի միջեւ. պէտք է հերկու պատմուճան ունենալ, այլ մէկը՝ ըստ տէրունական խօսքի [տես Մատթ. Ժ. 10]:

...Ինչպե՞ս հագնեմ: Քանզի ո՞վ արդեօք, տեսնելով իր վրայ արեգակնափայլ Տիրոջ պատմուճանը՝ անապականութեամբ եւ մաքրութեամբ պատուած, ինչպէս այլակերպութեան ժամանակ Տէրը ցոյց տուեց [տես Մատթ. Ժ. 2], դրանից յետոյ կարող է հանդուրժել մեղքի աղքատ եւ պատառոտուած հանդերձ կրել իր վրայ...

Լուսցի ուրբերս, ինչպե՞ս աղտոտեմ դրանք: Մովսէսին հրամայուեց ազատուել մեռեալ մորթերից, երբ ոտքը դնում էր սուրբ եւ լուսաւոր երկրի վրայ: Տէրն աշակերտներին զգուշացնում էր չգնալ հեթանոս-

ների ճանապարհով, այլ ընթանալ սուրբ ճանապարհով [տես Մատթ. Ժ 5]: Քրիստոս ասում է՝ Ես եմ ճանապարհը [Յովհ. Ժ 9 6], եւ անհնար է մերձենալ այդ ճանապարհին՝ առանց մերկանալու մարդկային մեռելոտի զգեստներին: Ում ոտքերը մաքրուել են մեղքերից Տիրոջ մաքրողական զօրութեամբ, ով ոտք է դրել թագաւորական ճանապարհին, այլեւս չպէտք է խոտորուի աջ կամ ձախ, այլ ուղիղ ընթանայ սրբութեան ճանապարհով (Նիւսացի):

Տէրը Մկրտութեամբ լուացել է Հարսի ոտքերը եւ գարշապարները, ինչպէս երանելի առաքեալներինը, եւ ամրացրել խայթող օձի թոյնից: Ինչպէ՞ս կարելի է վերստին աղտոտել դրանք մեղքի ընթացքով՝ պոռնկութեամբ, սպանութեամբ, զրկանքով (Նարեկացի):

4. Իմ Եղբորդին մէկնեց Իր ձեռքը պապոսեանով, եւ իմ որովայնը խոռվուեց Նրանով:

4. Նիւսացու մօտ բնագիրը հետեւեալն է. Իմ Եղբորդին երկարացրեց Իր ձեռքն անցքի միջով, եւ իմ որովայնը խոռվուեց Նրանով:

Հարսը հեռացնում է սրտի ծածկոյթը եւ բացում հոգու բոլոր դռները, որպէսզի մտնի Փառքի Թագաւորը: Սակայն դռան ընդարձակութիւնը, պարզուեց, փոքր է, ընդամէնն անցք է եւ չնչին մեծութիւն ունի, որով չի կարող մտնել Փեսան, այլ հազիւ Նրա ձեռքը մտաւ... Հարսը շահում է միայն այն, որ ձեռքով ճանաչում է Փափագածին... Քանզի մարդկային աղքատութիւնը չէր կարող իր ներսն ընդունել անհասանելի բնութիւնը: Եւ որովայնը խոռվում է... արտայայտում է Հարսի հիացումը եւ զարմացումը տեսածով, քանզի նրա մտաւորական զօրութիւնը շարժուեց՝ աստուածային ձեռքի զօրութեամբ իմանալու սքանչելի բաները, որոնք գերազանցում են մարդկային զօրութիւնները: Ձեռքը նշանակն է արարչական զօրութեան: Ձեռքով շնորհւում է Արարչագործողի անըմբռնելի եւ անտանելի բնութիւնը, քանզի բոլոր արարչական էերի ստեղծումն այն ձեռքի գործն է:

Այս խօսքը ներքին աղերս ունի Բանի մարմնաւորման փրկագործ տնօրէնութեան հետ: Հարսի տունը մարդկային կեանքն է, ուր գալիս է բոլորի արարչական ձեռքը՝ Իրեն ամփոփելով սուղ եւ չնչին մարդկային կեանքի մէջ, ամէն ինչով ընդունելով մեր բնութիւնը՝ առանց մեղքի: Իսկ մեր մէջ լինելով՝ յուզում եւ զարմացում է հոգիներին. «Ինչպէ՞ս

է Աստուած երեւում մարմնի մէջ, ինչպէ՞ս է Բանը մարմին լինում, ինչպէ՞ս է ծնւում Կոյսից, ինչպէ՞ս է խաւարի հետ լոյսը միանում, մահուան հետ՝ կեանքը, ինչպէ՞ս է մեր երկրային կեանքի փոքր անցքը կրում Նրան, Ով բովանդակում է բոլոր էջերին...» (Նրւսացի):

Ըստ կեղծ-Հիպոդիտոսի՝ Քրիստոսի պատուհանով մեզ մօտ եկաւ Սուրբ Հոգին: «Արդ՝ Սուրբ Հոգով շնորհուեց սուրբ սրտին Նրա տնօրինական գործերի քննութիւնը. եւ Հարսը, տեսնելով այն, խոնարհեց Նրա սիրոյ փափագով» (կեղծ-Հիպոդիտոս):

Ըստ Որոգինէսի՝ ձեռքս արտայայտում է մարգարէների յայտնած նոր խորհուրդը (Բանի մարմնաւորման մասին): Սա էր տեսչում Եկեղեցին, ինչպէս ասում է. «Բազում մարգարէներ եւ արդարներ կամեցան տեսնել այն, ինչ դուք տեսնում էք» [Մատթ. ԺԳ 17] (Որոգինէս):

5. Ես վեր կացայ՝ բացելու իմ Եղբորորդու ստաջ. իմ ձեռքերից գննուե՞լ կաթեց, եւ իմ մատները լցուեցին գննուսով՝ դրան փակադակի վրայ:

5. Հարսն առաքելների քարոզութեամբ վեր է կացել կռապաշտութիւնից՝ բացելու սիրտը եւ ընդունելու Քրիստոսին, եւ Մկրտութեամբ նրա գործերը կաթեցրել են Նրա մահուան տնկապտութիւնը, եւ զգայարանները լցուել են մահուամբ՝ ըստ այնմ՝ «եթէ Քրիստոս ձեր մէջ է, մարմինը մեռած է մեղքերի համար» [Հռոմ. Ը 10] (Որոգինէս):

Աստուծոյ առջ կենդանի լինելու նախապայմանը մեռնելն է այս աշխարհի համար, այսինքն՝ մեր անդամները մեղքի համար սպանելը: Զմուռը նշանակն է մեռելութեան... Հարսը Մկրտութեամբ կամովին թաղուել է Քրիստոսի մահուամբ եւ յարութիւն առել:

Ձեռքերը հոգու գործնական շարժումների նշանակներն են, որոնցից գննու է կաթում՝ ցոյց տալով մարմնական շարժումների կամաւոր մեռելութիւնը: Իսկ մատները խորհրդանշում են առաքելութիւնների փոյթը...

Ովքեր անկատարելապէս ձեռնամուկի են լինում առաքելութիւնների՝ մի ախտի հանդէպ մեռնելով եւ միւսների մէջ կենդանի լինելով (օրինակ՝ ոմանք իրենց մէջ սպանում են պագշոտութիւնը եւ խնամքով սնուցում ամբարտաւանութիւնը), նրանց բոլոր մատները գննուսով չեն

լցուած, քանզի բոլոր գործերով չեն օտարացիլ եւ մեռել չարի նկատմամբ: Իսկ ում բոլոր մատնէրը լի են զմոռսով, նրա հոգին յառնում է եւ ներսի ճանապարհը բացում Փեսայի առջեւ (Նիւսացի):

Ճգնաւորական մահուանը յաջորդում է աստուածայայտնութիւնը...

Աստուած յայտնում է Իրեն մեր մարմնեղէն բնութեան նեղ լուսանցոյցով... Մեր հոգու աչքերը բացւում են եւ սկսում տեսնել, որչափ հնարաւոր է մարմնեղէն աչքերի համար: Հոգին զարթնում է մեղքի թմբիրից եւ վեր ելնում երկրաւոր կրքերի իշխանութիւնից՝ մէկ կողմ դնելով ախտերը, իրեն մեռցնում է մեղքերի հանդէպ, մեռնում Քրիստոսի հետ... ապա յարութիւն առնում Քրիստոսի յարութեամբ: Սրա մասին է խօսում առաքեալը [Կող. Բ 12] (Նարեկացի):

6. Ես բացեցի իմ Եղորորդոս անաջ, իմ Եղորորդին անցաւ, եւ իմ հոգին ելաւ Նրա խօսքի հետ: Փնարեցի Նրան եւ չգտայ, կանչեցի Նրան, եւ ձայն չտուեց ինձ:

6. Հարսը մարմնի եւ զգայարանների մեռելութեամբ բացել է սիրտը Տիրոջ առաջ... Երբ Քրիստոս կատարեց Իր տնօրէնութեան խորհուրդը եւ անցաւ-ելաւ Հօր աջ կողմը, այնժամ Եկեղեցին, բռնուելով քարոզչների խօսքերից, թէ՛ «Գնացէ՛ք, ուսուցանէ՛ք բոլոր հեթանոսներին...» [Մատթ. ԻԸ 19], հոգով խանդակաթ եղաւ. սրա տեսչանքով ելաւ Հարսի հոգին: Հարսը փնտրում է եւ կանչում Նրան, Ումից հնչեց խօսքը, իսկ Նա, բարձրանալով երկինք, չէր երեւում երկրի վրայ: Սակայն փնտրելը եւ կանչելը սրբում է Հարսի սիրտը... (Որոգինէս):

«...Անցաւ Հարսի մօտով՝ անգիտելի մնալով, բայց Հարսը չթողեց, քանզի հոգով ելաւ Նրա հետ: Թւում է, թէ, կատարելով տնօրէնութիւնը, անցաւ, նստեց Հօր աջ կողմում, եւ Եկեղեցին, ուսանելով քարոզիչներից, հոգով եւ յոյսով ելաւ Նրա հետ: Փնարեցի եւ չգտայ... [այսինքն]՝ բնութեան տեղը, քանզի անվայրափակ է...» (Արեւելացի):

Հարսը ձեռք է բերել մարմնի մեռելութիւն, եւ նրա հոգին դարձել է Քրիստոսի բնակարան: Քրիստոս անցնում է մտքի տաճարով ոչ թէ զգայապէս, այլ իմացապէս: Հարսի հոգին ելնում է Նրա խօսքի հետ, այսինքն՝ Հարսի հոգին ելնում է մարմնից եւ Նրա հետ բարձրանում երկինք... Հարսի այս վերելքը հնարաւոր է դարձել Բանի մարդեղութեամբ... Նրա հետ երկինք մտնելով՝ փնտրել է եւ

չի գտել փառքի որքանութիւնը: Կանչեցի Նրան, եւ ձայն չստեց. սա արտայայտում է աստուածային բնութեան անհասութիւնը... (կեղծ-Հիպոդիտոս):

Հարսը բարձրացրել է մտքի աչքերը դէպի Սուրբ Գրքի մտքերը՝ տեսնելու նրա շնորհների գիտութեան անքննելի խորքերը... Հարսը բացել է սիրտը՝ ներհալաքելու սուղ տեսածը, քննելու, տեղեկանալու եւ հասու լինելու Նրա գիտութեան խորքերին, եւ այն, ինչին հասու եղաւ, սարսափեցրեց նրան... Եղբորորդին անցնում եւ որպէս գիւր-ընթաց փայլակ գնում է, իսկ Հարսի հոգին, ընդունելով Նրա խօսքի սակաւ ճաճանչները, գնում է Նրա հետ. միաւորուելով Նրա սիրոյ հետ եւ եռալով Նրա պատուիրաններով՝ իբրեւ թէ ճանաչում է Նրան, սակայն, համարելով, թէ հասել է, հասկանում է, թէ որքան հեռու է հասնելուց: «Քանզի ինչպէս արբեալը, որչափ ըմպում է, աւելի է ծարաւում, նմանապէս էլ ով [միտքը] յառում է Աստուածաշունչ գրքի մտքերին, խորհում է եւ խոկում, որչափ ուսանում է, ցանկանում է է՛լ աւելի ուսանել: Քանզի գիտի, որ Սուրբ Գրքի գիտութեան լրում չի գտնի եւ, մտքի այսպիսի ցանկութիւններով ջնուալով, կարծես ցաւում է հոգում, քանզի սակաւ հասողութեան միջոցով ճանաչում է անբաւ մնացածները եւ վարակում այն գիտութեան ցանկութեամբ՝ որպէս ցաւերով...» (Նարեկացի):

7. Ինձ գրան քաղաքում շրջող պահապանները, զարկեցին եւ վիրատրեցին ինձ. պարիսպների պահապանները քօղս հանեցին իմ վրայից:

7. «...Քաղաքի պահապանները հրեշտակներն են, որ [գտնում են] դրախտում, եւ ոչ թէ իրենք զարկեցին, այլ թոյլ տուեցին բանսարկուին փորձել նրան եւ այս փորձութիւններով վերցրին մարմնական խտտերի ցնցոտիները, եւ Հարսն ամբողջովին հոգիացաւ» (Որոգինէս):

Եթէ մահուան վտանգ հանդիպէր նրան, գտնուէր աւազակների կողմից, ապա նման գիւտը յոյժ դժնդակ կը լինէր: Իսկ եթէ քաղաքում շրջող պահապաններն են գտնում նրան, երանելի է այդպիսի գիւտը, քանզի ով գտնում է պահապանների կողմից, անվնաս կը լինի աւազակներից: Ովքե՞ր էին արդեօք պահապանները. Իսրայէլի Պահապանի սպասաւորներն էին, որ Իր Աջի պահպանութեամբ ամէն տեսակ չարից պահպանում է անձը... Աստուծոյ բնակութեան քաղաքը հոգին

է, որը գտնուում է պահպանների կողմից, ինչպէս ոչխարը՝ Քաջ Հովուի կողմից, որի համար ուրախացան հրեշտակների դասերը... Հարսը ներընդունել է Աստուծոյ սիրոյ ընտիր նետը, նրա սիրտը խոցուել է հաւատքի սլաքով... (Նիւսացի):

Քողը, որ հանեցին պահպան հրեշտակները, մեղքերի ծածկոյթն է (Տաթեւացի), որպէսզի խնդրեալին միշտ աչքի առաջ ունենայ եւ վերին ճանապարհով ելնելուց երբեք չդադարի (Նիւսացի):

Քողը նաեւ յուսահատութիւնն է. «Արդ՝ երբ հեռացուեց անյուսութեան քօղը, տեսաւ անսահմանելի եւ անպարունակելի Սիրեցեալի գեղեցկութիւնը...» (Նիւսացի):

Կեղծ-Հիպոդիտոսի մեկնութիւնը զգալիօրէն տարբերուում է: «Քրիստոս սատանային անուանում է աշխարհի իշխան [տես Յովհ. ԺԲ 31, ԺԳ 30], իսկ առաքեալը՝ օգերի իշխան [տես Եփես. Բ 2]: Նա է, հաւանաբար, այժմ անուանում երկրաւոր քաղաքի պաշտպաններ, ովքեր, գտնելով Հարսին այսպիսի ծայրագոյն մաքրութեան հասած, զարկեցին եւ վիրաւորեցին պէս-պէս փորձութիւններով...»: Ձորձը (բնագրում՝ քօղը) մարմինն է, որ չար դատաւորների եւ իշխանների միջոցով հանեցին սուրբերից... (Կեղծ-Հիպոդիտոս):

Ց. Երդուեցնում եմ ձեզ, դուստրե՛ր Երուսաղէմի, ագարակի զօրութիւններով եւ հասարակութիւններով. եթէ գրնէք իմ Երթորդդուն, պայսմեցէ՛ք Նրան, որ կաթոգին եմ եւ Նրա սիրոց:

Ց. Հարսը երգուեցնում է հրեշտակներին (ինչպէս նաեւ հրեշտակացած անձանց, որոնց մայրն է Վերին Երուսաղէմը: Այսպիսին էին Յովհաննէսը, Պօղոսը... (Կեղծ-Հիպոդիտոս)), որ հանապազ տեսնում են երկնաւոր Հօր երեսը: Հարսը խանդակաթ (բնագրում՝ կաթոգին) է սիրով, քանզի նեղութիւնները համբերութիւն են առաջացնում, եւ դրանից Աստուծոյ սէրը տարփում է մեր սրտում [համատ. Հռոմ. Ե 3] (Որոգիւնէս):

«Արդ՝ երդուեցնում է նրանց ագարակի զօրութեամբ, որ Քրիստոսի Մարմինն է, որ երկրից է, թէ՛՝ Նրա առջեւ մտնելիս, հրեշտակներ՝ որ շրջում էք մեզ հետ, եւ սուրբեր՝ որ մեր հայրերն էք, պատմեցէ՛ք Նրան, որ իմ հոգին բորբոքուում է Քրիստոսի սիրով (այս պատճառով դեւերից հարուածներ եմ ստանում եւ վիրաւորում փորձանքներով), որպէսզի ձեր միջնորդութեամբ փրկի ինձ նրանցից եւ իմ կաթոգին սէրը լցնի իր գիտութեամբ» (Կեղծ-Հիպոդիտոս):

Տէրն Աւետարանում պատուիրում է ամենեւին չերգուել, այլ՝ «Թող ձեր խօսքը լինի [այսպէս]. այոն՝ այո, եւ ոչը՝ ոչ» [տես Մատթ. Ե 33–37]: Այս երգումը չի հակասում ավետարանական պատուիրանին, այլ Հաստատում է այն եւ գովութեան պատճառ է՝ ըստ մարգարէի. «Կը գովուի ամէն ոք, որ երգուեց Նրանով» [տես Սաղմ. ԿԲ 12]:

Անդաստանը (բնագրում՝ ագարակ) օրինակն է այս աշխարհի, ինչպէս անուանեց եւ մեկնեց Տէրը [տես Մատթ. ԺԳ 38]: Ի՞նչ են նշանակում երգման մէջ արտայայտուած անդաստանի գորութիւնը եւ ուժգնութիւնը... «Երկու բան է մարդուն ընտանեցնում Աստուծոյ Հետ. մէկն անմոլորութիւնն է ճշմարիտ էի մտածութեան նկատմամբ, որպէսզի մոլորուած կարծիքով չչայտնուեն այս աշխարհի հեթանոսական եւ հերձուածողական աղանդի մէջ, որը ճշմարտութեամբ «այո»-ն է (այժեամի սրատեսութիւն): Միւսը մաքուր խորհրդով անձի բոլոր ախտաւոր կրքերը արտասահմանելն է, որպէսզի նոյն այոն չօտարանայ (եղջերուի չարահալածութիւն): Արդ՝ այս բարիքների բնութիւնը երկու սեռ ունի, որոնցից մէկը ճշմարտապէս պահում է վերհայեցողութիւնը, իսկ միւսը հալածում է անձի ապականիչ ախտերը» (Նիւսացի):

Ըստ Նարեկացու՝ Քրիստոսն է աշխարհի գօրութիւնը եւ ուժգնութիւնը, Որով Հաստատուած է այն եւ Որով պահւում է անսասանութեան մէջ. Քրիստոսով է Հարսը երգուեցնում Երուսաղէմի դուստրերին, որ եթէ գտնեն Նրան, պատմեն, թէ խանդակաթ է Նրա սիրով: Եւ երանի՛ այն անձին, որ նման սէր ունի, ինչպէս պարծենում է Պողոսը [Հռոմ. Ը 35–38]: Ահա սա է ճշմարիտ սէրը, որ մշտապէս գովութիւն ունի երկնքում եւ երկրի վրայ, եւ ոչ թէ այլանդակ սէրը՝ կա՛մ ունեցուածքի, կա՛մ իշխանութեան, կա՛մ գեղեցկութեան, որ այս կեանքում պարսաւանք է բերում, իսկ այն կեանքում՝ անվախճան տանջանքներ (Նարեկացի):

9. Երուսաղէմի դուստրերը եւ պարիսպների պահապանները հարցնում են Հարսին.

9. Ինչո՞վ է սուսել քո Եղբորդիին միւս եղբորդիներից, գեղեցիկդ կանանց մէջ, ինչո՞վ է սուսել քո Եղբորդիին միւս եղբորդիներից, որ այդպէս երդուեցնում եւ մեզ:

9. Հրեշտակները հարցնում են այն, ինչ գիտեն, որպէսզի Հարսը սրտով հաւատայ արգարանալու համար եւ բերանով խոստովանի փրկուելու համար [տես Հռոմ. Ժ 10] (Որոզիւնէս):

Վերին Երուսաղէմի պահապանները հարցնում են Հարս-վարդապետին մարմնացեալ Բանի փրկական տնօրէնութեան մասին... Նրանք ցանկանում են Եկեղեցով տեսնել Քրիստոսին, քանզի, ըստ առաքելական խօսքի, «Նրա աներեւոյթներն արարածների միջոցով ճանաչուելով են տեսնում» [Հոռմ. Ա 20]:

Նմանապէս էլ մենք՝ Վերին Երուսաղէմի մանուկներս, պէտք է սկսենք մարդեղութեան վարդապետութիւնից (պատահական չէ, որ Մատթէոսի Աւետարանը սկսում է Տիրոջ ազգաբանութիւնից՝ ըստ մարմնի): Նախ պէտք է երեւելի մարդկային բնութիւնը հաւատքով ըմբռնենք, ապա մտքով ընկղմուենք անհասանելիի եւ անսահմանելիի մէջ (Նիւսացի):

Ըստ Նարեկացու՝ հրեշտակներն անմարմին են եւ անտեսանելի եւ Փրկչի մարդեղութեան մասին մեզանից սովորեցին եւ սովորում են:

Հրեշտակները հարցնում են Փրկչի տնօրինական հրաշքի Մարմնին, թէ ինչով է Յիսուս Քրիստոս գանազանում մարգարէներից եւ արդարներից՝ Աբրահամից, Դաւթից (Արեւելցի):

Հարսը նկարագրում է Եդրօրորդուն, թէ ինչպիսին է.

10 Իմ Եդրօրորդին սպիտակ է եւ կարմիր, ընտրեալ է քիւրաւորների մէջ:

10. Հարսը պատմում է Քրիստոսի մարդեղութեան մասին, «որ մարմնով եւ արեամբ եկաւ աշխարհ, որ բոլոր բեւրաւորների մէջ միայն [Ինքը] ծնուեց սուրբ Կոյսից, որի յղութիւնն անզուգական է, ծնունդը՝ անախտ, երկունքը՝ առանց ցաւերի...»: Սպիտակը եւ կարմիրը մարմնի եւ արեան գոյներն են, իսկ քիւրաւորների մէջ ընտրեալ լինելն ակնարկում է անախտ եւ անապական ծնունդը, ինչպէս նաեւ անդրանկութիւնը՝ մեռեալներից յարութիւն առածների եւ նոր արարածի մէջ (Նիւսացի):

Նիւսացուն է հետեւում նաեւ Նարեկացու մեկնութիւնը, սակայն կեղծ-Հիպոդիտոս-Որոզինէս-Արեւելցի-Տաթեւացի մեկնութիւններում կարմիրը մարդեղութեան (մարմնի եւ արեան) գոյնն է, իսկ սպիտակը՝ Աստուածութեան, որոնք միաւորուած են Աստուածամարդու տնօրէնութեամբ:

11. Նրա գլուխը կեփազեայ ոսկոց է, Նրա վարսերը գանգոյր են [եւ] սեւ, ինչպէս ագռաւ:



11. Ինչպէս կեփազեայ ոսկին առաւել մաքուր եւ պատուականն է բոլոր ոսկիների մէջ, այնպէս էլ մեր Գլուխ Քրիստոս բոլոր երկնաւոր եւ երկրաւոր սուրբերից առաւել է (Նարեկացի):

Կեփազեայ ազնիւ ոսկին նշանակն է աստուածային անապական բնութեան (Կեղծ-Հրպողիտոս-Որոգինէս):

Գլուխը նշանակն է [Քրիստոսի] անճառ եւ անհաս խորհրդի: Կեփազեայ ոսկին ազնիւ եւ մաքուր է, որովհետեւ բնականօրէն է ստացւում եւ ոչ թէ ձուլմամբ: Քրիստոս նոյնպէս, սուրբ եւ անապական լինելով, բնութեամբ է եւ ոչ՝ ստեղծմամբ, ինչպէս հրեշտակները եւ մարդիկ: Քրիստոս բոլորիս հոգեւոր գլուխն է, իսկ ազգերի համար առաքեալների պէս Նրա փոխանորդ գլուխ է իւրաքանչիւր ազգի կաթողիկոս (Տաթեւացի):

Գանգոյր եւ սեւաթոյր վարսերը ցոյց են տալիս [աստուածային] խորհուրդների անճառելիութիւնը եւ անհասութիւնը, ուր կան ծածկուած իմաստութեան եւ գիտութեան գանձեր (Կեղծ-Հրպողիտոս-Որոգինէս):

Վարսը դէպի մեզ իջած Աստուծոյ նախախնամութեան գուլթն է, իսկ սեւ ագոսարը՝ ըստ գործերի արդար հատուցումը (Տաթեւացի): Սակայն Քրիստոս մազերի սեւութիւնն չունի, այլ պատկերաւոր է այսպէս ասուում Նրա կատարեալ գեղեցկութեան պատճառով, որովհետեւ սեւ վարսերը գեղեցկութիւնն են երիտասարդի դէմքի համար, իսկ Նա մարդկանց բոլոր որդիներից աւելի գեղեցիկ էր արտաքինով (Նարեկացի-Տաթեւացի): Քրիստոսի մարմնի որակը եւ մազերը ոսկեգոյն են, ոչ թէ սեւ կամ սպիտակ (անապականութիւն) (Տաթեւացի):

Արեւելցի-Տաթեւացի մեկնութիւններում առկայ է սեւութեան պատմական շեշտադրում. սեւը ցոյց է տալիս մեղքով սեւացած եւ անիծուած մեր բնութիւնը (հեթանոսական անցեալը), որ միացաւ Բան Աստուծոյ հետ եւ արդարացաւ Նրանով, Ով անմեղ էր (Արեւելցի-Տաթեւացի):

Հեթանոսական սեւը Քրիստոսի փրկագործութեամբ վերափոխուում է քրիստոնէական ոսկու. այդ պատմական սեւութիւնը ցուցադրում է տեսնողներին, որպէսզի զարմանան եւ մտապահեն, որ միշտ պէտք է խոնարհ լինել, ինչպէս նաեւ յորդորեն չյուսահատուել՝ նայելով իրենց սեւութեանը, այլ միշտ նայել Աստուծոյ մարդասիրութեանը, որը եւ Հարսը ցոյց է տալիս հրեշտակներին եւ հիացնում (Արեւելցի):

12. Նրա աչքերը նման են աղանիների՝ ջրերի լիութեան վրայ, կաթով լուացուած, ջրերի լիութեան վրայ նստած:

12. Առաւել համակողմանի եւ ամբողջական է Տաթեւացու մեկ-նութիւնը:

Քրիստոսի փոխանորդ աչքերն են առաքեալները եւ մարգարէները, քանզի նրանք տեսան Աստուծոն եւ լուսաւորեցին մեզ: Դարձեալ՝ Եկեղեցու մէջ այժմ աչք է եպիսկոպոսը, որ թարգմանուած է տեսուչ, եւ բարձր է աստիճանով ու լի՝ շնորհով: Եպիսկոպոսը պէտք է նմանուի աղանու՝ չորս յատկութեամբ. պէտք է լինի՝ ա) լի՝ Սուրբ Հոգով, բ) անմեղ, գ) միամիտ, դ) անաչառ: Այսինքն՝ Սուրբ Հոգու իմաստութեամբ լցուած՝ պէտք է անմեղութեամբ նայի ժողովրդին, միամիտ լինի Օրէնքում եւ սուրբ հայրերի կանոններում, անաչառ լինի դատաստանում:

Կաթը չորս յատկութիւն ունի. ա) պարզ է, բ) անմեղների կերակուր է, գ) պահում է իւրը, դ) չի արտացոլում պատկերը: Այս օրինակով եպիսկոպոսը պէտք է պարզ եւ յստակ վարք ունենայ եւ կերակրի Եկեղեցու մանկանց, աւանդապահ լինի կանոններում եւ սրբութիւնը չվատնի շների առջ, նաեւ չստանայ կուրացուցիչ շիւղ եւ գերան, այսինքն՝ կեղծաւորութիւն եւ նախանձ: Պէտք է նստած լինի Հոգու իմաստների ջրերի վրայ, ինչպէս ջրի հոսանքում տնկուած, կանաչած, ծաղկած եւ պտղաբերած ծառը, եւ ոչ թէ աշխարհական իմաստութեան եւ գրուածքների վրայ, որ խառնակութեան եւ կորստի են տանում, այլ Եկեղեցու աղբիւրների եւ Սուրբ Գրոց գիտութեան, որ բխում են Տիրոջ տնից, Սուրբ Հոգուց եւ հոսում դէպի յաւիտենական կեանք, Տիրոջը վիճակուածներին արբեցնում: Այսպիսին պէտք է լինի եպիսկոպոսը, որ Եկեղեցու աչքն է եւ ժողովրդի տեսուչը (Տաթեւացի):

Կաթով լուացուածութեամբ ակնարկում է մանկական անբժու-թիւնը (Արեւելցի):

Յոյց է տրւում «նախախնամութիւնը, որը Տիրոջ աչքն է Իրենից երկիւղածների վրայ»՝ ըստ Դաւթի [տես Սաղմ. ԼԲ 18]: Նման են աղանիների. քանզի փրկութիւնը... յետ չի դառնում անարժանների պատճառով, այլ արեգակը ծագում է չարերի եւ բարիների վրայ: Ջրերի լիութիւն. քանզի Աւագանով վերստին ծնուածներն են Նրա սեփական ժողովուրդը» (կեղծ-Հիպոդիտոս):

Ընդհանուր առմամբ ցոյց են տրւում Աստուծոյ նախախնամութիւնը, գթութիւնը եւ արդարակշիռ իրաւունքը (Որոգինէս-կեղծ-չիպողիտոս):

Ջրերի վրայ, մասնաւոր մեկնութիւն ունի Նարեկացին. ինչպէս ջուրն է կերպարանում եւ արտացոլում արեգակը, այնպէս էլ մեղքի աղտից գտուածները եւ մաքրուածները՝ իրենց նայողներին:

13. Նրա ծնօտները խունկի փաշտերի պէս բուրում են իղագործների անուշահոտութիւնը, Նրա շուրթերը շուշաններ<sup>32</sup> են, որ առաջ գնում<sup>33</sup> են բխում:

13. Տաշտը գողածեւ աման է՝ ոչ շատ խոր եւ ոչ՝ ուղղակի տարածուած այնքան, որ տափակ ու հարթ կարծուի: Տաշտով գովում է աննենգ վարդապետութիւնը. «Արդ՝ տաշտով արտայայտում է ճշմարտութեան տեսանելի պարզամտութիւնը՝ զերծ նենգաւոր խորութիւնից. նրա նիւթն է խոսկը, եւ գործը՝ բուրել իւղի եփեցական հոտը» (Նիւսացի): Այս միտքը պարզաբանում է Նարեկացին: Եկեղեցու վարդապետներն իրենց սրտում ժողովածը սփռում են մարդկանց առաջ՝ անխմանալի բաները ոչ շատ խորութեամբ ծածկելով եւ Աստուծոյ խորհուրդները ոչ շատ յայտնութեամբ դիւրաւուր դարձնելով... (Նարեկացի): Նրա ծնօտները խունկի տաշտերի պէս իղագործների անուշահոտութիւն են բուրում. Տէրը խօսում էր յաւիտենական կեանքի խօսքերով եւ բոլոր լսողներին իր յետեւից տանում (Որոգինէս):

Ծնօտը խօսքի սպասաւոր է, մանրում եւ ծամում է կերակուրը, դիւրաշարժ է եւ մօրուք է բուսեցնում, որով խորհրդանշում է վարդապետներին եւ խօսքի սպասաւորներին, որոնք մանրում են Գրքի խօսքերը, վերստին յիշում եւ դիւրաւ ուսուցանում եւ, ըստ խօսքերի, զանազան շնորհներ սփռում: Չնուտը չորս խորհուրդ ունի. շնորհներ, անքակտելի սէր, անապական խօսք, մեռելութիւն եւ թաղում (Տաթեկացի):

Նրա շուրթերը շուշաններ են, որ առատ գնում են բխում. սա արտայայտում է Քրիստոսի աշակերտութեան կարգը. «Ով չվերցնի իր խաչը եւ չգալ Իմ յետեւից, արժանի չէ Ինձ» [Մատթ. Ժ 38], եւ՝ «Ով

32 Տես Բ 1:

33 Տես Գ 6:

կամենում է անձը փրկել, կը կորցնի այն» [Մատթ. ԺԶ 25] (կեղծ-  
 Հիպոդիտոս-Որոգինէս):

Պայծառ եւ լուսատեսակ շուշանը մաքրութիւնը, առաքինութիւնն ու ճշմարտութիւնն է, իսկ զմուռը մարմնի եւ արեան գործերի մեռելութեամբ արտայայտում է իմանալի եւ աննիւթ կեանքը: Զմուռսի եւ շուշանի համադրութիւնը ցոյց է տալիս նիւթական կեանքի հանդէպ արհամարհանքը՝ խառնուած շուշանի ողջախոհութեան հետ: Զմուռը նաեւ վկայական մահուան (նահատակութիւն) նշանակն է (Նիւսացի):

Ինչպէս ծօսուները, տաշտ դարձած, Աստուծոյ խօսքը լսող հոգի-  
 ներին մատուակում են անուշահամ եւ անապակ բաժակը, նոյնպէս էլ շուշանացած շուրթերը բխում են առատ զմուռը, քանզի խրատում են մեզ մեռնել ըստ մարմնի եւ մեռցնել մարմնի անդամները ոչ թէ սակաւամեռութեամբ, այլ ամբողջապէս, այսինքն՝ մտքի խորհուրդները կատարեալ մեռելութեամբ մեռցնել՝ չխորհելու երկրաւորը, այլ երկնայինը, որովայնը մեռցնել կերակուրների սակաւապիտութեամբ, աչքերը մեռցնել՝ չախորժելու հայել պոռնկական տեսարանների, այլ Քրիստոս-Փեսայի փափազելի երեսը եւ ցանկալի պատկերը Նրա, Ում հարսնացանք: Ըստ այսմ հասկանանք բոլոր զգայարանների եւ անդամների մասին, որոնց մեռելութեամբ կը ստանանք ճշմարիտ կենդանութիւն՝ սուրբերի շուշանացած շուրթերից խրատուելով (Նարեկացի):

14. Նրա ձեռքերը ճախարակուած ոսկի են՝ Թարսիսի ակներով զարդարուած. Նրա որովայնը փղոսկրեայ ցախարակ է՝ շափիղեայ ակներով ընդելուզուած:

14. Եկեղեցու մէջ ձեռքերը հոգեւոր եւ մարմնաւոր իրերի վերա-  
 կացուններն ու տնտեսներն են, որոնք պէտք է հեշտակամ եւ մշտապէս բաշխեն ըստ կարիքների եւ պէտքերի (Նիւսացի-Տաթեւացի):

Ոսկին նշանակն է անապականութեան, ճախարակուածութիւնը՝ սրբութեան (Նիւսացի):

Քրիստոս մեկնում էր ձեռքը բժշկելու եւ առողջացնում պէս-պէս ախտերից (հաւանաբար՝ ակներով զարդարուածութիւն) (Որոգինէս):

Ակնարկուում է Քրիստոսի մարմնաւոր տնօրինութեան գործերի պէս-պէս մաքրութիւնը, քանզի կատարեց զբանք մարմնի կրքերով, սակայն ճախարակեց եւ նրանցից իւրաքանչիւրն անաղարտ պահեց

վիշապի թռչնից. ե՛լ քաղցը, ե՛լ վաստակը, ե՛լ սէրը, ե՛լ երկիւղը... Եւ ասաց, թէ՛ ձեզանից ո՞վ կարող է յանդիմանել [Ինձ] մեղքի համար [Յովհ. Ը 46]: Թարսիսի ակնքն աստուածային տեսակ-տեսակ բժշկութիւնների եւ սքանչելիքների գործերն են, որոնք պէս-պէս վայելչութեամբ փայլում են պատուական քարերի պէս (կեղծ-չիպողիտոս):

Նիւսացին ելնում է մարդաբանական-խորհրդական ենթագրութիւններից: Մեծն Եզեկիէլին ասւում է. «Թո՛ղ քո բերանն ուտի, եւ որովայնը լցուի» [Եզեկ. Գ 3]: Որովայն է անուանւում իմացական եւ խորհրդական հոգին, ուր ամբարւում է աստուածային ուսմունքը: «Նմանապէս էլ մեծն Երեմիան, սրտով վտանգուած լինելով այն տխրական իմաստներից, որովայն բառն է գործածում. «Իմ որովայնը ցաւում է, եւ իմ սրտի ճաշակելիքները տազնապում են» [Երեմ. Գ 19]»: Ինքը Տէրն Իրեն հաւատացողների մասին ասում է. «Նրա որովայնից կենդանի ջրի գետեր կը հոսեն» [Յովհ. է 38]:

«Արդ՝ այս բոլոր ասուածներով, որովայն անուանով հասկանում ենք մաքուր սիրտը», որ աստուածային օրէնքի մաքուր, հարթ, անփոռ եւ փայլող (փղոսկրեայ) տախտակ է՝ կենդանի Աստուծոյ Հոգով գրուած՝ ըստ առաքելի [տես Բ Կոր. Գ 3]: Այսպիսին պէտք է լինի առաջնորդական հոգին, որպէսզի նրա մէջ աստուածային խօսքերի յիշատակները հաստատապէս եւ առանց խառնակութեան տպաւորուեն՝ բարենշան գրերով շաղկապուած եւ գեղեցկապէս յարմարուած որովայնի տախտակին: Իսկ երկնագոյն շափիղան ուսուցանում է մեր սրտին վերինը խորհել եւ տեսնել. ուր ամբարւում են գանձերը, այնտեղ էլ պէտք է ուղղել աչքերը (Նիւսացի):

Տաթեւացին ներկայացնում է այս խօսքի եկեղեցաբանական նիստը: Որովայնը չորս յատկութիւն ունի. ա) հաւաքում է կերակուրը եւ ըմպելիքը, բ) սփռում եւ բաշխում է դէպի ներս եւ դուրս, գ) խորհուրդների աման է, դ) ցաւերի տեղն է: Նմանապէս էլ՝ վարդապետները. ամէն տեղից հաւաքում են խօսքեր եւ գործեր, բաշխում Եկեղեցու մէջ եւ դրսիներին, նրանց որովայնից գետեր են բխում, ինչպէս Ոսկեբերանի, Աստուածաբանի եւ այլոց որովայնից: Իրենց մէջ կազմում են խորհուրդներ ու մեկնութիւններ եւ ցաւում են՝ ուսուցանելով հետեւողներին, ինչպէս Պօղոսը եւ Երեմիան. «Իմ որովայնը ցաւում է» [Երեմ. Գ 19]: Եւ նախ պէտք է ուսանել, ապա

ուսուցանել եւ գործով կատարել. եւ վարդապետի անձը պէտք է այս երեքի միութիւնն ունենայ (Տաթեւացի):

Մարմնի գործերը կատարուած են որովայնի միջոցով, որը նմանեցուած է փղոսկրեայ տախտակի: Քրիստոսի մարմնի գործը մեռած է աշխարհի համար (տախտակ) եւ մաքուր է անմաքրութիւններից (փղոսկրեայ): Իսկ շափիղեայ քարն իր պէս-պէս գոյների խառնուածքով խորհրդանշում է Քրիստոսի մարմնի գործերը, որոնք անհասանելի են քննողներին. Տիրոջ մարմնի գործերն անհաս մնացին դեւերի համար (կեղծ-Հիպոդիտոս-Որոգիւնէս):

15. Նրա սրունքները մարմնաբանական սինթէզայի խարխիւների վրայ հասարակութիւն: Նրա պարկերը նման է Լիբանանի ընտրի եղենափայտին:

15. Նրա ընթացքն այլ մարդկանց պէս չէր սասանուած դիւային հողմերից, այլ մարմարեայ սիւնների պէս հաստատուած էր երկնային անապականութեան մէջ (կեղծ-Հիպոդիտոս): Ըստ Նիւսացու՝ երկու ոտք-սիւնները, որոնց վրայ հաստատուած է Եկեղեցին, ըստ տէրունական խօսքի, երկու մեծագոյն պատուիրաններն են՝ սէր՝ Աստուծոյ եւ սէր՝ ընկերոջ նկատմամբ [տես Մատթ. ԺԲ 36–39] (Նիւսացի):

Եկեղեցու սրունքները նրանք են, ովքեր բարձել են Եկեղեցու ողջ հոգւր: Նրանք՝ ա) հաստատուած են հաւատքով եւ յոյսով, բ) գիտութեամբ եւ գործով, գ) առ Աստուած եւ մարդիկ սիրով, դ) խորհելով վերինը եւ Եկեղեցունը: Եւ քանի որ սրունքներ են, մշտաշարժ են, դիւրաւ խոնարհուում են եւ ծունկի դալիս, մշտապէս եւ յարժամ հոգում հոգու եւ մարմնի պէտքերը: Մարմնաբան են, որպէսզի կարծր եւ հաստատուն լինեն, մաքուր են եւ յստակ՝ վարքով, ճարտար՝ հոգով... Իսկ Քրիստոսի սրունքները հոգին եւ մարմինն են. եւ մարմնաբան են, քանզի անապական եւ կարծր են: Ոսկեայ խարխիւլը Բան Աստուած է, որ Նրա մարդեղութեան հիմքն ու կայացումն է: Այսպիսով՝ Քրիստոսի մարմինը, գլխից մինչեւ սրունքները, անապական է, քանզի միացած է Բան Աստուծոյ հետ: Եղենափայտն իր անփոփոխութեամբ, անուշահոտութեամբ, բարձրութեամբ եւ մշտասաղարթութեամբ խորհրդանշում է Քրիստոսի մարդեղութեան անապականութիւնը, Աստուածութեան անուշահոտութիւնը, անմահութիւնը եւ յաւիտենականութիւնը (Տաթեւացի):

Ինչպէս Լիբանանն է անշարժ, եւ մայրիներն՝ անփոռտ, այդպէս էլ Նրա Հոգին չմնաց դժոխքում, եւ մարմինն ապականութիւն չտեսաւ (Որոգինէս):

Ըստ Արեւելցո՛ւ՝ անփոռտ եղեւնափայտը խորհրդանշում է հաւատացեալների անմահութիւնը, ինչպէս Տէրն ասաց. «Ով հաւատում է Ինձ, մահ չի տեսնի» [տես Յովհ. Ը 51] (Արեւելցի): Այդ հաւատքի մայրիները տնկւում են Աստուծոյ տան մէջ եւ ծաղկում Աստուծոյ գաւթում, որը Եկեղեցին է (Նիւսացի):

16. Նրա կոկորդը լի է քաղցրութեամբ եւ ամբողջովին ցանկալի: Այսպիսին է իմ Եղբորորդին, եւ այսպիսին է իմ Մերձաւորը, դուստրն՝ Երուսաղէմի:

16. Բարի խօսքերը մեղրի քաղցրութիւնն են, իսկ խօսքը ձայնի արտայայտութիւնն է, որ ելնում է կոկորդից: Սրանով ցոյց են տրւում խօսքի սպասաւորները, որոնք խօսում էին Քրիստոսի անունով (առաքեալներ, մարգարէներ...): Նրանք իրենց կոկորդից աղբիւրացնում էին աստուածային մեղրը, որի վայելումը երբեք չի յագեցնում, այլ է՛լ աւելի ընդունելութեան բաղձանք է առաջացնում, ահա թէ ինչու է ասում՝ ամբողջովին ցանկալի (Նիւսացի):

Ովքեր անմահ Փեսայի խօսքի սպասաւորներն են, նրանց խօսքերն աւելի քաղցր են կոկորդում, քան մեղրը՝ բերանում, քանզի աւտարանում են Աստուծոյ արքայութիւնը, ուր չկան ցաւեր, տրտմութիւններ եւ հեծութիւններ: Եւ, անկարող լինելով ըստ արժանւոյն նկարագրել հանգամանքները, Հարսն ասում է՝ ամբողջովին ցանկալի. «Երբ Հոգին ամէն կողմից ամփոփում է ցանկութիւնները եւ դարձնում դէպի Նա, ապա ճանաչում է, որ միայն Նա է օրհնեալ յաւիտեան: Դրա համար է ասում՝ այսպիսին է իմ Եղբորորդին՝ գգուանքով «եղբորորդի» կոչելով, քանզի բոլոր բանականները ցնծում են Նրանով, եւ մերձաւոր՝ քանզի հաւատքով մերձ ենք Նրան» (Արեւելցի)՝ ոչ թէ ըստ Աստուածութեան, որ անհաս է քննողներին, այլ ըստ ծառայի կերպարանքի (Որոգինէս):

Հարսը, որքան կարող էր, Երուսաղէմի դուստրերին նկարագրեց Քրիստոսի գեղեցկութիւնը, որ վեր է խօսքերից եւ օրինակներից (Նարեկացի):

Երուսաղեմի դուստրերը հարցնում են, թե ուր մնաց Հարսի Եղորորդին:

17. Ո՞ր գնաց քո Եղորորդին, գեղեցի՛կդ կանանց մէջ, ո՞ր կողմը դիմեց քո Եղորորդին. մենք էլ քեզ հետ փնտրենք Նրան:

17. *Ըստ Որդիներէսի՝ Հրեշտակները կամենում են ուսանել Մարմնացած Բանի տնօրինական նախախնամութեան մասին:*

Հրեշտակների Համար Անտեսանելին երեւաց մեր բնութեամբ: Նրանք մեզանից սովորեցին եւ սովորում են Տիրոջ՝ երկնքից իջնելը եւ մարդեղութիւնը, ինչպէս Հաստատում է առաքեալը. «Որպէսզի Եկեղեցու միջոցով այժմ յայտնուի իշխանութիւններին, որ երկնքում են» [տես Եփես. Գ 10]: Որպէսզի, «Նրա փրկութիւնաբեր տնօրէնութեան մասին, մեզանից լսելով, իմանան եւ անբաւ զարմացմամբ սքանչանան [Աստուծոյ]՝ մեր նկատմամբ անչափ սիրով եւ անիմանալի խոնարհութեամբ, մեզ Հետ միաձայն օրհնեն եւ տօնակից լինեն» (Նարեկացի):

Հրեշտակները Հարցնում են. «Ո՞ր կողմ դնաց», այսինքն՝ արդեօք կատարուեցի՞ր մարգարէութիւնները, արդեօք Լոյսը ծագե՞ց Հեթանոսներին, արդեօք բովանդակուե՞ց Անսահմանափակը եւ Անկրելին... (Արեւելցի):

## Զ

Հարսը պատասխան է տալիս եւ ասում.

1. Իմ Եղորորդին իջաւ Իր պարտէզը՝ խոնկերի փաշտերի մէջ՝ բուրասարաններում հովուելու եւ շուշաններ<sup>34</sup> հաւաքելու:

1. Պարտէզը Հաւատացեալներն են, որոնք Հարսնացան Քրիստոսին: Քրիստոս ասում է Աւետարանում. «Ես եմ Որթը, իսկ դուք՝ ոստերը» [Յովհ. ԺԵ 5]: Պարտէզը բուրաստան է, ուր Հովուում է Եղբորորդին, Ով Իր մասին ասում է. «Ես եմ քաղ Հովիւր» [Յովհ. Ժ 11]: Եկաւ Հովուելու եւ ճարտարութեամբ արածեցնելու եւ Հոգ տանելու ոչխարներին, թոյլ չտալու Գողին ապականել, այլ, առաքիներութիւն եւ արդարութիւն սնուցելով, մեզ ժողովելու շուշանների մէջ, այսինքն՝



Աստուծոյ խօսքին հաւատացողները եւ սրբութեան ծաղիկները մէջ, որոնցով զուարճանում է Քրիստոս-Փեսան (Նարեկացի):

Պարտէզը, ըստ կեղծ-Հիպոդիտոսի, մարդկութիւնն է, իսկ խունկերի տաշտերը՝ մեղքին անգէտ մանուկները:

Քաջ Հովիւն իջաւ երկնքից եւ իր կեանքը տուեց ոչխարներէ համար, երկնքի արքայութեան դալար վայրում հովուեց Եկեղեցին եւ հաւաքեց աշխարհի մեռելութեան շուշանները (Որոգիւնէս):

Բանն Աստուած իջաւ իր տնկած եւ կուսութեամբ պատրաստած պարտէզը՝ Մարիամ Աստուածածնի մէջ՝ խնկենի տաշտի մէջ՝ արդարների արմատների եւ մարգարէների գգուանքի մէջ: Եղաւ գինեբեր որթ եւ, իսկով ճմլուելով, մեզ փրկութիւն պարգեւեց...

Շուշանները Եկեղեցու վարդապետների խօսքերն են, որ բուսեցին այս աշխարհի ծովի մէջ: Ինչպէս նոնուֆար կոչուած ջրային շուշանը ցաւերի բժշկութեան համար է, այնպէս էլ նրանց խօսքերը հաւաքուած պահուած են Եկեղեցու գանձերի մէջ ի բժշկութիւն պէս-պէս հոգեւոր ախտերի եւ հիւանդութիւնների (Նիւսացի-Արեւելցի):

Տէրը ժողովում է շուշանները, այսինքն՝ իր մօտ է ժողովում հեռացած ոչխարներին եւ նրանցից կթում արդարութեան անուշահոտ կաթը եւ հաւաքում բուրդը, որ ծածկում է մեղքերը եւ առաջնորդում առաքինութեան (կեղծ-Հիպոդիտոս):

2. Ես իմ Եղբորորդունս եմ, եւ իմ Եղբորորդին՝ իմը, որ հովում է շուշաններին<sup>35</sup> մէջ:

2. Նկարագրում է աստուածանմանութիւնը. երբ շուշանների պէս փայլում ենք արդարութեամբ եւ բուրում ճշմարիտ վարքի առաքինութեան հոտը, այնժամ նմանում ենք Նրան (կեղծ-Հիպոդիտոս), ինչպէս եւ Ինքն ասաց. «Իմ մէջ՝ եղէք, եւ Ես՝ ձեր մէջ» [տես Յովհ. Ժե 5]. իսկ եթէ Քրիստոս ձեր մէջ է, ապա մարմինը մեռած է մեղքերի համար (Որոգիւնէս):

Հարսն արտայայտում է Եղբորորդու նկատմամբ տածած ջերմ սէրը. Հարսը չի կամենում բաժանուել շուշանաբոյժ Հովուից, որ նախ եւ առաջ իր Մարմինն ու Արիւնն է տալիս որպէս կերակուր եւ ապա՝ Գրքի իմաստների քաղցրութիւնը, որոնք սուրբերի քիմքում առաւել

քաղցր են, քան մեղրը՝ բերանում. իսկ թէ ինչ է լինելու գալիքում, բոլոր մտքերից վեր է, որի մասին ասաց, թէ՛ «Վերստին կ'ըմպեմ ձեզ հետ Շոր արքայութեան մէջ» [Մատթ. ԻՉ 29] (Նարեկացի):

Հարսը մարմինն է, եւ Փեսան՝ գլուխը: Շուշանների մէջ Հովուողը կանգնած է ճշմարտութեան խօսքի մէջ, ողջոյն է տալիս լսողներին, բնակուում արժանաւորների մէջ եւ, հանգիստ չգտնելով, վերադառնում էր բուրաստանը... (Նիւսացի-Արեւելցի):

Փեսան ասում է Հարսին.

3. Բարենշան ես, մերձաւոր Իմ, ինչպէս հաճութիւնը, գեղեցիկ, ինչպէս Երուսաղէմը՝ զարմանալի յօրինուած:

3. Փեսան աստուածային բերանով վկայում է Հարսի հաւատքի եւ գեղեցկութեան մասին, որ նա ստացաւ Աւագանով: Այդ գեղեցկութեան աղբիւրն Աստուած է. Հարսը, հայելով ու ձգտելով առ Աստուած, աստուածանում է եւ ձեռք բերում երկնային գեղեցկութիւնը, որի մասին նա պատմում էր Երուսաղէմի դուստրերին: Ուստի Փեսան ասում է. «Գեղեցիկ ես, մերձաւոր Իմ, ինչպէս անուշահոտութիւն» (բնագրում՝ հաճութիւն): Հարսի անուշահոտ գեղեցկութեան պատճառը Քրիստոս Փեսային մերձաւոր լինելն է: Հարսի գեղեցկութիւնը համեմատուում է Երուսաղէմի հետ, որովհետեւ գեղեցիկ Փեսայի բնակարան եղաւ, ինչպէս երկինքը եւ Վերին Երուսաղէմը: Զարմանալիորէն յօրինուած. Փեսան արտայայտում է իր հիացմունքը Հարսի փոփոխմամբ՝ մեղքերի սեւութիւնից դէպի այնպիսի սքանչելատեսիլ անբիծ գեղեցկութիւնը, որով հիացած են նաեւ հրեշտակները (Նարեկացի):

Հարսը հագել է Քրիստոսին՝ ասելով՝ Երօրորդիս իմն է: Քրիստոս գգուում է նրան եւ նրա գեղեցկութիւնը համեմատում շուշանների անուշահոտութեան հետ: Հարսը գեղեցիկ է Վերին Երուսաղէմի պէս: Զարմանալի է Վերին Երուսաղէմը, որի պարիսպները պատուական ակներից են, եւ դռները՝ ամբողջովին մարգարիտներից (Նիւսացի-Արեւելցի):

4. Գարձրո՛ւ այքերդ Ինձանից, քանզի դրանք խոնկեցրին Ինձ. քո վարսերը նման են այծերի երանակների, որոնք երեսացին Գաղսաղից:

4. Աչքերը մարդարէները եւ առաքեալներն են, որոնց զարդարել է գեղեցկարար Սուրբ Հոգին՝ Աստուծոյ խորքերի քննութեամբ, եւ ովքեր աղօթքով, գեղեցիկ դիտմամբ եւ արտասուքով տեսան մարդկանց փրկութիւնը՝ Հարս-Եկեղեցու եւ Փեսայ Քրիստոսի Հարսանեկան խրախճանքը (Որոգիւնէս-Նիւսացի-Արեւելցի):

Հարսի աչքերը ստացել են յստակատեսութիւն եւ ստուգատեսութիւն, որոնցով ճանաչում է Փեսայի տնօրինական գեղեցկութիւնը՝ Աստուծոյ անճառ միաւորումը տկար ու հողեղէն բնութեան հետ, որ անիմանալի էր հրեշտակների համար. Հարսը տեսնում է այն, ինչ վեր է մարդկային բնութեան տեսութեան սահմաններից: Այդ աչքերը խռովեցնում են Փեսային: Փեսան դիմում է Հարսին՝ Իրենից դարձնելու աչքերը, այսինքն՝ չքննելու անհաս բնութեան գեղեցկութիւնը, որպէսզի աւելին տեսնելու եւ քննելու պատճառով չչլանան եւ չկուրանան մտքի աչքերը, ինչպէս Պօղոսի աչքերը, երբ նայեց սաստիկ լոյսին: Քանզի ինչպէս արեգակին պլշած նայողի աչքի լոյսը նուազում է, այնպէս էլ Աստուծոյ գիտութեան խորքերին չափից աւելի յառելը շլացնում է մտքի աչքերը: Քանզի թէ Աստուած ինչպիսին է տեսութեամբ եւ սքանչելագործութեամբ, անհասանելի է հրեշտակների համար, էլ ուր մնաց թէ՛ մարդկանց: Փեսան մի կողմից սքանչանում է Հարսի սրահայեցութեամբ, միւս կողմից՝ երկիւղում, որ, առաւել նայելով, չկուրանայ: Մովսէսը, մի փոքր տեսնելով, դարձրեց երեսը եւ չէր համարձակուում նայել [տես Ելք Գ 6]: Նմանապէս էլ Եղիան տեսնելիս ծածկեց երեսը [տես Գ Թագ. ԺԹ 13] (Նարեկացի):

Վարսերը հպում են Փեսայի վարսերին... Որ մեզ համար սեւացաւ եւ վերցրեց մեր ընկած բնութիւնը, Նա, որ անմասն էր մեղքից, մեր մեղքերի համար մարդացաւ, որպէսզի Նրանով արդարանանք... Եւ արդարացանք Աւագանի մկրտութեամբ եւ լուսամամբ սպիտակացանք՝ հարսնանալով Քրիստոսին: Քրիստոսին հարսնացած հաւատացեալների բազմութիւնը նմանեցւում է այծերի, որ երամ-երամ իջնում են Գաղատայից (Որոգիւնէս):

5. Քո արամները նման են խուզած ոչխարների երամակների, որոնք դուրս են գալիս ասագանից. բոլորն էլ երկածին են, եւ անծնունդ չկայ նրանց մէջ:

5. Կենաց խօսքը մանրող ատամները նմանեցւում են խուզած ոչխարների, որոնք ելնում են հողեւոր ջրի ասագանից:

Երկածին լինելն, ըստ Որոգինէսի, հոգու զարգարուածութիւնն է տեսական եւ գործնական առաքինութիւնների համադրութեամբ, որով հոգին պտղաբերում է հոգեւոր կեանքի արգասաւորութեամբ եւ գերծմնում հելլենական անպտուղ խօսքերից (Որոգինէս):

Բոլորը՝ հաւատացեալների լուացուած երամակաները, երկածին են... Աստուած վերացրել է նրանց ամլութիւնը՝ ըստ Եսայու կանխասացութեան [ՄԴ 1], նրանք կարող են բազմածնունդ լինել (բազմարդիւն լինել) ճշմարտութեան վարքում (Նարեկացի):

Խուզած ոչխարների երամակները նրանք են, որ մերկանում են հին մարդուց եւ հագնում Աստուծով հաստատուած նոր մարդուն: Նրանք ելել են Աւագանից եւ ատամներով ուտում են ճշմարիտ Կենաց Հացը: Բոլորը երկածին են. նրանց մասին է, ովքեր ներքին եւ արտաքին մարդուն զուգահեռ տանում են Քրիստոսի կոչման յետեւից (կեղծ-Հիպոդիտոս):

6. Ըն շուրթերը նման են կարմիր թելի, եւ քո խօսքերը գեղեցիկ են: Ըն այրերը նման են նսան կեղեւի՝ քո լուսթիւնից դուրս:

6. Հարսի շուրթերը կենդանութիւն են աւետարանում, կենդանութիւն է բխում այդ շուրթերից, այդ շուրթերը ներկուած են Քրիստոսի Արեամբ... Նոյնն են խօսում, ինչ Նա՛ ուսուցանեց խօսել, աղօթում են թշնամիների համար, օրհնում հալածիչներին...

Եւ ինչպէս նուռն է կեղեւի կարմրութեան տակ ամբարել անուշ կերակուրը՝ անտացեալներին առողջութիւն պարգեւելով եւ փափագողներին լռութեամբ ներկայանալով, այնպէս էլ Աստուծոյ ընտրեալները դոյզն-ինչ բարի գործեր տեսանելի կերպով են ցոյց տալիս, իսկ ներսում՝ սրտում եւ մտքում, առաքինութեան եւ աստուածասիրութեան անչափ ամբարումները լռութեամբ ծանուցում (Որոգինէս-Նարեկացի):

Հարսի շուրթերը նմանեցում են կարմիր թելի, քանզի ներկուած են Քրիստոսի անապականութեամբ: Հարսի շուրթերն անընդհատ օրհնում են Աստծուն, աղօթում Նրան. ահա թէ ինչու են գեղեցիկ Հարսի խօսքերը: Տէրն ասում է. «Լուա՛ քո երեսը, որպէսզի չերեւաս պաշկեցողի պէս» [Մատթ. 2 17]: Ինչպէս նուռն է պահում պտուղը կեղեւի տակ, այնպէս էլ պէտք է ծածկել առաքինութիւնները, որոնք Աստուած տեսնում է եւ յայտնապէս հաստուցում: Այս է ցոյց տալիս Քն լուսթիւնից դուրս արտայայտութիւնը, քանզի յայտնի է Աստծուն եւ լուռ է մարդկանց համար (կեղծ-Հիպոդիտոս):

7. Վաթսուն թագուհի են ևս ութսուն հարձ, ևս օրիորդներ են, որոնց թիւ չկայ:

7. Վաթսուն թագուհին, ութսուն հարձը **եւ** անթիւ օրիորդները **նրանք են, ովքեր Ութերորդ Օրը պիտի փառաւորուեն Քրիստոսի հետ եւ Նրա հանգստեան մէջ մտնեն (Նարեկացի):**

Վաթսունը խորհրդակիր թիւ է եւ բազմաշերտ խորհուրդներ ունի.

ա) վաթսուն կանայք ընտրուեցին հրեաներից (մինչեւ առաքեալները)՝ Դեբովրա, Եղիսաբեթ, Յուդիթ, Աննա... (Որոգինէս).

բ) տես Գ 7.

գ) շատերը կուսուլթեամբ սրբեցին իրենց անձերը եւ կուսուլթեան մէջ վախճանուեցին յանուն Քրիստոսի. նրանց գլուխը եղաւ սուրբ Կոյս Մարիամը, քանզի ծնեց Քրիստոսին եւ վաթսունամեայ վերափոխուեց (Որոգինէս-Արեւելցի-Տաթեկացի).

դ) վեցերորդ դարուձ (Քրիստոսի առաջին դալուստ) հարսնացածները, որոնք անդրանիկներ են եւ թագուհիներ (Որոգինէս-Արեւելցի).

ե) 60 թագուհիներն, ըստ Հիպոդիտոսի, Ադամից սերուած նահապետներն են մինչ Քրիստոս. նրանցից 42-ին յիշում է Մատթէոս աւետարանիչը, իսկ 18-ին՝ Ղուկաս աւետարանիչը (Կեղծ-Հիպոդիտոս-Արեւելցի).

զ) առաքեալներն ու աստուածաբանները (Նարեկացի):

Ութսուն հարձեր.

ա) 12 եւ 72 առաքեալները (Կեղծ-Հիպոդիտոս).

բ) ութսուն հարձերը հեթանոսներից կանչուածներն են, ինչպէս Ռախաբը [տես Յեսու Բ, 2], Թամարը [տես Ծն. 12], Հուլիթը [տես Հուլիթ] եւ Աստծուն հաճոյացածները (Հիպոդիտոս-Որոգինէս).

գ) մարտիրոսներն են (Որոգինէս-Նարեկացի).

դ) նրանք, ովքեր պիտի հարսնանան եւ պսակի արժանան ութերորդ դարում (Քրիստոսի Երկրորդ դալուստ) (Որոգինէս-Արեւելցի):

Անթիւ օրիորդները քահանաներն են, որոնք ոչ թէ արիւնից եւ մարմնի կամքից ծնուեցին, այլ Աստուծոց [տես Յովհ. Ա 13] (Կեղծ-Հիպոդիտոս): Ինչպէս նաեւ ճգնաւորներն են եւ յանուն Աստուծոյ աղքատացած ապաշխարողները (Նարեկացի), ովքեր պսակի են արժանանալու ութերորդ դարում (Որոգինէս-Արեւելցի):

8. Միակն է Իմ աղանին, Իմ կապարեալը. իր մօր միակն է, ծնողի ընկրեալը: Դուստրերը րեւսան նրան ևս երանի րուեցին նրան, թագուհիները ևս հարձերը գովեցին նրան:

8. Թէպէտեւ զանազանում են անուններով եւ փառքով (թագուհիներ, հարձեր և օրիորդներ), սակայն ըստ խոստովանութեան մէկ են՝ մայր Եկեղեցու աղանիներ: Նրանք բոլորն աղանիներ են՝ Սուրբ Հոգուց ծնուած, Քրիստոսի Մարմնով դրոշմուած եւ Արեամբ սնուցուած, եւ մէկ մարմին են, մէկ Եկեղեցի: Նա, որ ի սկզբանէ Հայրաբար արարեց մարդուն, ըստ Իր խոստման՝ մարդացաւ եւ, որպէս բոլորի մայր, Իր ձագերի պէս հաւաքեց ազգերին Իր թեւերի տակ Վերին Երուսաղէմում (կամ Եկեղեցում) (Հիպոդիտոս-Որոգինէս-Նարեկացի):

Դուստրերը և թագուհիները տեսան Հարսին և երանի տուեցին նրան:

9. Ո՛վ է սա, որ երեսում է ինչպէս առաօտ, գեղեցիկ, ինչպէս լուսինը, ընրիտ, ինչպէս արեգակը՝ զարմանալի յօրինում:

9. Բոլոր թագազարդ կանայք, որ զարդարուած էին բոլոր ազգերի օրէնքներով, պերճանքներով եւ այլ կարգերով, հեթանոսական եւ հրէական զոհերով հանդերձ, տեսնում են Եկեղեցին հոգեւոր կարգով վայելչացած եւ երանի տալիս նրան, որ մարմնաւոր անզարդութիւնը վերափոխեց հոգեւոր զարդի. թագուհիները եւ հարձերը գովեցին ու հետեւեցին նրան, դուստրերը եւ թագուհիները տեսան Հարսին եւ երանի տուեցին (Որոգինէս):

Նարեկացին դուստրերի եւ թագուհիների մէջ տեսնում է Հրեշտակներին եւ անդրանիկներին երկնային Եկեղեցին: Բանն Աստուած մարդացել է եւ աստուածացրել մարդկային բնութիւնը... Եւ Հրեշտակներն ահով եւ դողով փառաբանում են մեր աստուածացած բնութիւնը: Քանզի Աստուծն ոչ ոք երբեք չտեսաւ, եւ Հրեշտակների համար անտեսանելին եւ անշօշափելին մարդկային բնութեամբ դառնում է տեսանելի եւ շօշափելի: Հրեշտակները՝ Աստուծոյ ծառաները եւ սպասաւորները, երանի են տալիս աստուածային փրկագործութեամբ որդեգրուած մարդկային բնութեանը (Նարեկացի):

Դուստրերը եւ թագուհիները, տեսնելով Հարսի աստուածացման վերընթացը, ասում են. «Ո՛վ է սա, որ տրտմութեան հովտից դէպի վեր է կենում նեղ ճանապարհով՝ զօրութիւնից դէպի զօրութիւն, փառքից դէպի փառք բարձրանալով»: Եւ չեն կարողանում ըմբռնել: Նախ՝ իբրեւ առաօտ է գիշերուայ տիրակալութիւնից յետոյ, այսինքն՝ մեղքերի կռապաշտութիւնից եւ սեւ անգիտութիւնից, մոլորութիւնից յետոյ: Գեղեցիկ է, ինչպէս լուսինը. լուսինը գիշերուայ լուսատուն է եւ արեւից է

առնում լոյսը եւ խորհրդանշում է ստուերակերպ Օրէնքը, որ Աստծուց տրուած է մեղքը մերժելու համար եւ վերափոխուեց Նոր Ուխտին: Իսկ արեգակը ցերեկուայ լուսատուն է, պայծառ լոյս ունի եւ միշտ ջերմ է, որ խորհրդանշում է Քրիստոսի Աւետարանի ծագումը, ինչպէս նաեւ՝ արդարութեան Արեգակով՝ Քրիստոսի նոր արարչագործութիւնը: Այսպիսով՝ լուսնից արեգակ անցումը խորհրդանշում է առաջին արարչութիւնից երկրորդ արարչութիւն, Օրէնքից Աւետարան, հին մարդուց նոր մարդ, ինչպէս նաեւ այս աշխարհից հանդերձեալ աշխարհ անցումը՝ ըստ Տիրոջ խօսքի. «Այնժամ արդարները կը ծագեն արեգակի պէս արքայութեան մէջ» [Մատթ. ԺԳ 43] (Արեւելիցի-Տաթեւացի):

Փեսան ասում է Հարսին.

10. Իջայ ընկուզէնիների պարտէ՛զ՝ նայելու վրասկների արդիւնքին, թէ ծաղկե՛լ է որթը, թէ ծաղկե՛լ է նոճին<sup>36</sup>, թէ ծաղկե՛լ են նուննիւները:

10. Փեսան իջնում է մեր բնութեան պարտէ՛զ՝ հաւաքելու Եկեղեցու պտուղները, ուր բխում են Սուրբ Հոգու գարնան շնորհի վտակները (Հիպոդիտոս-Որոզիէնէս)՝ տեսնելու, թէ՛ ծաղկե՛լ է որթը, այսինքն՝ Մարիամը ծնե՞լ է Քրիստոս ծաղիկը, թէ՛ ծաղկե՛լ է նուննին, այսինքն՝ մարդիկ ծաղկե՞լ են հաւատքով (կեղծ-Հիպոդիտոս):

Ընկոյզը մեր մարդկային բնութիւնն է. կեղեւը մարմինն է, միջուկը՝ հոգին (Նարեկացի): Ըստ Տաթեւացու՝ ընկոյզի կեղեւը դառը մարմնական ճգնութիւնն է, իսկ միջուկը՝ ծածուկ իմաստութիւնը: Ընկոյզի ձէթը խորհրդանշում է օճեալ Քրիստոսին (Հիպոդիտոս-Տաթեւացի):

Նոճին խորհրդանշում է անապականութիւնը: Մարդկային բնութիւնը, ըմպելով Սուրբ Հոգու առուներէից, նոճու պէս վեր է խոյանում, եւ մարմինը հոգու պէս անապական է դառնում, որթի պէս գինեբեր ու ճմլում երկնաւոր Փեսայի բաժակի մէջ (Նարեկացի): Իսկ նոռը քահանայական խորհուրդն է կրում (Արեւելիցի):

Նուռը ճմլում է արքաների բաժակի մէջ (Նարեկացի). այն բժշկութեան կերակուր է (Տաթեւացի):

Հարսն ասում է Փեսային.

11. Այնպես կը փամ քեզ իմ սրինքները, իմ հոգին չիմացաւ. համարեց ինձ ինչպէս Ամինադարի կտորը:

11. Սրինքները մարգարէներն են, որ ծածկուած էին. այժմ Հարսը պատրաստ է կերակրել Աստուծոյ խօսքի աշակերտներին, քանզի սուրբ են այն կաթի շնորհիւ, որ ստանում են Հարսից, եւ պողաբերում են Տիրոջ այգում: Չիմացաւ իմ անձը, ինչպէս մինչեւ գալուստը, այնպէս էլ այժմ Հարսը խոստովանում է Բան Աստուծոյ անհասուլթիւնը, որ տեսնուեց մարմնի մէջ (Որոգիւնէս):

Պարտէզի, այսինքն՝ Եկեղեցու մէջ, մարգարէների մեկնութիւնից եւ երկու Կտակարաններից սնուելով, Հարսը պողաբերում է Տիրոջ համար հարկւաւոր, վաթսնաւոր, երեսնաւոր [տես Մատթ. ԺԳ 1–23] եւ աւելի մեծ արդիւնքով, որի մասին խոնարհաբար ասում է՝ չգիտի իմ անձը, այսինքն՝ «կարօտ եմ Քո բնութեանը» կամ՝ «չգիտէի մինչեւ Քո գալուստը» (Արեւելցի):

Նարեկացիին այստեղ ուշագրաւ մեկնութիւնն ունի. Հարսը, լսելով Փեսայի իջնելու եւ ծաղիկների խնդրի մասին, պատասխանում է, թէ՛ ոչ միայն ազնուական ծաղիկներով ծաղկեցի, այլեւ կերակրեցի Քեզ ըստ Քո Աստուածութեան խորժութեան՝ սուրբ սրտի (հոգեւոր ստինքներ) մաքրութեամբ: Չիմացաւ իմ անձը, այսինքն՝ ինչպէս կաթն անտեսանելի ստինքներից մանուկների անբծութեան կերակուր է լինում, այնպէս էլ սիրով ջերմացած անբիծ խորհուրդները մարդու անգիտութեամբ կերակուր են լինում Աստծուն, որ մարդկանցից խնդրում է ոչ այլ ինչ, քան սուրբ սիրտ, որով տեսնում են Աստծուն, եւ ուր բնակում է Ինքը, ինչպէս ասում է մարգարէն, թէ՛ «Ես որտե՞ղ պիտի բնակուեմ, եթէ ոչ՝ հեզերի, սրտով խոնարհների եւ նրանց մէջ, ովքեր դողում են Իմ խօսքերից» [Ես. ԿԶ 2]: Նրանք՝ որպէս կառք, դառնում են փառքով բարձրացած Փեսայի հանգստարանը (Նարեկացի):

Ամինադարը ձեռքի սքանչելի եւ յաջողակ արուեստով իսրայելացի էր: Նա փարաւոնի կառքերի օրինակով մի կառք է յօրինում ի հաճութիւն Սողոմոնի... Այս կառքը յոյժ առաւել էր Փարաւոնի կառքից: Եւ Սողոմոնը յոյժ ուրախացաւ, եւ ողջ Իսրայէլը հիացաւ: Հարսն իրեն նմանեցնում է նրան եւ ասում, թէ Փեսան ճարտարապետեց ինձ եւ դրեց ի զարմանս երկնաւորաց եւ երկրաւորաց, ի՞նչ պիտի տամ Նրան: Ինքն իր համար դարձրեց ինձ կառք եւ փառքի տաճար (Որոգիւնէս-Արեւելցի):



Դուստրերը եւ թագուհիներն ասում են Հարսին.

12. Վերադարձի՛ր, վերադարձի՛ր, ո՛վ ողորդումացիդ, վերադարձի՛ր,  
վերադարձի՛ր, եւ մենք րեսնենք քեզ:

12. Ըստ կեղծ-Հիպոդիտոսի՝ Նաասոնի որդի Ամինադաբը բնակուում էր վկայութեան խորանի արեւելեան կողմում [տես Թիւք Բ 3], որի մասին ասում է Դաւիթը. «Արեւի դիմաց խփեց Իր խորանը» [Սաղ. ԺԸ 6]. եւ քրիստոնեաներս դէպի արեւելք ենք երկրպագում:

Դուստրերը եւ թագուհիները կոչ են անում վերադառնալ եւ մնալ նախնական փառքի եւ կոչման մէջ եւ բոլոր դժուարութիւններով ու փորձութիւններով հանդերձ անբաժան մնալ Քրիստոսի սիրուց (Որոգիւնէս):

Ըստ Նարեկացու՝ այս խօսքն արտայայտում է հրեշտակների սքանչազուումը մարդկային բնութեան՝ չարից դէպի բարի փոփոխութեան վրայ. ուստի նրանք տեսութիւն են խնդրում:

Արեւելցին այս կոչը կապում է սումացի (բնագրում՝ ողորդացի) կնոջ մեռեալ մանկանը Եղիայի յարութիւն տալու հետ: Սոմնացի կինն ընդունեց Եղիային, Եղիան յարութիւն տուեց նրա մանկանը: Սա խորհրդաբար զուգահեռուում է Եկեղեցու հետ... Եկեղեցին ընդունեց Քրիստոսին, եւ Նա անդրանիկ եղաւ: Ինքը Տէրը մեռաւ ու յարութիւն առաւ եւ բազում որդիներ պարգեւեց: Ըստ Արեւելցու՝ չորս անգամ կանչելը խորհրդանշում է Աւետարանի քարոզութիւնն աշխարհի չորս կողմում:

Ըստ Տաթեւացու՝ հրեշտակները քաջալերում են վերադառնալ եւ յաղթել թշնամուն: Նրանք կոչ են անում հաւատքով եւ մարմնով, մտքով ու խօսքով դառնալ ամէն տեսակ չար բաներից եւ հաստատուն մնալ Քրիստոսի տնօրինութեան խրախճանքի մէջ:

Ուշագրաւ է նաեւ Որոգիւնէսի հետեւեալ բացատրութիւնը: Ողորդմ քաղաքի բնակիչները բարձրարուեստ երգիչներ, քնարահարներ, սրնգահարներ եւ գեղեցկաձեւ շարժումներով կաքաւողներ են: Այս անունով են կանչում Հարս-Եկեղեցուն... Նրանք ցանկանում են, որ Հարսը կաքաւի առաքիւնութեամբ եւ երգի փեսայացեալ Տիրոջ տնօրինութեան երգերը, որպէսզի իրենք տեսնեն եւ սովորեն:

## Է

Փեսան այսպես է ասում դուստրերին եւ թագուհիներին.

*1. Ի՞նչ էք փեսանում այդ ողորմացու վրայ, որ դէպի մեզ է գալիս քանակների զորագնդերի պես: Քանզի գեղեցկացան քո ուրբերը կօշիկներով, դո՛ւարք Ամինադարի: Քո ազդրերի ձեւը նման է ձարուար վարպետի ընդելուզած ուլունքների:*

*1. Ըստ կեղծ-Հիպոդիտոսի՝ նկարագրւում է Վերջին Օրը Եկեղեցու բանակների (սուրբերի գնդերի) առաջխաղացումը երկնաւոր Ատեանի ասպարէզով (կեղծ-Հիպոդիտոս):*

*Հարսի երեւալուն պէս տեղի է ունենում արդարների գնդերի առաջխաղացում, որոնց մասին ուրախացած եւ զարմացած Հարցնում է Փեսան, եւ Ինքը բնակում Իր անունով Հաւաքուածների մէջ: Փեսան այլաբանօրէն Հարցնում է, թէ արդեօք տեսնո՞ւմ եմ Իրեն արդարների մէջ (քանզի Քրիստոս Հայելացուած է Իր Արեամբ փրկագործուած մարդկային բնութեան մէջ) (Որոգիւնէս): Նարեկացին քանակների զորագնդեր արտայայտութեան մեկնութիւնը տեղափոխում է բարոյաներանձնական Հարթութիւն. Հարսը ճոխացած է աննկարագրելի գեղեցկութեամբ, այսինքն՝ բարի գործերով, ինչի մասին, սակայն, պիտի յայտնի Փեսան (Նարեկացի):*

*Հարսի ոտքերը գեղեցկացել են կօշիկներով, այսինքն՝ ոչ իւրովի, այլ Տիրոջ զօրութեամբ, որ իշխանութիւն է տուել՝ ամբացած կօշիկներով ոտնակոխ անելու օձերին եւ կարիճներին (կեղծ-Հիպոդիտոս-Որոգիւնէս):*

*Այդ կօշիկները Նարեկացին անուանում է արդարութեան կօշիկներ... Այդ կօշիկներն ունեցողը գերծ է խայթող օձի թոյնից, նաեւ լուացուած է մեղքերից, ինչպէս առաքեալների ոտքերը, որ Փրկչի կողմից ջրով եւ Հոգով իշխանութիւն ստացան ոտնակոխ անելու օձերին, կարիճներին եւ թշնամու բոլոր զօրութիւնները: Ահա թէ ինչու առաւելացան գեղեցկութեամբ, քանզի իրենց ոտքերին Հագան աւետարանական խաղաղութեան պատրաստութիւնը (Նարեկացի):*

*Ըստ Արեւելցու՝ կօշիկները խորհրդանշում են մարմնի մեռելութիւնը: Ով իր ոտքերին է Հագել մեռելութեան կօշիկները, նրա գարշապարները չարի փորձութիւնները ոտնակոխ անելու զօրութիւն ունեն (Արեւելցի):*

Դուստր Ամինադարի կոչելով՝ Փեսան ընդգծում է Հարսի ծագումնաբանական նիստը. սերուել է պիղծ նախնիներից եւ Հարսնացի Քրիստոսին (Նարեկացի): Ճարտար վարպետը Սուրբ Հոգին է, որ ուլունքների պէս ընդելուզել է ազդրերը եւ դիւրութեամբ խոնարհեցնում է ծնկները (որոնք իրենց վրայ են կրում ազդրերը)՝ ի խոստովանութիւն Ամենասուրբ Երրորդութեան եւ Բանի փրկագործ մարմնաւորման (Արեւելցի):

Փեսան Հարսի գեղեցկութիւնը նկարագրելիս կտրուկ անցում է կատարում դէպի ոտքերի գեղեցկութիւնը: Ի՞նչն է պատճառը, որ մի տեղ գլխից է սկսում գովել, իսկ այստեղ՝ ոտքերից:

Գովեսաը գլխից սկսելը ցոյց է տալիս այն, որ սրբութիւնը գլխից ստացանք հաւատքով եւ Աւագանով: Իսկ ոտքերից սկսելն այն է, որ մեզանից ենք ստանում գործերի սրբութիւն՝ առաքինութեամբ եւ ապաշխարութեամբ: Կօշիկը երկու իմաստ ունի. նախ նշանակում է ախտերի նկատմամբ մեռելութիւն հագնել, ինչպէս ասուեց Մովսէսին. «Հանի՛ր քո կօշիկները» [Ելք Գ 5], եւ երկրորդ՝ նշանակում է մարմնի մեռելութիւն, որ ամրացուած է [աստուածահաճոյ] վարքով (Տաթեւացի):

2. Քո պորպը ձախարակուած սափոր է՝ անուշ գինուց անպակաս: Քո որովայնը նման է շուշանով<sup>37</sup> ծածկուած ցորենի դէզի:

2. Ըստ Նարեկացու՝ պորտը Սուրբ Հոգու շնորհների ընդունարան-կիզակէտն է. ինչպէս ձախարակուած սափորը ընդունարանն է անուշ գինու, այնպէս էլ մաքրուած եւ յստակուած պորտը՝ Սուրբ Հոգու շնորհների (Նարեկացի):

Արեւելցու մեկնութիւնը կապակցուած է պորտի նախնական նշանակութեան հետ. երեխան մօր փորում պորտով է ստանում շունչ եւ կերակուր: Եկեղեցու մէջ էլ երեխաները հոգեւոր շունչ, կերակուր եւ ըմպելիք են ստանում ըստ իրենց անկատար չափի, սակայն աննուազ են կատարեալ ուսման գինուց: Կաթը փոխարինում է իմաստութեան սափորի գինով (Արեւելցի):

Որովայնը Եկեղեցու Աւագանն է, որտեղից ծնւում են նրա անթիւ որդիները, ինչպէս ցորենը: Նրանք մեռնում են այս աշխարհի համար՝

շուշանի պէս գունատուելով, քանզի տնկակից են լինում Քրիստոսի մահուանը (Որոգինէս):

Նարեկացին որովայնը դիտում է որպէս Սուրբ Հոգու շնորհների ընդունման մարդաբանական ոլորտ: Մարդկային տկար բնութիւնը, ընդունելով Հոգու շնորհներն իր որովայնում, ցորենի դէզի պէս կուտակում է, աղում վարդապետութեան ատամներով եւ հոգեւոր հաց դարձնում քաղցածների եւ կարօտեալների համար: Այն պատուած է հրեշտակների տեսութիւնը զմայլեցնող շուշանների հրաշագունութեամբ (Նարեկացի):

Արեւելցու մեկնութիւնը գուգահեռում է Որոգինէսի մեկնութեանը. Եկեղեցու Աւագանը նա անուանում է իմացական, այսինքն՝ հոգեւոր որովայն: Մեռած եւ ծնուած ցորենից ծնում է կենդանի Հացը, որով բուրում է մկրտուած մարդու սիրտը, այն անջրպետուած է մաքուր առաքինութեան շուշանով (Արեւելցի):

Կեղծ-Հիպոդիտոսը հաց-խօսք գուգահեռ է անցկացնում («Ոչ միայն հացով, այլեւ ամենայն խօսքով, որ ելնում է Աստուծոյ բերանից» [Մատթ. Գ 3]). Եկեղեցին իր ներսում ամբարեւ է Հին եւ Նոր Կտակարանները:

3. Քո երկու սրիսքները նման են այծեամբ երկու երկուորեակ ուլերի:

3. Որոգինէսը երկչերտ մեկնութիւն է առաջադրում. ա) ստիսքները Հին եւ Նոր Կտակարաններն են, որոնցով Եկեղեցին կերակրում է մանուկներին, բ) տեսական եւ գործնական առաքինութիւններն են: Նարեկացին մեկնում է այս խօսքի մարդաբանական նիստը. մարդն ունի հոգի եւ միտք, որոնք յարակալում են սրտի մօտ, ուր ստիսքներն են: Միտքը եւ հոգին՝ այդ հոգեւոր-իմացական ստիսքները, այծեամբերի պէս արթուն, լուսաւոր եւ սրահայեաց են, աստուածային հեռաւորը մերձաւորի պէս տեսնելով՝ անմոլար ցոյց են տալիս ճանապարհն անձերին եւ նրանց հետ գնացողներին, անորոգայթ պահում որսողից, կերակրում մեղքերից մանկացածներին, ինչպէս ստիսքները՝ մանուկներին (Նարեկացի):

4. Քո պարանոցը նման է փղոսկրեայ աշրարակի: Քո աչքերը նման են Եսեքոնի ծովակին՝ քաղում դուսրերի դարպասների մօտ: Քո ոտնագերը նման են Լիբանանի աշրարակին, որ նայում է դէպի Դամասկոս:

4. Հոգիների պարսնոց-առաջնորդները, որ իրենց ուսերին են կրում գլխաւոր օրէնքը, հաստատուն են հաւատքի մէջ եւ անմարտնչելի, յղկուած են աշխարհի նկատմամբ մեռելութեամբ, ճախարակուած՝ առաքինութեամբ եւ սպիտակացած՝ փտերից (Որոգինէս): Այդ պարանոցն Աւագանի մէջ ամրացուած է Սուրբ Հոգով, որ ի գօրու լինի կրելու Քրիստոսին (Արեւելցի):

Աչքերի տեսողական գօրութեամբ ակնարկուում է հոգու իմանալի հայեցողութիւնը, որով Հարսը միշտ ձգտում է հայել հրեշտակների պարերի երկնային դռներին եւ փափագում նրանց կայանները (կեղծ-հիպոդիտոս):

Փեսան նախապէս գովերգեց աչքերը որպէս աղաւնի՝ ակնարկելով Աւագանի մաքրութիւնը: Իսկ այժմ նմանեցնում է ծովալի՝ ակնարկելով գործերի մաքրութիւնը: Եսերոնը քահանաների քաղաք էր, որը փրկուելու ապաստարան էր ակամայ սպանութիւն գործողների համար: Այն մշտապէս նայում էր դէպի թուխ յօնքերով զարդարուած կամարակերպ ծովակը, որն ասես կոյսի աչքեր լինի: Եկեղեցու իմացական-հոգեւոր աչքերը ծովի են նմանեցնում տասը եղանակով. ա) ինչպէս ծովն է ընդարձակուում հողմով, այնպէս էլ Եկեղեցու աչքերը՝ Սուրբ Հոգով. բ) ծովը չի հոսում գետերի ընթացքով, նմանապէս Եկեղեցին չի խտորուում աջ եւ ձախ, այլ միշտ մնում է նոյն սրբութեան մէջ. գ) ծովակը նայում է երկնքին, Եկեղեցու աչքերը՝ երկնքի բնակավայրերին. դ) ծովակը չունի ծածկոյթ, նոյնպէս՝ «Իմ աչքերն ամէն ժամ ուղղուած են Տիրոջը» [Սաղմ. ԻԴ 15]. ե) Եսերոնի աչքերն ուղղուած են դէպի Նա, ինչպէս երկնայինների խնամքը՝ Եկեղեցուն. զ) ծովակը արեւով է գեղեցկանում եւ փայլում, Եկեղեցին գեղեցկացաւ իմանալի Արեգակ-Քրիստոսով, մանաւանդ երբ սուրբերը որպէս արեգակ ծագեն երկնքի արքայութեան մէջ՝ ըստ սուրբ Նարեկացու. է) ըստ մեծն Վարդանի՝ ինչպէս աչքն է նախ տեսնում ճանապարհը, այնպէս էլ Եսերոնը նախ տեսնում է ծովակը, եւ քահանան՝ օրէնքը. այս ամէնը խորհրդանշում է Եկեղեցին, քանզի նախատես է կեանքի ճանապարհի. ը) ծովակը խորհրդանշել է իմաստների հաւաքի. թ) քաղաքն ունի քաղաքական ընդարձակութիւն. ժ) քաղաքն ապրեցնում եւ փրկում է իրեն դիմաձններին ե՛ւ կուռքերից, ե՛ւ մեղքերից, որ ապականում են անձերը (Տաթեւացի):

Բագում դուտարեր ասելով՝ Փեսան նկատի ունի Վերին Երուսաղէմի դուտարերին, որոնք անհամար են (Արեւելցի):

Քո ունկերը... Ովքեր ուսուցանողներից ստանում են Քրիստոսի անուշահոտութիւնը, ամբանում են Նրանով եւ հակառակ են Դամասկոսի աշխարհական ցանկութիւններին (Որոգիւնէս):

Նարեկացու մեկնութիւնը զգալիօրէն տարբերում է Որոգիւնէսի կարծիքից, սակայն խորապէս լիացնում է այն: Փեսան այլաբանօրէն ասում է. «Ինչպէս Լիբանանի աշտարակը վայելուչ տեսք ունի Դամասկոս նայող կողմից, այնպէս էլ քո ունեզերը վայելուչ հայցմամբ փափագում են հոտոտել մաքուր իւղի անուշահոտութիւնը վերին Դամասկոսից, այսինքն՝ երկնքի Քաղաքից...»: Նարեկացին յիշատակում է նաեւ Պօղոսի դարձը Դամասկոսի ճանապարհին եւ նրա բժշկուելը Դամասկոսում:

Պօղոս առաքելը հոտոտում է այդ երկնային բուրմունքը եւ այդ հոտը տանում ու բաշխում հեթանոսներին, եւ նրանք հոտոտելով՝ զմայլում են երկնային անուշահոտութեամբ... (Նարեկացի):

Առաւել ամբողջական ու խորունկ է Արեւելցու մեկնութիւնը. Լիբանանի՝ դէպի Դամասկոս նայող աշտարակը, որ շինուել է Սողոմոնի կողմից, եռաշերտ պարսպով պատուած, անառիկ եւ անվանելի ամբողջութիւն ունեցող մի շինութիւն է, որին նմանեցնում են Հարսի ունեզերը: Ռուսները հոգեւոր հոտերի զգայարանն են, որոնցով անմահ Փեսան հոտոտում է Եկեղեցու առաքինութեան պատարագի, աղօթական պաշտամունքի եւ ժուժկալութեան ճգնութիւնների ժամանակ՝ աշտարակ լինելով, եւ Սուրբ Հոգու շնչով արգելում ամէն տեսակ ժահահոտութիւն, քանզի Լիբանան թարգմանում է կնդրուկի լեռ, որ երկնքի երկինքն է՝ հրեշտակների կայան, ուր ամբողջովին խուճկեր են եւ խնկենիների լեռների մշտաբոյր պատարագի ողջակէզներ: Իսկ Դամասկոս նշանակում է քուրճի բերան<sup>38</sup>, որ նուրբ ճանապարհի եւ խստամբեր կեանքի վարդապետութիւնն է (որ նայում է առաքինութեան աշտարակին): Այդ վարդապետութիւնն իր կենդանարար շնչով տալիս է անմահ կեանքի անուշահոտ յոյսը նեղ ճանապարհի վաստակած ուղեւորներին (Արեւելցի):

5. Գլուխդ քեզ վրայ նման է Կարմէլոսին, եւ քո գլխի հիւսերն ասես ծիրանի լինեն՝ թագակիր թագաւորի պէս, ասպարէզներում:

38 Այս բացատրութիւնը ոչ մի տեղ չգտանք:

5. Հաւատքի շինութիւնը նմանեցուած է վէճի վրայ հաստատուած անմատչելի գլուխ-լեռան, որը չեն կարող յաղթահարել դժոխքի դռները (Որոգիւնէս):

Քրիստոսն է Հարս-Եկեղեցու գլուխը, Նրա շնորհների վտաններից են ոռոգւում Հարսի զգայարանները... Այդ գլուխը նմանեցուած է Կարմելոսին, որը հրեաներին բաժանում էր հեթանոսներից, քանզի Տէրը նոյնպէս անուանուած է երկու որմերի անկեան գլուխ [տես Սաղմ. ՃԺԷ 22], որովհետեւ Քրիստոսի մէջ չկայ հրեայի եւ հեթանոսի միջեւ խտրականութիւն [Հռոմ. Ժ 12]: Լեռան անունը նաեւ ստուգաբանուած է որպէս գիտութիւն, այսինքն՝ իմաստութիւն (խորհրդանշուած է Քրիստոս-Աստուծոյ զօրութիւնը, իմաստութիւնը եւ գիտութիւնը). նաեւ թարգմանուած է որպէս թլփատութիւն, քանզի Քրիստոսով թլփատուեցինք անձեռագործ թլփատութեամբ՝ Քրիստոսի թլփատութեամբ մերկացնելով մարմնի անդամները [մեղքի իշխանութիւնից] (Արեւելցի):

Ըստ Նարեկացու՝ թագաւորական ծիրանին խորհրդանշին է Փեսայի երկնաւոր փառքի, իսկ թագով պսակուած է մարմնի ամենապատուական մասը՝ գլուխը: Թագն Աստուծոյ անճառ զօրութեան եւ լուսաւորութեան պսակն է, որով զարդարուած է գլուխը (իբրեւ այդպիսի պսակով պսակուածներ Նարեկացին յիշատակում է սբ Քառասուն մանկանց եւ սբ Ղեւոնդեանց): Եւ երանի՛ նրանց, ովքեր արժանանում են անթառամ պսակին եւ Հարսնանում Քրիստոսին, քանզի թագակից են լինում Նրան Նրա անհատնում թագաւորութեան մէջ (Նարեկացի):

Հարսը թագաւորական ծիրանի է հագել եւ թագակցում է Փեսային, նմանապէս պսակուած է խաչով նահատակութեան հանդէսի ասպարէզներում: Ինքը Տէրն ասաց. «Ով չվերցնի իր խաչը եւ չգայ Իմ ասպարէզը, չի կարող աշակերտել Ինձ» [տես Ղուկ. ԺԴ 27] (Արեւելցի):

Սակայն խաչը երկու իմաստ ունի. խորհրդանշում է՝ ա) իմանալի չարչարանքները. իմանալի կերպով խաչուած է նա, ով մեռցնում է ախտերը (ճգնաւորական մահ), բ) զգալի խաչը, որով հեղուած է արիւնը: Ինչպէս մեր Տէր Յիսուս Քրիստոս նախ Իր մէջ կրեց չարչարանքները, ապա զգալի կերպով խաչուեց, նմանապէս էլ սուրբերը նախ իրենց մէջ են կրում չարչարանքները (պահքով եւ ճգնութեամբ), ապա պսակուած խաչով, քանզի խաչաձեւ հաստատուած սուրը պսակում է սուրբերին (Տաթեւացի):

6. Որքա՞ն գեղեցկացար եւ որքա՞ն քաղցրացար, ո՛վ սէր, քո փափկութեան մէջ:

6. Արդարեւ գեղեցկացաւ Եկեղեցին Քրիստոսի պէս-պէս շնորհներով եւ քաղցրացաւ ու փափկացաւ Նրա սիրով՝ գերծ մնալով ծառայական երկիւղից (Որոգիւնէս): Մէ՛ր, քո փափկութեան մէջ, այսինքն՝ բոլոր վայելչութիւնների լրումը ծայրագոյն սէրն է, որով Աստծուն մերձաւորուած հոգին փափկանում է Նրա տեսութեամբ եւ գիտութեամբ (Կեղծ-Հիպոդիտոս):

Մի առ մի թուելով Հարսի անգամների գեղեցկութիւնը՝ Փեսան գովում է նրա ամբողջական գեղեցկութիւնը: Այսպիսին է ստուգապէս գեղեցկութիւնն այն մարդու, որ իր բոլոր զգայարանները ծառայեցնում է Աստծուն եւ աստուածացնում նրանց՝ մերձենալով Աստծուն, Հաղորդուելով աստուածային գործերին: Նա արժանանում է Փեսայ Քրիստոսից նման խօսքեր լսելուն, թէ՛ գեղեցկացար եւ Հաճելի եղար Ինձ: Այսպիսին օտարացած է աշխարհի եւ աշխարհիկ գործերի համար, փափկացել է առաքինութեան վարքով եւ սիրուել Փեսայից, որ ասաց. «Մէ՛ր, քո փափկութեան մէջ» (Նարեկացի):

Արեւելցին Հարս-Եկեղեցու գեղեցկութիւնը համեմատում է մարմնաւոր Հարսի գեղեցկութեան հետ. ինչպէս Հարսը երեսի գեղեցկութեան պաճուճանքներով եւ զարդերով Հաճելի է լինում Փեսային, եւ փափկութեան մէջ սէր է յորդում, այնպէս էլ Եկեղեցին՝ կուսական եւ մարտիրոսական գեղեցկութեամբ զարդարուած եւ Սուրբ Հոգու շնորհների վտակներով սրբուած, Հաճելի եւ սիրելի եղաւ անմահ Փեսայ Յիսուս Քրիստոսին (Արեւելցի):

7. Քո հասակը նման է արմատնու, եւ սրինքներդ՝ ողկոյզների:

7. Տաթեւացին, ամբողջացնելով Որոգիւնէսի եւ Արեւելցու մեկնութիւնները, տալիս է առաւել համակողմանի մեկնութիւն. «Արմատնին չորս յատկութիւն ունի. ա) հասակով բարձր չի թւում, Եկեղեցին էլ արհամարհուած է թւում օտարներին, բ) ծաղկում է անուշահոտ ծաղիկներով, որ կեանքի յոյսն են, գ) քաղցր պտուղներ է տալիս, որ հաւատքի արդիւնքն են, դ) [Եկեղեցին] էլ լայնացած սաղարթով ծածկում է (ցոյց չի տալիս) առաքինութիւնը, այլեւ մեղքերը՝ թողութեամբ: Նաեւ, սրան զուգահեռ, արմաւենին եւս չորս յատկութիւն ունի. ա) բարձր է հասակով, ինչպէս Եկեղեցին է բարձրացած յոյսով,



բ) բարձրագիր պտուղներ է տալիս, ինչպէս մեր առաքինութիւնները՝ երկնքում, գ) ուշ է պտղաբերում, որ խորհրդանշում է հանդերձեալը, դ) երկարակեաց է մշտնջենաւոր կեանքի խորհրդով:

Արմատենին իր բարձրութեամբ եւ պտուղների քաղցրութեամբ խորհրդանշում է հրեշտակներին, որոնք բարձունքի բնակիչներ են եւ քաղցրաբարբառ՝ Արարչի կամքը կատարելու մէջ (Հիպոդիտոս):

Եկեղեցու ստինքները՝ ա) Հին եւ Նոր Կտակարաններն են, բ) առաքելների եւ վարդապետների խօսքերը, գ) Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը, դ) սրտից արտաբխող սէրն առ Աստուած եւ առ մարդիկ: Այդ ստինքները նմանեցւում են ողկոյզի՝ նախ՝ Քրիստոսի եւ ապա՝ մեր կեանքի, մահուան եւ յարութեան օրինակով: Այս կեանքում ողկոյզ են, մահուամբ ճմլուելով հաւաքւում են եւ յարութիւնից յետոյ պարզուելով դառնում գինի (Տաթեւացի):

Որդիկնէսը ստինքների մէջ տեսնում է Սուրբ Հոգու իմաստութեան աղբւրը: Արեւելցու մեկնութիւնն առանձնանում է նկարագրական գեղեցկութեամբ. արդարներն արմաւենիների պէս ծաղկում են Տիրոջ տան մէջ՝ Սուրբ Հոգու իմաստութեան կաթով լցուած ստինքները տալով անմեղ մանկանց, ինչպէս խաղողահիւթով լցուած ողկոյզ, մինչեւ Հօր սեղանը կազմուի եւ Տէրը մատուակի (Արեւելցի):

Ց. Ասացի, թէ ելնեմ արմատենին, բունեմ նրա բարձրութիւններից, եւ քո ստինքները թող խաղողի ողկոյզի պէս լինեն, քո ոսնգերի հոտը՝ ինձորի պէս, եւ քո կոկորդը՝ ազնի գինու պէս:

Ց. Արանով Աստուած արտայայտում է իր անբաւ սէրը սուրբերի եւ արդարների նկատմամբ. Նրա համար սուրբերի մէջ բնակուելն առաւել ցանկալի է, քան քերովբէական աթոռին նստելը: Նա Եսայի մարգարէի բերանով ասում է. «Ես որտե՞ղ եմ բնակուում, եթէ ոչ՝ հեզերի, խոնարհների եւ այնպիսիների մէջ, որ դողում են Իմ խօսքերից» [տես Ես. 49 2]:

Արեւելցիին երկշերտ մեկնութիւն է առաջադրում. ա) Փեսան կամե-նում է Ելնել իմանալի արմատնու հրեշտակային բարձունքը եւ լցնել-վերականգնել ընկած հրեշտակների տեղը, բ) Քրիստոս աւետարանեց, որ նախ պէտք է բարձրանայ Մարդու Որդին եւ ապա բողոքին բարձրացնի իր մօտ... Նախ Տէրը պիտի խաչ բարձրանար... Եւ այժմ [Նրա մարմնի] անդամները բռնուում են խաչի բարձրութիւնից եւ զգալի արմաւենու

պտուղից քաղցր պտուղներ քաղում՝ չարչարակցուելով Քրիստոսին, որպէսզի հաղորդ լինեն փառքին... (Հիպոդիտոս-Արեւելցի):

Այսպիսով՝ Փեսան պատմում է Իր խաչելուժեան մասին, սակայն ինչո՞ւ խաչ բարձրացաւ Քրիստոս. ա) որովհետեւ թագաւորի կառքը եւ գահը բարձր է, եւ Քրիստոս թագաւորեց խաչի վրայ, բ) որպէսզի հեռուից տեսնեն ու հաւատան, ինչպէս «պղնձի վրայ բարձրացած օձին» [Թուոց ԻԱ 9, Յով. Գ 14], գ) Ինքն Իրենով մեզ երկինք է բարձրացնում, ինչը ցոյց է տալիս Յակոբի սանդուղքը՝ ըստ խօսքի, թէ՛ «Երբ բարձրացայ, բոլորիդ կը տանեմ» [տես Յովհ. ԺԲ 32] (Տաթեակացի):

Ստիկսները նմանեցում են ողկոյզի... Փեսան բռնուել է բարձրութիւններից եւ խաղողի ողկոյզի պէս առատացրել եւ հիւթեղացրել Հարսի ստինքները, որպէսզի դրանցով կերակրի ուրիշներին (Որոգինէս): Հոգեւոր շնորհների այդ ստիկս-ողկոյզը գուարթացնում է տեսողներին, ուրախացնում լսողներին եւ բերկրանքով լցնում (Նարեկացի): Եթէ Հարսը նախապէս կաթով էր սնում, ապա այժմ՝ խաղողի ողկոյզով, որ մշակում է Հայրը (կեղծ-Հիպոդիտոս):

Խնձորի բոյրը հոգեւոր անուշահոտութիւնն է. Քրիստոս որսում է հոգին, եւ հոգու կոկորդն արբենում է Նրա գիտութեամբ առաւել, քան մարմինը՝ գինով (Որոգինէս):

Նարեկացին խնձորի բուրմունքը մեկնում է մարդաբանական անդրադարձով. խնձորի բուրմունքը սուրբ վարքի անուշահոտութիւնն է, որ երկնաւոր Փեսան հոտոտում է առաւել, քան ստուերակերպ գոհերն ու նուէրները, որոնք անուանում էին Տիրոջ անուշահոտութիւն: Գինին ուրախացնում է արբողներին, այնպէս էլ սուրբերի եւ անարատների երգը եւ նրանց կոկորդի խօսքերն ուրախացնում են երկնաւոր Փեսային հրեշտակների սրբասացութիւնների երգերից առաւել (Նարեկացի):

Հարսը դուստրերի եւ թագուհիների առաջ ասում է.

9. Գնում եմ իմ Եղբորորդու հեպ ուղիղ ձանապարհով, բաւականաւում իմ շորթերով եւ ապամներով:

9. Հարսը հրաժարուել է այս կենցաղի նանրութիւնից եւ գնում է Նրա հետ հաւատքի եւ գործերի ուղղութեան մէջ: Հարսը մտաւորական քննութեամբ ծամում է հոգեւոր գիտութիւնը. «Քանզի ոչ միայն հացով կ'ապրի մարդ, այլեւ ամենայն խօսքով, որ ելնում է

Տիրոջ բերանից» [Մատթ. Դ 4]... (Որոգինէս): Փեսան ուղեկցում է Հարսին առ Հայր: Հարսը խոստովանում է, որ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ եւ կեանքի առիթ դարձաւ իր համար, քանզի «խօսքը մերձ է քո բերանին եւ սրտին» [տես Բ Օր. Լ 14] եւ՝ «Սրտով հաւատում ենք արդարանալու համար եւ բերանով խոստովանում փրկուելու համար» [Հռոմ. Ժ 10]... (Արեւելցի): Հարսը ձեռք է բերել աստուածամանուկութեան սքանչելի գեղեցկութիւնը, որովհետեւ հրաժարուել է աշխարհական մեղսասէր խաբէութիւնից՝ շնորհիւ Բան Աստուծոյ մարմնաւորման... Բանը մարդացաւ, վերցրեց մարդկային բնութեան ամբողջականութիւնը, դատապարտեց մեղքը մարմնի մէջ եւ ցոյց տուեց Երկնքի արքայութեան ուղիղ ճանապարհը. դա մեր Տէր Յիսուս Քրիստոսի փրկագործ Աւետարանի ճանապարհն է: Մարմնացեալ Բանի աւետարանական տնօրէնութիւնների ողջ շղթան շաղկապուած է խոնարհութեան, հեղուկութեան, քաղցրութեան, անոխակալութեան, կարեկցանքի հանգոյցներով... Ահա այս ճանապարհով ուղեկցում է Հարսը Փեսային: Սակայն որտեղի՞ց Հարսին այդպիսի զօրութիւն, որ ուղեկից է դարձել անմատոյց Աստուածութեանը. Քրիստոսի Մարմնի եւ Արեան ահաւոր խորհրդից, որը զօրութիւն է տալիս մեզ, կարող դարձնում շուրթերով ըմպելու եւ ատամներով մանրելու Այն, Որին դուստրերը եւ թագուհիները, այսինքն՝ հրեշտակները, ի զօրու չեն նայելու (Նարեկացի):

10. Ես իմ Եղբորորդունս եմ, եւ դէպի ինձ է դառնալու Նա:

10. Արտայայտում է սբ Հաղորդութեամբ իրագործուող խորհրդական միութիւնը Փեսայի հետ՝ ըստ տէրունական վկայութեան. «Ով ուտում է Իմ Մարմինը, նա Իմ մէջ կը բնակուի, եւ Ես՝ նրա» [Յովհ. Ա 55, 57], եւ՝ «Ինչպէս Դո՛ւ, Հա՛յր, Իմ մէջ ես, եւ Ես՝ Քո մէջ, որպէսզի նրանք էլ Մեր մէջ լինեն» [Յովհ. Ժէ 21]: Դէպի ինձ է դառնալու... Այս խօսքում վախճանաբանական միութեան ակնարկ կայ, երբ գալու է Փեսան եւ իր փառքի մէջ դասելու եւ մեծարելու Հարսին (Նարեկացի):

Արեւելցին երկրորդում է բազմիցս նշուած մարմին-գլուխ միութիւնը:

11. Ե՛կ, Եղբորորդի՛ իմ, ելնենք ազարակները, գիշերենք գիղերում եւ պարտէզներում:

12. Կանոնի ելնենք այգիները. րեսանք, թե ծաղկե՞լ է որթը, ծաղկե՞լ է նո՞սին,<sup>39</sup> ծաղկե՞լ է նո՞սենին: Այնտեղ կը տամ Քեզ իմ ստիքները:

11–12. Հարսը հրաւիրում է Փեսային հաւատացեալների հաւաքի մէջ (Եկեղեցի), որոնք ծաղկեցին ազարակ-անդաստաններում՝ հանգստանալու հեզերի, խոնարհների եւ Նրա խօսքերից դողացողների գիղերում, որպէսզի եզիպտոսից կանուխ ելնեն դէպի փրկուած եւ պէսպէս առաքինութիւններով ծաղկած արդարների այգին (Որդինէս):

Ըստ Նարեկացու՝ Հարսը հրաւիրում է Փեսային երկնքից երկիր՝ տեսնելու, թէ ծաղկե՞լ է մարգարէների սերմանածը, որը պտղաբերից Նրա դալատեամբ (Առաջին Գալուստ): Համբարձումից յետոյ էլ Տէրը շրջից առաքեալների, վարդապետների եւ մարտիրոսների հետ՝ քարոզելու եւ տեսնելու հաւատքի խօսքերի ծաղիկը եւ պտուղը: Այս է վկայում տէրուսական խօսքը. «Ձեզ հետ եմ բոլոր օրերին մինչեւ աշխարհի վախճանը» [Մատթ. ԻԸ 20] (Նարեկացի):

Անդաստան (բնագրում՝ ազարակ) է անուանուած երկնային գաւառը, իսկ այգիները եւ նոսնիներն արգարներն են, որոնք երփներանգ գոյներով եւ տեսակ-տեսակ համերով փայլում են [երկնքի] արքայութիւնում (կեղծ-Հիպոդիտոս):

Ծաղիկը հաւատքի խորհրդանիշն է. նախ՝ որովհետեւ դեզ է, եւ երկրորդ՝ որովհետեւ գործերի պտուղների սիկզբն է: Ծաղիկը նաեւ խորհրդանշում է յոյսը. նախ՝ անուշահոտութեամբ եւ յոյսով զմայլուած են հոգիները, եւ երկրորդ՝ որովհետեւ կարապետն է պտղի, որ յաւիտենական արդիւնք է տալիս: Հարսը Փեսայի հետ ուզում է հաւատարմանալ, թէ ծաղկե՞լ են սուրբերի հոգիները, որովհետեւ յոյսով են ծաղկում եւ մխիթարուած: Եւ յոյսը երկու տեսակ է լինում. մէկը՝ մարմնաւոր, որ թուացեալ է եւ փոփոխական, իսկ միւսը՝ հոգեւոր, որ ստոյգ է եւ անփոփոխ (Տաթեակացի):

Այնտեղ կը տամ Քեզ իմ ստիքները, այսինքն՝ սուրբ սիրտը եւ ուղիղ հոգին (կեղծ-Հիպոդիտոս):

Ըստ Արեւելցու՝ ծաղկած նոսնիները խարազնազգեստ եւ թթուակենցաղ<sup>40</sup> կրօնաւորներն են:

Այնտեղ կը տամ Քեզ իմ ստիքները...

39 Տես Ա. 13:

40 Թթուակենցաղ – խստակեաց:

Հարսն ակնարկում է այն կերակրի մասին (հոգեւոր կերակուր), որ Քրիստոս ունէր պահպանած, եւ աշակերտները չգիտէին: Իսկ այժմ Հարսը պատրաստ է տալ Նրան ստինքները՝ օրհնութեան եւ աղօթքի, Նրա՛ն, Ով ախորժելով դրանք կամենում է աւելի, քան Աստծուն մատուցող զոհերը, եւ դրանք անուանում օրհնութեան պատարագ (Որոգիւնէս):

Ըստ Արեւելցու՝ Հարսը մարգարէների եւ Օրէնքի կաթով սնուցող ստինքները կամենում է տալ Քրիստոսի տնօրէնութեան երկրպագութեան եւ փառաբանութեան համար (Արեւելցի):

13. Մանրագորներն<sup>41</sup> արձակեցին իրենց հուրը. մէր դոնտրի մօտ ամէն տեսակ մրգաբեր ծառեր են՝ նորը հին հետը. այն, ինչ տուեց ինձ մայրս, պահեցի Քեզ համար, Եղբորորդի՛ Իմ:

13. Մանրագորները տուեցին իրենց հուրը. նկարագրւում են արդարութեամբ սպիտակացած արդարներն արքայութեան մէջ եւ նրանց վկայութեան անուշահոտ կատարումը (կեղծ-չիպոդիտոս):

Որոգիւնէսն այսպէս է մեկնում մանրագորի խորհուրդը. «Կատարեալների փոքրիկ առաքիւնութիւններն էլ են բուրում աղօթքի անուշահոտութեամբ»:

Ըստ Արեւելցու՝ մանրագորը խորհրդանշում է Հարսի ողջախոհութիւնը դաշտային խոնարհ բնութեան մէջ: Այդ հոտից բերկրում է Փեսան եւ դէպի մեզ խոնարհւում, սակայն չի կերակրւում, քանզի մեր պէտքը չունի (Արեւելցի):

Մեր դոնտրի մօտ ամէն տեսակ պտղաբեր ծառեր են՝ նորը հին հետ...

Բանի տնօրէնութեան ժամանակ Աւետարանի քարոզութիւնը միաւորուած է Օրէնքի հետ: «Հանում է,— ասում է,— տանուտէրն իր հին ու նոր դանձերից» [Մատթ. ԺԳ 52]:

Այն, ինչ տուեց ինձ մայրս...

41 Մանրագոր – (եբր. 8777 / duda) *Mandragora officinarum*: Լայն տերեւներով բազմամեայ բոյս է, ճմռանն ունի վարդաշուշանագոյն ծաղիկներ, դարձանը՝ անուշաբոյր կլոր դեղին պտուղներ, որոնք յիշեցնում են կիտրոն: Մեծութեամբ ոչ մեծ խնձորի չափ են՝ կարմրագեղնաուուն գոյնով եւ շատ հաճելի հոտով: Պտուղները բաւականին հաճելի համ ունեն, սակայն երբեմն խենթացնում եւ դրդուում են: Մանրագորը յայտնի է իր թուլացնող, փախեցնող եւ թմրեցնող յատկութիւններով: Նրա արմատներից պատրաստում են թմրեցուցիչ դեղեր:

Կա՛մ այն, ինչ ստացաւ դրախտի մէջ, կա՛մ այն, ինչ գուշակեցին Օրէնքը եւ մարգարէները Հին եւ Նոր Կտակարաններում...

Պատեցի Քեզ համար, քանզի Դու ես Օրէնքի լրումը՝ որպէս արդարութիւն բոլոր հաւատացեալների համար (Որոգիւնէս):

Արեւելցու մեկնութիւնը յուզական տարր ունի. Տիրոջ տնօրէնութեան դռների մօտ կանգնած են մարգարէները: Նրանց խօսքերը բախում են Աստուծոյ գթութեան դռները՝ խոնարհուելու դէպի երկիր եւ իջնելու... Նորը Հնի հետ է, այսինքն՝ առաքեալները՝ մարգարէները:

Նարեկացու մեկնութիւնն ընդհանրացնող բնոյթ ունի. մանրագործի անուշահոտութեան մէջ նա տեսնում է սրբութեան եւ առաքինութեան բոլոր բազմակերպութիւնների միութիւնը, որը մարդը Սուրբ Հոգով ստանում է Մայր-Եկեղեցուց (Աւագանի ծննդեամբ), եւ որը սնուցւում է Քրիստոսի Արեամբ (Նարեկացի):

Ը

1. Ո՛վ կը փար Քեզ, Եղբորդդի՛ իմ, ուրեւ իմ մօր սրիքներդ: Երբ հանդիպեմ դրսում, կը համբուրեմ Քեզ, եւ չես արհամարհի ինձ:

1. Ակնարկւում է պատուիրանի պահպանութիւնը, որից՝ իբրեւ ստինքներից, սնուեցինք: Երբ հանդիպեմ դրսում, կը համբուրեմ Քեզ. այսինքն՝ մարգեղութեամբդ կը մերձենամ Քո անհասանելի Աստուածութեանը... Սրբուեցի ապաշխարութեամբ ու կը համբուրեմ Քեզ, եւ չես արհամարհի, ինչպէս վայել իսկ է Աստուծուն (կեղծ-Հիպոդիտոս):

Որոգիւնէսեան ըմբռնումը փրկաբանական է. թէպէտ Փեսայ-Հարս յարաբերութիւնը զարգանում է ժամանակի մէջ (հինկտակարանեան ստուերը փոխւում է նորկտակարանեան լոյսին), սակայն, ըստ էութեան, այդ յարաբերութիւնը դուրս է ժամանակից: Հրեաները չէին ընդունում, որ Քրիստոսն է մարգարէների լրումը եւ ասում էին, թէ Գալիլեայից մարգարէ դուրս չի գայ: Հարսը կամենում է յետ դառնալ ժամանակի մէջ, մինչեւ Բանի մարմնանալը, մինչեւ Հարս-Փեսայ պսակը, մինչեւ Յովհաննէս Մկրտիչ, [հարսանեկան առագաստի] աստուածային շնորհներից դուրս գտնել Փեսային ու համբուրել եւ չի ցանկանում, որ Փեսան արհամարհի իրեն, ինչպէս չարհամարհեց մարգարէներին (Որոգիւնէս):

Ըստ Նարեկացու՝ այս խօսքն արտայայտում է սուրբերի սեփական անարժանութեան գիտակցումը: Սակայն այս գիտակցումն առ Աստուած խոր սիրոյ հետեւանքն է... Այդ սէրը կարող է արհամարհուել աշխարհի կողմից (սակայն ոչ՝ Փեսայի): Այդ սէրը ճաշակողներն արհամարհում են ամէն ինչ, որ աշխարհում է, մահուան, արեան, կատարեալ աղքատութեան միջով հասնում ու համբուրում Քրիստոսին եւ համբուրում Նրա կողմից (Նարեկացի):

Արեւելցին իր մեկնութեան սկզբում յիշատակում է սուրբգրային հետեւեալ տեղին՝ Մատթ. Ե 21–48: Հին Կտակարանի «մի՛ շնացիր»-ը վերափոխուում է «ցանկութեամբ մի՛ նայիր»-ի, «մի՛ սպանիր»-ը՝ «մի՛ բարկացիր»-ի: Հնի կաթնակերութիւնը վերափոխուում է Նորի կատարելութեանը: Ինքը Տէրն Իր մանկութեան տարիներին անուց այն ստինքներից (ըստ երեւոյթին՝ նկատի են առնուած Օրէնքը եւ մարգարէները)՝ թլփատուելով եւ քառասնօրեայ ընծայմամբ...

Եկեղեցի-Հարսն ամբողջացումն է Հին եւ Նոր Կտակարանների բոլոր սուրբերի: Թէպէտ յանցանքով արտաքսուել է դրախտից, սակայն, գտնելով Աստծուն Երկնքից դուրս՝ երկրի վրայ՝ Հարսի փրկութեան համար մարմնացած, համբուրել է մարգարէներով, Աստուածածնով, արեւելեան մոզերով, Սիմէոն ծերունիով... Հարսը խնդրում է չարիսմարիտ իրեն նախամօր մեղքի պատճառով (Արեւելցի):

2. Վերցնել, փանել Քեզ իմ Մօր փունը եւ ինձ Յղացողի սենեակը, արեցնել Քեզ խղաղործների գինին, իմ նուննիսների օշարակը:

2. Տունը եւ սենեակը մարդկային բնութիւնն են (Նարեկացի-Արեւելցի): Իմ Մօր, ինձ Յղացողի արտայայտութիւնների մեկնութիւնը Նարեկացին եւ Արեւելցին գիտում են երկու տարբեր, բայց խորապէս առնչուած գոյաբանական մակարդակներում՝ աստուածաբանական եւ մարդաբանական: Ըստ Նարեկացու՝ այս արտայայտութիւններն արարչագործական խորհուրդ են կրում... Աստուած է իմ Մայրը [եւ ինձ Յղացողը] արարչութեամբ: Փրկագործութեամբ մարդկային բնութիւնը դարձել է Աստուծոյ տաճար, հանգիստ, տուն, սենեակ... (Նարեկացի): Արեւելցին այս արտայայտութիւնների մեկնութեան մէջ ելնում է նրանց ուղղակի՝ գոյաբանական իմաստից: Իմ Մայրը նախամայր Եւան է, որ ցաւերով յղացաւ մեզ, այսինքն՝ մեղանչական, չարով առեւանգուած մարդկային բնութիւնը: Եւ ահա այդ բնութեան մէջ

յղացում եւ ծնում է Աստուած՝ Սուրբ Կոյսի սենեակում՝ մարգկային բնութիւնն Աստուծոյ տուն դարձնելով (Արեւելցի)։ Քրիստոսի Եկեղեցին իր ժառանգականութեամբ սերում է երկու ակունքից՝ հրէական եւ հեթանոսական։ Այս երկու ակունքները, մէկմէկու խորթ լինելով հանդերձ, ներքին կապ ունեն. այն, ինչ հրեաները գործում էին ըստ Օրէնքի, հեթանոսները բնութեամբ էին գործում՝ գիտութեան եւ ճշմարիտ փիլիսոփայութեան աջակցութեամբ։ Եւ իմ Սօր, ինձ Յիւզոյի արտայայտութիւններում հեթանոսական ակունքի ակնարկ կայ։ Հարսը կամենում է Փեսային մատուցել իր՝ հեթանոսութիւնից ստացած ընտիր ժառանգութիւնը՝ իւղագործների գինին, այսինքն՝ փիլիսոփաների իմաստութիւնը, եւ նոնենիների օշարակը, այսինքն՝ քաղաքական առաքինութիւնները<sup>42</sup> (Որոգինէս)։

Ըստ կեղծ-Հիպոդիտոսի՝ տունը մեր հոգու տաճարն է, իսկ ինձ Յիւզոյի սենեակը սիրտն է, որով յղանում ենք խորհուրդները։ Իւղագործների գինին Սուրբ Հոգու շնորհներն են՝ մարգկային բնութեամբ եփուած, իսկ նոնենիների օշարակը ծածուկ առաքինութիւններն են (կեղծ-Հիպոդիտոս)։

Համաձայն Նարեկացու՝ Հարսը, դառնալով Սուրբ Երրորդութեան բնակարան, խոստանում է արբեցնել Աստուծուն գինու ուրախութեամբ եւ նոնենիների օշարակով, այսինքն՝ առ Աստուած փշրուած սրտի խորհուրդներով, որոնցով կերակրւում եւ, որոնք ըմպելով, աճում է Աստուծոյ ներկայութիւնը մեր մէջ (Նարեկացի)։

Արեւելցին ելնում է փրկաբանական խորհրդածութիւններից. չարը ժանտ օձի միջոցով ըմպել է տուել չարի եւ բարու խառնակ գինին։ Քրիստոսը չօր կամքով ըմպում է նախատես մարգարէների հոգեշունչ խօսքերով պատրաստուած բաժակից (իւղագործների գինի), Նա անմեղօրէն, որպէս չարագործ, դատապարտւում է խաչի մահուան եւ ճշմարիտ շարունակութիւնն ու լրումն է հինկտակարանեան անմեղ նահատակների (Աբել, Եսայի, Միքիա, մակաբէացիներ), որոնք վկայական իւղ պատրաստեցին՝ այն եփելով ջերմ սիրով։ Այսպիսով՝ իւղագործների գինին սիրոյ վկայութիւն է կամ աւելի ստոյգ՝ վկայական սէրը... Նոնենիների օշարակն անուշահամ եւ բժշկարար է։ Սակայն հրէական նոնենիները կորցրել էին Օրէնքի քաղցրութիւնը եւ

42 Քաղաքական առաքինութիւնները տնտեսական եւ բարոյական առաքինութիւնների հետ կազմում են Պլատոնի նշանաւոր եռակարգութիւնը։



դառնացել մեղքի թանձրութեամբ, դարձել լեղի եւ քացախ, որոնք  
չկամեցաւ ըմպել Տէրը: Յիսուս Ինքն է դառնում նոսաւ բժշկարար  
օշարակ՝ Իր չարչարանքներով սրբելով մարդկային բնութեան  
դառնութիւնն ու տկարութիւնը...

Հարս-Եկեղեցին ցանկանում է Փեսային մատուցել մարտիրոսական  
օշարակը, այսինքն՝ Նրա սիրոյ համար կրած դառը, տտիպ եւ չարաչար  
տանջանքները՝ նախապէս արբելով նոսնահների օշարակից եւ իղա-  
գործների գինուց, ապա արժանանալով արբելու Քրիստոսի Արեան  
բաժակից (Արեւելից):

3. Նրա ձախ ձեռքը գլխիս րակ է, եւ Նրա աջը թող գրկի ինձ:

3. Փեսայի աջ եւ ձախ կողմերում մարգարէներն ու առաքեալներն  
են, որոնցով Նա հիմնել է Եկեղեցին (Որոգինէս):

Ըստ Նարեկացու՝ արտայայտուած է Հարս-Եկեղեցու նկատմամբ  
Փեսայի պահպանութիւնը եւ վերակացութիւնը (Նարեկացի):

Արեւելցու մեկնութիւնը կապուած է խաչի խորհրդի հետ. ըստ  
հրեաների՝ խաչի մահը ձախ, այսինքն՝ բացասական երեւոյթ է, սակայն  
Հարսի համար աջ է, այսինքն՝ յաջող: Նրա աջը խաչի գօրութեամբ  
գրկել է Հարսին՝ խոնարհեցնելով բոլոր երեւելի եւ աներեւոյթ  
փորձութիւնները (ձախ) եւ բարձրացնելով Հարսի գլուխը (Արեւելից):

Այսպիսով՝ անէծքի փայտը դառնում է փրկութեան նշան:  
Պատուանդանը ցոյց է տալիս դժոխքի աւերումը, գլուխը՝ արքայու-  
թեան բացումը, ձախ թելը՝ մեղքերի թողութիւնը, եւ աջը՝ շնորհների  
բաշխումը: Ուստի խաչակնքում ենք ձախից աջ, քանզի նախ մեղքերի  
թողութիւնն է, եւ ապա՝ շնորհների բաշխումը (Տաթեւացի):

4. Երդուցնում եմ ձեզ, դուարե՛ր Երուսաղէմի, ազարակի զօրութիւն-  
ներով եւ հասարարութիւններով. եթէ վեր կենասք, արթնացրէ՛ք Սէրն  
Իր կամենալուն պէս:

4. Հարսը վերստին պահանջում է Հոգուց, որ մարդիկ առաքուեն՝  
արթնացնելու Քրիստոսի սէրը Եկեղեցու վրայ (Որոգինէս):

Ըստ Նարեկացու՝ այստեղ ակնարկ կայ մեզ վրայ հեղուած  
բազմադիմի շնորհների եւ անիմանալի պարգևների... Հարսը երգմամբ  
յորդորում է հրեշտակներին փառաբանակից լինել իրեն, գոհաբանակից  
լինել Աստուծոյ առ մեզ սիրոյ համար եւ արթնացնել սէրը: Քանի որ

իրեն բաւական չի համարում Աստուծոյ երախտիքների օրհնութեան համար, ուստի հրեշտակներին մասնակցութեան կոչ է անում, որպէսզի առաւել զարթնի Նրա սէրը մեր հանդէպ (Նարեկացի):

Առաւել խորունկ է Արեւելցու մեկնութիւնը: Հարսը երգուեցնում է Եկեղեցու անդաստաններով, Սուրբ Նաչի գորութեամբ եւ հաւատքի ուժգնութեամբ՝ կոչ անելով, որ մարդիկ վեր կենան թերահաւատութեան գլորումից, մահուան քնից եւ մեղքերի սահեցումից: «Արթնացրէ՛ք Նրա սէրը, որ ծածկապէս ննջում է ձեր մէջ: Երկնքի արքայութիւնը ձեր ներսում է, արթնացրէ՛ք բարի գործերով, պայծառ լամպերով՝ իմաստուն կոյսերի պէս: Արթնացրէ՛ք ներողամտութեան ժամանակը, մեղքերի թողութիւն, փրկութիւն եւ ճշմարիտ գիտութեան գա՛լը հայցէք»: Հարսը յորդորում է կենաց Կամեցողի դուռը բախել աղօթքով, որպէսզի կատարուի Նրա կամքը մարդկանց մէջ, այսինքն՝ բոլորը լինեն բարի յօժարութեամբ, բեւեռուած Նրա երկիւղով ու սիրով եւ որդիների պէս սիրոյ մէջ լինեն (Արեւելցի):

Հարսը չորրորդ անգամ երգուեցնում է դուստրերին: Ինչո՞ւ. չորս կերպով զարթնեց Քրիստոս՝ ծնուելով, մկրտուելով, խաչուելով եւ յարութիւն առնելով: Չորս կերպով զարթնում է նաեւ Աստուծոյ սէրը՝ Օրէնքով, մարդեղութեամբ, դժոխքի յարութեամբ, համընդհանուր յարութեամբ... (Տաթեւացի):

Դուստրերը եւ թագուհիներն ասում են.

5. Ո՞վ է սա, որ ելել գալիս է սպիտակացած, գալիս է՝ յենուած իր Եղբորորդուն:

Փեսան ասում է Հարսին.

Արթնացրի քեզ ինձորենու փակ. այնպէղ քո Մայրը երկնեց քեզ, այնպէղ քո Ծնողը ծնեց քեզ:

5. Հրեշտակները տեսնում են մարդկանց սպիտակացած, այսինքն՝ հրեշտակների պէս արդարացած, եւ զարմանում... (Կեղծ-Հիպոդիոտոս): Հրեշտակները զարմանում են, թէ Քրիստոսի Արիւնն ինչպէս սպիտակեցրեց Եկեղեցին ախտերից, ինչպէս Յայտնութեան մէջ լսեց Յովհաննէսը [տես Յայտ. է 14] (Որոզինէս): Հրեշտակները զարմանում եւ հիանում են անարգ եւ աղտեղի բնութեան մաքրութեան եւ առաքինագարդ լուսաւորութեան վրայ, որ այսպիսի շնորհների արժանացաւ: Հարսը, միացած իր Եղբորորդուն՝ Քրիստոսին, եւ

Նրան յենուած, հընում է այնտեղ, ուր բնակուում են հրեշտակային բանակները. Քրիստոս ուղեկցում եւ բարձրացնում է մեզ ընկած հրեշտակների տեղերը, որպէսզի նրան, ում չհանդուրժեց տեսնել զբախտում, տեսնի Իր փառքի մէջ (Նարեկացի-Արեւելցի):

Ըստ Որոգինէսի՝ ասուում է, թէ՛ Բանի մարմնաւորման խորհրդի ներքոյ արթնացրի քեզ հաւատքի մէջ: Քո մայր-մարգարէներն այսպէս երկնեցին քո փրկութեան խորհուրդը, եւ այսպէս ծնուեցիր Մարմնացածի շնորհով՝ փրկուելու հաւատքով (Որոգինէս):

Նարեկացին հետեւեալ օրինակն է բերում. ինչպէս հաւերը, երկար ժամանակ նստելով ձուերի վրայ, Արարչի հրամանով կենդանաստեղծում են իրենց ջերմութեամբ, այնպէս էլ մեր բնութիւնը, երկար ժամանակ դրուած լինելով Օրէնքի եւ մարգարէական պատգամների ներքոյ, երկնեց Աստուծոց: Նարեկացին մայրը եւ ծնողը մեկնում է որպէս Հայր Աստուծոյ մասին ասուած այլաբանութիւններ (Նարեկացի):

Արեւելցին մեղքով սկզբնաւորուած գոյաբանական երկունքը հակադրում է Քրիստոսի փրկագործութեամբ հաստատուած շնորհական ծնունդին: Մեղքի մայրական սկիզբը վերափոխուում է շնորհի մայրութեան (Արեւելցի):

Իսնձորնային նաեւ եկեղեցու խորհուրդն է ներկայացնում: Նրա տակ մենք ննջում ենք մահուամբ եւ զարթնում յարութեամբ (Աւագանի ծնունդ): Այնտեղ՝ զբախտում, Եւան երկնեց եւ տրամութեամբ ծնեց երկրի վրայ, այստեղ յարութեամբ ծնում ենք երկնքի արքայութեան մէջ, քանզի, եթէ չմեղանչէինք զբախտի մէջ, ծնուելու էինք առանց ախտի աղտեղութեան, ինչպէս սուրբ Կոյս Մարիամը ծնեց առանց տրամութեան, երկունքի եւ ցաւերի (Տաթեւացի):

Կեղծ-Հիպոդիտոսի ըմբռնումները վախճանաբանական են: Այս խօսքը ցոյց է տալիս երկրի հողում սուրբ սրտով եւ անուշահոտ առաքինութեամբ ննջածներին: Իսկ արթնացրի քեզն ակնարկում է, որ ննջեցեալների բազում մարմիններ յարութիւն առան եւ մտան Սուրբ Քաղաք, եւ նրանք բոլորը պիտի յարութիւն առնեն [Վերջին Օրը]: Մայրը, Ծնողը, ինչպէս արդէն բազմիցս ասուել է, Արարիչ Աստուած է (Կեղծ-Հիպոդիտոս):

6. Դի՛ր Ինձ որպէս կնիք քո սրբի վրայ եւ որպէս մատանի՝ քո այ ձեռքին: Քանզի սերը հզօր է մահուան պէս, եւ նախանձը՝ խիստ՝ դժոխքի պէս, նրա թոխքը՝ հրի բոցի թոխքի պէս:

6. Փեսան մաղթում է Հարսին տեսական եւ գործնական առաքինութիւններ ունենալ եւ յիշել, որ ո՛չ թէ իր առաքինութիւններով է ժառանգել երկիրը եւ իր բազկով փրկուել, այլ Աստուծոյ Աջով եւ Բազկով (կեղծ-Հիպոդիտոս):

Որոգինէսը դիր Ինձ որպէս կնիք քո սրտի վրան զուգահեռ է տեսնում աւետարանական խօսքին՝ «Եղէ՛ք դուք Իմ մէջ, եւ Ես՝ ձեռք» [Յովհ. ԺԵ 5]: Իսկ մատանին գործերի խորհուրդն է կրում, այսինքն՝ այն, ինչ արել են Տիրոջ հետ, նոյնը Նրա անուան համար անելու են Նրա հետեւորդները հետ (Որոգինէս):

Նարեկացին այստեղ ներքին մարդուն ուղղուած հոգեւոր շրջահայեցութեան կոչ է տեսնում. քրիստոնեան պէտք է իր սիրտը եւ բազուկները պահպանի եւ կնքի Քրիստոսով, յիշի Նրա փրկագործ անօրէնութեան երախտքները, չտայ իր սիրտը սատանայի խորհուրդներին եւ իր բազուկները՝ նրա գործերին, այլ բարու շտեմարան դարձնի իր սիրտը եւ ճշմարիտ պատուիրանապահութեամբ կնքի իր ձեռքերը, որպէսզի կեղծաւորութեամբ եւ մարդահաճութեամբ չկատարի պատուիրանը (աղօթքի, ողորմութեան եւ այլն): Քրիստոս Քահանայ է եւ Թագաւոր: Մկրտութեամբ իւրաքանչիւր քրիստոնեայ կնքում է քահանայական շնորհով եւ թագաւորական դրոշմ ստանում իր ճակատին: Մկրտութեան այս մեծ շնորհները նա պէտք է անաղարտ պահի բարի գործերով ի փառս Աստուծոյ (Նարեկացի-Արեւելիցի-Տաթեւացի):

Աստուած սէր է, եւ Նրան սիրողները ոչինչ համարեցին ահաւոր մահը: Եւ՝ դժոխքի պէս նախանձը. սուրբերը, նախանձաւոր լինելով Աստուծոյ համար՝ «Քո տան նախանձը կ'ոտի Ինձ» [Սաղմ. ԿԸ 10], դժոխային չարչարանքների ենթարկուեցին (Հիպոդիտոս):

«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր միածին Որդուն չխնայեց» [Յովհ. Գ 16], եւ Ինքը՝ Միածինը, Իր սիրելիի տան մէջ յօժարութեամբ ճաշակեց մահը (Որոգինէս):

Այստեղ կատարեալ եւ հոգեւոր սիրոյ ահնարկ կայ... Մարմնաւոր սէրը մահուան իշխանութեան տակ է, իսկ առ Աստուած հոգեւոր սէրն աւելի մեծ է, քան մահը (Արեւելիցի-Տաթեւացի):

Աստուած ասում է. «Ես նախանձոտ եմ. Իմ փառքը, որ մարդն է, չեմ կամենում, որ գերի լինի սատանային եւ ապստամբ վիշապին»: Եւ Աստուած իջաւ դժոխք, ուր հոգիներն էին, եւ նրանց կորզեց դազանի բերանից (Արեւելիցի):

*Որոգիւնէսը* հրի բոցի թռիչքի պէս արտայայտութիւնը կապում է Աստուծոյ մարմնաւորման տնօրինական ընթացքի հետ: Բանն Աստուած որպէս հուր գալիս եւ մարմին է առնում սուրբ Կոյսից, հրի պէս շարժուած մարդկային բնութեան բոլոր կրքերի միջով՝ այրելով մեր բնութեան մէջ ներգոյացած մեղքի մթերումները, հրի պէս բարձրանում խաչ եւ հրի պէս բարձրանում-թռչում առ Հայր ու նստում Նրա աջ կողմում (*Որոգիւնէս*):

Սակայն Քրիստոս անբաժան է Իր Եկեղեցուց մինչեւ վախճան. Նա որպէս հուր գալիս եւ ներկայ է բոլոր եկեղեցիներում պատարագի ժամանակ, հաւատքով շրջում է մեզ հետ եւ հալեցնում մեղքի սառոյցը (*Հիպոդիտոս*):

7. Բազում ջրերը չեն կարողանայ մարել սէրը, եւ գելերը չեն արգելի նրան: Եթէ մարդ իր ամբողջ կեանքը փայ սիրոյ համար, արհամարհելով կ'արհամարհուի:

7. Նկատի է առնուած այն, որ կռակաշտութեան հեղեղները եւ անօրէնութեան մեղքերի գետերը չկարողացան արգելիլ Բանի մարմնաւորման խորհուրդը, չկարողացան հանգցնել Աստուծոյ մարդասիրութեան գուլթը (*Որոգիւնէս-Արեւելցի*): Այստեղ գեղեցիկ պատկեր է օգտագործում Արեւելցին. «Նա, այսինքն՝ չարը, որ սառեց ու սառցակալեց Աստուծոյ սիրուց եւ Նրա բարկութիւնից հալուեց ու որպէս ջուր հոսում-իջնում էր աշխարհ, որ իրեն էր նմանեցնում եւ նմանեցնում է շատերին, չի կարող հանգցնել այն սէրը, որ միշտ Մարմին եւ Արիւն է լինում բոլոր եկեղեցիներում եւ բաշխում մեր մեղքերի քաւութեան համար» (*Արեւելցի*):

Այլ հարթութեան մէջ է մեկնում Հիպոդիտոս վարդապետը. «Մարգարէների ջրերը եւ առաքեալների քարոզութեան գետերը չէին կարող ապրեցնել մարդկանց, եթէ Աստուծոյ գլխութիւնը չընկնէր նրանց սիրտը» (*Հիպոդիտոս*):

Եթէ մարդ իր ամբողջ կեանքը տայ սիրոյ համար, արհամարհուելով կ'արհամարհուի... Նկատի են առնուած Բանի գալուստը (մարմնաւորումը) մերժողները, այսինքն՝ հրեաները, որոնք, ի սէր Օրէնքի, մոլորութեան մէջ են ընկել եւ չեն կամենում Քրիստոսի սէրը. այդպիսիները հէնց Օրէնքի կողմից կ'արհամարհուեն (*Որոգիւնէս-Արեւելցի*): Այստեղ նաեւ գգուչացում կայ կեղծ սիրոյ դէմ. եթէ

մարդն իր ամբողջ կեանքը տայ Քրիստոսի սիրոյ համար՝ հրով ու սրով մեռնելով, եւ կարծի, թէ կարող է հատուցել Նրա սէրը, այսինքն՝ հպարտանայ առաքիներութիւններով, արհամարհուելով կ'արհամարհուի Աստուծոյ եւ մարդկանց առաջ (Արեւելցի): Ըստ Նարեկացու՝ այս խօսքը զգուշացնում է մարմնաւոր սիրոյ դէմ, մանաւանդ՝ մեղքերի սիրոյ. եւ որքան մեծ է այսպիսի սէրը, այնքան աւելի արհամարհելի է (Նարեկացի):

Կենարարն ասում է. «Ի՞նչ օգուտ մարդուն, եթէ ողջ աշխարհը շահի եւ իր անձը կորցնի» [Մատթ. ԺՁ 26], եւ՝ «Ով ամօթ համարի Ինձ եւ Իմ խօսքերը, նրան էլ Մարդու Որդին ամօթ կ'աւսի, երբ գայ» [տես Ղուկ. Թ՝ 26], սա՛ է արհամարհելով կ'արհամարհուին (կեղծ-Հիպոդիտոս):

Օրիորդներն ասում են.

Ց. Մեր քոյրը փոքրիկ է եւ սրինքներ չունի. ի՞նչ անենք մեր քրոջն այն օրը, երբ ուզեն նրան:

Ճ. Հինկտակարանեան Եկեղեցու մասին է. այն փոքր է, քանզի չի բազմացել եկեղեցիներով, ինչպէս Յովհաննէս Մկրտչից յետոյ՝ Սուրբ Հոգու գալստեամբ: Հարսը դեռ չուներ այնպիսի սաինքներ, ինչպիսիք ձեռք բերեց Բանի մարմնաւորումով եւ ապա Սուրբ Հոգին ստանալով (Որոգիւնէս): Այս խօսքի եզրափակման մէջ տարակուսանք կայ. ի՞նչ պիտի անենք այն օրը, երբ ուզեն [ըստ գրաբարեան բնագրի՝ պատմեն] նրան... Արեւելցին յիշում է Նոյին, երբ նրան պատմուեց ջրհեղեղի մասին, յիշում է Աբրահամին, երբ նրան պատմուեց Սոգոմի եւ Գոմորի կործանման մասին... (Արեւելցի): Այսինքն՝ հրեշտակները տարակուսում են մարդկային տկար բնութեան համար, որ հասու եղաւ անտանելի եւ աստուածային խորհուրդներին, փառքին, տեսութեանը եւ գիտութեանը: Նրանք յատկապէս տարակուսում են Բանի մարմնաւորման անճառելի խորհրդի վերաբերեալ, այսինքն՝ ինչպէ՞ս պիտի Աստուած միաւորուի հողեղէն բնութեան հետ, առանց մեղքի անցնի մարդկային բնութեան կրքերի միջով, դատապարտի մեղքը մարմնում եւ աստուածացնի մեր բնութիւնը, ինչպէ՞ս պիտի տեղի ունենայ անկարելին: Եւ արդարեւ, սա «գայթակղութիւն է՝ հրեաների եւ յիմարութիւն՝ հեթանոսների համար» [տես Ա. Կոր. Ա՝ 23] եւ առանց Սուրբ Հոգու՝ անհաւատալի՝ մարդկանց համար (Նարեկացի):

9. Եթէ պարիսպ լինի, նրա վրայ շինենք արծաթ՝ մահարձաններ: Եթէ դուռ լինի, նրա վրայ եղենափայտայտայ փախարակներ ամրացնենք:

Հարսը համարձակում է եւ ասում.

10. Ես պարիսպ եմ, եւ իմ ստինքները նման են աշտարակների, Նրա աչքին եւ [երեսում] էի խաղաղութիւնը գրածի նման:

9–10. Նկատի է առնուած մարդկային բնութիւնը՝ պարսպապատուած առաքինութեան պէս-պէս քարերով: Արծաթեղէն մարտկոցները (բնագրում՝ մահարձաններ) Աստուծոյ անարատ խօսքի սպասաւորներն են, որոնք ախոյեան դարձան չար հերձուածողների դէմ եւ անխռով պահեցին Եկեղեցին, իսկ ստինք-աշտարակները կերակրուած են Եկեղեցու մանկանց (Որոգիներէս): Ըստ Արեւելցու՝ պարսպի նախօրինակը Նոյ նահապետն է, որ թոյլ չտուեց թշնամուն մեղքով իսպառ տիրել մեր բնութեանը, երբ Աստուած յայտնեց ջրերի դալստեան մասին, եւ Նոյը սկսեց շինել տապանը [տես Ծն. 9 7–14] (Արեւելցի): Հրեշտակական զգուշութիւններ (մարտկոցներ) են պէտք՝ մարտնչելու Աստուծոյ քաղաքի (մարդկային բնութեան) թշնամիների դէմ եւ պահպանելու դուռը, որով մտնում է Տէրը: Այդ դուռը պէտք է անփոք եւ մնայուն դործերով (եղեւնափայտեայ տախտակներ) ամրացուի (Հիպոդիտոս):

Սակայն ի՞նչ է դուռը: Եկեղեցու դուռ է Աբրահամը, որով բացուեցին Հաւատքի դռները (Արեւելցի): Օրէնքի դուռ եղաւ Մովսէսը, շնորհի դուռ եղաւ Յովհաննէսը, իսկ Քրիստոս եղաւ արքայութեան դուռը... (Տաթեւացի): Ըստ Որոգիներէսի՝ դռան վրայ ամրացուած տախտակները Քրիստոսից եւ առաքեալներից յետոյ եկած վկաներն են՝ ճգնութիւններով եւ հոգեւոր հանդէսով (Որոգիներէս):

Հարսը համարձակում է եւ ասում. «Ես պարիսպ եմ, եւ իմ ստինքները նման են աշտարակների»: Այսինքն՝ չատ մի՛ մտահոգուէք իմ տկար բնութեան պատճառով, քանզի Ամենակարողի զօրութեամբ փոքրս աւելի մեծ եմ, քան պարիսպը, եւ ամուր, եւ անստինքս աշտարակի նման ստինքներ ունեմ: Քանզի Ով ոչնչից արարեց երկինքը եւ երկիրը, մեր եւ ձեր բնութիւնները, Նա ինձ մեծացրեց եւ իմ ստինքներն աւելի մեծ դարձրեց, քան ձերը, քանզի այն, ինչ դուք չէք կարող լսել, տանել եւ կրել, իմ տկար բնութիւնը, աւելի կարող լինելով ձեզանից, լսեց, տարաւ եւ Հաւատաց...

Ես՝ կորուսեալս, որ պատերազմի եւ խռովութեան մէջ էի երկնայինների եւ երկրայինների հետ մեր ապստամբութեան պատճառով,

այժմ Փեսայի խաչով ճշմարտապէս խաղաղութիւն ունեցայ եւ դարձի եկայ մոլորութիւնից (Նարեկացի):

Հարսը ձեռք է բերել շնորհական համարձակութիւն, որի մասին վկայում է. ինքն ամուր պարիսպ է անմարմին սատանայի եւ չար բռնաւորների, մեղքի եւ հերձուածողների դէմ: Նրա ստիւքներն աշտարակներ են՝ լի Աստուծոյ անճառ սիրով եւ անբաւ բարիքներով (Արեւելցի-Տաթեւացի):

Այստեղ Արեւելցին ուշադրաւ միտք է արտայայտում. Տիրոջ մարդեղութիւնն ամուր պարիսպ եղաւ երկնայինների համար, քանզի ապստամբութեան պատճառն այն էր, որ չէին տեսնում Նրան: Բանի մարմնաւորումից յետոյ այլեւս անկման կասկած եւ պատճառ չկայ, քանզի տեսնում են Նրան մարմնով, եւ ոչ ոք չի համարձակում եւ կամենում բաժանուել Նրա անչափ գեղեցկութիւնից... (Արեւելցի):

11. Սողոմոնը մի այգի ուներ Բելմաւոնում, Իր այգին րոնեց պահապաններին: Իրաքանչիւր այր նրա պողի փոխաբէն հազար արծաթ պիտի բերի:

12. Իմ այգին իմ առջեւն է. հազարներ՝ Սողոմոնին եւ երկու հարիւր՝ պահապաններին, որ պահում են նրա պրտողը:

11–12. Բելմաւոնը մի երկիր է Յուդայի ցեղի վիճակից. այնտեղ Սողոմոնը հազար այգի տնկեց եւ տուեց երկու հարիւր պահապաններին՝ հինգ-հինգ բաժանելով իւրաքանչիւրին եւ պատուիրելով, որ ամէն մէկը հազարական արծաթ բերի իրեն: Եւ արքան զբօսնում էր այգիներում, քանզի կից էին միմեանց որպէս մէկ ամբողջական այգի. ահա թէ ինչու է ասում. Իմ այգին իմ առջեւն է. Սողոմոնին՝ հազարներ, քանզի նրա անուկնով էին կոչւում, եւ երկու հարիւր պահապանները պահում էին նրա պտուղները: Երկու հարիւր հազար արծաթը դրւում էր ի պէտս տաճարի եւ սպասաւորների<sup>43</sup>: Սողոմոնի այգին խորհրդանշում է Հարսին, քանզի ինչպէս Սողոմոնը նշանակում է խաղաղութիւն, եւ Երուսաղէմը նրան հոմանուն<sup>44</sup> է, ուր շինուեց սուրբ տաճարը, այնպէս էլ հոգեւոր Սողոմոնը՝ Քրիստոս, հաստատեց Իր Եկեղեցին, որ Տիրոջ անուամբ կոչւում է խաղաղութիւն, եւ ուր գայլեր եւ գառներ, եզներ եւ առիւծներ միաբանուած՝ մի կողմ թողեցին գազանութիւնը: Արդ՝

43 Այս պատմութեան աղբիւրը չկարողացանք ճշտել:

44 Հոմանուն – նոյնիմաստ անուն, նոյնանիչ:



այս ճշմարիտ խաղաղութեան խորհրդով Իրեն անուանեց Որթ, իսկ հաւատացեալներին՝ Իր վրայ արմատացած ողկուզաբեր ուռեր եւ ոստեր: Հօր գթութեան եւ սիրոյ մշակութեամբ ու խնամքով եւ Հոգու ոռոգմամբ՝ հազարներով աճեցին այս ուռերը...

Հազարը մեծախորհուրդ թիւ է, որով ներկայացուած է Տիրոջ այգին. այնտեղ Աստուծոյ անճառելի սիրով միաւորուած են ճշմարիտ հարիւրաւորները (որոնք էլ իրենց մէջ ներառուած են վաթսնաւորները եւ երեսնաւորները)... Հազար թուով նաեւ ներկայացուած է Աստուծոյ նահատակների քաջութեան պտուղը, որը՝ որպէս հազար կողմից մատուցուած անուշ եւ ուրախարար գինի, զուարճացրեց այգու Տիրոջը՝ ճշմարիտ Սոզոմոնին:

Այս այգին Տիրոջ փրկագործած Նոր Իսրայէլի այգին է, որ առաքեալների եւ նրանց աշակերտների պահպանութեանը յանձնուեց: Արծաթը խորհուրդն է Տիրոջ խօսքի, որ սուրբ է, արդար եւ անբիծ, որով Աստուծոյ խօսքի սպասաւորները մշակում են Տիրոջ բանաւոր այգին եւ պահում, իսկ հազարով ակնարկուած է Տիրոջ սերմանած խօսքի պտղաբերութիւնը (Հիպոդիտոս-Որոգինէս-Արեւելիցի):

Անապական եւ մաքուր արծաթը նաեւ երկնքում պահուող անապական գանձերն է, որոնց չեն ապականում ցեցերը եւ ուտիճները (Որոգինէս): Եւ դարձեալ՝ արծաթը ընտրեալ սուրբերն են, որոնք պտղաբերեցին հազար կատարեալ թուով (Նարեկացի):

Տաթեւացին նաեւ նշում է, որ իւրաքանչիւր անձ Տիրոջ այգի է եւ իր պտուղը պիտի մատուցի Տիրոջը, ինչպէս տանուտէրերը՝ իրենց տան, վանահայրերը՝ միաբանների, իշխանները՝ երկրի, քահանաները՝ ժողովրդի արդիւնքը պիտի մատուցեն:

Բելմաունի այգին խորհրդանշում է նաեւ պատուիրանի այգին, որ Աստուած տուեց առաջին այգու կորստից յետոյ (կեղծ-Հիպոդիտոս):

Հարսն ասում է.

13. Դո՛ւ, որ նստած ես պարտէզում, եւ ուրիշները լսում են Քեզ, լսելի՛ արա ինձ Քո ձայնը:

13. Որ նստած ես պարտէզում... Ըստ Որոգինէսի՝ պարտէզը գերեզմանն է, ուր, խաչից իջեցնելով, դրեցին Տիրոջ մարմինը: Տիրոջ մահը գայթակղութիւն էր հրեաների համար, որոնք խցեցին իրենց ականջները փրկութեան աւետիսի առաջ, սակայն հեթանոսների (ուրիշներ)

սիրտը խոցւում է Աստուծոյ սիրով... Նրանք հեթանոսական խաւարից դէպի ճշմարտութեան լոյս են ձգտում՝ բաղձալով լսել Աստուծոյ ձայնը (Որոգիւնէս): Քրիստոսի մահը փրկագործ մահ է, յարութեան մահ... Այս է յուշում նստած եւ արտայայտութիւնը. այսինքն՝ Տիրոջ մարմինը ենթակայ չէ խաւարային նինջին, այն «արթուն» Մարմին է, փրկութեան մարմին՝ Աստուածութիւնից անբաժան:

Մարդկութեան փրկագործութեան տնօրինական ընթացքն իր լրմանը պիտի հասնի համընդհանուր յարութեանը, երբ բոլորը յարութեամբ բուսնեն: Այդ Օրը բոլոր գերեզմաններում գտնուողները լսելու են Աստուծոյ Որդու ձայնը, եւ փրկուելու են նրանք, որոնց ցանկանայ Հարսը:

Դարձեալ՝ պարտէզը մեր բնութիւնն է, ուր բովանդակուեց Աստուած եւ նրանից մարմին վերցրեց եւ բարձրացնելով նստեցրեց Հօր աջ կողմում: Եւ գալու է նոյն մարմնով: Իսկ ուրիշները լսում են Քեզ. այսինքն՝ Քեզ են սպասում արդարները, մինչեւ հատուցես [Հմմտ. Սաղմ. ԾնԱ. 8]: Հաւատացեալները դիմում են Քրիստոսին. «Վերջին օրը լսելի՛ արա Քո ձայնը, թէ՛ եկէ՛ք, Իմ Հօ՛ր օրհնեալներ... [տես Մատթ. ԻԵ 34]»: Արդարները դիմում են Քրիստոսին, որպէսզի արժանացնի լսելու ցնծութեան եւ ուրախութեան ձայնը, երբ դայ եւ նորոգի նրանց աղքատացած ոսկորները (Հիպոդիտոս-Արեւելցի):

Նարեկացին անդրադառնում է այս խօսքի եկեղեցաբանական-փրկաբանական նիստին...

Պարտէզը Հարս եկեղեցին է, ուր նստած է Քրիստոս: Եկեղեցին, զօրացած Քրիստոսով, պտղաբերում է Աստծուն, սակայն Հարսը կամենում է ամմոլար հետեւել Փեսային, ուստի ցանկանում է հրեշտակների պէս անընդհատ լսել Տիրոջ ձայնը (Նարեկացի):

14. Փախի՛ր, Եղբորդդի՛ իմ, եւ նմանուի՛ր այժեամբ կամ եղնիկների հորթերի՛ խնկարել լեռների վրայ:

14. Փախի՛ր... հրեաների անհաւատութիւնից դէպի հեթանոսները (նաեւ՝ Սուրբ Հոգին է փախչում նենգութիւնից) (Առաջին Գալուստ):

Փախի՛ր... Ծտապի՛ր այժեամբերի եւ եղնիկների պէս՝ կատարելու ԱՀեզ Դատաստանը, յագեցնելու սուրբերի անձկալի կարօտը, վերցնելու նրանց սաստիկ նեղութիւնները եւ խորտակելու չարի սուտ թագաւորութիւնը (Երկրորդ Գալուստ) (Հիպոդիտոս):

Խնկաբեր լեռների վրայ... *այսինքն՝ երկնքի ամպերի վրայ զօրու-  
թեամբ բազմած՝ հրեղէն զօրքերի բիւրաւոր բանակաների եւ սրաթուիչ  
արծիւնների՝ կատարեալ արդարների վրայ, որոնք գալիս են Նրա առ-  
ջեւից ահեղ կառքերով, բարձրագոյն փողերով՝ հրաւիրելով ընդառաջ  
ելնել Փեսային: Ինչո՞ւ են լեռներ անուանուում. որովհետեւ անշարժ  
եւ անսայթաք մնացին Աստուծոյ կամքի մէջ եւ իսկապէս մեծամեծ  
են եւ ազդու, լեռնացած՝ առաքինութեամբ եւ անուշահոտ վարքով:  
Այլեւ՝ խնկաբեր են, որովհետեւ որպէս պատարագներ եւ նուէրներ են  
Աստծուն՝ մշտապէս ողջակիզուելով անուշահոտութեամբ:*

Փախի՛ր, Եղբորորդի՛... *մեր անթիւ չարիքներից, դարձի՛ր դէպի Քո  
առաջին բարին: Քո խաչի չարչարանքներով սպանի՛ր, հեռացրո՛ւ,  
ոչնչացրո՛ւ չարի խոցման սպիները մեր բնութիւնից եւ այն լցրո՛ւ  
անուշաբոյր հաւատքով եւ Աստուածութեանդ լոյսով, օգնի՛ր մեզ  
մեր փրկութեան մէջ, նորոգի՛ր յարութեան յոյսով եւ արժանացրո՛ւ  
բերկրանքով տեսնելու Ամենասուրբ Երրորդութիւնդ եւ Սուրբ Եկե-  
ղեցւոյ լրումը (Որոգիւնէս-Նարեկացի-Արեւելցի):*

**ԵՐԳ ԵՐԳՈՑ**

(Բնագիր)

**ԵՐԳ ԵՐԳՈՑ,  
ՈՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Է՝  
ԱՍՈՒԱԾ ԻՍՐԱՅԷԼԻ ԱՐՔԱՅ ՍՈՂՈՄՈՆԻ ԿՈՂՄԻՑ**

**Ա**

Հարսն ասում է.

1. Թող համբուրի ինձ Իր քերանի համբոյրներով, քանզի Քո սրիսքները լաւ են գինաց, եւ Քո խղերի հուրը՝ բոյոր խունկերից:
2. Քո անունը հեղուած անուշ խղ է, որա համար օրիորդները սիրեցին Քեզ եւ [ղէպի իրենց] ձգեցին Քեզ:
3. Քո խղերի յեպեից կ'ընթանանք մենք:

Հարսը պատմում է օրիորդներին Փեսայի մասին, թէ ինչ է շնորհել իրեն.

Արքան ցարա ինձ Իր սենեակը:

Հարսը պատմում է օրիորդներին, եւ նրանք ասում են.

Ցնծանք եւ ուրախ լինենք քեզանով եւ սիրենք քո սրիսքները գինաց աւելի:

Օրիորդները Հարսին ասում են Փեսայի անունը.

Ուղղութիւնը սիրեց քեզ:

Հարսն ասում է.

4. Սեւ եւ եւ գեղեցիկ, դուստրե՛ր Երուսաղէմի, Կեդարի վրանների եւ Սողոմոնի խորանի պէս:

5. Մի՛ նայէք ինձ, քանզի եւ սեսցել-թիսցել եմ, քանզի Արեգակը խէթ նայեց ինձ վրայ: Իմ Սօր որդիները մարտնչեցին ինձ հեպ. եւ ինձ այգեստանի պահապան դրեցին, որովհետր եւ իմ [խկ] այգին չպահեցի:

Հարսն ասում է Փեսային.

6. Պատմի՛ր ինձ, իմ հոգո՛ւ Սիրելի, որտե՞ղ ես հովուում, որտե՞ղ ես հանգիստ փայխս միջօրէին. գուցէ թափառականի պէս լինեմ՝ Քո ընկերների երամակների մէջ:

Փեսան սսում է Հարսին.

7. Եթէ չձանսայես քո անձը, գեղեցի՛կդ կանանց մէջ, հետեւի՛ր դու հօտերի ոյրնահեղքերին եւ արածեցրո՛ւ քո ուլերին հովիւների վրանների մօտ:

8. Մերձատո՛ր Իմ, քեզ նմանեցրի Իմ երկվարներին՝ փարատնի կառքի մէջ:

Օրիորդներն սսում են.

9. Քանզի գեղեցկացան քո ծուփները փայրակի պէս եւ քո պարանոցը՝ մանեակների պէս:

10. Ոսկոս պէս դարձնենք քեզ՝ արծաթէ կիլոռածներով հանդերձ,

11. մինչեւ Արքան Իր գիրկն ընդունի քեզ:

Հարսն սսում է իրեն եւ Փեսային.

12. Իմ նարդուն արձակեց իր հոտը, սրաշխի ծրար է ինձ համար իմ Եղբորորդին, թող հանգարանայ իմ սրիքների մէջ:

13. Նոճոս ողկոյզ է ինձ համար իմ Եղբորորդին՝ Ենգադդի այգեարանների մէջ:

Փեսան սսում է Հարսին.

14. Ահա գեղեցիկ ես, մերձատո՛ր Իմ, ահա գեղեցիկ ես. քո սաքերն սղանիներ են:

Հարսն սսում է Փեսային.

15. Ահա բարենշան ես, Եղբորորդեա՛կ իմ, այլե՛ւ գեղեցիկ մէր հանգստարանի մէջ:

16. Մեր փան գերանները մայրիներ են, մէր դարանասանդները՝ նոճիներ:

## Բ

Փեսան սսում է Իրեն եւ Հարսին.

1. Ես դաշտերի ծաղիկ եմ, հովիւների շուշան:

2. Ինչպէս շուշանը՝ փշերի մէջ, այնպէս է Իմ մերձատուրը դուստրերի մէջ:

Հարսն ասում է Փեսային.

3. Ինչպես ինձ որեւին՝ անտառի ծառերի մէջ, այնպես է իմ Եղբորորդին՝ որդիների մէջ: Նրա հովանոս փակ նստել փափագեցի եւ նստեցի, եւ նրա պտուղը քաղցր է իմ կոկորդոս:

Հարսն ասում է օրիորդներին.

4. Գինոս փո՛ն փարէք ինձ եւ կարգեցէ՛ք ինձ վրայ Սէրը:

5. Հասարայեցէ՛ք ինձ իղով, ինձո՛ր լցրէք ինձ վրայ, քանզի ես իսանդակաթ եմ սիրով:

6. Նրա ձախ ձեռքը զլխիս փակ է, իսկ Նրա աջը թող գրկի ինձ:

Հարսն ասում է օրիորդներին.

7. Երդուեցնում եմ ձեզ, դուստրե՛ր Երոսադէմի, անդաստանի զօրութիւններով եւ ուժգնութիւններով. եթէ վեր կենաք, արթնացրէ՛ք Սէրն Իր կամենալուն պէ:

Լսում է Փեսայի ձայնը եւ ասում.

8. Իմ Եղբորորդոս ձայնն է. սհա Նա գալիս է, վագում լեռների վրայով՝ հանգստանալով բլուրների վրայ:

9. Իմ եղբորորդին նման է այժեամի կամ եղնիկների հորթերի՝ Բեթէլի լեռների վրայ:

Հարսը ցոյց է տալիս օրիորդներին Փեսայի [տեղը].

Սհա Նա կանգնած է մեր որմի յետեում, ձգուել է դէպի պարտահանները, նայում է ճաղերի միջով:

10. Իմ Եղբորորդին պարասխանում է ինձ եւ ասում.

Վե՛ր կաց, ե՛կ, մերձատ՛ր Իմ, գեղեցի՛կ Իմ, աղանի՛ Իմ:

11. Քանզի սհա ձմեռն անցաւ, անձրեւներն անցան ու գնացին-հեռացան.

12. Ծաղիկներ երեսացին մեր երկրում, հասաւ էրելու ժամանակը, փարսակի ձայն լսուեց մեր երկրում:

13. Թգենին ընձիղեց իր բողբոջը, մեր ծաղկած որթերն արձակեցին իրենց հոտը: Վե՛ր կաց, ե՛կ, մերձատ՛ր Իմ, գեղեցի՛կ Իմ, աղանի՛ Իմ, եւ ե՛կ դու, աղանեա՛կ Իմ:

14. Ե՛կ պարսպի պարուսարին մերձ վեմի հովանոս փակ:

Յո՛յց փոքր Ինձ քո երեսը եւ լսելի՛ արա Ինձ քո ձայնը, քանզի քո ձայնը քաղցր է, եւ քո պարկերը՝ գեղեցիկ:

Փեսան այսպէս է ասում օրիորդներին.

15. Բռնեցէ՛ք մեզ համար փոքրիկ աղուէաներին՝ այգիների  
ապականիչներին, եւ մեր որթերը կը ծաղկեն:

Հարսն այսպէս է ասում.

16. Իմ Եղբորորդին իմն է, եւ եւ՛ Նրանը, որ հովուում է շուշանների մէջ:  
Մինչ ցեղեկը լուսաւորի, եւ սրտերները շարժուեն,

17. վերադարձի՛ր, Եղբորորդի՛ իմ, նմանուի՛ր այծեամբ կամ եղնիկների  
հորթերի՛ ինկաբեր լեռների վրայ:

## Գ

1. Գիշերն անկողնուս մէջ փնտրեցի իմ հոգու Սիրելիին, փնտրեցի  
Նրան եւ չգտայ, կանչեցի, եւ ձայն չտուեց ինձ:

2. Վեր կենամ ու շրջեմ քաղաքով, փողոցներով ու հրապարակներով  
եւ փնտրեմ իմ հոգու Սիրելիին: Փնտրեցի Նրան եւ չգտայ, կանչեցի  
Նրան, եւ ձայն չտուեց ինձ:

3. Քաղաքում շրջող պահապանները հանդիպեցին ինձ:

Հարսն ասում է պահապաններին.

Արդեօք չէ՞ք տեսել իմ հոգու Սիրելիին:

4. Երբ նրանցից մի փոքր անցայ, գտայ իմ հոգու Սիրելիին:

Գտնելով Փեսային՝ ասում է.

Բռնեցի Նրան եւ չթողեցի Նրան, մինչեւ չտարայ Նրան իմ Մօր տունը  
եւ ինձ Յղացողի սենեակը:

Հարսը երկրորդ անգամ է երդունցնում օրհորդներին.

5. Երդունցնում եմ ձեզ, դուստրե՛ր Երուսաղէմի, ազարակի  
գօրոթիններով եւ հաստապոթիններով. եթէ վեր կենաք, արթնացրէ՛ք  
Սէրն Իր կամենալուն պէս:

Փեսան ասում է Հարսի մասին.

6. Ո՞վ է սա, որ գալիս է անապարից ինչպէս ծառացած-քարձրացած  
ծուխ: [Բուրում է ինչպէս] զմոռու եւ կնորով՝ իղազործների ամէն  
տեսակ փոշիներով:

Օրհորդներն այսպէս ասացին.

7. Ահա՛ Սողոմոնի գահոյքը, նրա շորջ վաթսուն սպառազէններ են  
Իսրայէլի քաջերից:

8. Քոչորը՝ պարերազմի հմուտ սուսերաւորներ, իրաքանչիւր այր սուր [ունի] ազդրին՝ ընդդէմ գիշերոսայ արհաւիրքների:
9. Սողոմոն Արքան գահաւորակ պատրասարեց Իր համար Լիբանանի փայտից:
10. Նրա սիններն արեց արծաթ, կոնքերը՝ ոսկի, ձեղոնը՝ ծիրանի եւ նրա ներան՝ ակնազարդ. [այնտեղ] փարածուած է Բարայէլի դուստրերի սէրը:
11. Դուստրե՛ր Սիոնի, ելէ՛ք եւ նայէ՛ք Սողոմոն Արքային՝ այն պատկով, որով պատկեց Նրա Մայրը Նրա փեսայութեան եւ Նրա սրտի ուրահութեան օրը:

## Դ

Փեսան ասում է Հարսին.

1. Ահա գեղեցիկ ես, մերձաւոր Իմ, ահա գեղեցիկ ես, քո աչքերն աղանհներ են՝ քո լոյսինից դուրս: Քո վարսերը նման են այծերի երամակների, որոնք երեւացին Փաղասայից:
2. Քո արամները նման են խուզած ոչխարների երամակների, որոնք ելնում են ասագանից. բոլորն էլ երկածին են, եւ անորդի չկայ նրանց մէջ:
3. Քո շորթերը նման են որդան կարմիր թելի, եւ քո խօսքերը գեղեցիկ են: Քո այրերը նման են նոսան կեղեւի՝ քո լոյսինից դուրս:
4. Քո պարանոցը նման է Դաթի աշտարակին, որ շինուած է Թալպիոյթում. հազար վահաններ են կախուած նրանից եւ սպառազէնների բոլոր նետերը:
5. Քո երկու արհնքները նման են այծեամի երկու երկոտրեակ ուլերի, որոնք արածում են շուշանների մէջ:
6. Մինչեւ ցերեկը հանգչի եւ սրտերները շարժուեն, Ես Ինքս կը գնամ զմոնենիների լեռը եւ կնորուկի բլուրը:
7. Ամբողջովին գեղեցիկ ես, մերձաւոր Իմ, եւ ոչ մի արար չկայ քեզ վրայ:
8. Ե՛կ Լիբանանից, ո՛վ Հարս, այստեղ ե՛կ Լիբանանից: Ե՛լ եւ անցի՛ր հաւարքի գագաթից, Սանիրի եւ Հերմոնի կարարից, առիծների մայրիներից եւ ինձերի լեռներից:
9. Սրտակաթ արեցիր մեզ, քո՛ր մեր Հարս, սրտակաթ արեցիր մեզ քո մի աչքով եւ քո պարանոցի մի քառամանեակով:



10. Քանզի գեղեցկացան քո սրինքները, քո՛յր Իմ Հարս, քանզի գեղեցկացան քո սրինքները զինոց [աւելի], եւ քո հանդերձների հոյրը՝ քոյրը խոնկերից:
11. Մեղը է կաթում քո շորթերից, քո՛յր Իմ Հարս, մեղը ու կաթ է քո լեզուի փակ, եւ քո հանդերձների հոյրը նման է կնդրուկի:
12. Փակուած պարտէզ ես, քո՛յր Իմ Հարս, փակուած պարտէզ ես եւ կնքուած աղբիւր:
13. Քո պարգամաւորութիւնը նոնենիների դրախար է՝ մրգաբեր ծառերի պտուղներով հանդերձ. կիպրոս՝ նարդոսով հանդերձ,
14. նարդոս եւ քրքում, խոնկեղէզ եւ կինամոն՝ Լիբանանի քոյրը ծառերով հանդերձ, զմտոս եւ հալուէ՝ քոյրը գլխաւոր խոնկերով հանդերձ:
15. Բուրասարանների աղբիւր եւ կենդանի ջրի սկունք, որ բխում է Լիբանանից:
16. Վե՛ր կաց, հիւսիսայի՛ն քամի, եւ ե՛կ, հարսայի՛ն քամի, փշի՛ր Իմ պարտէզում, եւ թող քորեն Իմ խոնկերը:

## Ե

Հարսն աղաչում է, որ իր Փեսան ցած իջնի.

1. Թող իմ Եղբորդդին իջնի Իր պարտէզը եւ ուրի Իր ծառերի պտուղները:

Փեսան ասում է Հարսին.

Մտայ Իմ պարտէզը, քո՛յր Իմ Հարս, հասարեցի Իմ զմտուն Իմ խոնկերով հանդերձ, կերայ հաց Իմ մեղրով, արբեցի զինիս Իմ կաթով. կեղէ՛ք, մերձաւորնե՛ր Իմ, արբե՛ք եւ արբե՛ք, եղբորդդինե՛ր Իմ:

2. Ես ննջում եմ, բայց իմ սիրուն արթուն է:

Հարսը զգում է, որ Փեսան բախում է դուռը:

Իմ Եղբորդդոս ձայնն է, դռոն է բախում:

Փեսան ասում է.

Բա՛ց Իմ առաջ, քո՛յր Իմ, մերձաւոր՛ Իմ, աղանի՛ Իմ, կայարեա՛լ Իմ, քանզի գլուխս պապուել է ցօղով, եւ վարսերս՝ զիշերոսայ շաղով:

Հարսն այսպէս է ասում.

3. Հանեցի իմ պարմոճաւը, ինչպե՛ս հագնեմ այն. լուսցի ուրբերս, ինչպե՛ս աղտոյրեմ նրանք:

4. Իմ Եղբորորդին մեկնեց Իր ձեռքը պարուհանով, և իմ որովայնը խոտվուեց Նրանով:
5. Ես վեր կացայ՝ բացելու իմ Եղբորորդու առաջ. իմ ձեռքերից զմոռու կաթեց, և իմ մապրները լցուեցին զմոռոտով՝ դռան փակադակի վրայ:
6. Ես բացեցի իմ Եղբորորդու առաջ. իմ Եղբորորդին անցաւ, և իմ հոգին ելաւ Նրա խօսքի հետ: Փնտրեցի Նրան և չգտայ, կանչեցի Նրան, և ձայն չտուեց ինձ:
7. Ինձ գրան քաղաքում շրջող պահապանները, զարկեցին և վիրատրեցին ինձ. պարիսպների պահապանները քօղս հանեցին իմ վրայից:
8. Երդուեցնում եմ ձեզ, դուստրե՛ր Երուսաղէմի, ագարակի զօրութիւններով և հասարարութիւններով. եթէ գրնէք իմ Եղբորորդուն, պարմեցէ՛ք Նրան, որ կաթոգին եմ ևս Նրա սիրոց:

Երուսաղէմի դուստրերը և պարիսպների պահապանները հարցնում են Հարսին.

9. Ինչն՞վ է առաւել քո Եղբորորդին միւս եղբորորդիներից, գեղեցի՛կը կանանց մէջ, ինչն՞վ է առաւել քո Եղբորորդին միւս եղբորորդիներից, որ այդպէս երդուեցնում ևս մեզ:

Հարսը նկարագրում է Եղբորորդուն, թէ ինչպիսին է.

10. Իմ Եղբորորդին սպիտակ է և կարմիր, ընտրեալ է բիրատրների մէջ:
11. Նրա գլուխը կեփազեայ ոսկոց է, Նրա վարսերը զանգուր են [և] սև, ինչպէս ագռս:
12. Նրա աչքերը նման են աղանիների՝ ջրերի լիութեան վրայ. կաթով լուացուած, ջրերի լիութեան վրայ նարած:
13. Նրա ծնօրները խոնկի փաշտերի պէս բորում են խղագործների անուշահոտութիւնը, Նրա շուրթերը շուշաններ են, որ առայր զմոռու են բխում:
14. Նրա ձեռքերը ձախարակուած ոսկի են՝ Թարսիսի ակներով զարդարուած. Նրա որովայնը փղոսկրեայ փախարակ է՝ շափիղեայ ակներով ընդելուզուած:
15. Նրա սրունքները մարմարեայ սիւներ են՝ ոսկեայ խարխիւների վրայ հասարարուած: Նրա պարկերը նման է Լիբանանի ընտրի եղենափայտին:

16. Նրա կոկորդը լի է քաղցրութեամբ և ամրոջնովին ցանկալի: Այսպիսին է իմ Եղբորորդին, և այսպիսին է իմ Մերձատը, դուստրե՛ր Երուսաղէմի:

Երուսաղէմի դուստրերը հարցնում են, թէ ուր գնաց Հարսի Եղբորորդին.

17. Ո՞ր գնաց քո Եղբորորդին, գեղեցի՛կը կանանց մէջ, ո՞ր կողմը դիմեց քո Եղբորորդին. մենք էլ քեզ հեղ փնտրենք Նրան:

## Զ

Հարսը պատասխան է տալիս և ասում.

1. Իմ Եղբորորդին իջաւ Իր պարտէզը՝ խոնկերի փաշտերի մէջ՝ բորսապաններում հովութլու և շուշաններ հասաքելու:

2. Ես իմ Եղբորորդունն եմ, և իմ Եղբորորդին՝ իմը, որ հովում է շուշանների մէջ:

Փեսան ասում է Հարսին.

3. Բարենշան ես, մերձատ՛ր Իմ, ինչպէս հաճութիւնը, գեղեցիկ, ինչպէս Երուսաղէմը՝ զարմանալի յօրինուած:

4. Դարձրո՛ւ աչքերդ Ինձանից, քանզի դրանք խոնկերին Ինձ. քո վարները նման են այծերի երամակների, որոնք երեւացին Գաղասաղից:

5. Քո արամները նման են խուզած ոչխարների երամակների, որոնք դուրս են գալիս աագանից, բոլորն էլ երկածին են, և անծնունդ չկայ նրանց մէջ:

6. Քո շորթերը նման են կարմիր թելի, և քո խօսքերը գեղեցիկ են: Քո այրերը նման են նոսն կեղեի՝ քո լոռօթինից դուրս:

7. Վաթսուն թագուհի են և ութսուն հարձ. և օրիորդներ են, որոնց թիւ չկայ:

8. Միակն է Իմ աղանին, Իմ կարարեալը. իր մօր միակն է, ծնողի ընտրեալը:

Դուստրերը րեսան նրան և երանի փոռեցին նրան, թագուհիները և հարձերը գովեցին նրան:

Դուստրերը և թագուհիները տեսան Հարսին և երանի տոռեցին նրան:

9. Ո՞վ է սա, որ երեւում է ինչպէս առասօյ, գեղեցիկ, ինչպէս լուսինը, ընտրի, ինչպէս արեգակը՝ զարմանալի յօրինուած:

Փեսան ասում է Հարսին.

10. Իջայ ընկուզենիների պարտեզ՝ նայելու վրասկների արդիւնքին, թէ ծաղկե՞լ է որթը, թէ ծաղկե՞լ է նոճին, թէ ծաղկե՞լ են նոնենիները:

Հարսն ասում է Փեսային.

11. Այնտեղ կը րասն Քեզ իմ սրինքները, իմ հոգին չիմացաւ. համարեց ինձ ինչպէս Ամինադարի կտորը:

Դուստրերը եւ թագուհիներն ասում են Հարսին.

12. Վերադարձի՛ր, վերադարձի՛ր, ո՛վ որողումացիդ, վերադարձի՛ր, վերադարձի՛ր, եւ մենք փեանենք քեզ:

Է

Փեսան այսպէս է ասում դուստրերին եւ թագուհիներին.

1. Ի՞նչ էք փեանում այդ որողումացու վրայ, որ դէպի մեզ է գալիս քանակների զորագնդերի պէս: Քանզի գեղեցկացան քո ուրբերը կոշիկներով, դո՛ւսր Ամինադարի: Քո ազդերի ձեւը նման է ձարպար վարպետի ընդելուզած ուլունքների:

2. Քո պորպը ձախարակուած սաւիոր է՝ անուշ գինոց անպակաս: Քո որովայնը նման է շոշանով ծածկուած ցորենի դէզի:

3. Քո երկու սրինքները նման են այծեամբ երկու երկուորեակ ուլերի:

4. Քո պարանոցը նման է փղոսկրեայ աշտարակի: Քո աչքերը նման են Եսերոնի ծովակին՝ բազում դուստրերի դարպասների մօտ: Քո ոունգերը նման են Լիբանանի աշտարակին, որ նայում է դէպի Դամասկոս:

5. Գլուխդ քեզ վրայ նման է Կարմելոսին, եւ քո գլխի հիւսերն ասես ծիրանի լինեն՝ թագակիր թագաւորի պէս, ասպարէզներում:

6. Որքա՛ն գեղեցկացար եւ որքա՛ն քաղցրացար, ո՛վ սէր, քո փափկութեան մէջ:

7. Քո հասակը նման է արմաւենու, եւ սրինքներդ՝ ողկոյզների:

8. Ասացի, թէ ելնեմ արմաւենին, բունեմ նրա բարձրութիւններից, եւ քո սրինքները թող խաղողի ողկոյզի պէս լինեն, քո ոունգերի հուրը՝ ինձորի պէս, եւ քո կոկորդը՝ ազնի գինու պէս:

Հարսը դուստրերի եւ թագուհիների առաջ ասում է.

9. Գնում եմ իմ Եղբորորդու հեւր ուղիղ ձանապարհով, բասականանում իմ շորթերով եւ սրամներով:

10. Ես իմ Եղբորորդուն եմ, եւ դէպի ինձ է դառնալու Նա:

11. Ե՛կ, Եղբորորդի՛ իմ, ելնենք ազարակները, գիշերենք գիղերում եւ պարպեզներում:
12. Կանուխ ելնենք այգիները. փեսանք, թէ ծաղկե՞լ է որթը, ծաղկե՞լ է նոճին, ծաղկե՞լ է նոնենին: Այնտեղ կը փամ Բեզ իմ սփինքները:
13. Մանրագորներն արձակեցին իրենց հուրը. մեր դռների մօտ ամէն փեսայ մրգաբեր ծառեր են՝ նորը հնի հետ. այն, ինչ փուեց ինձ մայրս, պահեցի Բեզ համար, Եղբորորդի՛ իմ:

## Ը

1. Ո՞վ կը փար Բեզ, Եղբորորդի՛ իմ, ուրե՛լ իմ մօտ սփինքներից: Երբ հանդիպեմ դրսում, կը համբուրեմ Բեզ, եւ չեւ արհամարհի ինձ:
2. Վերցնեմ, փանեմ Բեզ իմ Սօր փունը եւ ինձ Յղացողի սենեակը, արբեցնեմ Բեզ խղագործների գինին, իմ նոնենիների օշարակը:
3. Նրա ձախ ձեռքը գլխիս փակ է, եւ Նրա աջը թող գրկի ինձ:
4. Երդուեցնում եմ ձեզ, դուստրե՛ր Երոսաղեմի, ազարակի զօրաթիններով եւ հասարարութիւններով. եթէ վեր կենաք, արթնացրե՛ք Սէրն Իր կամենալուն պէս:

Դուստրերը եւ թագուհիներն աւում են.

5. Ո՞վ է սա, որ ելել գալիս է սպիտակացած, գալիս է՝ յենուած իր Եղբորորդուն:

Փեսան աւում է Հարսին.

Արթնացրի քեզ ինձորենու փակ. այնտեղ քո Մայրը երկնեց քեզ, այնտեղ քո Ծնողը ծնեց քեզ:

6. Դի՛ր Ինձ որպէս կնիք քո սրտի վրայ եւ որպէս մատանի՝ քո աջ ձեռքին: Քանզի սերը հզօր է մահուան պէս, եւ նախանձը՝ խիստ՝ դժոխքի պէս, նրա թոխքը՝ հրի բոցի թոխքի պէս:
7. Բազում ջրերը չեն կարողանայ մարել սերը, եւ գետերը չեն արգելի նրան: Եթէ մարդ իր ամբողջ կեանքը փայ սիրոյ համար, արհամարհելով կ'արհամարհուի:

Օրիորդներն աւում են.

8. Մեր քոյրը փոքրիկ է եւ սփինքներ չունի, ի՞նչ անենք մեր քրոջն այն օրը, երբ ուզեն նրան:

9. Եթէ պարիսպ լինի, նրա վրայ շինենք արծաթ մահարձաններ: Եթէ դռո լինի, նրա վրայ եղենաւիսպուեայ փախարակներ ամրացնենք:

Հարսը համարձակում է եւ ասում.

10. Ես պարիսպ եմ, եւ իմ սրինքները նման են աշտարակների, Նրա  
աչքին եւ [երեսում] էի խաղաղութիւնը գրածի նման:

11. Սողուններ մի այգի ունէր Բերմատնում, Իր այգին Կոսեց  
պահապաններին: Իրաքանչիւր այր նրա պողի փոխարէն հազար  
արծաթ պիտի բերի:

12. Իմ այգին իմ առջեւն է. հազարներ՝ Սողունին եւ երկու հարիւր՝  
պահապաններին, որ պահում են նրա պտուղը:

Հարսն ասում է.

13. Դո՛ւ, որ նախած ես պարտէզում, եւ ուրիշները լսում են Քեզ, լսելի՛  
արա ինձ Քո ձայնը:

14. Փախի՛ր, Եղբորորդի՛ իմ, եւ նմանուի՛ր այժեամբ կամ եղնիկների  
հորթերի՝ ինկաբեր լեռների վրայ:

## ԱՐԱՐԱՏԻՑ ՍԻՈՆ

Խորագիր

**Իւրաքանչիւր սկիզբ ճանապարհ է:**

Վերնագիր

**«Վէ՛մ մեզիա արուեստները» ներկայացնում է  
Արարատից Սիոն**

Բացման փոփոխեր

Պատմող

Ամէն ինչ տարօրինակօրէն հարագատ է այստեղ: Առաջին իսկ այցելութիւնից սկսում է մի գարմանալի հոգեհարագատութիւն այս վայրերի նկատմամբ: Ուզում ես մնալ այստեղ ընդմիշտ: Երկնայինի հասանելիութեան անբացատրելի վստահութիւնից մարդ կարող է կորցնել իրականութեան զգացողութիւնը:

Խաղաղութեան քաղաք, ուր երբեք խաղաղ չի եղել, որի համար բազում պատերազմներ են մղուել: Բայց այստեղ կայ գարմանալի ներքին խաղաղութիւն, խաբուսիկութեան աստիճանի, այնքան, որ կարող ես կորցնել զգօնութիւնդ արտաքին վտանգների նկատմամբ:

Ազգերի եւ կրօնների անհամատեղելի մէկտեղում: Այս ամէնը միասին մէկ այլ վայրում կը վերածուէր պայթուցիկ խառնուրդի:

Սակայն մի աներեւոյթ գօրութիւն, մի անբացատրելի օրհնութիւն պահում է այս ամէնը գոնէ տեսանելի հաւասարակշռութեան եւ ներդաշնակութեան մէջ: Այստեղ մարդկանց միասնութեան վեհութիւնը համընթաց է նրանց իրարամերժ տարբերութեանը, եւ երկուսն էլ զգացում են ամենայն սրութեամբ: Յայտնուելով այստեղ՝ կարծես թէ կանգնած ես աշխարհի էպիկենտրոնում:

Այս երկրի սրբութիւնը ամէն մէկը իւրովի է մեկնաբանում: Եւ եթէ լսես այդ մեկնաբանութիւնը, կը հասկանաս, որ նա այդ սրբու-

թեան համար պայքարել է դարեր՝ սրով, սիրով, դիւանագիտութեամբ, խաբէութեամբ:

Աներեւակայելի զոհողութիւնների ու մաքառումների գնով մարդիկ կառչել են այս վայրերից՝ որպէս Աստուծոյ նկատմամբ հաւատարմութեան ապացոյց:

Այս քաղաքի խորհուրդին կարող ես հաղորդ լինել, եթէ ուխտաւոր ես: Աշխարհի տարբեր ծայրերից այստեղ եկող ուխտաւորների հոսքը երբեք չի դադարում: Քրիստոնեաների՝ այս տեղերի հետ կապուած զգացումները էկզիստենցիալ են: Սա նրանց համար փրկագործութեան երկիր է, ուր ծաւալուել են նրանց հաւատքի կարեւորագոյն իրադարձութիւնները:

Կրօնների եւ ազգերի այս իւրայատուկ խառնարանում արտաքին հայեացքից անտրամաբանական բաներ շատ կան, եւ դրանց մէջ պակաս արտառոց չէ հայերի ներկայութիւնը: Ինչո՞ւ է Հին Երուսաղէմի չորս թաղերից մէկը Հայկական: Կամ ինչո՞ւ են հայերը քրիստոնէական գլխաւոր սրբատեղիների հիմնական իրաւատէրերից մէկը:

Մայրլ Սթոուն

Իսրայէլում հայերի ներկայութիւնը յայտնի է մ.թ. 4-րդ դարից: Հայ առաջին ուխտաւորի մասին յիշատակութեանը հանդիպում ենք 4-րդ դարի եբրայական «Մեկորոտ»-ում [*«Աղբիւրներում»*]: Մենք գրաւոր վկայութիւններ ունենք Իսրայէլում հայերի շարունակական ներկայութեան մասին՝ սկսած 5-րդ դարից, երբ հայերը սկսեցին գրել իրենց այբուբենով, մինչեւ մեր օրերը:

Պարլմոն

Թէպէտ հայերի պատմութիւնը Սուրբ Երկրում յայտնի է ոմանց, այսուհանդերձ Երուսաղէմ այցելողներից շատերին թւում է, թէ նրանց ներկայութիւնը Երուսաղէմում չի համապատասխանում նրանց աշխարհագրական եւ քանակական տուեալներին: Պատճառն այն է, որ այդ պատմութիւնը դեռեւս պատմուած չէ:

Վերնագիր

Սուրբ Երկրի անյայտ պատմութիւնը

Ենթավերնագիր

Սբ Ծննդեան տաճար, Բեթղեհեմ



Պատմող

Քրիստոսի ծննդեան սրբավայրը ոչ միայն Հայ ուխտագնացութեան, այլև վանական կեանքի կարեւորագոյն կենտրոններից է: 4-րդ դ. Բեթղհեհմում իր նշանաւոր Աստուածաշունչի դպրոցը հաստատած Յերոնիմոսը վկայում է այստեղ հաստատուած բազմաթիւ Հայ վանականների մասին: Տարբեր ժամանակներում այստեղ ուխտի են եկել նաև Հայ թագաւորներ:

Սուրբ Ծննդեան բազիլիկայի սիւնազարդ նաւի մուտքի այս փայտեայ դուռը կառուցած է Հայոց Հեթում Ա թագաւորի կողմից 1227 թ.:

Հայերն այստեղ ունեն ընդարձակ վանական համալիր, որը գտնուում է Սբ Ծննդեան բազիլիկայի հարաւային կողմում: Վանքի ներկայիս տեսքը գալիս է խաչակրաց շրջանից, սակայն վերջին շրջանի պեղումների ժամանակ ի յայտ են եկել Յուստինիանոսի ժամանակաշրջանի հետքեր: Վանքի սեղանատան տակ կատարուած պեղումների ժամանակ բացուել են Յերոնիմոսի դպրոցի լաւ պահպանուած սիւների գլխամասերը, որի մասին խօսում են մի շարք պատմական աղբիւրներ:

Տիրոջ Ծննդեան սրբավայրի իրականութեան մէջ Հայերն այսօր գլխաւոր դերակատարներից են: Այստեղ նրանք ունեն մեծ իրաւունքներ: Հայերին եւ յոյներին է վերապահուած ամէն օր իրենց լեզուներով պատարագ մատուցել բեթղհեհմեան աստղի սուրբ սեղանի վրայ՝ հաստատուած այն տեղում, ուր ծնուեց Քրիստոսը:

Ամէն օր ուխտաւորները ականատես են լինում դասական Հայերէնով հնչող գեղեցիկ պատարագին, որ դարեր շարունակ անխախտ կերպով կատարուում է այստեղ:

Քանի՜ ուխտաւորներ են եղել այստեղ: Նրանց թիւը հնարաւոր է հաշուել: Բայց նրանց աղօթքների արձագանքը այս պատերի վրայ է:

Ենթավերնագիր

Սբ Յարութեան տաճար

Պատմող

Յարութեան տաճարը քրիստոնէական ուխտագնացութեան սիրտն է: Այստեղ են ծաւալուել աւետարանական պատմութեան կարեւորագոյն իրադարձութիւնները: Այստեղ են Քրիստոսի գերեզմանը եւ Գողգոթան՝ յարութիւնը եւ խաչելութիւնը, կեանքը եւ մահը:

միասին եւ անբաժանելի: Մարդկային ապրումի աներեւակայելի կուտակում կայ այս սրբազան տաճարում: Հնարաւոր չէ թուարկել այն հրաշքները, բժշկութիւնները, մարդկային կեանքի զարմանալի վերափոխումները, որ կատարուել են այստեղ:

Հակասութիւններով լցուած աշխարհը մնացել է դրսում, այստեղ մարդկային կեանքը հաւաքուած է մէկ միասնական եւ ներդաշնակ պատկերի մէջ, ուր հոգու ամէն մի թրթիւ, ամէն մի ձայն, ամէն մի գոյն ունի իր տեղը եւ նշանակութիւնը: Այստեղ ոչինչ չի կորչում, այլ միայն հաւաքուած է կաթիլ առ կաթիլ՝ որպէս սրբութեան կուտակում մարդացած Աստուծոյ առանցքի շուրջ: Քրիստոսի մարդկային իրականութեան մէջ ամէն մի մարդկային կեանք ունի իր մասնակցութիւնը եւ կոչումը, ամէն ոք կամենում է տեսնել իր արտացոլանքը կատարեալ մարդու մաքուր հայելու մէջ:

Դարեր շարունակ, անվերջանալի վտակներով այստեղ են հոսում ուխտաւորների բազմութիւններ աշխարհի տարբեր ծայրերից: Եւ նորից ու նորից նրանք լսում են շատերի համար անհասկանալի լեզուով մատուցուող պաշտամունք: Ովքե՞ր են այս մարդիկ եւ ինչն՞ է են այստեղ:

Այն իրաւունքները, որ հայերն ունեն այստեղ, առաջին հայեացքից անհաւանական են թւում: Սակայն նրանք այստեղ են եղել միշտ՝ Կոստանդինեան տաճարի հիմնումից ի վեր: Երուսաղէմի սբ Մակարիոս պատրիարքը 335 թ. հրաւիրել է է հայոց կաթողիկոս սբ Վրթանէսին մասնակցելու Յարութեան տաճարի օծման արարողութեանը, որը նշանակում է, որ հայերն այստեղ արդէն մեծ ազդեցութիւն եւ ներկայութիւն են ունեցել այդ ժամանակ:

Ամէն օր գիշերը տաճարի դռները նոյն արարողակարգով փակուած են դրսից: Եւ այդպէս ութ հարիւր տարի անխափան՝ սկսած Սալահեդինի կողմից Երուսաղէմի գրաւումից:

Յարութեան տաճարի խորհուրդին հաղորդ լինելու համար պէտք է այնտեղ մնալ գիշերը, երբ դադարում են ուխտաւորների հոսքը եւ ցերեկային բազմակցու ժխորը: Տաճարը մնում է մենակ, իր մենութեան սպասաւորներով եւ սակաւաթիւ երջանիկ ուխտաւորներով, որոնց յաջողում է ներսում մնալու թոյլտուութիւն ստանալ:

Ոչ մի բանի չնմանուող լուսութիւն: Այն գեղեցիկ է ամէն տեսակ ձայնից եւ երաժշտութիւնից: Յարութեան տաճարի լուսութիւնը

Աստուծոյ սիրոյ անբացատրելիութիւնն է, Նրա հետ հանդիպելու անասելիութիւնը:

Միառժամանակ գերեզմանը դատարկ է, բայց լի, պողաբեր, խօսուն:

Լռութեանը յաջորդում են գիշերային խորհրդաւոր ժամերգութիւններն ու պատարագները: Քրիստոսի Գերեզմանի վրայ ամէն օր պատարագ են մատուցում այս մեծագոյն սրբութեան երեք պահակները՝ յոյները, հայերը եւ կաթողիկէները:

Հայկական պատարագը, որը նոյնութեամբ մատուցուած է աշխարհով մէկ սիռուած հայկական եկեղեցիներում, գալիս է դարերի խորքից, քրիստոնէական ծէսի ակունքներից: Բայց զարմանալին այն է, որ հայկական պատարագի հիմքում ընկած է հնագոյն երուսաղէմական աւանդութիւնը: Արդէն ձեւաւորուած հայկական կրօնական համայնքի մասին մենք տեղեկանում ենք եկեղեցական ընթերցումների «Ճաշոց» գրքի պահպանուած արժէքաւոր ձեռագրերից, որոնք ներկայացնում են 5-րդ դարի քրիստոնէական ծէսը Սուրբ Քաղաքում:

Յարութեան տաճարի ներքին բովանդակութիւնը տարբեր ժողովուրդների աստուածալաւորութեան կուտակման արդիւնք է: Արտաքին աշխարհի լարումների աղմուկը մնացել է դրսում, լռութիւնից սկսում է բացուել բազմամշակոյթ ծիսական խճանկար՝ անուշահոտ խնկարկութիւններով, հինաւուրց աղօթքներով եւ հոգեպարար երգերով: Աւանդութիւններն այստեղ պահպանւում են խնամքով, ամէն ինչ կատարւում է այնպէս, ինչպէս կատարուել է դարերով: Ծէսերը կատարւում են լեզուներով, որոնցով այլեւս չեն խօսում, այստեղ ներդաշնակօրէն միահիւսւում են հին յունարէնը, դասական հայերէնը, լատիներէնը՝ որպէս պատմական յիշողութիւն եւ հազարամեակների ներկայութիւն:

Տաճարի ներսից դուները նոյնպէս փակուած ու բացուած են: Սահմանուած որոշակի հերթափոխով սա իրականացնում են հայ, յոյն եւ կաթողիկ հոգեւորականները, որոնց է վստահուած տաճարի գլխաւոր սպասաւորութիւնը:

Դրսից դուռը փակելու իրաւունքը պատկանում է երկու մահմեդական ընտանիքների՝ Ջուզէ եւ Նուսեյբէ: Մէկը ունի բանալին պահելու իրաւունքը, միւսը՝ դուռը բացելու եւ փակելու: Հանդիսաւոր օրերին այս ընտանիքների գլուխները կենտրոնական դեր են խաղում

եւ անձամբ են բացում տաճարի դուռը: Սովորական օրերին դռների բացման եւ փակման կարգը կատարում է նրանց կողմից վարձուած մի երիտասարդ պաղեստինցու կողմից, պատճէնուած բանալիով:

Ենթավերնագիր

Սբ Մարիամ Աստուածածին, Գեթսեմանի

Պատմող

Խաչակրաց շրջանում Երուսաղէմի առաջին երեք թագուհիները եղել են Հայեր, որոնցից ամենանշանաւորը Մելիսենդ թագուհին է: 1143 թ.-ից՝ իր ամուսնու՝ Երուսաղէմի երրորդ գահակալ Անջուեան Ֆուլկից յետոյ մինչեւ 1161 թ., նա եղել է Երուսաղէմի տիրակալը: Նա եղել է չափազանց բարեպաշտ անձնաւորութիւն, եւ նրա ժամանակաշրջանում կառուցուել են բազմաթիւ եկեղեցիներ: Նրա անուան հետ է կապուած Գեթսեմանիի Սբ Աստուածամօր տաճարի շինարարութիւնը, որի սպասուաւորութիւնը դարերից ի վեր իրականացնում են Հայերը եւ յոյները:

Գետրգ Հինթլեան

Սա սուրբ Մարիամ Աստուածածնի գերեզմանն է: Ինչպէս տեսնում ենք, այն վիմափոր է: Դարերի ընթացքում այն շատ է վնասուել ուխտաւորների ձեռքից, ովքեր այստեղ էին գալիս Հատիչով ու մուրճով: Յետագայում խաչակիրները մարմարէ վարագոյր սարքեցին այստեղ՝ ուխտաւորներից պաշտպանելու համար: Հետաքրքրական է, որ այստեղ եղել է նաեւ «միհրաբ», քանի որ այս վայրը մահմեդականների համար նոյնպէս սրբատեղի է: Օրը մէկ անգամ նրանք այստեղ են գալիս՝ յարգանքի տուրք մատուցելու:

Այս եկեղեցու պատմութեան մէջ Հայերը մեծ դերակատարում են ունեցել: Ներկայիս շինութիւնը կառուցել է Երուսաղէմի Մելիսենդ թագուհին: Յետագայում՝ Աւետեաց Երկիր այցելութեան ընթացքում, Հեթում արքան եւս որոշ կառուցումներ է կատարել: Սակայն ամենակարեւորն այն է, որ, ինչպէս վկայում է այս արձանագրութիւնը, Մարտիրոս արքեպիսկոպոսը 1402 թ. ծաւալուէն շինարարութիւն է իրականացրել, ինչպէս եւ յիշատակուած է պատմական շատ աղբիւրներում:

Այս եկեղեցում են գտնուում Հայկական ծագում ունեցող Մելիսենդ, Արդա եւ Մորֆիա թագուհիների գերեզմանները: Խաչա-

կիրնների պատմաբան Վիլհելմ Տիւրացին վկայում է, որ Մելիսենդ թագուհուն, նրա կամքի համաձայն, թաղել են այս մատուռում՝ ճաշապատ գերեզմանում: Ամէն օր այստեղ մատուցուել է սուրբ Պատարագ: Դեռ մնացել է մարմարէ սալաքարը, որով ծածկուած է եղել Մելիսենդ թագուհու գերեզմանը:

Ենթավերնագիր

Սբ Յակոբ աթոռանիստ, Երուսաղէմ

Պարտնոյ

Սա Սուրբ Երկրի գլխաւոր սրբավայրերից մէկն է՝ իր նշանաւոր 300 կանթեղներով: Եկեղեցու աւագ խորանի տակ ամփոփուած են Երուսաղէմի առաջին եպիսկոպոս Յակոբոս Տեառնեղբօր մասունքները, իսկ խորանի աջ կողմում Յակոբոս Տեառնեղբօր գահն է:

Եկեղեցու հիւսիսային կողմում գտնուող հնագոյն մատուռում է ամփոփուած նաեւ մէկ այլ նշանաւոր սրբութիւն՝ Յակոբոս Զեբեդեանի՝ առաջին նահատակ առաքեալի գլուխը:

Այստեղ են գտնուում 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան զոհ դարձած հայ ժողովրդի հազարաւոր աւերուած ու թալանուած վանքերից փրկուած սրբութիւններ ու մասունքներ, այլեւս գոյութիւն չունեցող գիւղերի ու քաղաքների ուխտաւորների նուէրներ, Հայոց թագաւորական տների թանկարժէք մասունքներ: Այս նուէրների արձանագրութիւններով եւ յիշատակարաններով կարելի է վերականգնել հայերի բնակութեան ամբողջ աշխարհագրութիւնը:

Երուսաղէմի հայկական ձեռագրերի հաւաքածուն Երեւանի Մատենադարանից յետոյ ամենամեծն է աշխարհում: Ձեռագրերը պահուում են Սբ Թորոս եկեղեցում: Շատ արժէքաւոր ձեռագրեր կան այստեղ: Նրանց մէջ նշանաւորներից է 1272 թ. Սիսում Թորոս Ռոսլինի կողմից ծաղկուած Կիլիկիայի Կեռան թագուհու Աւետարանը: Ձեռագրի մանրանկարներից մէկում պատկերուած է արքայական ընտանիքը՝ Լեւոն Բ թագաւորը, Կեռան թագուհին, նրանց երեք տղաները եւ երկու աղջիկները:

Ենթավերնագիր

Սբջ Հրեշտակապետաց վանք, Երուսաղէմ

Պարտնոյ

Հայկական թաղում է գտնուում մէկ այլ նշանաւոր սրբավայր՝ Սրբոց Հրեշտակապետաց վանքը՝ կառուցուած Աննա քահանայապետի տան վայրում: Եկեղեցու հիւսիսային պատի մէջ է գլխաւոր սրբատեղի-մատուռը՝ Քրիստոսի առջին բանտը: Այստեղ է կանգնած եղել Քրիստոսն Աննայի առջեւ հարցաքննուելիս: Գաւիթի ներքին պատերի վրայ տեղադրուած խաչքարը վկայում է, որ այստեղ է եղել, մասնաւորաբար, Կիլիկիայի հայոց թագաւոր Հեթում Ա-ը:

Հրեշտակապետաց եկեղեցու պատի մէջ կայ մարդկային բաց բերան յիշեցնող մի քար, որը կոչուում է Ովսաննայի քար: Սա դարերից ի վեր համարուում է մէկն այն քարերից, որոնք «Ովսաննա» են աղաղակել, երբ Քրիստոսը Ծաղկազարդին հանդիսաւորապէս մտել է Երուսաղէմ:

Վանքի բակում է այն ձիթենին, որից կապել են Յիսուսին հարցաքննութիւնից առաջ: Ձիթենու պտուղը հրաշագործ գօրութիւն ունի:

Ենթավերնագիր

Սբ Նիկողայոս հայոց վանք, Զաֆա

Պատմող

Ուխտաւորները տերունական սրբավայրեր են հասել տարբեր ցամաքային եւ ծովային ուղիներով: Հաննա եպիսկոպոսը իր «Երուսաղէմի պատմութիւն» գրքում մանրագնին տեղեկութիւններ է հաղորդում հիմնական ծովային ուղու մասին: Ուխտաւորները նաևով հասնում էին Զաֆա: Ծովն այստեղ եղել է միշտ անկանխատեսելի: Յաճախ նաւաբեկութիւններ էին պատահում հէնց նաւահանգստում, երբ թուում է թէ արդէն հասել ես բաղձալի ցամաքին: Զաֆայում հայերն ունեն յատկապէս ուխտաւորների համար նախատեսուած մի վանք՝ Սբ Նիկողայոս անունով: Ուխտաւորներն այստեղ գիշերելուց յետոյ ուղեւորուել են Երուսաղէմ: Սբ Նիկողայոսի վանքը նաեւ ծառայել է որպէս հիւանդանոց Նապոլեոնի հիւանդ գիւնտորների համար: Այսօր վանական համալիրը վերանորոգման ընթացքի մէջ է:

Դիւրին չի եղել ուխտաւորի ճանապարհը: Բաւականին մեծ է եղել ճանապարհին մեռնելու հաւանականութիւնը՝ աւազակային յարձակումներից, հիւանդութիւններից, նաւաբեկութիւններից եւն: Հաննա եպիսկոպոսը խորհուրդ է տալիս, որ ուխտաւորը այս կենաց ու մահու ճամփորդութիւնից առաջ կտակ գրի եւ զնայ քահանայի մօտ խոստովանութեան:

Ենթավերնագիր

Սբ Գեւորգ Հայոց վանք, Ռամլէ

Պատրւող

Ձաֆայից Երուսաղէմ ճանապարհին Հայ ուխտաւորներն ունեցել են մէկ այլ Հանգրուան Ռամլէի Սբ Գեւորգ Հայկական վանքում: Զաֆայից Ռամլէ ճանապարհը տեւել է երեք ժամ:

Յատկապէս վտանգաւոր է եղել Ռամլէից Երուսաղէմ ճանապարհահատուածը, որը անխափան պայմաններում տեւել է տասը ժամ: Բազմաթիւ աւազակային խմբեր այս ճանապարհներին կողոպտել եւ յաճախ սպանել են ուխտաւորներին: Հաննա եպիսկոպոսը մանրագնին հրահանգներ է տալիս, թէ ինչպէս պէտք է ուխտաւորները պահեն իրենց յարձակումների ժամանակ. օրինակ՝ ուր պահեն փողերը, ինչպիսի վտանգի դէպքում որքան տան եւն:

Արաբերէն «մըհտեսի» բառը Հայ ուխտագնացութեան պատմութեան մէջ կրկնակի իմաստ է ձեռք բերել: Այն նախ ստուգաբանուել է որպէս մահը տեսնող եւ տառացիօրէն Համահունչ է եղել նրան, ինչ ապրել են ուխտաւորներն այդ վտանգաւոր ճանապարհին: Բացի դրանից, մահտեսի-ուխտաւորը նա է, ով տեսել է Քրիստոսի մահը եւ հպուել է նրա սուրբ Գերեզմանին:

Ենթավերնագիր

Սբ Յակոբ աթոռանիստ, Երուսաղէմ

Պատրւող

Հասնելով Երուսաղէմ՝ Հայ ուխտաւորները գալիս էին Հայոց վանք: Այստեղ նրանք մի փոքր Հանգիստ էին առնում, ապա կէսգիշերին նրանց արթնացնում էին խոստովանահայրերը եւ յատուկ աղօթական արարողակարգով ուղեկցում նախ Սբ Յակոբ եկեղեցի, այնուհետեւ սուրբ Գերեզման: Երեք օր սրբատեղիների հզօր ազդեցութեան ներքոյ եւ խոստովանահայրերի օգնութեամբ ուխտաւորները աղօթքներով, զղմամբ եւ ինքնաքննութեամբ նախապատրաստում էին մեղքերի խոստովանութեան: Երրորդ օրը խոստովանելով մեղքերը՝ նրանք մասնակցում էին հօթ պատարագների՝ ընդդէմ հօթ մահացու մեղքերի:

Ենթավերնագիր

Սբ Փրկիչ Հայոց վանք, Երուսաղէմ

Պատմող

Սուրբ Երկիր գնացող ուխտաւորի համար Տերունական սրբավայրերը արքայութեան դռներ են երկրի վրայ: Եթէ այդտեղ մահը հանդիպէր եւ դու ճամբարիտ ուխտը սրտումդ կրէիր, դու կը մտնէիր յաւիտեանական կեանքի դռնով:

Սբ Սիոնի բարձունքի վրայ գտնուող այս վանքը կառուցուած է Կայիափա քահանայապետի տան վայրում: Այստեղ է Հայոց ագգային գերեզմանատունը, ուր երկրի վրայ իրենց երկրաւոր ուխտագնացութեան վերջին հանգրուանն են գտել բազմաթիւ յայտնի եւ անյայտ հայեր:

Այս շիրիմը 18-րդ դարի մեծանուն պատրիարք Գրիգոր Շղթայակիրինն է: Նա իր վրայ կամովին կրել է շղթաներ եւ ուխտել, որ չի հանելու դրանք, քանի դեռ չի վճարել հայերի վերջին պարտքը Սուրբ Երկրում: Նա ոչ միայն փրկել է հայերի դարաւոր ժառանգութիւնը, այլեւ ընդարձակել հայերի կալուածները եւ կառուցել բազմաթիւ եկեղեցիներ եւ շինութիւններ:

Միշտ էլ ուխտաւորների մէջ մեծ թիւ են կազմել աղքատները, որոնք տարիներով տնտեսել են իրենց սուղ միջոցները՝ դառնալու մահտեսի: Նրանց մի մասը սեփական մահուանը հանդիպել է Երուսաղէմում, եւ նրանց մարմինները ամփոփուել են այս շինութեան մէջ, որը ծառայել է որպէս ընդհանրական գերեզման անտէր ուխտաւորների համար: Պատմութեանն անյայտ են նրանց անունները, բայց սա Երուսաղէմի չգրուած պատմութիւնն է:

Ենթավերնագիր

Եգիպտոս

Պատմող

Անապատը, բացի իր աշխարհագրական ընկալումից, քրիստոնէութեան մէջ ձեռք է բերել շատ կարեւոր հոգեւոր իմաստ: Դեռ վաղնջական ժամանակներից անապատը ձգել է բոլոր նրանց, ովքեր կամեցել են հեռանալ աշխարհից եւ հասնել հոգեւոր կատարելութեան: Քրիստոնէական շրջանում անապատականութիւնը վերածուած է մի հզոր շարժման եւ դառնում հոգեկեցութեան ամենախոր դրսեւորումներից մէկը: Այս շարժումը սկզբնաւորուել է եգիպտական անապատներում:



Ենթապերնագիր

Սբ Կատարինէի վանք, Սինա լեռ

Պատրւոյ

Հայ վանականութեան եւ ուխտագնացութեան սրբազան աշխարհագրութիւնը ծաւալուած է մինչեւ Եգիպտոս: Սինա լեռան ստորոտում է հռչակաւոր Սբ Կատարինէի վանքը: Վանքը կառուցուած է Յուստինիանոս Ա կայսեր կողմից 6-րդ դարում: Վանքի բարձր պարիսպները, որ անշուշտ ունեցել են պաշտպանողական նպատակ, կարծես շեշտում են ներսում պարփակուածի կարեւորութիւնը: Եզակի է վանքի 5–6-րդ դդ. հնագոյն սրբապատկերների հաւաքածուն: Այստեղ է սբ Փրկչի յայտնի հնագոյն սրբապատկերը: Այս վանքում է գրուել Յովհաննէս Կղեմաքոսի հռչակաւոր «Սանդուղք աստուածային ելից» աշխատասիրութիւնը: Վանքը հռչակաւոր է մատենադարանով, ուր պահուած են յունարէն, ղպտերէն, արաբերէն, հայերէն, եբրայերէն, վրացերէն, ասորերէն հագուագիւտ ձեռագրեր:

Սա յունական վանք է, սակայն կան բազմաթիւ վկայութիւններ այստեղ ապրած Հայ ճգնաւորների եւ վանականների մասին: Այս մասին վկայութիւններ կան Յովհաննէս Մոսքոսի նշանաւոր «Հոգեւոր մարդագետին» ժողովածուում: 7-րդ դարի պատմիչ Անաստասիոս վանականը պատմում է Սինայում ապրող մի Հայ ճգնաւորի մասին՝ Եղիշէ անուկով, ով հռչակաւոր էր դարձել իր տեսիլքներով եւ հրաշագործութիւններով: 10-րդ դարի Ալեքսանդրիայի պատրիարք Եւտիքէսը յիշատակում է Հերակլ կայսեր բանակի Հայ հրամանատար Վահանին, որը դառնում է Սինայի վանքի վանականներից մէկը եւ նուիրւում գիտական ուսումնասիրութիւնների:

Վանքի գլխաւոր սրբութիւնը Մովսէս մարգարէի տեսած անկէզ մորենին է: Կոստանդինոս կայսեր մայրը՝ սբ Հեղինէն, եկել է ուխտագնացութեան այստեղ եւ այդ յայտնութեան վայրում կառուցել այս մատուռը 4-րդ դարում: Այս սրբութիւնը պաշտուած է նաեւ հրեաների եւ մահմեդականների կողմից:

Վանքը հող գրեթէ չունի, եւ ննջեցեալ վանականներին առանձին գերեզմաններում ամփոփելն անհնարին է: Գոյութիւն ունեցող մի քանի գերեզմաններում հերթով թաղում են ննջեցեալներին՝ նախորդների ոսկորները հանելով եւ ամփոփելով այս յատուկ եղբայրական հանգստարանում:

Առանձին պահարանում է պահպանվում Երեզ դարում ապրած սբ Ստեփանոսի ամբողջական գգեստաւորութեամբ կմախքը՝ նստած վիճակում: Նա եղել է Սբ Կատարինէ վանքի խոստովանահայրը, որ նստած ընդունում էր սբ Սինա բարձացողների խոստովանութիւնները, եւ այդ դիրքում էլ նրան գտել են ննջած:

Վանք այցելող ուխտաւորները մասնակցում են ժամերգութիւնների եւ աղօթքների, Հանգրուանում են վանքին կից Հիւրանոցում եւ ապա բարձրանում Սինա լեռ: Վանքը դարեր շարունակ Հայ ուխտագնացութեան ամենասիրուած վայրերից է: Անաստասիոսը պատմում է 800 Հոգանոց Հայ ուխտաւորների խմբի մասին, որ եկել էին բարձրանալու Սինա լեռ:

Յուստինիանոս կայսեր կողմից Հաստատուած Սբ Կատարինէ եկեղեցու դռների վրայ կան տարբեր ժամանակների Հայ ուխտաւորների արձանագրութիւններ:

Անյիշելի ժամանակներից այստեղ ապրող բեղունները մասնագիտացել են՝ ուխտաւորներին ուղեկցելու սբ Սինա լեռան գագաթ: Ճանապարհի մի մասը կարելի է անցնել ուղտերով, թէպէտեւ շատերը նախընտրում են վանքից մինչեւ գագաթ ելնել ոտքով:

Զարմանալի միստիկ շունչ ունեն այս լեռները՝ երկնամերձ եւ դէպի երկինք Հրաւիրող: Կարծես այսպէս պէտք է լինի ճանապարհը դէպի երկինք: Աշխարհիկ բոլոր պատկերները դադարում են, միայն մնում են քարեղէն վկայութիւններ եւ յիշողութիւններ: Միգուցէ՞ Աստուծոյ օրէնքը գրուեց քարէ տախտակների վրայ, որովհետեւ քարացել էին մարդկային սրտերը: Քանի՜ քարացած սրտեր են այստեղ բացուել:

«Տէր Յիսուս, ողորմիր Կղեմէսին, Տիրանին, Անատոլին, Եղիաբին, Եղիշէին, Աբէլին»:

«Տէր, ողորմիր ուղտին եւ ուղեկցողին»:

Այս լաւ պահպանուած Հայերէն արձանագրութիւնները Սինա լեռան գագաթին են, ուր Մովսէսը ստացել է տասնաբանեայ օրէնքը:

Սինա լեռան շրջակայքում՝ տարբեր հովիտներում, կան Հայ ուխտաւորների թողած բազմաթիւ Հայերէն արձանագրութիւններ, որոնցից հնագոյնները, ըստ գիտնականների, Երեզ դարի են:

Ենթավերնագիր

Նազարեթ

Պապւնոյ

Մինա այցելած նոյն ուխտաւորները արձանագրութիւններ են թողել նաեւ այլ վայրերում, որոնք օգնում են մեզ թուագրելու դրանք:

Նազարեթում յայտնաբերուած Հայերէն արձանագրութիւնների շնորհիւ մենք կարող ենք ասել, որ դրանք աւելի վաղ շրջանի են, քան 614 թ. պարսկական արշաւանքը, երբ Նազարեթի Կոստանդինեան եկեղեցին հիմնադրուած կործանուեց:

Ենթավերնագիր

**Թաբոր**

Պապւնոյ

5-րդ դարի Հայ պատմիչ Եղիշէն, Հայ ուխտաւորների հետ ուխտագնացութեան գալով Սուրբ Երկիր, նկարագրում է, որ ականատես է եղել երկնային կեանք վարող վանականների՝ Թաբոր լեռան վրայ, ուր պայծառակերպուեց Քրիստոսը: Նրա խմբից երկուսը, խորապէս տպաւորուելով այդ վանականներից, կամեցել են մնալ եւ ճգնել այդ վայրերում:

Ենթավերնագիր

**Յուդայի անապատ**

Ենթավերնագիր

**Սբ Գեորգ Խոզիբայի վանք**

Պապւնոյ

Նայելով այս վայրերին՝ ականայից յիշում ես աստուածաշնչեան մեծ ճգնաւորներին՝ Եղիա մարգարէին եւ Յովհաննէս Մկրտչին: Քրիստոնէութեան առաջին դարերից Յուդայի անմարդաբնակ անապատը իր վայրի լեռներով ձգել է բազմաթիւ ճգնաւորների եւ դարձել հանգրուան հոգեւոր կատարելութիւն փնտրողների համար, որոնք այստեղ են եկել աշխարհի տարբեր ծայրերից: Այստեղ՝ տերունական սրբավայրերի մերձաւորութեամբ, ձեւաւորուել են նշանաւոր վանական կենտրոններ:

Վանական շարժումը մեծ թափ է ստանում 5-րդ դարում, եւ Պաղեստինը դառնում է վանական կեանքի կենտրոն: 5-րդ դարում հիմնուած վանքերից առաջինը Սբ Գեորգ Խոզիբայի վանքն է Վազի Քիլիզ կոչուած կիրճում: Այստեղ են եկել ճգնելու նաեւ Հայեր:

Վանքի գերեզմանատանը կան բազմաթիվ հայանուն վանականների շիրիմներ:

Այս վանքում է գտնուում նաև այն նշանաւոր քարայրը, ուր ապրել է Եղիա մարգարէն եւ կերակրուել ագռաւների կողմից:

Ենթավերնագիր

Սբ Սաբասի վանք

Պատմող

Սբ Սաբասի վանքը պաղեստինեան վանականութեան սիրտն է: Նրա հիմնադիր սբ Սաբասը եղել է ոչ միայն մեծագոյն ճգնաւոր, այլև վանական կեանքի եզակի կազմակերպիչ: Սբ Սաբասը կանոնացրել է եւ գործադրել իր ուսուցչի՝ սբ Եւթիմիոս Մեծի մշակած վանական կենցաղավարութեան մանրազնին կանոնները, որոնք յետագայում դարձան վանական կեանքի առանցքը Պաղեստինում եւ նրա սահմաններից դուրս:

Վանականներն այստեղ ապրում են այնպէս, ինչպէս սահմանել է սբ Սաբասը 5-րդ դարում, վանքում չկայ հեռախօս եւ էլեկտրականութիւն: Վանքի գլխաւոր սրբութիւնը սբ Սաբասի մարմինն է:

Ննջեցեալ վանականների մարմիններն ամփոփուում են այս քարեղէն դռներով բացուող ստորգետնեայ դամբարանում: Վանականները պատմում են, որ այդտեղից երբեմն սկսում է տարածուել զարմանալի անուշահոտութիւն:

Սբ Սաբասի վանքն ունի հայերի հետ կապուած բաւականին յիշատակներ:

Ճ-րդ դարի վանական եւ վարքագիր Կիւրեղ Սկիւթոպոլսեցին տեղեկութիւններ է հաղորդում սբ Սաբասին ժամանակակից հայ ճգնաւորներ Երեմիայի, Պետրոսի, Պօղոսի եւ այլոց մասին, որոնք ճգնում էին սբ Սաբասի սկզբնական ճգնարանի հարեւան այրերում:

Այստեղ է ճգնել սբ Սաբասին ժամանակակից հայագգի սբ Յովհաննէս Լռակացը, որը ճգնել է Սբ Սաբասի վանքի հակառակ կողմում գտնուող Վազի Անուրում: Նա մեծ համարում է վայելել սբ Սաբասի մօտ: Կիւրեղ Սկիւթոպոլսեցին սբ Յովհաննէս Լռակացի մասին գրում է. «Նա Սուրբ Հոգու նուիրագործուած տաճար էր, ունէր աստուածային առաքինութիւններ, հրեշտակային կեանք էր վարում եւ գովաբանուում էր ամենուր»:

Սբ Սաբասի օրօք հայերի քանակը այնքան է աւելացել այստեղ, որ Սաբասը նրանց տուել է այս աստուածատուր եկեղեցին եւ արտօնել, որ իրենց լեզուով պաշտամունք մատուցեն:

Անկասկած 5-րդ դարի պաղեստինեան վանականութեան ամենանշանաւոր դէմքը սբ Եւթիմիոս Մեծն է, որը իրաւամբ համարուում է պաղեստինեան վանականութեան հիմնադիրը:

Ենթավերնագիր

Սբ Եւթիմիոսի վանք

Բենջամին Հար-Էվեն

Հիմա մենք Սբ Եւթիմիոսի վանքում ենք: Սբ Եւթիմիոսը ազգութեամբ հայ է, ծնուել է Հայաստանում 377 թուականին: Իսրայէլ է եկել 405 թուին եւ 426 թուականին հիմնել է Սբ Եւթիմիոսի վանքը, որը գտնուում է Միշոր Ազուամիմում: Այստեղ նա դարձել է Յուդայի անապատի վանական կեանքի հոգեւոր հայրը:

Վանականներն այստեղ էին գալիս՝ նրա մօտ սովորելու: Եւ այստեղից նրանք գնում էին հեռուներ՝ այլ վանքեր հիմնելու: Սբ Եւթիմիոսն ապրեց մինչեւ 475 թուականը եւ իր աշակերտներին պատգամեց իր մենակեցական վանական միաբանութիւնը վերածել արդէն կազմաւորուած ու մշտական կառոյցներ ունեցող համակեցական վանական համալիրի: Աշակերտները կատարեցին նրա կամքը:

Նրանք սբ Եւթիմիոսին թաղեցին նրա բնակեցրած խցում, որը դարձաւ դամբարան: Ապա շարունակեցին շինութիւններ կառուցել, մինչեւ որ բնակավայրը ստացաւ վանական համալիրի ներկայիս տեսքը: Վանքը գոյատեւել է մինչեւ խաչակիրների ժամանակաշրջանը եւ լքուել մամլուքների կողմից Սուրբ Երկրի նուաճման շրջանում՝ 13-րդ դարում:

Այս վանքի պատմութիւնն ընդգրկում է Յուդայի անապատում վանական կեանքի բոլոր կողմերը. այստեղ է այն ծագել եւ այստեղից է տարածուել Յուդայի անապատի ողջ տարածքով մէկ:

Պատմող

Ջուրը կենսական պայման է անապատական կեանքի համար: Այս մեծ ստորգետնեայ ջրամբարը, որը նախատեսուած է տանիքով հոսող անձրեւաջրերի հաւաքման համար, կառուցուել է հէնց սբ Եւթիմիոսի ձեռքով:

Փաստորէն հայերը եղել են Սուրբ Երկրի վանական-ճգնաւորական կեանքի հիմնադիր տարրերից մէկը 4–6-րդ դարերում: Դեռեւս մինչեւ Յուստինիանոս Ա կայսեր ժամանակաշրջանը Քաղկեդոնի ժողովի բաժանարար գծերը չեն եղել վանական կեանքում, եւ հայերն ու յոյները միասին ճգնել են միեւնոյն վանքերում առանց որեւէ խոչընդոտի:

Ենթավերնագիր

Ռոքֆելեր թանգարան, Երուսաղէմ

Դաւիդ Ամիր

Երուսաղէմի #1 մայրուղում՝ Մուսրարայի հարեւանութեամբ, պեղումներ արուեցին նոր լայն ճանապարհ բացելու նպատակով: Եւ մենք յայտնաբերեցինք բիւզանդական եւ վաղ մահմեդական շրջանի, այսինքն՝ մ.թ. 5-րդ, 6-րդ, 7-րդ դարերի վանական մի համալիր:

Սկզբում յայտնաբերեցինք եկեղեցու բուն տարածքը՝ ստորգետնեայ դամբարանով եւ ապսիդով՝ վրան յունարէն արձանագրութիւններ: Այնուհետեւ ընդլայնեցինք պեղումները վանական համալիրի միւս հատուածներում եւ պեղեցինք մի շինութիւն՝ հիմնական սրահով, որը հաւանաբար ծառայել էր որպէս հիւրասենեակ կամ սեղանատուն: Ապա տեսանք մի կլոր մեղալիոն՝ վրան արձանագրութիւն: Խճանկարների վրայ կար կանաչ ժանգի շերտ, եւ արձանագրութիւնները գծուարընթեռնելի էին: Մենք ինքնաբերաբար ենթադրեցինք, որ դրանք յունարէն էին, ինչպէս Իսրայէլում պեղումների ժամանակ յայտնաբերուած արձանագրութիւնների մեծ մասը: Բայց մաքրելուց յետոյ հասկացանք, որ դրանք ոչ թէ յունարէն էին, այլ հայերէն:

Ենթավերնագիր

Սբ Համբարձման ուսական վանք, Զիթնեաց լեռ

Պարունդ

Հայկական խճանկարներով յատկապէս առատ է Զիթնեաց լեռան Սբ Համբարձման ուսական վանքը:

Միգուցէ այս ամէնը նո՞յնպէս կարծուել կամ ներկայացուել է որպէս բիւզանդական... Սակայն հայերէն արձանագրութիւնները կասկած չեն թողնում դրանց ծագման վերաբերեալ:

«Ի յիշատակ տէր Յակոբի՝ ըստ իր խնդրանքի»:

«Սա է տապանը երանելի Շուշանիկի՝ Արտաւանի մօր»:

7-րդ դարում ապրած հայ Անաստաս վանականը, որ եկել էր Սուրբ Երկիր՝ նկարագրելու զուտ հայկական վանքերը, մեզ տեղեկութիւններ է հաղորդում աւելի քան 70 հայկական վանքերի մասին: Վերջին հնագիտական պեղումների ժամանակ յայտնաբերուած հայկական խճանկարները նրանցից շատերի վրայ լոյս են սփռում:

Ենթավերնագիր

Սբ Պողիկոսի վանք, Երուսաղէմ

Հայր Միշելէ Պիչիրիլո

Դամասկոսի դռներից դուրս Սանտիագո փողոցի շրջանում իրականացուած պեղումները ցոյց են տուել, որ քաղաքի այս հատուածը ծածկուած է եղել վանքերով: Բազմաթիւ վանական մատուռների միջից այս մէկը ճանաչուած էր առանձնայատուկ կերպով: Մատուռը նուիրուած էր Երուսաղէմում ապրած այն հայերի յիշատակին, ում ընծայաբեր մեկենասութեամբ 6-րդ դարի կէսերին կառուցուել է մատուռն ու կերտուել խճանկարը:

Այս արձանագրութեան մէջ ասուած է. «Ի յիշատակ եւ ի փրկութիւն այն հայերի, ում անունը, ո՛վ Տէր, ինքդ գիտես»: Յիշատակուած անձինք մատուռը կառուցած բարերարներ են, ովքեր կամեցել են մնալ անանուն: Սակայն մենք կարեւորում ենք այն հանգամանքը, որ արձանագրութիւնը վկայում է այստեղ՝ Երուսաղէմում, բաւական գործուն եւ հարուստ հայոց համայնքի ներկայութեան մասին, որը կարողացել է հովանաւորել այսչափ փայլուն խճանկարի ստեղծումը:

Պարմոն

Ջարմանալիօրէն, այս խճանկարների արձանագրութիւնները նաեւ պահպանուած ամենահին հայատառ վաւերագրերն են աշխարհում:

Ենթավերնագիր

Ժամանակակից մարտահրաւէրներ

Պարմոն

Քրիստոնեաների քանակը Սուրբ Երկրում գնալով նուազում է: Արաբա-իսրայէլական հակամարտութիւնը եւ բաժանարար գծերը

ստեղծել են նոր իրավիճակ: Այս պայքարի արդիւնքում ծնունդ առած աննախադէպ ազգայնամոլութիւնն ու կրօնամոլութիւնը քրիստոնէութեանը կանգնեցրել են անհետացման վտանգի շէմին այս տարածաշրջանում: Արեւմտեան աշխարհն իր բոլոր խաղաղարար ծրագրերով ոչ մի իրատեսական պատկերացում չունի Սուրբ Երկրում քրիստոնեաների ապագայի վերաբերեալ:

Քրիստոնեաներն արդէն մի անգամ այսպիսի ճակատագրի արժանացել են: Յաւալիօրէն, երբեմնի քրիստոնէական քաղաքակրթութեան օրբանում՝ այժմեան Թուրքիայի Հանրապետութիւնում, միլիոնաւոր քրիստոնեայ Հայերից, յոյներից, ասորիներից մնացել է ընդամէնը 60 հազար, գրեթէ ամբողջութեամբ՝ Ստամբուլում:

Քրիստոնեաների մէջ նոյնպէս լուրջ խնդիրներ կան: Դաւանական պառակտումները, անհանդուրժողականութիւնը, իրաւունքների պահպանման խնդիրները ներսից պառակտել են նրանց ու դարձրել խոցելի՝ արտաքին վտանգներից: Սիրոյ պակասը դարձել է սիրոյ կրօնի հետեւորդների մեծագոյն խնդիրն ամենուր եւ յատկապէս այստեղ:

Հայկական համայնքը, բնականաբար, ենթարկւում է այս բոլոր վտանգաւոր փորձութիւններին:

Հայերի ներկայութիւնը Սուրբ Երկրում, լինելով նրա ինքնութեան անբաժանելի մասը, նաեւ Հայ ժողովրդի ինքնութեան մի նուիրական եւ թանկագին մասն է: Այստեղ խոր արմատներ գցած Հայ համայնքը վկայութիւնն է դարերով այստեղ ապրած, մաքառած եւ արդիւնաւորած ժողովրդի:

Այսօր նրանց յետնորդները սովորում են Երուսաղէմի Հայկական դպրոցում: Իրենց մայրենի լեզուին զուգահեռ նրանք սովորում են եբրայերէն, արաբերէն, անգլերէն եւ այլ լեզուներ՝ այս բազմաձևակոյթ երկրում իրենց արժանապատիւ տեղը գրաւելու իրենց հայրերի պէս:

Ենթավերնագիր

Երուսաղէմի Հայկական ճեմարան

Պապմոռ

Երուսաղէմի Հայկական աստուածաբանական ճեմարանում սովորում են Հայ երիտասարդներ ամբողջ աշխարհից, հիմնականում՝ Հայաստանից: Դասերը զուգորդւում են բաւականին լուրջ ծիսական ծանրաբեռնուածութեամբ:



Ենթավերնագիր

Սբ Յակոբ աթոռանիստ, Երուսաղէմ

Պատրւնդ

Հայ ուխտագնացութեան ոգին դեռ անմար է: Միայն թէ ուխտաւորներին այստեղ բերող աշխարհագրութիւնը շատ է փոխուել: Յեղասպանութեան պատճառով հայութեան զգալի մասն արմատախիլ է եղել իր պատմական հայրենիքից եւ այժմ սփռուած է ամբողջ աշխարհով մէկ:

Ամէն տարի Զատիկին այստեղ են գալիս ե՛ւ հայաստանցի, ե՛ւ սփիւռքահայ ուխտաւորներ: Զատիկին յաջորդող երկուշաբթի օրը Սբ Յակոբում մատուցուած է ուխտաւորաց հանդիսաւոր պատարագ: Այս պատարագը մի իւրայատուկ բիւրեղացում է հայ ուխտագնացութեան հոգու, որ դարեր շարունակ սնել եւ պահպանել է այս սրբավայրերը:

Այս ոգու մի սրտառուչ վկայութիւն գալիս է 7-րդ դարից: Հայոց Կոմիտաս կաթողիկոսին ուղղուած նամակում Սբ Թէոդոսիոսի վանահայր Մողեստոսը, որը յետագայում դարձաւ Երուսաղէմի պատրիարք, ծանուցում է, որ պարսկական դաժանագոյն արշաւանքից յետոյ Երուսաղէմի առաջին ուխտաւորները եղել են հայերը. «Մեր սրտերը ցնծացին նրանց գալստեամբ, եւ մենք հասկացանք, որ ամենեւին մոռացուած չենք Աստուծոյ կողմից: Այս ուխտագնացութիւնը մխիթարեց մեզ մեր տառապանքների մէջ»:

Ենթավերնագիր

Անդաստան

Պատրւնդ

Այստեղ շատերը եկել են տիրելու, կոտորելու, աւերելու, թալանելու: Եկել են իրենց աշխարհիկ իշխանութիւնը Աստուծոյ ժառանգութեան վրայ հաստատելու: Հայերը երբեք սրով չեն եկել այստեղ: Ազգային սահմանափակութիւնից անհամեմատ աւելի մեծ սպասարուութեան մի կանչ է նրանց բերել այս վայրեր:

Մայրլ Սթոուն

Հայերը մեծ դերակատարում են ունեցել Խաչակիրների ժամանակաշրջանում: Երուսաղէմի թագաւորները կնութեան են վերցրել հայուհիներ: Յիրաւի, հայերը ազգային միակ փոքրամասնութիւնն

են, որին յաջողուել է սերունդներ շարունակ գոյատևել Իսրայելում՝ քրիստոնէութեան սկզբնաւորումից՝ մօտաւորապէս 4-րդ դարից, մինչեւ հիմայ:

Ենթավերնագիր

### Ֆերմաններ

Պարսնոյ

Հայերի դերին Սուրբ Երկրում կարելի է հետեւել Երուսաղէմի հայոց պատրիարքարանում պահուող յոյժ արժէքաւոր Ֆերմաններով: Դրանց մէջ են Մուհամեդի, Օմարի, Ալի Խալիֆի, Սալահեդինի հնագոյն Ֆերմանները, ինչպէս նաեւ օսմանեան տիրապետութեան շրջանի բազմաթիւ կարեւոր Ֆերմաններ:

Վերջին եւ կարեւորագոյն փաստաթղթերից է 1852 թ. Աբդուլ Մաջադ սուլթանի կողմից տրուած Ֆերմանը, որը ճանաչուել է յետագայում Բրիտանական մանդատի եւ Իսրայէլի պետութեան կողմից: Այս փաստաթուղթը հաստատում է «Ստատուս քուո»-ի սկզբունքը Սուրբ Տեղերի վրայ, որը սահմանում, կարգաւորում եւ պահպանում է, առանց փոփոխութիւնների, սեփականատիրական իրաւունքները Սուրբ Տեղերում՝ դրանք բացառաբար շնորհելով երեք քրիստոնէական դաւանանքների հետեւորդներին՝ յոյներին, հայերին եւ լատին կաթոլիկներին:

Վերնագիր

### Սբ Լոյսի խորհուրդը

Պարսնոյ

Եթէ ուզում ես որեւէ մէկին ճանաչել, նրա հետ պէտք է ուխտի գնաս: Նրան պիտի տեսնես հոգեւորի եւ մարմնաւորի բախման սահմանագծում, երբ ի յայտ են գալիս մարդու տկարութիւնն ու հզօրութիւնը, սէրն ու ատելութիւնը:

Սա նաեւ ճիշտ է ազգերի համար: Սովորական ժամանակներում նրանց այս գանձերը անտեսանելի են, ծածկուած են անհեթեթ բարքերի ու հոգսերի փոշու տակ: Նրանց ինքնութիւնն ընկալելու համար պէտք է գնալ նրանց ուխտագնացութեան հետքերով, տեսնել նրանց հոգու թռիչքը, ինքնագոհողութեան պատրաստակամութիւնը եւ նուիրուելու ունակութիւնը:

Երոսադէմը սրբազան ծէսերի աշխարհ է: Մէկը միևսից գեղեցիկ ծէսեր եւ հանդիսաւոր թափօրներ՝ սուրբ տեղերի վեհութիւնն ընդգծող եւ ուխտաւորներին խորապէս տպաւորող: Աւագ շաբաթը ծէսերով առաւել յագեցած ժամանակահատուածն է: Իսկ Զատիկը ծիսական բարձրակէտն է Յարութեան քաղաքի:

Քրիստոսի գերեզմանից հանուող լոյսի արարողութիւնը այն բաղձալի պահն է, որին կամենում է ականատես լինել ամէն մի ուխտաւոր: Սակայն այդ օրը մուտքը դէպի հին քաղաք սահմանափակ է: Յանկացողների քանակը մէկ կարգ գերազանցում է Յարութեան տաճարում մարդկանց տեղաւորուելու ֆիզիկական հնարաւորութիւնները: Ուստի քչերին է յաջողում այդ օրը տաճար մտնել:

Այս օրուայ գլխաւոր դերակատարները հայերն ու յոյներն են: Հայ եւ յոյն հոգեւորականներին է վերապահուած Լուսահանութեան արարողութեան իրականացումը: Նրանք Յարութեան տաճար են ժամանում հանդիսաւոր թափօրներով: Ծակատագրերով իրար հետ փոխաշղկապուած, նմանատիպ պատմական ողբերգութիւն ապրած հայերը եւ յոյները շղթայուած են միասին լինելու սպասաւորութեամբ՝ այս կարեւոր վայրում: Պարագոքսալ են նրանց կորցրած արտաքին մասշտաբները եւ ձեռք բերած հոգեւոր չափումները: Սա է նրանց իրականութիւնը: Լինել աշխարհի հոգեւոր կենտրոնում եւ իրականացնել մի տիեզերական սպասաւորութիւն:

Աշխարհի տարբեր ծայրերից հաւաքուած բազմալեզու ամբօխը սրտատրոփ սպասում է Տիրոջ Գերեզմանից հանուող՝ յարութեան լոյսին: Գերեզմանում են յոյների պատրիարքը եւ հայ վարդապետը: Նրանք պէտք է վառեն կանթեղները եւ յարութեան լոյսը բաշխեն ուխտաւորներին: Տաճարում հաւաքուած հայ ուխտաւորները վանկարկում են՝ Հայաստան, Հայաստան: Առաջինը լոյսը հանում են հայերը: Վայրկեանների ընթացքում տաճարը լուսաւորում է կրակէ լեզուներով: Հայկական գանգերի ղօղանջն ազդարարում է Քրիստոսի յարութեան աւետիսը:

Զատիկական այս ուրախութեան մէջ մի համամարդկային կանչ կայ: Պէտք է որեւէ բան թարգմանել: Ապրումի ունիվերսալութիւնը վեր է խօսքային եւ մշակութային սահմանափակութիւններից: Լուսահանութեան սպասման լարումը վերափոխուած է խաղաղութեան եւ հաշտութեան հոգու:

Քանի՜ լոյս է վառուել մարդկային հոգիներում: Արտաքին հրաշքի սպասումը միգուցէ՞ առաջնորդի մարդկանց դէպի ներքին վերափոխութեան հրաշքը: Ինչպէս ասում է Քրիստոսը. «Եկայ կրակ գցելու երկրի վրայ: Եւ ի՞նչ եմ կամենում. որ արդէն բորբոքուած լինէր» (Ղուկ. ԺԲ 49):

Զատկական այս գունեղ պատկերը դեռ չի ամբողջացել: Օրուայ ընթացքում բոլոր Եկեղեցիները իւրայատուկ գեղեցիկ արարողութիւններ են կատարում, որ ականատեսների վրայ անջնջելի տպաւորութիւն է թողնում: Մի շատ ինքնատիպ արարողութիւն էլ կատարում է Եթովպական Եկեղեցին: Եթովպացիները առաջին քրիստոնեայ ժողովուրդներից են, որոնք քրիստոնեայ դարձան 4-րդ դարում: Նրանք իրենց դաւանակից հայերի, ղպտիների եւ ասորիների հետ պատկանում են Հին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքին: Եթովպացիների գատկական տօնախմբութիւնը կատարում է երեկոյան՝ գիշերային մթութեան մէջ, հայոց Սբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու տանիքին:

Սբ Գրիգոր Լուսաւորիչը Սուրբ Յարութեան տաճարական համալիրի մաս է կազմում: Համաձայն աւանդութեան՝ Հայ Եկեղեցու առաջին հայրապետը այստեղ, որը մի փոքր վերեւ է Խաչի գիւտի վայրից, տարիներով ճգնել է՝ իրեն անարժան համարելով տեսնել Տիրոջ Գերեզմանը:

Զատկական գոյները մեզ բացում են մարդկանց հոգեւոր միասնութեան մի հարստութիւն: Ազգերը այստեղ ներկայ են ոչ թէ իրենց քանակական տուեալներով, այլ հոգեւոր վկայութեան խորութեամբ եւ անցած ճանապարհի առանձնայատկութեամբ: Իսկ արդեօք հնարաւոր է չափել, թէ դրա համար որքան են վճարել փոքր ազգերն իրենց տառապանքներով ու զոհողութիւններով: Արեւմտեան աշխարհի համար Քրիստոնեայ Արեւելքը հնարաւորութիւն է վերաբացայայտելու մի ճշմարտութիւն, որի վրայ ժամանակը իշխանութիւն չունի: Մարդկութեան պատմութեան ընթացքում յաճախ մեծութիւնը շփոթուել է տեսանելի մակերեսային իրողութիւնների հետ: Նոյնիսկ առաքեալներն էին վիճում իրար հետ մեծութեան մասին: Եւ Քրիստոսը, նրանց մէջ կանգնեցնելով մի մանուկի, ուսուցանեց, որ իրական մեծութիւնը իրագործուում է այս աշխարհի համար անհասկանալի փոքրութեան մէջ:

Փակում

*Սբ Յակոբի բակ, Կրեխայ*

Խորագիր

*Իւրաքանչիւր ճանապարհ սկիզբ է:*

Եզրափակիչ տիպրեր

## FROM ARARAT TO ZION

*Subtitle:*

At the Foot of Mount Ararat

*Title:*

Each beginning is a way.

*Caption:*

Vem Media Arts presents  
From Ararat to Zion

*Opening credits*

*Narrator:*

Everything is strangely familiar here. From the very first moment, you immediately feel a surprising intimacy with these sacred sites and a desire to remain here forever. All the earthly perceptions fade away as you feel confident that heaven is attainable.

This is the City of Peace that has never known peace, where many wars have been waged. But here an amazing inner peace overwhelms the soul, and you must be vigilant against losing sight of reality.

If such a mix of incompatible nations and religions were brought together anywhere else, it would be an explosive combination.

But here, in this city, an imperceptible power, an inexplicable blessing, keeps this unusual and unlikely mix in virtual balance and harmony. Here, the splendor of human unity runs in parallel with an acute awareness of human diversity, and both are keenly felt. As you experience the world here, you feel as if you are standing at its epicenter.

Everyone interprets the holiness of this land in his or her own way. And if you listen to each interpretation, you'll see that each of them has fought for his or her own interpretation of this holiness through the ages – with weapons and with love, with diplomacy and with deception.

At the cost of immeasurable sacrifice and exertion, people have clung to and continue to cling to these places – in witness of their faith in God.

It is the pilgrims who fully realize the spirit of this city. There is a ceaseless flow of pilgrims from all corners of the world. Christians have an existential bond with these sacred sites. For them, this is the land of salvation where the landmark events of their faith took place.

In this unique cradle of religions and nations, for pilgrims there is much that seems at first sight illogical – not least, the Armenian presence. Why is there an Armenian quarter among the four quarters of Jerusalem? Why are the Armenians among the key legal proprietors of the major Christian sanctuaries?

*Michael E. Stone, Professor of Armenian Studies,  
Hebrew University of Jerusalem:*

*The Armenian presence in the land of Israel is known to date from the 4<sup>th</sup> century A.D. The first Armenian pilgrim is mentioned in the Hebrew Mekorot [Sources] in the 4<sup>th</sup> century. We have written proof of the continuing presence of Armenians in the Land of Israel from the 5<sup>th</sup> century, when Armenians started to write in their own alphabet, up till today.*

*Subtitle:*

Michael E. Stone, Professor of Armenian Studies, Hebrew University of Jerusalem

*Narrator:*

While some people know the story of Armenians in the Holy Land, most visitors are astounded to discover a significant presence of Armenians in Jerusalem, given Armenia's small size and

the total population of Armenians in the world. People are surprised because the story of the Armenians in the Holy Land has not yet been told.

*Caption:*

Untold Story of the Holy Land

*Subtitle:*

The Church of the Nativity, Bethlehem

*Narrator:*

The Birthplace of Christ is not only an Armenian pilgrimage shrine, but also an important center of monastic life. St. Jerome, who founded his famous Bible School in Bethlehem in the 4th century, testifies to the great number of Armenian monks who settled here.

Armenian kings made pilgrimages to this place at various times. This wooden door at the entrance of the colonnaded nave of the Basilica of the Holy Nativity was built in 1227, by the order of King Hethoum I.

Here in Bethlehem, the Armenians have a large monastic center located on the south side of the Holy Nativity basilica.

The monastery in its present form dates from the period of the Crusades, but recent archeological excavations have revealed traces dating to the 4<sup>th</sup> century. Excavations at the refectory uncovered the upper parts of well-preserved pillars from St. Jerome's school, as described in some historical sources.

Armenians enjoy considerable rights at the sacred site of our Lord's birth. It is only the Armenians and Greeks who are entitled to celebrate Divine Liturgy in their native languages at the Star altar where Christ was born.

Every day, pilgrims are present to witness the magnificent Divine Liturgy in Classical Armenian that has been offered here through the ages.

The number of pilgrims who have visited this site over the centuries is beyond counting, but their prayers still echo inside these walls.



*Subtitle:*

The Church of the Holy Sepulcher, Jerusalem

*Narrator:*

The Church of the Holy Sepulcher is the heart of the Christian pilgrimage to the Holy Land. The most meaningful events in Christian history occurred here at this site. Both Golgotha and Christ's Tomb are here – Crucifixion and Resurrection, death and life woven together and inseparably. This sacred church is the focal point of a vast outflow of human emotion. It would be impossible to detail the whole range of miraculous events, healing experiences, and amazing personal conversions that have occurred at this place.

The world full of controversies is left outside. Human life is brought together here into one integral harmonious picture, where each stirring of the soul, every sound and color, has its own place and significance. Here nothing is lost: everything comes together bit by bit in an accumulation of holiness around the axis of the God Incarnate. In Christ's human reality, every human life has its own share and its own vocation; and each person desires to see his or her reflection in the pure mirror of the Perfect Human.

Pilgrims from all parts of the world have come in an endless stream through the centuries. They hear worship being conducted in a language they do not understand. Who are these people, and why are they here?

At first glance, the rights the Armenians enjoy here in Jerusalem seem out of proportion. But Armenians have resided in this place ever since the establishment of the Church of the Holy Sepulcher by Emperor Constantine the Great. In 335 A.D. Patriarch Macarius of Jerusalem invited the Armenian Catholicos St. Vrtanes to the consecration ceremony of this church, which shows that the Armenians were quite influential and respectable here in those days.

Every night, the doors of the church are locked from the outside with the same ritual – a ritual that has been performed without interruption for over eight hundred years ever since Saladin conquered Jerusalem in 1187.

To understand the spirit of the church of the Holy Sepulcher you should stay here at night, when the flow of pilgrims stops and the multilingual daytime torrent of voices ceases. The Church is left to itself, with the servants of its solitude, and the few fortunate pilgrims who succeed in getting permission to stay inside the church.

Silence here is not like silence anywhere else. It is more powerful than any type of voice or music. The silence of the Holy Sepulcher is the inexplicability of God's love, the inexpressibility of meeting with Him.

For a while, Christ's Tomb remains empty, but full of meaning, fertile, expressive.

After the period of silence comes the nocturnal prayers and Divine Liturgies, which are celebrated every day at the Tomb of Christ by the three custodians of this magnificent shrine – the Greeks, the Armenians, and the Catholics.

The Armenian Divine Liturgy, which is celebrated almost in the same manner in the Armenian churches worldwide, dates back to ancient times, to the very roots of the Christian rites. In fact the Armenian Divine Liturgy is based on the ancient traditions brought to Armenia from Jerusalem. Evidence of a fully organized Armenian religious community is provided by the extant Armenian book of holy readings, which presents the Christian Liturgy as it was performed in the Holy City during the 5<sup>th</sup> century.

The internal content of the Holy Sepulcher has been built up through the worship of God by various nations. The noise and tension of the world is left behind, and a multicultural ritual mosaic emerges from the silence, with sweet incensing, ancient prayers and spell-binding chants. Traditions are carefully observed here; everything is performed in the same manner as it has been throughout the centuries. The rites are performed in languages no longer in use nowadays. Ancient Greek, Classical Armenian and Latin are interwoven here – they are the historic memory and contemporary presence of two millennia.

The doors are closed and opened from inside the church as well. This function is carried out in turn by Armenian, Greek, and Roman Catholic clergy who are entrusted with serving in the church.

The right of locking the door on the outside belongs to two Muslim families – the Judeh and the Nuseibeh families.

One of the families is entitled to keep the key, the other to lock and unlock the door. On major holy days, the heads of these families play a crucial role and unlock the door of the church personally. On ordinary days, a young Palestinian hired by the families performs the procedure of locking and unlocking the doors with a copy of the key.

*Subtitle:*

The Church of the Blessed Virgin Mary, Gethsemane

*Narrator:*

The first three queens of Jerusalem in the period of the Crusades were Armenians. The most famous among them was Queen Melisande, who reigned over Jerusalem from 1143, after the death of her husband Fulk of Anjou, the third Crusader king of Jerusalem, until 1161. She was a very pious person, and numerous churches were built in her time. She is associated with the construction of this Church, where services have been held by the Armenians and Greeks for centuries.

*George Hintlian, historian:*

This is the Tomb of Mary, and as we see, it is cut into a mass of rock, and throughout the ages we see that it has been eroded by pilgrims because the pilgrims used to come here with chisel and hammer, and then the crusaders came there to protect it from the pilgrims with a curtain of marble. It is also interesting in this tomb that behind me we see a mihrab, because the Muslims have veneration to this place and they used to come once a day to pay their respects.

In the history of the church the Armenians have played their big role. Queen Melisande who was Queen of Jerusalem has built the present structure, and later on King Hethum during his visit to the Holy Land also has done some construction work. But most important, as we see on this inscription, Patriarch Martiros, in the year 1420, did a lot of construction as mentioned in many historical sources.

In this particular church we have the tomb of Queen Melisande and Queen Arda and Morphia who are of Armenian origin. The histo-

rian of the crusaders, William of Tyre, mentions that it was the wish of Queen Melisande to be buried in this chapel, with a grid around it, and every day a mess was served here. So, here we still have the marble slab, which covers the tomb of Queen Melisande.

*Subtitle:*

George Hintlian, Historian

*Subtitle:*

The Armenian Cathedral of St. James

*Narrator:*

This is one of the principal shrines in the Holy Land, with its famous three hundred lamps. Beneath the main altar of the church is the grave of St. James the Just, brother of the Lord and first Bishop of Jerusalem. To the right of the altar is the apostolic throne of St. James the Just.

The ancient chapel located to the north of the Church holds another known sanctity, the head of St. James, son of Zebedee, the first martyr among the Apostles.

Gathered here are holy objects and relics which were rescued from thousands of Armenian monasteries that were destroyed and plundered when the Armenians suffered the first genocide of the 20<sup>th</sup> century.

Here too are the gifts donated by Armenian pilgrims from villages and towns that no longer exist, precious relics of Armenian royal houses. From the inscriptions on these gifts, it is possible to create a map of the geographical distribution of the Armenian population.

The Jerusalem collection of Armenian manuscripts is the second largest collection of such manuscripts in the world, surpassed only by the Matenadaran Manuscript Library in Armenia. The Armenian manuscripts in Jerusalem are preserved at St. Toros Church. Many priceless manuscripts can be found here. One of the most celebrated is the Gospel that belonged to the Cilician Armenian Queen Keran, written out by hand by Toros Roslin in 1272, in Sis, Cilicia. One of its miniatures depicts the royal family – King Levon II, Queen Keran, their three sons and two daughters.

*Subtitle:*

## The Monastery of Holy Archangels

*Narrator:*

The Armenian Quarter has another famous shrine, the Monastery of Holy Archangels, built near the house of the high priest Annas. Built into the north wall of the Church is a major sanctuary-chapel, known as the first prison of Christ. This is reputedly where Christ stood when questioned by the high priest Annas. One of the khatchkars (stone crosses) on the inner wall attests that the king of Cilician Armenia visited the site in 1258.

Built into the outer wall of the church is a stone resembling an open human mouth and called “the Stone of Hosanna.” For centuries, it has been considered to be one of the stones that “burst into a Hosanna” during Christ's triumphal entry into Jerusalem on Palm Sunday.

In the courtyard of the monastery stands the olive tree to which Jesus was bound before questioning. The fruit of this olive tree is said to have miracle-working powers.

*Subtitle:*

## The Armenian Church of St Nicholas, Jaffa

*Narrator:*

Pilgrims took various land and sea routes to reach the sacred sites associated with Christ. XVIII century chronicler Bishop Hanna in his book *The History of Jerusalem* provides detailed information on the major sea route. Pilgrims would reach Jaffa by boat. The sea here has always been unpredictable, and there were many shipwrecks right in the harbor, just as pilgrims were arriving at their longed for destination. In Jaffa, Armenians own the Monastery of St. Nicholas, which is intended especially for pilgrims. Pilgrims would stay here overnight, and head on toward Jerusalem in the morning. The Monastery of St. Nicholas served as a hospital for the sick soldiers of Napoleon during his expedition to the Holy Land in 1799. The restoration of the monastic complex is currently underway.

In days gone by, the route taken by the pilgrims was often treacherous. They risked death from disease, in shipwrecks, and from bandit attacks. Bishop Hanna advised pilgrims to make out their wills and confess their sins to a priest before taking this perilous trip.

*Subtitle:*

Remla

*Narrator:*

On their way from Jaffa to Jerusalem, Armenian pilgrims sojourned at St. George Armenian Monastery in Remla. The trip from Jaffa to Remla lasted three hours.

The journey from Remla to Jerusalem was particularly hazardous, and took ten hours if all went well. Pilgrims were frequently attacked and robbed by bandits, and even killed. Bishop Hanna gives pilgrims detailed advice about how to behave if attacked, where to hide their valuables, and how much money to hand over under threat.

In the history of Armenian pilgrimage to Jerusalem, the Arabic word *mahtesi* (i.e. sanctified) acquired a dual meaning. The literal meaning ‘one who has seen death’ described the perils the pilgrims encountered on their journey. At another level, *mahtesi* also meant one who had witnessed the death of Christ and touched His Holy Tomb.

Upon arriving in Jerusalem, Armenian pilgrims would go to the Armenian monastery to take a short rest. Later on, they were awakened at midnight by the confessors who with special rites guided them first to the Church of St. James, then to the Holy Tomb. Under the powerful impact of the shrines, and with the help of the confessors, the pilgrims prepared for three days for the confession of their sins – through prayers, repentance and self-examination. On the third day, after confessing their sins, they would take part in seven Divine Liturgies to counteract the seven deadly sins.

*Subtitle:*

The Church of St. Savior

*Narrator:*

For anyone making a pilgrimage to the Holy Land, the sacred places are the earthly gates to Heaven. If pilgrims died there with the genuine vow in their hearts, they entered the gates of eternity.

This monastery on holy Mount Zion was built on the site of the house of the high priest Caiaphas. Located here is the Armenian national cemetery, where many Armenians, both well-known and unknown, have found their last resting place in their earthly pilgrimage.

This is the tomb of the outstanding 18<sup>th</sup>-century Patriarch Gregory the Chainbearer. He voluntarily wore chains and swore not to take them off until he had repaid all of the debts of the Armenians in the Holy Land. He breathed new life into the centuries-old heritage of the Armenians, and he expanded the Armenian landholdings and constructed numerous churches and other buildings.

The majority of pilgrims were poor people who had saved their money for years to become mahtesi. Some ended up dying in Jerusalem, and they were entombed in a structure that served as a mass grave from homeless pilgrims. The names of these poor pilgrims remain unknown to history – theirs is part of the unwritten story of Jerusalem.

*Subtitle:*

Egypt

*Narrator:*

The idea of the desert has a spiritual significance in Christianity beyond its mere geographical sense. Since ancient times, the desert beckoned to all those who wanted to leave the mundane world behind and search for spiritual perfection. In the early Christian era, there was a strong movement embracing the ascetic life as the deepest expression of spiritual cultivation. This movement had its original home in the deserts of Egypt.

*Subtitle:*

Monastery of St Catherine

*Narrator:*

The sacred geography of Armenian monasticism and pilgrimage extends into Egypt. The renowned monastery of St Catherine is situated at the foot of Mount Sinai. The monastery was built by order of the Emperor Justinian I in the 6<sup>th</sup> century. Built to protect the Monastery, its high wall seems to emphasize the significance of what is contained within them.

The Monastery houses a unique collection of ancient icons dating from the 5<sup>th</sup> and 6<sup>th</sup> centuries. Among these is the earliest known icon of Christ. It is in this monastery that John Climacus wrote his famous 6<sup>th</sup> century work, *The Ladder of Divine Ascent*. The Monastery is known for its repository of early manuscripts and codices, which preserves unique Greek, Coptic, Arabic, Armenian, Hebrew, Georgian and Syrian texts.

This is a Greek monastery, but there are many stories of Armenian hermits and monks. Evidence of them can be found in the famous collection *The Spiritual Meadow* by John Moschus. The 7<sup>th</sup>-century historian monk Anastasius writes about an Armenian ascetic on Sinai who was famous for seeing visions and performing miracles. The 10<sup>th</sup>-century Patriarch Eutyches of Alexandria mentions a certain Vahan, an Armenian who served the Byzantine Emperor Heracles as a military commander, who retired to Mount Sinai and engaged in scholarly pursuits.

The principal sanctuary of the monastery is named for the Burning Bush seen by Moses. St. Helena, the mother of Emperor Constantine the Great, made a pilgrimage to this place and built this chapel in the 4<sup>th</sup> century on this site where God was revealed to Moses. This shrine is venerated by Jews and Muslims as well as Christians.

The monastery has almost no land of its own, and this makes it impossible to bury deceased monks in separate graves. The dead are buried in turn in a special common cemetery, with the bones of those buried earlier taken out to make room for the newly deceased.

The skeleton of St. Stephen (who lived in the 6<sup>th</sup> century) – completely dressed and in the sitting posture – is preserved in a separate compartment. He was the confessor of the Monastery of



St. Catherine. He used to sit and listen to the confessions of those ascending Mount Sinai, and he was found dead still in the same seated position.

Pilgrims visiting the monastery take part in the prayers and services, and stay at the hotel near the monastery to ascend Mount Sinai afterwards. Through centuries, the monastery has been one of the most preferred shrines of the Armenian pilgrimage. The monk Anastasius records a party of 800 Armenian pilgrims who came to climb Mount Sinai.

Inscriptions by Armenian pilgrims of different times can be found on the doors of the Monastery of St. Catherine established by Emperor Justinian.

The Bedouins who have dwelled at this site from time immemorial have specialized in guiding pilgrims along the way to the summit of Mount Sinai. It is possible to ride camels part of the way, but most of the pilgrims prefer making the climb on foot.

There is a striking mystical aura to these mountains, which are so high they seem to invite pilgrims to Heaven. This is how the way to Heaven should look. Images of the ordinary world fade away, and all that remains is the rocky landscape. Perhaps the Law of God was inscribed on the stone tablets because human hearts had become hard as stone. Only God knows how many hardened hearts have been opened here.

“Our Lord Jesus, have mercy upon Clement, Tiran, Anatolius, Eliab, Elisha, Abel.”

“Our Lord, have mercy upon the camel and the guide.”

These well-preserved Armenian inscriptions are preserved on the summit of Mount Sinai, where Moses received the Ten Commandments.

There are many inscriptions in Armenian made over the ages by the Armenian pilgrims in the valleys at the foot of Mount Sinai – the earliest of these are dated by scholars to the 6<sup>th</sup> century.

*Subtitle:*

Nazareth

*Narrator:*

The Armenian pilgrims visiting Mount Sinai also left inscriptions in other places along the way, and this enables us to date the Armenian inscriptions on Mount Sinai.

Graffiti found in Nazareth show that Armenian pilgrims were there in the period before the Persian invasion in 614 AD, when the Constantinian church of Nazareth was destroyed.

*Subtitle:*

Mount Tabor

*Narrator:*

During his journey to the Holy Land with Armenian pilgrims in the 5<sup>th</sup> century, the Armenian historian Elishe observed monks leading an otherworldly life on Mount Tabor, where the Transfiguration of Christ took place. Two of the pilgrims in the group were so deeply impressed by these monks that they decided to stay there and live as anchorites.

*Caption:*

Judean Desert

*Narrator:*

Looking around these sites brings to mind the great Biblical ascetics – the prophet Elijah and John the Baptist. From the earliest period of Christianity, the desolate Judean Desert with its wild mountains attracted numerous hermits, and became a destination for people from various countries who were on a quest for spiritual perfection. Various renowned monastic centers were established here, near to the Holy Places in the life of Christ.

As the monastic movement gained significantly in scope during the 5<sup>th</sup> century, Palestine became a center of monastic life.

*Subtitle:*

The Monastery of St. George of Choziba

*Narrator:*

Многие приходили сюда сражаться за власть, убивать, разрушать и грабить. Они приходили, чтобы установить свою мирскую власть над Божьим наследием.

Армяне никогда не ступали на эту Землю с мечом. Зов к иному служению превыше всякой национальной ограниченности вел их к этим святым местам.

*Майкл Стоун, профессор, Еврейский университет в Иерусалиме:*

Армяне играли важную роль во время крестовых походов. Короли Иерусалима брали в жёны знатных армянок. Армяне – действительно единственное национальное меньшинство, которое оказалось способным выживать на земле Израиля из поколения в поколение, от рассвета христианства, т.е. приблизительно с 4-го века, до наших дней.

*Подзаголовок:*

Фирманы

*Диктор:*

Права Армянской Церкви на имущественные владения в Святой Земле подтверждены исключительно ценными фирманами – монаршими грамотами, которые хранятся в армянском Патриархате Иерусалима. Среди них – самые ранние фирманы от пророка Мухаммеда, халифа Омара, халифа Али и Саладдина, а также многочисленные важнейшие фирманы оттоманского периода.

Окончательным и самым важным из всех документов является фирман султана Абдул Маджида, датированный 1852-м годом и признанный позже Британским мандатом и государством Израиль. Этот документ официально установил принцип сохранения статуса-кво в Святых Местах, который определяет, регулирует и поддерживает без изменения правомочия собственника в Святых Местах, предоставленные исключительно трем христианским церквям: Греческой, Армянской и Римско-католической.



*Заголовок:*

Тайна благодатного огня

*Диктор:*

Чтобы узнать человека, надо отправиться с ним в паломничество. Надо увидеть его на грани столкновения духовного и телесного, когда проявляются его сила и немощь, любовь и ненависть.

Всё это справедливо и для народов. В обыденной жизни их истинные ценности не видны, а покрыты пылью нелепых обычаев и суетных забот. Чтобы понять подлинную сущность народа, надо последовать по следам его паломничества, чтобы увидеть полёт его души, дух самопожертвования и преданности.

Иерусалим – это мир священных ритуалов. Величественные обряды и торжественные процессии являют собой всё великолепие Святых Мест, производя глубокое впечатление на паломников. Страстная неделя – наиболее насыщенный период. А Пасха – это ритуальная кульминация в Городе Воскресения.

Церемонию вынесения Пасхального Огня из Гроба Господня мечтает увидеть любой паломник. Но доступ в Старый Город в этот день строго ограничен. Число желающих попасть на церемонию намного превышает вместимость храма Гроба Господня. Так что лишь немногим это удается.

В этот день главную роль играют армяне и греки. Лишь армянским и греческим священнослужителям дана исключительная привилегия исполнять церемонию вынесения Пасхального Огня. Они вступают в храм торжественными процессиями. Связанные судьбами и пережившие похожие исторические трагедии, эти народы соединены узами совместного служения в этом важнейшем месте. Поразительны масштабы их исторических потерь и духовных приобретений. Это парадоксально, но такова реальность – быть в духовном центре мира и осуществлять единое вселенское служение.

Многоязычная толпа с замиранием сердца ждет Огня Воскресения. Внутри Гробницы – греческий патриарх и армянский архимандрит. Они должны вынести Огонь паломникам. Армянские паломники, собравшиеся в храме, начинают скандировать: «Ар-

мения, Армения!» Огонь сначала выносится с армянской стороны, и за несколько мгновений храм наполняется светом зажженных свечей. Звон армянского колокола возвещает о Светлом Христовом Воскресении.

В пасхальной радости есть общечеловеческий зов, не нуждающийся в объяснении. Универсальность этого переживания выше языковых или культурных преград. Напряженность ожидания Пасхального Огня преобразуется в дух умиротворения и согласия.

Сколько душ воспламенил этот Огонь! Может быть, ожидание чуда внешнего приведет людей к чуду внутреннего преобразования? Как сказал Христос: «Огонь пришел Я низвести на землю, и как желал бы, чтобы он уже возгорелся» (Лука 12:49).

Красочная картина Пасхи ещё не полна. Каждая Церковь проводит свои уникальные церемонии, и все они производят неизгладимое впечатление. Один из самых самобытных ритуалов совершается Эфиопской Церковью. Эфиопы были одной из самых ранних наций, официально принявших христианство. Это произошло в 4-м веке нашей эры. Они принадлежат к семье Древневосточных Православных Церквей, наряду с православными ассирийцами, коптами и армянами. Эфиопская пасхальная церемония происходит в темноте ночи на крыше армянского храма Святого Григория Просветителя.

Храм Святого Григория Просветителя является частью ансамбля храма Гроба Господня. Согласно преданию, в этом месте, расположенном чуть выше того, где был обретен Святой Крест, первый католикос Армянской Церкви Святой Григорий Просветитель много лет подвизался, считая себя недостойным увидеть Гроб Господень.

Пасхальные краски являют нам все богатство человеческого духовного единства. Народы представлены здесь пропорционально не их численности, а глубине их духовного свидетельства и уникальности пройденного пути. Но можно ли измерить, какую цену за это заплатили малые народы своими испытаниями и жертвами? Христианский Восток даёт возможность западному миру вновь открыть для себя вечную истину.

В истории человечества истинное величие часто путалось с видимой, поверхностной реальностью. Даже апостолы спорили друг с другом о величии. И тогда Христос, указав на ребенка, поучал их: «Ибо кто из вас меньше всех, тот будет велик».

*Заключительная сцена: ребенок во дворе армянского собора Святых Иакобов*

*Надпись:*

Всякий путь есть начало...

*Заключительные титры*

**ՀԱՅԿԱԶԵԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ  
ՄԵՐ ՍԵՐՆԴԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է**

Յաճախ է պատահում, որ մարդկային վէճերի եւ հակառակութիւնների արտաքին թեման կապ չունի հակասութեան ներքին բովանդակութեան հետ, եւ հազուադէպ է պատահում, որ խնդրի էութեանն անհաղորդ տրամախօսները անկեղծանան եւ խոնարհուեն ճշմարտութեան առջեւ: Սակայն բարոյապէս մաքուր հասարակութիւնը միշտ պէտք է ունենայ յստակ սահմաններ, որոնցից անդին մարդիկ պէտք է սթափուեն եւ զերծ մնան «արհեստավարժ» վէճեր ծաւալելու կամ սեփական կարծիքները բացարձակացնելու գայթակղութիւնից: Մենք պէտք է գիտակցենք, որ խորհրդային անցեալի նկատմամբ կարօտախտը կամ նոյն այդ անցեալի ժառանգութիւնից ազատուելու նախանձախնդրութիւնը կարող են բախուել սրբազան ասպարէզներում, ուր ոտք դնելիս պէտք են մեծագոյն զգուշութիւն եւ ակնածանք: Այսպիսի մի խնդրի են այսօր վերածուել Հայերէնի ուղղադրութեան քննարկումները: Եւ թէպէտ մենք չունենք այս խնդրի հասարակական պահակներ, պարզում է, որ բազմաթիւ մարդիկ «մասնագիտական» համոզուածութեամբ ստանձնել են այս պաշտօնը եւ փորձում են պաշտպանել մեզ հայկազեան ուղղադրութեան գանազան «անյարմարութիւններից»: Նրանց ընդդիմախօսներն էլ չեն կարողանում պատշաճ կերպով ցոյց տալ, որ խնդիրը շատ աւելի լուրջ է եւ վեր է յարմարաւէտութիւնների եւ պայմանաւորութիւնների հարթութիւնից:

Ուղղադրութեան խնդիրը նախեւառաջ հոգեւոր արժէհամակարգային հարց է եւ ըստ էութեան կապուած է ազգի աշխարհընկալման, լեզուամտածողութեան, պատկերաձայնային վերարտադրութեան կարեւորագոյն կարողութիւնների հետ: Այս ամէնը, դաւով մեր

ծագումնաբանական ակունքներից, բիւրեղացել է դարերի ընթացքում եւ դարձել խօսք ու գիր, որոնք մեր ժառանգութիւնն ու հարստութիւնն են, մեզ իրար հետ կապող եւ ժողովուրդ դարձնող գորութիւնը, մեր ինքնութեան թանձրացումը: Սա այն տեղն է, ուր ոչ թէ պէտք է մէկս միւսին զարմացնենք կամ մեր աղաղակներով հասարակութեան ունկը պատռենք, այլ պէտք է լռութեամբ խոնարհուենք եւ ամէն տեսակ կեղծաւորութիւն մի կողմ դնենք (իսկ մենք երբեմն շատ ենք կեղծաւորում): Այստեղ լեզուաբանը ոչ մի առաւելութիւն չունի երաժշտի կամ քաղաքագէտի նկատմամբ, որովհետեւ ուղղագրութիւնը կամ գրագիտութիւնը մասնագիտութիւններ չեն, այլ ազգային ինքնագիտակցութեան դրսեւորումներ, ուր աղաւաղումները ծայրաստիճան վտանգաւոր են:

Եթէ մէկն ասի մեզ այսօր, որ ինչ-ինչ յարմարութեան կամ օգտակարութեան սկզբունքներից ելնելով պէտք է փոխել հայերէնի այբուբենը, ապա ոչ միայն կը մերժենք այդպիսի մօտեցումը, այլեւ կը պախարակենք ու կը դատապարտենք այդ առաջարկութեան հեղինակին: Ինչո՞ւ: Որովհետեւ տառերը սրբազան նշանակներ են, եւ դրանց գրելաձեւը պատահական չէ, այլ սերտօրէն կապուած է մեր ներքին հոգեկիրտուածքի եւ աշխարհընկալման առանձնայատկութիւնների հետ: Տառերի աղաւաղումը կը յանգեցնի ազգային ինքնագիտակցութեան եւ հոգեբանութեան աղաւաղման: Եթէ այսօրան կարեւոր է տառերի գրելաձեւը, ապա ինչո՞ւ նոյնքան կարեւոր չէ բառերի գրելաձեւը: Կարեւո՞ր է եւ՝ ո՞չ պակաս կարեւոր: Այդ տառերը մեզ տրուած են իրար հետ համադրելու եւ բառեր գրելու համար, եւ այդ գրելաձեւի մէջ կայ լեզուամտածելակերպային եւ հնչիւնապատկերային ներդաշնակութիւն: Բառի մէջ է իմաստաւորում տառը, եւ բառն է լեզուի նուազագոյն գաղափարական արտայայտիչը: Հետեւաբար, ինչպէս տառերը, այնպէս էլ բառերը սրբազան նշանակներ են եւ հոգեւոր-ազգային ինքնագիտակցութեան հիմնարար բաղադրիչներ: Եթէ այսօր մենք ունենք մեր ինքնութեան, հոգեւոր արժէքների, պատմական յիշողութեան, լեզուամտածողութեան վնասուածքներ եւ աղճատումներ, ապա դրանք միանշանակ կերպով աղերսուած են բառերի գրելաձեւի աղաւաղման հետ: Բառերը իրենց մէջ ունեն հոգեղէն լիցքեր, եւ գրաւոր խօսքն է պատմական ժառանգութեան եւ յիշողութեան փոխանցման հիմնական գործիքը: Եթէ մենք բառերը

գրոււմ ենք այնպէս, ինչպէս գրել են սբ Մեսրոպ Մաշտոցը, սբ Սահակ Պարթևը, սբ Մովսէս Խորենացին, սբ Յովհաննէս Օձնեցին, սբ Ներսէս Շնորհալին, սբ Գրիգոր Տաթևացին եւ վերջապէս Խաչատուր Աբովեանը, Յովհաննէս Թումանեանը, Վահան Տէրեանը, ապա մենք կենդանի-գոյաբանական կապ ունենք այդ անձերի եւ նրանց շնորհիւ մեզ փոխանցուած ժառանգութեան հետ:

Բառը մտքի հազուստն է, եւ ինչպէս գրոււմ ենք, այնպէս էլ մտածոււմ ենք: Երբ մտքի արդիւնքն արտայայտոււմ է խորթ նշանակներով կամ գրելաձեւով, խախտոււմ է միտք-բառ փոխարարեւորութեան ներդաշնակութիւնը, որը տանոււմ է մտածելակերպային կաշկանդումներին: Այսօր մենք շատ ենք բողոքում մեր լեզուի զգացողութեան ցածր վիճակից եւ հայերէնի գործածութեան անմխիթար մակարդակից: Ասում ենք, թէ ինչպէ՞ս է, որ անցեալ դարասկզբին այդպիսի հզոր գրողների փաղանգ ենք ունեցել, իսկ այսօր կանգնած ենք այս կոտորած տաշտակի առջեւ: Գլխաւոր պատճառներից մէկն այն է, որ անցեալ դարասկզբին հայերէն են սովորել Մաշտոցով, Եղիշէով, Մանգակունիով, այսինքն՝ հայոց լեզուի հիմնադիրներով, գրաբարը եղել է հայերէնի ուսուցման հիմքը, եւ անցեալի հետ հաղորդակցութեան ուղղագրական պատմէշներ չեն եղել: Իսկ այսօր մեր հանրակրթական համակարգում ո՛չ գրաբարը կայ, ո՛չ էլ մեր ոսկեղէն լեզուի ուղղագրութիւնը: Եւ ունենք այն, ինչ ունենք: Միգուցէ շատերին զարմանալի թուայ, որ եւրոպական մի շարք երկրների, օրինակ՝ Աւստրիայի, հանրակրթական համակարգում պահպանուած է լատիներէնի եւ յունարէնի ուսուցումը: Ժամանակակից գերմաներէնը շատ աւելի հեռու է լատիներէնից եւ յունարէնից, քան հայերէնը՝ գրաբարից: Բայց մարդիկ հասկանում են, որ այդ երկու դասական լեզուները եւրոպական քաղաքակրթութեան եւ սեփական լեզուի հիմքն են: Իսկ մենք շարունակ վախենում ենք, որ յանկարծ մի երկու կանոն եւ մի երկու բառ աւել չսովորենք: Խօսքն իսկապէս մի քանի կանոնի եւ մի քանի բառի մասին է, եւ այդ ամէնը կարելի է գետեղել մէկ թերթի վրայ: Պատկերացրէք, թէ ինչպիսի ծաւալի մասին է խօսքը: Ուրիշ լեզուներ սովորելու համար հազարաւոր բառերի գրելաձեւ ենք անգիր անում (օրինակ՝ անգլերէնի պարագայում) եւ չենք բողոքում: Ընդամէնը մէկ թերթի մասին է խօսքը, եւ այսքան աղմուկ ենք հանել:

Մի փոքր խորհրդածենք Մեսրոպ Մաշտոցի գործի էությունն մասին: Մեսրոպ Մաշտոցը Հնչիւնային այբուբենն չի ստեղծել: Հնչիւնային նշանագրեր ստեղծելն այնքան էլ մեծ առաքինութիւն չէ: Այդպիսի այբուբեններ յօրինուել են ամենատարբեր լեզուների համար, սակայն կիրառական չեն դարձել: Հնչիւնանշաններով բառեր չեն գրուում, որովհետեւ գրաւոր լեզուն ունի իր օրինաչափութիւնները: Տառերը ոչ միայն իրար հետ ճիշտ պէտք է համադրուեն եւ արտացոլեն լեզուի Հնչիւնային համակարգը, այլեւ ճիշտ վերարտադրեն երկբարբառներն ու եռաբարբառները: Այլ կերպ ասած՝ բառերն իրենք են պահանջում այս կամ այն տառի գոյութիւնը: Շատ խոր պէտք է ճանաչես լեզուն, նրա խօսքի շունչն ու էութիւնը, որպէսզի գտնես այդ լեզուն վերարտադրող տառերը: Այդ պատճառով է շարականագիրն ասում. «Որք գարգարեցին տնօրինաբար զիմաստս Անեղին, հաստատելով յերկրի զգիրս կենդանի...»: Այդ նշանագրերը իսկապէս եղել են կենդանի գրեր եւ կենդանի կերպով մարմնաւորել են հայոց խօսքը: Սուրբ Մեսրոպի, Սահակի եւ նրանց աշակերտների մեծագոյն գործը եղել է գրաւոր լեզուի ստեղծումը, լեզու, որի ողջ հզօրութիւնը արտայայտուեց ոչ միայն սեփականը ցոյց տալու կարողութեամբ, այլեւ համամարդկայինը իւրացնելու անախադէպ ճկունութեամբ: Եւ իրաւամբ մենք նրանց կոչում ենք սուրբ Թարգմանիչներ: Նրանք թարգմանեցին «զիմաստս Անեղին», այսինքն՝ երկնային ճշմարտութիւնների թարգման դարձան հողեղէններիս համար, նրանք թարգմանեցին համամարդկային բարձր արժէքները, եւ մենք շատ արագ կանգնեցինք մշակութապէս հզօր ազգերի կողքին, նրանք նոյնիսկ թարգմանեցին մերն իսկ մեզ համար, եւ մենք ստացանք մեր ինքնութեան ու ազգային ներուժի բացայայտման գլխաւոր զօրութիւնը՝ մեր գրաւոր խօսքը:

Սուրբ Թարգմանիչների այս հզօր գործի ժառանգորդները ինչպէ՞ս կարող են իրենց լեզուամտածողութեան մակարդակը իջեցնել Հնչիւնագրական պարզունակութեան աստիճանի: Թէպէտ սա էլ մինչեւ վերջ չյաջողուեց որոշ բաղաձայնների յետագայ «վատ վարքագծի» պատճառով: Նորից կան բառեր, որ գրոււմ են մի կերպ, իսկ հնչում այլ կերպ: Ի՞նչ է, նորի՞ց խորանանք Հնչիւնագրութեան մէջ, որ յանկարծ մեր երեխաները չգժուարանան: Այն ժամանակ սա համայնավարական գաղափարախօսութեան կողմից պարտադրուեց մշակութային միօրինակութիւն հաստատելու եւ ազգերի

հաղորդակցութիւնը դիւրացնելու կեղծ մտահոգութեամբ: Լաւ է՝ չհասցրին այբուբենը փոխել: Այսօր է՛լ աւելի մեծ վտանգներ կան: Մենք ապրում ենք համընդհանրացուող աշխարհում, ուր ամէն ինչ կապուած է համակարգչի եւ նրա վրայ որոշակի գործողութիւններ կատարելու արագութեան հետ: Հնչում են կարծիքներ, թէ իբրեւ մեր տառերը շատ են եւ անգլիատառ ստեղնաշարը անյարմար է հայերէն գործածողի համար: Սա լուրջ մարտահրաւէր է: Եթէ մենք շարժուենք նոյն յարմարուողական մտայնութեամբ եւ մեր երեխաների մէջ ներդնենք սեփականը չյարգելու եւ «աւելորդ» գիտելիքներից զերծ մնալու հոգեբանութիւնը, ապա համայնավարների չհասցրածը կարող է իրագործուել մեր իսկ ձեռքով:

Եթէ այսօր այսքան խօսւում է մեր ազգային նշանակների վերականգնման մասին, եթէ մենք իսկապէս հասկանում ենք, որ մեր ինքնութիւնը նախ եւ առաջ արտայայտւում է մեր հոգեւոր-ազգային նշանական համակարգով, ապա ժամ առաջ պէտք է վերականգնել հայկազեան լեզուի ուղղագրութեան կանոնները: Սա պակաս կարեւոր է, քան գինանշանի եւ օրհներգի խնդիրը: Եւ որպէս յաջորդ արամբանական քայլ պէտք է լրջօրէն մտածել դպրոցներում գրաբար դասաւանդելու մասին: Եւ վերջապէս, լեզուն պէտք է ճանաչել իր պատմութեան եւ ճիւղերի հարստութեան մէջ: Գրաբարը, միջին հայերէնը, արեւմտահայերէնը, արեւելահայերէնը տարբեր լեզուներ չեն, այլ մէկ միասնական լեզու՝ իր զարգացման փուլերով եւ ճիւղերով: Այդ միասնական լեզուն ունի իր մէկ միասնական դասական հայկազեան ուղղագրութիւնը:

«Գանձասար» աստուածաբանական կենտրոնի կողմից այս անկախութեան տարիների ընթացքում հրատարակուել է աւելի քան կէս միլիոն տպաքանակով գիրք, բոլորը՝ դասական ուղղագրութեամբ: Երբեք որեւէ մէկը չի բողոքել ուղղագրութիւնից, ընդհակառակը՝ մարդիկ վկայում են, որ այդ ուղղագրութեան մէջ հոգեղէն շունչ կայ: Իսկ բազմաթիւ մարդիկ, որոնց սովորեցրել ենք դասական ուղղագրութեամբ գրել, խոստովանում են, որ իրենք այլեւս չեն կարող վերադառնալ սովետական ուղղագրութեանը, որովհետեւ գգում են, որ դասականն է մեր ճշմարիտ ուղղագրութիւնը, եւ դրա մէջ խորք կայ, հոգի կայ: Հաւատացէ՛ք, որ դասական ուղղագրութեան անցնելը մի երկարատեւ եւ ցաւատանջ գործընթաց է, այլ գրագէտ մարդու գէպքում ընդամէնը տեւում է մէկից երկու շաբաթ եւ մեծագոյն



բաւականութիւն պատճառով սովորողին: Չէ՞ որ նրանք սկսում են գրել այնպէս, ինչպէս աւանդել է մեզ Մեծն Մեսրոպ Մաշտոցը:

Ես առաջարկում եմ, որ իրար հետ վիճելու փոխարէն մարդիկ մի փոքր ճիգ գործադրեն եւ փորձեն գրել դասական ուղղագրութեամբ, ե՛ւ դասական ուղղագրութեան նախանձայոյց ջատագովները (որովհետեւ նրանց մեծ մասը այդ ուղղագրութեամբ գրել չգիտի), ե՛ւ դրա դէմ խռովայոյց պայքարողները (որովհետեւ սա միայն կը հարստացնի նրանց): Իսկ ժողովրդի անգրագիտութեան մասին ոչ թէ պէտք է տեսականօրէն մտահոգութիւններ արտայայտել, այլ անգրագիտութեան յաղթահարումը սկսել մեր իսկ անձերից: Ես չեմ կարծում, թէ որեւէ մէկը, որ դասական ուղղագրութիւն չգիտի, գրաբար չգիտի եւ հետեւաբար հաղորդ չէ իր լեզուի ակունքներին, կարող է իրեն գրագէտ հայ մարդ համարել: Իսկ մեր ժողովրդի գրագիտութեան մակարդակը գնալով ընկնում է: Եւ պատճառներից մէկն այն է, որ մենք մեր երեխաներին գրկում ենք սեփական լեզուի ակունքներին հաղորդ լինելու եւ սեփական լեզուն իր պատմական զարգացման մէջ ճանաչելու հնարաւորութիւնից: Իսկ արդե֞ք մենք դրա իրաւունքն ունենք: Միայլը չգիտակցելն աւելի մեծ մեղք է, քան սխալը գործելը: Եւ եթէ ոչ մեզ, գոնէ մեր գալիք սերունդներին համար մենք պարտաւոր ենք ընդունել որոշ ճշմարտութիւններ:

## **RESTORING THE ORTHOGRAPHY OF THE ARMENIAN NATION A TASK FOR OUR GENERATION**

Often in disputes and disagreements of human affairs, the stated theme is unrelated to the real issue; the disputants, unwilling to address the essential issue, rarely come clean and humbly submit to the truth. However, the moral health of any society demands certain clear limits to keep people on guard from succumbing to the temptations of "professional" contentiousness or elevating their private opinions into absolute truths. We must recognize that both the nostalgia for the soviet past or the zeal to rid ourselves of that legacy are treading on sacred turf, which demands great caution and discretion. The discussion of Armenian orthography is one such matter today. And many self-appointed experts evince "professional" conviction and try to protect us from the various inconveniences of the orthography of the Armenian nation (Haykazian Orthography). Those advocating the other side are not able to explain that the issue is actually of deeper importance to our nation and transcends mere convenience or expedience.

The way we write is first and foremost an issue of spiritual and cultural values that goes to the heart of our nation's worldview, linguistic thought processes, and our most fundamental capacity for audiovisual creativity and transmission. All this springs from our origins as a people, crystallized through the centuries, and turned into speech and writing, which is our heritage and our wealth, a force that binds us together and makes us a nation, and forges our national identity. This is not the place for us to raise a ruckus or try to show each other up, but rather, calls for calm earnestness, setting aside deceptive tactics (and we can be quite deceptive). Here, the linguist has no advantage over the musician or politician, since

orthography and literacy are not the province of specialists, but are rather the manifestations of national self-consciousness, where distortions are very dangerous.

If one were to say to us today that for this or that convenience or advantage we should reject the Armenian alphabet, we would not only reject the proposal, but would discredit and condemn the proponent of such an idea. Why? Because our letters are sacred symbols and their written form is not arbitrary, but is intimately related to the uniqueness of our psyche and worldview. Defacing the letters of the alphabet would be tantamount to defacing our national self-consciousness and psychology. If the way we write letters is so important, then isn't the way we write words equally important? Of course, it is important, not less important, but more so. The purpose of letters is to combine them and write words, and in that way of writing there is an audiovisual harmony of language and thought. The letter finds its significance in the word, and the word is the smallest meaningful unit of language. Thus, like letters, words are sacred symbols and fundamental building blocks of our spiritual and national self-consciousness. If today we suffer from injuries and distortions to our national identity, our spiritual and cultural values, our historical memory, and linguistic thought processes, these can be attributed in great part to the distortion of the way we write words. Words convey spiritual content, and our written language is the fundamental means of transmitting our historical heritage and memory. If we write words the way that Sts. Mesrop Mashtots, Sahak Partev, Movses Khorenatsi, Hovhannes Odznetsi, Nerses Shnorhali, and Grigor Tatevatsi did, as well as the way that Khachatur Abovian, Hovhannes Tumanian, and Vahan Terian did, then we have a living, existential tie to those people and the heritage that was transmitted to us thanks to their efforts.

Words are the clothes of our thoughts, and the way we write affects the way we think. When the result of our thinking is expressed in symbols or writing that is not authentically its own, the harmony of idea-word relationship is destroyed, undermining and constricting our thought processes. Today, we often lament the degradation of our linguistic sensitivity and the deplorable level of Armenian language

usage. We say, how could we have had such a phalanx of great writers at the beginning of the last century, and today we face a broken chalice. One of the reasons is that at the beginning of the last century, they learned Armenian through Mashtots, Yeghishe, Mandakuni, in a word, from the creators of the Armenian literary language, the Grabar (Classical Armenian) as foundation of Armenian language study, and there was no orthography barrier to communicating with the past. Today, in our public education system, we have neither Classical Armenian, nor the orthography of the language of our Golden Age. We have just what we have, nothing more. Perhaps for many it may be surprising to learn that in many European countries, for example Austria, the public schools have continued to teach Latin and Greek. Modern German is certainly much more distant from Latin or Greek than Modern Armenian is from Classical Armenian. But people there understand that those two classical languages are the bases of European civilization and their own language. Whereas here, people become alarmed at the thought that we should have to learn a couple of new words or rules. And the reality is that all the commotion is really just about a couple of rules and words, which all fit easily on one page. Imagine all this fuss is about something this small. To learn foreign languages (for example, English) we memorize thousands of words without so much as a whimper. And here for our language we are talking about only one page, and there is an uproar.

Let's pause a moment to think about the essence of Mesrop Mashtots' work. Mesrop Mashtots did not create a phonetic alphabet. Indeed, having merely phonetic letters is not such a great virtue. Such simple phonetic alphabets have been invented for many languages, but they have not taken hold. Phonetic transcription is not sufficient, since the language and words have an inner structure. Letters must not only be combined correctly, they must also reflect the sound system of the language and properly represent the diphthongs and triphthongs of the language. In other words, words themselves dictate the existence of certain letters. A profound understanding of the language is necessary, an instinct for its spoken spirit and essence, in order to identify the letters required to properly represent that language. For

this reason, the hymn writer says of Mashtots, "He created living letters on earth." These symbols truly are living letters and the living embodiment of Armenian speech. Sts. Mesrop, Sahak and their disciples' greatest achievement was the creation of a written language, a language whose entire strength is reflected not only in its ability to express our own thoughts, but also in its unprecedented capacity to express the universal ideas of all humanity. We have quite rightly called them Holy Translators. They translated the "wisdom of the Uncreated God," that is, they became the translators of heavenly truth for earthly beings, giving us access to the highest values of mankind, enabling us very quickly to take our place culturally along with the strongest nations. They also made accessible to us our own culture, and through them we acquired the main force for expressing and discovering our identity and national potential, our written language.

How can the heirs of the mighty works of the Holy Translators impoverish their writing system and reduce their language-thought to a level of mere phonetic transcription? Yet even this was not completely "achieved" due to various "bad habits" of pronunciation. There are still words pronounced one way, and written another. What's to be done? Should we delve into phonetic transcription again so that our children do not have difficulty spelling? That's what communist ideology imposed in the guise of concern for establishing uniformity and facilitating communication among nations. It's lucky they didn't get around to changing the alphabet. Even today there are great threats. We live in a world where everything is tied to the computer and the ease and speed of various operations on computers. There have been suggestions that our alphabet has too many letters and that Armenian is not suitable for the English keyboard. This is a serious concern. If we adopt this mentality of expedience and instill in our children the attitudes of not valuing our own and shunning seemingly superfluous knowledge, then what the communists failed to do, we may do by our own hand.

There is much talk these days of restoring our national symbols. If we truly understand that our identity is expressed first and foremost in our spiritual and national symbol system, then we have no time to

waste in reestablishing the rules of our national writing system. This is no less important than the issue of the national seal or anthem. And as the next logical step, we should seriously think about teaching Classical Armenian in the schools. And finally, we must recognize language in its historical context and in the richness of its diversity. Classical Armenian, Middle Armenian, Western and Eastern Armenian are not different languages. They are one coherent whole which has developed through various stages and expressions. This unified language has one, unified, classical, Haykazian orthography.

Since independence, Gandzasar Theological Center has published more than a half million books, all in classical orthography. Never has anyone complained about the orthography. On the contrary, many people have stated that this writing captures the living spirit of the language. And many people whom we have taught to write in classical orthography confess that they cannot go back to soviet orthography, because classical orthography is our authentic orthography. It has depth and spirit. Be assured the transition to classical orthography is not a long or difficult process. For a literate person, it takes a week or two and gives the learner a great sense of accomplishment and satisfaction. After all, this is the beginning of learning to write in the same manner as our great saint and teacher Mesrop Mashtots did.

I propose that instead of arguing with each other we make a small effort and try to write in classical orthography, that goes for both the advocates (since many of them have yet to master that orthography) as well as the rabble-rousing opponents (since they can only be enriched by this knowledge). And instead of expressing abstract concerns about making our people literate, we should each begin with ourselves by overcoming our own illiteracy. In my opinion, one who does not know classical orthography and does not know Classical Armenian, and therefore is cut off from the source of our language, can not be considered a literate Armenian. And our people's literacy is declining. One of the reasons is that we are depriving our children of knowing the roots of their own language and the opportunity to know their language and its historical development. Do we have this right? Not rec-

ognizing and correcting a mistake is more blameworthy than making it in the first place. If we do not do it for ourselves, then at least we need to accept certain truths for coming generations.

## **ВОЗРОЖДЕНИЕ КЛАССИЧЕСКОЙ ОРФОГРАФИИ — ДОЛГ НАШЕГО ПОКОЛЕНИЯ**

Нередко внешняя тема человеческих споров и разногласий не имеет никакой связи с внутренней, подлинной сутью возникшего противоречия, и крайне редко бывает, чтобы полемисты, не причастные к этой сути, могли бы искренне смириться с истиной. Однако нравственно чистое общество всегда должно соблюдать четкие нормы, по ту сторону которых люди обязаны быть трезвыми настолько, чтобы избежать соблазна затевать «профессиональные» дискуссии или стремиться к абсолютизации собственного мнения.

Мы должны сознавать, что ностальгия по советскому прошлому или чрезмерное усердие избавиться от наследия этого самого прошлого могут столкнуться в сокровенных духовных сферах, вхождение в которые требует величайшей осторожности и благоговения. В подобную проблему превратились сегодняшние обсуждения армянского правописания.

Хотя общество не назначало своих стражей по этому вопросу, выясняется, что многочисленные люди взяли на себя роль «блюстителей порядка», стремясь защитить всех нас от различных «неудобств» классического правописания, а их оппоненты также не могут должным образом указать им, что проблема намного серьезнее и намного выше плоскости каких-либо удобств и договоренностей.

Проблема правописания – это, прежде всего, вопрос системы ценностей и по сути своей связана с национальным мировосприятием языкового мышления и важнейшими возможностями образно-звукового воспроизведения. Все это, беря начало из наших



этнических истоков, кристаллизовалось в течение столетий и превратилось в слово и письменность, которые являются нашим наследием и богатством — силой, сплотившей нас, превратившей нас в народ и воплотившей в реальность нашу национальную идентичность.

Это тот случай, когда мы обязаны перестать удивлять друг друга и оскорблять воплями слух общественности. Вместо всего этого мы должны в молчании преисполниться смирения и отвергнуть всякое лицемерие (а мы так часто лицемерим!). Здесь лингвист не должен иметь никаких преимуществ перед музыкантом или политиком, ибо ни правописание, ни грамотность не являются специальностью — они есть проявление национального самосознания, где любое искажение крайне опасно. Если сегодня кто-либо скажет нам, что во имя каких-то удобств или исходя из какой-то пользы необходимо изменить армянский алфавит, то мы не только отвергнем подобное предложение, но предадим осуждению и порицанию автора этой идеи. Почему? Потому что буквы — это священные, сокровенные символы, и их написание не случайно. Они тесными узами связаны с нашим внутренним духовным строем и особенностями мировосприятия.

Коверканье букв приведет к искажению национального самосознания и психологии. А если написание букв столь важно, то разве не столь же важно написание слов?

Несомненно, оно также крайне важно. Буквы эти дарованы нам, чтобы мы, складывая их, создавали слова, и в этом способе написания наличествует гармония между образным языковым мышлением и фонетической образной выразительностью. Буква обретает смысл в слове, а само слово — мельчайший выразитель идеи языка. Следовательно, как буквы, так и слова являются сокровенными символами и основополагающими составляющими духовно-национального самосознания. И сегодня все искажения и ущербность нашего языкового мышления, нашей идентификации, духовных ценностей, исторической памяти — все это однозначно порождено также искаженным написанием слов, ибо слова обладают духовным потенциалом,

а письменное слово — основной инструмент передачи исторической памяти и наследия.

Если мы пишем так, как писали св. Месроп Маштоц, св. Саак Партев, св. Мовсес Хоренаци, св. Ованнес Одзнеци, св. Нерсес Шнорали, св. Григор Татеваци и, наконец, Хачатур Абовян, Ованнес Туманян, Ваан Терян, значит, мы являемся обладателями живой, онтологической связи с этими личностями и благодаря им — с переданным нам культурным наследием.

Слово — это одеяние мысли, и мы мыслим так, как пишем. Когда плод мысли выражается чуждыми нам письменами или чуждым написанием слов, то нарушается гармония взаимоотношения «мысль-слово», что ведет к скованности образа мыслей. Сегодня мы постоянно сетуем на неблагоприятное состояние нашего языка и низкий уровень использования армянского языка. Мы удивляемся тому, что в начале прошлого века обрели целую фалангу искусных мастеров пера, а сегодня оказались перед разбитым корытом. Одной из основных причин является как раз то, что в начале прошлого века обучались армянскому языку по трудам Маштоца, Егише, Мандакуни — самих основателей армянского языка. Грабар — древнеармянский классический язык — являлся основой, базой обучения языку, и потому не было никаких орфографических препятствий правописания для живого общения с нашим славным прошлым. А сегодня в нашей общеобразовательной системе нет ни грабара, ни классического, истинного правописания нашего прекрасного и чудного языка. И, следовательно, мы имеем то, что имеем. . .

Возможно, многих удивит то, что в некоторых европейских странах, к примеру, в Австрии, в общеобразовательной системе сохранено изучение латинского и греческого языков. Современный немецкий язык намного отдаленней от латыни и греческого, чем современный армянский язык — от грабара. Но европейцы осознают, что оба этих классических языка являются основой европейской цивилизации и их собственного языка. А мы все еще продолжаем ужасаться тому, что нам вдруг придется изучить еще пару правил и несколько «лишних» слов. На самом же деле,

«трудности» воистину сводятся к нескольким правилам и немногочисленным словам, которые можно поместить на одном листе. Представьте, о каком «объеме» идет речь. Между тем в процессе изучения иностранных языков мы заучиваем написание тысяч слов (например, в случае английского языка) и совершенно не протестуем. А тут речь об одном листочке, и так много протестующих выкриков.

Задумавшись о сущности деяния Месропа Маштоца. Месроп Маштоц не создавал фонетического алфавита; создание фонетических символов — не такая уж высокая добродетель. Подобные алфавиты создавали для самых различных языков, однако они не вошли в употребление.

Символами звуков не напишешь слов, потому что письменный язык имеет свои закономерности. Буквы должны не только правильно сочетаться между собой и отражать фонетическую систему языка, но они обязаны правильно воспроизводить дифтонги и трифтонги.

Иначе говоря, слова сами требуют наличия той или иной буквы. Необходимо глубоко постичь язык, его дыхание и суть, чтобы суметь найти именно те буквы, которые способны точно воспроизвести сказанное. Потому Варган Аревелци — автор канона Святых Переводчиков — говорит: «Утвердив на Земле животворные письмена», ибо эти символы воистину были животворящими письменами, они облекали армянскую речь в животворную плоть. Величайшим свершением св. Месропа, св. Саака и их учеников явилось сотворение письменного языка, языка, вся мощь которого выразилась не только в возможности показать всему миру свое собственное «я», но и в беспрецедентной гибкости в усвоении общечеловеческой культуры. И мы их по праву именуем Святыми Переводчиками, ибо они перевели для нас «знание о Боге несотворенном», а именно — они явились переводчиками небесных истин для нас, земных существ. Они перевели возвышенные духовные ценности всего человечества, и мы благодаря им очень скоро встали рядом с могущественными культурными народами.

Благодаря им мы получили главное — наше письменное слово, выразителя нашей идентичности, нашего национального духовного потенциала. Как могли наследники великих свершений Святых Переводчиков снизить уровень своего языкового мышления до примитивного состояния элементарной записи звуков?! Впрочем, и это не удалось до конца из-за «плохого поведения» некоторых согласных звуков. Опять же были слова, которые писались иначе, чем произносились. Что же делать, неужели опять низвергнуться нам в бездну звукозаписи (фонографии), дабы наши чада не утруждали себя?

В прошлом это было принудительно навязано нам ради культурной «уравниловки». Нам еще повезло, что не успели исковеркать алфавит. Но сегодня над нами нависла еще большая опасность, ибо мы живем в мире «глобализации», в котором все связано с компьютерами и со скоростью исполнения ими определенных операций. И вот начали раздаваться голоса, что якобы наши буквы слишком многочисленны и англоязычную клавиатуру неудобно использовать для текстов на армянском языке. Это уже серьезный вызов. Если мы хотим продолжать оставаться приспособленцами и воспитывать детей в неуважении к собственным духовным ценностям и в стремлении избегать «ненужных и излишних» знаний, то мы совершим — своими же руками — то, что не удалось даже большевикам.

Если сегодня так много говорится о восстановлении наших национальных символов и если мы действительно осознаем, что наша самобытность и независимость прежде всего выражаются системой духовно-национальных символов, то необходимо немедленно восстановить нормы классического правописания армянского языка. Это — не менее важная задача, чем создание герба и гимна. Следующим же логическим шагом должно явиться преподавание грабара в школах. И, наконец, язык нужно постигать в многообразии его исторического развития, его разветвлений. Грабар, средний армянский, западноармянский, восточноармянский — это не различные языки, а единый язык в различных фазах развития и ответвле-

ниях. И этот единый язык имеет одно единое, классическое Гайказянское правописание.

За время независимости Богословский центр «Гандзасар» общим полумиллионным тиражом опубликовал разные книги, и все они изданы в соответствии с классическим правописанием. И никто из читателей не проявил недовольства по этому поводу. Наоборот, читатели свидетельствуют, что в самом написании слов они ощущают некую духовную силу, чарующую душу. А множество людей, которых мы обучили писать по классическим канонам, признавались в дальнейшем, что они не в состоянии вернуться к советскому правописанию, ибо уже постигли, что их подлинным правописанием является классическое, преисполненное возвышенной духовности и сокровенной глубины.

Поверьте, обучение классической орфографии не является длительным и болезненным процессом – грамотный человек может освоить ее за одну-две недели, при этом получая огромное удовольствие, ибо он начинает писать так, как было завещано ему самим великим Месропом Маштоцем.

Я предлагаю всем вместо бесконечных споров приложить минимум усилий и начать писать в соответствии с классическими нормами. Мой призыв обращен и к ревностным защитникам классического написания (ибо большинство из них не владеет этими нормами), и к самым рьяным ее противникам (ибо это только преисполнит их духовным богатством предков). И не следует заниматься отвлеченными рассуждениями о якобы неграмотном народе, вместо этого лучше срочно взяться за искоренение собственной неграмотности. Тот, кто не хочет знать свой собственный язык – грабар – и не желает обучиться элементарным канонам классического правописания, никогда не будет причастен к истокам родного языка. Я думаю, что подобный человек не имеет права считать себя грамотным и просвещенным. Между тем уровень грамотности нашего народа катастрофически падает. И одной из причин этого является то, что мы мешаем своим детям причаститься к истокам собственного языка, лишая их возможности постичь глубины своего родного языка в его историческом становлении.

---

А имеем ли мы на это право?!

Не осознавать свою неправду гораздо опаснее для нашей души, чем совершать ее. И если не для себя, то хотя бы для грядущих поколений мы обязаны признать свои ошибки и сделать первый шаг к признанию правды, в данном случае к правильному написанию слов — правописанию наших предков.

## ՍԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ՝ ԱՂՕԹՔԻ ՀԱՆՃԱՐԸ

Ապրիլի 12-ին՝ Հռոմի Սբ Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած պատարագի ընթացքում, Ֆրանցիսկոս պապը սբ Գրիգոր Նարեկացուն հռչակեց Կաթողիկէ եկեղեցու տիեզերական վարդապետ կամ ուսուցիչ: Նահատակութեան եւ սրբութեան այսպիսի աղերսումը պատահական չէր: Հայերը նահատակ ժողովուրդ են եւ շատ թանկ գին են վճարել յանուն սրբութեան եւ ճշմարտութեան: Եւ ահա մահուանը մարտիրոսութեան հոգով յաղթած եւ ցեղասպանութեան մոխիրներից յարութիւն առած ժողովուրդը մարդկութեանն է նուիրում իր ամենամեծ սուրբերից մէկին:

Իրադարձութիւնը պատմական էր. Նարեկացու սրբութիւնը, բարեխօսութիւնը եւ ժառանգութիւնը դարձան հոգեւոր կրթութեան եւ կեանքի վերափոխման աղբիւր կաթոլիկ աշխարհի համար: Սրանով ոչ թէ պատիւ ընծայուեց Նարեկացուն, ով պատուուած է Աստուծոց եւ մարդկանց պատուի կարիքը չունի, այլ Նարեկացու տիեզերական սրբութիւնը շատերի համար դարձաւ կենդանի իրականութիւն եւ ուսուցում, օրհնութեան ու լուսաւորութեան աղբիւր: Մարդկութիւնը մեծ հնարաւորութիւն ստացաւ սովորելու հազարամեայ սուրբից եւ առաջնորդուելու նրա գրուածքներով:

Սբ Գրիգոր Նարեկացուց մեզ հասած գրաւոր ժառանգութեան մէջ առանձնաշատուկ տեղ է գրաւում նրա «Մատեանը», որը գրուել է մօտ 1000 թ.-ին եւ ապրել մօտ հազար տարի՝ դառնալով հայ ժողովրդի հոգեկեցութեան եւ ինքնութեան կարեւորագոյն արտայայտութիւններից մէկը: Գիրքը գրուել է, ինչպէս մեզ ծանուցում է ներածական-յիշատակարանը, բազմաթիւ եղբայրների, անապատականների, ճգնաւորների խնդրանքով կամ պատուէրով: Այս առումով «Մատեանը» բիւրեղացումն է ճգնաւորական-հայեցողական

կեանքի խտացման, բազմաթիւ մարդկանց կատարելութեան փնտրումներին եւ այդ ժամանակաշրջանի հոգեւոր իդէալներին: Գիրքը համարուել է հրաշագործ եւ բժշկարար զօրութիւն ունեցող, ուստի եւ գրքի հետ կապուած են մարդկային կեանքի զարմանալի վերափոխումների բազմաթիւ պատմութիւններ: Սուրբ Գրքից յետոյ այն համարուել է մեծագոյն սրբութիւնը հայերի համար:

«Մատեանը» բաւականին խիտ աստուածաբանական-խորհրդական բովանդակութիւն ունեցող աղօթագիրք է: Այն մեզ ներկայացնում է Աստուծոց հեռացած մարդկային կեանքի ողբերգութիւնը եւ խոր ապաշխարութեան միջոցով Աստուծն միանալու ճանապարհը: Մարդու ազատագրումը եւ Աստուծոյ հետ միաւորումը գրքի հիմնական թեմաներն են: Սա թերեւս աղօթքի ոլորտում գրուած ամենահանճարեղ ստեղծագործութիւնն է: Այն միակողմանի դիմում չէ Աստուծն, այլ երկխօսութիւն երկնաւոր Հօր հետ, Ով անսահմանօրէն սիրում է Իր զաւակներին: Գրքում քանդուած են պահպանողական եւ քարացած բոլոր պատկերացում-պատնէշները, որոնք սահմանում են մարդու վերջաւոր վիճակը, մեղաւորութիւնը, ոչնչութիւնը եւ անսահման Աստուծն դիմելու՝ դրանցից բխող սահմանափակութիւնները: «Նարեկը» Աստուծոյ հետ զրոյցի զարմանալի ազատութիւն է:

Աղօթքը մարդու հոգու ամենաբնական վիճակն է: Ինչպէս Ֆիզիկական մարմինը չի կարող ապրել առանց թթուածնի, այնպէս էլ մարդու հոգին՝ առանց աղօթքի: Աղօթքը հոգու շնչառութիւնն է: Աղօթում են բոլորը՝ անկախ նրանից՝ իրենք դիտակցում են դա, թէ ոչ: Ինչպէս բոյսերն են ուղղուած դէպի լոյսը, այնպէս էլ մարդկային հոգիները վերողղուած են դէպի երկնայինը: Ըստ էութեան, իւրաքանչիւր իմաստակիր խօսք աղօթք է: Երբ մենք ասում ենք որեւէ բան եւ հաւատում, որ մեր ասածն ունի իմաստ, եւ ի վերջոյ այդ իմաստը կապուած է մի վերին իմաստի հետ, ապա մենք այդ խօսքի սիմվոլիզմի մէջ դնում ենք աղօթքի տարր: Բուն աղօթքը Հաղորդակցութեան բարձրագոյն դրսեւորումն է, երբ մաքրում են իմաստները, բառային տարածքները եւ կայանում է մաքուր Հաղորդութիւնը իմաստի աղբիւրի հետ: Մարդու խօսելու կարողութիւնն, այս իմաստով, սրբազնագործութիւն է, որով մարմնաւորում են մտքերը, ձեւաւորում է անձեւը... Աստուծոյ Որդին մեզ ներկայանում է խօսքի սիմվոլիզմի մէջ՝ ցոյց տալով խօսքի բարձ-



րագոյն բնոյթն արարչագործութեան մէջ. «Եւ Բանը Աստուած էր... Եւ Բանը մարմին եղաւ...»:

Գիրքը ցնցում է մարդուն եւ ցոյց է տալիս աղօթքի եւ ի վերջոյ Հոգեւորի նշանակութիւնը մարդկային կեանքում: Առանց Հոգեւորի գիտակցման՝ մարդկային կեանքը վերածուում է մեծագոյն աղէտի եւ անհեթեթութեան: Մարդիկ յաճախ սա զգում են, սակայն չգիտեն, թէ լուծումը որ հարթութեան մէջ է: Նարեկացու մատեանը՝ որպէս մարդկային ողբերգութեան խորագոյն պատկեր, Հնարաւորութիւն է ընձեռում մեզ մեր կատարելութեան վերընթացը սկսել մեր էութեան խորքից՝ վերացնելով մեր կեանքի խաթարումները խորքային պատճառները, եւ Աստուծոյ հետ հաղորդակցութիւնը փնտրել ոչ թէ հեռաւոր անորոշութեան մշուշում, այլ մեր մէջ՝ մեր ներքին տաճարում: Ինչպէ՞ս. աղօթքով: Ըստ սբ Գրիգորի՝ աղօթքը սրտի ներքին զոհասեղանի վրայ մատուցուող բանական պատարագն է, որը պէտք է մատուցուի մեր Հոգու ողջ պարարտութեամբ եւ զօրութեամբ: Մեր զոհաբերութիւնն ընդունելի է, եթէ այն անկեղծ եւ ամբողջական է: Մենք պէտք է կատարելապէս մեզ ընծայաբերենք Աստծուն: Իսկ երբ Աստուած ընդունում է մեզ, այնժամ մենք Նրանն ենք: Աղօթքի զոհաբերութեամբ մենք դառնում ենք իսկապէս Մարդ՝ Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ:

Նարեկացու Հասցէին Հնչել են մեղադրանքներ: Պատճառներից առաջինը թերեւս այն է, որ կանոնագիտական եւ դաւանաբանական մեղադրանքներ են եղել նրա հայր Խոսրով Անձեւացու եւ նրա ուսուցիչ Անանիա Նարեկացու նկատմամբ, ովքեր եղել են Ժ դարի հայ աստուածաբանական մտքի ամենալուսաւոր դէմքերը: Միւս պատճառը, ըստ երեւոյթին, եղել են Նարեկացու ենթադրեալ Հոգեւոր կապերը այդ ժամանակների նշանաւոր այլադաւան Հոգեւորականների հետ կամ յարգալից վերաբերմունքը նրանց հանդէպ: Երրորդ եւ հիմնական պատճառը նրա ստեղծագործութեան իւրայատուկ ազատութիւնն է, որը սասանում էր եկեղեցական միջավայրում բուն դրած պահպանողական կաշկանդումների հիմքերը:

Գրքի նկատմամբ միանշանակ վերաբերմունք չի եղել: Այն դիւրընկալելի չէ եւ մարդուց պահանջում է որոշակի ճիգեր: Ակտիւօրէն գործածուել է վանական միջավայրում՝ սահմանելով Հոգեւոր ձգտումների եւ ներքին արուեստի բարձրագոյն չափանիշներ: Աշխարհիկ շրջանակներում մարդիկ յաճախ, այն չկարգալով, տառացիօրէն հաւա-

տացել են նրա տարաբնույթ զորութիւններին՝ երբեմն ցուցաբերելով ահնյայտ կռապաշտութեան եւ մոգութեան տարրեր: Շուրջ հազար տարի հայ ժողովուրդը մտել է այս գրքի հետ ուղղակի կամ անուղղակի իւրայատուկ երկխօսութեան մէջ՝ վերածելով այս գիրքը հոգեւոր ինքնութեան մի իդէալի: Երկրաւոր իրողութեան տառապանքների մէջ գտնուող ժողովուրդն իր ինքնութեան աղբիւրը սկսել է տեսնել հոգեղէն ոլորտում: Այսօր գրքի մէջ ներթափանցելու համար կան քաղաքակրթական դժուարութիւններ, քանի որ հոգեւոր փնտրումի եւ կատարելութեան իդէալը գերիշխող է: Սակայն գիրքը չի դադարում առանցքային դեր ունենալ հայ ժողովրդի համար:

Գրքում չի գործածուում «Հայաստան» կամ «հայ» բառը: Հեղինակն ասում է, որ ստեղծագործութեան բնույթն անանձնական է, այն ամբողջ աշխարհի բոլոր փնտրող մարդկանց հաւաքական ձայնն է՝ ուղղուած առ Աստուած: Միւս կողմից՝ նա նաեւ ասում է, որ գրքի հեղինակը ոչ թէ ինքն է, այլ Աստուած, այսինքն՝ գիրքը մարդկային փնտրումների աստուածային արձագանքն է: Եւ այդ արձագանքը լսելի է: Հեղինակը նաեւ մարգարէանում է, որ մարդիկ աշխարհի տարբեր ծագերից այդ գրքով դիմելու են Աստծուն: Այսօր դա կատարւում է. գիրքը թարգմանւում է բազմաթիւ լեզուներով՝ դառնալով համամարդկային սեփականութիւն: Կայ չուներ՝ լաւ, թէ վատ թարգմանութիւն է կատարուած, ասուածի համաշխարհայնութիւնը յաղթահարում է կատարման թերութիւնը եւ լեզուամշակութային պատնէշները: Այսօր էլ աշխարհի տարբեր անկիւններում գիրքն աղբիւր է գարմանալի բացայայտումների եւ վերափոխումների:

Անկասկած, Հռոմի Եկեղեցու կողմից Նարեկացուն վարդապետ հռչակելը առիթ կը դառնայ «Մատեանի» նոր թարգմանութիւնների, ուսումնասիրութիւնների եւ մեկնաբանութիւնների: Այս ամէնն իր հետ բերելու է մարդկային աղաւաղումներ: Նարեկացու ճոխութիւնը երբեմն շեղում է հոգեւոր անորոշութիւնների մէջ թափառողներին: Այո՛, «Մատեանը» ե՛լ բարձրագոյն խօսք է, ե՛ւ մտածողութիւն, ե՛ւ աստուածաբանութիւն, ե՛ւ փիլիսոփայութիւն եւն: Բայց պէտք է յիշել, որ այդ ամէնը արդիւնք է հզօրագոյն հոգեւոր ապրումի: Տաճար պէտք է մտնել դռնով: Տաճար թափանցելու մնացած ճանապարհները պարսաւելի են: Այս գիրք-տաճարի դուռը աղօթքն է: Այդպէս է պնդում հեղինակը: Մարդկութիւնը հնարաւո-

ընթացում է ստանում այս կենդանի աղօթագրքով առաջնորդելու:  
Սակայն նախ եւ առաջ մենք՝ այս «Մատեանը» պահպանողներս եւ  
փայտաշողներս, կարիք ունենք իսկապէս բացելու այս գիրքը եւ  
Աստուծոյ հետ խօսելու:

## **ST. GREGORY OF NAREK: GENIUS OF PRAYER**

On April 12, during the Mass at St. Peter's Basilica in Rome dedicated to the Armenian Genocide Martyrs, Pope Francis declared St. Gregory of Narek a universal doctor or teacher of the Catholic Church. The juxtaposing of martyrdom with sainthood was not accidental. The Armenians are a martyred nation and have paid dearly for the sake of sanctity and truth. It is with this spirit of martyrdom that this nation, resurrected from the ashes of genocide and victorious over death, offers one of its greatest saints to humanity.

